

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆ

ՄԱՐՏԵՉՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆ

ՄԱՐՏՆՉՈՂ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստեփանակերտ-2012
«Դիզակ պլուս» հրատարակչություն

ՀՏԴ 891.981.0
ԳՄԴ 83.3 Հ
Խ 256

Գիրքը տպագրվում է ԼՂՀ պետպատվերով

Եվիրվում է ԼՂՀ անկախության, ԼՂՀ Պաշտպանական Բանակի ստեղծման, Շուշիի ազատագրման 20-ամյա հորելյանների

Խանյան Ս.

Խ 256 «Մարտնչող գրականություն»: Գրականագիտական ուսումնասիրություններ եւ գիտական հոդվածներ: Ս. Խանյան: Ստեփանակերտ: «Դիզակ պլուս», 2012թ., 480 էջ:

Գրքում ամփոփված են բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ Սոկրատ Խանյանի գրականագիտական ուսումնասիրությունները, որոնցում քննարկվել ու գնահատվել են Արցախյան ազգային-ազատագրական պայքարն արտացոլող չափածո եւ արձակ գեղարվեստական երկերը՝ հիմնականում տպագրված հետպատերազմյան շրջանում, առանձնապես 2010-2011թթ.:

Գրքի առյուծի բաժինը կազմում է անվանի գրող-գրականագետ Վարդան Հակոբյանի ստեղծագործությունը լուսաբանող գիտական հետազոտությունը, որը դիտարկվում է որպես գրական դիմանկար:

Գրքի հեղինակը ընդգծում է, որ վերջին տարիների ընթացքում ստեղծվել է 20-րդ դարի վերջին հայ ժողովրդի մղած հաղթական գոյամարտի գեղարվեստական պատկերը, որն արժանի է ամենայն ուշադրության:

ՀՏԴ 891.981.0
ԳՄԴ 83.3 Հ

ISBN 978-99941-2-658-3

© Ս. Խանյան, 2012

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾԱՆՐԱԿՇԻՌ ՆԵՐՂՐՈՒՄ

Արցախի պետական համալսարանը կայացել է նրանում աշխատող անվանի գիտնական-մանկավարժների շնորհիվ, որոնց շարքում իր ակնառու տեղն ունի բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ, բանաստեղծ, թարգմանիչ Սոկրատ Խանյանը:

1958 թվականից ԽՍՀՄ գրողների միության, 1994-ից՝ ԼՂՀ, 2002-ից՝ ՀՀ գրողների միության անդամ Սոկրատ Խանյանի աշխատասիրությունն ու բեղմնավոր գրիչը միշտ էլ հիացրել է և՛ գրչեղբայրներին, և՛ ընթերցողներին: Նրա 40-ից ավելի բանաստեղծական ժողովածուներն ու գրականագիտական ուսումնասիրություններն արժանացել են բարձր գնահատականի:

Եվ պատահական չէ, որ վաստակաշատ բանաստեղծի ու գիտնականի ծննդյան 80 և գրական-գիտամանկավարժական գործունեության 60-ամյակի առթիվ ԼՂՀ գրողների միության վարչության և Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդի երաշխավորությամբ 2010-2011 թվականներին հրատարակվեց նրա «Ընտիր երկերի» 10-հատորյակը՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԱրՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան Յովիկ Մուսայելյանի խմբագրությամբ:

Տասհատորյակի 1-4-րդ գրքերն ընդգրկում են Սոկրատ Խանյանի քնարական բանաստեղծություններն ու պոեմները, դրամատիկական գործերն ու թարգմանությունները: Այստեղ զետեղվել են ԼՂՀ կառավարության՝ պատմիչ Եղիշեի անվան մրցանակը շահած՝ «Արցախի արծիվը», ինչպես նաև Արցախյան ազգային-ազատագրական պայքարն արտացոլող «Նահատակ լուսո» (Ավո), «Արցախուհին», «Արցախցիները», «Ազգային հարց» և այլ

պոեմներ ու բալլադներ: 1-4-րդ հատորներում որպես առաջաբան, համառոտակի բերված են հայ ականավոր գրողներ ու քննադատներ Նաիրի Ջարյանի, Մկրտիչ Արմենի, Մկրտիչ Կորյունի, Սևակ Արզումանյանի, Հարություն Սերոբյանի, Դավիթ Գասպարյանի, Սուրեն Դանիելյանի, Վարդան Հակոբյանի, Հրաչյա Բեգլարյանի, Մաքսիմ Հովհաննիսյանի և այլոց դրվատանքի խոսքերը Խանյանի ժողովածուների վերաբերյալ:

Այսպես, ականավոր գրող Ն. Ջարյանը 1961թ. գրախոսելով Ս. Խանյանի առաջին՝ «Կարկաչ» գրքույկը, ընդգծել է. «Ղարաբաղն իր բարձրաբերձ լեռներով և անդնդախոր ձորերով, իր փարթամ անտառներով և արագավազ գետերով, իր քաջարի-ազատաբաղձ, ազատասեր և միաժամանակ ավանդապահ ժողովրդով միշտ եղել է հայ բանաստեղծների ոգևորության աղբյուրը: Ղարաբաղն իր բարձրագահ աթոռն ունի նաև երիտասարդ բանաստեղծների սրտում: Ես կուզենայի ընթերցողի ուշադրությանը հանձնել Ս. Խանյանի «Կարկաչ» գրքից հետևյալ քառյակը՝ միանգամայն ճշմարտացի և հուզիչ.

*Ղարաբաղ իմ, փոքր ես, սակայն
Մոր փոքրությանն ո՞վ է նայում,
Ո՞ր հերոսներ ծնող մայրն է,
Որ աշխարհին չի հմայում:*

Իսկ հայ հռչակավոր գրողներից մեկը՝ Մկրտիչ Արմենը, 1966թ. գրախոսելով Ս. Խանյանի երրորդ՝ «Սիրտս ձեզ հետ է» գիրքը, նշել է. «Սոկրատ Խանյանը երիտասարդ բանաստեղծ է, և դա ոչ թե միայն տարիքային առումով, այլև, առաջին հերթին, նրա բանաստեղծությունների ձևով և բովանդակությամբ: Դրանք էլ երիտասարդավարի հուզական են ու անմիջական և երիտասարդավարի թարմ ու տպավորիչ:

...Սոկրատի մոտ պայծառ են ոչ միայն տրամադրությունները, այլև բնության կողմերն ու երևույթները, պայծառ են բառերը... Հաճելի է կարդալ Սոկրատին, որի մոտ արև կա և լավատեսու-

թյուն՝ հակառակ մի քանի երիտասարդ և ոչ երիտասարդ բանաստեղծների, որոնց մոտ ոչ միայն մռայլ է ընդհանուր տրամադրությունը, այլև դրա հետ սերտորեն կապված համեմատություններն ու բառային մատերիալը»:

Հաճելի է նշել, որ Ս. Խանյանի պոետական բոլոր ժողովածուներն արժանացել են հայ մշակույթի ականավոր գործիչների դրվատանքին: Ինչ վերաբերում է Ս. Խանյանի պոեմներին ու բալլադներին, կարող ենք ավելացնել, որ նրա հունձքն այս բնագավառում պատիվ կարող է բերել ուզածո բանաստեղծի: Բերենք տաղանդավոր պոետ Վ. Հակոբյանի կարծիքից մի հատված. «Արցախի արծիվը» պոեմն ընդհանրության մեջ ընկալվում է որպես հին ու նոր ժամանակների խորքից ելած տաղանդավոր մի գրչի հիշատակարան: Հիշատակարան հայոց հին ու նոր գոյամարտի»: Բանաստեղծ Ա. Թովմասյանն այս պոեմը բնութագրել է որպես ժողովրդական ասք, որը տարողունակ է ու բարձրարվեստ:

Սուրբատ Խանյանը օրերի հետ համաչափ քայլով բանաստեղծ է: Նա ապրել է բարդ, բազմակողմանի եւ ներդաշնակ կյանք: Ե՛վ անձնական, ե՛ւ քաղաքացիական մտահոգությունները նրան օր-օրի հարստացրել են, իմաստնացրել: Ժողովրդի ճակատագրի հետ կապված բոլոր մտահոգիչ հարցերին նա պատասխանել է ե՛ւ որպես բանաստեղծ ու լրագրող, ե՛ւ որպես գրականագետ, ե՛ւ որպես հասարակական գործիչ: Նա անդադար հետեւել է ինքնաստուգման եւ ինքնաճանաչման սկզբունքին: Ինչ արել է, համարել է քիչ, ձգտել է ավելին անել, եւ որ կարելորդ է, բյուրեղանալ: Ղարաբաղյան պրոբլեմի լուծման հենց առաջին օրվանից բանաստեղծը առաջին շարքերում էր: Նկատի չունենալով Պոլյանիչկո-Սաֆրոնովյան ռեժիմի սարսափելի հետեւանքները, նա արդարացի իր խոսքն էր ասում հանրահավաքնե-

րուն, տարբեր երկրներից ժամանած պատվիրակների հետ հանդիպումներում, ելույթ էր ունենում ռադիոյով, հեռուստատեսությամբ, թերթերի եւ ամսագրերի էջերում: Մոսկվայից Ադրբեջանի կառավարող շրջանների պատվերով Ստեփանակերտ ժամանած իրավապահ մարմինների կողմից բազմիցս կանչվել է Ս. Խանյանը: Նա հայ ժողովրդի պատմության իր իմացությամբ ապացուցում էր, որ Արցախը, Ուտիքը, Մեծ Հայքի 10-րդ եւ 11-րդ նահանգներն են, որ այդ տարածքում ստեղծված նյութական եւ հոգեւոր մշակույթի հուշարձանները հայկական մշակույթի խոսուուն վկայություններ են, ապացուցում էր Լենինի եւ Ստալինի ապօրինությունը Ղարաբաղի, Նախիջեւանի հարցում:

Խանյանը Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մանկավարժ-գիտնականների հետ միասին հետամուտ էր լինում ադրբեջանցի վայ գիտնականների ելույթներին, հողվածներով եւ նամակներով պատասխանում, ապացուցելով նրանց զեղծարարությունը հայ ժողովրդի, հատկապես արցախահայ հատվածի պատմության վերաբերյալ:

1990թ. ապրիլի 24-ին Հայոց Մեծ եղեռնի 75-ամյակի առթիվ Ստեփանակերտում` Մեծ Հայրենականի, Սումգայիթի եւ հայոց երկրաշարժի հիշատակին կառուցված համալիրում հավաքված ժողովրդի առջեւ ելույթ ունենալու պատճառով, երկու օր անց, դաժանորեն քաշքշելուց հետո Պոլյանիչկո-Սաֆոնովյան ոհմակի հրամանով ձերբակալեցին բանաստեղծ Ս. Խանյանին, Գ. Գաբրիելյանին, Յ. Բեգլարյանին, Ա. Թովմասյանին, դոցենտներ Յ. Գրիգորյանին եւ Ռ. Բալայանին: Նրանց նախ բանտարկեցին Ստեփանակերտի ջրի մաքրման շենքում: Այն ժամանակվա կուսակցության մարզկոմի շենքի առջեւ ժողովուրդը ցույց կազմակերպեց, պահանջելով ազատ արձակելու իր մտավորականներին: Գեներալ Սաֆոնովի հրամանով խորհրդային զինվորները կրակ բացեցին ցուցարարների վրա` եղան վիրավորներ:

Սակայն հալածանքը հայ մտավորականների դեմ դադար չի

առել: Չնայած այդ ամենին, Արցախի մտավորականները, այդ թվում եւ Ս. Խանյանը, շարունակել են իրենց գործունեությունը՝ ժողովրդին համախմբելու, նրա գոյամարտը գեղարվեստորեն արտացոլելու ուղղությամբ:

Ինչպես երբեք, չափազանց բեղմնավոր գտնվեց Ս. Խանյանի գրիչը դարաբաղյան շարժման եւ պատերազմի տարիներին: Նա ընթերցողին հանձնեց բանաստեղծական իր ժողովածուները. «Կարոտի կրակներ» (1990), «Արցախյան ղողանջներ» (1991), «Ցավի եւ սիրո պոեզիա» (մենագրություն Վ. Յակոբյանի ստեղծագործության մասին), «Թ. Յուրյանի սիրանքը» (գիտական ուսումնասիրություն), «Բ. Ջանյանի պոեզիան», «Գ. Գաբրիելյանի աշխարհը», «Տաղանդի լույսը» (Ժ. Անդրյանի մասին), «Արցախյան պատերազմը եւ հայ պոեզիան» աշխատությունները: Բացի դրանցից, Ս. Խանյանը սիստեմատիկորեն հանդես եկավ բանաստեղծական նոր շարքերով, սեղանին դրեց «Արցախի արծիվը», «Միեր» եւ «Նահատակ լուսո» պոեմները: «Արցախի արծիվը» պոեմի համար Ս. Խանյանը արժանացավ ԼՂՀ նախարարների խորհրդի 1992թ. Եղիշեի անվան մրցանակին: «Նահատակ լուսո» պոեմից առանձին հատվածներ տպագրվեցին «Հայ զինվոր» եւ «Մարտիկ» թերթերում: Պոեմը նվիրված է լեգենդար հերոս Մոնթե Մելքոնյանի (Ավոյի) սուրբ հիշատակին:

Ս. Խանյանի ժողովածուների մասին տպագրված գրախոսականներում համարյա բոլոր քննադատները նկատել են, որ նրան հաջողվում է ստեղծել բանաստեղծական սյուժեներ: Եվ ոչ միայն այդ: Դեռեւս երրորդ՝ «Սիրոս ձեզ հետ է» գրքում (1966) Ս. Խանյանը զետեղել էր «Հայրենի գյուղ» քնարական պոեմը: Անդրադառնալով գյուղական թեմային, Ս. Խանյանը բավականին հաջող թեմաներով ստեղծել է սրտառուչ մի երկ, որի մեջ ճշմարտացիորեն արտացոլված են արցախցու սերը դեպի իր հայրենի օջախը, նրա խիզախությունը, հայրենասիրությունը եւ հայրենի հողից բարիքներ քամելու նրա հմտությունն ու վճռա-

կանությունը: Հինգ մասից բաղկացած պոեմում ընթերցողի առջեւ բացվում է հետաքրքիր մի աշխարհ՝ իր ուրույն գույներով, մարդկանցով, երազանքներով:

Խանյանի հաջողությունները պոեմի ժանրի բնագավառում առավելագույնս բացահայտվեցին «Արցախի արծիվը», «Նահատակ լուսո», «Միեր» ծավալուն ստեղծագործություններում:

* * *

Արցախյան պատերազմի տարիներին Ս. Խանյանը դրսևորեց իր ստեղծագործական կարողությունները նոր երանգներով, նոր ընդգրկումներով: Նա ուղղակի նոր թռիչքներ ունեցավ: «Արցախի արծիվը» պոեմը հանդիսացավ բանաստեղծի հարուստ փորձի արգասիքներից մեկը: Մի հայացք ձգելով գրականության պատմությանը, հանդիպում ենք բազմաթիվ օրինակների, երբ արվեստագետը մտքի վերելքի շրջանում լրիվ բացահայտում է իր տաղանդը, իհարկե, շարունակելով նախորդ շրջանի իր ձեռագիրն ու նախասիրությունները: «Արցախի արծիվը» Խանյանի համար նման օրինակի դրսևորումներից է: Պետք է նշել, որ Խանյանը իր ստեղծագործություններում մի անգամ չէ անդրադարձել մայր ժողովրդի անցած հերոսական էջերին: Հայաստանին եւ Արցախին նվիրված նրա բանաստեղծությունների շարքում մենք զգում ենք այդ հանգամանքը: Տարիների կուտակումները այստեղ կատարեցին իրենց դերը: Կենսական խորը տպավորություններով եւ գեղարվեստական հնարանքների ձեռքբերումներով հարուստ բանաստեղծը ձեռք մեկնեց 9-րդ դարին, մի ժամանակահատված, երբ հայ ժողովուրդը հաճում էր արաբական խալիֆայության ծանրածանր լծի տակ: Հայ պատմագրության ականավոր ներկայացուցիչ Թ. Արծրունին իր «Արծրունյաց տան պատմություն» գրքում հանգամանորեն նկարագրել է արաբական զավթիչների դեմ այն կենաց եւ մահու պայքարը, որ մղել է հայ ժողովուրդը Հայոց աշխարհի տարբեր մասերում: Անմահ

պատմիչը դարերին է հանձնել առանձնապես Մուշուն, Սասունում եւ Արցախում տեղի ունեցած հերոսական այն ընդվզումները, որ կատարել է մեր ժողովուրդը: Մուշուն Յուսուֆ զորավարի, այնուհետեւ Բուղայի ոտնձգություններն ու հալածանքները հայ ժողովրդի դեմ պատմիչը նկարագրել է անհուն ցասումով: Չայտնի է, որ 850թ. Մուշուն Յուսուֆ ոստիկանի սպանությունից հետո Չայաստան ներխուժեց արաբ զորավար, ծագումով թուրք Բուղան բազմահազարանոց բանակով: Նա հրի ու սրի մատնելով հայոց գյուղերն ու քաղաքները, հասել է Դիզակի գավառի Տող գյուղին: Այն ժամանակ Դիզակի առանշահիկ իշխան Եսայի ապու Մուսեն իր փոքրաթիվ զորքերով դիմակայեց Բուղայի բազմահազարանոց բանակին եւ ջախջախիչ հարված հասցրեց նրան: Թ. Արծրունին հպարտության զգացումով է նկարագրում Եսայի ապու Մուսեի հերոսամարտը 853 թվականին, որը մոտեցրել է հայ ժողովրդի պետականության վերականգնումը 885 թվականին: Ս. Խանյանը որպես թեմա ընտրելով պատմական այս իրադարձությունը, փաստորեն, արձագանքել է արցախյան արդի պատերազմին, որի ընթացքում հերոսացան Եսայի ապու Մուսեի թոռները հանդիսացող բազում արցախցիներ: Պատմությունը լեզու առած խոսեց Խանյանի պոեմում՝ հանուն այսօրվա հաղթանակի եւ ապագա խաղաղ կյանքի:

Պատմության ընկալման իր փիլիսոփայությամբ Խանյանը նկարագրում է հայ ժողովրդի հերոսական էջերը, այն ներկայացնելով որպես դաս այսօրվա սերնդի համար: Օտար բռնակալների դեմ մղած պայքարը հայ ժողովրդի կենսագրության մեջ ստեղծել է ապրելու եւ գոյատևելու յուրովի կենսահայեցողություն: Առաջին հերթին նա ընդգծել է ժողովրդական իմաստությունը, որ սրով եկող թշնամու դեմ պետք է մարտնչել սրով, այլապես չես ապրի: Այս կենսահայեցողությունն էլ հենց ընկած է Խանյանի պոեմի հիմքում:

Պոեմը բաղկացած է նախերգից, վերջերգից եւ երեք մասից:

Առաջին մասը կազմված է հինգ գլխից, երկրորդ մասը՝ վեց, երրորդ մասը՝ ինը: Այն աչքի է ընկնում կուռ կառուցվածքով, պատկերային թարմ հյուսվածքով, գաղափարական հստակ ու առողջ լուծումներով: Սկզբից մինչև վերջ զգացվում է պոեմի հղացման երակը, այն է՝ սրից եկողը սրով էլ կընկնի: Կառուցվածքային տարրերի յուրահատկությամբ պոեմը հայ դասական պոեմի ավանդույթների գեղեցիկ շարունակությունն է: Պոեմի նախերգունը հանյանը ընթերցողին տեղափոխում է Գոհչ վանք: Նա, թերթելով անցյալի գիրքը, հոգու եւ մտքի աչքերով տեսնում է մեր պապերի հերոսական գոյամարտը: Դա մի դաս է, որ ազդարարում է միշտ.

*Չող ու թրի լուսե ոգին
Գիրն է ազգի եւ մարդու,
Ով դրանցով կամքը կոփի,
Ծնկի չի գա իր կյանքում:*

Խանյանը նախերգուն դիմում է տեսիլքի հնարանքին: Սա պայմանական մի ելակետ է, որ հնարավորություն է տալիս ընթերցողին մտքով տեղափոխվելու անցյալի գիրկը: Տվյալ դեպքում Տողասարի գագաթին եղած հեքիաթային աշխարհի մասին է խոսքը, ուր երեւում են վրնջացող այրուձիեր, զինվորյալներ, արիասիրտ այրեր, ահարկու զորավարներ, բիրտ ցեղեր, հարկահավաքներ, հարկատուներ եւ այդ ֆոնի վրա Արցախի պայազատները: Բանաստեղծը նշում է իր տեսիլքային հանդիպումը իշխան Եսայու հետ, որի հագին «Մետաքսակար չուխան» է, կողքին կապած «Թուրը Առանի»: Բանաստեղծը իշխան Եսայու հանդեպ եղած իր ժառանգորդի սերը ընդգծելու համար նրան համեմատում է Խաչի պապի հետ: Չայ մարդու սովորությամբ Եսայը բացում է մառանի դուռը, իր թրծած գավաթով առնում գինի ու հաց, պապենական հավատով խմում երեք կենաց: Չեքիաթային իմաստունն ծերունու պես Եսայը առաջինը խմում է Արցախյան հո-

դի, երկրորդը՝ այդ հողը պաշտպանողների, երրորդը՝ արցախցու կենացը: Կենացները առաջարկելուց հետո իշխան Եսայը հեծնուն է իր ձին եւ սլանուն Բուղայի դեմ, որ վիշապի պես չոքել էր Տողասարի լանջերին: Բանաստեղծը, իրեն համարելով այդ պայքարի պատմագիր, դիմում է ընթերցողներին.

*Եվ բերում եմ իմ այս գիրը,
Որ ձեր սրտի հետ խոսի,
Պատմի անմահ քաջի մասին,
Մեր պապերի հավատով,
Եվ Եսայու կենացն ասի
Չենց իր թողած գավաթով:*

«Արցախի արծիվը» պոեմի նախերգանքում Ս. Խանյանը ընթերցողի մեջ ստեղծում է համապատասխան տրամադրություն: Նա ընտրելով տեսիլքային տարրը, ակնարկում է իշխան Եսայու հերոսական պայքարը, որ այնուհետեւ ցույց է տալիս պոեմի ընթացքում: Խանյանը պոեմի առաջին մասի առաջին գլխում նկարագրում է Տողասարի գագաթին թառած Գտչավանքի մի բարեժպիտ առավոտ, լիքը աչքալուսանքով: Գավառապետ Չովսեփի տանը տղա է ծնվել: Բանաստեղծը հենց պոեմի սկզբից դիմել է բանահյուսական, էպոսային նկարագրության հնարանքներին, եւ դա մեծապես հաջողվել է նրան: Գտչավանքում թելին է տալիս Չովսեփի տղա ունենալու լուրը, անմիջապես սկսվում է նորածնի փառաբանությունը.

*Մանուկ չէ նա, հրաշք է մի,
Աչքերն արեւ,
Լուսնաշողիկ այտեր ունի,
Թմփլիկ թելեր:
Ժամերով է աճում տղան
Բարուրում պերճ,
Քիչ է մնում նստի, խաղա
Մի օրվա մեջ:*

Առասպելական երեւոյթը ուրախացնում է ժողովրդին եւ նորածնի հորը առաջին հերթին այն բանի համար, որ տղան մեծանալով, «Չոր թիկունքը դառնա, գավառ պահի, Պիտի նստի իր Դիզակա Պապի գահին»: Չովսեփը պատմական անձնավորութիւն է: Թ. Արծրունին հայտնում է, որ նա առանշահիկներից է, եղել է երեց, բայց սիրել է թուրը, հզորացրել ու շենացրել գավառը: Նա իր որդուն կնքել է Եսայ մարգարեի անունով: Ինչպես նկարագրում է բանաստեղծը՝ Եսայի ծննդյան լուրը անբողջ Արցախում հնչում է որպէս ախորժալուր երգ: Դա բնական զգացում է, որովհետեւ Դիզակը հանդիսացել է Արցախ աշխարհի հարավային դարպասը՝ փռված Արաքսի ափին՝ ընդգրկելով բավականին ծավալուն տարածք:

Ս. Խանյանը հմտորեն եւ անմիջական-հոգեբանական շտրիխներով է պատկերում Չովսեփի հայրական զգացումները.

*Իսկ Չովսեփը թեւածում էր
Արծվի նման,
Երգ էր ասում, սեղան բացում,
Որդեհնա:
Թուրն էր հագել, գոտին կապել,
Չայկածին էր,
Չարի դուռը պիտի փակեր,-
Արցախցի էր:*

Ս. Խանյանը իր կենսափիլիսոփայությամբ, մտածողությամբ, զգացմունքներով կարողացել է թափանցել ստեղծագործության բուն էության խորքերը եւ գեղարվեստորեն բացահայտել դեպքերն ու իրադարձությունները, կերպավորել իր հերոսներին: Պոեմն ունի սուր կոնֆլիկտ, բանաստեղծը կոնֆլիկտի հիմքում դրել է հայ ժողովրդի ըմբոստ պայքարը արաբական խալիֆայության դեմ: Այս հանգամանքն էլ հենց պոեմին հաղորդել է եպոսային բնույթ: Պոեմի սկզբից մինչեւ վերջը հանդես են գալիս

ներհակ ուժերը՝ ազատաբաղձ հայ ժողովուրդը եւ զավթիչ խալիֆայութիւնը: Վիպական երկի թելադրանքով Խանյանը խմբավորել է իր հերոսներին: Որոշակի հարաբերությունների մեջ դնելով դրական եւ բացասական կերպարներին, Խանյանը ստեղծել է հայրենասիրական մի հիանալի երկ: Ելնելով պոեմի սյուժեից, բանաստեղծը ներկայացնում է հաջորդաբար ծագող ու լուծվող երեւոյթները, հակադրությունները: Դրանով է բացատրվում պոեմի իրադարձությունների ժամանակագրական նկարագրությունը: Այն սկսվում է գլխավոր հերոսի՝ Եսայու ծննդով, բայց բավականին տեղ է հատկացված նրա հորը՝ Գավառապետ Յովսեփին: Յովսեփը հաջողված կերպար է: Խանյանը կարողացել է նրան ներկայացնել հայ-արաբական փոխհարաբերությունների ֆոնի վրա: Յենց առաջին մասի առաջին գլխում ցույց է տրված Յովսեփի համբավը ոչ միայն Արցախ աշխարհում, Յայաստանում, այլեւ արաբական խալիֆաթի մոտ: Նրա անունը լսելով, խալիֆաթը հոխորտում էր եւ ձգտում վրեժխնդիր լինել նրան՝ հանդուգն բնավորության համար: Յովսեփը լավ գիտեր թշնամուն՝ նենգ խալիֆին:

*Գիտեր, որ նա մի հրեշ է,
Վիշապ է, ցին:*

Ուստի միշտ պատրաստ էր՝ դիմակայելու հազարացոց զորաբանակներին:

Առաջին մասի երկրորդ գլխում նկարագրված է արդեն տասնութամյա Եսայու բնավորությունը: Այդ տարիքում նրա առջև բացվել էին «Գիտության կապ ու հնար»: Եսայը հանճարաշուրթ երիտասարդ է, հմուտ գրիչ է, կարգվել է վարդապետ, եղել է Արցախի բոլոր գավառներում:

Նա տիրապետում է հունարենին, պարսկերենին, արաբերենին: Բայց ամենից կարելորդ, ինչպես ներկայացնում է բանաստեղծը, այն է, որ.

*Սերտել է թրի լեզուն,
Գնդեր է վարում հոր հետ,
Ջինվոր էր մի Հայկազուն,
Դարձել է ռազմագետ:
Թե հայրը կռվի մեկնի,
Թիկունքին էսայն է քաջ:
Չոր միտքը ինչ էլ երկնի,
Որդին է քննում առաջ:
Դատ լինի, թե դատաստան,
Վճիռը էսայինն է,
Երազը Դիզակա տան
Ամենուր իր ձեռքին է:*

Եսայը ժողովրդական հերոսի համբավ է ձեռք բերում: Նա ջջլախտի է խաղում գյուղացիների զավակների հետ, նրանց հետ լինում կիրճերում ու ձորերում: Նա «Իշխանի հետ իշխան է, Սշակի մոտ՝ ռամիկ»: Տասնութամյա Եսայը արդեն հասցրել է դառնալ մարտերի ոգին: Լուրը հասնում է Յուսուֆ ոստիկանին, որ Հովսեփի գործերը արդեն վարում է որդին...

Գնալով պոենում ավելի հարստանում եւ բացահայտվում են հերոսների ըմբռնումները, նրանց հոգեբանությունը: Երրորդ գլուխը, որ կոչվում է «Հարկահավաք», ճշմարտացի ներկայացնում է արաբական խալիֆայության ծանր հարկահանություններն ու դրանց արյունալի հետեւանքները: Հիմք ընդունելով հայ պատմիչներ Սեբեոսի, Մ. Կաղանկատվացու, Ղեւոնդի, Հ. Մամիկոնյանի, Թ. Արծրունու, Հ. Դրասխանակերտցու պատմագրություններում եղած հաղորդումները արաբական հարկահանությունների եղանակների ու չափերի մասին, Խանյանը գեղարվեստորեն հաջողված պատկերներով նկարագրում է դրանք:

Հարկահավաքին հաջորդում է զորահավաքը: Հենց «Զորահավաք» էլ վերնագրված է պոեմի չորրորդ գլուխը: Խանյանի բանաստեղծական կուտակումներն այստեղ տվել են իրենց ար-

դյունքը: Թարմ ու անպաճույճ մի պատկերով է սկսվում գլուխը: Նկարագրելով աշնանային Արաքսը, Խանյանը նուրբ շտրիխներով պատկերում է Դիզակը եւ նրա դիրքը Արցախի համար: Չարավային սահմանը՝ Արաքսը, Յյուսիսայինը՝ Իշխանագետը: Երկու քույրեր, մեկը մյուսին հարեւան, բայց վրդովվել են նրանք: Մուշից հասել է ահարկու բոթը, որ հինգ բյուր գորքով նենգ հարկահավաք Աբդլլահը մահվան կռիւնչով սուրում է դեպի Դիզակ, դեպի Արցախ: Դիզակցին աշխատանքը թողած զենք է վերցնում՝ պաշտպանելու իր օջախն ու տունը: Խանյանը վարպետորեն է նկարագրում պատերազմի հետեւանքով թափուր մնացած դաշտերն ու արտերը, այգիներն ու մառանները: Բանաստեղծական հրաշալի մի պատկեր է հետեւյալ հատվածը.

*Ու վրդովվել է դիզակցու հոգին,
Քթոցը թողած թթնու գոգին,
Ցորենը կալում, խնձորը ծառին,
Աշնան նոր լոբին ձիգ քոլասարին,
Բացված բանբակը անձիր դաշտերում,
Քաղցր խաղողը մեծ-մեծ տաշտերում,
Եզները անլուծ, ճիպոտը մաճին,
Մեռնված գինու գավաթը փարչին,
Թողած նոր խուզը ոչխարի հոտի,
Վերցրել է թուրը ու կապել գոտին...
Տունն ու գործերը հանձնելով կանանց,
Այրերն իջել են կիրճերը անանց...*

Արցախյան անձնանուններից օգտվելով, Խանյանը ժողովրդական զորաբանակի հայրենաշունչ մի հմայիչ պատկեր է ստեղծել: Կարդալով այն, զգում ես, որ հայրենյաց կռիվը մղում են երեկվա մշակն ու դարբինը, ուսուցիչն ու հոգեւորականը: Այս պատկերը արցախյան կոլորիտի վառ նմուշ է: Թվարկելով մարդկանց ու գյուղերի անունները, բանաստեղծը ընդգծում է նաեւ

պատմական Դիզակի սահմանները: Ջորաբանակի մեջ են տողեցի Ջանին, քոչբեկցի Փանին, տումեցի Ադամը, թաղասեռցի Արամը, ազոխցի Արշամը, ջրակուսցի Սարգիսը: Իրենց խմբերով պայքարի են ելել Չադրութի, Էտիլի, Չարարի, Ակնաղբյուրի, Տորի, Մեծ Թաղերի գյուղացիները:

Ժողովրդական զորաբանակը ղեկավարում է Չովսեփը, որի մոտ որդին է՝ Եսայը: Նրանց համեմատելով Մռովի եւ Քիրսի, ինչպես նաեւ Մասիսների հետ, Խանյանը ընդգծում է հայրենի լեռների եւ նրանց տերերի հավերժացած եւ կենսական ավիշ դարձած անխախտելի կապը: Ջորաբանակը Տողի կիրճերից պիտի գնա ասփը Արաքսի, դեպի ստորոտը Սյուս Չաբանդի, դեպի Չորադիզ, որտեղով պիտի խուժի Աբղլլահը: Պատերազմական գործողությունները պիտի ծավալվեն Արաքսի ասփին:

Չովսեփը իմաստուն եւ քաջ զորապետ է: Նա գործում է ժողովրդական կենսափորձին ապավինած: Իր շուրջը համախմբելով զորքն ու զորականներին, խորհուրդ է տալիս բռունցքվել, հիշեցնելով.

*Ամեն մի երկիր՝ իր մեջ բաժանված, միշտ էլ կչոքի,
Միասնությունն է կռիվների մեջ ոսոխին գերում:*

Շփվելով ժողովրդի հետ, Չովսեփը լավ գիտե ռամիկներին, ազատին, մեծին, ազատորդուն, գիտե, թե «մարտի մեջ թշնամու վիզը ով խիստ կոլորի, ով դիտակետը կարող է հսկել գիշերներն արթուն»: Նրա խոսքը հակիրճ է, վճռական. «Կամ պիտի մեռնենք, կամ կյանք պարգեւենք մեր որդիներին»:

Չոգեբանական պատկեր է ստեղծվում այստեղ, չէ՞ որ Չովսեփի մոտ հենց իր որդին է՝ Եսայը. «Եթե մեկտեղ են, ամեն մի սառույց կարող են ջարդել»:

Խանյանը ուսումնասիրել է հայոց այրուձիու պատերազմական արվեստի մասին եղած հաղորդումները եւ հմտորեն օգտա-

գործել պոեմում: Հենց այս գլխում նա ներկայացնում է Դիզակի այրուձիու նարտական գործողությունները, որ հաճելի տպավորություն են թողնում: Թշնամին անհամար է: Պատմիչ Թ. Արծրունու գրքից օգտվելով, բանաստեղծը նկարագրում է թշնամու բանակի ամբողջ կազմը, որի մեջ են փահլեւան-ըմբշամարտիկներ, բազում դրոշներ, անքանակ փողեր, անհամար թմբուկներ, նիզակակիրներ, նետածիգներ, կապարճակիրներ, տապարակիրներ, մեքենաներ: Նրանց դեմ առ դեմ կանգնած է Դիզակի այրուձին: Երեք կողմից սեղմելով թշնամուն, արցախցիները հրաշքներ են գործում:

Տեղի է ունենում ճակատամարտ: Վճռական ու հանդուգն այդ գոյամարտը պատկերային համոզիչ հյուսվածքով է ստեղծված պոեմում: Երկու կողմերի անզիջուն պայքարը, Հովսեփի եւ Եսայու զորավարությունը, հայ զինվորների խիզախությունը նկարագրված են ասես ականատեսի կողմից: Հոգեբանական մի լուծում է մտցված այստեղ: Թշնամին շուրջկալ է անում Եսայուն, նրա մահն անխուսափելի էր, սակայն Հովսեփը կրծքով պաշտպանում է որդուն, ինքը դառնալով թշնամական նիզակի զոհը: Մարտը վերջանում է դիզակցիների հաղթանակով: «Մայր Արաքսի գրկից բարձրանում է արեւը նորից», ուսերի վրա զորքը տուն է բերում ընկած քաջերին: Հովսեփին հասցնում են Գտիչ վանքը եւ հանձնում հողին: Ինչպես բանաստեղծն է ասում.

*Աստղերով լեցուն Հայոց մատյանում այդ օրը գրվեց.
«Հովսեփը գնաց, եկավ Եսայը՝ իր հորն արժանի»:*

Արցախյան կոլորիտն ստեղծող ու ժողովրդական ավանդույթները ներկայացնող պատկերները պոեմին հաղորդում են էպոսային բնույթ: Այս առանձնահատկությունը իրեն զգացնել է տալիս նաեւ երկրորդ մասում: Այստեղ հատկանշական են համարյա բոլոր բաժինները: «Հանդիպում» գլխում նկարագրված են Քիրսա սարի լանջերին փռված անտառները, որ ժողովուրդն անվա-

նուն է Արեւսար: Եսայը ամեն տարի՝ ձմեռ թե աշուն, ընկերների հետ որս էր անում: Մի անգամ էլ որսի ժամանակ հանդիպում է Տունի գյուղի տանուտեր Ադամի աղջկան՝ Շուշանիկին: Եսայը Սասնա ծռերին հատուկ բնավորությամբ իր սերն է հայտնում Շուշանիկին, իսկ վերջինս էլ ասես Ծովինարի, Դեղձուն Ծամի, Խանդութ Խաթունի եւ Գոհարի ժառանգորդն է, նրանց ամոթխածությամբ եւ սիրո ազնվագույն ընկալմամբ պատասխանում է քաջին: Երկրորդ մասի երկրորդ գլուխը կոչվում է «Նշանդեք»: Դաճելի լուրը տարածվում է Տողում, որ քաջ իշխանը աղջիկ է ընտրել: Այդ մասին կարդում ենք.

*Տունուց մինչեւ Տող թելում է լուրը,
Կամուրջ են հյուսում երկու գերդաստան,
Աղոթք էր դարձել ե՛ւ թթու ջուրը,
Որպես զույգերի հանդիպման վկան:
Սուրբ Դիզափայտը ժպտում էր Քիրսին,
Որպես սրբազան՝ ձեռքին բուրվառը,
Աշնան երփներանգ գորգերը ուսին
Աչքալուսանք էր հղում Թարթառը:*

Այդ աչքալուսանքին մասնակցում է ամբողջ Արցախը՝ ծայրե-ծայր: Բնության անձնավորման եղանակով Խանյանը ընդգծում է Դիզակի երիտասարդ իշխանի հանդեպ առաջացած համաժողովրդական մաքուր սերը: Դա երկրի եւ հերոսի համաձույլ ըղգրկման եւ փոխադարձ նվիրվածության խորհրդանիշ է, ժողովրդական բանահյուսության ավանդույթներով ստեղծված հիանալի պատկեր: Նորափեսայի նշանդեքը նկարագրվում է որպես ժողովրդական տոնահանդես: Առանձին շտրիխներով Խանյանը ստեղծել է արցախյան սովորույթները վերծանող հետաքրքիր պատկերներ, որոնցից զգում ես մեր հնօրյա նահապետական միստ ու կացի գեղեցկությունն ու բույրը:

Բանաստեղծական թարմ պատկերների մի ամբողջություն է

նշանդրեքի նկարագրությունը: Խորապես ծանոթ լինելով արցա-
խահայության ավանդույթներին, Խանյանը ներկայացնում է
նշանդրեքի ամբողջ ընթացքը, ծնողների զգացումներն ու նվի-
րատվության հետ կապված օրհնանքները: Անզուգական մի օրի-
նակ է Եսայու մոր հուզաշխարհը եւ ակնկալիքները նկարագրող
այս պատկերը՝ կապված հարսնացուի հետ.

*Եսայու մայրը մոտեցավ նրան,
Թանկ նվերները մեծ սինու վրա:
Ընծայեց նախ մի ոսկե մատանի,
Ասաց. «Մայրիկը քո ցավը տանի,
Ոսկու պես լինես իմ որդու համար,
Ինձ էլ ընդունես ոնց հարազատ մայր»:
Ընծայեց արծաթ-ոսկենախշ գոտի,
Ասաց. «Թող լինեք միշտ իրար կողքի»:
Բազուկին հագրեց նուրբ ապարանջան,
Ասաց. «Իրարից լսեք միայն ջան»:
Նվիրեց մետաքս եւ ականջօղեր,
Ասաց. «Իմ որդուն պարգեւես շողեր»:
Ընծայեց փայլուն մի ոսկե շղթա,
Ասաց. «Ինչ ուզես, Վերինը քեզ տա»:
Սինիից վերցրեց ոսկե զարդասեղ,
Ասաց. «Մաղթում եմ քեզ պատիվ ու սեր»:
Հետո նվիրեց ուլունքներ շողուն.
Ասաց. «Ձեր կյանքը անցնի միշտ Տողում...
Այնուհետեւ ինձ ի՞նչ է հարկավոր,
Մի գեղեցիկ հարս, այն էլ հարգելու:
Քեզ շատ է հավան Եսայս, Շուշան,
Միշտ ծաղկես ինչպես բուրավետ շուշան,
Մեր մի օջախը թող տասը դառնա,
Դիզակը քեզնով միշտ հպարտանա»:*

Նշանդրերը նկարագրվում է նաեւ ժողովրդական երախտագիտության եւ հիշողության պայծառ ֆոնի վրա: Թեւում է գովեստը՝ քաջին արժանի, իսկ հիշում են «Ձոհերին ոտքի վրա»:

Սիրո հավատարմության, հայրենի օջախի հետ անհատի ճակատագրի սերտ կապի, կանացի տազնապի, տղամարդու կամքի ուժի եւ անձնուրացության հրաշալի պատկեր է երկրորդ մասի երրորդ գլուխը, որ կոչվում է «Երագ»: Շուշանի երագը ոչ միայն նշանվող զույգերի ներկան պատկերող կանխազգացում է, այլեւ օրինակելի ընտանիք կազմելու վերաբերյալ արցախցի զույգերի պատրաստականությունը ցուցադրող ասք: Հեքիաթային-տեսիլքային, բայց եւ կենսական է Շուշանի երագը: Նա Եսայուն պատմում է, որ երագում իրենք թեւում եւ հասնում են Վերին Միակին, որի մոտ Որդին էր, իսկ դեմը՝ Սուրբ Հոգին: Նրանք արցախցի զույգին նստեցնում են իրենց քով, ողջունում: Արարիչը ջրդեղում է Եսայու թուրը, Քրիստոսը օծում է մեռնով, իսկ Սուրբ Հոգին զինում է Եսայու ոգին: Նրանք հաղթության պսակ են դնում Եսայու գանգուրներին.

*Ասացին. «Երկիր ունես՝ մի եղեն,
Կխուժեն ձախից, կխուժեն աջից,
Պարտություն երբեք չի լինի աջիդ...»:*

Քրիստոսը բուրվառը ձեռքին զույգին սրբության ծիրանի է հագցնում եւ մաղթում.

*Դուք դառնալու եք
Հարգված պապ ու տատ,
Օջախով ամուր ու պարսպապատ:
Արցախը ձեզնից դաս է առնելու,
Ու ձեր պատկերի առաջ փառավոր,
Խոնարհվելու են սերունդները նոր:*

Կարդալով այս տողերը, աչքերիդ առջեւ հառնում է տաղանդավոր քանդակագործ Ս. Բաղդասարյանի «Մենք ենք մեր սարե-

րը» քանդակը, որ խտացնում է արցախցի պապի ու տատի հավատարիմ սերը միմյանց նկատմամբ եւ հայրենի օջախին ու լեռներին կապված լինելու նրանց երազն ու կյանքը: Կասկածից դուրս է, որ Խանյանը իր այս պատկերը ստեղծելիս նկատի է ունեցել նաեւ ականավոր արվեստագետի աշխարհին ծանոթ հուշակոթողը: Երկու դեպքում էլ՝ ե՛ւ քանդակագործը, ե՛ւ բանաստեղծը արցախցու առջեւ առաջին հերթին բացում են հենց արցախցու մաքրամաքուր հոգու աշխարհը՝ որպէս ինքնաճանաչման, ինքնահաստատման խորհրդանիշ:

Գեղարվեստական խոսքի նրբություններով Խանյանը պոեմի երկրորդ մասի չորրորդ գլխում նկարագրում է Եսայու եւ Շուշանիկի հարսանիքը: Ժողովրդական կյանքի, ավանդույթների, սովորույթների, կենցաղի խոր իմացությամբ միայն կարելի է ստեղծել նման պատկեր: Ամբողջ գլուխը, որ անվանված է «Հարսանիք», փայլում է խոսքի հղկվածությամբ, ժողովրդական հոգեբանության, մտածողության եւ բառ ու բանի հագեցվածությամբ, պատկերավորությամբ, երաժշտականությամբ: Պոետական նրբերանգներով նախ ներկայացվում է հարսանեկան արարողությունը աղջկա տանը՝ թագավորանիստ Տումի գյուղում՝ «պատվասեր, հպարտ ու բարքերով խիստ»: Փեսայի տնից մակարների խումբն է եկել՝ հեծած հրեղեն ձիեր, եկել են «Եսայու համար հարս տանելու»: Արցախական հարսանիքի օրենքները պահպանվում են կարգ ու կանոնի թելադրանքով.

*Կրակ են կտրել, երգում են, պարում,
Հարս ու փեսային զովում են անվերջ,
Թամադան բեղի ծայրն է ոլորում,
Հարսանքում չկա ոչ կռիվ, ոչ վեճ:*

Պատկերի ամեն մի տող աչքի է ընկնում այս կամ այն կերպարի բնութագրական հագեցվածությամբ: Առաջին հերթին խոսք է գնում Ադամի մասին, որ «Քաջն Հովսեփի զինակիցն էր», «Խոր-

հրդատունն է հիմա՝ փեսայի»։ Ինչպես բանաստեղծն է դիպուկ ընդգծում, «Փորձն ու եռանդը երբ որ միանան, Սարեր շուռ կտան, կթեքեն գետեր»։ Հրաշալի մի գեղանկար է հարսանիքի առավոտվա նկարագրությունը։ Մակարները քննարկում են, թե ո՞ր գյուղերով, պար ու նվագով «Հարս ու փեսային պիտի տանեն տուն», «Ով պիտի նստի օժիտի վրա»։ Հարսանեկան հանդեսի դարավոր սովորույթների նկարագրությամբ Խանյանը հասել է անժխտելի հաջողության։ Ամբողջ գլուխը մի հսկա կտավ է ասես, որի վրա կարելի է դրսևորել հարսանիքի ընթացքը՝ բոլոր մասնակիցներով եւ արարողություններով։ Աղջկան հոր տնից դուրս բերման էպիզոդը դրամատիկ մի հոյակապ պատկեր է, որ չես կարող կարդալ առանց հուզմունքի...

Մարտական քնքշանքի եւ տագնապի, հայրական խորհրդի եւ վստահության հոյակապ պատկեր է ստեղծված, որի մեջ շողշողում է ժողովրդական անբիծ հոգեբանությունը, ծնողական անաղարտ սիրո հմայքը։

Այնուհետեւ մեջբերվում է Նանի օրհնանքը, որից հետո նակարները հարս ու փեսի հետ Տունի գյուղից պիտի հասնեն Տող-Գտչավանք։ Հայկական հարսանիքի ավանդական արարողությունների հաջորդականությամբ այնքան բնական եւ անմիջական է պատկերը, որ հոգուդ խորքերում ասես զգում ես նվագի ձայնը, մտքի աչքերով տեսնում շքերթը.

*Եվ Ներսես քեռին իր զուռնան զլեց,
Կարոտի մի երգ սարերում ծլեց.
«Վո՛ւյ, աման, աղե ջան, տանում են,
Հորից-մորից հանո՛ւմ են»:*

Հարսանեկան ուղեկցողի քարավանը շարժվում է դեպի Մոխրենես գյուղը, հետո ճամփան իջնում եւ փարվում է Հակակու գյուղին, այնտեղից՝ Մեծ թաղեր։ Հին սովորության համաձայն

հարազատները սեղաններ են բացում բակերում, զույգին ընծաներ նվիրում:

Հարսանքավորները հասնում են Գտիչ, այսինքն հարսի ուրբի տակ ափսե է դնում, որ փշրի «որպես դարերից եկող մի նշան, բարության, սիրո խորհրդանշան».

*Իսկ մայրը առած ընկույզ ու դրամ,
Առատ ցանում է Գտիչի դռան,
Ասես աստղեր է ցանում նա վերից,
Արծաթ դրամն է փայլում արեւից,
Պատանհներն են հավաքում ուրախ,
Օրհնանք ու ժպիտ շրթների վրա:*

Երեկոն իջնելուն պես տղայի տանը շարունակվում է հարսանիքը:

Խանյանը ստեղծագործական արվեստի խորաթափանցությամբ, ժողովրդական կենցաղային միջավայրի իմացությամբ ներկայացնում է հարսանիքը փեսայի տանը՝ ստեղծելով տվյալ ժամանակաշրջանի ամբողջական մի պատկեր: Նվագողների, գուսանների, հարսանքավորների պատկերմամբ, կենցաղային դրվագների ընդգրկմամբ բանաստեղծը հասել է հաջողության: Գյուղական հարսանիքի միջավայրը ներկայացվում է բյուրեղյա մաքրությամբ, հերոսները աչքի են ընկնում իրենց անաղարտությամբ ու հոգեկան գեղեցկությամբ: Խանյանը նահապետական ժամանակների բացահայտմամբ, գեղարվեստորեն խորացնում է ընդհանրացնում է ժողովրդական սովորությունները: Հարսանիքի նկարագրման ընթացքը կապված է Եսայու եւ Շուշանիկի ջերմ սիրո, հայրենի օջախի հետ կապված տազնապի եւ պատասխանատվության զգացումի հետ: Այդ են վկայում են գուսանների ձոներգերը, եւ հարսանքավորների ապրումները: Օգտագործելով հայ ժողովրդական էպոսի գեղարվեստական առանձնահատկությունները, Խանյանը մեջբերում է տարեց եւ ջահել գուսանների գովքը Եսայու մասին:

Խանյանը գուսանների երգից հետո հեգեբանական մի նոր էջ է բացահայտում: Ակնադրյուրցի տանուտեր Խաչին, որ մասնակցում է հարսանիքին, հայտնում է հաճելի լուրը, որ զուռնաչի Ներսես քեռին հյուսել է մի պարեղանակ, որ կոչվում է «Շուշանիկի»: Հայտնի է, որ «Շուշանիկի»-ն հայ ժողովրդական պարեղանակների մեջ կարելուր տեղ է բռնում: Այն առանձնապես տարածված է եղել Արցախում: Խանյանը ելնելով պարեղանակի անունից, այն կապում է իր հերոսուհու՝ Շուշանի հետ: Դժվար է ասել, որ պատմականորեն փաստը այդպես է եղել: Բայց դա չէ կարելուրը: Կարելուրն այն է, որ «Շուշանիկի» պարեղանակը ընծայված է հայուհու հոգեկան գեղեցկությանը, բարոյական մաքրությանը, քնքշությանը, սիրո վեհությանը: Բանաստեղծը օգտագործել է երեւոյթը՝ փառաբանելու պոեմի հերոսուհուն, որն էլ իր հերթին հայ կնոջ բարեմասնությունների խտացված պատկերի մի հիանալի օրինակ է: Այստեղից էլ պոեմում այդ պարեղանակի բնութագրման համոզիչ ու հուզական երանգը: «Շուշանիկի» եղանակի մասին կարդում ենք.

*Նվազ չէ դա, սարի հով է,
Յարին փարվող գարնան զով է,
Ե՛վ կարոտ է, ե՛ւ տրտմություն,
Հրե եռք է, ուրախություն,
Սիրո կանչ է, սիրո երազ,
Նվիրում է, կարմիր մուրազ...*

Հուզիչ տեսարան է նաեւ պարեղանակի տակ հարս ու փեսի թեւաբաց պարի պատկերը:

Խանյանը տագնապալից այդ օրերի հարսանիքը նկարագրում է նաեւ հայրենասիրական մղումների տեսանկյունից: Այն ոչ միայն զվարճալի հարսանիք է, այլեւ «տոն է զինավարժության»: Չէ՞ որ ալեկոծված է Հայոց տան սիրտը, Բուղան չոքել է Վասպուրականում, ամբողջ լեռնաստանում արյուն է ու մահ: Բուղան կատաղած ինչպես չար հողմ, վառելով անգամ անտառները, ավերում էր հայոց երկիրը: Բորբոքվել է նաեւ հայ ժողովրդի ցասումը.

*Արցախը ծառս էր եղել ալեկոծ,
Բուղան գալիս է ինչպես թունոտ օձ:
Դիզակն՝ Արցախի դարպասը ամուր,
Արցախը՝ Հայոց Աղվանքի կտուր,
Ձայն էին տալիս մայր Հայաստանին.
- Մենք զավակներն ենք հայկյան Առանի,
Չարամիտ Բուղան թող գա դեպի մեզ,
Մենք նրան միջից կանենք երկու կես:*

Գնալով եռում է հարսանիքը: Խմում են Եսայու կենացը, բայց նա պապական կարգով շնորհակալություն հայտնելով խնջույքի մասնակիցներին, առաջարկում է խմել արցախցիների կենացը, որոնք երբեք չեն ների ոսոխներին: Նա վստահորեն երգիծում է թշնամուն, ասելով.

*Մեր ոտքերի տակ կչոքի Բուղան,
Ոնց փղի վրա հաչող շան թուլան:*

Եսայու այս շանթակուտակ խոսքից սկիզբ է առնում ծաղրատոն մի կատակ, որ կրկնում են ահել ու ջահել: Նրան միանում է նաեւ Շուշանը, միաժամանակ տազնապալից հիշելով հոր խոսքը.

*Մենք չենք ունեցել երբեք խաղաղ քուն,
Կռվում փառք ու մահ մեկ են շառաչում,
Թուրքն իշխան-մշակ-սեր չի ճանաչում:*

Եսայը այդ խոհերից հանում է Շուշանին եւ հրավիրում պարի.

*Թվում էր երգն էր իշխում աշխարհում,
Ոչ թե այս զույգը, Գտիչն էր պարում՝
Հոգում օրհնանքը սրբազան խաչի,
Ձեռքերում ուժը պսակվող քաջի...*

Խանյանը իր գլխավոր հերոսի ճակատագրի հետ կապված ամեն մի զեղման մեջ հոգեբանական մի նոր էջ է բացահայտում:

Եսայը ամուսնանում է, անցնում է տարին, եւ նա տղա է ունենում: Ցնծութիւն են ապրում Եսայու տատը, մայրը, վերհիշում Յովսէփի երազանքը՝ կապված հարազատ օջախի եւ Դիզակա տան ապագայի հետ: Յովսէփը երազում էր, որ արու թռռ ունենար, որ իր «Պողպատե թուրը առներ, Խաղացներ ոնց խաղալիք ու ծիծաղեր ալիք-ալիք», որպեսզի.

*Ձայնը հասներ Արաքստան,
Հաստատեր, որ կա՛ Հայաստան,
Որ ծնվում են Հայկ ու Վարդան,
Թե՛ Արցախում, թե՛ Սասնա տանն:
Որ չի մարել օջախը մեր,
Որ միշտ կապրի Արցախը մեր:*

Եսայը հոգեկան երջանկություն, նոր լիցք է ստանում տղայի ծնունդով: Նա ուրախությամբ փայփայում է մորը, նանին, վանքում աղոթում, որ Վերինը բարի աչքով նայի իր ընտանիքին, Արցախին, Հայոց աշխարհին: Եսայու առաջարկով քահանան զավակին կնքում է Մովսէս անունով, որ խելոք լինի, ինչպէս Խորենացին: Այսպիսով, Դիզակա իշխանի երազանքի մեջ միասնական է շափաղում մտքի եւ ուժի, հոգեկան եւ ֆիզիկական առողջ միասնության գաղափարը: Եսայի իշխանի համբավը այնպիսի համարում ուներ ամբողջ Արեւելքում, որ խալիֆը նրան որդու անունով կոչում է «Ապու Մուսե, Ասել է թե՛ Մովսէսի հայր»:

Համարձակությամբ Ս.Խանյանի «Արցախի արծիվը» պոեմը կարող ենք համարել Արցախի միջնադարյան կյանքի հանրագիտարան: Մինչեւ հիմա ոչ մի բանաստեղծ լայն կտավի վրա այնպէս խոր ու ճշմարտացի, գեղարվեստական անպաճույճ առանձնահատկություններով չի պատկերել արցախահայության նիստն ու կացը, մարտական ոգին, անզիջում պայքարը արաբական խալիֆայության դեմ այնպէս, ինչպէս Խանյանը այս պոեմում: Այս առնչությամբ կարող ենք միայն նշել Վ. Հակոբյանի

«Տաճարն աստօճ» պոեմը: Երկուսն էլ միանգամայն ինքնատիպ, առանձնահատուկ լեզվաոճական փայլատակուններով, կերպավորման արվեստով, գաղափարական լուծումներով արդիի հայ պոեզիայի մեջ հիանալի ներդրումներ են:

«Արցախի արծիվը» պոեմում էջից-էջ, գլխից-գլուխ նոր երանգներ են երեւան գալիս, ընդգրկում հստակ ու պատկերավոր խոսքի, հոգեբանական լիցքավորման նոր ելեւէջներ: «Շրջագայություն» գլուխը, որով ավարտվում է պոեմի երկրորդ մասը, պոետական վարպետության մի նմուշ է: Ըստ սովորության Եսայ իշխանը շրջագայում է Դիզակի բոլոր բնակավայրերում, ծանոթանում գավառի առօրյա պրոբլեմներին, կարգ ու կանոնին, հանդիպում մարդկանց, սեղան նստում նրանց հետ, շնորհավորում նորապսակներին, հիշում նահատակներին, մի գավաթ մաճառ խմում, աղոթում սրբատներում: Խանյանը ուղղակի նկարել է արցախյան նիստ ու կացը, խոհանոցը, ժողովրդի ապրելակերպը: Բերենք մի հատված.

*Հաց է կտրել շատերի հետ,
Կերել խնջլոզ, ավլուկ, փիփերթ,
Ճաշակել է մի տեղ թանով,
Մի տեղ խաշիլ՝ չորաթանով:
Մի տեղ կուրկուտ ու լոբաճաշ,
Մի տեղ փլավ ու կճեխաշ,
Մի այգու մեջ հոնի կաթուկ,
Մի օջախում՝ մոշաթթու,
Մի տեղ որսի թարմ խորոված,
Կանաչ լոբի՝ լավ սխտորած,
Մի ավանում՝ ժանգյալով հաց,
Միշտ ժպտադեն ու սրտաբաց:
Կարծ է խոսել, չի սիրել ճառ,
Խմել է մի գավաթ մաճառ,*

*Խնդրել Աստծուն բարեհամբույր,
Որ չանտեսի սեր ու համբույր,
Դիզակին լավ աչքով նայի,
Բերք ու բարիք չխնայի...*

Իշխանը նշել է ժամանակի ամենատազնապալից հոգսը, այն, որ իր բանակին դեպի Տող է քշում Բուղան, «Որի առաջ պետք չէ սողալ, պետք է խմբվել, դառնալ բռունցք, եվ անել միշտ ոսոխի հունձք, որ հասկանա մեր թշնամին, որ մենք հողմ ենք, ոչ թե քամի»: Իշխանը ժողովրդական երգիծանքի խարազանիչ հարվածով ծաղրում է Բուղային.

*Չի խնայում նա ոչ ոքի,
Դիվային է նրա հոգին,
Սատանա կա ամեն պոզին,
Պիտի ջարդենք մենք այդ բոզին...*

Խանյանը համոզիչ գույներով ցույց է տալիս համաժողովրդական սերը իշխանի հանդեպ, արցախցիների պատրաստակամությունը՝ զորահավաք լինելու դեպքում պատրաստ ներկայանալ Գտչավանք:

Էպիկական շնչի տեսակետից առանձնապես աչքի է ընկնում պոեմի երրորդ մասը: Այստեղ բանաստեղծը ցույց է տալիս Բուղայի գլխավորությամբ արաբական զորքի ներխուժումը Ուտիք եւ ապա Արցախ: Երրորդ մասի առաջին գլուխը կոչվում է «Դեպի Տող»: Խանյանը լավ է հասկանում իր կերպարների հոգեբանությունը: Նա Բուղայի արտահայտությունների միջոցով ընդգծում է նրա ամբարտավանությունը, խարդախությունը, դաժանությունը: Ավերելով Պարտավը, նա երազում է Արցախի դարպասը հանդիսացող Դիզակի ավերումը եւ ավարումը: Հիրավի, Բուղայի զինվորների ոտքերի տակ «մոխրանում էին շեները մեկ-մեկ, Սի ճենճերահոտ երկինք էր բռնել Ուտիքի հողում»: Բանաստեղծը պատկերային համոզիչ հյուսվածքով ներկայացնում է Բուղայի եւ նրա զորքի դաժանությունը:

Այդպես կատաղած, նա հասնում է Արցախի հնագույն բնակավայրերից՝ Տոդ, որի մոտ, բարձունքի վրա թառած է Գտիչ վանքը, իշխան Եսայու օրրանը:

Օգտվելով Թ. Արծրունու գրքից, Ս. Խանյանը բանաստեղծական նոր հնարանքներով բերում է Բուղայի նամակ-հոխորտանքը՝ ուղղված Եսայուն, նրանց միջեւ տեղի ունեցած առաջին ճակատամարտը, այդ ֆոնի վրա Սմբատ Բագրատունու անբացատրելի ծառայությունը Բուղային, Սմբատի որդու՝ Մուշեղի նախատինքը հորը:

«Ծուղակ» չորրորդ գլխում ցույց է տրված խալիֆաթի զինվորների նենգությունը հայ հայրենասերների հանդեպ: Գերված հայ զինվորներից մեկի՝ Յաբեթնակի խոսքը հնչում է որպես ժողովրդական իմաստության եւ խաղաղասիրության, անձնուրացության եւ ոգու արիության խորհրդանիշ:

Բուղան հրամայում է գերված Յաբեթնակին, որ իր յոթ հոգուց բաղկացած խումբը հավատափոխ լինի, օգնի բռնելու Եսայուն:

Բուղայի հրամանով գլխատում են Յաբեթնակին եւ նրա զինակիցներ Վարուժանին, Վարդանիկին, Եղիշեին, Գրիգորիսին: Սարգսին հաջողվում է ազատվել եւ լուրը հասցնել Եսայուն:

Երրորդ մասում բացահայտվում են Բուղայի բնավորության անմարդկային գծերը եւ հակակշիռ նրան՝ Եսայու վեհությունն ու խիզախությունը: Յետաքրքիր է Բուղայի հրովարտակի բանաստեղծական մեջբերումը: Բուղան վերջին անգամ զգուշացնում է Եսայուն, որ բարձունքից իջնի եւ հպատակվի իրեն, հիշեցնելով իր հաջողությունները եւ արյունալի ճակատամարտերը Յայոց գավառներում: Բուղայի վերջին ճիգը արտահայտված է վերջնագրում: Սակայն նա անսպասելիորեն ստանում է Եսայու նամակը: Թ. Արծրունու «Պատմության» մեջ բերված է իշխան Եսայու այդ պատասխանը: Յարագատ մնալով բնագրին, Խանյանը հաջողությամբ բանաստեղծականացրել է այն, որ պոեմի հրաշալի էջերից է:

Խաղաղասեր Եսայը այլ կերպ գործել չէր կարող: Նա հարկադրված է թուր վերցնելու՝ հայրենի աշխարհը պաշտպանելու համար: Եթե Եսայ իշխանի գործողություններում հիմնականը Արցախի պաշտպանության շահերն են, ապա Բուդայինը՝ ավերելու եւ ավարելու տենչն է, որոնք էլ նրան տանում են կործանման: Երկու հակադիր կողմերի այս ձգտումներով էլ պայմանավորված են նրանց գործողությունները: Չերոսներից յուրաքանչյուրի բնավորությունը կոնկրետանում է այս հիմնական պրոբլեմի շուրջ: Պոեմի սյուժեն բացահայտվում է հայրենիքի պաշտպանության գաղափարի հիման վրա: Եսայը հայկյան Առանի նետ ու աղեղով ոտքի է ելնում արաբական խալիֆայության դեմ՝ լավ հասկանալով, որ առանց պայքարի հնարավոր չէ փրկել ու պահպանել օջախ հայրենիք: Պոեմի նախավերջին՝ «Չաղթանակ» գլխում Խանյանը դրսեւորել է էպիկական ժանրի մեջ ունեցած իր տաղանդը: Չարագատ մնալով ժողովրդական վիպերգերի, առանձնապես էպոսի ավանդույթներին, Խանյանը ինքնատիպ ու թարմ պատկերներով ցույց է տվել պարտության դատապարտված բռնակալի վերջին փորձերը եւ նրա դիմաց հայրենի հողից ուժ ու կամք առած Եսայու խորտակիչ հարվածը: Բանաստեղծը գունեղ ու տեսանելի պատկերներով ներկայացնում է մի կողմից դեպի Գտիչ վանք սողացող թշնամական բանակի գործողությունները, մյուս կողմից՝ իշխան Եսայու ժողովրդական զորագնդի իր պատրաստականությունը՝ ոսոխին խորտակիչ հարված հասցնելու համար: Եսայը զորքի առջեւ

*Ասաց. «Մենք գիտենք ինչի համար ենք ելել պայքարի,
Մեր ոտքերի տակ հայրենի հողն է, օրոհնը մեր թանկ,
Որ մեր օջախի անմար կրակը երբեք չմարի,
Պիտի ոսոխին իրեն հասնելիք պատասխանը տանք»:*

Բացելով բերդի կուռ դարպասները, հեղեղի նման դուրս է հորդում Եսայու զորքը: Բոլորից առաջ շողում էր գավառապետի թուրը: Դիզակա զորքը քառաթեւ խաչ էր կազմել, զինվորյալները

մնչուն էին, գետնին նետուն ոսոխին: Եսայու աշխարհագորային-
ներին ոգի էին հաղորդում Գտչավանքի հոգեւորականները: Ժողո-
վուրդը մի բռունցք է դառնում: Արաբ զորքը նահանջում է, կռվի
դաշտում հանդիպում են Եսայն ու Բուղան: Նրանք մենամարտում
են ինչպես Սասունցի Դավիթն ու Մսրա Մելիքը: Եպոսին հատուկ
առասպելական չափազանցություններով Խանյանը պատկերում
է երկու դյուցազունների անզիջում կռիվը: Հաղթանակը շահում է
Եսայը՝ տապալելով Բուղային: Արցախի իշխանի նիզակից ճեղք-
վում են Բուղայի կուրծքը եւ որովայնը: Հայոց զորքը ցնծություն է
ապրում: Սակայն Բուղայի օգնական Աբդին խախտում է օրենքը
եւ դարան մտնում անտառի խորքում: Քրտնած Եսայը քրտնած
նժույզով իջնում է գետը, որ իր ձեռքերով լվանա ձիու մեջքը, թփե-
րի միջից կատաղած Աբդին կանգնում է Եսայու դեմ-դիմաց: Եսա-
յը առյուծի ուժով ոլորում է թշնամու վիզը: Սակայն ձորից հագա-
րացիների խումբը Եսայուն տանում է անտառի խորքը: Բոթը հաս-
նում է Գտչավանք, հայ զինվորյալները իջնում են գետափ, որո-
նում Եսայուն, բայց իզուր: Չկար Եսայը: Իսկ Աբդին Տողասարում
պարտվելուց հետո ներկայանում է խալիֆին: Վերջինս արհամար-
հանքով է ընդունում նրան, համարում թույլ ու անկամ, իսկ
Բուղային՝ ոչնչություն: Պոեմում Խանյանը Տողում Բուղայի պար-
տությունը եւ մահը գնահատում է որպես արժանի հատուցում,
իսկ այդ պատերազմում Եսայու հետ կապում է նրա անմահության
գաղափարը: Ինչպես բանաստեղծն է գրում.

*Չկար Եսայը, որտե՞ղ հեղեցին արյունը քաջի,
Որտե՞ղ է ննջում, ո՞ր կաղնու ներքո կամ ո՞ր ժայռի տակ,
Որտե՞ղ թաղեցին առանց սաղմոսի եւ առանց խաչի,
Ո՞ր հողին ձուլվեց, որտե՞ղ մոխրացավ նրա սիրտը տաք:*

Պոեմի յուրաքանչյուր գլուխ, յուրաքանչյուր էպիզոդ բանաս-
տեղծական կատարման, բովանդակության եւ ձևի միասնու-
թյան օրինակելի պատկեր է: Դրա լավագույն վկայություններից

է «Հաղթանակ» գլխի հատվածներից մեկը՝ նվիրված Արցախա նահատակների հավերժությանը:

«Հաղթանակ» գլխի վերջին պատկերում նկարագրված է Բու-ղայի օգնական Աբդիի հանդիպումը խալիֆի հետ: Նա ծնկաչոք պաղատում է, որ խալիֆը ների պարտության համար, որ նոր զորքեր տա՝ թողած ավարը Արաբստան բերելու: Խալիֆը Բու-ղայի պարտությունը համարում է խայտառակություն, այսպես նաև նրա հիշատակը.

*Իսկ Գոչավանքում մեծ հաղթանակի շունչն էր թեւածում,
Երգասանները գովքն էին անում արցախցիների,
Որ ութը հարյուր հիսուններեքին, սրերով հատու,
Հայոց պետության վերածննդի հիմքերը դրին:*

Պոեմի վերջին գլուխը վերնագրված է «Հյուրը»: Թ.Արծրունին իր «Պատմության» մեջ այնպես է նկարագրել Արցախը, այնպի-սի ոգեւորությամբ է պատմել արցախցիների հերոսական պայ-քարը, որ թվում է, թե նա եղել է Արցախում: Հաստատված չէ, ար-դյո՞ք նա եղել է պատմական Հայաստանի այդ նահանգում: Ս. Խանյանը պատկերում է Թ. Արծրունու այցը Արցախ, կոնկրետ՝ Ամարաս: Հանդիպմանը ներկայանում են Արցախի տասներկու գավառների աշխարհիկ եւ հոգեւոր դասերի ներկայացուցիչնե-րը, արժանին հատուցելով մեծ պատմիչին եւ զոհյալ մարտիկնե-րի հիշատակին: Թովման իր ելույթում ընդգծում է.

*Պիտի ապրի քաջ Եսայը զրույցներում հավերժաբառ,
Քաջերի հետ նա կմտնի մատյանիս մեջ մեսրոպատառ:
Արժանի է քաջ Եսայը, արժանի է մեր ասքերին,
Նրա թուրը նոր ուժ տվեց արցախական հրաշքներին:
Դարերի մեջ Արցախը սեզ սրժիվներ է ծնել անթիվ,
Դիզակեցի իշխանին էլ անվանում են լեռան արժիվ:*

Պոեմը ավարտվում է վերջերգով, որի մեջ Խանյանը մեր պատմական անցյալի հերոսական ոգին կապում է ներկայի եւ ա-

պագայի հետ: Այդ ընթացքում խորհրդանշվում են Տողասարի գագաթին թառած Գտչավանքը, Եսայու ոգին եւ հայոց գիրը, «Սարը կանգուն է, գիրը՝ հոլովվող, կրակն անմարում», այդ կրակով Եսայն ապրում է Հայոց աշխարհում: Բանաստեղծը Եսայի անմահությունը տեսնում է Արցախա լեռներում տեղի ունեցած բոլոր իրադարձությունների եւ գործողությունների մեջ: Սերունդները նրան տեսել են իր նժույգին նստած մերթ սելջուկների դեմ մարտնչելիս, մերթ՝ մոնղոլների, մերթ՝ թուրքերի:

*Չիմա տեսնում են Մռովի, Քիրսի կանաչ լանջերին,
Նժույգին հեծած, ականջն Արցախա արդար կանչերին:
Սուրը հանել է թուրք բուղաների սերնդի հանդեպ,
Որ մեր Արցախը ապրի դարեդար, ինչպես հայոց բերդ,
Տեսել են նրան, նրան տեսնում են ու կտեսնեն դեռ,
Թուրն ու խաչն առած որպես Արցախի հավերժական տեր:*

Ս. Խանյանը «Արցախի արծիվը» պոեմը գրելիս հմտորեն շարունակել է ժողովրդական էպոսի եւ ավանդավեպերի գեղարվեստական մշակումների ավանդույթները: Բանաստեղծը հարազատ մնալով պատմական իրադարձություններին, յուրովի մեկնաբանություն է տվել թեմային: Օգտվելով Թ. Արծրունու եւ մյուս պատմիչների գրքերից, իր կերպարներին ցույց է տվել պատմական-քաղաքական կոնկրետ հարաբերությունների ոլորտում: Հայ ժողովրդի ազատագրական պայքարը ներկայացվում է որպես արդարացի գոյամարտ: Այդ ֆոնի վրա էլ ցույց է տրվում երկու հակադիր ուժերի, հակամարտ նպատակների բախում: Հայ-արաբական հակամարտ հարաբերությունների ընթացքում հանդես են գալիս հայ ժողովրդի բնավորության գծերն ընդհանրացնող իշխան Եսայը եւ արաբական խալիֆայության դաժանությունը մարմնավորող Բուղան: Հայ ժողովուրդը խաղաղասեր է, աշխատասեր, նրա միակ նպատակն է պաշտպանել իր հայրենի հողն ու ազգային, ընտանեկան սրբությունները: Արցախա

զինվորյալները ինքնական նետվում են մարտի, Եսայու ղեկավարած ազատագրական պայքարին մասնակցում անձնուրաց: Եսայը բարձր է գնահատում հայրենիքի անկախության, եւ խաղաղության արժեքը եւ իրեն գոհաբերում է Արցախ աշխարհի, ամբողջ Հայաստանի անկախության ճանապարհին:

Եսայը հայրենասեր լինելու հետ մեկտեղ ժողովրդասեր է, ընտանիքի պատիվը բարձր պահող այր, անձնագոհ ընկեր է, մարտական ընկեր: Խանյանը այս ամենը բացահայտել է գեղարվեստական թարմ պատկերներով:

Նույն հաջողությամբ նա ստեղծել է Հովսեփի, նրա զինակիցների, արաբական խալիֆայության դաժանությունը ներկայացնող Յուսուֆի, Բուղայի, Աբդլլահի, Աբդիի կերպարները:

Առինքնող, ռեալիստական նուրբ երանգներով են ստեղծված արցախցի կանանց կերպարները: Առանձնապես հաջողված է Շուշանիկը: Նա հայ կնոջ բարեմասնությունների խտացումն է: Նա հավատարիմ կին է, քնքույշ մայր, հայրենիքի ճակատագրով ապրող զինվոր:

«Արցախի արծիվը» պոեմը վերջին տարիներին ստեղծված լավագույն ստեղծագործություններից է, արդի հայ պոեզիայի գեղեցիկ էջերից մեկը:

* * *

1994թ. Ս. Խանյանը գրեց «Նահատակ լուսո» պոեմը՝ նվիրված Ղարաբաղյան պատերազմի լեգենդար հերոս Մոնթե Մելքոնյանի (Ավոյի) սուրբ հիշատակին: «Արցախի արծիվը» երկից հետո այս պոեմը մի նոր երանգ ավելացրեց Խանյանի ստեղծագործական աշխարհին, ապացուցեց, որ բանաստեղծը վերելք է ապրում, ավելի են բյուրեղանում նախասիրությունների շրջանակները: Դրանք առանձնապես նկատվեցին հերոսության թեմայի շրջանակներում: Այդ մոտիվը, ինչպես տեսանք, կարմիր թելի պես անցնում է բանաստեղծի բոլոր ժողովածուների միջով: Մեր ժողովրդի անցած դժվարին ճանապարհին է թելադրում այդ

թեման: Դրանով պետք է բացատրել այն երեւոյթը, որ հայ գրականութեան մեջ իշխող է եղել հենց հերոսականութեան մոտիվը: Արդի հայ պոեզիայում նոր գույներով բացահայտվեց խնդրո առարկա թեման, որն արդեն Ադրբեջանի կողմից արցախահայութեանը պարտադրված պատերազմի թելադրանքն է: Յերոսականութեան արտացոլմանը ձեռնամուխ եղան արդի բոլոր հայ բանաստեղծները ոչ միայն Արցախում, այլեւ աշխարհի չորս ծայրերում եղած գրական բոլոր օջախներում, որովհետեւ դարաբաղյան պատերազմը ոչ միայն Արցախի խնդիրն է որոշում, այլ հայ ժողովրդի ճակատագրի: Այդ կապակցութեամբ երիցս ճիշտ էր Ավոն, երբ ընդգծում էր, որ Արցախը տանուլ տալով, մենք կշրջենք հայոց պատմութեան վերջին էջը: Ուստի թեմայի աշխուժացումը պետք է դիտել որպէս համահայկական երեւոյթ: Ահա թե ինչու բանաստեղծները նորից հետադարձ հայացք ձգեցին դեպի մեր պատմութեան խորքերը, այն շաղկապելով ներկա օրերի հերոսական շնչի, կոնկրետ՝ Արցախյան գոյամարտի հետ: Ս. Խանյանը, ինչպէս համոզվեցինք, ակտիվորեն մասնակցեց այդ պատվաբեր գործին, պատմութեան կանչով ընթերցողին հանձնեց «Արցախի արծիվը» եւ ապա մերօրյա հերոսականութեանը պատկերող «Նահատակ լուստ» պոեմները:

Ժանրային առումով «Նահատակ լուստ»-ն հերոսական պոեմ է՝ քնարական շաղկապով: Նրանում առկա են ռեալիստական խոր ընդհանրացումներ, հոգեբանական նուրբ վերլուծություններ, զգացմունքային խտացումներ: Պոեմի նյութը իրական է: Գլխավոր հերոսը զորապետ Մոնթե Մելքոնյանն է, ֆոնը՝ Արցախի գորագնդերի մահու եւ կենաց գոյամարտը ազերի զավթիչների դեմ: Բանաստեղծը փառաբանում է լեգենդար Ավոյի փառքն ու արտասովոր սխրանքը: Պոեմը բաղկացած է երկու մասից: Առաջին մասը ընդգրկում է յոթ գլուխ, երկրորդը՝ ութ: Ավոյի համառոտ կենսագրութեանը, Արցախում պատերազմական գործողութեաններին մասնակցելը հիմնական ատաղձ են ծառայել պոեմի համար: Եր-

կի հյուսվածքի մեջ մեծ դեր է կատարել բանաստեղծի երեւակայությունը: Ռեալ իրականության եւ գեղարվեստական հնարանքի եզրերը միաձուլվել են, իրար լրացնող: Հայրենասիրական զգացմունքը խանյանին հնարավորություն է տվել երկին հաղորդել հուզականության ջերմ լիցք: Պոեմի հաջողությանը մեծապես նպաստել է հայ ժողովրդի պատմության առնչությունը Ավոյի կենսագրության հետ: Հերոսի արմատները կապվում են Սասունի, հայոց մեծ եղեռնից տեղահան եղած մի տոհմի, այսինքն՝ արեւմտահայության ճակատագրի հետ: Պոեմի մուտքը ընթերցողին տանում է հենց այդ ճակատագրի հետքերով: Առաջին գլուխը, որ վերնագրված է «Ծնունդ», անմիջապես ներկայացնում է Մոնթե-Ավոյի ճակատագիրը:

Պոեմի երկրորդ մասը նվիրված է Մոնթեի գործունեությանը Արցախում: Այստեղ խանյանը պատկերում է գործողությունների կուլմինացիոն կետերը՝ այդ շրջանակներում բացահայտելով հերոսի հայրենասիրական մղումներն ու փիլիսոփայությունը: Մոնթեն ներկայացվում է ե՛ւ որպես զինվոր, ե՛ւ որպես քաղաքագետ: Պոեմից իմանում ենք, որ Մոնթե Մելքոնյանը Արցախ է հաճախել 1991թ. աշնանը: Նա սեպտեմբերին արդեն մասնակցում էր Շահունյանի շրջանի՝ պատմական Գյուլիստանի մարտերին: Նա հենց առաջին պահից աչքի է ընկնում ռազմավարական իր արվեստով, քաջությամբ, վճռականությամբ: Գյուլիստանի Մանաշիդ, Բուզլուխ, Էրքեջ, Կարաչինար, Վերին-շեն գյուղերում Մոնթեն չի խնայում կամք ու հնար: Տարածվում է լուրը, որ նա սովորական զինվոր չէ: Չորս ամիս Գյուլիստանում մարտնչելուց հետո Մոնթեն 1992-ի Ամանորին Մարտունիում՝ Հին Վարանդայում, դառնում է հանուր հրամանատար: Երկրորդ մասի երկրորդ գլխում, որ կոչվում է «Երդում», սրտառուչ զեղումներով պատկերվում են հերոսի որդիական սերն ու զգացումները Արցախի հանդեպ: Դա Մոնթեի բնավորության գլխավոր հատկությունն է: Խանյանը կարողացել է ցույց տալ, որ իր հերոսի վարմունքը առաջին հերթին

բխում է դեպի իր պապենական հայրենիքն ու մայր ժողովուրդն ունեցած որդիական ազնիվ սիրուց: Երկրորդ, նրա արցախասիրությունը ակունքվում է հայ ժողովրդի ներկայի եւ ապագայի համար Արցախի դերի գիտակցումից եւ երրորդ, այդ գիտակցական վարմունքից էլ բխում է նրա անձնագոհությունը: Ահա, այդ ամենի խտացումից ծնվում է Մոնթեի բարոյական կերպարը: Փորձության տարբեր աստիճաններում բացահայտվում են հերոսի բնավորության գծերը: Մոնթեի միտքն ու հոգին լուսավորում են նրա ճանապարհը: Նրա բոլոր գործողությունները ներքնաբուխ մղումների արդյունք են: Խանյանը պատկերային թարմ հյուսվածքներով, հերոսի շրթերով ցույց է տալիս նրա ազնիվ վարքը: Մոնթեն Արցախ է եկել իր պապերի արյան կանչով, եկել է փրկելու Արցախի կապույտ երազը՝ Մայր Հայաստանին վերամիավորվելու նրա արդար տենչը: Եկել է դարձել Եմիշճան գյուղի բնակիչ եւ Արցախ մոր առջեւ խոստովանում է.

*Ջինվորի երդում ես քեզ եմ տալիս,
Ու պիտի անսամ քո հրամանին,
Երբ հրամանը մորից է գալիս,
Այնտեղ անելիք չունի թշնամին:*

Խանյանը պոեմում բացահայտում է թշնամու դիմագիծը: Այսօրվա ազերի սպան ու զինվորը երեկվա Ալփ-Արսլանի, Թալեաթ փաշայի թոռներն են, որոնք ուրիշի հողերին եւ ստեղծածին տիրելու ծարավով կանգ չեն առնում ոչնչի առջեւ, դիմում են նենգության, խաբեության, պատմության զեղծարարության, դաժանության, վերածվում արյունախում մարդակերների: Ազերի սպայի անմարդկային վարմունքն է ցույց տրվում «Դաժանություն» երրորդ գլխում: Մարտունու շրջանի Ամիրանլար ազերական գյուղը, հիրավի, դարձել էր չարիք շրջակա հայկական գյուղերի համար: Պատկերվում է հայ գյուղացիների ծանր ապրումները եւ նրանց անելանելի վիճակը: Հայտնի է, որ պատերազմի առաջին ամիսնե-

րին արցախյան շատ ընտանիքներ որոշել էին հեռանալ Արցախից, մարտադաշտում թողնելով միայն կրվող ազատամարտիկներին: Ավրն դեմ էր նման քայլին: Պոեմում լուսաբանված է այդ իրողությունը: Եվ ահա, երբ մի անգամ կանայք, ծերերը դիմում են Ավրին, թե ինչպես վարվեն նման պահերին, ո՞ր գնան, Ավրն պատասխանում է.

*- Ո՞ր պիտի գնանք,- ասում է Ավրն,-
Ո՞ւն պիտի թողնենք մեր լավ շեները,
Հին ու նորոյա երազով, ցավով,
Մենք Արցախինն ենք, Արցախը՝ մերը:
Պիտի բռունցքվենք՝ ճակատ ու թիկունք,
Պիտի պաշտպանենք հենց ինքներս մեզ,
Արցախցին ե՞րբ է ցույց տվել թիկունք,
Դժվարությունն այս կանցնի ծխի պես:*

Խանյանը ստեղծել է հակադրություն իր հայրենիքը պաշտպանող հայ զինվորի եւ ուրիշի հողին աչք տնկած ազերի ասկերի միջեւ: Արցախցին լույս է տանում հայրենի բարձունքն ի վեր, իսկ ազերին ուզում է վառել ողջ Արցախը: Ասկերը դարձել է պատմության զեղծարարներ թուրք պատմաբանների զոհը: Նրան հավատացնում են, որ հայն Արցախում գաղթական է, որ այստեղի վանքերը, եկեղեցիները թուրքն է կերտել.

*Որ Մովսես ու Դավթակ թուրք են,
Թուրք են Գոշն ու Արեւելցին,
Որ Ալավկա Որդին թուրք է,
Թուրք է նաեւ Գանձակեցին.
Որ թուրքինն են խաչքարերը,
Կամուրջները կամարակուռ,
Որ թուրքինն են եւ դարերը,
Եվ դարավոր վանք ու մատուռ:*

Բանաստեղծը ցույց է տալիս հայ զինվորի արյունակցական կապը պատմական անցյալի հետ: Նա գիտակցում է, որ թուրք մտավորականները դիմում են հերյուրանքի, որ սեփականեն Արցախի հողն ու մշակույթը: Արցախցին ինչպե՞ս կարող է հաշտվել նման ստի հետ.

*Արցախցին ինչպե՞ս չասի,
Պապիս տունն ու տեղը հայ է,
Շիրիմը հայ, խաչքարը հայ,
Սրբավայրն ու մատուռը հայ,
Աղբրի ակը եւ ջուրը հայ,
Պատի հիմքում պատգամը հայ,
Կալի ե՛ւ թին, ե՛ւ կամը հայ,
Պապենական խոսքը արդար
Ե՛վ հայերեն, ե՛ւ հայատառ...
Ամարասի պատերը կուռ
Հայերեն են խոսում դարեր,
Հայերեն են աղոթք կարդում
Գտչավանքի վե՛ն ու քարեր,
Հայերեն են միշտ զրուցում
Գանձասարի պատերը սեգ,
Հայերենն է իր մատուցում
Դադիվանքը ինչպես մի բերդ:*

Ս. Խանյանին հաջողվել է Ավոյին ցույց տալ որպես ուժեղ անհատականություն: Հերոսը բազմակողմանի հատկությունների կրողն է: Նա հայրենասեր է, ժողովրդասեր, ընկերասեր, թշնամու հանդեպ ցասուննալից, օջախի պատիվն իմացող:

Հայտնի է, որ Ավոն իր զորագնդով մասնակցել է Արցախի բոլոր վճռական ճակատամարտերին: Նա իր զորավարական տաղանդն է ցուցաբերել Շուշվա, Ջրաբերդի, Քյալբաջարի, Ասկերանի եւ այլ շրջանների թշնամական կրակակետերի ոչնչացմանը: Պոեմում

գեղարվեստորեն հետաքրքիր հնարանքներով պատկերված է Ավոյի խիզախությունն ու ունակությունը այդ բախտորոշ գործողություններում: Ավոն ցույց է տրված որպես կանթեղ, նրբագաց, անզամ հողի լեզուն հասկացող իմաստուն այր: Նա պայքարի է նետվում «հողի կոչով ու հորդորով», հայրենի հանդին, դաշտին, արտին բացելով իր սիրտը որդիական սիրով: Ավոն իր ժողովրդի պատմության գիտակն է, նա ցավ է զգում, երբ տեսնում է, որ թշնամին արմատներ է նետում հայոց հին ավաններում ու գյուղերում:

Պոեմն ավարտվում է «խիզախում» հատվածով, որտեղ նկարագրվում է Ավոյի հերոսական կյանքի վերջին էջը: Հարազատ մնալով պատերազմական իրադարձությունների հաջորդականությանն ու ճշմարտությանը, խանյանը ներկայացնում է Ավոյի շրջափակման մեջ ընկնելու պատմությունը, խորին ասոսանքով ու սրտի ցավով ցույց տալիս լեգենդար զորապետի ողբերգական մահը: Պոեմի վերջին հատվածը հուզական լիցքով ներկայացնում է 1993թ. հունիսի 12-ին Ավոյի նահատակության դեպքը եւ այդ կապակցությամբ տեսիլքային պատկեր՝ նվիրված հերոսի հավերժացած խորհրդին: Թշնամին ջախջախվել է.

*Բայց չկա Ավոն՝ Աստվածը մարտի,
Քնել է խաղաղ, հավիտյան քնով,
Ծիածանվել է ասես շրթերին
«Արցախ իմ, քայլիր հաղթության հունով
Ծառայել եմ քեզ որդիական սիրով,
Անհունի մեջ էլ որդիդ կմնամ,
Հոգիս վառել եմ քո հոգու հրով,
Կռվող ոգուդ մեջ մարտի կգնամ,
Կգնամ մարտի ցավով աններում,
Մինչեւ կհասնես քո հաղթանակին,
Երջանիկ եմ ես, մայր իմ, որ հեռվում
Ձայնդ լսեցի ճիշտ ժամանակին,
Եկա, մի հյուլեն դարձա հույս-շողիդ,*

*Եկա, ձուլվեցի սրբազան հողիդ,
Չակնկալեցի ոչ փառք, ոչ համբավ,
Իմ վերջին խոսքն է. «Քեզ բարի ճամփա»:*

Խանյանի «Նահատակ լուսո» պոեմը արցախյան գոյամարտին նվիրված մի հրաշալի հերոսապատում է, արժանի լեգենդար Ավոյի անվանն ու փառքին: Ուշագրավ է նաեւ «Միեր» պոեմը՝ նվիրված նահատակ հերոս Միեր Դանիելյանի խիզախությանը:

Արցախյան շարժման ու պատերազմի տարիներին Ս.Խանյանի գրիչը եղավ բեղմնավոր, ինչպես երբեք: Նա բացի իր վերոհիշյալ պոեմներից, գրել է բանաստեղծությունների շարքեր, որոնք մի ստվար ժողովածու կարող են կազմել: Տեղն է նշել, որ Արցախում թնդանոթների որոտի հետ բանաստեղծների մուսաները ավելի ակտիվացան: Արցախյան պոեզիան, հիրավի, այդ տարիների ընթացքում վերելք ապրեց: Գրքեր ու շարքեր տպագրեցին ոչ միայն ավագ սերնդի ներկայացուցիչները, այլև երեւան եկան տասնյակ երիտասարդ պոետներ, ընթերցողի հետ հանդիպեցին ոչ միայն առանձին բանաստեղծություններով, այլ գրքերով: Ավագ սերնդից Գ.Գաբրիելյանի, Վ.Յակոբյանի, Յ.Բեգլարյանի եւ մյուս տաղանդավոր գրողների հետ իր ազդեցիկ խոսքն ասաց Խանյանը: «Խորհրդային Ղարաբաղ» թերթում, «Արցախ» ամսագրում, շրջանային մամուլում Խանյանը հաճախակի է հանդես եկել: Նրա հրաշալի բանաստեղծական շարքերը տպագրվեցին Երեւանում՝ «Յայ գրող», «Դաշնակցություն» թերթերում, հաղորդվեցին ռադիոյով եւ հեռուստատեսությամբ: 1989թ. սկսեց լույս տեսնել ԼՂ Գրողների կազմակերպության օրգան «Արցախ» ամսագիրը: Հենց առաջին համարում զետեղվեցին Խանյանի «Իմ Ղարաբաղը» բանաստեղծությունը, հատված «Արցախցիները» պոեմից:

Ամեն անգամ, երբ ժողովրդի ճանապարհին խտանում են սեւ ամպերը, երբ սպառնում է թշնամին, զինվորագրվում է զրականու-

թյունը: Պատմությունը նման պահերին լեզու առած խոսում է նոր սերնդի հետ: Արցախյան պատերազմի տարիներին էլ մեր գրականությունը հարստացավ պատմական անցյալին նվիրված ստեղծագործություններով: Խանյանի գրական հունձքում եւս պատմական թեմատիկան հնչեցվեց՝ կապված արդիական խնդիրների հետ:

Այդ առումով արժե նշել «Արցախ» ամսագրի 1990թ. 5-6 համարներում տպագրված շարքը, որի մեջ մտնում են «Կավագ վանքը», «Տեսիլք», «Պապիս պատիվը», «Ես Արցախն եմ» հիանալի բանաստեղծությունները: Կավագը պատմական Դիզակի վանքային համալիրներից է՝ կառուցված 12-13-րդ դարերում: Այն գտնվում է Արեւսարին դեմ-դիմաց, բարձունքի վրա: Խանյանը նկարագրելով կիսավեր վանքը, հաստատում է, որ մինչեւ հիմա էլ այն հայոց «դարերի կնիքը վրան, էլի շնչում է եւ վշտոտ, եւ նուրբ»: Դեռ ավելին,

*Աշխարհի վրա մատ է թափ տալիս,
Մատից աստղերի շողեր են ցայտում,
Քիրսը՝ դեպ իրեն, ինքը՝ դեպի Քիրս,
Քայլում են անվերջ, բայց չեն հանդիպում:*

Վանքը այսօր սելջուկ-թուրքերին կանչում է դատի այն բանի համար, որ նրանց թռները կեղծում են պատմությունը, որ իբրեւ իրենք են կառուցել: Եթե այդպես է, ապա ինչո՞ւ հենց այդ սելջուկի թռը ավարեց վանքի դուռը, ջարդեց խաչը: Վանքը լեզու առած հայտարարում է.

*Ձինվորյալներ են ուխտավորներս,
Փրկության ժամին շեփորն է հնչում,
Ծլարծակում են թաղված հույսերս,
Հիմքերս կյանքի ավիշ են շնչում:
Մրսած բառերս կարթնանան նորից,
Կշարականվեմ հոգեւոր մարտում,
Կհառնեմ մի օր մթանած ծորից,
Կրկին կդառնամ խղճի դպրատուն:*

Ինչպես նկատում ենք, բանաստեղծության մեջ հնչում է պայքարի կոչը: Չետաքրքիրն այն է, որ այս շարքն ստեղծվել է այն օրերին, երբ դեռևս Արցախում մոլեգնած էր խորհրդային իշխանության երկաթե օրենքը՝ հովանի դարձած Պոլյանիչկո-Սաֆոնովյան ոհմակին, երբ յուրաքանչյուր արդար խոսքի համար հայ մտավորականին հալածում էին, նետում Շուշվա բանտը, մեղադրում ազգայնամոլության, սեպարատիզմի, ազգային թշնամանք սերմանելու մեջ: Սակայն ի հեճուկս հայ ժողովրդի հանդեպ բացահայտ այդ թշնամանքի, հնչում է ազատության եւ անկախության կոչող երգը: «Կավագ վանքը» երգի անմիջական շարունակություն կարելի է համարել Խանյանի «Տեսիլք» բանաստեղծությունը: Այստեղ նկարագրության օբյեկտը Ամարասն է: Բանաստեղծը գրում է, որ արցախցիներին «զատել են իր անցյալից, քանդել մեր սուրբ տունը»- խաբված Ստալինի սուտ խոստումներից: Այդպես, տառապել ենք տարիներ շարունակ եւ այսօր «հողն է տնքում մեր ցավերից»: Դառը խոհերի մեջ բանաստեղծը փարվում է Ամարասին, ուր լսում է «Մեծ Մաշտոցի» ձայնը, խոսում Գրիգորիսի հետ: Բացվում է տեսիլքը՝ կապված արցախցիների նորօրյա պայքարի հետ.

*Ապավինած խաչ ու գրին
Շարք են կանգնում սրբերը բյուր՝
Իսկ դեմ-դիմաց հենված թրին,
Ժպտում է մի Արցախա ծուռ:
Իսկ նրա շուրջ զորքն Արցախի,
Խաչ ու թրի հովանու տակ,
Հիմնն է երգում առանց վախի,
Գովում կռիվ ու հաղթանակ:
Եվ օրհնելով պայքար ու հող,
Թուր են տալիս ինձ պողպատե,
Որ Արցախի բախտով վառվող
Սերունդներին ես կտակեն:*

Պատմական անցյալի սրբազան քաջերը, անմարում հիշատակ դարձած պապերը, Արցախ աշխարհը դարավոր ոսոխների հարձակումներից պաշտպանած այրերը Խանյանի հայրենասիրական եւ պայքարի երգերում դարձել են խորհրդանիշեր, նոր սերունդներին գոյամարտի կոչող դաս ու ազդակներ: Բանաստեղծական թարմ ու ինքնատիպ պատկերներով, հոգեբանական հանոզիչ բացահայտումներով շարքի մեջ ընդգծվում է «Պապիս պատիվը» ստեղծագործությունը: Պատիվը՝ կապված արցախցու քաջության, հայրենասիրության, վճռականության հետ, շնչավորված է այստեղ: Պապի պատիվը քնարական հերոսի ուսերին թառել է ինչպես առասպելական թռչուն, նրա ձայնը զրնգում է քնարական հերոսի ականջներում, հույսերին ժպտում Քիրսա սարը, ծփում՝ Արեւսարը: Բանաստեղծը մեջբերում է հայոց սրբազան քաջերի անունները, վերհիշում Դիզակա հերոսներին՝ տունեցի Թեւանին, ակնաղբյուրցի Աբգարին.

*Նժդեհի ձին է խրխնջում Գեղում,
Արծազանքում է նրան անտառը,
Թշնամիների հենց պարտված տեղում
Դրոշ է դառնում նրա հանճարը:*

Պատմական անցյալի հերոսներն ու հերոսամարտերը տեսիլքի փոխված գոյամարտի են կոչում նոր գինվորյալներին, որ զորախմբվում են Քիրսի լանջերին ու ծածանում պայքարի դրոշը: Շարքն ավարտվում է «Ես Արցախն եմ» բանաստեղծությամբ: Բանաստեղծի հավատը հայրենի օջախի հավերժության հանդեպ վառ է եւ շողշողուն: Առհավատչյան մեր հին կոթողներն ու երգերն են, որոնք խոսում են հայերեն: Ոգեւորված բանաստեղծը բացականչում է.

*Հայեր են սեգ սարերս,
Խաչքարերս էլ՝ հայեր են,
Իմ հայածին դարերը,
Կպայքարեն հայերեն:*

Ինչպես տեսնում ենք, արցախյան շարժման հենց առաջին օ-

րերից բանաստեղծը իր գրչեղբայրների հետ միասին հնչեցնում է պայքարի կոչը՝ համոզված լինելով, որ հայրենի երկրամասի անկախությունը կապահովվի միայն ազատագրական գոտենարտի միջոցով:

Չերոսության թեման ժամանակի թելադրանքով դառնում է Ս. Խանյանի վերջին տարիների ստեղծած գործերի լեյտմոտիվը:

Լեռնային Ղարաբաղի ազատության եւ անկախության խնդիրը, որպես իրական հող, հերոսական բովանդակություն է հաղորդում Ս. Խանյանի նոր ստեղծագործություններին: Ընթերցողները ջերմորեն ընդունեցին Խանյանի բանաստեղծությունների նոր շարքերը «Չայ գրող» (2 մարտի, 1992, հ. 3) եւ «Դաշնակցություն» (հուլիս, 1992, հ. 12) թերթերի էջերում: «Չայ գրող»-ում տպագրված շարքը սկսվում է «Մաշտոցն Արցախում» բանաստեղծությամբ: Պատահական չէ այդ թեմայի աշխուժացումը հայ պոեզիայի արցախյան հատվածում:

Խնդիրը կայանում է նրանում, որ ադրբեջանական զեղծարար գիտնականները Արցախ աշխարհը համարում են ալբանական-ադրբեջանական-թուրքական, դրանով իսկ ժխտում հայության պատմական արմատները Մեծ Չայքի տասերորդ այդ լայնարձակ նահանգում: Շրջանցում են այն բոլոր հուշարձանները, որոնք հառնել են հայի ձեռքերով եւ կրում են մեր ժողովրդի ոգու կնիքը: Պարզ է, որ նման պարագայում հայ մտավորականությունը չպետք է լռի: Եհիշտ է, ժամանակին Բ. Ուլուբաբյանը, Պ. Սեւակը եւ ուրիշներ պատասխանել են թուրք զեղծարարներին, սակայն արածը դեռ քիչ է, որովհետեւ թուրքական արշավը Չայոց Արցախի պատմության դեմ նոր թափով շարունակվում է նաեւ այսօր: Եվ ահա, երբ Ադրբեջանը սանձազերծել է պատերազմ արցախցիների դեմ, հայ ազատամարտիկների կողքին զենքի ու ժգնությամբ մարտնչում է նաեւ գրականությունը՝ առաջին պլանի վրա մղելով ոչ միայն առօրյայի խիզախությունը, այլեւ անցյալի հերոսական էջերը եւ հայտնի անհատների գործունեությունը: Այդ տեսակետից հատկանշական են Խանյա-

նի «Մաշտոցն Արցախուն», «1992-Ամանոր», «Ձահելացրեք անտառը» բանաստեղծությունները: Խանյանը Մաշտոցի անվան հետ է կապում Արցախի հայաշունչ ոգով մեռնովելը, անմար լուսո խորան դառնալը, ինչպես պոետն է ընդգծում.

*Նրա շնչից ծնվեց դպիրն Ամարասի,
Պատմագիրը ծնվեց, երգիչը մեծ,
Հայոց երգերը հին նման մեղվապարսի,
Շուրջպարի մեջ առան բարձունք ու քերծ:
Ու շքերթը ծնվեց մեսրոպանուն մանկանց.,
Մեսրոպացան օջախ, սեր ու հարգանք,
Անգամ բողբոջներին ու թերթերին ծաղկանց,
Հովը պար էր բռնում նրա անվամբ:
Եվ նա եկավ Արցախ՝ լույսը հոգու վրա,
Եվ դարերում դարձավ նրան սատար,
Նրա աղոթքներով, օրհնանքներով նրա
Ողջ Արցախը դարձավ մեսրոպատառ:*

«1992-Ամանոր» բանաստեղծությունը հեղինակի ծանր ապրումների արդյունք է: Հայտնի է, որ 1992-ի տարեմուտին Արցախը ռմբակոծվում էր չորս կողմից, Ստեփանակերտը դեռևս օղակման մեջ էր: Բանաստեղծը դառնացած է աշխարհից, Ամանորի թելերին տեսնում է Արցախի արյունը, արթնացել է մարդակեր գազանը, ձգտում է քերել հայոց տառերը Արցախաբերդերից, գավթել անգամ մեր երգերը.

*Խլացած աշխարհը նորից
Չի լսում օգնության կանչերս,
Կուրացած աշխարհը նորից
Չի տեսնում անարդար տանջվելս:*

Սակայն բանաստեղծը չի հուսալքվում, նա «Ձահելացրեք անտառը» հրաշալի բնաստեղծության մեջ քնարական հերոս ընտրելով իր Խաչատուր պապին, արդար է համարում այն պատերազմը, որ զոհեր խլելով հանդերձ, ապահովում է ժողովրդի ազա-

տությունն ու անկախությունը: Բանաստեղծությունը գրված է քնարական շնչով, ժողովրդական մտածելակերպի, արտահայտամիջոցների կնիքով: Խաչատուր պապը խորհուրդ է տալիս ջահելացնել անտառը: Բազմանշանակ նա ասում է.

*Ուր նայում ես՝ ծերերն են շատ,
Կարծես ստերջ է դարը,
Փոքրերով է տունն արելշատ,
Ջահելացրեք անտառը:*

Բանաստեղծը վերհիշում է իր մանկության օրերին հնչած այս խորհուրդը եւ որ ընկալում էր միանշանակ, ուղղակի.

*Ինձ թվում էր՝ հայրս, քեռիս,
Պիտի գնան մեր սարը,
Ճյուղահատեն ծառերը հին,
Ջահելացնեն անտառը:
Կռիվ եղավ, տուն չդարձան
Իմ քեռին ու եղբայրը,
Պապիս խոսքը նոր հասկացա՝
Ջահելացրեք անտառը:*

Շարքի հաջողված գործերից են «Ես էլ այսպես թող ապրեն», «Լորիս ճգնավորյանին», «Խորհուրդ» բանաստեղծությունները, որոնք վերը նշված ստեղծագործությունների համաձուլվածքում նոր խոսք են բանաստեղծի համար:

«Դաշնակցություն» թերթը Խանյանի նոր բանաստեղծությունների շարքը տպագրել է համառոտ անոտացիայի ուղեկցությամբ, որ բերում ենք որոշ կրճատումով.

«Բանաստեղծ, թարգմանիչ Սոկրատ Խանյանը ապրում եւ ստեղծագործում է Ստեփանակերտում: Բանաստեղծը 12 ժողովածուների հեղինակ է: Վերջերս Երեւանի պետական համալսարանի հրատարակչությունը լույս ընծայեց նրա նոր գիրքը՝ «Արցախյան ղողանջները», որի քնարական հերոսը հարազատ քերձ ու քարափներին կառչած, իր պապենական հողն ու օջախը

կրծքով պաշտպանող հպարտ արցախցին է: Այս հրաշալի գրքի հուզաթաթավ բանաստեղծությունների տողերի միջից բաբախում են մարտնչող սիրտն ու հավատի ոգին:

Ծանր է տաղանդավոր բանաստեղծի ճակատամարտը՝ իր սքանչելի տաճարների զանգերի լեզվակը հատել փորձող բիրտ ուժերի դեմ, ինքն էլ քաջ գիտե, սակայն այլ ճանապարհ չկա, պիտի մարտնչել նաեւ գրչով: Ու դեպի թշնամու դիրքերը մղվող ազատամարտիկի աներերությամբ մարտնչում է Սոկրատ Խանյանի հոգնել չիմացող գրիչը՝ շանթ ու որոտ տեղալով ոսոխի վրա: «Ի վերջո, հաղթանակը մերը կլինի, քանզի մենք գիտենք՝ ինչի համար ենք կռվում»: Սրանից մեկ տարի առաջ ասված նրա խոսքերն ենք հիշում, որ այսօր իրականություն են դարձել, վկան՝ մեր վերջին հաղթանակները եւ ամենամեծը՝ Շուշիի ազատագրումը...»:

Շարքը բացվում է «Ո՞նց մնամ» սրտառուչ բանաստեղծությամբ: Քնարական հերոսը գործի բերումով Արցախում չէ: Նրա հարազատը հորդորում է, որ չվերադառնա Արցախ, որովհետեւ այնտեղ պատերազմ է ընթանում, վտանգավոր է: Քնարական հերոսը հիշում է Արցախից իրեն կանչող ձեռքերը, հերկերը, վերքերը, պապի խիղճը, թռռան ճիչը եւ ընդհանրացնում.

*Իմ կյանքն ու բախտն են կանչում այնտեղից,
Պատիվն ու թախտն են կանչում այնտեղից,
Իմ սուրբ օջախն է կանչում այնտեղից,
Ինչպե՞ս չզնամ:
Արցախն է կանչում, ասա, ո՞նց մնամ...*

Այս բանաստեղծությունը արցախյան ցավի արձագանքն է: Հայտնի է, որ պատերազմի սկզբնական շրջանում որոշ արցախցիներ հեռացան հարազատ օջախներից եւ ծվարեցին հեռուներում: Արդարացված եւ չարդարացված այս լքումները համաժողովրդական քննարկման առարկա դարձան: Ս. Խանյանը այդ երեւույթի թարմ հետքերով գրեց բանաստեղծությունը, որի հիմնական ատաղձը մարտնչող Արցախի զինվորը դառնալու լուսավոր գաղափարն է:

Շարքի «Արծիվը» բանաստեղծության մեջ խանյանը պատմական էքսկուրս է կատարում: Նա հայ ժողովրդի ուժի խորհրդանիշը հանդիսացող արծվի բանաստեղծականացման միջոցով նշում է մեր պապերից ժառանգած հերոսականությունն ու վճռականությունը: Պատկերելով ժայռի անհաս կատարին բազմած արծվի եւ իր ձագերի թռիչքները, բանաստեղծը ընդհանրացնում է.

Պարզ է, թե ինչու քաջ պապերը մեր

Ուժի խորհուրդը արծիվն են ընտրել:

«Կարոտս» բանաստեղծության քնարական հերոսը իր կարոտը ներկայացնում է որպես «չհոգնող ճամփորդ», որ «թռչում է լույսից էլ արագ»: Խոսք բացելով ընթերցողի հետ, նա ընդգծում է, որ իր կարոտը Սիփանն ու Վարազն են, Աստղիկի մեծ սերն է, Տիգրանի համբավը, Մաշտոցի գրերն են եւ Վարդանի արշավը: Իր կարոտը նա կամրջում է ներկայի հետ, այն համարում Արցախի թեւերը:

Որդիական ոգեշունչ մի խոսք է «Երկիր Յայոց» բանաստեղծությունը: Քնարական հերոսը իրեն համարում է հայրենիքի երգով բարուրված որդի, որ հիմա օրորում է նրա երգը: «Ես ափիդ մեջ հասակ առած, քեզ առել եմ իմ ափի մեջ» - ընդգծում է քնարական հերոսը եւ խոստանում, որ առանց սուրբ Յայրենիքի իր ապրելը իմաստ չունի: Շարքի վերջին ստեղծագործությունը կոչվում է «Դարերդ ի վեր»: Բանաստեղծը դիմելով Արցախ աշխարհին, ներկայացնում է նրա հերոսական պատմությունը՝ արիությունը, աշխատասիրությունը: Բայց 20-րդ դարում «Մի նենգ ուղեղ» եւ «Մի սեւ ձեռք» Արցախը նետեցին կառափնարան: Սակայն Արցախն ապրեց՝ անկախության երազը հոգում եւ ոտքի ելավ վերամիավորվելու իր մորը՝ Յայաստանին: Նպատակը հստակ է, երազը՝ վճռական.

Քո պատիվն են ուզում պահել,

Քո անունը, քո լեզուն...

Թշնամին ուզում է Արցախից խլել լեզուն, խաչել նրան, սակայն զուր ջանքեր են դրանք, որովհետեւ հայրենիքը պայքարում է իր պատվի համար: Շարքն ավարտվում է «խաչենածոր» հրաշալի

բանաստեղծությամբ: Նկարագրելով Արցախի երակներից մեկը՝
Խաչենաձորը, բանաստեղծը նրա սարերը համեմատում է այրու-
ձիու հետ, ծառերը՝ նետերի, ժայռերը՝ սրած թրերի: Անձնավորե-
լով Խաչեն գետը, Խանյանը հիշում է իր Խաչի պապի արժաթ գո-
տին: Արյունակցական այդ կապը բերում հասցնում է մեր օրերին:
Խաչեն ձորում ապրած մեր պապերի հուշերին գումարվում են
մեր սրտերի երազները:

Ժամանակին «Գրական թերթը» (2006թ., 10 մարտի) արձա-
գանքել է Ս. Խանյանի «Հայ պոեզիայի զարգացման միտում-
ներն Արցախում (1950-1990-ական թթ.)» ուսումնասիրությանը:
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Դանիել-
յանը գիրքը համարել է «մարտնչող բանաստեղծության պատ-
մություն» և ընդգծել. «Ս. Խանյանը քննության ճիշտ բանաձև է
ընտրել՝ գնահատությունների մեջ տարբեր առիթներով ապավի-
նելով նաև մայր երկրի անմիջական ու խորունկ գնահատու-
թյուններին՝ առանձնակի ուշադրություն դարձնելով Հայաստա-
նի գրականագիտական մտքին (Ս. Աղաբաբյան, Ա. Բաբայան, Ս.
Սարինյան, Ս. Արզումանյան, Վ. Մնացականյան և ուրիշներ) և
բանաստեղծական հոգածու վերաբերմունքին (Պ. Սևակ, Գ. Մա-
հարի, Հ. Շիրազ, Ն. Ջարյան և ուրիշներ): Մի կողմից երևան է
զալիս հարազատ լեռնաշխարհի գրական արձագանքը բարձր
ու անզիղջ չափումներում ճշտելու գիտնականի ձգտումը, մյուս
կողմից ստեղծում է գրապատմական զարգացման առավել ամ-
բողջական պատկեր, ուր նպատակը միայն Հայաստանի բա-
նաստեղծական զարկերակի բարերար ազդեցությունը գրական
ազգային ճանապարհի ընտրության խնդրում բացահայտելը չէ,
այլ նաև հայ գրականության միասնությունը տեսնելու նրա ու-
ժը»: Ճիշտ են վարվել և՛ Ս. Խանյանը, և՛ տասհատորյակի խմբա-

գիր Յ. Մուսայելյանը, որ Ս. Դանիելյանի այդ գրախոսությունը զետեղել են 5-րդ հատորում, առաջաբանից առաջ:

«Քննադատության նախադրյալներն ու խորհուրդները» տեսական ակնարկից հետո Ս. Խանյանը խորքային իմացությամբ ու հմտությամբ ամբողջության մեջ դիտարկել ու արժեքավորել է Արցախում ստեղծված հայ պոեզիան՝ թեմատիկ բազմազանությամբ, սերունդներին հանձնելով լուրջ ուսումնասիրություն:

Հսկայական են Ս. Խանյանի ջանքերն Արցախում ստեղծված ոչ միայն պոեզիայի, այլև արձակի բնագավառում: Առաջին անգամն է, որ հայ գրականության անբաժանելի մի մասը կազմող արցախյան արձակն այդպես ամբողջությամբ ուսումնասիրվում է ու ներկայացվում որպես ուսումնական ձեռնարկ: «Առաջաբանի փոխարեն» խոսքում Ս. Խանյանը քսաներորդ դարի երկրորդ կեսի հայ գրականության համապատկերի վրա գնահատում է 20-րդ դարի երկրորդ կեսին Արցախում ստեղծված արձակի ձեռքբերումները՝ հետադարձ հայացք ձգելով այն հիմքերին, որ հող են հանդիսացել նրա զարգացմանը: Նա նշում է. «Հայտնի է, որ արվեստի զարգացման հիմքը կյանքն է: Հենց նրա թելադրանքով է տեղի ունենում գրականության և արվեստի ընդհանուր թարմացումը, երևան հանվում կարևոր հիմնախնդիրների առաջադրումը, թեմատիկ-գաղափարական և գեղարվեստական առանձնահատկությունների խորքային ու բազմերանգ որոնումներն ու գտնումները» (Ս. Խանյան, Ընտիր երկեր, 10 հատորով, հ. 6, էջ 6, 2010թ):

Գրականագետն իր այդ մոտեցմամբ ընդգծում է անհատի պաշտամունքի քննադատության նշանակությունը և ապացուցում, որ այդ իրադարձությունից հետո մեր արձակը նոր ուղի է մտել իրականության և մարդու հոգեբանության մերձեցմամբ: Եվ ծավալուն այդ հատորում տեղ են գտել Ս. Աբրահամյանի, Ի. Ալավերդյանի, Բ. Ուլուբաբյանի, Մ. Հովհաննիսյանի, Կ. Դանիելյանի, Մարտիրոս Որբնի, Մարսել Հայկի, Ա. Ղահրիյանի, Կ. Գաբրիելյանի:

նի, Վ. Քոչարյանի, Ի. Արցախեցու ստեղծագործությունները բնութագրող ուսումնասիրությունները:

Գրքի նշանակությունն ընդգծելու համար կարևոր ենք համարում նշել, որ հատորը բացվում է գրականագետ Յ. Մուսայեյանի «Ձեռնարկ, որի կարիքն զգացվում է» գրախոսությամբ: Բերելով աշխատության անհրաժեշտությունն ու ուսանելի կողմերը՝ Յ. Մուսայեյանը նշել է. «Քրտնաջան և կարևոր գործ է կատարել Ս. Խանյանը: Այն կհետաքրքրի ոչ միայն կրթության բնագավառում աշխատող ուսուցիչներին և դասախոսներին, այլև գրականության պատմաբաններին ու ընթերցողներին» (նույն տեղում, էջ 5): Այդպես էլ տեղի է ունենում: Այն հրաշալի ձեռնարկ է մեր մագիստրանտների համար:

Արդեն մի քանի տարի է, ինչ մագիստրատուրայի ուսումնական պլանում մտցված է «Ազգային ճակատագիրը և հայ պոեզիան» առարկան: Այս ուղղությամբ ևս իր լուրջ խոսքն է ասել Ս. Խանյանը: Նրա «Ազգային ճակատագիրը և հայ պոեզիան» դասագիրքն առաջին արդյունավետ փորձն է հայ իրականության մեջ, որն արժանացել է մեր մի շարք գրականագետների բարձր գնահատականին:

ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարության կոլեգիայի որոշմամբ տպագրված այդ դասագիրքն ունեցել է լայն արձագանք: Դրանց մի մասը բերվել է 7-րդ հատորի սկզբում: Գրականության անվանի տեսաբան Զ. Ավետիսյանի «Արցախյան մարտազանգի ղողանջները», Ա. Աթայանի «Արժեքավոր ուսումնասիրություն», գրող Դ. Միքայելյանի «Տարիների բարձունքից», բանաստեղծ-հոգեբան Ա. Թովմասյանի «Ս. Խանյանի «Ազգային ճակատագիրը և հայ պոեզիան» գրախոսությունները գնահատման տարբեր երանգներով ներկայացնում են բազմապատակ գիտնական-մանկավարժի այս, հիրավի, բարձրարժեք դասագիրքը: Տեղին ենք համարում ընդգծել, որ այս դասագիրքն արժանվույնս է գնահատվել նաև Հայաստանի Հանրապետու-

թյան ԲՈՅ-ի կողմից, որի շնորհիվ հեղինակն արժանացել է պրոֆեսորի դիպլոմի:

Կցանկանայինք նշել մի առանձնահատուկ երանգ, որ երևում է դասագրքում: Հայաստանում և Արցախում ապրող հայ բանաստեղծների ստեղծագործություններին զուգահեռ Ս. Խանյանը լուրջ ուշադրություն է դարձրել սփյուռքում ապրող և ստեղծագործող բանաստեղծների հունձքի գնահատմանը: «Սփյուռքահայ պոեզիայի ցավն ու հույսը» բաժնում հանգամանալից վերլուծված և գնահատված է սփյուռքահայ պոետների հայրենապատումը: Ոչինչ չի մոռացվել գրքում: Առասպելական ժամանակներից սկսած մինչև մեր օրերի պոեզիան գնահատվում է որպես ազգային ճակատագրի պոետական վավերագրություն: Ազգային ցավի և հույսի արտահայտություններ են գրքի բոլոր չորս գլուխները, դրանց գումարած «Հայոց մեծ եղեռնը հայ պոեզիայում» և «Ոչինչ չի մոռացվել, ոչ ոք չի մոռացվել» բաժինները:

Փորձառու և հմուտ գրականագետի ընդհանրացումներ են դասագրքի «Ամփոփում» բաժինը:

Լայն են Ս. Խանյանի գրականագիտական պրպտումների շրջանակները: Երկար տարիներ բուհում դասավանդելով «Հայ գրականության պատմություն», «Գրականության տեսություն» առարկաները, նա գիտական դիտարկման է ենթարկել մեր գրականության մեծերի նշանաձող հանդիսացող երկերը և ժամանակին հանդես եկել թե՛ մամուլի էջերում և թե՛ առանձին մենագրություններով: Տասհատորյակի 8-9-րդ հատորներում տեղ են գտել գրականագետ-մանկավարժի ընտիր գործերը՝ նվիրված 7-րդ դարի բանաստեղծ Դավթակ Քերթողի, 10-րդ դարի հանճարեղ պոետ Գրիգոր Նարեկացու, 18-րդ դարի անմահ երգիչ Սայաթ-Նովայի, 19-րդ դարի մեծագույն գրող-լուսավորիչ Խաչատուր Աբովյանի, մեր անմահ դասականներ Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի, Վ. Սարոյանի, Ե. Չարենցի, Պ. Սևակի, Հ. Մաթևոսյանի և մյուս ականավոր գործիչների ստեղծագործական հունձքին:

9-րդ հատորի նկատելի բաժինն են կազմում ռուս դասականներին նվիրած էջերը: Այստեղ տեղ են գտել Ա.Ս. Պուշկինին, Ն.Գ. Զերնիշևսկուն, Մ. Գորկուն, Ֆ.Մ. Դոստոևսկուն Վ. Բրյուսովին, Վ. Մայակովսկուն, Ն. Օստրովսկուն, Մ. Շոլոխովին, Ն. Տիխոնովին, Ալ. Բլոկին ընծայած գիտական աշխատանքները, որ ժամանակին տպագրվել են մամուլում:

Ս. Խանյանը տարիների ընթացքում ակտիվ մասնակցություն է ունեցել թատերական գործի կազմակերպմանը՝ լինելով Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի գեղարվեստական խորհրդի անդամ: Նա հանդես է եկել նաև թատերախոսություններով, որոնց մեծ մասը զետեղված է 10-րդ հատորում: Այստեղ զետեղվել են նաև արվեստի տարբեր տեսակների գործիչներին նվիրած հոդվածներն ու գրական դիմանկարները: 10-րդ հատորի առյուծի բաժինն է կազմում «Գրականություն-պետություն-հասարակություն-բանակ» ուսումնասիրությունը՝ նվիրված Հայոց բանակի հզորությանն ու անցած հերոսական ճանապարհին: Այդ թեման է արծարծված նաև «Բաքու-Վիեննա» ճամփորդական նոթերում և ԼԴՀ ՊԲ ԿՊՇ-ի անցած ուղին նկարագրող վիպակում:

Տասհատորյակի 8-10-րդ հատորներում տեղ են գտել այնպիսի հետազոտություններ, որոնք առայսօր կարոտ են եղել գրականագիտական հոլովման և հետաքրքրել են բանասերներին: Դրանցից են «Թումանյանը և Արցախը», «Հայդուկային երգերի շեփորահարը» (Ավ. Իսահակյան), «Թևավոր երգերի ճախրանքը» (Աշուղ Ջիվանու ստեղծագործությունը), «Հ. Թումանյանը և Ե. Չարենցը», «Պարույր Սևակի դասերը», «Վ. Սարոյանի աշխարհը», «Թաթուլ Հուրյանի սխրանքը», «60 տարիների խորքից հնչող առողջ ձայն» (Ա. Ծառուկյանի «Թուղթ առ Երևան» պոեմի մասին), «Ճախրող նամականի» (Ս. Խանգաղյանի և Ի. Ալավերդյանի նամականին), «Հր. Մաթևոսյանի գրական հայացքները», «Հայ գրականության գերաստղը» (ակադեմիկոս Ս. Սարինյանի

մասին (8-րդ հատոր), «Ն. Ջարյանի դրամատուրգիան», «Տաղանդի լույսը» (Ժ. Անդրյանի մասին), «Ղ. Աղայանի ոգին Ացախուն» (9-րդ հատոր), «Պատվի համաժամանակյա հոլովունը» (Ալ. Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայի նոր բեմադրությունը), «Մեր պատմությունը մեր հիշողությունն է», «Զոհրապը մեծարուն է Շիրվանզադեին» և այլ գործեր (10-րդ հատոր):

Կյանքի իրադարձություններով հարուստ ուղի է անցել Ս. Խանյանը: Նրա տաղանդը դրսևորվել է նաև հուշագրության ժանրում: Գրական-հասարակական, ճանաչողական-դաստիարակչական երանգներով հագեցած գործեր են «Հանդիպումներ Ն. Ջարյանի հետ», «Անմոռանալի Մարգար Դավթյանը», «Նա ապրեց՝ Արցախն իր սրտում» (բանաստեղծ Միքայել Հարությունյանի մասին (8-րդ հատոր), «Ս. Կապուտիկյան-անմոռաց անուն», «Հորովելված հավերժություն» (Գ. Գաբրիելյանի մասին), «Մեծն Սևակը» (9-րդ հատոր), «Նա ապրում էր Արցախով» (Վահե Օշականի մասին), «Երեք հանդիպում մարշալ Բաղրամյանի հետ», «Նրա սիրտն էր երգում ժողովրդի սիրով» (ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Ա. Պետրոսյան (10-րդ հատոր):

Այս ամենը վկայում է այն մասին, որ Ս. Խանյանի և՛ բանաստեղծական, և՛ գրականագիտական հունձքը կատարվել է ժամանակի անհրաժեշտ փոփոխությունների խաչմերուկներում, որոնցով էլ բնութագրվում է այդ ժառանգության քաղաքական-հասարակական և մշակութային անուրանալի արժեքը:

10-րդ հատորը մի յուրահատուկ հաշվետվություն է: Նրա վերջին էջերում բերված է Ս. Խանյանի բանաստեղծական ժողովածուների, մենագրությունների, ամսագրերում, հանդեսներում և առանձին ժողովածուներում զետեղված գիտական աշխատանքների, ինչպես նաև կենտրոնական թերթերում տպագրված հոդվածների ցանկը, որոնց ընդհանուր թիվը հասնում է մոտ 400-ի:

Ս. Խանյանի Ընտիր երկերի 10-հատորյակը ծանրակշիռ ներդրում է հայ մշակույթի պատմության մեջ, որի ուսուցողա-

կան, գրապատմական և գեղագիտական նշանակությունը միշտ հետաքրքրելու են ոչ միայն բանասերներին, այլև գրականության պատմությանը հետաքրքրվողներին և ընթերցողների լայն շրջանակներին:

Ճանապարհը շարունակվում է: Ս. Խանյանի նոր ստեղծագործությունները ապացուցում են, որ նա նման է իսկ եւ իսկ իր մայր Արցախի բնությանը՝ միշտ թարմացող, բուրդող, ինքն իրենից վերընծյուղվող: Հավատացած ենք, որ բանաստեղծը դեռ շատ հանդիպումներ կունենա ընթերցողների հետ,- նոր կուտակումներով, նոր ժողովածուներով:

Սակայն դա դեռ ամենը չէ:

Մենք մեկ անգամ չենք գոհունակությամբ նշել Ս. Խանյանի նախանձելի աշխատասիրությունը: Այդ են վկայում «Ընտիր երկերի» 10-հատորյակից հետո նրա նոր ուսումնասիրությունները, գիտական հոդվածներն ու գրախոսությունները:

2010-2011թթ. Հայաստանի եւ Արցախի տարբեր հրատարակչություններ լույս ընծայեցին Արցախում ապրող եւ ստեղծագործող գրողների արձակ եւ չափածո երկերի մի շարք ժողովածուներ, որոնց մեծ մասը համապատասխանում է գեղարվեստական երկերին ներկայացվող գնահատման չափանիշներին:

Սուրատ Խանյանը ոչ միայն ընթերցեց նշանածող հանդիսացող գրքերը, այլեւ գրախոսեց՝ հանդես գալով Հայաստանի, Արցախի եւ Ռուսաստանի մամուլի էջերում: Եվ ոչ միան այդ: Ս. Խանյանը ակտիվորեն մասնակցում է գրականության գծով կազմակերպվող միջազգային ու հանրապետական գիտաժողովներին՝ ասելով իր ազդեցիկ խոսքը:

Վերջերս Երեւանում տպագրվեց ականավոր բանաստեղծ, Հայաստանի պետական մրցանակի դափնեկիր Արտեմ Հարությունյանի պոեզիան լուսաբանող ուսումնասիրությունը: ԱրՊՀ հրատարակչությունը լույս է ընծայել Խանյանի «Միջնադարյան հայ առակագրություն. Մ. Գոշ, Վ. Այգեկցի» ուսումնասիրական ձեռնարկը: Ինչ

վերաբերում է սույն ժողովածուին, ապա այն կարող ենք համարել նոր խոսք արդի հայ գրաքննադատության բնագավառում: Ուշագրավը նաեւ այն է, որ հեղինակը ժողովածուն նվիրում է հայ ժողովրդի Արցախյան ազգային ազատագրական պայքարի հրաշամանուկը հանդիսացող Լեռնային Ղարաբաղի Յանրապետության հռչակման 20-ամյակին: Գրքում զետեղված են այն ուսումնասիրություններն ու գրախոսությունները, որ գրվել են 20-րդ դարավերջի մեր ազգային գոյամարտն արտացոլող երկերի վերաբերյալ:

Ս. Խանյանը իր տաղանդի երանգներն է բերում նաեւ պոեզիայում: Նրա բանաստեղծական նոր շարքերը ապացուցում են, որ արարող միտքն ու կենսաթոթիք սիրտը երբեք չեն ծերանում: Մենք այս խորհուրդը բացատրում ենք նրանով, որ բանաստեղծգրականագետ Ս.Խանյանը իր ոգեշնչման աղբյուրը համարում է ազատ ու անկախ, հպարտ ու անպարտ մեր ավանդական Յայոց Արցախը, որի զինվորյալ զավակներից է եւ ինքը:

Ս.Խանյանը անխոնջ մտավորական է, հմուտ գիտնական-մանկավարժ: Նրա ղեկավարությամբ վերջին տարիների ընթացքում հայ գրականության գծով թեզեր են պաշտպանել տասնյակ մագիստրանտներ, ստանալով մագիստրոսի գիտական կոչում: Նա լրջորեն օգնում է իր ասպիրանտներին, որոնք աշխատում են թեկնածուական ատենախոսությունների վրա:

Մեր վաստակաշատ նահապետին՝ Սոկրատ Խանյանին մաղթում ենք արցախյան երկարակեցություն, ստեղծագործական նորանոր հաջողություններ:

Անահիտ ԱԹԱՅԱՆ

*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ, ԱրՊՀ
հայ գրականության և լրագրության ամբիոնի վարիչ*

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈՐՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

(Գրական դիմանկար)

1. ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ

2011թ. Վ. Հակոբյանը «Պոեմ իմ մասին կամ 24-ն անց 81 թույտ» բանաստեղծությունների ժողովածուի համար արժանացավ ՀՀ նախագահի 2010թ. մրցանակին: Դա անակնկալ չէր ինձ համար: Ես, որ ուշի-ուշով հետեւել եմ նրա պոետական հունձքին եւ համարյա գրախոսել նրա բոլոր ժողովածուները, դեռեւս 1991թ. հրատարակել առանձին մենագրություն՝ «Ցավի եւ սիրո պոեզիա» խորագրով, ողջունել եմ նրան, շնորհավորել եւ հաղորդել, որ կրկին ու կրկին վերընթերցել եմ իր «Ձատիկը ջրավազանի հատակին» պատմավեպը եւ ավարտել ծավալուն հետազոտություն: Ինչպես միշտ, նա իր գոհունակությունն է հայտնել եւ նշել, որ աշխատում է բանաստեղծությունների նոր շարքի վրա:

Այդպես է եղել միշտ: Վ. Հակոբյանի օրն ու ժամը շիկացած է եղել եւ է պոեզիայի սրտաբուխ հրով՝ ակունքված հայրենի երկրի ընդերքից ու մայր ժողովրդի սրտից: Եվ ինձ հմայել է նրա գտած կենսաթրթիռ երգը ու միաժամանակ զարմացրել, որ միշտ դժգոհել է ինքն իր ստեղծածից եւ նույնիսկ արարելու բանածեւ դարձրել «Բանաստեղծությունը, որի համար ծնվել է մարդը, դեռ ուշացում է», պոեզիան շաղկապելով տիեզերական շարժման հետ:

Աշխարհում հոլովվում է «Արցախյան ֆենոմեն» հասկացությունը, որ վաստակել է արցախցին դարերի խաչմերուկներում իր ազատաբաղձ ոգու, զինվորյալի կամքի, արարող մտքի, պայծառ հիշողության, ազնուրաց հայրենասիրության եւ այլ բարեմասնությունների շնորհիվ: Այս աստվածանվեր բնավորության գծերը արցախցիները նոր երանգներով դրսևորեցին Արցախյան ազգային ազատագրական պայքարի տարիներին, պայքար

որի շեփորահարներից է Վ. Չակոբյանը: Բանաստեղծ-քաղաքացին, քաղաքացի-բանաստեղծը դարձավ ոչ միայն ոգեշունչ երգիչը, այլև նոր հորիզոններ բացեց պոեզիայի աշխարհում:

Վ. Չակոբյանը նոր խոսքի վարպետ է բոլոր այն մոտիվների արժարժման մեջ, որոնց ձեռք է մեկնել ու փնջել իր ինքնատիպ շարքերն ու գրքերը: Նա նորարար է նաև պոետական հայրենապատումի մեջ, որն ինձ իրավունք է վերապահում նրան համարելու նարտական պոեզիայի դրոշակակիր: Արցախյան գոյամարտի գեղարվեստական տարեգրության ֆիդայի Վ.Չակոբյանի հայրենապատումը հայ պոեզիայի գանձարանի բազմերանգ էջերից է, որն արժանի է ամենայն ուշադրության: Նկատվել է, որ Վ.Չակոբյանի բանաստեղծության ժամանակն արցախյան շարժման պատմությունն է, ուր արցախյան ֆենոմենի բանաստեղծական պատկերն ուրվագծվում է որպես բնաշխարհ, ժողովուրդ եւ տիեզերական առնչություն: Գիշտ է նկատել գրականագետ Արքմենիկ Նիկողոսյանը. «Արցախյան հերոսամարտն իր հաղթական ու ողբերգական դրվագներով՝ տիեզերական իրադարձություն է Վարդան Չակոբյանի ընկալումներում, որը մղում է էպիկական ուժի ընդհանրացումներին, իսկ Արցախը սոսկ ծննդավայր չէ նրա համար, այլ գոյաբանական կենսատարածք, որը եւ առարկայական է դարձնում տիեզերական շարժումների էքսզիստենցիալ սարսափների զգացողությունը, եւ բացառիկության հպարտություն շնորհում՝ թեկուզեւ խորքում կրկին դրամատիկ շեշտադրումներով» (Վ.Չակոբյան, Փակիր աչքերդ՝ չերեւաս), Երեւան, 2011, էջ 6:

Չիրավի այդպես է: Այդ են վկայում վերջին տարիներս տպագրված նրա «Քրիստոսի ծաղիկները», «Թեւերի հեռուն», «Քարի շնչառությունը», «Բանաստեղծությունը սահմանից դուրս», «Երգը որպես հանդիպման վայր», «Պոեմ իմ մասին կամ 24-ն անց 81 թույն» եւ այլ գրքեր:

2. ՏԱԳՆԱԴԻ ԵՎ ՀՈՒՅՍԻ ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ

Այնքանով, որքանով մեր սույն աշխատության ուղվածությունը վերաբերում է Արցախյան գոյամարտի գեղարվեստական պատկերմանը, ուստի առաջին հերթին ներկայացնում եմ Վ.Հակոբյանի *հայրենապատումը*՝ սկսած 1960-ական թվականներից մինչև այսօր:

Բանաստեղծ ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆԸ գրական ասպարեզ իջավ 1960-ական թթ. երկրորդ կեսին: Դա մի ժամանակաշրջան էր, երբ պոեզիայում հռետորական տարրը հաղթահարվում էր, անհատի հոգեբանական բացահայտումների պրոբլեմը գրողներից շատերին էր հուզում: Պ.Սելակը հանդես էր եկել «Մարդը ափի մեջ» շարքով, Հ.Սահյանը «Տափաստանների ծիածաններից» իջել է քայլում էր դեպի զանգեզուրյան հրաշքների բանաստեղծականացումը, Շիրազը շարունակում էր «Գարնանամուտի» իր ավանդույթները: Իհարկե, ամեն ինչ չէ, որ պետք է կապել պայմանների հետ: Այստեղ կարելորվում են բանաստեղծի ստեղծագործական խառնվածքն ու աստվածային շնորհքի աստիճանը, ոգեւորության չափը, ինտուիցիայի հրաշագործության բռնկումը, որոնցով Վ.Հակոբյանն առանձնանում էր իր գրչակից ընկերներից: Նա դեռեւս ստեղծագործական իր առաջին քայլերը կատարելիս հաղորդակից դարձավ ժողովրդի ճակատագրի երանգներին, տեսավ հազարամյակների ճանապարհ անցած իր Արցախ աշխարհի ցավն ու տագնապները, հայրենիքի պատկերը հյուսեց հայրենի բնության եւ մարդու միասնությամբ:

Անդրադառնալով Վ.Հակոբյանի ստեղծագործական առաջին քայլերին, ակադեմիկոս Ս.Սարինյանը նկատել է. «Դա արցախյան ֆենոմենի ինքնագիտակցման ժամանակն էր, որ ազդարարը եղավ հայոց ազգային ոգու արթնացման եւ խորհրդանիշը

ազգային-ազատագրական շարժման, հոգեւոր վերելքի մակընթացության: Այս ալիքի վրա ձեւավորվեց Հակոբյան-բանաստեղծի անհատականությունը: Իր հայտնությամբ նա ընդլայնեց մեր պոեզիայի աշխարհայացքը՝ թե իբրեւ ձեւույթ եւ թե որպէս հոգեզգացական խոհերգություն՝ հայրենի եզերքի ռոմանտիկական էկզոտիկայի նոստալգիան համահնչելով գոյի եւ անգոյի համամարդկային հղումներին» (Ս. Սարինյան, *Բանաստեղծի հայտնությունը*, Վ. Հակոբյանի «Մենարան» ժողովածուի առաջաբանը, ԵՊՀ հրատ., 1996թ. էջ 3):

Վ.Հակոբյանը հիանալի կերպով հաստատեց գրական ժառանգականության ու հերթափոխության օրենքը, որ պարտադիր է բոլոր ժամանակների համար: Բանաստեղծությունը, որ հասարակական ինքնագիտակցության հավերժ թարմ, բազմերանգ ասպարեզ է, երիտասարդ երգչին հնարավորություն տվեց ներթափանցել ժողովրդին հուզող պոռբլեմների մեջ: Ճիշտ է, նա ոչ միանգամից, բայց շատ արագ սկսեց խորանալ մարդու հոգեբանության մեջ, բացել ժամանակի փիլիսոփայության դռները: Նա ձգտում էր ոտանավորի ավանդական կանոնները յուրացնել յուրովի եւ թարմացնել լեզվի արտահայտչական միջոցները: Վ.Հակոբյանը Ս.Սարինյանին հղած պատասխանում գրել է. «Ես խռով մարդ եմ... եւ խռովքի մեջ եմ աշխարհում: Շրջապատող աշխարհում լինի քար, ծաղիկ, ձի, աղջիկ, թե լեռ, ես ամեն ինչ կարդում եմ, ապրում եմ ամեն շշուկ ու տառ: Այս առումով՝ ես ապրումի ու ոգեւորության խելագար եմ... Սիրում եմ բառը: Բառը Աստծո տուրքն է: Ամեն անգամ, երբ գրիչը ձեռքս եմ առնում... մտքովս չի էլ անցնում (թող ներվի), թե աշխարհում ասված բառ կա... թվում է, թե Ադամը ես եմ եւ փորձում եմ օգնել Աստծուն, որ իմ կողից ստեղծվող Եվան լինի այնպիսին, ինչպիսին մինչեւ հիմա դեռ չի եղել» (Նույն տեղում, էջ 3):

Պոեզիայի թեմատիկ ընդգրկումներում ինչի մասին էլ գրեց Վ.Հակոբյանը, ունեցավ իր հոգեւոր մթնոլորտի առանձնահատ-

կությունները՝ իր բանաստեղծությանը նոր կյանք ու նոր շունչ հաղորդելու հրամայականով:

Կարելորում ենք ընդգծել, որ Վ.Չակոբյանի *հայրենապատումի* մեջ միշտ էլ հնչել են հավատարմության, հայրենի լեռների հպարտությունն ու վեհությունը կրկնապատկելու, հավերժությունն ապահովելու խոստումները: Դեռևս իր առաջին՝ «Մեղեդիներ» գրքույկում նա զգացմունքների անխառն շաղախով ասես պատասխանել է հայրենիքին ծառայելու հարցին, գիտակցելով պոեզիայի ազգային էության ակունքների պահանջը, ընդգծելով. «Ժայռից է բխում, աղբյուրն այս փոքրիկ... Դրա համար է ժայռը միշտ հպարտ, Ու ճակատը բաց նայում աշխարհին»:

Ներդաշնակ են կյանքի ու բանաստեղծության փոխհարաբերությունները Վ.Չակոբյանի երգերում: Այստեղից էլ քնարական հերոսի այն հավատը, որ երկիրը միակ օջախն է, ուր մարդը կարող է գտնել իր երջանկությունը, ուստի պետք է ծառայի եւ որդիաբար խոնարհվի նրա առջեւ. «Իմ երազներում հավատացնում են իմ աչքերը ինձ, Թե ժայռ են ելնում եղեւնիները ոչ թե մրցելու, Այլ խոնարհվելու աշխարհի առաջ...»:

Բանաստեղծի երգերում շրջանառության մեջ է դրվում հայրենիքի եւ քաղաքացու ներդաշնակության հարցը: Լուսինը, առուն, ամպերը, երկինքը, աստղերը եւ այլ հրաշքեր, որպես մետաֆորներ, ծառայում են այդ ներդաշնակությունը չխախտելու պահանջին:

Երկրի ու քաղաքացու ներդաշնակության խորհուրդը բանաստեղծին մղում է դեպի ժողովրդի եւ հայրենիքի ճակատագրի շրջանակները, որ նույնպես պայմանավորված է կյանքը գեղեցկացնելու ձգտումով:

Բանաստեղծի երկրորդ՝ «Մեր եւ ժայիտ» գիրքն ինքնահաստատման հաջող օրինակ էր: Նա կրկին քնարական երանգների եւ խոհափիլիսոփայական մտորումների մեջ էր: Գիրքն ամբողջությամբ պոետական ազնիվ զգացումների շաղախ է՝ խորքային եւ գունային շափաղումներով:

Վերցնենք «Հայրենի հողը», «Իմ լեռնաշխարհին» գողտրիկ բանաստեղծությունները: Դրանք խոհական նրբերանգների խտացումներ են, ուր հայրենի հողի ուժն ու նշանակությունն ընդգծված են բանաստեղծական գյուտի եւ թարմ պատկերների միջոցով: Հայրենիքի հավերժության գաղտնիքը նա տեսնում է առողջ արմատների մեջ.

*Արեւահամ քաղցրությունը,
Բույրն են ընպում նրանք հողի
Ու ձգվում են ջլերի պես,
Մեջքից ծալվում հարյուր անգամ,
Հարյուր անգամ ոլորվում են
Քարերի մեջ,
Որ միշտ ուղիղ ձգվի... ծառը:
(«Արմատները»)*

Վ.Հակոբյանը երկիրը տեսնում է իր տան պատկերով: Մի ամբողջ լեռնաշխարհի հազարամյակների կենսասիրությունն ու կենսափորձը երգի տողեր դարձած թրթռում են նրա շրթերին: Արցախ աշխարհի տառապանքից ու լուսսից ծնված խոսքը մի դեպքում հնչում է որպես օրհներգ՝ ծոնված երկնքին («Երկինքն ասես հասկանում է»), մյուս դեպքում՝ հողին ուղղված երախտագիտական խոստովանություն («Յուշ»), մի ուրիշ դեպքում ծավալվում է, ինչպես կարոտի առեղծված, որի վերձանումը շատ է դժվար («Մի կարոտ կա»), իսկ մի այլ դեպքում ծավալվում գարնան ծփանքներով («Գարուն»): Բանաստեղծի սիրտը բաբախում է հողի սիրով: Հայրենիք, երջանկություն հասկացությունները նա կապում է հայրենի հողի հետ: Բանաստեղծական հյուսվածքում («Արմատներ են երազներս») պոետի զգացումները, ձգտումները հանգուցվում են հող ու քարին, ծիլ ու ծաղկին՝ ոչ որպես կարոտի մի արտահայտություն, այլ ինչպես այդ ամենին կյանք պարգեւող արմատներ.

*Արմատներ են երազներս,
Նրանք իրենց
Գիրկն են առնում քարերն անգամ
Ու սեղմում են
Անթեյական սիրով մաքուր,
Սեղմում այնքան,
Որ քարերը դառնում են... հող...*

(«Արմատներ...»)

Եվ երազ արմատների ավիշով քնարական հերոսը արարող ուժ է դառնում, կարոտները փնջում ժայռերից, հողեղեն ձեռքերը երկարում դեպի հեռուն, կրակ առնում, արեւից հալվելով ձուլվում մայր հողին՝ բողբոջելու հույսով («Ելնում են»): Այդ ամենը տեղի է ունենում անձնուրաց որդու նվիրումով՝ երկրի խորհրդանիշ ժայռը ավելի բարձր տեսնելու համար.

Ելնում են ժայռը...

... Որ ժայռը քիչ էլ ինձնով բարձրանա...

(«Ելնում են»)

«Մայրանում է լույսը» գրքի մի շարք բանաստեղծություններ Վ.Հակոբյանի ստեղծագործական եւ գաղափարական առնչություններով փոթորկված տրամադրությունների եւ տարերքի արտահայտություններ են: Դրանցից են «Ամառային նկար», «Հայրենիք», «Պատկեր», «Հողին», «Ծննդավայր» հյուսվածքները: Հայրենասիրության շուրջ ստեղծված պատկերներ են դրանք՝ բազմերանգ ու բազմաձեւ: Ճակատային խոսք չկա, հաճախ պատկերի վերջում կատարվում է նովելային ընդհանրացում, որ նույնպես հայրենի երկրի հանդեպ ունեցած ջերմ սիրո արտահայտություն է: Եթե «Ամառային նկար» երգում մայր բնության հանդեպ անհուն սիրո ծփանքն արտահայտված է կաղնու եւ անտառի պատկերով, «Հայրենիք» բանաստեղծության մեջ երգիչը ընդգծում է, որ իր շուրթերի վրա հայրենիքի «առուների քաղցրիկ երգն է», երակներում՝ «Գետերի երգը», որ իր սիրտը

կարող է սավառնել միայն երկրի սիրո թելերին: Բայց այստեղ եւս առկա է բանաստեղծական գյուտի հասնող անսպասելի ընդհանրացումը: Բանաստեղծը չի մոռանում հայրենիքի եւ քաղաքացու փոխադարձ սիրո գաղափարը: Դիմելով հայրենիքին, նա խոստովանում է. «Քո հողին մերված, Արարչագործական հավատի շող եմ, Եվ հաստատումն ես դու իմ գոյության»: Վ.Յակոբյանի համար հայրենիքը տիեզերքի մի մասնիկն է, ուստի տիեզերական սիրով է սիրում նրան: Տվյալ դեպքում բանաստեղծի հայացքն ուղղված է Արցախ աշխարհին, նրա հարուստ բարբառին: Երգերի մեջ կոնկրետ դառնում է հայրենի օջախի հասակը տիեզերական հորիզոնների մեջ: Քնարական հերոսը երազներով զուգված գիշերվա մեջ շառաչող Թարթառը համարում է Լուսնի անսպառ վտակը:

Յուրաքանչյուր ազգային բանաստեղծ համամարդկային զգացմունքների օրրանը համարում է կոնկրետ միջավայրը եւ նա է արվեստին հաղորդում պոետական մոդելներ: Այս նշանակում է, որ երգը պետք է ունենա իր հայրենիքը:

Երգի հայրենիք հասկացության պատասխանը տվել է նաեւ հռչակավոր գրականագետ Ս.Աղաբաբյանը: Նա գրել է. «Գրականության «պատկերային շարքեր» ժառանգականության հիմունքով այսօր էլ հայ բանաստեղծության մեջ կայուն տեղ ունեն աշխարհագրական նվիրական անունները՝ Մասիսն ու Երկիր Նաիրին, Ջվարթնոցն ու Գեղարդը, Ավարայրն ու Անին, պատմական նշանավոր դեպքերը՝ Մեսրոպ Մաշտոցից ու «Մեծն Վարդանից» մինչեւ Յուրի. Թումանյանն ու Կոմիտաս, հայ դիցաբանական նշխարները, Յայաստանի բնության դրվագները, Յայոց պատմության սիմվոլները՝ ամբողջն ու բերդերը, տաճարներն ու վանքերը, ժողովրդական կենցաղի բնորոշ երեւույթները, մի խոսքով այն ամենը, որ պատմականորեն կարելի է խմբավորել «ազգային օրնամենտ» անունով» (Ս. Աղաբաբյան, *XX դարի հայ գրականության զուգահեռականներում, գիրք II, «Սովետական գրող» հրատ., 1984, էջ 24*):

«Ազգային օրնամենտի» պրոբլեմը յուրովի լուծված է նաև Արցախի աչքի ընկնող բանաստեղծների, այդ թվում Վ.Յակոբյանի ստեղծագործություններում: Սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ «ազգային օրնամենտը» միայն երկրի աշխարհագրական բարենասնությունների ընդգծումը չէ, այլև Դ.Դեմիրճյանի նուրբ դիտողականությամբ՝ ժողովրդի ճակատագրի հարցերը լուծելու կարողությունը: Վերհիշենք Յ.Թումանյանի, Ավ.Իսահակյանի, Դ.Վարուժանի, Սիամանթոյի, Վ.Տերյանի, Ե.Չարենցի հայրենապատումները: 20-րդ դարի 50-60-ական թթ. այդ պրոբլեմը հաջողությամբ լուծվեց Յ. Շիրազի, Պ. Սեւակի, Յ.Սահյանի, Գ. Էմինի, Ս. Կապուտիկյանի, Վ. Դավթյանի, Յ. Յովհաննիսյանի, Ս. Մարգարյանի ստեղծագործության մեջ: Ապա եւ Ռ. Դավոյանի, Ա. Յարությունյանի, Յ. Գրիգորյանի, Յ. Էդոյանի եւ մյուս նշանավոր պոետների երկերում լուծվեց «հայրենիքի երգի» խնդիրը՝ «ազգային օրնամենտի» հմուտ ստեղծումով: Քննարկման առարկա դարձավ գրական ավանդույթի եւ նորարարության պրոբլեմը: Գրականագետ Ա. Եղիազարյանը վերլուծելով 60-70-ական թթ. աչքի ընկնող բանաստեղծների ստեղծագործությունները, անդրադարձավ նշված պրոբլեմին եւ ընդգծեց. «Արվեստը հազարամյակներով չափվող իր ճանապարհին ամենատարբեր փոփոխությունների է ենթարկվել, բայց փառք Աստծո, չի դադարել արվեստ լինել, միշտ պահպանել է մարդկանց հոգեւոր կյանքի մի ամենակարեւոր եւ անփոխարինելի հատվածը լինելու իր իրավունքը: Արվեստի զարգացման այս անընդհատությունը, որի նշանակությունը դժվար է գերազնահատել, ապահովվել է, նախ եւ առաջ, ավանդույթներով: Ինչքան էլ մարտականորեն տրամադրված լինի արվեստագետը, եթե նա իսկապես տաղանդավոր է, գիտակցաբար, թե անգիտակցաբար, դիմում է ավանդույթին: Ավանդույթն այն է, ինչ իր հետ բերում է գրականության անցած ճանապարհի, անցած փուլերի, մարդկության անցած փորձի կենարար ուժը, արմատները» (Ա. Եղիազարյան, Մարդը

ներսից, «Սովետական գրող» հրատ., 1985, էջ 94-95):

Վ. Հակոբյանը հավատարիմ ազգային պոեզիայի ավանդույթներին, յուրովի վերաբերմունք ցուցաբերեց ավանդույթների նկատմամբ՝ ցուցաբերելով իր պոետական նախասիրությունը, չտարվեց նորարարության «տեխնիկական» էֆեկտներով, գրեց ներշնչանքով, հստակ ու անմիջական: Նա հայրենիքի եւ մարդկանց հետ խոսեց քարի, հովերի, առվի, ծաղկի, հավքի, գետի, ազնվության անուններից՝ երկրի սերն առնելով իր մեջ, իր սերը՝ հայրենիքի: Սա եւս փիլիսոփայություն է՝ զգացմունքների շաղախով...

Վ. Հակոբյանի ստեղծագործական ու կենաց ծառն ավելի խոր արմատներ նետեց «Ծառի անունից» գրքով: Այստեղ վառ կերպով դրսևորվեցին նրա ինքնանվիրումի եւ ինքնաճանաչման ընկալումները, եւ պատասխանելով երկրի եւ ժողովրդի առջեւ, ընդգծեց՝

Քեզնից ծնվելը

Դեռ քիչ է՝

Որդիդ լինելու համար:

Սարերդ պիտի ինձնով տուն դառնան,

Ինձնով կանաչեն,

Իմ նախշով պիտի

Սարդ ճանաչեն,

Երգերս՝ բախտիդ,

Կապույտներիդ պես

Լեռներեն հնչեն:

(«Քեզնից ծնվելը»)

Բանաստեղծը մեծ հավատով քննում է իրեն եւ հաստատում իր լինելությունը հայրենի երկրի հավերժական ծփանքի մեջ: Այստեղ կարելու էնք համարում այն հանգամանքը, որ հայ պոեզիան արդեն զուլալվում եւ կոնկրետանում էր Պ. Սեւակի ավանդույթով եւ Հ. Սահյանի նոր հունձքով: Վ. Հակոբյանն այդ

երկու մեծերին երկրպագում է, սովորում նրանցից: Դրա վկայու-
թյունն այդ երկուսին նվիրված բանաստեղծություններն են: Յ.
Սահյանին ձոնած երգի սկիզբը արվեստագետի եւ հայրենիքի
ճակատագրերի միասնության հաստատումն է.

*Ժայռը իր վրա պահում է մի ծառ,
Եվ ծառը զորեղ իր արմատներով
Մի ժայռ է պահում...*

(«Յամո Սահյանին»)

«Ծառի անունից» գրքում կոնկրետ ընդգծվում է բանաստեղ-
ծի երգելու նշանաբանը: Դա հայրենի երկրի փոխադարձ սիրո
նույնությունն է, առանց իրարու կյանք չունենալու խոստովանու-
թյունը:

Ամբողջ գրքի միջով անցնում է այդ գաղափարը, որի հաջող
բացահայտումներն են «Դու իմ անունն ես», «Ձեր անունից»,
«Պահից լույս վերցրու» երգերը, ինչպես նաեւ՝ «Մայրս կանչում
է» եւ «Իմ թեւերի մեջ» շարքերը: Բանաստեղծի ուշքն ու միտքն
ուղղված են հայրենիքին, նրա ծաղկունմին, նրա վրա մարդու
կողմից գեղեցիկ հետք թողնելու գործունեությանը, նրա ծաղ-
կած գրկում ժողովրդի հավերժությունն ապահովելու ինքնանվի-
րումին: Նրա պատկերավոր հյուսվածքներում ընթերցողը լսում է
քարի, հովտի, առվի, ծաղկի, հավքի, գետի երգը եւ այդ երգե-
րում ամեն ինչ խոսում է երկրի անունից, հող հայրենիի սուրբ ա-
նունից.

*Քեզանից հեռու, ճամփի մոտ ընկած
քո տուֆաքարն եմ՝
Սրտի պես կարմիր...
Թող ներող լինեն քարերն այն բոլոր,
Որ կանուրջներիդ կամարների մեջ
Ուս-ուսի տված պահում են իրար,
ու քեզ են պահում:
Ես հպարտ եմ միշտ,*

*Որ անցորդը ինձ հանդիպելիս
Քո անուշ ու սուրբ անունն է տալիս...
(«Քարի անունից»)*

Բանաստեղծն ամբողջ էությանը ձուլված է երկրին, ժողովրդին, ապրում է նրանց անունով, նրանց համար: Նա ունկնդրում է ժողովրդի հարատեւման բարդ հարցին եւ գտնում պատասխանը, որ երկրի եւ ժողովրդի ճակատագրին մերվելու եւ նրան ծառայելու միակ գաղտնիքի մեջ է: Բայց այդ պատասխանը ճակատային չէ: Ամբողջ բնությունն ընկերանում է բանաստեղծին, լեզու առած խոսում, խորհուրդ տալիս, խորհուրդ առնում: Քնարական հերոսն իրեն համարում է ծառի եղբայրը, որ միանգամից ընտրում է «երկու ճանապարհ», «սաղարթներով դեպի երկինք» է գնում, «արմատով դեպի ընդերքը հողի» («Ծառի եղբայրն եմ»): Այդ հերոսը հավատում է «լույսի հրաշքին եւ երդվում լույսով», երազում, որ երգը բուսնի «գարունքվա նման» («Ես հավատում եմ»): Ձգտում է նմանվել ծաղկի շուրթերին ծնված ժպիտին, «որ վարակում է աշխարհն իրենով», իր անկեղծությամբ («Ժպիտը...»): Հպարտանում է, որ հողի մեջ նետած հունդերը «հավատարմության կրակներ պարզած» ընդառաջ են գալիս իր երազներին («Հունդը հողի մեջ»): Մարդկային անունը համեմատում է առվի հետ եւ խորհուրդ տալիս անվանն իմաստ պարզելու առվի անձնուրացությամբ, նվիրումով եւ հարատեւմամբ:

Հայրենիքի ճակատագիրը իրենը համարելով, բանաստեղծը նոր ու թրթռուն երգեր գետեղեց «Անմարելի-անմեռնելի» ժողովածուում: Գրքի «Լեռները թեւերիս վրա» շարքում նա նոր, թարմ պատկերներ հյուսեց, որոնց մեջ քնարական հերոսի ներշնչանքը կրկին հայրենի հողն է, հայրենի լեռները: Նրա համար հայրենիքի այսօրը երեկվա շարունակությունն է ու ջերմությունը, սեփական երազներով հորինված ամենամեծ երգը, որի վրա կան Հայկ Նահապետի ձեռքերի շոյանքները («Ձեռքերս»):

Ընդհանրապես իր բոլոր գրքերում Վ. Հակոբյանի ամենաա-

ռաջին, ամենասուրբ գրույցները հայրենիքի հետ են: Ամեն անգամ նոր ռիթմով, խտացված գույներով, առինքնող պատկերներով նա վեր է հանում հայրենիքի վեհությունը և անփոխարինելի ուժը: Նրա բանաստեղծական աշխարհում «ամենաբարձր գագաթներն են» համարվում այն երազները, որոնք կապված են օջախի հետ («Ամենաբարձր գագաթները»):

Այս աշխարհում երգիչը քայլում է՝ հոգում ու շուրթերի վրա առած այգաբացի զուլալությունը, լեռների արտացոլանքը, երկնքի շարժումն ու վարդը: Այդ ամենը նրան նվիրում է հայրենի բնաշխարհը, որտեղ ինչպես բանաստեղծն է հաստատում.

*Ես գնում եմ դեպի մեծ սար,
Այս կածանը,
Որ բացվել է պապիս ոտքով,
Իմ քայլերով կաննահանա:*

Նրա հայրենասիրական պոեզիայում լեռների խորհրդանիշը ծիածանվում է քնարական հերոսի ամենամարդկային հոգու գույներով: Հայրենիքի զավակը լեռների բարձունքներից է նայում հորիզոններին, եւ այդ հորիզոնները գեղեցիկ են թվում միայն իր ոտքերի տակ ամուր պատվանդան դարձած սարերի ուժով ու շնորհով: Հայրենի սարերի, հանդ ու ձորերի անունն իր շրթերի վրա, նախ պապն էր քայլում, դրա համար էլ քնարական հերոսի համար ապուպապոտ են արշալույսները:

Հիմա էլ թռն է քայլում եւ ոգեւորված ծչում «խոսք ու բառեր», ու ոտքերի տակ սարերից սարերի նոր կարոտներ են ծնվում, արձագանքում են քարերը եւ ժխտվում է մահը, դեռ ավելին.

*Եվ... ի՞նչ հրաշք: Երկինքն էլ է
Իմ կանչերին արձագանքում,
ասես մեկը դիմում է ինձ,
շուրթին՝ սար ու ձորի անուն:
Այն կածանը,
Որ բացվել է պապիս ոտքով,*

*այգալույսի շողերի մեջ
Իմ քայլերն է անմահանում:
(«Անմահություն»)*

Հայրենի լեռները առած թելերի վրա, բանաստեղծն իր մեջ զգում է դարերի այն ուժը, որ իրեն է անցել պապից ու հորից, ասել է թե՛ հայրենի օջախի տառապալից ու հերոսական անցյալից: Այդ առումով հետաքրքրական է, որ նրա հայրենաշունչ բանաստեղծություններում քով-քովի կանգնում են պապը-հայրը-թոռը: Եռագագաթ այս լեռնաշղթան էլ հենց ներկայացնում է երկրի ու ժողովրդի միասնական հավերժության խորհրդանիշը: Այս հավերժությունը միաժամանակ թրթռում է պապի, հոր ու որդու ընդգծված, յուրահատուկ դիմանկարներով: Նրանք մեկը մյուսի պարզ կրկնությունը չեն: Թեկուզ բանաստեղծը «Հողերգ» ոտանավորում նշում է, որ ինքը «տղայի խաղից» է գալիս, որ ինքը «սկսել է տղայի խաղից», բայց միաժամանակ խորհուրդ է տալիս խիզախելով «փրկել օրը»:

Արցախ-հայրենիքը փառաբանելու նորանոր երանգներ գտնելու համար բանաստեղծը դիմում է ժողովրդական ավանդույթներին, ժողովրդի աշխատասիրությանը, կամքի ուժին եւ այլ բարեմասնությունների: «Խաղողենի» բանաստեղծությունը պատկերային համակարգով, ապրումների խորությամբ, գաղափարի հստակությամբ կարելի է դասել հայրենասիրական լավագույն երգերի շարքը: «Անուշաբույր մանուշակի արմատներով» խաղողենին մի կողմից ներկայացնում է որպես լեռնաշխարհի իղձերը խտացնող, առատություն ընծայող աղբյուր, մեր պապերի շեն օջախից ճառագայթված լույս, մյուս կողմից էլ՝ խորհրդանիշն արցախյան հողի: Բանաստեղծի գեղագիտական իդեալի դիրքերից պարզ է դառնում արցախցու եւ խաղողենու մտերմության նշանակությունը:

*Մի արմատդ իմ սրտի մեջ, մի արմատդ խորունկ հողում,
Լեռնաշխարհիս իղձերն են սուրբ հայացքիդ մեջ փայլում,
շողում,*

*Ախպերությանը ծաղկուն պահենք լեռները մեր,
խաղողենի,*

Անուշաբույր մանուշակի արմատներով խաղողենի:

Վ. Հակոբյանի «Մի կռունկ անցավ» գիրքը բացվում է «Հայաստան» երգով, որտեղ քարի մետաֆորը դառնում է երգչի խոհերի հաղորդարանը: Քնարական հերոսը Հայաստան աշխարհի ճամփից վերցնելով պատահած մի քար, համբուրում է եւ դնում ճակատին՝ զգալով մոր ձեռքի քնքանքը, որից ջերմացած բացականչում է. «Ես ուր էլ գնամ՝ հպարտ եմ գնում, Չէ՞ որ քո ձեռքն է դիպել ճակատիս, Չէ՞ որ ճակատիս քո գիրն եմ կրում. Հայաստան, Հայաստան, Հայաստան»:

Բանաստեղծի ինտուիցիան բաբախում է օրինական հպարտության զգացումով, հպարտություն, որի արմատները սնվում են հայոց պատմությունից: Հայրենի քարերն անգամ մեսրոպյան տառերն են պահում իրենց շուրթերին: Ամեն մի տառը կենսագրություն ունի, «ունի թիվ, անուն»: Բանաստեղծը որդիական ներշնչանքով ու անբացատրելի սիրով աշխարհին է ներկայացնում հայոց լեռնաշխարհի հմայքը՝ քարի ու տառի, վաստակի ու ոգու միասնությամբ:

«Մի կռունկ անցավ» գրքի մտահղացումը թելադրված է հայրենի երկրի ճակատագրի եւ քնարական հերոսի ապրումների ներհյուսվածությունից: Լեռների ճակատագիրը հեշտ չի ալիքվում: Լեռնային այդ ընթացքը նման է այն առվին, որին հնարավոր են բոլոր ճամփեքը: Բանաստեղծը լավ է գիտակցում այդ ամենը եւ իրեն պատասխանատու է զգում որպես նվիրյալ զավակ. «Ո՞վ տեղադրեց լեռները այսպես՝ իմանալով, որ ես պիտի ծնվեմ նրանց գրկի մեջ...» («Առուն գնում է»):

Վ. Հակոբյանի բանաստեղծություններին հատուկ է մի թախիծ, որ շաղախված է անգամ ուրախ տրամադրությամբ ծնված տողերին: Դա բացատրվում է նրանով, որ բանաստեղծը չի կեղծում իրեն, չի սնվում խաբեության ու ստի շղարշով պարուրված

«Մարդկային երջանկության» գաղափարից: Նա հետ նայելով, տեսնում է իր ժողովրդի կորուստները, շուրջը նայելով՝ զգում է դարերի խորքից եկած ինչ որ մոլուցքի մզլահոտը՝ դարձյալ իր ժողովրդի հանդեպ:

Հակոբյանի հայրենապատումը ժողովրդի դարավոր ոգու արձագանքն է, որ հայի համար թեւածում է կռունկի պատկերով: Բանաստեղծի կարոտի եւ թախծի ակունքներից մեկն էլ կռունկի անանցանելի ոգին է՝ հայ ժողովրդի կորսված հայրենիքի, աշխարհով մեկ սփռված նրա զավակների, միլիոնավոր անմեղ զոհերի հիշատակի հոգեւոր պատկերը: Պետք է նշել, որ գրքի բոլոր բանաստեղծությունները ներքին մի կապ ունեն՝ ամռչված հայրենիքի անցյալի եւ ներկայի հողեղեն ու ոգեղեն պատկերին: Այդ են վկայում «Անմահություն», «Հավքի սերը», «Հայրենիք», «Քիրսը», «Իմ տունը» եւ այլ բանաստեղծություններ:

Սերը հայրենի օջախի հանդեպ բանաստեղծի երգերում արժարժվում է թարմ ու բնական պատկերներով: Նա հայրենասիրության գաղափարն արտահայտելու նպատակով պոետական հյուսվածքների մեջ է ներառում ամբողջ բնությունն ու արարածները: Ահա եւ «Հավքի սերը» գողտրիկ բանաստեղծությունը: Հավքի սերն ու երգը իր ընտրած ծառն է, որովհետեւ «բույն ունի ճյուղերին ծառի»: Պարզվում է, որ հավքի երգը սովորական խոսք չէ, այլ օրհնանքն է՝ ուղղված բարու հաղթանակին, չէ՞ որ. «Այստեղ է հավքի օրը ջերմանում: Ու ծաղկող ծառի, հողի, Աշխարհի Սերը բնի մեջ ձագեր է հանում»: Ենթաբնագրային շերտեր ունեցող հաջողված պատկեր է «Չսեղմված ձեռքի համար» բանաստեղծությունը: Խոսելով ձեռքասեղմումների մասին, երգիչը շունչ ու մարմին է հաղորդում քնարական հերոսի ձեռքերին, որ «միշտ կարոտ են» մարդկանց: Ձեռքերի կարոտը անսովոր պատկեր է, բայց դրանով էլ չի բավարարվում պոետը: Նա ձեռքերի այդ կարոտի ակունքը հասցնում է դարերի խորքը, հաստատում, որ «Նրանք ձեռքերն են Հայկ Նահապետի»: Բանաստեղծը

Եւ վերագնահատում է անցյալը, եւ իմաստավորում ներկան, միաժամանակ ընդգծելով ենթաբնագրային մի նոր գաղափար՝ մայր ժողովրդի աշխատասիրությունը, որի հետ էլ կապված է նրա գոյատեւման առեղծվածը:

Սերը հայրենի օջախի հանդեպ բանաստեղծի երգերում հողի թույր ունի, վարդերի բույր, վերջապես հայրենիքը կանգուն պահելու երազի գույն: Եթե մի կողմից Քիրսը ուզում է բանաստեղծի «տունը լինել», ուզում է, որ նրա «ստվերն առնի ու մաքրաջրի», մյուս կողմից էլ լեռան թելավորող ձայնը հասնում է քնարական հերոսի հոգուն, որպես պահանջ, որ իր լանջերին տնկի թթենի, նռնենի, վարի-ցանի արտ, որ լանջով իր ձին ջրելու տանի, Եվ ձին լեռանը սիրի իր նման:

Քնարական ներշնչանքը բացելով իր թելերը, այստեղ երկխոսության է փոխվում: Տեղի է ունենում լեռան եւ զավակի ջերմ զրույցը եւ Քիրսը ծնողական խանդաղատանքով լեզու է առնում. «Երբ դու ես անցնում իմ շավիղներով, Քո Ղավիթ պապը, որ վաղուց չկա, Քեզ հետ քայլում է» («Քիրս»):

Երգից-երգ բանաստեղծն ավելի է բացվում: Նա հայրենիքի լանջերից քայլում է դեպի իր սեփական տունը՝ «Սահունասարի հայացքի ներքո», ուր մանկությունն է բուրում: Ամուր է այդ տան հիմքը, որովհետեւ որձաքարից է, դրա համար էլ հպարտության զգացումով բանաստեղծը բացականչում է. «Իմ տունն այստեղ է, Իմ Ղարաբաղում, Իմ տան պատերը թելերի նման գրկել են հողը, Արմատ են ձգել, բուսնում են ասես, Ամուր է հողը իմ տան պատերով»:

Հայրենի լեռների շնչառությունը զգալով իր արյան մեջ, Վ. Հակոբյանն ամեն ինչի մեջ լսում է խորհուրդը երկրի եւ ժողովրդի եւ շշնջում է. «Ծառա են ձայնիդ»: Հանրահայտ երգի տողը նոր իմաստ է ստանում նաեւ քնարական հերոսի որդիական շրթերին:

Վ. Հակոբյանի գրչի տակ աստվածանում է հողը, որի համար աղոթում եւ կանաչ մոմեր է վառում անտառը եւ «շիվերի կանաչ սլացքի միջով ծառը ձգվում է դեպի... զորություն» («Սուրբ ան-

տառը»): Բանաստեղծն իմաստավորում է քարը... միայն «տան պատի մեջ», արմատը՝ հողում, իսկ այդ ամենը՝ մարդու արարչագործության մեջ («Եթե ուզում ես»): Նա ձգտում է, որ իր երգի տողերը «արահետ դառնան լեռներ մագլցող», իսկ իր քայլերը՝ գեղեցիկ վերադարձ դեպի բալիկները: Մարդկային այս գեղեցիկ զգացումները բանաստեղծին վերջապես տանում են դեպի աշխարհը փիլիսոփայորեն ընկալելու սահմանը, որից այն կողմ իմաստուն խոհն ու խորհուրդն է: Եվ երգչի քայլերը հաստատուն են, միտքը՝ խորաթափանց, որ խոտերի ծփանք են դառնում «Ապրում», «Կարոտ», «Այսօր հյուր եմ», «Վերհուշ» եւ այլ բանաստեղծություններում: Եվ երբ բանաստեղծը խոսում է արվեստագետի եւ կյանքի փոխհարաբերության եւ երգի քարքարոտ ու դժվարին ճամփի մասին, այդ չի նշանակում, որ նա վախենում է այդ դժվարությունից, ընդհակառակը, դրանով նա ընդգծում է իր վճռականությունը պոեզիայի խաչմերուկները հաղթահարելու եւ լուսավոր բացատ դուրս գալու ճանապարհին: «Մի կռունկ անցավ» ժողովածուն կրկին ապացուցեց, որ Վ. Հակոբյանը գնալով ավելի է զուլալվում ու խորանում իր սրտեր պարուրող ու բորբոքող երգերի մեջ:

Բանաստեղծի քնարական հերոսի սերն ու հավատը բխում են հայրենիքի եւ ժողովրդի հարուստ պատմության եւ արարող ուժի գիտակցումից: Ղարերի արհավիրքներին դիմացած, արիության ու անկոտրում կամքի տեր մայր ժողովուրդն է թելավորում երգչին: «Ես երգ չունեմ» բանաստեղծությունն արժեքավորվում է հենց այդ դիտակետից: Վ. Հակոբյանը ժխտելով իր երգի գոյությունը Ղարաբաղի մասին, միաժամանակ հաստատում է իր եւ հայրենի հողի էության միասնությունը: Բնության եւ մարդկային բոլոր բարեմասնությունների թվարկումներով բանաստեղծը նշում է, որ Ղարաբաղը ծառ է իր արմատի վրա, սեր է՝ հավատի վրա, տեր՝ կարոտի վրա: Ղարաբաղի բացվող արշալույսը, մաքուր հերկը, ջուրը՝ քամված քարից, թուրը՝ կոփված դարից, հու-

րը՝ ելած սրտերից «ես երգ չունեմ» բանաստեղծության թթիւնորն են: Արցախյան բնանկարի գեղեցիկ պատկերների միջոցով բանաստեղծն ընթերցողին է հասցնում հայրենի օջախի հավերժության գաղափարը: Եվ որքան շոշափելի է բանաստեղծության բովանդակությունը, նույնքան վարակիչ է երգչի խոսքը: Արծվաբույն Ղարաբաղը, որ սերվել է սեզ լեռներից ու սրբավայրերից, ի հեճուկս բոլոր խարդավանքների, պիտի հավերժվի, որովհետեւ ինչպես բանաստեղծն է խոստովանում.

*Ղարաբաղը ելք է բացված սրտի նման,
Ղարաբաղը երգ է, բառեր չունեն սակայն,
Իմ պապերի ծայնով միայն երգեցեք այն...*

Մայր ժողովրդի ուժի, արիության ու մարդասիրության թեման Վ. Չակոբյանի հայրենասիրական երգերի առանցքն է կազմում: Ինչպես ինքն է հաստատում, «Հայաստանը սիրում է այնպես», որ բառեր չի գտնում խոսքերով բացվելու, լուռ մնում է «ծաղկած ծիրանենու հնազանդությամբ»: Բայց իր փոխարեն կանաչում է քարը, կարկաչում են գետերը, սիրտը աղավնու նման իջնում է հայրենի տան կտուրին: Բանաստեղծության մեկը մյուսից գեղեցիկ պատկերներում քնարական հերոսը խոստովանում է իր որդիական սերը՝ հայոց աշխարհի հանդեպ, որ հնչում է որպես պատգամ ու կտակ.

*Ես Հայաստանը սիրում եմ այնպես,
որ երբ կանգնում եմ
մայր հողի վրա,
Թվում է՝ լույս եմ,
Վեհ, հավերժական Վարդանություն եմ՝
բուսած Մայր հողից,
սերս բարձր է մատուռի նման
դռան կամարը՝ հյուսված հողի մոտ,
որ այստեղ մտնեն միայն... խոնարհված...
Ես հայրենիքը սիրում եմ այսպես...*

(«Հայաստանը»)

Հայրենասիրական երգերի շղթայում Վ. Հակոբյանի մի շարք բանաստեղծություններ աչքի են ընկնում գեղարվեստական եւ գաղափարական ծփանքների կատարելությամբ: Դրանք մեծ սիրո սրտեր պարուրող դողանջներ են, որոնցում ծիածնագույն մետաֆորներն ընդգծվում են խորքային բովանդակությամբ: Նման երգերից են «Գյուղական պատկեր», «Ես անձրեւին ուղեկցում եմ», «Փրկություն», «Ուխտ», «Վայրի կարոտներ» եւ այլ բանաստեղծություններ: Առանց ճիգ ու ջանքի բանաստեղծը նրանցում ընթերցողին է հանձնում իր քնարական ընկալումները: Այդ երգերի գեղեցկությունը պայմանավորված է դեպի հայրենի բնությունն ու օջախը ունեցած սիրո բնական խոստովանությամբ: Բանաստեղծը լավ գիտի իր լեռնաշխարհը, նա երզը ոչ թե գրում է գրչով, այլ նկարում է վրձինով: Հետեւելով իր ավագ վարպետ գրչեղբորը՝ Հ. Սահյանին, Վ. Հակոբյանը ինքնատիպության շրջանակներում շարունակում է Մեծ Սյունիքի եղբայր Արցախի բնանկարի խոսքային պատկերը: Սյունյաց աշխարհի սահյանական կտավների մոտ հյուսվում են արցախյան լեռնաշխարհի գեղեցիկ պատկերները: Աշխարհի արարման աստվածային օրերի հմայքը պահպանվել է Արցախում: Նրա կարոտներն անգամ, ըստ բանաստեղծի, վայրի են.

*Ամպի թելին՝ թառած ծառեր,
ամպի թելին՝ կանգնած սարեր,
ամպի թելին՝ կորած գառներ՝
ամպի թելին՝ մարած շանթեր -
այս շողերն ինձ ո՞ւր են տանում:*

(«Վայրի կարոտներ»)

Վայրի կարոտների զգացումը բանաստեղծին ուժ է ներարկում: Նրա հայրենասիրական երգերում հերոսն ու երկիրը ճակատագրով միասնական են: Հերոսը հարստացած է հայրենիքով եւ ընդհակառակը: Նրանք մի էություն են կազմում: Հայրենի լեռնաշխարհը բանաստեղծի պատկերավոր համեմատության մի-

ջոցն է, դա պարզապես աշխարհագրացում է: Ինչի մասին էլ խոսում է բանաստեղծը, նրա խորհրդանիշները հոգեբանական բնույթ են ստանում, գեղագիտական բանաձևերի դեր խաղում: Հոգու եւ մտքի փոխադարձ կապը գնում-հասնում է բնապատկերի հյուսվածքին: Եվ հանդերը կանաչելու ուժով են ներարկվում, դեղձենին ձորի պռնկին «ծիածանում է իր ծաղկունքի ալը» («Հանդերը կանչում են»), աղբյուրը ձորում հիշում է «լեռներում ծարավ մնացած կենտ ծառի մասին», «ծառերը արմատի վրա են շարժվում», «ծառը ճամփա է ընկնում դեպի ձորը» («Պատվաստում»): Դեռ ավելին.

Առվի արծաթը հոսում է անկարգ,

- Տատս իր գոտին սարում է թողել:

Բույնը չի լքում հավքը օրոցկան,

- Աչքալուսանքն են աստղերը կախել:

Երկնքից առկախ՝ կածանների բույլ.

- Ներկա-բացակա... Քանի՞ սար չկա,

- Այն ինչ մերն է, նորից ետ կգա...

(«Նատյուրմորտ հուշերով»)

3. ՍԵՐԸ՝ ԲԻԲԼԻԱԿԱՆ ԾԱՂԻԿ

Կյանքն ապացուցել է, որ սերը մարդու ներաշխարհի անհատական նախասկիզբն է: Դարերը հաջորդել են միմյանց, կյանքը փոփոխվել է հարածուն, սակայն սիրո զգացումը մնացել է անփոփոխ՝ հախումն կերպով շաղախվելով երգին, շոյելով ու ջերմացնելով սրտերը: Պոեզիան ընդհանրապես մարդերգություն է, բայց կա՞ որեւէ մոտիվ, որ երգի ծփանքով այնքան գեղեցկացնի կյանքը եւ ճառագի լույսի պես մարդկանց սրտերում ու հոգիներում, ինչպես սիրո երգը: 1950-ական թվականներից սկսած, սիրերգությունը եւս պարզեց իր թելերը հայ պոեզիայում՝ հարթելով անձնական քնարերգության արգելափակված ճանապարհը: Ս. Կապուտիկյանը 1954-1955թթ. լույս տեսած բանաստեղծա-

կան գրքերի մասին կարդացած զեկուցման մեջ բնութագրելով խորհրդահայ գրականության այդ տարիների վիճակը, նշել է. «խորհրդահայ պոեզիայի բնորոշ երեւոյթներից մեկն այն է, որ այնտեղ իր արժանի տեղն է գրավել անձնական եւ մանավանդ սիրային լիրիկան» (*«Գրական թերթ», 1995, թիվ 25*): Այդ նշանակում էր, որ մարդուն հուզական-հոգեբանական ջերմ շունչ հաղորդող, մարդկային սրտերն իրար միացնող բնական ապրումի բանաստեղծության կարիքը շատ էր զգացվում: Լիտվացի տաղանդավոր բանաստեղծ է. Մեժելայտիսը խոստովանել է. «Երկար ժամանակ ես գլուխ էի կոտրում իմ սխալների վրա: Իմ կարծիքով, ինձ պակասում է ջերմությունը, մտերմական շունչը... Չենք կարողանում խոսել հուզական, պատկերավոր լեզվով, հանգավորում ենք վաղուց բոլորին հայտնի հրապարակախոսական ճշմարտություններ եւ սպասում ենք... բանաստեղծական դափնիների: Իսկ ընթերցողը դա բանաստեղծություն չի համարում: Ժամանակի ընթացքում կյանքը մերկացնում է այդպիսի բանաստեղծին... Ապրում է միայն բանաստեղծությունը, իսկական բանաստեղծությունը» (*է. Մեժելայտիս, Կոնտրասպունկտ, Մոսկվա, 1972, էջ 285-286*): Պ. Սեւակը պահանջել է «հոգու դիալեկտիկայի» բացահայտում, այսինքն՝ ներքնահայտությունների անհրաժեշտություն: Հոգու դիալեկտիկայի բացահայտման ամենանուրբ զգացումի՝ սիրո երգը մի նոր ջերմություն հաղորդեց Պ. Սեւակի, Ս. Կապուտիկյանի, Գ. Էմինի, Վ. Դավթյանի, Ս. Մարգարյանի, Հր. Հովհաննիսյանի եւ ուրիշների բանաստեղծական շարքերին:

Սիրո թեման արժարձումի լուրջ երանգներ ունեցավ նաեւ Արցախի պոեզիայում: *Վարդան Հակոբյանի* երկրորդ գիրքը լույս տեսավ «*Սեր եւ ժպիտ*» վերնագրով, որտեղ նկարագրված աշխարհը օժված է արեւով եւ սիրով: Բանաստեղծն ամեն ինչի մեջ սեր է տեսնում: Նրա քնարական հերոսին բարությամբ են ողջունում ծառերը, սարերը, մարդիկ, եւ նա աշխարհում գտնում է իր

աշխարհը, եւ թվում է՝ «երկիրը սիրո շուրջն է պտտվում...» («Տրամադրություն»), այդ պատճառով էլ նա չի ցանկանում անպատասխան ժպիտ տեսնել («Ծնվում է...»), ժխտում է թեթելութունը, անհոգությունը («Անպեր»): Գրքի «Եվ հանդիպում եմ քեզ իմ աչքերում» շարքը սիրային երգերի մի փունջ է: Բանաստեղծը սերը մերթ ներկայացնում է աղջկա պատկերով («Ծիծաղում եմ աղջիկները»), մերթ վարդի տեսքով, մերթ՝ ծաղիկների, եւ ամեն դեպքում էլ նրա համար այն ընդգծվում է որպես մարդկային երջանկության աղբյուր. «Սե՞րն է, արդյոք, առանցքն աշխարհի, թե՞ աշխարհն ինքն է առանցքը սիրո» («Խնդիր»):

Սիրո փիլիսոփայությունը տարբեր երանգներով Վ. Չակոբյանի «*Ծառի անունից*» գրքում նոր ծփանք է տալիս: Նրա երգերի կառուցվածքն արտաքին նկարագրական հնարամքներից հեռու է: Բանաստեղծն իր խոսքն ասում է հոգեբանական պատկերավոր բացահայտումներով, ժողովրդական փիլիսոփայության խորհուրդներով, այս կրկնվող աշխարհի եւ անցողիկ անհատի փոխհարաբերությունների ճշմարիտ ընդհանրացումներով: Դրա առհավատչյան «Իմ թեւերի մեջ» շարքն է: Սերը Վ. Չակոբյանի համար իր «մեջ վարարած արյունն է, առանց որի դժվար է պատկերացնել աշխարհը»: Ըստ բանաստեղծի, սերը պետք է հավասարվի հավատին, որովհետեւ հավատն ամենամաքուր, ամենաանբիծ երեւոյթն է, առանց որի հնարավոր չէ ապրել: Չոգեկան ապրումների տարբեր պահերի մեջ արծարծվում է քնարական հերոսի վերաբերմունքը սիրո հանդեպ, եւ նա միշտ մնում է իրեն հավատարիմ: Սոռացումը մարդկային է, բայց ի՞նչ է նշանակում մոռանալ սրտաբուխ սերը: Դրա պատասխանը ստանում ենք «Սոռացումս» պատկերի մեջ.

Սոռացումս

Չինա ճոճք է,

Բայց նրա մեջ աչք չեն փակում

Իմ հույսերը,

*Երազները...
Մոռացումս,
Հիմա ճոճք է, ճոճք է դառել
Իրեն համար
Եվ ինքն իրեն...օրորում է
Սե՛րս,
Սե՛րս...*

(«Մոռացումս»)

Սիրո մեջ հյուսված են կյանքի բոլոր գույները: Դրանք «խենթ օրերի կարոտանք են», «կամարված ծիածանի բույր» կամ «կարմիրում հրդեհվող կածան», եւ երջանիկ է միայն նա, ով փայփայում է իր իսկ սրտով ընտրած սերը: Այսպիսի առինքնող գաղափար է արտահայտված «Սերը» երգում: Բանաստեղծը գտնում է, որ սերը պետք է միշտ ծվարի սիրող թելերի տակ, զգացումը լինի անձնուրաց: Փոխադարձ սիրո դեպքում են երեկոները քաղցրանում, ցերեկները իմաստավորվում («Չեկար եւ այսօր»): Հեռացումը տրտմություն է ծնում («Քո հեռացումը»), հանդիպումը կարոտների բացված դուռ է, այդ պահին են սերը տանում, հանձնում հավերժին («Կարոտների բաց դուռ է...»):

«Իմ թելերի մեջ» շարքի մի մասը խռովքի պահի արտահայտություններ են: Արդյունքում քնարական հերոսն աստվածային սիրուն սպասում է կարոտով.

*Անպայման պիտի դու վերադառնաս՝
Ինչպես կորսված տեսողությունը,
Ցուրտ խոսք, ցուրտ ժպիտ պիտի մոռանաս,
Բույրի պես լցվես իմ տեղ ու տունը,
... Առանց քեզ ինձ հետ լեզու չեն գտնում,
Արդար էլ լինեմ՝ մեղքով եմ բարձված,
Առանց քեզ՝ ես ինձ էլ չեմ հավատում...
Անպայման պիտի դու վերադառնաս»:*

(«Անպայման պիտի...»)

Սիրո թեման բազմերանգ պատկերներում ներկայացվում է լեզվաոճական հարստությամբ. ապրումների թրթռներով, կտրուկ անցումներով, խորքային տողերով: Դրա նոր ապացույցը եղավ «Անմարելի, անմեռելի» գրքի «Պարզապես մի վարդ նվիրիր նրան» շարքը: Այստեղ Վ. Հակոբյանի գեղարվեստական մտածողությունն աչքի է ընկնում թափանցումների ուժով: Նա կոնկրետ պահերի, տրամադրությունների արդյունք հանդիսացող երգերի մեջ բացահայտում է կենսական, կարելոր գաղափարներ: Որպես բնության հետախույզ, բանաստեղծն աշխարհի գեղեցկություններն իմաստավորում է մարդկային սիրո ամենանուրբ ապրումների զուգահեռներով: Գեղեցիկ աղջկան քնարական հերոսի նվիրած մի հատիկ ծաղիկը հինգ մատների հետ ներկայացվում է որպես մի փունջ («Անվերնագիր»): Պատահական չէ աղջկա մատների եւ ծաղկի զուգահեռը: Սերը հաճույքի զգացումից բարձր է ու անեզրական: Աղջկա դեմքին դրոշմվող համբույրը գարնանային դաշտերի իմաստն է. «Գեղեցիկ, պայծառ աշխարհի համար համբույրը վերածննդի տոն է» («Տոնը»): Սերը եւ բնությունը ծիածանվում են հավասար ճառագայթներով: Մարդկային անմիջական ապրումների եւ բնության գեղեցկությունների խաչաձեւումից ստեղծվում է սիրո համայնապատկեր, որի շափաղումներն ասես ժայթքում են հոգու ընդերքից: Դիմելով սիրած աղջկան, երգիչը չի թաքցնում իր զգացմունքները.

Քեզ շփոթում են ծաղկած ծառի հետ,

Որ զարդարում է օրերը՝ ճերմակ

ծաղկաթերթերով,

Քեզ շփոթում են

Երակներիս մեջ մոլեգնող արյան

Վարարումի հետ,

նաեւ՝ անկման հետ տրամադրության:

(«Իմ աչքերի դեմ»)

Սիրո եւ բնութեան հորիզոնները կարոտներ են ծնուն. այդ կարոտներից աճում եւ խշշում է կենաց ծառը: Բանաստեղծը որոնում ու գտնում է այդ պատկեր-խորհրդանիշը, որոնցով սիրո երգը դողանջում է որպէս կյանքի ձայն: Մեծ սիրո ոգին այնպէս է թրթռում քնարական հերոսի կրծքի տակ, որ նա աշխարհի բոլոր գեղեցկություններում տեսնում է իր սերը: Երգից-երգ ծավալվելով, բանաստեղծը հյուսում է սիրո քաղցրութեան եւ հավերժութեան ինքնատիպ մի առասպել, առանց որի չկա երգ ու մեղեդի, երկիր ու տուն.

*Սերը իմ տան ճանապարհն է,
Վերելք է նոր ճամփաների,
Սերս սերն է մեր սարերի.
Սերը իմ տան ճանապարհն է:
Քանձասարի սուրբ տաճար է,
Արեւգալ է սերս բարի,
Սերս իմ տան ճանապարհն է,
Վերելք է նոր ճամփաների:*

(«Սերը իմ տան ճանապարհն է»)

Սիրո երգը գնալով կենսական ու խոհական նոր լիցքեր առավ Վ. Գալոբյանի «Մի կռունկ անցավ», «Վաղվա աչքերով», «Արցախա ծուխ», «Սոսե», «Մենարան» եւ այլ ժողովածուներում: Բանաստեղծի «Վաղվա աչքերով» գրքի շարքերից մեկը կոչվում է «Ծաղիկ բիբլիական»: Շարքի «Մեղեդին իջավ...» երգում կան այսպիսի տողեր.

*Որ ծաղկի ձեռք են մեկնում՝ կրակ է,
ո՞վ է աշխարհը մատնել հրդեհի,
կանաչը ասես փափուկ կատակ է,
Տազնապ կա մի ցուրտ, բա՞ն չպատահի:*

(«Մեղեդին իջավ»)

Աստվածային սիրո անունից գրված այս տողերը լրիվ խորհրդանշում են շարքը, որ խոսում է բանաստեղծի աշխարհաճանա-

չողության եւ կենսահայեցողության նրբերանգների մասին: Սիրո թեման միագիծ չի ցուցադրվում շարքում: Այն կյանքի քաղցր ու դառը գույներից է փնջված, հյուսված է սիրո ձգտումներից ու խորին տազնապներից, որոնք ճշմարտացիության ուժով հուզում են ընթերցողին, նրա առջեւ բացում կյանքի շատ առեղծվածներ: Սերը, ըստ բանաստեղծի, բիբլիական ծաղկի է նման, որին հասնելն այդպես էլ մնում է երազ ու տենչ.

*Կա մի ծաղիկ մի տեղ,
Բայց չգիտեմ, թե որտեղ,
սպասում է:*

*... Եվ կրակի մեջ բիբլիական ինձ սպասում է
մի ծաղիկ:*

*Ի՞նչ ճանփով գնամ,
որ հասնեմ նրան:*

(«Ծաղիկ բիբլիական»)

Բիբլիական ծաղիկը, որ սիրո խորհրդանիշ է, հասարակ ծաղիկ չէ: Այն «նախնադարյան ցավ է», այդ «ծաղկի բաժակում վայրի հավքերի կտուցից երգ է կաթել... ու շողշողում է չհայտնաբերված ադամանդի պես»: «Քաղցր մանանա» է այդ ծաղիկը, որը ձեռք բերելը մեկ անգամ է տրվում, եւ պետք է լինել զգույշ ու անձնուրաց:

Վ. Հակոբյանի սիրո երգերը կարոտի ու տազնապի, ձգտումի եւ հաճույքի արտահայտություններ են: Սիրո վայելքների մասին քիչ է խոսում բանաստեղծը: Այստեղ նա միջնադարյան տաղերգուների հետքերով է քայլում: Բանաստեղծի համար սիրո զգացումի ամեն մի պահ սրտի դող է, կենսական այնպիսի թանկ ապրում, որ իրականացված սիրո ճանապարհին «հարսնառտքի տակ ջարդվող ափսեմ էլ թող լինի ճերմակ լիալուսինը» («Դող»):

Երջանիկ սիրո համար երգիչը դժվարին ուղիներ է տեսնում: Գոյություն ունի՞ այն: Իհարկե: Բայց բանաստեղծն ավելին է ուզում: Նա երազում է աշխարհը տեսնել սիրով ողողված, ուզում է

բոլոր սրտերի թւերին կարդալ սիրո լուսաշող երգը: Այդ մղունով էլ նա սիրո ճանապարհին ավելի շատ տազնապ է տեսնում, քան քաղցրահամ համբույր:

Գիշերվա պես սեւ վարսափնջերում

մի բուռ ճերմակ կա՝

հետքը համբույրի,

որ պիտի լիներ, սակայն դեռ չկա...

(«Մի բուռ ճերմակ»)

Վ. Հակոբյանի սիրային երգերի շարքը հոգու թրթիռների փունջ է: Այդ թրթիռները սրտից են բխում եւ սրտեր են շոյում, որովհետեւ դրանք անմիջական են, եւ դա ընթերցողին է ներկայացվում պատկերային բազմերանգ ու շոշափելի հյուսվածքներով: Նման բնույթի երգեր են «Ինձ այցելում է փոքրիկ մի աղջիկ», «Առավոտը քեզ կրկնեցի իմ մեջ», «Ցանկություն», «Նատյուրմորտ՝ կարոտներով» եւ այլ բանաստեղծություններ: Աստիճանաբար բացվում է գաղտնիքը, թե ինչու սիրո մասին այդքան տազնապով ու սրտանց է խոսում բանաստեղծը, որովհետեւ «Ծաղիկը, լույսը, երեխան, Ամեն ինչ աշխարհում ծնվում է սիրուց» («Սիրեցեք զմիմեանս»):

4. ԵՐԳԸ՝ ԲՆՈՒԹՅԱՆ ԾՓԱՆՔՈՎ

Համաշխարհային գրականության մեջ հաստատված է *բնապաշտական քնարերգության* կարեւորությունը մարդու հոգու աշխարհի բացահայտման եւ պատկերավոր խոսքի զարգացման բնագավառում:

Բնութագրելով Հ. Սահյանի պոեզիան, ականավոր գրականագետ Ս. Աղաբաբյանը ընդգծել է. «Համո Սահյանի բանաստեղծական տարածությունը բնությունն է, բնության հետ ու միջոցով նա լուծում է իր երկրային մտահոգությունները, բացահայտում է իր աշխարհավերաբերմունքի գույնն ու կերպը, չափն ու կշիռը» (*Ս.Աղաբաբյան, XX դարի հայ գրականության զուգահեռական-*

ներում, «Սովետական գրող» հրատ., 1984, էջ 61): Իսկ ակադեմիկոս Ս. Արզումանյանը գրել է. «Պոեզիայում անհատի մայր արմատների, ազգային ակունքի խնդիրը չափազանց էական է: Համո Սահյանն իր բանաստեղծություններով ոչ թե սոսկ հիշեցնում, այլ ուղղակի տեղափոխում է մեզ այն վայրերը, ուր անցել են մանկության տարիները, որտեղից բացվել են լայն հեռաստաններ՝ դեպի աշխարհը, դեպի մեծ կյանքը... Հ. Սահյանի պոեզիայում բնապատկերներն ու պատկեր-զգացումները ծփանք են տալիս ազգային ինքնատիպ երանգներով, բնաշխարհին հատուկ գունային հարուստ նրբերանգներով» (Ս.Արզումանյան, Բանաստեղծության ազգային հողը, «Անի» հրատ., 1998, էջ 495-496):

20-րդ դարի երկրորդ կեսի հայ բնապաշտական քնարերգության բոլոր ներկայացուցիչները լուրջ ուշադրություն են դարձրել բնության լեզվով մարդու սրտի հետ խոսելու հնարանքին, որին հետեւել են նաեւ Արցախի պոետները: Նրանք ամեն կերպ ձգտել են բանաստեղծական իրենց հունձքը կապել Հայոց Արեւելից կողմանց գեղեցկությունների եւ նրա մարդկանց հոգսերի ու ակնկալությունների հետ:

Բանաստեղծական սեփական ճանապարհ ունենալու ձգտումը ծիածանվում է Վարդան Հակոբյանի դեռեւս առաջին գրքուկում: Հայ դարավոր պոեզիայի դժվարին կեռմաններում ծնված իսկական պոետների պես նա ինքնատիպ ստեղծագործողի իր հայտը ներկայացնում է վստահորեն: Արվեստագետ քաղաքացու եւ բնության զուգահեռների միջոցով նա որոնում է մարդկանց սրտերը հասկանալու առեղծվածը:

Բնության երեւույթների մեջ գտնելով հասարակության համար անհրաժեշտ կենսական գեղեցկություններ, Վ.Հակոբյանը խոհական-փիլիսոփայական իր խորհուրդներով ճակատային երթ չի կատարում: Նրա հակիրճ ու հստակ, խորք ու ծանրություն ունեցող երգերում բնությունն ինքն է ծավալվում իր խորհուրդներով:

Բնապաշտական տարերքի հակոբյանական դիտարկումները դառնում են անհատի եւ հասարակության, գործի եւ հավերժության, արդարության եւ իրականության եւ այլ պրոբլեմներ շոշափող պատկերային հյուսվածքներ: Բանաստեղծը փնտրում-գտնում է բնության առեղծվածային-խորհրդանշական երեւոյթների ծալքերը բացելու իր թալիսմանը: Լեռնաշխարհի բնական գեղեցկոյունների անզուգական պատկերներն այնպիսի տողերի են փոխարկվում, որ կարելի է տեսնել, զգալ, լսել դրանք: Կարդալով այդ պատկերները, մտովի տեղափոխվում ես կյանքի բարդ-պարզ, բարի-չար, հաճելի-դառն առեղծվածների հորձանուտը: Բանաստեղծի վրձնապատկերները գեղագիտական հաճույքի զգացումներից ընթերցողին տանում են դեպի մարդկային բարոյականության ու անհատի ապրումների ծալ-ծալ աշխարհը:

Կյանքի հավերժության գաղտնիքները պատկերվում են բնանկարի մթնոլորտում: Այստեղ մոր երանգներով շարունակվում են բնապաշտական քնարերգության ավանդույթները: Վ. Հակոբյանը ծնվել ու ծեւավորվել է մի այնպիսի գյուղում, որի փեշերը աստղաբույլերի շարունակւթյունն են, սարերը՝ առաջին սիրո նման զմայլիչ, բնության բոլոր հրաշքերը խտացված են շռայլորեն: Այդ գեղեցկոյունների թույրերի եւ բույրերի մի ծփանք է բանաստեղծի հոգին: Բնապատկերի մեջ նրա ազատ թելելն ու պոետական լուծումները գրքերից չեն գալիս, իր ներաշխարհի երանգներն ու ծփանքներն ունի՝ առնված սեփական բնօրրանից:

Վ. Հակոբյանը թարմ պատկերներով իմաստավորում է տիեզերքը, բնոթյունը: Նրանցից փոխ առած գույներով ասես զրուցում է բնության ու տիեզերքի հետ եւ հաստատում նրանց արարչական կարողւթյունն ու կյանքի հետ ունեցած անմիջական կապը: Բնության եւ մարդու, տիեզերքի եւ կյանքի ներդաշնակւթյան վարագույրը բացելով, բանաստեղծը հասկանում է այդ օրինաշափոթւթյունների գեղեցկոթյունը: Լուսին, տիեզերք,

աստղեր, արեւ, բարդի, ծաղիկ եւ այլն, մարդկային կյանքի բովանդակություն են ձեռք բերում: Բանաստեղծական մտահղացումների ընդհանուր շղթայի մեջ ներկայացվող բառ-պատկերները հաստատում են, որ բանաստեղծը մանկությունից մինչեւ հասունություն իր կրօնի տակ է առել բնության շերտերը եւ աշխարհի դեմ բացել հոգու դռները: Աշխարհին շաղոտ ու շողոտ բարձունքից է նայում բանաստեղծը, եւ նրա աչքերին ամեն ինչ երեւում է որպէս աշխարհն ու կյանքը գեղեցկացնող ակունք:

Բնությունից դեպի մարդկային արարքների կոնկրետ գնահատականը բանաստեղծի մոտ տեղի է ունենում դարձյալ բնության միջոցով, եւ նրա աշխարհի սահմանները ընդգծվում են բնությունից մարդ, մարդուց բնություն եզրերով, եւ որ շատ կարելու է, ընդգծվում են նրա ոճը, հղացումների դրսեւորման ձեւերը, նյութի եւ մտածողության ներդաշնակությունը: Այդ առումով հաջող օրինակ է «Քայլերս» բանաստեղծությունը: Քնարական հերոսը իր քայլերը համեմատում է կանաչ ձեռքերի, կանաչ երգերի, սուրբ ճշմարտության վերընծյուղումների հետ: Սակայն դրանով չի բավարարվում: Գունային համակարգից ծնվում է բանաստեղծական գյուտ-ընդհանրացումը, որով հաստատվում է առողջ քայլերից սկիզբ առնող հավիտենության գաղափարը:

Բանաստեղծի ընդհանուր հրճվանքը կոնկրետանում է պատկեր-զգացմունքի մեջ: Քնարական հերոսի ապրումներն ու բնության գույները նման դեպքում վերածվում են կենսական գունախաղերի. ընթերցողը երգերի տողերի մեջ լսում է բնության մեղեդիների եւ անհատի երազանքների համաձուլյ ձայնը՝ որպէս երջանկության եւ գարնան կարոտի զգացում:

Բանաստեղծի երգերում իմաստավորվում են տարվա բոլոր գույները: Դրանցից յուրաքանչյուրն օգտագործվում է կյանքի օրինաչափությունները հաստատելու միտումով: Գարնան կարոտն զգացող երգիչը փառաբանում է աշունը, որի հայացքը նման է նռան դեմքի: Եվ աշունը հմայում է իր ժպիտներով:

Արեւային տեսիլներից Վ. Հակոբյանն անդրադառնում է մայր հողի գույներին եւ ստեղծում արեւաթույր ու հողաթույր երգերի փունջ՝ խորհրդանշելով արեւին ու հողին իմաստ տվող մարդու հոգու երանգները:

Երգչի ստեղծագործական խառնարանում շիկացած հորիզոններ կան, եւ յուրաքանչյուր երեւոյթի մեջ նա տեսնում է գույներ փնջելու, արեւներ երկնելու կիրքը: Հեթանոսական հեռուներից մեր օրերին հասած արեւային սիրով Հակոբյանն օծում է իր սիրտը, եւ երգը նմանվում է այգաբացին սարի թիկունքից ժպտացող թարմ արփիի, որ սրտեր շոյելով բարձրանում է կիզակետ եւ ջերմացնում աշխարհն ու մարդկանց: Անգամ ճայերը ծովի վրա ճախրելով, բախվելով ջրերին, ուզում են սուր կտուցներով «արեւը նորից բիլ երկինք հանել»: Մի ուրիշ դեպքում հսկա ժայռը ձմռանը հոգատար մոր պես խոնարհվում է քնած առվին՝ խորհելով «գարնան ու կյանքի մասին...»: Ներդաշնակ են կյանքի ու բանաստեղծության փոխհարաբերությունները: Այստեղից էլ՝ այն հավատը, որ երկիրը միակ օջախն է, ուր մարդը կարող է գտնել իր երջանկությունը, ուստի, պետք է ծառայի նրան եւ որդիաբար խոնարհվի նրա առաջ:

Վ. Հակոբյանը «Սեր եւ ժպիտ» երկրորդ գրքում կրկին քնարական երանգների եւ խոհա-փիլիսոփայական մտորումների ու լորտների մեջ էր: Առաջին գրքում եղած բնության եւ մարդկային հավերժության խորհուրդները շարունակում են ծփալ նոր ժողովածուում՝ սիրո եւ երջանկության երազներով: Բանաստեղծը երգի մեջ տեսնում է մի ամբողջ տիեզերք, ուստի, գրքի հենց առաջին հյուսվածքում ընդգծում է ստեղծագործական իր հավատամքը երգի սահմանների եւ արվեստի հանդեպ.

Ծիծեռնակի բույնի նման

Սրտի դողով,

Հոգու շողով

Ու հողով է հյուսվում երգը,

Բայց նրա մեջ

Ծվարում է... տիեզերքը:

(«Երգը»)

Այս բանաստեղծության ընդհանուր տրամադրության մեջ երեւում է ամբողջ գրքի գույների հասարակական արժեքի եւ կենսական թրթիռների խորքը: Սրտի, հոգու, հողի, տիեզերքի զուգահեռներն այստեղ ձեւական թվարկումներ չեն: Դրանք, ըստ էության, բանաստեղծի խոստովանության վկայություններն են իր երգերի տարողության մասին: Բնության երեւույթների ոլորտում բանաստեղծը գտնում է իրեն հուզող գաղափարի խորհրդանիշը: Եվ հաճախ համեմատությունը դառնում է ժողովրդական ասացվածքի զուգորդը, պարզապես վերածվում է թեւավոր խոսքի, որի բարոյական եւ գեղագիտական ծփանքները միաձույլ գերում են ընթերցողին, շիկացնում միտքն ու սիրտը: Ի՞նչ են արմատները եւ ինչի՞ են ծառայում: Այս հարցի պատասխանը երկմտանքի առիթ չի տալիս: Բանաստեղծի խոսքը արմատների մասին դառնում է լուսավոր ապրումների ընդհանրացում:

Բնության պատկերներով պայմանավորվում են Վ. Յակոբյանի երգերի կառուցվածքային յուրահատկությունները: Նա զգացմունքը տանում է դեպի մարդկային բարեմասնությունների գնահատման ոլորտ: Նման դեպքում ներթափանցումի ուժ են ստանում պատկերները: Դիմելով Արեւին, բանաստեղծը գրում է.

Պարզապես շատ ես դու բարձր, արեւ,

Դու շատ ես մաքուր

ու անմեղ, անմեղ...

Եվ մի՛ զարմացիր,

Որ այս աշխարհում ոչ մի երկրային

Չի կարող ուղիղ աչքերիդ նայել...

(«Արեւ»)

Մի ամբողջ լեռնաշխարհի հազարամյակների կենսասիրու-

թյունն ու կենսափորձը երգի տողեր դարձած՝ թրթռում են բանաստեղծի շուրթերին: Արցախ աշխարհի տառապանքից ու լուսից ծնված խոսքը մի դեպքում հնչում է որպես օրհներգ՝ ձոնված երկնքին («Երկինքն ասես հասկանում է»), մյուս դեպքում՝ հողին ուղղված երախտագիտական խոստովանություն («Հող»), մի ուրիշ դեպքում ծավալվում է՝ ինչպես կարոտի առեղծված («Մի կարոտ կա»), իսկ մի այլ դեպքում՝ ծավալվում գարնան ծփանքներով («Գարուն»):

*Ծաղկաթերթերը շուրթերին առած
Առվի հնայքը քաղցր է հիմա,
Ինչպես հայտնություն...
Առուն նվազ է դարձել մի այրող,
Նահապետ կաղնու ոտքերը ընկել,
Եվ... լրջությունը կորցրել է կաղնին...
(«Գարուն»)*

Քայլ առ քայլ բանաստեղծը գնում է դեպի իրերի եւ երեւոյթների խորքը, իմաստնանում, աշխարհը ծանր ու թեթև անում, ձգտում բացել կյանքի հավերժության վարագույրները, ապրել, տառապել, խորհել, պայքարել, ծաղկել ու ծաղկեցնել: Բանաստեղծը բնության երեւոյթները կշռադատում է փիլիսոփայորեն՝ երգի ծածանումներում դարձյալ ունենալով բնությունը՝ իր հնայքներով, կենտրոնում ունենալով մարդուն: Նման մի քանի տողերից բաղկացած երգը դառնում է հակիրճության մեջ շատ բան ասող իմաստություն:

*Ծառերից թափվող այս տերեւները
Նրանց երբեմնի կանաչ օրերն են,
Որ հավաքել ու ի մի է բերել
Փողոցը ավլող մի լավ ծերունի...
Ի մի է բերել՝
Մտքով գնալով օրերը ջահել,
Եվ... ափսոսում է, չի ուզում վառել...
(«Ծառերից...»)*

«Իմ տան լույսը» շարքում բանաստեղծը մտորում է բնության

Եւ կյանքի մասին: Բնությունը նրա համար ներկայանում է որպես մարդկային արարքները, գեղեցիկի հասկացությունը, աշխարհը դալար պահող ուժի գաղտնիքները, մի խոսքով՝ բարոյականության առեղծվածային օրենքները բացահայտելու թանգարան: Աշխարհի, տիեզերքի, մարդու՝ իրարով պայմանավորված կապերը բանաստեղծը պատկերում է որպես հավերժության հիմնական շարժիչ: Այսպես, ծառը մայր հողից արել է առնում. ծփում եւ որպես վարձահատույց, ձգտում է «նրան պահել իր շվաքի տակ» («Արել է առնում»), վարդերը միշտ էլ արել են սիրել, բայց բավական է կտրվեն հողից, իսկույն «թառամում են, թռչում... արելից...» («Վարդերը»), անտառը որպես մարդկային կյանքի խորհրդանիշ, առաջին անգամ կարծես ուզում է ունկնդրել պոետին, որ տաքանա միայն չորուկների կրակով («Անտառ»), սգավոր հովը իրեն գլորում է անդունդներն ի վար, ուռենին հողի կրծքին հեկեկում է, ծնկները ծեծում, բարակ առուն նվաղում է լացից, որովհետեւ «մի ծաղիկ մարեց... ժպիտն աչքերում» («Սգավոր հովը»)... Քնարական ոճի պարզությամբ, մեկը մեկից հմայիչ, պատումի ինքնավստահությամբ Հակոբյանը ցույց է տալիս աշխարհի եւ մարդու ներդաշնակությունը, կյանքի քաղցրությունը, հողի արարիչ ուժը.

Թե երգելու համար եմ ես

Աշխարհ եկել,

Թող որ կյանք ու բարիք ծնող

Հողը երգեմ,

Մերվեն նրան՝ ջրի նման...

... Ե՞րբ է ջուրը հողում կորել,

Ջուրը հողում արարում է:

(«Թե երգելու համար...»)

Վ. Հակոբյանի բանաստեղծությունների վերոհիշյալ շարքը կարելի է անվանել խոհական-փիլիսոփայական երգերի փունջ: Այստեղ նկատվում է անձնավորման ու փոխաբերության հմուտ

օգտագործումը, որ բխում է ոճի բնական հյուսվածքից եւ աշխարհընկալման յուրահատկությունից: Բանաստեղծի ուսուցիչն ու հուշարարը բնությունն է, որի շշուռների մեջ նա լսում է կյանքի երգը: Նրա կենսասիրությունը վերածվում է մարդասիրության, սակայն այդ սերը ալիքվում է նրանց հանդեպ, ովքեր կարող են առաջամարտիկը դառնալ լուսավոր կյանքի ճանապարհին.

*Գարունքվա լուրը բերելու համար
Մեր սրտին մոտ է ձյունածաղիկը,
Նույնիսկ ավելի,
Քան ծաղիկը այն,
Որ մեզ բերում է գարունը ինքը:
(«Գարունքվա լուրը»)*

Կյանքի հավերժությունը մարդու գործի մեջ տեսնող բանաստեղծը հաստատում է, որ գոյություն ունի երկու կյանք, որ մահկանացուն լծվում է հավերժությանը ետմահու: Նման գաղափարն արծարծող երգերի մեջ նա դնում է իր սրտի ջերմությունը: Դեպի աշխարհն ունեցած մեծ սիրուց ու ցավից են ծնված նման երգերը: Այսպես.

*Ամպերն ապրում են
Մեռնելուց հետո
Չողի թարմությամբ
Ու հողի բույրով
Բուրվառող քաղցր
Ծաղիկների մեջ...
(«Ամպերը»)*

Այս առումով Վ. Չակոբյանը իրեն դրսեւորում է որպես մեր հարուստ քնարերգության անթառամ ավանդույթների ժառանգորդ: Նրա բանաստեղծությունների մեջ նկատվում է նաեւ մի անտեսանելի, բայց առողջ երակ՝ կապված ժողովրդական պոեզիայի իմաստության հետ:

Արեւային օրհներգություններ է գրքի «Իմ տան լույսը» շարքը:

Մրցելով արեւի հետ եւ նմանվելով արեւին, բանաստեղծը կյանքը շողերով օծելու խնկարկուն է, նա խորհուրդ է տալիս թիթեռնիկին՝ չմեռնել մայրամուտին, այլ «արեւոտ ծաղկի երգի մեջ» ծոցվել, մահկանացուն կնքել առավոտյան, ասել է թե՛ մահով անգամ մոտեցնել առավոտը:

«Սեր եւ ժպիտ» ժողովածուի որոշ բանաստեղծություններում Չակոբյանը երեւութներին եւ առարկաներին վերագրում է այնպիսի հատկություններ, որ անսովոր լինելու հետ մեկտեղ թարմություն են հաղորդում խոսքին: Այստեղ կարելու էր են խաղուն նաեւ համեմատությունները: Ընդհանրապես Վ. Չակոբյանի խոսքը պատկերավոր է, կոնկրետ, սահուն, երաժշտական: Ծիշտ է, նա ուշադրություն չի դարձնում հանգավորման դասական ավանդություններին, սակայն բանաստեղծական ռիթմը չի խախտվում, միտքը չի զոհվում հանգին: Եվ դա դարձել է ոճական առանձնահատկություն բանաստեղծի համար: Ոճական այդպիսի հյուսվածքում բանաստեղծի երգերում ամեն ինչ խորհում է, շարժվում է, փայլում է, տենչում է: Ահա «Չեռադիտակ...» հնգատող երգը.

Չեռադիտակ է արելը դարձել

Լեռան աչքերին...

Նայում է լեռը դարերի միջով.

Թե քիչ էլ քայլի,

Կհասնի անհաս հորիզոններին...

(«Չեռադիտակ է...»)

Արեւի, լուսի, երազի եւ սիրո հետ կապված զգացումները «Իմ տան լույսը» շարքում ընդհանրացման հյուսվածք են դառնում համանուն բանաստեղծության վերջում, որով բնութագրվում է նաեւ երգչի աշխարհընկալումն ու ապրելու նպատակը.

Ախր, մայրս ասո՛ւմ էր միշտ.

- Երբ որ տնից մեկը հանկարծ

Ուշանում է հանդ ու արտում,

Արեգակը մայր մտնելիս

*Վառե՛ք լույսը,
Որ նա լույսով գա՛, հասնի տուն»:
(«Իմ տան լույսը»)*

Վ. Հակոբյանի յուրաքանչյուր նոր գիրք նախորդի անմիջական շարունակությունն է՝ արյունակից, բայց՝ նոր, նույն արմատից, բայց՝ նորագույն, նույն ցողունից, բայց՝ նորաբույր: Այդպես եղավ եւ բանաստեղծի չորրորդ գիրքը՝ «Մայրանուն է լույսը» խորագրով: Աշխարհում ամեն մի բարության ծնունդ համեմատելով մայրական մկիրունի հետ, Վ. Հակոբյանը կյանքի իմաստն ու հույսը կապում է մայրացող լույսի հետ:

Գրքի լավագույն գործերից է Պ. Սեւակին մկիրած «Հիմն լույսի» բանաստեղծությունը: Մեկ առ մեկ բացելով մեծ պոետի հուզաշխարհի շերտերը, Վ. Հակոբյանը տեսնում է, որ այնտեղ աշխուժացած աստղեր կան, որոնք ծիծաղաձայն իջել են երկնից ու շարվել Սեւակի հողաբույր բառերի մեջ, կամարվել որպես կարոտ ու ծիածան: Հակոբյանը զգում է, որ Սեւակի երգերում վերերգվել է Արեգակը, որ մթան բոլոր ստվերները հալվեն, հեռանան, որ միշտ լո՛ւյս լինի, լինի... լո՛ւյս.

*Նրա համար է լեռը բարձրանում,
Որ ավելի խոր ձորերն երեւան.
Նրա համար է ձորը խորանում,
Որ լեռներն էլի բարձր երեւան:
Ո՛նց կուզենայի, իմ լեռ ու ձորեր,
Ձեր դաշնությունը իմ հոգուն տայիք.
Ձորերի նման խորանայի ես
Ու բարձրանայի լեռների նման:*

(«Նրա համար է...»)

Բանաստեղծը զգում է, որ փոթորկահույզ մեր իրականության համար յուրաքանչյուր բացվող օր պետք է ծավալվի եւ տեր ու տնօրեն դառնա մարդկանց երազներին ու բախտին, որ հանկարծ «սեւի մի նշույլ անգամ իր հետ չբերի» («Այգալույսի բաց

դռներուն...»): Որպես բացվող օրվա անցագիրն ստուգող խստապահանջ պահակ, նա բացում է բոլոր ճամփաները նրա առաջ, ցնծում, երբ համոզվում է աշխարհին իջնող օրվա լուսածին լինելու մեջ.

Ու բացվող օրը որպես անցագիր՝

Արեւն է պարզում,

Ե՛վ կանրջվում են նրա ոտքի տակ,

Եվ մայրանում է լույսը իմ ներսում:

(«Այգալույսի բաց դռներում»)

«Մայրանում է լույսը» գիրքը բանաստեղծական վառվառուն խոհերի եւ կրքոտ երազների խորան է: Խորացնելով նախորդ գրքերին հատուկ խտացված ապրումների, սրված պատկերների ստեղծման իր իսկ ձեռքբերումների որակը, բանաստեղծը աշխարհի առջեւ բացում է իր սեփական աշխարհի արեւային երազները, ցանկությունները, եւ դրանք արտահայտչական թարմ գույների շնորհիվ արժեքավորվում են գեղագիտական իմաստով: Կյանք մտնելով բարձրանիստ լեռներից, բանաստեղծը բարության ամեն մի ծնունդ գնահատում է հայրենի սարերի եւ առուների դժվարին, արարչական ուժի հետ համեմատելով.

Առուն հարթ ճամփով

Միշտ լուռ է հոսում.

Երգը այնտեղ է

Ժնվում երեւի,

ուր որ քարեր կան

Ու դժվար անցում:

(«Առուն...»)

Առվի եւ լեռնային քարերի մետաֆորն այստեղ բազմիմաստ է: Այն վերաբերում է ոչ միայն երգի, այլեւ կյանքը գեղեցկացնող բոլոր երանգների ծննդին: Այդ միտումը պոետական խոհ ու հույզի մի նոր պատկեր է դառնում «Վայրկյանի մեջ» երգում: Արտահայտելով իր անձնական վերաբերմունքը վայրկյանի հանդեպ, Հակոբյանը այն

զնահատում է նրա պարզեւած հարստութիւնների չափանիշով: Պահանջի միջից փայլփլում են երգչի իղծերը՝ համոզիչ, ջերմացնող.

Ես քո վայրկյանն եմ ուզում նկարել

Այսօր, ժամանակ,

Ու նվեր տալ քեզ՝ դարիս անունից:-

Միայն թե ների՛ր, ների՛ր, խնդրում եմ,

Թե նկարի մեջ դու տեսնես եւ... ինձ:

Ես կամ իմ դարի ամեն վայրկյանում:

(«Վայրկյանի մեջ»)

Դարի ամեն վայրկյանում լինելը բանաստեղծը չի ներկայացնում որպէս թեթեւ փառքի երազանք: Դարի վայրկյանում լինել, ըստ պահանջի, նշանակում է անմարում սիրով հողը փայփայել՝ արեւին հասնելու համար, վեհանալ՝ միայն ու միայն արմատ նետելով սուրբ հողի խորքում («Վեհութիւնը»).

Թե իր ճյուղերով մոտ է երկնքին,

Ասում ենք՝ վեհ է, բարձր է ծառը:

Բայց չե՞նք սխալվում,-

Ուրի՛շ կլիներ, թե իմանայինք՝

Որքան է ծառը

Իր արմատներով խորացել հողում:

(«Վեհութիւնը»)

«Մայրանուն է լույսը» գրքի մի շարք բանաստեղծութիւններ ստեղծագործական եւ գաղափարական առնչութիւններով, միեւնույն տրամադրութիւնների եւ տարերքի արտահայտութիւններով մի շարք են կազմում: Դրանցից են «Ամառային նկար», «Չայրենիք», «Պատկեր», «Չողին», «Ծննդավայր» հյուսվածքները:

Ժողովածուի խոհական երգերը ապացուցում են իրականութեան հետ սերտ կապ ունեցող տաղանդի լիցքավորման ուժն ու երանգները: Մարդկային կյանքի բովանդակութեան, ապրելու իմաստի, անհատի եւ ժողովրդի փոխհարաբերութեան, սիրո գե-

ղեցկության եւ այլ խնդիրներ բանաստեղծական համոզիչ պատասխաններ են գտնում Հակոբյանի խոհական երգերում: Նա ծառերի թափվող տերեւների մեջ այրում է տեսնում: Այդ աշնան տերեւները չեն փսոսում, չեն ցավում ընկնելու համար, որովհետեւ գիտեն, որ «Իրենցով պիտի ծածկեն մայր ծառի Անհող մնացած ինչ-որ մի արմատ» («Ծառերից թափվող...»):

Այդ ծառը «քարի ծնունդ է, հողի սեր ունի, լույսի պաշտանունք, վեհանձն է ծառը», եւ ձորը միշտ շշուկով լցված է պահում: Իսկ եթե ուզում են իմանալ ծառի ամրության մասին, պետք է հարցնեն քանուց:

Երգից երգ նոր պատկերներ են հաջորդում իրար, գույների, միջավայրի լույսը ավելի է խտանում, բանաստեղծը նոր իմաստություններ է տեսնում նրանց մեջ, պոետական խոսքը դարձնում յուրովի: Վերջապես նա համոզվում է, որ հրաշքները պայմանավորված են մարդու ձեռքերով. «Ձեռքերի մեջ են հրաշքներն ապրում», - բացականչում է երգիչը եւ հաստատում, որ «Նրանք արելի լույս են ճառագում, զորություն դառնում կամուրջների վեհ կանարների մեջ» հայտնության ոսկե աստղեր վառում.

Տաք գգվանքներով բուրում են քաղցր...

Ձեռքերն են, իրավ, հրաշք արարում,

Ձեռքերիս մեջ են ողջ հրաշքները:

Ուրիշ հրաշքներ մի՛ փնտրեք, երգե՛ր,

Ապրեցեք միայն ինչպես... ձեռքերը:

(Հրաշքները)

Որպես ճշմարիտ բանաստեղծ, Վ. Հակոբյանը բացելով իր սեփական երգի ճանապարհը, քայլում է զուլալված ու հարստացած: Վկան՝ «Անմարելի-անմեռնելի» ժողովածուն, որ տպագրվեց 1981թ.: Հաստատելով կյանքի եւ գրականության կապը, բանաստեղծը նոր երանգներով պոեզիա բերեց բարդ ու հակասական մեր իրականությունը՝ մատը դնելով կյանքը քաղցրացնող ու հաստատող երեւույթների վրա: Հայրենասեր բանաստեղծը

ժողովրդի ճակատագիրը իրենը համարելով, նոր ու թրթռուն երգեր նվիրեց հարազատ օջախին ու լեռնաշխարհին:

Ըստ էության, գրքի «Քո գիրն եմ գրում» շարքը «Լեռները թեւերիս վրա» շարքի անմիջական շարունակությունն է: Բանաստեղծի կողմից շարքերի այս տարբերակումը կապված է հայրենի օջախից դեպի հայրենիք տանող լայն ճանապարհի հասկացության հետ: Վերոհիշյալ երկու շարքերը ստեղծագործական եւ գաղափարական սերտ առնչություն ունեն, նույն տրամադրության եւ կրքի, նույն տարերքի արտահայտություններ են: Նախորդ երգերին հատուկ հուզական թթսմորով պոետը հյուսում է բնության եւ մարդու ներդաշնակության պատկերը, որի մեջ էլ հենց նշմարում է հայրենիքի հանդեպ եղած այն սերը, որով Աստծո կողմից ստեղծված հողը դառնում է հայրենիք:

«Անմարելի-անմեռելի» գրքի «Գլխարկ եմ հանում ձնծաղկի առաջ» շարքը բնապաշտական քնարերգության գեղեցիկ նմուշներից է: Բանաստեղծը ասես լսում է հողի ձայնը, տեսնում նրա ուժը («Ձայն»), ստեղծում նատյուրմորտ, ուր «ճամփան աշուն է, քարը աշուն է, աղբյուրը՝ աշուն...Մութը խշշում է խազալի նման» («Նատյուրմորտ»):

Վ. Հակոբյանի բնապաշտական երգերում ամեն ինչ քայլում է, երազում, տենչում, ծփում, օրորվում, սիրում ու սիրվում, խանդում ու նախատում, ծերանում ու ծիլ արծակում, լեզու առած խոսում: Եվ այդ ամենի մեջ ընթերցողին ժպտում է օջախը սուրբ, որի սիրով ապրում է բանաստեղծը եւ ապրեցնում իր երգերով:

Արցախյան շարժումը Հակոբյանի բանաստեղծական խառնարանում նոր երանգներ է առաջացրել: Կարոտի եւ սիրո երգիչը տեսնելով 20-րդ դարի վերջի կոմունիստ «մարգարեների» կազմակերպած մղձավանջը մեր ազատաբաղձ ոգու դեմ, դառնությամբ ու ցասումով խարազանում է նորի անունից հոխորտացող ուժերի ցինիզմն ու դաժանությունը: «1988 թիվ, փետրվար» բանաստեղծության մեջ հեղինակը արելը պատկերում է որպես «պատուհանից

դուրս նետված» արյունաքամ մանուկ, իսկ «երկինքը՝ սարդի մի ցանց»:

«Արցախա ծուխ» գրքի բանաստեղծական շարքերում Վ. Չակոբյանը մի-մի աշխարհ է ստեղծում, նրանցում կարոտ ու ցավ կա, սեր ու ափսոսանք, երազ ու տենչ, հուր ու աստղեր, մի ամբողջ բնություն՝ մարդկային ապրումների թրթռներով: Այդ առումով «Սեղեղի ծննդյան» շարքը ընդգրկում է կյանքի ծփանքների առեղծվածները՝ ծնունդով ու հառնումով, երկրի ու տիեզերքի գեղեցկություններով ու ներդաշնակություններով: Երգի մեջ Թումանյանի բնորոշմամբ մի աշխարհ է բառը, որի մասին Վ. Չակոբյանը խորհում է այսպես.

*Բառերը միշտ էլ կանաչ են լինում,
Նրանք թռչում են միայն այն պահին,
Երբ հանկարծ իրենց տեղը*

չեն դրվում:

*Դրա համար էլ գրիչս առնելիս
Ձեռքիս տեղ ասես սիրտս է դողում:*

(«Բառերը»)

Տիեզերքի լեզուն հասկանում է Չակոբյանը: Եվ այդ տիեզերքը ծփում է նրա բանաստեղծական խմորումների շրջանակների մեջ: Բանաստեղծը կարդում է բոլոր առեղծվածները եւ խոնարհվում Աստծո արարչագործության առջեւ՝ հանուն մարդու: Բայց մարդն էլ չի հակադրված Աստծո ոգուն, որովհետեւ Արարչի ստեղծածի ոգին կարող է կարդալ մարդը: Եվ եթե ինչ-որ առեղծված դեռեւս չբացված է մնում բանաստեղծի մոտ, այդ չի նշանակում, որ նա ընկրկում է դրա առջեւ: Ոչ: Չբացահայտված գաղտնիքի հանդեպ եղած բանաստեղծական հարցումի մեջ էլ երգիչը խորհուրդ է տալիս հասու լինել եւ նմանվել բնությանը.

*Ես զարմանում եմ,
թե այս ժայռերը որտեղի՞ց գիտեն
Այսքան լեզուներ...*

*Փորձիր մի լեզվով խոսել նրանց հետ՝
Նույն լեզվով էլ քեզ արձագանքում են...*

(Ես զարմանում եմ)»

Աշխարհի ճանաչման պրոբլեմը բանաստեղծական լուծում է գտնում Հակոբյանի երգերում: Սակայն այդ լուծումը միանշանակ չէ: Հարցումների շրջանակներում պոետը շատ ինչուների պատասխանը դիտավորյալ չի տալիս: Այն թողնում է ընթերցողին: Եվ դա լավ է. չէ՞ որ կյանքը իր շերտերում անթեղում է մեծ ինչուի այնքան պատասխաններ, որ հնարավոր չէ մեկ ոտանավորում ի մի բերել: Դրանով ընդգծվում է կյանքի հեքիաթային բնույթը:

Սակայն, չնայած հարցումին, բանաստեղծը տարբեր հյուսվածքներում հաստատում է կյանքի ընթացքը՝ սպասումների եւ երազանքների էջերով, հաստատումի եւ ծաղկումի անակնկալներով:

Վերընթերցելով Վ.Հակոբյանի բնության եւ խոհական երգերի շարքերը, ապրում ես ուրախության եւ հաճույքի մի զգացում այն բանի համար, որ բանաստեղծը նախ՝ խոսում է ընթերցողի սրտից, չենք ասում անունից, երկրորդ՝ նրա խոսքի գույները նման են մայր բնության երանգներին, արհեստական չեն, ինքնաբուխ են, երրորդ՝ որ նա ունի բանաստեղծության իր տիպը, ոճի անհատականությունը:

5. ԵՐԳԻ ԵՎ ԶԵՆՔԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՈՒԺԸ

Անվանի գրականագետ, ակադեմիկոս Ս. Սարինյանը Վարդան Հակոբյանի «Մենարան» ժողովածուի առաջաբանում գրել է. «Անամպ էր Վարդանի հոգու երկինքը մինչեւ 1988-ի փետրվարը: Վերահաս իրադարձություններն այլ գույներով են ներկում Արցախի բնակարը: Մնում է Սերը, որ նախաստեղծ է, Բնության եւ Կարոտի արձագանքները ածանցվում են Արցախ-Պատմություն-Ցավ երրորդության հոգեբանական տազնապներից: Բա-

նաստեղծի հոգու վրա ծանրանում է օրերի մղձավանջը, իրերի շարժումը փոխակերպվում է անկերպության քառսի... Այլ դուրանջներ են հղում Գանձասարի եւ Ամարասի զանգերը, հողի հիշողությունից վերընձյուղվում է Հայկ Նահապետի ձգված աղեղը եւ պատմությունը մեր ազգային օրացույցի վրա դրոշմում է Ավարայրի եւ Սարդարապատի զինանշանը» (*Ս.Սարինյան, Բանաստեղծի հայտնությունը, Վ.Հակոբյանի «Մենարան» գրքի առաջաբանը, 1966, էջ 4*): Սա մի դիտարկում է, որ վերաբերում է Վ. Հակոբյանի բոլոր գրչակից ընկերներին, ովքեր գտնվում էին Արցախում եւ մասնակցում թշնամու դեմ զենքի եւ երգի միասնությամբ ընթացող համաժողովրդական մաքառմանը:

1989թ. երեւանում «Լույս» հրատարակչությունը տպագրեց Վ. Հակոբյանի «Արցախա ծուխ» ժողովածուն: «Արցախա ծուխը» արարելու-հարատեւելու, սիրելու-սիրվելու, մաքառելու-թեւավորվելու ծուխ է: Այն երեւում է հեռվից: Աչքերից դառն արցունքներ բերող ծուխ չէ դա, այլ մեռնի բույր է, պապ ու տատի շունչ, հոր ու մոր շոյանք, մանկանց ժպիտ, հայրենի հողի գարնանային ցող, ապագային հառած աչքերի շող, ժողովրդական սիրո փայլատակում: «Արցախա ծուխ» գրքում Հակոբյանի քնարական հերոսը ջերմությամբ, արյան եռքով Արցախի հետ է: Նա իր երակների մեջ զգում է հողի ծլարձակումը, լեռների սանձակոտոր լինելը, ժամանակների ընթացքը.

*Փոխվել է ժամը, դասը չի փոխվել,
զանգում ծուլվել է Սարդարապատը...
(«Որդան կարմիր»)*

Բանաստեղծը եզրակացնում է, որ մղձավանջը պետք է մարի տան լույսից, ամեն մի նահատակ դառնա «գոյության վճիռ», «հավատը՝ սուրբ տուն», առավոտը՝ հառնումի բաց դաս, «եւ դարձն՝ արմատանց, մարտիրոսություն» («Մղձավանջ»):

Վ. Հակոբյանը որպես կարոտի ու սիրո երգիչ, տեսավ 20-րդ դարի մղձավանջը արցախցիների ազատաբաղձ ոգու դեմ, դառ-

նությանը ու ցասունով խարազանեց ուժերի ցինիզմն ու դաժանությունը: «1988 թիվ, փետրվար» բանաստեղծության մեջ հեղինակը արելը պատկերում է որպես «պատուհանից դուրս նետված» արյունաքամ մանուկ, իսկ «երկինքը՝ սարդի մի ցանց»: Բացվում է կապանքի սուտը, ավարտվում է ամեն մի դիմակահանդես, եւ պարզվում է, որ ընդհանուր բացականությունների տակ ոչինչ չի փոխվել. «Գայլը գայլն է նույն՝ բնույթով պատիր՝ գառան մորթու մեջ թե որջում անտես»: Նկատի ունենալով նոր զգեստներ հագած դաժան ուժերի վայրենությունը՝ բանաստեղծը գրում է.

*Ատամը արյան համ առավ կրկին,
Նորից երեւաց մռութը գայլի...*

Բանաստեղծը միաժամանակ հնչեցնում է հարատւելու կոչը, ընդգծելով, որ հողը պետք է բերդ դարձնել, դուռը չբացել, սրբել մամուռը, չմոռանալ, որ՝

*Մենք՝ որդիք Յայկի, արդար ու վսեմ,
Ցավ ու դառնություն այդ ե՞րբ չենք տեսել,
Բայց ոչ մի անգամ, աստված է վկա,
Արցախին հաղթող չի եղել, չկա...*

Արցախի պայքարը Վ. Յակոբյանի երգերում դարձավ մաքառման խռովք: Յայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման հերոսները հառնեցին նրա նոր երգերում: Նա առաջինը ձեռք մեկնեց Սոսեի կերպարին: Ամեն մի հայի համար թանկ ու հարազատ այդ անունն առաջին հերթին խորհրդանշում է հայ ֆիդայուհուն: Ահա ինչու բանաստեղծը նրան ներկայացրեց որպես սիրո եւ հայրենիքի ամբողջություն, այսինքն՝ պայքար: Ըստ բանաստեղծի, Աղբյուր Սերոբին ժողովրդի հանդեպ եղած նվիրումից բացի, ֆիդայական հրաշքների է տարել նաեւ Սոսեի մեծ սերը: Պատահական չէ, որ Սոսեն վերածնվեց հայ ժողովրդի ազգային-ազատագրական նորօրյա պայքարում: Շարքը ծնվեց ժամանակին: Որոշ ժամանակ անց բանաստեղծը հրատարակեց երգե-

րի ժողովածու՝ «Սուե» խորագրով, որի միջով ընդգծված անցնում է պայքարի գաղափարը: Գիրքը բացվում է «Բանաստեղծության համար չեմ ասում...» տողով սկսվող երգով: Այն հայրենասիրության եւ ազատասիրության դարավոր զգացումից ծնված խոսք է՝ ասված արցախյան գոյամարտի ամենաթեժ պահին.

Մեկ-մեկ թվում է Դավիթն եմ, վրաս՝

Քառսուն ջաղացքար-

Ձենով Օհանի ձենն է ինձ հասնում:

Մեկ-մեկ թվում է, թե Ավարայրի

Յողն է ոտքիս տակ,

Վարդանանց կռվի ձենն է ինձ հասնում:

Մեկ-մեկ թվում է, թե Ճգնավոր եմ՝

Փակված մի վանքում.

Խալխի դուրս կանչող ձենն է ինձ հասնում:

Մեկ-մեկ թվում է՝ Սարդարապատում

Ընկած զինվոր եմ-

Յաղթանակի սուրբ ձենն է ինձ հասնում:

Մեկ-մեկ թվում է՝ Արցախի սրտից

Կաթած արյուն եմ-

Չմեռնող հույսի ձենն է ինձ հասնում...

Արցախի սրտից հոսող արյան առաջն առնելու, չմեռնող հույսի ձայնը անկաշկանդ ու հնչեղ դարձնելու միակ ճանապարհը բանաստեղծը համարում է պայքարը եւ իրեն նետում մաքառումների հորձանուտի մեջ.

Ժամանակը թռչում է հավքի պես,-

Երկինքը թեւ է գտնում իր համար,

Թախիճը վարդ է գտնում իր համար,

Յողը երազ է գտնում իր համար,

Եվ ես անունն եմ դառնում մաքառման:

(«Մաքառումներ»)

Արցախյան գոյամարտի պատմական ակունքները Վ.Յակոբյանը տեսավ հայ ժողովրդի առասպելական ժամանակների,

Վարդանանց պատերազմի եւ ապա՝ հետագա դարերում մղված հերոսական պայքարի մեջ: Պատմությունից հայտնի է, որ Արցախյան մի զորամաս կռվել է Ավարայրում եւ դարձին հերոսաբար նահատակվել Եղեգնաձորում: Հերոսների աճյուններն ամփոփող բլուրը հիմա կոչվում է Վարդանանց բլուր: Իրական այս փաստը Վ. Հակոբյանին ներշնչել է՝ գրելու «Վարդանանց բլուր» բանաստեղծությունը, որով բացվում է «Արցախա ծուխ» ժողովածուն: Պատահական չէ նաեւ ժողովածուն բացող «Զգված աղեղներ» շարքի վերնագիրը:

Բանաստեղծության քնարական հերոսը իրեն համարում է ժամանգորդը Վարդանանց զինվորյալների: Խորհրդանշական այս պատկերի միջոցով բանաստեղծն իրար է հյուսում հայոց աշխարհի բոլոր ժամանակները եւ նրանցում տեսնում նաեւ իր եւ իր ժամանակակիցների պատասխանատվության զգացումը՝ երկրի, սեփական ժողովրդի ճակատագրի հանդեպ: Իսկ այդ ճակատագիրը հառնումի իր երակը կապել է Հայկ Նահապետի նետի եւ աղեղի հետ ու զինվորագրվել ժողովրդի փիլիսոփայությանը: Վ. Հակոբյանի բանաստեղծության մեջ ժողովրդի մարտնչող ոգին արձագանքում է Արցախյան գոյամարտին՝ քայլող լեռան պատկերով, նոր հերոսամարտին զինվորագրվելու հրամայականով:

Արթնացումի զգացումը մարտնչելու ոգի է դառնում:

Բանաստեղծության յուրաքանչյուր տող հնչում է որպես կռվի ելնելու կոչ, որի հրամայականով Վարդանանց բլուրն իրեն բացում է՝ «եւ երկինքն իրեն հանում է հողից, եւ հողում թաղված խաչը ելնում է, եւ ոտք է բռնում ճամփան Արցախա»: Ինչպես տեսնում ենք, բանաստեղծը նշում է, որ Արցախի նոր ճանապարհն իր սկիզբն առնում է Վարդանանց պատերազմից՝ շրջագծի մեջ առնելով ողջ Հայոց աշխարհը՝ անբաժանելի Արցախ աշխարհի միասնությամբ.

*Շարունակվում է գետը եղեգիք,
եւ վանքի ձայնը այբբենարան է,*

*եւ աղեղները պրկվում են նորից,
եւ ձեռքի թրում թարթառն է շողում,
եւ ձին կարմիր է, Վարդանը՝ կարմիր:*

(«Վարդանանց բլուր»)

Բանաստեղծության մեջ պայքարի մետաֆորը դառնում է կարմիրը: Ժամանակին հայ ժողովրդի մեծանուն զավակներից մեկը՝ Ստ. Շահումյանը, նշել է, որ ազգը եթե մեռնել չգիտե, ապրել չի կարող: Պարզ է, խոսքը գոյատեւման մասին է, իսկ գոյատեւումն առանց զոհյալների չի կարող հոլովվել: Այդ իմաստով, «Վարդանանց բլուր» բանաստեղծությունը գաղափարական խորքով մաքառման կոչ է: Այդ միտումի հոյակապ դրսեւորում են հետեւյալ տողերը.

*Դարձը ճամփի հետ մաքառող տուն է,
եւ ամեն թուփ-քար՝ զինվոր, Եղիշե,
եւ Խաչենն ի վար Տղմուտն է հոսում,
եւ հողից ելնո՞ղ, ծլո՞ղ հերոսներ,
եւ Աստված մեկը հազար է անում:*

Հայոց առասպելական «Վահագնի ծնունդը» վիպերգի երանգները հասնում է Դանիել Վարուժանի «Ձոնին», եւ արձագանքը լսում ենք Վ. Հակոբյանի բանաստեղծության եզրափակման մեջ.

*Լեռը եկել ու կանգնել է մոտիկ,
եւ հավաքում են ես իմ ձեռքերը,
եւ իմ աչքերից բոց է դուրս գալիս,
եւ իմ վերքերին ես հող են ցանում,
եւ չէի քնել, բայց արթնանում եմ:*

Վ. Հակոբյանի արթնացման կոչը հայոց մաքառող դարերի արձագանքն է: Այդ արթնացումն արյան խորքերի եռք է, հավատի ահազանգ, ելման հրաման, որի ակունքների մոտ եւ մարտական շարքերի առջեւ հառնում են մարտիրոսված անմահները՝ հավերժված առաջամարտիկները: Պատահական չէ բանաս-

տեղծի «Սոսե» ժողովածուն (1994): Առաջին անգամ Արցախյան գոյամարտի օրերին Վ. Հակոբյանը դիմեց Սոսեի կերպարին: Անսովոր պատկերների մեջ լսվում է եւ վրդովված քնարական հերոսի, եւ պատմության ձայնը: Ամեն ինչ, ասես, գլխապտույտի մեջ էր՝ «Ժայռը հոսում աղբյուրից ու ցրվում է ցավագար», թռչող վանքի թեւերում ընդգծված երեւում են հավքեր ու խաչքար: Քնարական հերոսի աչքերում մատյաններ են ծաղկում, «Ծառը ելել, գնում է կանչի վրա իր գետի»: Հազարամյա տխրության ճամփորդը դառնում է ճակատագրի, վճռականության հարցմունք: Բանաստեղծը հանգում է մաքառման հրամայականին.

*Տրտմության մեջ Տրտուի առավոտը վառվում է.-
Մարգարիտը ցավի մեջ որոնում է ձկներին,
Դու վերջապես գալիս ես սուրբ Սոսեի տանջանքով,
Մենք ելնում ենք միաբան, մեր լեռներից բերում տուն,
Եվ հանում են աչքերս ու տալիս են ճամփեքին:*

Վ. Հակոբյանի պայքարի երգերում արճճի պես ծանրանում են պահերը: Դրանք սահող ստվերամուկն է, ծաղկի շուրթերին չհասած ժպիտը, արյան մեջ պահվող վարդերը: Բանաստեղծի խոհերում Արցախ աշխարհի երանգները իմաստավորվում են անհանգիստ հոգու թրթռոցներով, դառնում ժայռի երեսին փշրվող ծիլ, գետերի վրա նստած գույժ, լուսաշատ սրտեր փնտրող գնդակ, միաժամանակ, «աստղի ցլանքում հառնող տուն»: Հառնումի ցլանքներով ողողվում է քնարական հերոսի սիրտը, իրար գտնում են կորսված երկինքն ու չխամրող երազը, դառնում վերադարձի կանչ.

*Ջարթնել է կանչը վերադարձի մեջ.-
Ելել են՝ միայն գնալու համար,
Վերակերտվում է տիեզերքը հին,
Ես քեզ տեսնում են իմ դեմքի վրա,
Հույսը քայլի մեջ գտնում է ուղին:*

Սոսեի արեւային երազների հանգույցում Վ. Հակոբյանի քնարական հերոսը հանդիպում է Աղբյուր Սերոբին: Դա եւ սիրո կարո-

տի վերընծյուղում է, եւ հրացանի ընկերություն: Գիշերակացի սեւ մութի մեջ, սարի փեշերին սպասող հերոսի ցավոտ ափի մեջ «Մոսիմի կոթը ծաղկում է» եւ «Սիրտը կանչն ի վեր ելել, գնում է բոցին ընդառաջ», եւ հուզում են կորստի բառերը. «Իմ վերքոտ Սոսե, Իմ երգոտ Սոսե, իմ սիրուն Սոսե»: Այսպես, «Աղբյուր Սերոբ» բանաստեղծությունը վերածվում է վիպասքի, որի մեջ հայրենի բնաշխարհի եւ ժողովրդի ճակատագրի միաձույլ պատկերում հառնում է Աղբյուր Սերոբը՝ իր վեհությամբ, կարոտով, նվիրումով: Այս ստեղծագործության քնարական շունչը ջերմացնող է, հայ ֆիդայու բարոյական դիմագծերը ներկայացնող, ժողովրդի անցյալի եւ ներկայի կապը հաստատող, աստվածային զգացմունքների փունջը ծածանող երգ է, որ արարվում է ոչ միշտ: Բանաստեղծության հյուսվածքում հայրենիքի տառապյալ սիրտն է, այդ սրտի ծնունդ հանդիսացող ֆիդայու ոգին, նրա խոստովանությունն իր կատարած գործի հավերժական նշանակության իմաստով.

*Արեւից առաջ ես միշտ հառնում եմ Նենրութի վրա.-
Ամեն մի քարից աչքեր են ծագում վշտից լայն բացված,
Ձոր ու կիրճերում փնտրում են իրար արահետները,
Ձաղկված հոգու մեջ դեռ գնդակներ են կաթկթում երգից,
Իմ վերքոտ Սոսե, իմ երգոտ Սոսե, իմ անուն Սոսե:*

Բանաստեղծության համեմատությունների նոր ծփանքների մեջ հառնում է Հայոց կորուսյալ հողերի կերպարը: Եվ աստղաբույլեր նվիրած Տարոնը ներկայացվում է իր բարձրագնա Նենրութի խոյանքով, ցավով, երազով.

*Տարոնի դաշտը ճառագում է սեւ թույնի բոցերում,-
Մեկեն երկինքը հանգչե՛ց, զառ հավքի բացված թելի տակ,
Պահը թռիչքում արնոտվեց Նենրութ սարի սուրսայրին,
Սակայն եւ մեջքին չոլորվեց ձեռքը՝ վշտից քարացած.
Իմ վերքոտ Սոսե, իմ երգոտ Սոսե, իմ անհուն Սոսե:*

Ինքնաբուխ, քնարաշունչ բանաստեղծության մեջ ընդգծված «Իմ սիրուն Սոսե», «Իմ անհուն Սոսե» կոչականներն ընդհան-

րացման մեջ խտացվում են «իմ Սոսե, Սոսե» ջերմ դիմունի ձեւով: Եվ սիրո այս զգացումն առավելագույնս իմաստավորվում է «Լեռներն ի շար են՝ սուրբ հրամանքով Սերոբ Աղբյուրի, Ելել մանուկը՝ արեւի դափնին տանում է հորը» վրձնատողերով՝ որպես հայ ժողովրդի ազատագրական նորօրյա պայքարի առիավատչյա:

Հայ ժողովրդի պատմության դարավոր էջերը հերոսականության, բարոյաէթիկական խնդիրների շտեմարան է, մաքառելու եւ գոյատեւելու փիլիսոփայություն: Դրանցում միանգամայն կարեւորվում է հերոսական բնավորության հիմնախնդիրը, որ միշտ գտնվել է հայոց գեղարվեստական գրականության կիզակետում: Գրողը, ետադարձ հայացք ձգելով անցյալին, վերագնահատում է հայրենասիրության, անձնագոհության, հերոսության արարքները, որոնք փոխանցվում են նորերին եւ մղում ազատ, անկախ ապրելու սխրանքների:

Վ. Հակոբյանն այս միտումով անդրադառնում է հայոց քաջերի վարքին, լարում դժվարությունները հաղթահարելու ուժերը՝ խոսքը նոր հորիզոնի ճառագումով հյուսելու միտումով: Եվ մեծամասամբ դա հաջողվում է նրան: Այստեղ արդեն երեւում է բանաստեղծի աշխարհը, որտեղ արտահայտվելու նրա եղանակը դառնում է անկաշկանդ, ձեռք բերում յուրովի ոճ: Նա ուշադրություն չի դարձնում հանգին, բայց պահպանում է բանաստեղծության ռիթմն ապահովող ոտքերը, տողերը դասավորում համաչափ՝ բխեցնելով հայ իրականության պատմական եւ արդի առարկայական-ռեալական ազդակներից: Դիմենք «Սոսե» շարքի «Կզամ, ասացիր...» բանաստեղծությանը, որի երրորդ տունը հնչում է այսպես.

*Սոսեն աչքերում պահում է սրեր,
Թանձրիկ ցավերում մշուշ կա Մուշի,
Մայրի՛կ, եկ քայլենք մեր հին հանդերով,
Աչքս դարերի ճամփա է կտրում,
Կարոտը սարում անթեղված հուր է:*

Այնուհետեւ բանաստեղծության պատկերները լրացվում են նոր արտահայտչամիջոցներով, քնարական հերոսն ապրում է իր տարերքը, ներշնչանքը ծածանվում է «ժամանակի ու տարածության» հորիզոններում.

*Կգամ, ասացիր, մի քիչ համբերիր,-
Չողված կայծակը արմատ է դալար,
Թիթեռը թւեր ձեւեց կրակից,
Արեւի դեմքին բացվեց հազար դուռ,
Եվ ցուպի ծայրին արթուն է հեռուն:*

Արցախյան պայքարի երգերը հյուսելիս Վ. Չակոբյանը հոգեբանական ազատ թեւաբախում է ապրում: Երգից երգ նա կատարելագործում է իրեն, հաղթահարում ինքն իրեն, խուսափում կրկնություններից, ցուցադրում ինտուիցիայի արցախագույն իր զգացողությունը: Այստեղ, ինչպես ասում են, տառապանքից է ծնվում երգը: Սերը՝ հայրենիքի հանդեպ, պատասխանատվությունը պոեզիայի նկատմամբ երաշխավորվում են միասնաբար: Ինչպիսի տրամաբանական վերլուծության էլ ենթարկես Չակոբյանի պայքարի երգերը, նրանցում պահպանված ու բացահայտված են պատմականության կատեգորիաները՝ սերտորեն առնչված արդիականության պահանջներին.

*Մարութա կողմեն ձեն իջավ Քիրսին,-
Եվ դու տաճարը դարձար Աստծո,
Եվ վերադարձավ դուռը հույսի մոտ,
Եվ երակն ի վեր կրակը հոսեց,
Գմբեթը քո մեջ տնվորեց իրեն:
Ուղին մեկնել է երգը փնտրելու,-
Եվ դեպի արեւ գնաց կամարը,
Եվ մանուկն ելավ եղեգան փողից,
Եվ պատը ցավի զարկից ճեղք տվեց՝
Արցախը օրվա վրա լուսացավ:*

Ժամանակին գրականագետը նկատել է. «Պատմականությունը գեղագիտական կատեգորիա է, որ գոյանում է կառուցվածքային բոլոր տարրերի, ձևի եւ բովանդակության բաղադրիչների ներքին միասնությունից: Դա բանաստեղծության ներքին տրամաբանությունն է, սինվոլ-գաղափարի ծագումը, ընթացքն ու վերջավորությունը, որ գոյանում է պատկերավոր միավորների բազմակի կապերից ու պատճառական ներհյուսումներից, ժամանակի ու տարածության հարաբերումներից: Այս տեսակետից պատմականությունը ստանձնում է գեղագիտական կարեւոր ֆունկցիա եւ մեծապես պայմանավորում բանաստեղծության գեղագիտական-փիլիսոփայական տարողությունը» (Ս.Սարինյան, «Գեղարվեստական գրականության պատմականությունը», Երեւան, 1970, էջ 178):

Այս դիտարկումի լուսարձակով Վ. Հակոբյանի բանաստեղծական շարքերը, առանձնապես պայքարի երգաչառը քննելիս հանդիպում ես, որ նրա յուրաքանչյուր բանաստեղծություն մի պատմություն է, որն իր մեջ պարունակում է հայրենիքի ճակատագրի պատմական եւ առօրյա խորհուրդը՝ ժողովրդի դարավոր կենսափորձի շերտերով: Վերցնենք «Թռավ-գնաց ծաղիկը...» բանաստեղծությունը: Ստեղծագործության պատկերների համակարգում խիզախում է բանաստեղծը, զրուցում ֆիդայական օրերի, նոր ժամանակների հետ, բացում ցավի եւ հույսի առեղծվածները: Այստեղ ծաղիկը թռչում է՝ իր «թիթեռնիկին գտնելու», աստվածամոր աչքերում հարսնանում է երազը, կարոտը «մոռացված մի խաչքարի մոտ է վառում», ճամփեքի թռիչքում մերվում են «երկինք ու ձոր», եւ քնարական հերոսի աչքերը «աստղերից կրակ են» քաղում: Ապա տաք հուշը խենթացած մի բողբոջի տանում է արեւին, «Եվ լցվում է օրը լույս մոմաթերթի պես վայրի»: Ապա բանաստեղծության հյուսվածքում տարածական սահմանները բերում են երգչի գեղագիտական իդեալից բխող պահանջը.

*Սարը հանկարծ վերհիշեց ֆիդայական հին մի երգ,-
Եվ ձեն-ձենի արթնացան կածան ու քար քնեցված,
Եվ ալիքը գետերում կրկին դարձավ երեխա,
Եվ կտուցին տատրակի երգը նորից թռվռաց,
Եվ Արաբոն տուն եկավ՝ ձիու ոտքին ճերմակ նախշ:*

Սոսեին նվիրված երգաշարում շոշափված են հայրենիք-պատմություն-գոյամարտ գործոնները՝ ֆիդայական շարժման հավերժական ազդակ լինելու ընդգծումով: Աղբյուր Սերոբի, Սոսեի, Արաբոյի անունները գնահատվում են որպես դարի եւ քաղաքացու անունն ու պատիվը փրկող մետաֆորներ:

Սոսեի կերպարը մաքառման խորհրդանիշ է Վ. Հակոբյանի պոեզիայում: Այն մաքառումների ճանապարհ է, իսկ ճանապարհը բնութագրական է ժամանակ հասկացությամբ, որտեղ ըստ բանաստեղծի, «Մռունչն առյուծ է գտնում իր համար», «Հողը երազ է գտնում իր համար» («Մաքառումներ»): Բացելով լույսի ծալքերը, բանաստեղծը նկատում է, որ «Լույսը սրտի մեջ ձագեր է հանում», եւ խոստովանում է.

*Օրն ու գարունը պահն են անհունի,
Թե ես քո ցավին տեր չեմ կանգնելու,
Գնամ Թարթառը ընկնեմ՝ ինձ տանի,
Սրտի պես բաց են ծալքերը բոլոր:*

(«Բացում եմ...»)

Մաքառման երգերի քնարական հերոսն իրեն համարում է ազատամարտիկ եւ ձգտում է լինել ուղեւորների շարքերում («Ուղեւորները»), իրեն գտնում «Սարերի... ցավերի» շուրջառում՝ դարձած վստահություն («Ես ինձ սարերի շուրջառում գտա»): Այդ վստահությունն ունի իր արմատները, իր անունները: Տվյալ դեպքում երգաչարի գաղափարահուզական սերուցքը Սոսեի անունն ու գործն է: Սոսեի անունը բանաստեղծի համար կամարում է կորուսյալ հայրենիքը Արցախի հետ.

*Երբ քեզ ասում են՝ Սոսե,
Սոսե,
Նշանակում է՝
Մարութա սարն են ուզում բարձրանալ:*

(«Ես քեզ ասում եմ՝ Սոսե»)

Վ. Հակոբյանի «Պայքարի երգը» ակունքվում է Թարթառից, թելում, հասնում Սուշ, Մարութա լեռների լանջերին հանդիպում հայ ֆիդայիներին, միասին վերադառնում Արցախ՝ հոգու մեջ աշխարհն ընկալող՝ ազատ, անկախ, միացյալ.

*Գնում եմ՝ հողիս պատկերը դեմքիս,-
Այսպես է երգը ոսկորը մտնում,
Այսպես է պարը ոտքերը ընկնում,
Այսպես է եռքը արյան մեջ զարթնում,
Գնում եմ՝ հողիս պատկերը դեմքիս...*

(«Ճանապարհը»)

6. ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՂԻԿՆԵՐԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Եթե հաստատվել է, որ «բանաստեղծը Աստծո քարտուղարն է, ուրեմն, մենք պետք է բանական տրամաբանությամբ ավելացնենք. «Աստծո քարտուղարը նաև Աստծո փիլիսոփայության վերծանողն է, որովհետև պոետը ոչ թե մեխանիկորեն արձանագրություն կազմող է, այլ փիլիսոփա քարտուղարն է»: Դեռ ավելին: Աստծո քարտուղար բանաստեղծը Արարչի գաղափարների վեհությունն ու մարդասիրության աստիճանը պետք է հաստատի երկրի ու մարդկության ընթացքի էությամբ, ժողովուրդների ու անհատների փոխհարաբերությամբ, կյանքի դիալեկտիկայի ամենատեսությամբ, անցյալի հետ առերեսվելու, ներկան տնտղելու, գալիքին ձեռք մեկնելու կարողությամբ:

Գիշտ չի լինի, եթե կրկին ու նորից չվերհիշենք Արիստոտելի խորհուրդը՝ պոեզիան ամենակատարյալ փիլիսոփայությունն է:

Այս տեսակետից Վ. Հակոբյանի «Քրիստոսի ծաղիկները» կարելի է համարել անսովոր ժողովածու՝ կյանքի փիլիսոփայության երանգների հյուսվածքով: Ժողովածուն անսովոր եմ համարում այն իմաստով, որ թե՛ թեմատիկ-գաղափարական ուղղվածությամբ և թե՛ խոսքային դրսևորումներով ինքնատիպ է՝ ճշմարտացի և ինքնաբուխ ընդհանրացումներով:

Գիրքն ընթերցելիս առաջին հայացքից կարող է թվալ, թե գործ ունես միայն օրենքների դրսևորումների հետ: Սակայն դա միայն առաջին հայացքից: Խորանալով պատկերների մեջ, հոգու լուսարձակով ի տես բերելով ենթաբնագրային էջերը՝ տեսնում ես մտքին շաղախված այն հուզական թրթիռները, առանց որի բանաստեղծություն գոյություն չունի:

Վ. Հակոբյանի պոեզիան՝ առաջին գրքից մինչև սույն ժողովածուն, գաղափարի և զգացմունքի գորբելեն է, որովհետև նա, որպես Աստծո փիլիսոփա քարտուղար, Տիրոջ արարչագործության հմայքն ու արդարացիությունը գնահատել ու գնահատում է՝ ելնելով իր մայր ժողովրդի, ապա և ամբողջ մարդկության ճակատագրից:

Իսկական բանաստեղծի համար գործունեության պատվաբեր ելակետը հենց դա է: Պոետն իր հայրենիքի, իր ժողովրդի ցավն ու հույսը երգի փոխած, քայլ է քայլում դեպի համամարդկային ասպարեզ:

«Քրիստոսի ծաղիկները» գրքի վերնագիրը սիմվոլիկ պատկեր է: Մենք նրանում ցավի ու տազնապի, թախծի ու հույսի մի մեծ փունջ նրբերանգներ ենք նկատում, նկատում ենք նաև երկրային այն կետը, որ ամուր պատվանդան է հանդիսանում բանաստեղծի համար: Հետաքրքիրն այն է, որ այդ ոգեղեն բարձունքը, որտեղից հեղինակը ինչպես ափի մեջ, տեսնում է և՛ իր երկիրը, և՛ աշխարհը, և որ ամենակարևորն է, մարդկության առօրեական անցուդարձն ու բնույթը:

Վ. Հակոբյանի «Քրիստոսի ծաղիկները» գիրքը լայն առնչություններ ունի հայ բանավոր ստեղծագործության, առանձնա-

պես միջնադարյան վիպերգերի հետ երկու առումով. նախ՝ կառուցվածքային, ապա՝ գեղարվեստական: Սակայն Հակոբյանի պատումի ինքնատիպությունը միանգամայն նոր երանգների ծիածանի է փոխվում՝ փիլիսոփայական խմորումներով: Պարզապես յուրաքանչյուր գործ իր թարմ պատկերավորությամբ բացում է մարդու և բնության, անհատի և հասարակության աստվածանվեր ապրումների, խոհերի, ակնկալիքների միաձույլ աշխարհը: Հակոբյանի խոսքը բխում է իրականությունից: Նա Աստծո և բնության արարումները գնահատում է՝ ելնելով սրբավայր երկրի ճակատագրից: Նա հստակ նշմարում է և՛ աստծո, և՛ բնության տեղն ու դերը մարդկային կյանքում և ընդհանրացնում.

Անձրևախառն մառախուղների ետևում

Ճերմակամորուս աստվածներն՝ անընդհատ

մոլորումների մեջ, ափեափ են նետում իրենց.

չէ՞ որ մի վայրկյանում (իմ, քո, նրա ձեռքերով)

Հազար ու մի ճակատագիր են փոխում երկրում:

(էջ 7)

Զճանաչված Հանրապետության բանաստեղծի աշխարհատեսությունը հորիզոններ է ընդգրկում: Նա նշում է, թե ինչպես «Գանգեսից մինչև Ջանգու, մինչև Թարթառ ու Վոլգա ժողովուրդներ են ելնում իրար դեմ, ափեր են քանդում, ափեր կամրջում», արդյունքում կիսում ծովեր, օվկիաններ, ամենուր հրահրում կռիվներ: Քաղաքական տեսադաշտից բանաստեղծն անցնում է հասարակական կյանքի բարդույթին և ցավով նշում, որ ամենուրեք տարածվում են.

կոռուպցիա, ինտրիգներ, մաֆիա,

որոնց մեջ բոլորն են, և որոնց դեմ

բոլորով էլ կռվում են,

կործանում երկրներ անքանակ,

ավերում աշխարհներ անքանակ...

(էջ 7)

Բանաստեղծի ակտիվ վերաբերմունքը կյանքի երևույթների հանդեպ նրան դարձնում է մարդկությանը հուզող խնդիրների ցավակիր ու վերձանող: Նա պոետական դիպուկահարի կրակոցով ծածանում է դառն ճշմարտությունը: Ամենուրեք ընտրում են անհաշիվ պրեզիդենտներ, վարչապետներ, նախարարներ.

*միայն զինվոր լինելն է երկրի,
ուր տեղն ազատ է՝ ինչքան ուզես,
խնդրեմ...*

(էջ 7)

Այս ամենից հետո Վ. Հակոբյանը ֆրիկյան խիզախությամբ մարդկության բախտը համարում է ճռուցող անիվ, մոլորակը՝ անհեճակ: Բանաստեղծը, սակայն, չի հուսալքվում, նա արարելու, ապրելու, քայլելու իր հենարանն ունի, դիմելով «Երկիր սրբավայրին», հաստատում է.

*Աշխարհը ոտքի տակ տվել,
Եկել-գտել եմ քո մեջ
կետն իմ արքիմեդյան:*

(էջ 7)

Հասկանալ է պետք բանաստեղծի զգայուն սիրտը, սիրտ, որի վրա դաջված է փոքրիկ մի երկիր՝ իր փոքրիկ ձեռքով: Այդ փոքրիկ երկրի մեծ երկնքից մաղվող անձրևի տաք կաթիլները խոշոր են: Հարազատ որդու ակնկալիքով քնարական հերոսն ակնկալում է.

*սպասում եմ,
որ ճակատագրիս գրերում ճշգրտուններ մտցնի Տերը,
որն ինձ տվել է տառապանք անկշռելի
ու ամեն պահ բզկտվող աշխարհի ամենամեծ սերը:*

(էջ 8)

Վ. Հակոբյանը «Մի կալ չարին հակառակ» ավետարանական քարոզն ընկալում է Վարդան Մամիկոնյանի աշխարհընկալ-

մամբ, երբ նա 5-րդ դարի մաշտոցյան աստվածանվեր գրին զուգահեռ՝ հայկյան թուրը ծածանեց ու նույն Սուրբ Ավետարանի գոյապահպան մի ուրիշ խորհուրդ. «Սրով եկողը սրից էլ կընկնի»: Դիմենք բանաստեղծին.

*Ձեռքս պահած սրի կոթին, ուր իմ նախնու մատնահետքերը
դեռ չեն ջնջվել,
խոնարհվում եմ մինչև գետին, համբուրում խաչը հավերժի,
ըմբռնելով քարի վրա-քանի՜ տարի... ծաղկակաշող համը
իմ մոր համբույրների,
որոնցով ամեն քար էլ կորբանա, էլ ուր մնաց
խաչը մեր սուրբ եխձանտակի:*

(էջ 8)

Այսպես, բանաստեղծի փիլիսոփայությունը, բխած ժողովրդի կենսափորձից, փայլում է Հայոց եռագույնի հանգուն, որպես գոյատևման գաղափարաբանություն՝ Սրբազան երկրի, Սրի և Խաչի չսասանվող միասնությամբ:

Վ. Հակոբյանի առասպելված մտապատկերում Արցախի բնությունն արցախցի հայ է, արցախցի հայը՝ արցախյան բնություն:

Առանց ճակատային հայտարարության նրա քնարական հերոսը նշում է Արցախի և՛ հպարտությունը, և՛ դժգոհությունը աշխարհի անտարբեր վերաբերմունքից և անարդարացիությունից:

Այս դժգոհությունը միաժամանակ վերածվում է սեփական ուժին ապավինելու և վստահելու հոգեբանության.

*Անձրևի մեջ ոչ ոք չի տեսնում արցունքները,
ոչ ոք չի տեսնում
անձրևի սանրը քո անհնազանդությունից
հոգնած վարսերում,*

ոչ ոք չի տեսնում մեր տուն-վայրկյանը տիեզերքի մեջ.

- Արի գնանք տուն: Արի տուն գնանք: Արի...

դուռը փնտրում է մեզ:

(էջ 8)

Բանաստեղծի տիեզերախույզ միտքը նշմարում է «Աստվածների և չաստվածների կռիվն անվերջանալի» և զգուշացնում, որ «Սամունը սև անապատի եկել, լեռան դուռն է ծեծում»: Բայց փուլթ չէ, քաղաքացի-բանաստեղծի հավատը ներկայի և ապագայի հանդեպ երկրածին է, հողականչ, ուստի հայտարարում է. «Ամենաթեժ կետը Երկիր մոլորակի, ուր կանգնած եմ, ոտքիս տակ է»:

Խոհափիլիսոփայական քնարերգության բարդ ու բազմերանգ մի նատյուրմորտ է Վ. Հակոբյանի «Դրախտավայրի թունավոր ծաղիկ» երկը: Թևավոր մտքի, ալեկոծված խոհերի, խոսուն կենսափիլիսոփայության արտահայտություն է այս հյուսվածքը: Երկրայինի և երկնայինի ներհյուսվածությունը պատումի մեջ դառնում է «լեռան անմատչելի ծերպերի» մասրենի, որի վարդը «թափվում է ուղիղ երկնքի մեջ», իսկ պոետական ընդհանրացումները վերածվում են ժողովրդական ասացվածքների: Քնարական հերոսի ապրումները ծածանվում են թևավոր խոսքի ուժով: Այսպես, «Եթե ես դժգոհ եմ քեզանից, նշանակում է ինքս ինձանից օտարվել եմ», «Կյանքում նոր շինվելիք վանքն ավելի վանք է, անշուշտ, քան շինվածքը», «Սերը ծաղիկ է հավերժի սահմանի վրա՝ մոռացված ու բզկտված խնձորենի» և այլն:

Վ. Հակոբյանի «Դրախտավայրի թունավոր ծաղիկ» ստեղծագործությունը սիրո փիլիսոփայություն է՝ երազի և տեսիլքի, մերժումի և սպասումի, կորցրածի և գտածի հակադրամիասնության: Կոնկրետ դա սիրո դիալեկտիկայի բանաստեղծական պատկեր է, որտեղ սերը բնութագրվում է տան էությանը, տունը՝ սիրո:

Երազը - ահա մեր առաջին հանդիպման վայրը:

Երազը - ահա մեր ժամադրավայրը վերջին:

Իսկ մեր տունը սպասումն է մեր, սուրբ սիրո մեջ,

Բա՛րձր, բարձր ամենավեհ լեռան վրա աստվածամերձ:

(էջ 15)

Այս ընդհանրացումը մեր պապերից ավանդված սիրո սուրբ զգացումի և տան ամրության պահպանման խորհուրդն է՝ պատկերված 21-րդ դարասկզբի հայ պոետի ինքնատիպ երանգներով:

Բանաստեղծ Վ. Չակոբյանի կենսափիլիսոփայության առանցքը եռաշերտ է՝ անցյալը, ներկան, գալիքը: Նա չի մոռանում ժողովրդին հուզող այդ ընթացքի կարևորությունը, որովհետև ժողովուրդն ինքն է հասկանում, որ առանց այդ եռամիասնության ինքը գոյատևել չի կարող: Պարզ է, որ ժողովրդի ճակատագրով ապրող բանաստեղծը չի կարող իր հուզաշխարհից դուրս մղել այդ ճշմարտությունը, որովհետև հստակ պատկերացնում է, որ առանց ժողովրդի չիք բանաստեղծ: Իսկ ժողովուրդը հարատևելու դեպքում միշտ ծնում է իր պոետին: Ահա հենց այս գաղափարն է հոլովվում Վ. Չակոբյանի «Գալիքի հրավերքը կամ առերեսում անցյալի հետ» խոհափիլիսոփայական պոեմում:

Ստեղծագործության հենց մուտքի գտած բնապատկերը հուշում է մի կողմից անհատի և ժողովրդի սերտ փոխհարաբերության կարևորությունը, մյուս կողմից՝ պոետի պատկերավոր մտածողության առկայությունը: Բերենք այդ հատվածը.

*Կրակը լափլիզելով ինչ պատահի, մոտենում է,
ծառը տեսնում է ու չի կարող փախչել ու
չի կարող նահանջել,
ծառ է՝*

*ընդերքներում խորը ագուցված արմատներով: Չի էլ փորձում:
Իսկ սաղարթների մեջ դրված բնի եզրին ոտիկները տնկած
հավքը սիրերգակ է հիշեցնում միջնադարի,
առնվազն՝ Քուչակ:*

(էջ 16)

Պոետական խոհն այնուհետև ձգվում է մետաքսաթելի պես՝ բացելով և՛ պատմության ընթացքի վարագույրը, և՛ բանաստեղծի տագնապն ու խորհուրդը: Պոեմի այդքան խոսուն բնապատկերը հուշում է հենց կոնկրետ մեր ժողովրդի դժվարին ճակա-

տագրի ընթացքը: Պարզ է, որ պետք է նշվի, գնահատվի այդ ընթացքը, որն էլ փակագծերի մեջ մատնացույց է անում բանաստեղծը. «Վիհ: Անդունդ: Թռիչք-անցում»: Վիհի և թռիչք-անցումի հայապատկեր այս փիլիսոփայությանը հետևում է Վ. Հակոբյանի բողոքածայն դժգոհությունը Արարչից: Ահա այսպես.

*Անհասին հասնում է նա, ով չի հասնում,
որովհետև՝ երբ Աստված է խոսում՝
լռում է բանաստեղծը,
ուշիմ,
խելագար,
երբ սկսում է խոսել բանաստեղծը,
Աստված չի «լսում»:*

(էջ 16)

Աստված երբ չի լսում, պետք է աստվածանա ժողովրդի ձայնն աշխարհին հասցնող քաղաքացի բանաստեղծը՝ հենց առաջին հերթին հանուն Աստծո, որովհետև երբ ժողովուրդը չլինի, չի լինի և Աստված, եթե լինի էլ, այլևս անելիք չի ունենա:

Սա է ճշմարտությունը, որին հետևում է Վ. Հակոբյանը՝ ճերմակ թղթին հանձնելով իր եզրակացություն-խոհը.

*...եթե լսող չկա, առավել ևս պիտի ասել, ասել, ասել...
Որովհետև ամեն բանաստեղծ աշխարհում գիտե մի բան,
որ իրենից բացի ոչ ոք չգիտե:*

(էջ 16)

Ահա հենց նման դեպքում է, երբ մեր մեծերից մեկը՝ Գևորգ Էմինը, բնութագրել է բանաստեղծին այսպես..

*Ես գիտեմ իմ գործը մարտական,
Պոետը զալիքի դեսպանն է,
Թղթակիցը նրա սեփական
Եվ նրա խղճմտանքն ու ձայնը:*

Խղճմտանքի, ձայնի մղումով է, որ բանաստեղծ Վ. Հակոբյանը շարունակում է. «Ես մենակ եմ մնում, որ... ձեզ հետ լինեն»: Սա-

կայն նա չի մատնվում մենակության «անմարդաբնակ հույսին», երազում ու ծագումն է սեր-աղջկա ձեռքն առնել ափի մեջ, պահը դարձնել խորհրդավոր, ինչպես ինքն է ընդգծում.

«Ձեռքս ափիդ մեջ արմատակալում եմ հողին»:

Շոշափելի երանգներ ունի Վ. Հակոբյանի կենսաթրթիռ փիլիսոփայությունը: Այդ երանգներն են երկիրը՝ հող հասկացությանը, ժողովրդի ճակատագիրը, անհատի դերը, սերը՝ արարչական ուժով, աշխարհը, նաև Աստված: Այս ամենը պոետական նրբերանգների հյուսվածքով բանաստեղծը ներկայացնում է ընթերցողին՝ ընդունելով խոսքի համ ու հոտով, անցյալի շոշափելի պատկերով, ներկայի տագնապով, ապագայամետ խոստովանանքով: Նշենք նաև, որ բանաստեղծի ոտքի տակ Արցախ աշխարհի սուրբ հողն է, և այնքան ճաշակով է մեծարում այդ հողը, որ որպես ընթերցող՝ կրկնակի արցախցի ես դառնում: Խոսենք կոնկրետ օրինակներով.

Արցախում, ասում են, տարիներ առաջ՝ մի քանի օրով

հանգրվանել է,

վրան է խփել Քիրոսի լանջերին Իսահակյանի քարավանը մեծ,

որ դարեր առաջ ճգնավորված, իշխանություն,

կին, տուն ու տեղ լքած,

մեր Վաչե արքան

բերել, իր ձեռքով զանգակ է կախել ուղտերից

մեկի ձիգ պարանոցին: (էջ 17-18)

Ահա այսպես, Արցախն անցել է իր ճանապարհը՝ Առան Նահապետից մինչև Վաչե ու Վաչագան արքաներ, ապա մինչև Արցախի իմաստուն փեսա ու որդի Իսահակյան՝ հոգու երգերի մեջ ծածանելով Արցախը՝ ապագայի պատկերով:

«Քրիստոսի ծախկները» պոեմը մեր ժողովրդի պատմության երանգների հյուսվածքն է:

Խտացված տողերի մեջ կարելի է շոշափել ու տեսնել այնպիսի իրադարձություններ, որոնց ականատեսն ու կրողն է եղել մեր ժողովուրդը: Բանաստեղծը ցավով նշում է

*Ամեն քայլի ոտքիս ծայրը խփում է Ստամբուլի խուլ պատերին.
Տիեզերացունց մոնչյունով Սիամանթոյի, Ռուբեն Սևակի
ու Վարուժանի...*

*ավազուտներով անցնող ճանապարհները Եղեռնի
անընդհատ իմ ոտքերը հետ են ձգում՝ կախված ինձանից,
քարքարուտների մեջ մերկ...* (էջ 12-20)

Հայ մարդու համար ցավի մորմոք ու վրեժի կրակ է դարձել Օսմանյան Թուրքիայում կազմակերպած հայոց ցեղասպանությունը:

Վ. Հակոբյանը ցավի իր զգացումն արտահայտում է նաև զարմանքով, քանզի սրի քաշեցին Քրիստոսին աստվածացնող ու նրան հավատարիմ մի ժողովրդի: Ահա թե ինչու բանաստեղծը հավասարման նշան է դնում հայ ժողովրդի և Քրիստոսի միջև, տվյալ դեպքում, Քրիստոս ասելով հասկանում է հայ ժողովուրդը: Պոետն անցնում է Եղեռնի ճամփաներով, և ոտքերը ողողվում են Քրիստոսի արյամբ, զարմանում է, որ անտարբեր աշխարհի այքի առաջ կրկին ու կրկին Գողգոթա են հանում, փայտի վրա խաչում... Քրիստոսին»:

Վ. Հակոբյանը փոթորկված հոգով շեշտում է նաև մեր ժողովրդին բաժին հասած ծանր ճակատագիրը, ասել է թե՝

*երբեք արհավիրքները վերջ չեն ունենում մեր ժողովրդի
ճանապարհին.*

*Յուրաքանչյուր վայրկյան, որ նոր է գալիս,
մեզ տխրեցնում է առավել,
քանզի ավելի խորն ենք զգում նախորդ
վայրկյանի ողբերգությունը:*

(էջ 20)

Պատմական իրադարձությունների զարգացման ընթացքը հասնում է Արցախյան ազգային-ազատագրական պայքարի շե-

մին, երբ թշնամու «գրադներն» են պայթում Ստեփանակերտի բակերում՝ սարսափեցնելով այն փոքրիկին, որ երեկ «աղիողորմ լաց էր լինում, լսելով, որ Բեթիովենը մահացել է», բողոքելով, թե աշխարհում ինչու են թույլ տվել, որ Բեթիովենը հեռանա աշխարհից:

Բանաստեղծը բացում է պատերազմական արհավիրքների կրակված վարագույրը ու ներկայացնում ժամանակի պատկերը.

*Մեր վանքերի նախշաքանդակ նռների մեջ
մագիլներն են խրում իրենց շեյթան ու նեռ
և նռներից արյունը մեր պուտ-պուտ հոսում
սյուններն ի վար
Արցախատան,
կրակվում է հողին հայոց,
հուր ու հրդեհ ալիք-ալիք բարձրանում են՝
հասնում մինչև փեշն Աստծո:*

(էջ 20-21)

Վտանգված Արցախի զանգերի դողանջները հասնում են էջմիածին, ապա հնչում են Գանձասարի, Ամարասի ու Գոչավանքի գմբեթներից: Սա սովորական պատկեր չէ: Վ. Չակոբյանը օրհներգում է մեր ազատագրական գոյամարտը, որը դարձավ նաև մոռացության ու անտիրության մատնված մեր վանքերի ու եկեղեցիների վերածննդի սկիզբ: Դրանով իսկ բանաստեղծը կրկին ընդգծում է աշխարհիկ ու հոգևոր կյանքի, զենքի ու խաչի միասնության կարևորությունը: Իսկ արցախյան վճռական գոտեմարտը հրամայել են հայ ժողովրդի պատմության անմարում ոգին, հեթանոսական աստվածները, Նինվեի գրադարանը պեղող «ներհուն հայը», Լյառն Արարատ բարձրացող Ուիթմենը, Անիի մայր տաճարի կանչը և ամենից կարևորը՝ արցախցու հորովելված զարթոնքը, որի կրողները դարձան անդրամիկված արժիվները, որոնք նահատակվեցին՝ փրկելով ամբողջ հայության ազգային արժանապատվությունը:

Պոեմի վերջնամասում Վ. Հակոբյանը ներկայացնում է նաև ետպատերազմյան շրջանի հասարակական կյանքի արատավոր կողմերը: Պատերազմի երես չտեսած «հերոսները» տեր են դարձել «Մերսեդեսների» ու «Ջիպերի» և ինտրիգների մեջ «քաղաքական, կենցաղային փափուկ-փափուկ փաթեթային կամ փուլային լուծումն են փնտրում արցախյան խնդրի» և եկեղեցու շուրջը վխտացող լրբերի հետ անցկացնում հաճույքի ժամեր:

Բանաստեղծի փիլիսոփայությունը վերացական կամ հնացած եզրահանգումների հոլովում չէ: Նա ներկայացնում է կյանքը՝ մի կողմից փառաբանելով լույսն ու հերոսականը, մյուս կողմից ժխտում բացասականն ու արատավորը: Զրուցելով ընթերցողի հետ, գեղագետը ցավում է, որ «ամեն օր դատ է, սպանություն, ցույցեր սոված մարդկանց, ծախու հոգիների հրավառություն, ընտրական խոստումների, յուղի, ձեթի, սիրո, բրնձի նվիրաբերում: Նա չի ընդունում նաև այն երևույթը, երբ.

արտերկիր է գաղթում կորովը դոնորական

մեր հողի, որ

այնտեղից

հունանիտար օգնություն «առաքի հոս»,

իսկ արփագետուկցի Հակոբը դիրքում է միշտ ու չի կարողանում տուն գալ, զոնե հասնել իր հարսանիքին:

Մինչդեռ իր հարսնացուն առանց զուռնայի,

ոսկեմատը վեր տնկած,

պարում է, պարում է, պարում...

(էջ 23)

Վ. Հակոբյանը միաժամանակ տեսնում է այն լավն ու լուսավորը, որ հաստատվում է Ավոյի սխրանքով, Անդրանիկի սպիտակ ու Նժդեհի կարմիր նժույգների թռիչքով, Արաբոյի և Աղբյուր Սերոբի, Թևանի և Նիկոլ Դունանի խորհուրդներով: Պոեմի քնարական հերոսի հավատը կրկին ծիածանվում է ծառի խորհրդանիշ-պատկերով, առասպելված հերոսների հաղթարշավով:

Վերջին տարիներս շատ է հոլովվում կյանքի և միջի փոխհարաբերությունը այն առումով, որ միջը կրկին տեղ է գտնում գեղարվեստական հյուսվածքների մեջ: Նշենք, որ այդ երևույթը նկատելի է նաև Վ. Հակոբյանի սույն ժողովածուի «Դադարներ կտրուկ շրջադարձերով» բաժնում: Սակայն անհրաժեշտ է նշել, որ բանաստեղծի հերոսներն այստեղ առասպելված արցախցիներն են՝ լինեն նահատակներ թե առօրյա կյանքում ազգի ճակատագրի խաչը կրող անձնուրաց մարդիկ: Ամեն դեպքում նրանք քայլում են Արցախյան լեռնալանջերով, բացում նոր ճանապարհներ ու նոր աղբյուրներ: Կյանքը շարունակվում է շնորհիվ նրանց, ովքեր, ինչպես Հայոց, մահվան աչքերին նայել են համարձակորեն, չհասցնելով տեսնել անգամ իրենց նորածինների, այնպես, ինչպես Հայոյի կյանքի ընկերուհին՝ Վարդին, որ նորածին մանչուկին հասցնում է կռվի առաջին գիծ, բայց այդպես էլ չի հանդիպում իր երեխայի կարոտած հորը, քանզի նահատակվել էր նա:

Մարտը շահում են մերոնք: Օրերն անցնում են՝ իրենց վրա դաջված նաև արցախուհի Վարդիի առաջին մարտը, երբ այցելել էր մարտի առաջին գիծ: Մեծանում է նաև Հայոյի տղան: Կտրուկ «շրջադարձերը» ավարտվում են Արցախի ոգին խորհրդանշող պատկերով. «Լուսադեմին, երբ արևի փողը նշան է բռնում Արփազետուկի սարի գագաթին՝ չլինի այստեղ թուրքի հետք ու թեփուր է երևացել, ծմակի ամեն ծառ զինվոր է դառնում, ամեն քար զինվոր է դառնում ու կանգնում տողանի: Իմ Սարգիս հոր սարերն են: Ո՞վ է ասել՝ ջան սարեր, ջան արև, ջան Ղարաբաղ»:

Ահա այսպես է ընդհանրացնում Վ. Հակոբյանը հայրենապատումի իր փիլիսոփայությունը: Սակայն դրանով չի եզրափակվում «Քրիստոսի ծաղիկները» ժողովածուն: Արձակին փոխարինում է պոեզիան, պոեզիային՝ արձակը, ու վերջապես բանաստեղծը խոսքը վերջակետում է «Անխուսափելի կյանք» երկով:

Վ. Հակոբյանի «Քրիստոսի ծաղիկները կամ դադարներ՝ կտ-

րուկ շրջադարձերով» գիրքը հրատարակվել է 2001-ին: Ինչպես դարերի ընթացքում, այնպես էլ մեր օրերի բանաստեղծը, տվյալ դեպքում՝ Վ. Հակոբյանը, հավատարիմ հայոց մաքառման գրականության ոգուն, հնչեցրել է ոգու և զեմքի միասնության քնարը, հոլովել մեր ժողովրդի ապրելու բանաձևը, թշնամու առջև չընկրկելու, մարտնչելու «Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման» օրենքով: Այս է մարտական պոեզիայի փիլիսոփայությունը, որին հավատարիմ է մնացել Վ. Հակոբյանը և ստեղծել իր մնայուն արժեքներից մեկը՝ «Քրիստոսի ծաղիկները»:

7. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

«Այս խաչքարը ես եմ» բանաստեղծության մեջ Վարդան Հակոբյանը ունի այսպիսի տողեր.

Մի փունջ պոկիր եւ վերցրու փոշին

ճաքած խաչքարից...

... Եվ կտեսնես, որ բացվող գրերը

ճանապարհներ են,

հավերժ ուղեւոր՝

Մաշտոց ու Վարդան:

Բանաստեղծական այս խորհուրդը մեկ անգամ չի ուղեկցել Վ. Հակոբյանին: Իր հողին ու ժողովրդին նվիրված բանաստեղծին չէին կարող չհուզել մեր պատմության այն խաչմերուկներն ու մեծությունները, որոնցով պայմանավորված են ժողովրդի իմաստությունն ու անմահությունը: Այդ խորհուրդը բանաստեղծի ոչ միայն մեկ, այլև բազմաթիվ երգերի մեջ է մտել որպես ոգի: Հայկական գույներով, հայաշխարհիկ ավանդույթների բաբախումներով, հայկական ցավի ու հույսի շափաղումներով հագեցված նրա պատկերները վերջապես պետք է խմորվեին ընդհանրացնող-քնարաէպիկական հյուսվածքների մեջ: Այդպես էլ եղավ:

Երբ ծանոթանում ես Վ. Հակոբյանի պոեմներին, նրանցում անպայման նկատում ես նախորդ ժողովածուների ծփանքը:

Չայրենի հողի քաղցրությունը, մոր վեհությունը, բնության երանգների անկրկնելիությունը, սիրո իմաստը, մարդու և հավերժության փոխհարաբերության փիլիսոփայությունը, պատմական անցյալի և ներկայի առնչությունները գալիքի հետ և այլ գաղափարների ուղղակի բանաստեղծություններից մտնում են պոեմների շրջանակները և իհարկե, իմաստավորվում են նոր առանձնահատկություններով, խտացված հատկանիշներով:

Վ. Չակոբյանն իր պոեմներում ևս հարազատ աշխարհի հետ է, իր մտորումների մթնոլորտում, աշխարհընկալման իր սեփական երկնքի տակ: Դրանում համոզվում ենք՝ կարդալով շարքի հենց առաջին՝ «Չամանվազ» պոեմը: Այն քնարական պոեմի հաջողված օրինակ է: Նրանում բանաստեղծն իր ներշնչանքն առնում է երկու ակունքներից: Դրանք հայրենի երկիր և սերունդ հասկացություններն են՝ դրսևորված ծանրակշիռ խտացումներով: Այն, ինչ բանաստեղծը չէր կարող ասել մեկ ոտանավորում, հնարավորություն է ստացել ընդգծելու պոեմում՝ հենվելով իր երկրի անցած և ներկա կենսագրությանն ու ճակատագրին: Յոթ մասից բաղկացած «Չամանվազ» պոեմում Վ. Չակոբյանը անձանձրությամբ հուզականության խտացված հենքով նորից-նոր իրար է բերում երկրի հավերժությունն ապահովող բոլոր թևերը՝ լինեն դրանք պատմական շոշափելի, առօրեական, թե հոգևոր-երազային: Պոեմի առաջին գլխում բանաստեղծն ստեղծելով ՉԱՎՔԻ, ՃԱՆԱՊԱՐՉԻ, ԾԱՌԻ և իր ԵՐԳԻ զուգահեռ-պատկերները, հաստատում է երկրի ամբողջական անմահությունը, և քանի որ այդ ճշմարտության արծազանքն է իր երգը, ապա հավատով ընդգծում է.

*Եվ իմ երգը այս թողնում եմ ահա
Քո մուտքի քարին որպես վառվող մոմ,
որ չի մարելու ինձնից հետո էլ,
որ հավելու է ու հեղվի հողիդ -
կաթ-կաթ, երդումի տաք արցունքներով:*

Անկաշկանդ օգտվելով թեմա-գաղափարի թելադրած հնարավորություններից, Վ. Հակոբյանը պոեմում կատարում է իր ընդհանրացումները՝ երկրի և մարդու փոխհարաբերության վերաբերյալ: Երկրորդ գլխում արևոտ իր երկիրը համեմատում է մոր ժպիտի հետ, որի շողերի գրկում երբեք ինքը մենակ չի զգում իրեն.

Ինձ հետ լեռներն են:

Ես տարածված եմ լեռներովս մեկ,

Ես տարածված եմ ձեր աչքերով մեկ,

տարրալուծվում եմ ողջ տիեզերքում:

Ես իմ երկրից գնացած-չեկած

ճամփա եմ բերում...

Այսպիսով, պարզ է դառնում բանաստեղծի միտումը. դեռ քիչ է երկրի հանդեպ ունեցած սիրո խոստովանությունը, անհրաժեշտ է սեփական ճամփա բացել հայրենի լեռներում, «մտնել հույսի մեջ, հողի մեջ, մութի մեջ՝ մթնել, լույսով՝ լուսանալ, խիտ սաղարթներում շրշալ հովի հետ»: Քնարական հերոսը խորհում է, որ ինչ էլ լինի և ուր էլ գնա, պետք է վերադառնալ դեպի սեփական անունը.

Ես խորն եմ՝ մինչև ձեր հոգու հոգին,

Ես ամբողջովին անուն եմ միայն

և ինքս իմ անվան դալարումն եմ ես:

Քայլել երկրիդ սահմաններից դուրս,

Նշանակում է՝ դանդաղ մահանալ

քո իսկ անվան մեջ:

Պոեմի երրորդ գլխում բանաստեղծը քննարկում է ներկայի արմատների հարցը: Արտացոլման հնարավորությունն այստեղ անցյալի հաստատումն է: Գլուխն սկսելով «Ամեն վայրկյան իր պատմությունն ունի» տողով, Վ. Հակոբյանը գնահատում է պատմության անմեռ-արարող ուժը, հայտարարելով.

Ես պատմությունից առա աչքերս,

ձեռքերս՝ նույնպես,

և ընծայեցի հավերժությանը:

Դեպի ժողովրդի պատմությունն ունեցած իր աշխարհայեցողությունը բանաստեղծն ընդգծում է ծանրակշիռ տողերով, որոնք առանց ավելորդ բացատրությունների, իրենք են խոսում իրենց մասին. «Դարերը հիմա իմ աչքերով են լեռներին նայում», «Լեռան երկինքը բարձր է լինում», «Ինչքան էլ հեռու՝ Մասիսն ապրում է Երևանի մեջ» և այլն: Պատմության գնահատումը շարունակվում է պատկերային թարմ հյուսվածքներով: Ասես լեռների բացված դռներով դուրս է գալիս Արգիշտի արքան՝ «աչքերում ի մի բերվող մի երկինք»: Նրանից հետո այցելում են Մաշտոցը, մի պարզ լեռնական, արևներ, և պարզվում է, որ մեր լեռները բնակեցված են մեր պատմությամբ: Պատմության հետ ունեցած սերտ կապի շնորհիվ է, որ քնարական հերոսն իրեն անպարտ է զգում, 4-րդ գլխի վերջում բարձրաձայն հայտարարելով.

Յնարավոր չէ ինձ հաղթել: Երբեք:

Եվ դա չզգալն է -

պարտությունը հենց:

Պոեմի հինգերորդ գլխում Յակոբյանը գտնում է լեռնաշխարհը պատկերելու կենսական մի ակունք ևս: Բնանկարի հենց սկզբից շրշում են անմահ ծառերը: Այդ ծառերից մեկը տնկել է հենց քնարական հերոսը, որպեսզի, ինչպես ինքն է ասում,

Իմ ձեռքով տնկած ծառն էլ, ուրեմն,

Թող որ արմատով հողի մեջ գրի

նոր պատմությունը

Աննվաճ հողիս:

Յասարակ ծառ չէ դա: Բանաստեղծը վեցերորդ գլխում այդ ծառը ներկայացնում է որպես սերունդներին իրար կապող խորհրդանիշ.

Ծառի միջով ես ու հայրիկս

միացած իրար,

Ծառի միջով է սերը վարարում

և արմատներով անցնելով հողին,

գալիս-գրկում է

ամրությունը մեր ժայռե բերդատան:

Ծառի մասին խորհրդածությունը շարունակվում է պոեմի վերջին գլխի սկզբում: Ծառի խորհուրդը միանշանակ չէ: Այն մայրենի խնդություն է ու լուսե թախիժ, սիրո շրշյուն է ու հավատ: Վերջապես ծառի և քարի դաշնությունը վերածվում է լեռնաշխարհի ամրության հիմքերի, որոնք մեր դժվարին ճանապարհին բաբախում են որպես թևեր, և դրանցով էլ լեռներն անհաղթելի են, վեհ ու առնական:

Կարելի է ընդգծել, որ Վ. Չակոբյանի այս պոեմները հողի և մարդու դաշնության, նրանց ճակատագրերի միասնության, անցյալ-ներկա-գալիք շարունակական կապի գեղարվեստական-քնարական վավերագրություններ են:

Բազմաշերտ բնույթ ունի «*Ես հողի մարդ եմ*» պոեմը, որի քնարական հերոսը նախկին զինվորն է: Ինքնաբացահայտման պատկերների օգնությամբ պոեմը վերածվել է դիմանկարի, դիմանկար՝ հողի մարդու, որ անցել է արհավիրքների միջով, ֆաշիզմի դեմ մղվող ահեղ մարտերում զրկվել է ձեռքից ու ոտքից, հաղթանակով վերադարձել և հայրենի հողի համար դարձել թռչող թևեր: Պոեմում հող ու հերոս ներհյուսված են միմյանց: Քարերը, հանդերը, սարերը ճանաչում են իրենց զավակին, իսկ նրանցով հպարտ որդին խորհում է.

*Քարի կեսն եմ ես,
Չանդերի կեսն եմ
և կեսն եմ սարի:*

Սակայն այս խոստովանությունը թերևս չի ամբողջացնում նախկին զինվորի հոգու գույները: Նրա համար հողը միայն ապրումի շտեմարան չէ, այլև իր գոյությանն իմաստ բերող հոգևոր երանգ, թևավորող ուժ.

*Սիրելիս՝ հողի սիրով եմ սիրում,
Երգվելիս՝ հողի սիրով եմ երգվում,
Երգելիս՝ հողի սիրով եմ երգում...*

Քնարական հերոսը խոստովանում է, որ իր սրտի հուրը նվի-

րուն է հողին, որ սարերը հրեղեն լինեն, հանդերը լինեն հրեղեն,
և վճռականությամբ հայտարարում է.

*Հրաբուխներ կան անթեղված իմ մեջ,
թե փորձի մեկը պղծել ձորերս,
խլել ձորերիս փարված օրերս,
կժայթքեն մեկեն՝
կելնեն հուրերս,
կրակի ճարակ կանեն չարերին...*

Հողի հանդեպ քնարական վերաբերմունքը հերոսին դարձնում է լեգենդար: Նրա խոսքը հնչում է ոչ որպես ինքնագովություն, այլ ինքնաբացահայտում: Իր անցած իմաստալից ու քրտնաթոր ճանապարհի համար նրա հպարտության խոսքն անմիջական է, հուզիչ, դաստիարակող: Վստահություն ու հարգանք վաստակած մեր իմաստուն պապերի պես նա նշում է.

*Քարերին թե ես ասեմ՝ թռեք,
մի վայրկյանի մեջ թև կառնեն-թռչեն,
Սարերին ասեմ՝ ինձ հետ քայլեցեք -
չեն թողնի խոսքս բերնիցս դուրս գա,
Հանդերին ասեմ՝ կանաչ մնացեք,
գորգեր կդառնան իմ ոտքերի տակ,
ախր նրանց հետ
մեկ է իմ ճամփան...*

Քնարական հերոսի ազնիվ խոստովանություն է այս, որից պարզվում է նրա ինքնանվիրումի ակունքը. «Ախր նրանց հետ մեկ է իմ ճամփան...»:

Անձնավորման ամբողջական մի պատկեր է «Շանթահար կաղնին» պոեմը: Կաղնու և պապի զուգահեռ կերպարները լրացնում են միմյանց: Դեպի կաղնին ունեցած պապի վերաբերմունքի մեջ բանաստեղծն առաջին հերթին ընդգծում է պապի մարդկային էությունը՝ գեղեցիկ կյանքով զարդարել աշխարհը և վտանգավոր պահին անձնուրացության գնով վիզ ու սատար

դառնալ մարդկանց՝ կյանքի հավերժությունն ապահովելու համար: Թոռան հարցին, թե՝

Ախր կաղնուց

Մեզ ի՞նչ օգուտ,-

Պապը թոռանը բացատրում է.

Չէ, չի լինում

Ավելորդ ծառ,

Չսկա կաղնին

Թև-թիկունք է

Այգու համար...

Եվ կաղնին ապացուցում է իր ավելորդ չլինելը: Իհարկե, բանաստեղծի նպատակը բնավ էլ կաղնի ծառի գովաբանությունը չէ: Այն պարզապես միջոց է՝ անհատի և հասարակության փոխհարաբերության մասին գեղարվեստական-գաղափարական բարձր ու վեհ ընդհանրացումներ կատարելու համար: Այս պոեմում Վ. Չակոբյանը գեղագիտական իր իդեալի դիտակետից կաղնու կերպարով հավերժացնում է ժողովրդանվեր հերոսի ուժն ու հմայքը: Պոեմի վերջում նկարագրված է, որ շանթ ու որոտի ժամանակ կաղնին իր վրա է ընդունում կայծակի հրե լեզուները և իր մահով փրկում այգին: Կաղնու արարքից գոհ պապի աչքերի մեջ լճանում է գոհության և ափսոսանքի արցունքը:

Բանաստեղծական դասական ավանդույթով Վ. Չակոբյանը ստեղծել է մի պոեմ, որն աչքի է ընկնում պարզությամբ ու մտքի խորությամբ:

Երբ կարդում էի Վ. Չակոբյանի «Երամականչ» պոեմը, ինձ թվում էր, թե բանաստեղծն այն գրել է հենց վերջերս:

Ընտրելով էպոսային տարրերի հյուսվածք ունեցող պատումը, Վ. Չակոբյանը «Երամականչ» պոեմում իրեն դրսևորում է որպես ժամանակի պատմիչ:

«Երամականչ» պոեմի մուտքը մի տեսակ համապատկեր է՝ գլխավոր հերոսին ծանոթանալու համար: Ճիշտ է, պոեմը քնարա-

կան է, սակայն ժանրային նեղ շրջանակները չեն խանգարել բանաստեղծին գլխավոր հերոսին ցույց տալու զարգացման մեջ, որ կապված է ինչ-որ թաքուն կամ ենթատեքստային սյուժեի զարգացման հետ: Հարուստ, դրամատիկ ապրումներ ունեցող «խենթ» Արշակը ներկայացված է որպես աստվածային ոգի ու շնորհք ունեցող անմեղություն: Նրան հատուկ է աշխատասիրությունը: Իննսուներ անց է, սակայն նրա զրույցը հողի ու ծաղկի հետ է.

*...Տեղադրել է
մեղվանոցը իր խնձորի այգում,
որ տարին բոլոր
ինչ էլ որ լինի,
լինի և այգում՝
ծառ ու ծաղկի հետ...*

Խնձորի այգին միաժամանակ Արշակի մաքուր, արցախաբույր սիրո խորհրդանիշն է, որովհետև խնձորածաղկի ժամին է նա հանդիպել Անիկային: Դրա համար էլ Արշակը մեկ-մեկ ակնարկում է՝ «խնձորածաղկի մեղրը ուրիշ է»: Բայց մարդկայնորեն երանավետ այս դրվագը չէ, որ հերոսին մղում է զարգացման ընթացքով:

Արշակը եղեռն տեսած հայ մարդու կերպար է.
*Խենթ չէ Արշակը: Բայց մի խենթություն
ունի իր ներսում,
մի մաշված երակ.
հենց որ վարարեց արյունը այնտեղ,
զարթնում է հոգում ծուռը Արցախա:*

Արշակի խենթությունը ունի իր պատճառը: Ցավ ու մորմոք ունի նա: Այդ ցավն ու մորմոքը նաև բանաստեղծին են երկու պատճառով: Առաջին՝ որ ժողովրդի վիշտը նրա արվեստագետ որդու ցավն է, և երկրորդ, որ այստեղ պակաս չի կարևորվում: Քարինզը (հիմքում նաև Հարդար-Հարար) Հակոբյանի հարագատ գյուղն է: Պոեմի հիմքում իսկական ծանր փաստեր են ընկած, որոնց ծանոթ է բանաստեղծը, և որոնք անհինջ եռք են դար-

ծել նրա արյան մեջ, ուստի պոեմը գրված է ոչ թե թանաքով, այլ սեփական սրտի արյամբ: Պոեմը կարդացվում է մի շնչով: Այն հոգու ապրված ժայթքում է, որ ունի պատմական և ժամանակակից նշանակություն: Բանաստեղծը Արշակի կերպարի միջոցով անդրադարձել է հայ ժողովրդի մի մասի՝ արցախահայության համար ճակատագրական դեր խաղացած 1918-20թթ. անցուդարձին և իմաստավորել գեղարվեստորեն: Բանաստեղծի համար կարևորն Արշակի կերպարի էության բացահայտումն է, որովհետև այդ կերպարի հոգեկան ծանր ապրումների ցուցադրումը միաժամանակ ուղղված է մարդկային իրավունքների պաշտպանությանն ու իր նմանի հանդեպ ադամորդու դաժանության ժխտմանը: Իր նպատակին հասնելու համար բանաստեղծը ստեղծել է ցասումի և վշտի խտացված պատկերներ: Արշակը՝ երեխա, գառներ էր պահում հայրենի Չարդար գյուղի հանդերում.

*Եվ հանկարծ՝ ի՞նչ է... կրակ է, ծուխ է,
այս ուրիշ ծուխ է բարձրանում շենից:
Եվ ի՞նչ... չէ, սա վառվող կանաչի հոտ է,
հոտ է աղետի,
իսկ երբ կանաչն են վառում, ասում են,
երկնքից ցավ ու կապար է թափվում:*

Արշակը հանդից վերադառնում է, սակայն հուր ու ծխի մեջ չի կարողանում գտնել հայրական տան ճամփան: Ահավորն ու սարսափելին այն է, որ՝

*Ետ գնում նորից, գալիս է ձիով՝
հայրական տունը տունն է ուրիշի,
ետ գնում, նորից գալիս է ձիով՝
մայր է դռան դեմ,
մայր է ուրիշի,
ետ գնում-գալիս, գալիս-գնում է,
ով գիտե, արդյոք, այս էլ քանի դար...*

Արշակի ճակատագիրն այսպիսով բանաստեղծի համար դառնում է ոչ միայն այդ կրակված պահի ողբերգական պատկեր, այլև հայոց հանրածանոթ դարերի խորհրդանիշ: Իր բոլոր հարազատներին կորցրած Արշակը քայլում է հին ճամփաներով, որոնց «հետքերը անջինջ մնում են նրա ցաված հոգու մեջ»: Արշակի բնավորության մի անթառամ գույնը կազմում է նրա անհրականանալի իղձը: Նա որդիներին կտակում է, որ «մեռնելուց հետո տանեն ամփոփեն իրենց հին գյուղի գերեզմանոցում՝ ոսկորների մոտ ապուպապերի»: Իսկ ինչպե՞ս տանեն...

Այգեպան է Արշակը: Իմնսուն թռռ ունի: Բայց եղեռնի պատկերը նրա արյան միջից չի ջնջվում: Բանաստեղծը ցնցող պատկերներ է ստեղծում նրա հոգու ցավը բացահայտելու նպատակով: Լինում են պահեր, երբ Արշակը «մեկ-մեկ ծառերի կեղևը «պատռում», ոգին դնում է ամեն ծառի մեջ»: Արշակը հնազանդության թշնամի է, արդարության զինվոր: Իմնսուն թռռ ունեցող Արշակը չի մոռանում եղեռնի զոհ դարձած քրոջը՝ դեռատի Ջարոյին, նրան փնտրում է անգամ Հայրենական կրակների մեջ, որի զինվորն էր: Մեծ կյանքի տեր է Արշակը: Նրա որդին՝ Սերոբը, զոհվել է մարտերում: Եվ երբ Սերոբի որդու՝ Անդրանիկի հարսանիքն է սկսվում, Արշակը բոլորի աչքի առջև առնում է Սերոբի մեծադիր նկարը և խենթորեն պարի մեջ մտնում, ասելով.

*Էլ ի՞նչ հարսանիք, թե որդու հայրը
չպարի այնտեղ... Դե եկ, շան տղա,
շան տղա, Սերոբ,
Խոստացե՞լ ես, դե, ուրեմն, պարի...*

Արշակի անձնական վիշտը ալեկոծվում է ներկաների հոգիներում և դառնում հանուրի ցավերն իրար տվող ազդանշան, որովհետև հարսանքավորներից յուրաքանչյուրի երակների մեջ Արշակի ցավին զուգահեռ և հավասար եռում է իրենց վիշտն անմոռաց: Երբ զոհված որդու նկարն առած, պարում է Արշակը, լսվում են.

*Ամեն կողմերից փղծկոց ու լաց,
ամեն կողմերից պարի մեջ մտան,
պարեցին իրենց... զոհվածների հետ:*

Արշակը արցախցի հայ տղամարդու բնավորության անմնացորդ կրողն է: Նա իննսուն տարեկանում բարձրանում է ծառը, կնոջ՝ Անիկայի համար խնձոր քաղելու: Ծառից ընկնում է և ջարդում ոտքերը: Սովորական թվացող այս էպիզոդը խոր իմաստ է ստանում հեղինակի բանաստեղծական գյուտի շնորհիվ: Արշակը, չնայած տարիքին, ծառից ընկնող պտուղ չի: Պարզվում է, դրա պատճառը հենց Արշակի պատմածով.

*Երբ հասել էի ծառի կատարին,
ասացի՝ նայեմ,
գուցե իմ Ջարոն հեռվում երևա,
Կանչեմ, թող մոտ գա
ու մի խնձոր տամ...
Սակայն ի՞նչ տեսա... Ափը Տղմուտի,
Ավարայրի դաշտ...
Արագ ցած թռա,
որ թուրս առնեմ ու կռվի մտնեմ:
Հազկերտի փիղ ու զինվորների դեմ...*

Աշխարհով մեկ սփռված հայերի համընդհանուր վշտի հուզիչ մի արտահայտություն է այս հատվածը: Պոեմում քիչ չեն նման պատկերները: Խենթ Արշակի խոհերի ու մտապատկերների մեջ սլանում է Սասունցի Դավթի ձին, հնչում Դավիթ Բեկի սաստող ձայնը, Բաղրամյանի թրի շառաչը: Հայ ժողովրդի պատմության ամեն մի հերոսական էջ նոր իմաստ է ստանում Արշակի շուրթերին.

*Ես՝ Աբու Մուսաս, ցույց կտամ նրան,
թե իմ քաջերով
ինչպես եմ ելել
բուղաների դեմ
ու իմ Արցախս հողից շարտել
ավեր-ավարի սովոր ցեղերին...*

Արշակի այս ոգեկոչող տողերից հետո բանաստեղծը քնարական զեղումի ձևով հաստատում է գլխավոր հերոսի վեհությունն ու նուրբ հոգին.

*Խենթ չէ Արշակը... Պարզապես մաշված
մի երակ ունի,
երբ վարարում է արյունը այնտեղ,
Արշակն ավելի Արշակ է դառնում...*

«Երամականչ» քնարական պոեմը ողբի տարեգրությունն է: Այն սրտեր պարուրող, խելոք մի Ասք է մեր ցավի ու վշտի, մեր ծանր ճակատագրի ու հույսերի, մեր կենսասիրության ու հավատի մասին, որի միջից հնչում է նաև որպես իրար սատար կանգնելու, բռունցքվելու, մեկ-մեկու տեղն իմանալու, մեր կորուստները հիշելով հանդերձ ապրելու ազնիվ կոչ: Իզուր չէ պոեմն ավարտվում Արշակ ապոր հրե երազով և բանաստեղծի հաստատող խոսքով.

*Դավիթ Բեկի ծիւն հեծնեն ու գնամ,
Գտնեն մեր կորած տան-դռան ճամփան,
Ախր, ես՝ հանդից եկած երեխա,
սարերում թողած գառների հոտը,
սարերում թողած խորոմած խոտը,
ծիով գնում եմ, հասնում եմ մեր տուն,
տեսնում մեր տունը՝ տունն է ուրիշի,
ծիով գնում եմ, հասնում եմ մեր տուն,
տեսնում մեր այգին՝ այգին ուրիշի,
ծիով գնում եմ,
գնում եմ, գնում...*
- Ես քեզ լավ գիտեմ, իմ Արշակ ապեր,
մի տխրիր այդպես,
թե որ Արշակն ես՝ տունն էլ կգտնես:

«Երամականչ» պոեմն իր ներքին էությանը հայրենաշունչ ու հայրենաբաղձ մի կտավ է՝ տառապանք ապրած հայ մարդու անմարում ցավի ու կենսասիրության շաղախով:

Այն ծնվեց ուղիղ ժամանակին՝ «Մեսրոպ Մաշտոցն Ամարասուն» վերնագրով: Այդ է վկայում նաև ինքը՝ բանաստեղծը: «Գրքերի աշխարհ» թերթի թղթակցին տված պատասխանում նա ընդգծել է. «Երկար տարիների լռությունից հետո Արցախ աշխարհում հնչեցին մեր արդեն գործող վանքերի ոգեկոչող զանգերը... Մեսրոպ Մաշտոցին ու Վարդան Մամիկոնյանին, իմ պոեմում, միասին եմ բերել Արցախ: Նրանք պետք է միշտ միասին լինեն: Դա է մեր ուժը...»:

Ինչպես տեսնում ենք, Մեսրոպն ու Վարդանը, դարձած ազատության կորով, իրենց ձայնը հնչեցրին նաև մեր նորօրյա պայքարում: Այդպես է եղել՝ սկսած 5-րդ դարից:

Հայտնի է, որ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը լայնորեն նշվեց 1960-ական թթ. սկզբին: Գրվեցին բազմաթիվ գեղարվեստական երկեր, ուր Մաշտոցը փառաբանվում է որպես հայ գրերի ստեղծող, հայ դպրության հիմնադիր, առաջին ուսուցիչ, թարգմանիչ:

Պ. Սեւակը եւս իր մասնակցությունը բերեց այդ հայրենամարտ գործին: Նրա համար Մաշտոցը միաժամանակ վիթխարի քաղաքագետ է, որի շահած անարյուն ճակատամարտի հետ չի կարող համեմատվել մեր սպարապետների փառավոր հաղթանակներից եւ ոչ մեկը:

Պ. Սեւակը 60-ական թվականների պահանջներից ելնելով իմաստավորեց Մաշտոցի կատարածը եւ դարերին հանձնեց իր անմահ «Եվ այդ մի՛ Մաշտոց անուն» պոեմը: Բանաստեղծական անզուգական տաղանդով Պ. Սեւակը ցույց տալով հեթանոսական աստվածների կործանման ու քրիստոնեության հաստատման պատճառը, մեր ժողովրդի դժվարին ու բարդ ճակատագրի հետ կապված շատ փակագծեր բացեց: Նա նաև իր ելույթում նշում է, որ «Զորությանը ու բազկով Հայաստանը չէր կարող վերականգնել իր միասնությունը, ինչպես նաև պետական անկախությունը... Ճիգով ու ջանքով անկարելի է մաքառել օտար լեզուների դեմ, եթե դրանք կրում են պաշտոնական բնույթ»:

Չրաշք էր պետք, որ կործանումից փրկվեր հայ ժողովուրդը: Եվ ծնվեց հրաշքը՝ Մաշտոց անունով: Նա իր գրերի գյուտով հաստատեց ժողովրդի լինելու առեղծվածը, տվեց մի զենք, որի դեմ դարերի ընթացքում անգեմ դարձան նետ ու յաթաղան, փղեր ու տանկեր: Ապրեց ժողովուրդը եւ ամեն անգամ անցյալին անդրադառնալիս, Մաշտոցի գործի մեջ որոնեց ու գտավ իրեն հուզող կենսական հարցերի պատասխանները:

Այդպես եղավ եւ Արցախյան շարժման հենց սկզբին: Վ. Չակոբյանը Պ. Սեւակի օրինակով դիմեց մեր ոգու եւ սրի ժամանակաշրջանին՝ 5-րդ դարին, որ իմաստավորվում է Մաշտոց-Վարդան անմահների անձնուրաց գործունեությամբ: Եվ ուրախալին այն է, որ Վ. Չակոբյանը Պ. Սեւակից սովորելով հանդերձ, ստեղծել է ինքնատիպ մի պոեմ: Այդ ինքնատիպությունը բնորոշվում է թե՛ թեմատիկ եւ թե՛ գեղարվեստական առանձնահատկություններով:

Եթե Մ. Մաշտոցը մեր ընդհանուր ազգային ինքնության պահպանման եւ հարատեւման մարմնավորումն է, ապա նրա գործի նշանակությունն առավել է ընդգծվում Արցախ աշխարհի համար: Այդ փաստի գիտակցումով էլ Վ. Չակոբյանը հերոսներ է ընտրել Մաշտոցին ու Վարդանին: Բանաստեղծը նրանց կերպարները ստեղծել է ժողովրդի ճակատագրին առնչված: Մաշտոցի եւ Վարդանի բնավորությունները բացահայտվել են պատմական դեպքերի եւ իրադարձությունների փիլիսոփայության ներիյուսմամբ:

Արցախում Մ. Մաշտոցի գործն իմաստավորելու համար Վ. Չակոբյանը հիմք է ընդունել պատմական այն ճշմարիտ փաստը, որ նա գրերի գյուտից հետո դպրոց է բացել նաեւ Արցախի Ամարաս վանքում: Բանաստեղծական սրտառուչ ու գունեղ հյուսվածքով Վ. Չակոբյանը պոեմի հենց մուտքում ստեղծել է մի պատկեր, որտեղ ցույց է տրվում Արցախ աշխարհի հոգեպարար ցնծությունը Մեսրոպ մարգարեի գալուստի առթիվ.

*Ու ճանփան դարձավ կենաց մայրուղի,
ու ճանփան դարձավ փանդիռ յոթնաղի,*

*եւ հոգերնձա
խոսքեր հնչեցին,
եւ ախորժալուր
մայրուղին իջավ
որպես թե Սինա լեռան փեշերից:*

Բանաստեղծը պատկերում է Հայոց Արեւելից կողմանց աչքալուսանքի անկեղծ ու գիտակցված ծիածանումը: Մաշտոցի հետ, «ասես երկնային օրհնաբանությամբ, լույսը ոստոստում է թփերի վրա, եւ գարնան ավետիս է լսում Արցախ աշխարհը: Իսկ Արցախ աշխարհը Հայոց պատմության կնիքն ունի իր թեւերին, որ Հակոբյանի գրչի տակ թրթռում է Սխտորաշենի դարավոր սոսու շրշյուններում, սոսի՝

*որ Տիգրան Մեծի զինվորաց ձեռքով
տնկվել է մի օր Վարդանա հովտում,
Մավաս մատուռի հայացքի ներքո՝
Ի սեր եւ նշան
հայոց արքայի
հաղթահանդեսի՝
հազարմեկերորդ...*

Դարեր են անցել: Սխտորաշենի սոսենին դարձել է հայոց պատմության զորավոր իրադարձությունների եւ սրբացած մեծությունների գործունեության ականատեսը: Արցախ աշխարհի խորհրդանիշ սոսին պատկերվում է որպես թանկ ու հարազատ հուշերի կենդանի վկայություն: Այդ ծառի տակ անձրեւից ապաստանել են Մաշտոցն ու Վարդանը, նրա պարզ շուք ու շվաքում Գրիգորիսն է իր սիրտը բացել Մաշտոցից առաջ: Մեսրոպից հետո արցախաբույր այդ ծառի շվաքում հանգրվանել են Խորենացին եւ Կաղանկատվացին, Գանձակեցին եւ Գոշը, Րաֆֆին ու Լեոն, ապա իմաստուն Իսահակյանը... Բանաստեղծը հաստատում է, որ Արցախը հայոց շունչ ու սիրտ ունեցող սրբավայր է:

Պատկերելով Մաշտոցի այցը, Հակոբյանը նրան գնահատում

է համաժողովրդական սիրո ծփանքների եւ ակնկալությունների շրջանակներում: Շինականի ողջույնը, որ հնչում է «Փրկեա մերոց» աղոթքով, ժողովրդի հավատի արտահայտությունն է: Շինականի ձայնից խայտում է հողը սուրբ երանելու ոտքերի տակ եւ որպես տեսիլք բխում է մի աղբյուր, եւ՝

*Մարգարեն մի բուռ ջուր վերցրեց ակից,
պարզեց արեւին,*

եւ ասի միջից արեգակն ելավ

եւ նախշուն ասքեր շաղեց դաշտերին,

եւ ասի միջից արեգակն ելավ

եւ նախշուն ոսկի շաղեց դաշտերին,

եւ ապա ձեռքը ճակատից տարավ,

ճակատի գիրը օծեց արեւով,

ու դա պատգամն էր «վերին» աստծո,

Ու պատգամ էր դա՝ հղված արցախցուն:

«Փրկեա մերոց» աղոթքը, ուղղված Մաշտոցին, պոեմում ծավալվում է, ներկայացվում որպես անցած ու գալիք արհավիրքների դիմակայելու մաշտոցյան հնարքի գիտակցում: Ժողովուրդը պետք է փրկվի «գորշ հորդանների անգուսպ հեղեղից», որ համակործան անվերջ գալիս են եւ տանում ոչ միայն ծլած արտը, հանգցնում վառած թոնիրը.

այլեւ ակունքն է քանդում քո լեզվի,

մայրենի խոսքիդ կրակը մարում,

մանկանց բերանից կես պատառի հետ

հայկյան՝ հոգու նշխարը խլում,

տաճարներիդ հետ՝

հոգուդ սրբազան աշխարհը փլում:

Ժողովուրդը հասկանում է, որ դրա «ելքը միայն գիրն է սրբազան»: Ամարասը, ականջալուր Մեսրոպի գալուն, այրերով, պապիկ-տատիկով, հայրիկ-մայրիկով, ճյուղ ու ճիվով դիմավորում է նրան՝ հավատալով, որ հանձին մեծ ուսուցչի, փրկարար գրերի

«Երկնից իջնում է լույսի մանանա»:

Երկուսի ճեղքված հայոց աշխարհի արեւմտյան մասը որպէս կիսագաղութ ճնշվում էր բյուզանդական բռնապետության լծի տակ, իսկ արեւելյան մասը՝ պարսկական: Ցավը տանելի կլինէր, եթէ ուժացման հարցը հաճախակի չտնկվէր հայ ժողովրդի առջեւ: Ժողովրդի մի մասը պիտի ձուլվէր հույների հետ եւ կորչէր անհետ, իսկ մյուս մասն էլ՝ պարսիկների:

Այդ հանցավոր քաղաքականությունն իրականացնելու համար թշնամիները կրոնի հարցում մերթ քաղկեդոնականությունն էին առաջարկում, մերթ զրադաշտությունը: Իսկ լեզվի հարցում տեղի էր ունեցել սարսափելին՝ Չայաստանում հայ երեխաների մի մասը սովորում էր ասորական դպրոցներում, մյուս մասը՝ հունական: Եվ մինչմեսրոպյան շրջանում այն տեսել էր հարյուր տարուց ավելի: Ահա այս ծանրածանր ֆոնի վրա պարզ է դառնում Մաշտոցի ստեղծած գրերի դերը ժողովրդի հարատեւման գործում: Ահա թե ինչու, գրերի գյուտից հետո, մեր առաջին ուսուցիչը ջանք ու եռանդ չի խնայում դպրոցներ բացելու ուղղությամբ՝ լավ հասկանալով, որ մայրենի լեզվի պահպանման եւ հայեցի դաստիարակության միակ կարեւոր երակը կրթօջախն է: Պատմական այս ճշմարտության բանաստեղծական ընդհանրացում է պոեմի «Մեսրոպ Մաշտոցը դպրոց է բացում Ամարաս վանքում» մասը:

Ինչպէս ամբողջ Չայաստանը, այնպէս էլ նրա մի մասը կազմող Արցախի աշխարհիկ եւ հոգեւոր տերերը հասկացել էին, որ օտարի լծի տակ, օտարի լեզվի դպրոցում կկորչեն ոչ միայն իրենք, այլեւ իրենց սերունդները: Դրանով պետք է բացատրել այն համաժողովրդական ուրախությունը, որ կապված է Մաշտոցի կողմից մայրենի լեզվով դպրոցի բացման հետ: Դրա արտահայտությունն է այն ռոմանտիկ պատկերը, որ ստեղծել է բանաստեղծը Ամարասի ֆոնի վրա: Վանք մտնելուն պէս Մաշտոցը գմբեթին նկատում է մի արծիվ, որ համարում է «Արցախա սուրբ ոգին»

հավքի կերպարանք առած»: Տեղից վեր բարձրանալով, արժիվն էլ ասես Արցախս երկնքում ծաղկում էր գրերը սուր: Այդ գրերը միաժամանակ մասնատված հայերին ի մի բերելու, նրանց միասնությունն ապահովելու ամենահզոր ուժն է: Այս գաղափարի պոետական մարմնավորումն է այն հատվածը, որ վերաբերում է հայկական զինանշանի վրա պատկերված երկգլխանի արծվին: Մաշտոցն այդ պատկերի մեջ տեսնում էր երկրի երկատվածության խորհուրդը, որի հետ չի հաշտվում: Երկատված այդ հայացքից մեկը նայում է պարսկական կողմը, որտեղ քրմերի վառած ատրուշաններին հայ սրտի լեզվակն է այրվում, մյուսը նայում է ձեռքին Բյուզանդիո, որտեղ «մեր հին ու անմաշ սրբությունների մոխիրն է միայն մատուցանվում մեզ» եւ մատնում գոյի ու դպրության կորստի: Այդ տեսարանի նման զնահատման ֆոնի վրա էլ կարեւորվում է Մաշտոցի խորհուրդը.

*Շատ էր անհրաժեշտ
անգամ եւ հաց ու ջրից առավել,
մեզ հայացքների միաբանություն...
...Այսինքն՝ պիտի մենք միաբանվենք
ժողովրդովի
մի բռունցք դառնանք մեր լեռանց նման,
կանգնենք կորովի,
անպարտ, անսասան՝
հանդիման ամեն ուժացնողի
ու բռնակալի,
ու սատար լինենք աստժո բարուն:*

Մեսրոպ Մաշտոցը համոզված է, որ իր ստեղծած գրերը «Արցախս քարին արմատ կբերեն»: Եվ նա ժողովելով ընտիր մանկտիք, «կամարների տակ Ամարաս վանքի հիմնեց» դպրոց-կրթարան,

*որ հայից սերված ամեն մի ժառանգ
հայերեն սերտի*

*դասը՝ հայրենյաց համար մեռնելու...
...լինի վանական,
իշխան թե դպիր,
իր սերն ու սիրտը բացի հայերեն...
... ու հայ աստծուն աղոթք հղելիս,
հայը հայերեն իր ցավը պատմի...:*

Վ. Հակոբյանը պատկերում է Մաշտոցի գործը, այն, որ նա անկարելին դարձրեց կարելի: Սակայն մեր մեծ ուսուցչի սխրանքը միայն անցյալի բացառություն չի կարելի համարել: Բանաստեղծը Մաշտոցի գյուտի մեջ որոնել ու գտել է մեր օրերի հուզող հիմնահարցը: Առաջին՝ որ «մայրենի գիրն է ու լեզուն, ուր հայրենիքը կանգուն է ու մեր հոգու պես վեհ ու աննվաճ»: Երկրորդ՝ մեսրոպատառով գրված մատյաններն արցախյան հողի հայաշունչ ոգին են, վկայությունները՝ ուղղված գալիքին...

«Մեսրոպ Մաշտոցն Ամարասուն» պոեմում բանաստեղծը մեր առաջին մեծ ուսուցչին ներկայացնում է գործունեության լայն կողմերով:

Սովորական վանքը դարձնելով դպրատուն, Մաշտոցը շրջում է Ամարաս գյուղաքաղաքում, լինում առաջին հերթին մի աղքատիկ գյուղում: Հանդիպումն անսպասելի էր, եւ առաջին հերթին իր հոգու խանդաղատանքն է զգում ռամիկ Մանասը: Նա ուրախությամբ իր մանչուկին՝ Նարեկին, տալիս է կրթարան: Մանասի եւ նրա որդու՝ Նարեկի կերպարներով բանաստեղծն ընդգծում է այն գաղափարը, որ հողի հետ կապված հայ մարդը իր մեջ կրում է ժողովրդի հոգու ամբողջական գեղեցկությունն ու բարոյական վեհությունը: Հենց այդ համոզմամբ էլ Մաշտոցը լինում է հասարակ մարդկանց շրջապատում եւ նոր սերնդի հետ կապում ազգօգուտ նվիրվածությունը: Ահա թե ինչպես է գնահատում Նարեկին.

*- Մի կենսահաստատ, օրհնած ոգի կա
այս մանչի ներսում,
ազգօգուտ մի հուր.*

*որ հետո պիտի մեծանա-ծավալվի,
գրեք անունը*

սովորող մանկանց առաջին կարգում:

Ու Մաշտոցի հետ միասին մանչի շրթերին ծիածանվում են հայոց գրերը, որոնց «ծայնակցում է աշխարհն Արցախա»: Մաշտոցի ժողովրդասիրությունը բացահայտված է նաև դարբին Առաքելի հետ հանդիպման տեսարանում: Դարբինը կենսափորձի իմաստությամբ խոսք է բացում հայ ժողովրդի ծանր ճակատագրի մասին. հնարավոր չէ՞, արդյոք, որ մեծ ուսուցիչը շտկի անարդարությունը: Օդում հնչում է դարբնի հարցը.

Չի՞ լինի, արդյոք,

ի սեր հավատի,

քիչ փառավորես ու կարգավորես

այս գիրը՝ գրված հայոց ճակատին...

... Մինչեւ ե՞րբ պիտի հոժարվենք պարսկին՝

մտքով չքոտի,

ու նա ճուղուպուր կոտրի մեր գլխին...:

Ջրույցին մասնակցում է նաև Վարդան Մամիկոնյանը: Նա եղել է շեներում, տեսել է առյուծակորով ուստրերի, պերճ ու նազանի դուստրերի: Նա Արցախա ճակատագիրն ու ապագան կապում է նրանց հետ: Վարդան զորավարի խորհուրդ-խոսքի մեջ հնչում է գրի ու սրի միասնության կոչը.

Մեր սուրբ դպրահոր արարած գրով,

մեր դարբինների կռած սրերով

պիտի նորոգենք

ու նորագրենք,

արդարագրենք

գիրը մեր ազնիվ ճակատին դաջված...:

«Մեսրոպ Մաշտոցն Ամարասում» պոեմի գլխավոր գաղափարը ժողովրդի անմահության ու կենսունակության ընդգծումն է, որով էլ պայմանավորված է Մաշտոցի գործի նշանակությունը:

Սակայն բանաստեղծը գտնում է, որ ժողովրդի հավերժությունն ապահովելու համար պետք է զինակցեն սուրը եւ գիրը: Այդ միտումով նա ստեղծել է «Այբուբենը՝ սրի վրա» ծավալուն մասը: Հանոզիչ են Մաշտոցի եւ Վարդանի միասնական գործունեության պատկերները: Վարդան Մամիկոնյանը եղե՞լ է, արդո՞ք, Արցախում: Դա կարելու չէ: Կարելուրն այն է, որ Մաշտոցն ու Վարդանն ապրել են միեւնույն դարաշրջանում, եւ նրանց անձնուրաց կյանքն ու փառավոր գործն ուղղված է եղել ժողովրդի հավերժության ապահովմանը: Պոեմում բանաստեղծը հավատարիմ է մնացել հինգերորդ դարի ոգուն՝ գրի եւ թրի համագործակցության հիանալի օրինակին: Վկան՝ 405թ. գրերի գյուտը Մաշտոցի կողմից եւ Վարդան զորավարի զոհաբերությունը 451-ին: Պատմական այս կարեւորագույն փաստերի ու դեմքերի պոետական ընդհանրացումների օգնությամբ Վ. Հակոբյանը պատասխանում է ժողովրդի հարատեւման ճիշտ հարցին.

*ոչ միայն սուրը, այլ նաեւ գիրը
պետք է վահանով մտնի ասպարեզ,
եւ պիտի պահել զուգակշռություն:*

Պոեմում եպոսային տարրերի հյուսվածքով ցույց է տրված Վարդան զորավարի զինավարժությունը: Սուր ու վահանի շառաչների մեջ Սաթենիկի գործած՝ այբուբենի պատկերն ունեցող գորգը արցախահայության զինվորական կամքի եւ ստեղծարար ոգու խորհրդանիշն է: Ձինավարժ ու ասպապը կապած Սաթենիկը բացում է գորգը եւ կարդում.

*-Այբ, Բեն, Գիմ, Դա, Եչ---
... Հնչում է երգը ամենազոր,
ամենազորեղ երգն է հնչում---
Երգն այդ երգ չէ, ո՛չ, այլ գրի վրա
երդում է սրի...
հավատարմության...:*

Վ. Հակոբյանն ուշադրություն է դարձնում նաեւ օտար բռնա-

կալների ճնշման եւ սոցիալական ծանր պայմաններում մարդկային իրավունքների ոտնահարման պատկերմանը: Ջրվոր Հաբեթի որդու՝ Տիգրանի եւ Սաթենիկի դժվարին լուսավոր սիրո է պիզողը պոեմի կարեւոր եւ հաջողված հյուսվածքներից է, որին հաջորդում է սրտառուչ մի պատկեր: Մեսրոպյան գրերը հոգ ու երգ դարձրած արցախցիները Վարդան զորավարի շոյող հայացքի տակ խմբվում են որպես զինվորյալներ՝

որ իրենց ՀԱՅԻ պատիվն ամենուր

բարձր են պահում՝

արեւամոտիկ,

այրեր՝ պնդաքերծ---

Արցախ-տուն սրբոց,

բայց՝

ոչ առուծախ,

Արցախ-

այսինքն, սար ու մարդ անթեք,

Արցախ-

այսինքն՝

առյուծն առյուծ է՝ թե արու, թե էգ...:

Պոեմի վերջին մասը կոչվում է «Մաշտոցի ոգին Ամարաս վանքում, վանքի գրերում, քար ու վեմի մեջ»: Տեսիլքային գրականության ավանդույթներին հավատարիմ, Վ. Հակոբյանը ստեղծել է մի պատկեր, որի միջոցով իմաստավորվել է հետմաշտոցյան շրջանի արցախյան ընթացքը՝ լեցուն արհավիրքներով, արարման կարողությամբ, ապրելու վճռականությամբ: Ավանդությունը պատմում է, թե ինչպես Ամարաս գյուղաքաղաքում Լենկ-Թեմուրը հանկարծակի հարձակումով կազմակերպում է կոտորած: Նա վաղուց լուր ուներ այդ վանքի մասին: Եվ երբ խուժում է վանք, տեսնում է, որ սուրբ մկրտության ավազանի մոտ տերտերը կնքում է նոր աշխարհ եկած մի ամարասցու, իսկ կողքին՝ նրա խոնարհ մայրը: Լենկ-Թեմուրը թրի մի հարվածով

միանգամից գլխատում է երեքին, ավերում ու ավարում վանքը: Սակայն յոթ օր ու գիշեր չանցած, մոլուցքը Լենկ-Թեմուրին նորից այստեղ է բերում: Նա տեսնում է, որ կամարների տակ այդ նույն վանքի տերտերը կնքում էր նոր աշխարհ եկած ամարասցու, իսկ կողքին՝ նրա խոնարհ մայրը: Լենկ-Թեմուրը թրի մի հարվածով մեկտեղ թրատում է այդ երեքին: Եվ որպեսզի Ամարաս վանքի վերակերտումը չկրկնվի, իր զինվորներին շարք է կանգնեցնում մինչեւ Արաքս, որ հայոց վանքի բոլոր քարերը թափեն գետի մեջ՝ վայրի մոլուցքի մեջ խորհելով:

*- Հայոց գետի մեջ շատ ենք հայ նետել,
թող այս հայագիր քարերն էլ հիմա
ջրի մեջ նրանց հուշաքար լինեն...:*

Յոթ օրից հետո Լենկ-Թեմուրը նորից է գալիս այստեղ: Եվ նորից տեսնում է, որ կամարների տակ Ամարասի սուրբ մկրտության ավազանի մոտ տերտերը կնքում է աշխարհ եկած մի ամարասցու, իսկ կողքին՝ նրա խոնարհ մայրը:

Լենկ-Թեմուրը շշմած, գլուխը առնում ու չքվում է այդտեղից: Մարդակեր բռնակալը, սակայն, ցանկանում է իմանալ գոյատեւման այդ գաղտնիքը: Եվ մի գիտունի ճանապարհում է՝ իմանալու այդ առեղծվածը: Արցախի շինականը գիտունին բացում է գաղտնիքը. «Մաշտոցի գիրն է ամեն մի քարի... ամեն մի խաչի... ամեն արմատի»-

*- Եվ այս ամենը,- շինականն ասաց,-
Մեր հոգու մեջ են,
նզին են հայի...
Ժողովուրդը, որ տառեր է գրում
անգամ իր թրին,
Աշխարհում նրան հաղթող չի լինի,
Առավել եւս՝
Ժողովուրդն այդ չի մնա գերի...:*

Պոեմի վերջին ակորդում Վ. Հակոբյանն ընդգծում է, որ ար-

ցախցիները իրենց բնույթը առել են մայր հողից, որ հողն Արցախա բնավ էլ հող չէ, այլ իմաստություն է, հավատ, սրտի կրակ է, կարմիր որդան, Մաշտոցի եւ Վարդանի ոգին է, որին պարտություն չկա:

«Մեսրոպ Մաշտոցն Ամարասուն» ստեղծագործությունն աչքի է ընկնում քնարաէպիկական պոեմի ժանրային առանձնահատկություններով: Նրանում կերպարները, դեմքերը բնութագրված են էպիկական եւ քնարական միջոցներով, բացահայտված քնարական ուժեղ գունավորմամբ: Մեսրոպ Մաշտոցին նվիրված բազմաթիվ պոեմների շարքում այն գրավում է ուրույն տեղ:

8. ՏՆՃԱՐԻ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԼՈՒՅԱԸ

Արցախի գրական կյանքը վերելք ապրեց: Ժողովրդի մաքառման ոգին մտավ երգի մեջ՝ փիլիսոփայական խորքով: Երգը ոչ միայն դարձավ օրերի թեժ արձագանք, այլեւ հոլովվեց որպես անցած եւ ներկա ճանապարհների իմաստավորում, որպես կենսափորձից ծնված խոհ ու խորհուրդ: Այդ խորհուրդը կոնկրետ ակունք ու հասցե ունի: Ակունքը՝ մեր անցյալը, հասցեն՝ ազգային ինքնորոշման իրավունքին ապավինելը: Վ. Հակոբյանի «Համանվագ», «Ես հողի մարդ եմ», «Շանթահար կաղնին», «Երանականչ», «Արցախա ծուխ» եւ «Մեսրոպ Մաշտոցն Ամարասուն» («Ամարասի զանգեր») պոեմները հուշում էին այդ մասին, որ դրանց հեղինակը պետք է ասի իր նոր խոսքը, իհարկե, լայն կտավով: Եվ, ի ուրախություն ընթերցողի, Վ. Հակոբյանը հյուսել է ծավալուն մի երկ, որին սպասում են տարիներով, որի երեւան գալը խորհրդանշում է գեղարվեստական խոսքի նվաճում գրական ընթացքի մեջ: Դա «Տաճարն աստժո» պոեմն է, որ հրապարակվել էր նախ որպես «Արցախ» հանդեսի հավելված:

Արցախը ներսից բացահայտելու նոր, հաջող փորձ է պոեմը՝ ծնված մերօրյա ցավից, հյուսված դարավոր մեր պայքարի ու երազանքի ոգեղեն գույներից: Մոտ երեք հազար տողից բաղկա-

ցած պոեմը բաժանված է չորս մասի: Չնայած մեծ ծավալին, պոեմը ընթերցվում է մեկ շնչով: Այն լուսեղեն նստվածք է առաջացնում ընթերցողի հոգում, հարստացնում նրա հուզաշխարհը, բորբոքում երեւակայությունը, խորհելու առիթ տալիս:

Պոեմը կարդալուց հետո վերհիշեցի Պ. Սեւակի ուղեցույց խոսքը. «Դարեր շարունակ բանաստեղծությունը կապել են ՍՐՏԻՆ, համեմատել ԵՐԳԻ հետ ու երգ էլ կոչել: Եվ ճիշտ են արել: Բայց ՍՐՏԻՑ ու ԳԼԽԻՑ բացի մենք ունենք եւս մի բան, որ ժամադրավայրն է այդ երկուսի եւ կոչվում է ՅՈՒՐԻ կամ ՈՒՐԻ: Արդի բանաստեղծությունն ընդհանուր ուրվագծումով (եւ ճշմարիտ բանաստեղծությունն առհասարակ եւ միշտ) ՎԵՐ է սիրտ կոչվածից եւ ԱՎԵԼԻՆ է երգ կոչվածից: ՍԻՐՏ ունենալիքը քիչ է... հարկավոր է նաեւ ՅՈՒՐԻ ունենալ... Այս «նոր»-ությունը շատ ավելի լավ հասկացել են տակավին ՅԻՆ հնդիկներն ու քրիստոնյաները՝ մարդկային անմահությունը հեղույսելով ոչ թե ՍՐՏԻ տեղափոխության, այլ ՅՈՒՐԻՒՄ այլակերպության վրա: Մենք (բազմադարյան մարդկությունը) լի եւ առատ ենք ՍՐՏԱՌՈՒՉ խոսքերով, ուրեմն եւ՝ մի քիչ էլ կուշտ ենք: Այժմ արդեն մենք առավել կարիք ունենք ՅՈՒՐԻՒՄ ասմունքի, ոգեղինացած ասքի: Մենք հիմա կարիք ունենք... այդ ՅՈՒՐԻ ԴԻԱԼԵԿՏԻԿԱՅԻՆ ավելի, քան սրտալի զեղմանը, որը (այդ սրտալի զեղումը) հիմքն է ՆԱԽՆԱԿԱՆ արվեստի, բայց ոչ երբեք զարգացած արվեստի...

Այս պատճառով էլ արդի բանաստեղծության ՅԻՄՆԱԿԱՆ ՏԻՊԱՐԸ, երաժշտական տերմինով ասած, ես համարում եմ ոչ թե ԵՐԳԱՅԻՆ մտածողությունը, այլ համանվագային (սիմֆոնիզմը), ոչ թե ՄԵՆԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ, այլ բազմաձայնությունը...» (Պ.Սեւակ, *Երկերի ժողովածու 6 հատորով, հ.5, 1974, էջ 258-259*):

«Տաճարն աստժո»-ն հոգու դիալեկտիկայի բացահայտում է՝ համանվագային հնչեղությամբ ու խորքով, զգացմունքային թրթիռներով: Վ. Ջակոբյանը ստեղծել է Արցախի հերոսական անցյալի եւ դրամատիկ ներկայի Ասք՝ շաղախված կորուստների ող-

բերգական զգացմունքներով եւ ժառանգածի պահպանման անխառը մտորումներով: Իր համար գեղագիտական մետաֆորներ ընտրելով զգացմունքն ու հերոսությունը, փակուղին ու ելքը, Վ. Չակոբյանը դրանով իսկ ընդգծում է մեր ոգու անմահությունն ու ընթացքի հավերժությունը: Համաժողովրդական ցավի ու երազի փիլիսոփայությամբ Չակոբյանը իմաստավորում է պատմական մեր ճանապարհը: Ներկան ու անցյալը հյուսված միմյանց, դառնում են այն ակունքները, որոնց հիման վրա բանաստեղծն ընդհանրացնում է մաքառման եւ ելքի խորհուրդները: Բանաստեղծական սուր զգացողությամբ, պատմական երեւոյթները համադրելու եւ վերլուծելու կարողությամբ Վ. Չակոբյանը անցյալը կամրջում է ներկային, խտացնում մեր ժողովրդի կենսափորձի կուտակումները, աշխարհընկալումների եւ աշխարհայեցողության գույները: Պատմության խորքերից առած իր հոգեւոր գանձերը, ոտքի տակ հողը հայրենի, սրտում պատկերը նրա, արցախահայությունն այսօր ձգտում է պահպանել իր ինքնությունն ու լեզուն, փոխվում է վերաբերմունքն աշխարհի եւ մարդկանց հանդեպ.

Եթե

Արցախի մանուկը

ծաղիկ չի նվիրում մորը,

ուրեմն՝

աշխարհում ոչ մի մայր

իր որդուց ծաղիկ չի

վերցնում,

ուրեմն՝

աշխարհում ոչ մի ծաղիկ ծաղիկ չի:

Մարդկային առիւնքնող ընդհանրացում. բանաստեղծն աշխարհի խիղճը գնահատում է բոլոր մարդկանց եւ ժողովուրդների ազատության գեղագիտական իդեալից: Դրանով է բացատրվում պոեմի զույգ թեմա-գաղափարի առկայությունը՝ անցյալը եւ

ներկան, աշխարհը եւ հայ ժողովուրդը:

Քնարա-էպիկական պոեմի ժանրի ընծեռած հնարավորությունների սահմաններում բանաստեղծը մերթ քնարական պատկերներով, մերթ՝ էպիկական, խտացնում է ժողովրդի բնավորության գծերը: Արցախցին իրավունք ունի հպարտանալու.

Ճանապարհը տաշել եմ ոտքերով

քարքարոտ

ու դրել իմ երազների մեջտեղում:

Քնարական հերոսը «իմաստնացած սուտ է» համարում բոլոր այն ձայները, որ գալիս են նյու-յորքներից, փարիզներից, «որ գալիս են դրսից, ոչ ներսից»: «Մեր ցավը շրջիկ,- հաստատում է բանաստեղծը,- մարմին մտած ասել է, որ երկրի բոլոր երակներով անցնում է ու վերջում մեր սիրտը պիտի խրվի»:

Ելքի իր փիլիսոփայությունն է անում Վ. Հակոբյանը: Դա դարերի փորձված ձայնն է, որ գոչում է չհավատալ նրան, երբ ասում են, թե «ձեզ համար են քայլում»: Ուրեմն՝

Թե ապրել է՝ մեր ցավերում ապրենք,

Թե թռչել է՝ մեր երկնքով թռչենք,

Թե թրջվել է՝ մեր ջրերում թրջվենք...

Պոետական ընդհանրացումների միջանկյալ արձակ բանաստեղծությունների մեջ Հակոբյանը լրացնում է ժողովրդի ինքնահաստատման խորհուրդը. «Հերոսը պիտի աճի հողից»: Վ. Հակոբյանը մեկնաբանում է մեր ժողովրդի անցած ճանապարհը: Գոյատեւման նրա փիլիսոփայությունը ժխտում է լացը, հաստատում սեփական ուժերին ապավինելը: Այդ իմաստով են հնչում պոեմի հարցադրումները: Ենթադրենք, Ամերիկայի ձայնը հաղորդեց, որ կոնգրեսմենները խիստ անհանգստացած են Արցախի հարցի առթիվ, իսկ ֆրանսիական թերթերը գրեցին, «թե ինչ իրավունքով է սպանվում սպանվողը»: Դրանից ի՞նչ օգուտ: Չպետք է մոռանալ, որ՝

*Չարի անունը կորցրել են,
չարը անուն չունի,
որ դիմեն,
բարու անունն է սառել վրան:*

Բանաստեղծը պոեմում պայմանական ելակետներ է ստեղծում, որոնց ենթաբնագրային բացահայտումները վերաբերում են մեր սիրտն ու հոգին կրծող ցավին՝ ստեղծված ոչ մեր մեղքով: Այդ ցավի պատկերման միջոցով պոետը քննում է աշխարհի անտարբերությունը եւ մեր անելիքները: Բանաստեղծը նկարագրում է համաժողովրդական ցավից շուտ մեծացող երեխային, որ կարողանում է վրայից նետել որբության խարանը: Ժողովրդի եւ աճող երեխայի կենսագրության, նրանց ճակատագրերի նույնությունը վերաբերում է նոր սերնդի քաղաքական հասունացմանը:

Վ. Հակոբյանը պոեմի սյուժետային գլխավոր գիծը հաճախ է ընդհատում մերթ անցյալի դեմքերի ու դեպքերի, մերթ ներկայի երեւույթների ու ներկայացուցիչների մեկընդմեջ նկարագրումներով: Սակայն դրանից չի ընդհատվում պատումը: Անցյալ-ներկա համեմատությունը նպաստում է երկի գաղափարական բովանդակության բացահայտմանը: Ստեղծվում է այն հոգեւոր կապը, առանց որի հնարավոր չէ պատմական առաջընթացը եւ գոյատեւման ապահովումը:

Բանաստեղծը դառնում է ջատագովն ու երգիչը իմաստուն ու գիտակցված սերնդափոխության: Այդ առումով հիանալի պատկեր է այս հատվածը.

*Մեծ երեխայի անունը դրինք,
Առան,
եւ պարետային ժամը նահանջեց,
եւ երկրի ընդերքից դուրս եկան ջրեր,
որ երգեն ցավը ծարավ երկնքի...:*

Աղվանքի նահապետ Առանի եւ այսօրվա արցախածին քաջազունների արյան միասնական եռքն ենք զգում պոեմի շատ

պատկերներում: Ըստ բանաստեղծի, արցախյան հողը իր շերտերում պահում է ե՛լ հատիկներ, ե՛լ հավերժածուփ ժպիտներ, որի հաստատումն է սրտաբուխ այս ճիչը. «Բա ի՞նչ են դառել Արմեն Հակոբյանի ժպիտները, երբ զինվոր «եղբոր» գնդացիորդ պարզվել է նրա գոտու լայնությամբ ու երկարությամբ»: Պոեմի պատումի մեջ Առանի տոհմից Արմեն Հակոբյանն է հառնում, Արմենի գիտակցված մահից՝ մի նոր Առան, որ որպես Սոսե, ընտրում է Սաթենիկին եւ խորհրդանշում մեր ժողովրդի հավերժությունն իր աստեղնամերձ սարերում:

Էպոսային տարրերի օգտագործումով Վ. Հակոբյանը գաղափարական բովանդակության ավելի շատ շերտեր է ներառում պոեմի մեջ:

Աշխատասիրության, հայրենասիրության, արարչագործության գաղափարներն են ընդգրկված աղքատ գյուղացու, նրա քաղաքաբնակ տղայի վերադարձի եւ սիրած աղջկա իմաստության մասին պատմող ժողովրդական զրույցում: Դրանով բանաստեղծը պատասխանում է Արցախը շեն պահելու կարելու հարցին: Արցախը հավերժորեն կմնա, եթե ապրենք նրա գրկում եւ մեր սրտի հրով վառ պահենք օջախները պապենական:

Վ. Հակոբյանի «Տաճարն աստծո» պոեմի երկրորդ՝ «Ամենատաք կետում» գլուխը քնարական մենախոսության հիանալի օրինակ է: Նրանում բանաստեղծը կոնկրետացնում է այսօրվա իրադարձությունները, բացահայտում հոգեկան ակեկոծումները՝ ցույց տալով երբեմնի սրբությունների ինքնամերկացման գործողությունները: Վ. Հակոբյանը պատռում է կեղծիքի քողը: Չարիքի կրող են դառնում անգամ այն տանկերը, «որոնք մերն էին», նույնիսկ կինոնկարներում.

*Պապս տանկերի հետքերով գնում էր,
Թեկուզ գնալը դժվար էր ու ճամփա չկար,
Իսկ հիմա
չի կարող, տանկը գնում է հողի վրայով,*

*Ուր ոսկորներն են՝ պապիս ու նրա
Նախնիների...*

*... եւ տատս չանջ անելով դեպի, չգիտեմ ուր,
զնուն-գտնուն է ռազմական գրական իր
հայի,*

*պոկուն է վրայից տանկի վրա տեսած
հնգաթեւ կարմիրը*

եւ նետուն է տանկերի ոտքերի տակ:

Բանաստեղծի վերաբերմունքը տանկերի հանդեպ ժխտական է: Նա չի կարող կեղծել ինքն իրեն, չհիասթափվել: Վ. Յակոբյանի պատմական հայեցողությունը դառնուն է խարազանող, նրա սիրտը ճչուն է ավստասանքի սեղմունից:

Չարն այնքան է դարձել սանձարձակ, սանձարձակն այնպես է օգտվում նոր «աստվածների» թույլտվությունից, որ պղծում-փշրում են անգամ անվանի մարդկանց արձանները, վանքերը:

Մեկը մյուսին լրացնող խոսուն էպիզոդներ կան պոեմում: Այդ ծանր ֆոնի վրա, սակայն, հուսահատության մվագներ չենք զգում պոեմում: Բանաստեղծը դարձյալ դիմում է պատմության զարմից սերված նոր սերնդին՝ հանձին Արցախի զավակ Առանի, որ չընկրկի, շարունակի ճանապարհը:

«Տաճարն աստժո» պոեմի սյուժեն կտրտվածքներ ունի, սակայն, միաժամանակ, նկատում ես ոգեղեն մի սերտ կապ տարբեր շերտերի միջեւ: Բանաստեղծը, ինչպես տեսանք, առաջին մասում պատմական անցյալի հորիզոններից փնջում է մեր նախնիների հոգեբանական-փիլիսոփայական ծփանքները, իսկ երկրորդում ներկայացնում է պարետային ժամերի արանքում ճնշումից ադամանդվող եւ ցասումից հրի փոխվող մեր սիրտն ու հոգին, մեր տվայտանքներն ու ակնկալությունները: Պոեմի երրորդ մասի պատումը միանգամայն այլ երանգներ է ներառում, էպոսային տարրը ավելի է զգացնել տալիս իրեն, բանաստեղծի խոսքը, կերպարների գործողություններն ու երկխոսությունները մի նոր

խորքով են բացահայտում արցախահայության ֆիզիկական ու բարոյական կոփվածքն ու ինքնատիպությունը: Բանաստեղծը պոեմի երրորդ մասը վերնագրել է «Յուրուհի Շամիրամ»: Պատմողական-էպիկական շնչով, քնարական ապրումների շաղախով բանաստեղծը կերտել է բնավորություններ, որոնք պատմական-առասպելական լինելով հանդերձ, մեր օրերի միջով քայլում են դեպի գալիք: Այստեղ առավել է ընդգծվում բանաստեղծի պատմափիլիսոփայությունը: Հայ ժողովրդի դարավոր դժվարին, բայց հերոսական երթը գնահատվում է որպես նրա հարատևման կարելու ակունքներից մեկը: Այդ երթը հավերժական մեր ճանապարհն է, որ այսօր փռվում է մեր ոտքերի տակ՝ հաղորդելով մաքառելու եւ ապրելու վճռականություն: Հակոբյանը հպարտության զգացումով է բնութագրում մեր նախնիներին: Նրանց քաջության շնորհիվ է, որ սարերը մեզ են հասել հայաշունչ, որ գետերը երգում են հայերեն, որ աստղերը փայլում են հայաժպիտ: Դրանք միասին կոչվում են Արցախ: Ինչպե՞ս պահպանել այն եւ ո՞նց պաշտպանել: Այսօր այդ հարցերն են վառում մեր հոգին: Այդ հարցերին համոզիչ պատասխան է տալիս բանաստեղծը: Սաթենիկի եւ Առանի կերպարները ստեղծված են արտակարգ երանգներով: Սաթենիկը դեպի հայրենիքն ու իր Սերն ունեցած վերաբերմունքով լրացնում է Ծովինար-Արմաղան-Խանդուբ-Գոհար շարքը: Նա ներկայացվում է որպես «առավել աստվածուհի...քան աստվածուհին»: *Նա գեղեցիկ է, իր հմայքներով «մարմնամարմանդ, մարմնամոմիկ, մարմնածոմիկ, մարմնադողիկ, մարմնաշողիկ, մարմնապողիկ, մարմնածավիկ, մարմնածաղիկ, մարմնահողմիկ, մարմնամեղմիկ, մարմնածեղիկ, մարմնագեղիկ, մարմնամեղիկ, մարմնամեղվիկ, մարմնամեղրիկ»:* Բանաստեղծը նրան համարում է ոգեղեն, «երկնքի համ կա թևերի վրա»: Թարմ ու գտնված պատկերային միջոցներով Սաթենիկը բնութագրվում է ոչ միայն արտաքին, այլև հոգու գեղեցկությամբ: Նա հայ կնոջ հաջողված մարմնավորում է: Օգտվելով պատմագրական եւ

պատմաբանական աղբյուրներից, Վ. Հակոբյանը բանաստեղծական նախանձելի պատումի բարձրության է հասցրել ժողովրդական մի շարք հնագույն սովորություններ: Նա ուղղակի նոր շունչ է հաղորդել թոնրակրակի շուրջ սիրող զույգերի երեք պտույտ գործելու հեթանոսական սովորությանը: Այդ պատկերը գեղագիտական առավել խորք է ստանում, երբ կույսն Սաթենիկ Առանին պատվիրում է պսակից առաջ գնալ եւ մարտնչել գոռոզ Ասորեստանի դեմ, նվաճել «պատիվը հայոց բարձրիկ աշխարհի»: Առանը ընդունում է Սաթենիկի պատգամը եւ վերադառնում է հաղթանակներով, իր հետ բերելով Շամիրամի գեղեցկությունը խորհրդանշող ուլունքը... Սաթենիկի եւ Առանի հանդիպման տեսարանը լեզենդային մի պատկեր է, որ խորհրդանշում է հայրենիքի ճակատագրին միահյուսված սիրո անպարտելի ուժն ու անմարում հմայքը: Պոեմի վերջին մասի համար որպես բնաբան բանաստեղծը Մ. Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմությունը» գրքից բերել է հետեւյալ հատվածը. «Վաչագան արքայի ժամանակ կատարվում է տիրոջ ասված խոսքը, թե՛ «նա, որ գործում է եւ ուսուցում, աստժո արքայության մեջ մեծ է կոչվում»: Հենց այս արեց աստվածասեր Վաչագան թագավորը»:

Պոեմի վերջին՝ չորրորդ մասը ոգեշունչ խոսք է հայոց Արեւելից կողմանց արքա Վաչագանի մասին: Այստեղ պատմական անցյալը տեսիլքային պատկերների միջոցով շունչ առած, նոր իմաստ է հաղորդում ներկա ընթացքին: Նախնիների եւ այսօրվա սերնդի փոխհարաբերության պրոբլեմը բանաստեղծը գնահատում է ժողովրդի հավերժությունն ապահովելու գեղագիտական իդեալի իր դիտակետից: Վաչագան արքայի հանդեպ քնարական հերոսի երախտագիտության զգացումը ակունքվում է պատմական այն դիրքից, որ խաղացել է արքան: Պոեմի վերջին մասի հենց սկզբում «մաքուր եւ անլաց ծաղկի» պատկերը խորհրդանշում է ժողովրդի անթառամ հիշողությունը, առանց որի չկա պատմություն եւ չի լինի ապրելու տենչ:

Այդ ծաղիկը միաժամանակ դաս է, որի միջով դարերը կարող են «ճամփա ընկնել», «գալ ու գտնել մեզ», բացել մեր պապերի հերոսական էջերը Մարութա սարերի լանջերին, «Արցախա սուրբ աշխարհի ճամփաներին»: Ծաղկի քնարական հայացքը վերափմաստավորվում է պոեմում, դառնում կեցության ավիշ:

*ու ծաղիկը վառվող ջահ է,
ու ծաղիկը սուր է ձեռքիս-
թրատում են խավարը ես,*

*ու ծաղիկը ջուր է ձեռքիս-
հողն ինձնով գարունվում է,
եւ ես ծաղկի ձեռքին հող եմ,
կոկոնվում է հույսն ինձ վրա...:*

Պոեմում ծաղիկ-ձեռք-ճանապարհ եռանկյունին համանվագային հնչեղություն է ձեռք բերում: Հայրենի օջախի բանաստեղծական պատկերն ամբողջանում է Տաճարի տեսքով, դեպի ուր տանում է բանաստեղծի ուղին:

*Եվ ճանապարհը ինձ տանում է Տաճար:
Տաճարը ձեռք է, բարձրացող հավատ:
Տաճարը աչք է, լույսի պատուհան:
Տաճարը սիրտ է, սիրո վեհարան:*

Տաճարի եւ քնարական հերոսի փոխադարձ կապը բանաստեղծական մետաֆորների օգնությամբ ներկայացվում է արտակարգ վիճակների հյուսվածքով, ներհյուսումն այնքան անմիջական է բացահայտվում, որ հավատում եւ միանում ես բանաստեղծին եւ նրա հետ միասին կրկնում. «Ես եմ Տաճարը»: Այդ Տաճարի գույները պոեմում խտացված են որպես «Վաչագանի ափից ելած» Հակոբավանք ու Ջրվշտիք, Հռեկավանք ու Վարարակն...: Դեպի դրանց տանող առեղծվածային ճանապարհին քնարական հերոս-բանաստեղծի հետքերն են, որոնցով հպարտանում է ու միաժամանակ իմաստնացած բացականչում:

*Անցյալն, այո՛, պիտի ապրել
ու վերապրել,
բայց ներկայի հաշվին՝ երբեք,
այլապես մենք
կկորցնենք
ձեռքից կտանք եւ... ապագան:*

Պոեմն ինչքան մոտենում է ավարտին, այնքան պատմականն ու առասպելականը ծիածանվում են միաձույլ, երկրայինն ու ոգեղենը որոշակի ընդգծում են բանաստեղծի միտումը: Արքա Վաչագանի եւ դիցուհի Անահիտի կերպարները, արարչական կանոնագրքի եւ նահատակ Գրիգորիսի մասունքների նկարագրությունը պոեմը դարձնում են անցյալի եւ ներկայի, երազանքի ու սխրանքի կտակարան:

9. ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՊԱՏԳԱՍԸ

Մեծն *Պ. ՍԵՎԱԿԸ* 1948 թ. հրատարակած առաջին ժողովածուն վերնագրեց «Անմահները հրամայում են»: Բանաստեղծը անմահներ էր համարում նրանց, ովքեր Հայրենական մեծ պատերազմի տարիներին իրենց կյանքի գնով մարտնչեցին ֆաշիստական դեղին ժանտախտի դեմ եւ մարդկությունը փրկեցին ստրկացման սարսափելի վտանգից, դառնալով լուսատու աստղեր գալիք սերունդների ճանապարհին: Խոսքը պատերազմական դաշտից տուն չվերադարձած քաջերի մասին է, ում արյան գնով «աղետը կանխվեց, ու վտանգը անցավ», «որոնց շրթից... գալիքն է խոսում»: Եվ ոչ միայն այդ: Նրանք իրենց մահով ձուլվել են սերունդների հավերժական երթին, որպես ժամանակակից եւ խորհրդատու:

*Ձգա շունչը դարի երակներով, արյանք,
Մեր արյան պես եղիր վառ ու անմեռ,
Հիշիր, որ միասին մենք փրկել ենք համայն
Աշխարհի բախտը եւ կփրկենք դեռ:*

(«Անմահները հրամայում են»):

Իսկ մինչեւ այդ, 1945-ի մայիսի 9-ին անմահ Վարպետը փառաբանելով Մեծ հաղթանակը, չի մոռանում նրանց, ովքեր նահատակվեցին հեռավոր ափերում հանուն Հայոց արեւի հավերժացման: Այդ ճշմարտության գիտակցումով բանաստեղծի քնարական հերոսը՝ զոհվածի հայրը, առաջարկում է խմել նաեւ «իր որդու հանգստյան համար»: Եվ ապրողները արձագանքում են երախտագիտությամբ.

*Գլխարկներն իսկույն հանում են նրանք,
Խոր ակնածանքով լռում են մի պահ,
Խմում են անձայն զոհվածի համար
Եվ հեղում զինին սուրբ հացի վրա:*

(«Մեծ հաղթանակի օրը»):

Այստեղ գինին ու հացը դառնում են սուրբ զգացումի մետաֆորներ, ասել է թե՛ կյանքի հավերժական ընթացքի առողջ երակներից մեկը՝ անցյալը ապագային կամրջող հոգու պարտքը: Այդպես էլ տեղի ունեցավ մերօրյա ընթացքի մեջ: Արցախյան ազգային-ազատագրական պայքարը փառքով պսակվեց առաջին հերթին տասնյակ հազարավոր ազատամարտիկների անձնուրացության շնորհիվ: Արցախից մինչեւ Հայաստան, Հայաստանից մինչեւ Սփյուռքի տարբեր գաղթօջախներ սկիզբ է առել մի սրբազնագույն ավանդույթ՝ հարսանյաց հանդեսներում լինի, թե տխուր ծիսակատարությունների ժամանակ, բոլորը առաջին հերթին ոտքի վրա հիշում են սրբացած զոհյալներին, բաժակներ խփում, բյուրեղյա զնգոցների մեջ ասես լսելով նրանց անմարում ձայնը՝ ապրելու, արարելու պայքարը շարունակելու, սերունդների ազատ կյանքը ապահովելու խորհրդով: Արցախյան պատերազմի ամենաթեժ օրերից սկսած հյուսվել եւ հյուսվում է նահատակների անմահության երգը: Չկա մի բանաստեղծ, որ արտահայտած չլինի ժողովրդի անհուն վիշտն ու կարոտը նրա բազում նահատակների հանդեպ: Եվ դա բնական է: Հայ ժողովրդի դարավոր պատմությունը, հիրավի, մաքառումների եւ ակն-

կալությունների, կորուստների եւ վերածնվելու հոլովում է: Անմահ եղիշեի «Մահ իմացեալ՝ անմահութիւն է» դասը հայ ժողովրդի կողմից ընդունվել է որպես կենսափիլիսոփայություն: Եվ այն որպես աշխարհայեցողություն, կրկին ծիածանվեց արցախյան ազգային ազատագրական պայքարի տարիներին: Դա ոչ թե կոչ է, այլ համոզմունք, իսկ համոզմունքը դառնում է պայքարի սրբազնագույն պատգամ, հաղթանակի ավիշ: Բացի այդ «Մահ իմացեալ՝ անմահութիւն է» համոզմունքը դառնում է նաեւ թեւածող հոգի՝ կապված եւ նահատակված յուրաքանչյուր անհատ հերոսի անվանը եւ ընդհանրության մեջ՝ դարաշրջանի զոհյալների աստղաբույլի հետ: Հայ ժողովրդի նորօրյա նահատակները երգի փոխվեցին որպես երախտագիտության արտահայտություն, սիրո եւ հավատի տուրք: Ջոհյալ քաջերին մվիրվեցին բանաստեղծություններ, բալլադներ, լեգենդներ, պոեմեր, չափածո ակնարկներ: Այդ ստեղծագործությունների կառուցվածքային առանձնահատկությունները ակունքված են ռեալիստական հենքից եւ բանաստեղծական երեւակայության արտահայտամիջոցներից: Գեղարվեստական այդ հյուսվածքների հերոսներ են դարձել եւ ականավոր զոհված զորապետները, եւ շարքայինները, որոնք միասին հանդիսանում են ժողովրդի խիզախության, խղճի, հայրենասիրության, կենսասիրության խորհրդանիշեր եւ հավերժական ուղեկիցներ ու դրոշակակիրներ:

1992 թ. Ս. ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԸ ստեղծեց իր ռեքվիեմներից մեկը՝ «Գանձասարի վանքի մորմոքը» խորագրով: Ռեալիստական գույներով ներկայացնելով Արցախի «արյունով փակված դաշտերը, ձորերը, լեռները», սրտի մորմոքով դիմում է.

*Որդիք, իմ քաջ որդիք, դուք մինչեւ ե՞րբ մեռնեք,
Մեղք են ձեր մայրերը, ա՛խ, մե՛ղք եք դուք:*

Բանաստեղծուհին պատմական էքսկուրս կատարելով, հիշեցնում է մեր նախահայրերի մասին, որոնք «յոթ հարյուր տարի աղոթեցին լույսին, մինչեւ խավարն էր անվերջ վխտում չորս

դին»: Յոթ տարի արցախցիները կանգնել են «չարերի դեմ», «բայց չեն տեսել այսքան սադրանք ու սուտ»: Աշխարհը «առավել մութ է դարձել», ոսոխը «նենգ ու նեռ»: Ս. Կապուտիկյանը զարմացած է դարի խառնիշփոթ ընթացքից, նա տեսնում է, «թե ինչպես խաչապաշտն անգամ» պիղծ նշան է բռնել արցախցու «կրօքի խաչին», նա մայրական ցասունով ընդգծում է. «Էլ ո՞ր աստծուն հղեն ճիչը իմ դողանջի»:

Ցավի ճիչը դառնում է ավստսանքի զգացում, բանաստեղծուհին ասես մեղանչում է այն բանի համար, որ չի կարողանում օգնել Արցախսա իր հարազատներին, իր զավակներին.

*Մեղա՛, քնած որդիք, մեղա՛, մայրեր անքուն,
Մեղա՛, որբեր, հարսներ իմ բնավեր,
Դուք ամեն ինչ արիք, որ ինձ պահեք կանգուն,
Իսկ ես, չկարողացա՛ ես ձեզ պահել...*

Արցախյան պատերազմը տեղի ունեցավ Արցախ աշխարհում, սակայն դա հայ ժողովրդի միասնական ուժերով մղված ճակատամարտ էր, որը դեռ չի ավարտվել, շարունակվում է աշխարհի չար ուժերի մեղքով: Արցախյան ճակատամարտին իրենց նվիրումը բերեցին բանվորն ու գյուղացին, ուսուցիչն ու ինժեները, բանաստեղծն ու գիտնականը եւ այլոք: 1992 թ. Մարտակերտի ազատագրական մարտերից մեկում զոհվեց բանաստեղծ Սամվել Շահմուրադյանը: Նրա մի ձեռքին ավտոմատն էր, մյուսում՝ գրիչը: Ավստսանքի մի ալիք անցավ նրա ստեղծագործող գրչեղբայրների սրտերով, Ս. Կապուտիկյանը հյուսեց հիշատակի սրտառուչ երգը.

*Լավերն են գնում, լավագույները,
Իսկ դու լավերից լավագույնն էիր:
Ու քո գնալով պակասեց սերը,
Պակասեց լավը, պակասեց բարին,
Եվ քո ի՞նչ տեղն էր մահերն ու մարտը,
Քոնը՝ գրիչն էր, լույս ու արարում,*

*Տեսնես գիտե՞ր քեզ սպանող մարդը,
Որ դու, դու մարդուն շա՛տ էիր սիրում...
(«Սամվել Շահնուրայան»)*

Ճակատագրի դառնության միջով Ռ. Դավոյանը իր հոգու մեջ առած նաեւ Արցախի ցավը, ստեղծեց հայտնի «Ռեքվիեմը» եւ տարիներ հետո արցախյան պատերազմի ժամանակ զոհյալ ազատամարտիկների հրամանով նրան գումարեց երկրորդ մասը: Այդ կապակցությամբ Դավոյանը գրել է. «Այս «Ռեքվիեմը» ողջերի համար է: Մարդը որպես խնդություն, որպես ծիծաղ է լույս աշխարհ գալիս, եւ ամենագորավոր ծիծաղն անգամ, ամեն վայրկյան քսվելով կյանքի չեչաքարին, փոքրանում, թուլանում եւ ի վերջո ոչնչանում-վերանում է: Մեր երկրով անցած բոլոր պատերազմների զոհերը, հայոց ցեղասպանության, խորհրդային մեծամոլական քաղաքականության բոլոր ֆիզիկական բնաջնջումները կենդանի մարդու ամենօրյա հոգեւոր եղեռնի շարունակությունն ու նյութական արտահայտությունն են: Այս ձեւակերպումը ես արել եմ սրանից երեսուն տարի առաջ, 1967 թ. օտար կինեմատոգրաֆիստ լրագրողների համար, որոնք հատ ու կենտ թափանցում էին պատերից ներս եւ այլախոհներ էին փնտրում գողունի: Դա արվեց «Ռեքվիեմի» դասական պատկերացումից իմ շեղումն ազատագրելու համար» (Ռ. Դավոյան «Ռեքվիեմ», Երեւանի համալսարանի հրատ., 1997 թ., էջ 3):

Ռ. Դավոյանի նորօրյա մոտեցումը փրկության ելքին, փոխված է: Ողբերգությունը արդեն դառնում է ճիչ: «Հայոց հազարամյա վերքից» չխարխափելով, բանաստեղծը կրկին նժարի վրա է դնում հազարամյա մեր վերքի կսկիծը, խոնարհվում մարտիրոսվածների առջեւ, որոնք պատկերվում են որպես ապրողների հոգու եւ երազանքի շարունակություն.

*Նրանք կենդանի մեր մարմինն էին,
Մեր հասկը եւ կամ՝ ցողունը շքեղ,
Մեզնից չպոկված՝ մտան գերեզման,-*

*Մենք նրանց վրա պատարագ չարհնք,
Եվ չերգեցինք կորստյան երգեր,
Եվ ծեսը չարհնք*

Մեր հոգիների անմահ ներսուզման:

Ռ. Դավոյանը տառապում է իմաստուն ցավով եւ այդ ցավից էլ ծնվում է նրա պայքարի երգը, որ ներառում է մարդկային կենսափիլիսոփայությունը .

Մարդկանցով որքան որ հողն է ծածկված,

Այդքան էլ մարդիկ ծածկված են հողով:

Եվ այդ հողով ծածկված մարդկանց ոգիներն են, որ ոգեկոչում են ապրողներին.

Առաջին վիշտը աշխարհի վրա,

Չէր կարող մենակ, ուզում էր ընկեր,

Նրա մեջ վշտի տենչանքն էր եռում,-

Վշտերի հոտը քշում ենք հիմի

Դեպի անանուն, անսահման հեռուն:

(«Աշխարհը լիքն է»)

Մեկ-մեկ թվում է, թե մենք հայերս, սիրում ենք մարդկանց, ազգերին, աշխարհը, իսկ նրանք անտարբեր են մեր ճակատագրի հանդեպ: Մեկ-մեկ խորհում ենք, որ մենք էլ աշխարհի հանդեպ լինենք անտարբեր, չար: Խորհում ենք, բայց չի ստացվում, որովհետեւ մարդկանց հանդեպ անտարբեր մնալը անհարիր է մեր ազգային բնավորությանը, որովհետեւ տառապած ժողովուրդը ուրիշի տառապանքը չի ցանկանա: Յնարավո՞ր է, արդյոք, որ հայը հրաժարվի ավանդական իր բնավորությունից, արարելու եւ գիրը սիրելու իր երազանքից: Ո՛չ: Ահա արարման կարողությամբ ու ստեղծագործելու երազանքով հայը ավելի քան մեկ ու կես դար կառուցեց Բաքուն, այն մղեց քաղաքալրության մայրուղին եւ վերջում ազերի-թուրքը սուր բարձրացրեց նրա դեմ, ոչ թե մի ուրիշ տեղ՝ մարտադաշտում, այլ հենց իր համար կառուցած մայրաքաղաքում: Բաքուն կառուցողների

շարքերում էր նաեւ Արցախի Ղուլյան գերդաստանը, որի ժառանգներից մեկը՝ կապուտաչյա Աշոտը, պետք է համոզվի, որ ազերի-թուրքի հետ կռվի մեջ պետք է խոսել զենքով: Եվ Բաքվից Արցախ բռնագաղթված Ղուլյանների գերդաստանից հառնեց այն կորյունը, որի անունը պետք է մտնի մեր նորոյա հերոսամարտի մատյանը, դառնա դաս, աստղալույս սերունդների ճանապարհին: Հայ բոլոր բանաստեղծները, առանձնապես Արցախում ապրող եւ ստեղծագործող երգիչները ստեղծել են երգերի մի մեծ շարք, որի կենտրոնում ԱշոտՂուլյանն է՝ Բեկորը, որ ոչ միայն խորհրդանշուն է արկի բեկորը, այլեւ դեպի հայրենի Արցախ ունեցած իր մեծ սիրտը:

Ընթերցում ես Գ.Գաբրիելյանի, Յ. Բեգլարյանի, Ս. Խանյանի, Ռ. Եսայանի, Դ. Միքայելյանի եւ ուրիշ այլ բանաստեղծների ստեղծագործությունները՝ ձոնված Բեկորի կյանքին եւ անմահությանը, սիրտդ պարուրվում է եւ կարոտի, եւ հպարտության զգացումով: Թշնամու համար սարսափ դարձած Բեկորը զոհվեց 1992-ին: Բայց մի նոր սկիզբ առավ հերոսի կյանքը: Այս թեմայի արժարժման ընթացքի մեջ եւս Վ. Հակոբյանն ասաց իր սրտառուչ ու պատկերավոր խոսքը: Նրա «Բեկոր լույսի», «1992, ինը մայիսի» եւ այլ գործեր սրտացավ քաղաքացու, նվիրյալ հայրենասերի խոր ապրումների փունջ են: Բեկորին նվիրած երգի մեջ Վ.Հակոբյանը նշում է, որ Բեկորի հետքից ասես լեռն ի վեր սահում էր նավը, ասես «արեւը հրանոթի փող է», ասես «Լեռը բեկորվում...» էր: Հազար ափսոս, որ էլ «չի քաշվելու մատը ձգանից», բյուր-հազար ափսոս, որ.

*Ծարավ շուրթերը կպել են հողին,-
Եվ պար են բռնել հրեշտակները...*

Սակայն այդ բազմաշուրթ ափսոսանքի հենքի վրա հառնում է բանաստեղծի հավատը՝ ծնված Բեկորի հավիտյան ճառագող սրտից.

*Ջարկս իջնում է Միերի ժայռին,-
Եվ ելնելու է՝ ով պիտի ելնի,
Եվ հողն Արցախա աղոտվում է լուռ,*

*Եվ ես թեև եմ ձեռում իմ վշտից,
Եվ բերդս տուն է՝ Տաճար Աստծու:*

(«Բեկոր լույսի»):

Վ. Հակոբյանը սրտի ցավով է հիշում եւ Արցախի մի ուրիշ կորյունի՝ Վլադիմիր Բալայանին: Բանաստեղծը եւ Վլադիմիրին, եւ մյուս նահատակներին համարում է գալիք ճամփաների փարոսներ, ընդգծում, որ նրանց ոգեշնչումով «Վրնջում են միանգամայն հազար ձիեր...»: Եվ ոչ միայն այդ.

Առավոտը իր ցողունի վրա դողաց,-

Քար ու կողակ խաչենն ի վեր հուր են տանում,

Վերքից կաթած ցավը վանքի քարին ծլեց,

Ճաքած սիրտը նռան բոց է աշնան կրծքին...

Սուրբ Սոսեի ձեռքը զանգի թելն է քաշում...

(«Ձրաբերդ»)

Անվանի բանաստեղծը, որի սիրտը Արցախա հողից ու ջրից է հունցված, իր երգերում մատնացույց է անում այն մղձավանջը, տագնապը, որ ապրեց արցախցին՝ մասնակիցը եւ ականատեսը հայ ժողովրդի ազգային ազատագրական թեժ պայքարի:

1993-ի սկզբին, չարաբաստիկ մի օր միայն Ստեփանակերտ քաղաքից ժողովուրդը չորս տասնյակ զոհյալների հանձնեց հողին: Իսկ եւ իսկ մղձվանջ էր դա: Սակայն սուրբ նահատակներին հուղարկավորելով, ապրողների վիշտը չէր թաղվում հողում: Ընդհակառակը հարազատի, արյունակցի, հայրենակցի մի չքնող ցավ ծուլվում էր նրա արյանը, երբ չորս բոլոր տեսնում էր սեւաշոր երիտասարդ որբեւայրի կանանց, որբ երեխաների, սգացող ծնողների, քրոջ, եղբոր մոլորված քայլերը, արցունքոտ աչքերը, ժպտացող հայացքը... Էլ ի՞նչ բանաստեղծ, եթե նա շրջանցեր համաժողովրդական այս վիշտը, չասեր ցավի եւ սփոփանքի իր խոսքը: Ցավի եւ սփոփանքի մի ինքնատիպ հյուսվածք հանդիսացավ Վ. Հակոբյանի «Գողգոթա» քնարական պոեմը:

Պոեմի կառուցվածքը, կատարումը, խոսքաշարը, հոգեբանա-

կան բացահայտումները շաղախված են այրող արցունքով, համեմված ժողովրդական հավերժացած սգի խորքով, ապրելու պահանջով, թռչելու ծարավով: Բանաստեղծի մտահղացումները անմիջականության այնպիսի թրթիռներ են դարձել քնարական հերոսի սրտում եւ շրթին, որ ընթերցողը իրեն զգում է ցավի հորձանուտի մեջ՝ ձեռքը կարկառած դեպի Վերինն ու Արեւը:

Բանաստեղծը հենվելով ժողովրդական սգո երգերի թրթիռներին, ունկնդրելով սգվոր կանանց մղկտոցները, արտահայտում է եւ իր բողոքը աշխարհի չարութեան դեմ: Պոեմի հերոսուհին՝ Այրին, «Բոբիկ ոտքերի արյան ցուլքերը թողնելով քարերին, իսկ փեշը լացող տղեկի բռան մեջ, հասնում է թումբը հեռավոր...»: Չենց այս հողաթմբից էլ բանաստեղծը լսելի է դարձնում կյանքի ընկերներին կորցրած այրիների մորմոքը.

*Դու ի՞նչ իրավունք ունեիր մեռնելու,
Չողի տակ դու ի՞նչ գործ ունես անելու,
ո՞վ պիտի ինձ համբուրի, սիրի, գուրգուրի,
չապրեցիր էլ - որ երեխադ ծնվի, տեսնես
տղա՞ է, աղջի՞կ է,
Ես նրան հո իմ տնից չե՞մ բերել,
Ի՞նչ էիր խոստացել, մոռացել ես ամեն ինչ,
ուրացել ես ամեն ինչ, դավաճան ես դու...*

Բանաստեղծական թարմ հնարանքները շարունակվում են մերթ առասպելական ավանդությունների ծփանքով, մերթ միջնադարյան աղոթքների շշուկներով, մերթ առօրյա վշտի օրագրային կրակներով: Այրու լացը մոլորյալ եւ անօգնական կնոջ բողոք չէ, այլ հավատարիմ Սիրո կորստի ցավ: Սերը ինչքան խորն է, կորուստը անքան մեծ է, լացը՝ մորմոքուն, կարոտը՝ բորբոք: Այրին հողաթմբի մոտ իր վճիռն է հայտնում.

*Ես քեզ կհանեն շիրիմից,
Ես չեմ թողնի քեզ այստեղ,
Ես կլիզեմ քո վերքերը,*

*Ես քո ձեռքը կդնեմ իմ
սրտի վրա
եւ դու կարթնանաս, կելնես, կժպտաս
ինձ համար:*

Չեթանոս հայերի հավատալիքների թելադրանքով Այրին պատրաստ է արալեզի հանգույն բուժել սիրեցյալի վերքը: Եվ դա անում է ոչ այնքան իր անձնական երջանկությանը թելեր տալու համար, այլ Սիրո հիշատակի՝ տղայի համար: Պատկերա-յին այս հյուսվածքի մեջ կինն ու մայրը հառնում են ցավից, եւ հաղթում է մայրը.

*Ինձ համար
չեմ ասում, տղայիդ համար եմ ասում:*

Ցավի ալեկոծումը շարունակվում է: Սգացող այրին կնոջ-մոր կերպարից հառնում է, ժողովրդի եւ հայրենիքի դեմ առ դեմ կանգնում աստվածային եռթյամբ, քաղաքացու, զինվորի կերպարով.

*Ինձ համար չեմ ասում - մայրիկիդ համար եմ ասում,
Ինձ համար չեմ ասում - սարերիդ համար եմ ասում,
ասում եմ թշնամու համար - թշնամուդ համար եմ ասում:*

Վ. Հակոբյանի գրիչը, հիրավի, այստեղ փոխվում է գեղանկարչի վրձինի, որ կտավի վրա ստեղծում է սիրող ամուսնու, սրտառուչ հոր, հոգատար զավակի, հայրենասեր դյուցազնի եւ նրա ավանդները ցաված սրտի մեջ առնող այրիացած կնոջ կերպարը: Հակոբյանը հերոսուհու քնարական զեղումների միջոցով մեծարում է ե՛լ Այրուն, ե՛լ Ջոհվածին: Այստեղ է, որ կարելի է ողջունել բանաստեղծին, նման դեպքում է, որ ընդգծվում է ստեղծագործողի վառ երեւակայությունը:

Պոեմում զգացվում է նաեւ բանաստեղծի ե՛լ կենսափորձը, ե՛լ դիտարկումները, ե՛լ ստեղծագործական կուտակումները: Այդ են վկայում հերոսների հոգեբանության արծարծումները եւ բանաստեղծի պատկերավոր արտահայտամիջոցները.

- Աստված իմ...

Մոր ցավից երեխան սկսում է լաց լինել...

Եվ ոչ միայն այդ: Ձոռիս լը՝ պոեմի հերոս Վարուժանը, գալիս է ընդառաջ: Նահատակների երազանքների եւ ապրողների պարտականությունների բանաստեղծական մարնավորման հի-անալի օրինակ: Տեսիլքային Վարուժի շրթերից արտաբերվող խոսքը բերենք.

պիտի չմեռնեի,

քանի որ միշտ հիշում եմ, որ սպասում ես,

քանի որ մենք միացած այնքան,

որ մեկն ենք,

եւ ընդամենը իմ մասն էր գնդակված,

քո մասը հեռու էր գնդակվելուց,

եւ

կես մասով ոչ ոք չի մեռնում...

Վեհանձնության ժողովրդածին զարկերակը Վարուժ-նահա-տակի գեղեցիկ հոգու մի երանգն է կազմում: Այստեղ եւս Վ. Հա-կոբյանը շահել է: Շահել է ոչ այնքան իր համար, այլ ընթերցողի, որովհետեւ ընթերցողները վաղուց են հոգնել չափածո ճառերից: Վ. Հակոբյանի այս պոեմը ժխտում է ամեն մի ընդգծված, ոչ ռե-ալական միտում: Բանաստեղծը վաղուց է համոզվել, որ արվես-տի ուժը ճշմարտացիության մեջ է: Այրին վառված սրտով Վա-րուժ-նահատակին հաղորդում է իր կսկիծը, «Դավաճան ես դու»: Վարուժի ձայնը Այրու հոգում էլեւէջում է.

Բայց դու ինձ դավաճան մի ասա,

որ սիրտդ չքարանա

ու ամբողջովին հողին գումարվեն,

քարը ուշ է հող դառնում, քարը չի մեռնում:

Պոեմի դեպքերը տեղի են ուենում Ացախում եւ պտտվում ար-ցախցու ճակատագրի շուրջ՝ կոնկրետ Ստեփանակերտում: Իրականի եւ երեւակայականի համաձույլ ցոցադրումով բանաս-

տեղծը ընթերցողներին է հանձնում մի կտակ, որ ապրեցնելու ուժ ունի: Վարուժի առաջին համբույրը Այրու աչքերին թրթռում է «Ստեփանակերտի մի անշուք փողոցում», եւ ցավից խշշացող ականջներում հնչում է նրա ձայնը. «թող նա, ով կհանդիպի քեզ, ավելի շատ սիրի քո ազատությունը»: Իսկ Այրին ցավաբեր օրերի միջից Վարուժին խոստովանում է.

*Երեկ երագիս մեջ գնում էի մի տեղ
չգիտեմ որտեղ,
մի սիրուն տղա (իմ դասընկերներից).
ինձ ժպտում է, ես էլ իրեն եմ ժպտում՝
երեխայի ձեռքից բռնած,
հետո կարմրում եմ ժպիտներիս համար
(քո մեռնելուց հետո ես չեմ ժպտացել դեռ),
դու գալիս ես, ասում՝ ժպտա, ժպտա, ժպտա,
այդպես, որ ժպտալը չմոռանաս:*

Կոմպոզիցիոն տարբեր միջոցների եւ ձևերի շղթան շարունակաբար հոգեբանական նոր շերտեր է բացում: Մեջտեղ է բերվում օրագրային հենքը՝ 93-ի մայիսի 8-ից սկսած:

Պոեմի հերոսուհին՝ Այրին, ներկայացնում է իր ցավը՝ սիրող կնոջ, զավակի մոր, աշխարհին սիրտը բացող արցախուհու անունից: Բայց նա զրուցում է իր նահատակ դյուցազնի հետ, թող մարդկությունը լսի եւ ոլորի չարի ձեռքերը, արդարությունը դարձնի դրոշ, խիղճը՝ լույս: Այրու օրագրում կարդում ենք. «Երբ ասացին՝ Վարուժը չկա, չհավատացի»: Դիմում է Վարուժին. «Եթե սիրում ես ինձ, բա ինչո՞ւ սպանվեցիր»: Եվ երբ Այրին դժգոհության իր կծիկն է բացում, Աստված վերելից հուշում է. «Դա էլ շատ սիրելուց ես ասում»: Հետո Այրին իր կարոտի եւ չմոռացվող ցավի խոսող ծաղիկներ է փնջում, «...շիրմիդ դաշտում բուսած ծաղկի հոտից էլ զգում եմ որդուս արյան կարգը», «Ինձ ոչ ոք քեզ պես չի կարող սիրել», «Ես այս աշխարհը եկա միայն քո հասցեով», «Ամեն օր աղոթում եմ, որ քեզ չկորցնեմ: Դու սուրբ

ես...», «Համբուրում եմ քո հոգին: Հայացքը: Շունչդ»:

Կարոտածին ցավը այնքան է ուժգնանում, որ Այրին մեկ-մեկ հիասթափվում է կյանքից: Բայց հայոց դարերի կանչով, հայոց հերոսուհիների կամքով բանաստեղծը օգնում է իր հերոսուհուն: Այստեղից էլ հենց ծնվում է հրաշքը, բացվում է այն առեղծվածը, թե ժողովուրդը ինչպես է դիմակայել դարերում եւ ինչպես է այսօր պարզել ազատության իր եռագույնը: Գաղտնիքը մեկն է, ահա թե ինչպես է բանաստեղծը հերոսուհու սրտից հանում այն եւ նրա անունից էլ պարզում սերունդներին.

*Խանդոտ է հողը հայոց, մեր սիրածներին իր գիրկն է
առնում, որ մեր համբույրները՝ մեր սիրածներին տալիք,
ինքն առնի իր վրա, մենք վաղուց դադարել ենք հողը
մեր ոտքերի տակ պահելուց: Մեր հողը մենք գլխներիս
վրա ենք պահում, որ մեր ոտքերի տակ ավելի ամուր
լինի մեր հողը: Հողը չնահատակվող սեր է:*

Հողապաշտության, ասել է թե հայրենասիրության այս զգացումը, որ հայոց դարավոր պոեզիայի գլխավոր զարկերակն է եղել, Վ.Հակոբյանի պոետական խոսքում նորից է ընդգծվում, բայց թարմ ու նոր խոսքի հյուսվածքներով, թշնամու մեղքով արցախյան պատերազմից ծնված նորօրյա մեր ցավի ծնունդով, գոյատեւելու հրամայականով:

«Գողգոթա» պոեմը եկավ մի նոր ուլունք դառնալու ոչ միայն Վ. Հակոբյանի ստեղծագործության, այլեւ մեր սուրբ նահատակներին նվիրված հայոց բանաստեղծական տարեգրության մեջ: Այդ երկը ոչ միայն կտրիճ-ամուսիններին կորցրած այրիների սրտի ցավն ու կսկիծը պատկերող հաջող կտավ է, այլեւ երախտագիտության տուրք, սերունդներին ուղղված հավերժաժուկ կտակ.

*Մարդիկ, լսեցեք, մարդիկ դուրս եկեք,
ժողովուրդ, աչքդ լույս,
նահատակները, տեսեք, գալիս են,*

*ելել՝ գալիս են, հաղթել՝ գալիս են,
մի-մի մոմ վառեք՝ ի սեր Յիսուսի,
հարություն առել՝ վերադառնում են,
սեղաններ գցեք, բացեք շուրջպարը,
չգալուց հոգնել՝ արդեն գալիս են,
վերադառնում են,
վերադառնում են նահատակները:*

Մեր նոր Գողգոթայում ժողովրդի սրտից բխած, հոգեւոր ավետիսների շարքում շարականված խոսք է սա, որ բանաստեղծին է ե՛լ բոլորինս է, ժողովրդի գողգոթածին ցավից ծնված հարության կոչ, հարատեւելու աղոթք:

10. ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

1974թ. «Հայաստան» հրատարակչությունը լույս ընծայեց Վ. Հակոբյանի «ՇԱՆԹԱՅԱՐ ԿԱՂՆԻՆ» գրքույկը, հասցեագրված միջին և բարձր տարիքի դպրոցականներին: Դա բանաստեղծի առաջին փորձն էր մանկագրության բնագավառում, թեմա ընտրելով հայրենի բնաշխարհն ու մանուկների շրջապատը, բանաստեղծը ձգտել է երեխաների մեջ սեր առաջացնել դեպի հայրենի բնօրրանը, աշխատանքը, ուսումը, հարազատները: Եվ պետք է նշել, որ հիմնականում նա հասել է իր նպատակին: Հիրավի, Վ. Հակոբյանը նկատի է ունեցել և՛ ընթերցողների տարիքային առանձնահատկությունը, և՛ մանկան հետաքրքրությունների շրջանակը:

Գրողն ինչ ժանրի էլ ձեռք է մեկնում, միևնույն է, նրանցում դրսևորում է ստեղծագործական իր խառնվածքը, աշխարհն ընկալելու և պատկերելու մաներաներն ու խոսքային առանձնահատկությունները: Այդ երևույթը նկատվում է նաև Վ. Հակոբյանի «Շանթահար կաղնին» փնջի մեջ: Այստեղ նա ցուցաբերել է իր տաղանդի ուժն ու կյանքը պատկերներով ներկայացնելու կարողությունը: Բանաստեղծական գյուտերով նովելային ավարտների օգնությամբ ընթերցողների հետաքրքրությունը շարժելիս

Հակոբյանը մտավախություն չի ցուցաբերում, թե ում համար է գրում: Նրա ուշադրությունն այստեղ սևեռվում է մանկական բանաստեղծությունների լեզվաոճական հյուսվածքին, բառապաշարին, այնպես, որ գրվածքները մատչելի ու հասկանալի լինեն ընթերցող երեխաներին:

Գրքույկը բացվում է «Երգ» բանաստեղծությամբ: Մետաֆորներ ընտրելով ԾԱՂԻԿԸ, ՇԱՂԻԿԸ, ԳԱՐՈՒՆԸ, ԱՂՔՅՈՒՐԸ, բանաստեղծը պարզ ու ըմբռնելի պատկերներով շոշափում է կյանքին ծառայելու և աշխարհում լուսավոր հետք թողնելու գաղափարը, որ դրսևորվում է ոտանավորի վերջին քառատողում: Բանաստեղծն իր երգը փնջելով բնության գույներից, վերջապես խոստովանում է.

*Աղբյուր դարձավ
Երգս, գնաց
Ծարավների
Սրտում մնաց...*

Վ. Հակոբյանը հաճախ հետաքրքիր երկխոսություններ է ստեղծում մանկան և երևույթների միջև, անձնավորում շրջապատը և ընդգծում ոտանավորի ճանաչողական ու դաստիարակչական արժեքը: Այդ տեսակետից հաջող օրինակ է գրքի «Ճամփի հետ» ոտանավորը: Փոքրիկ Նաիրիկն իրեն դպրոց տանող-բերող ճանապարհից հարցնում է, թե՛ չի՞ հոգնում: Ճանապարհը լեզու առած, պատասխանում է, որ երբեք չի հոգնի.

*Միայն թե դու
Միշտ տուն տանես...
...Ոչ թե «երկու»
Կամ թե «երեք»
Այլ «չորս» և «հինգ»...*

Ստեղծագործական նման մաներան, մեր կարծիքով, ավելի նպատակային է մանկական բանաստեղծությունների մեջ: Հայտնի է, որ երեխաները չեն սիրում ճառային քարոզը: Իսկ երբ

մանուկների հետ զրուցում են բնության երևույթները, բացառվում է չոր քարոզը, գաղափարն ընկալվում է անմիջականորեն, առարկաների միջոցով, որին հավատում է երեխան:

Այսպես, «Արևի երգը» ոտանավորում որպես այլաբանական պատկեր, ներկայացվում է Արեգակը: Բանաստեղծությունը շոշափելի է դառնում նրանով, որ հանդես են բերվում հայրենի Արցախ աշխարհի սարերը: Արևը ցայգալույսին կանգնում է Քիրսի կատարին, դիմում Սարոյին, Արայիկին, Սևակին, Մարոյին, Նաիրիկին՝ աշխատասիրության ու գթասրտության տողերով, հորդորում.

*Ինձ պես միշտ վաղ
Արթնացեք,
Հայրիկի հետ
Ձեր այգում
Նոր-նոր ծառեր
Տնկեցեք,
Որ նրա պես
Սրտաբաց,
Անցորդներին
Միշտ ասեք.
- Ձեր այգին է,
Համեցեք:*

Ժողովրդական դաստիարակության ավանդույթներին դիմելով, Վ. Հակոբյանը պապի, տատի, հոր, մոր, մի խոսքով, ավագների միջամտության օգնությամբ արծարծում է դաստիարակության դարավոր և արդիական խնդիրներ: Օրինակ, «Որ ունենամ ծաղկանոց» գողտրիկ ոտանավորում երեխան իր պապի նման ծաղկի սերմեր է ցանում, որ մայրիկը չասի. «Ծաղիկներ ես սիրում, բայց ծաղիկ պահել չգիտես...»: «Արան» բանաստեղծության մեջ երեխայի մոտ կենսափորձ ունեցող բարի տատն է, որ իր թռռանը սովորեցնում է զգույշ լինել իր անվան և պատվի

հետ, չկեղտոտել երբեք, ապրել մաքուր: «Շիվը» ոտանավորի գործող անձերը պապն ու թռն են: Այստեղ էլ պապն իր թռնիկին սովորեցնում է խաղաղության դասը, առանց որի չի կանաչի ոչ մի շիվ: «Մեր այգին» ոտանավորում դեպի այգին առվակին հիացմունքով ուղեկցող որդուն հայրն է ուսուցանում՝ նմանվել առվին, եթե առուն կանաչ է պարզևուն այգուն, ապա բալիկն էլ պիտի կյանք տա մայրիկին:

Բնության երևույթները ոչ միայն սովորեցնում են, այլև օրինակ են հանդիսանում երեխաների համար: Մեծ է օրինակի ուժը: Մանկավարժությունը ևս հաստատում է դարերի խորքից եկող այդ փորձը, որի թեմա-զաղափարը հետաքրքիր բացահայտում է «Խնձորենին» երգը: Այստեղ խնձորենին համեստորեն հպարտանում է մարդկանց նվիրած իր բարիքների համար: Լսում է երեխան և երագում.

*Այդ ծառի պես ես էլ կուզեմ
Բարիք տալ միշտ, լինել խոնարհ,
Արեգակի ոսկով օծվել,
Չովերի հետ անվերջ խաղալ...*

Թե՛ մեծերի և թե՛ երեխաների համար ստեղծագործելիս Վ. Չակոբյանը սիրում է դիմել լեգենդային պատումներին:

Բանահյուսական ակունք ունի «Անտառում» լեգենդը, որ զետեղված է «Շանթահար կաղնին» գրքույկում: Այդ ստեղծագործության մեջ արծարծված է հումանիստական զաղափար: Լեգենդում գործող անձեր են առյուծը, կորյունը, եղնիկը, նրա փոքրիկ ձագը: Ինչպես տեսնում ենք, այդ գործող անձերը բաժանվում են երկու խմբի՝ ուժեղների և անմեղ-թույլերի: Դեպքերի բերումով առյուծից թաքուն իրար հանդիպում ու մտերմաբար խաղում էին կորյունն ու եղնիկի ձագը: Եվ մի անգամ առյուծը որսի ժամանակ եղնիկի անմեղ ձագին բռնում ու բերում է իր որջը՝ կորյունի համար: Կորյունը տեսնում և ճանաչում է եղնիկի ձագին, արտասվում և զայրանում է իր մոր և դաժան աշխարհի

վրա: Կորյունի մտերմական վերաբերմունքը եղնիկի ձագի հանդեպ մեղմացնում է առյուծի սիրտը: Լեգենդն ավարտվում է հետևյալ կերպ.

*Ասում են, իբր,
Շատերն են ասում,
Առյուծն այն օրից
Եղնիկ չի որսում:*

Չեքիաթային այս ավարտն, իրոք, մանկան սիրտը շոյող ընդհանրացում է, մարդասիրության մղող ազդակ: Գրքույկն ավարտվում է «Երկու մանկություն» ծավալուն բանաստեղծությամբ: Բանաստեղծը հոր և իր զրույցի միջոցով ներկայացնում է հոր ծանր մանկությունը և տենչում.

*Թող էլ այսուհետ
Ոչ մի մանկություն
Դրսում չմնա...*

«Շանթահար կաղնին» գրքույկն ապացուցեց, որ Վ. Չակոբյանը կարող է ծառայել նաև հայ մանկագրությանը: Դրա համար առկա է թե՛ ստեղծագործելու և թե՛ մանկական աշխարհի իմացությունը:

1988թ. լույս տեսավ Վ. Չակոբյանի «Չեքիաթի խնձորները» գրքույկը, որի փոքրիկ գրախոսականից իմանում ենք, որ գրքում ամփոփված են մանուկների համար գրված նրա մի շարք բանաստեղծություններն ու պոեմները: Ընթերցելով ժողովածուն, համոզվում ես, որ մանկագրության բնագավառում ևս Վ. Չակոբյանը հարազատ է իրեն, իր ոճին, խառնվածքին: Չենց այդ հավատարմությունն էլ հնարավորություն է տվել բանաստեղծին իր ստեղծագործական կենսափորձի օգտագործումով ստեղծել այնպիսի գործեր, որոնք հետաքրքրում են և՛ փոքրերին, և՛ մեծերին: Գրքի հենց առաջին «Չայրենական» բանաստեղծության մեջ հեղինակը պատանի հերոսներին սովորեցնում է սիրել հայ-

րենիքը, ապրել ու մաքառել նրա անունով, լինել քաջ ու ազնիվ, դառնալ լույսի ու բարության սերմնացան:

Հեքիաթին հատուկ հյուսվածքով բանաստեղծն ընթերցողին իր հետ տանում է դեպի խիզախություն ու արարումի աշխարհը, ուր ամեն պահի ուսին «իջնում է սիրով հայրական մի ձեռք»: Դա հայրենիքի սերն է իր քաջակորով զավակների հանդեպ: Քնարական հերոսի առջև փռվում են դեպի լուսին տանող ճանապարհները, որտեղից լույս է «բերում աշխարհին արար» և արժանանում հայրենիքի ձեռքսեղմումին: Սակայն կյանքը բարդ է, մարդկարող է նաև սխալվել, շեղել քայլերը: Այդ պահին ևս հայրենիքը թև ու թիկունք է դառնում իր զավակին.

*Իսկ թե պատահմամբ իմ քայլը շեղվի,
Սաստում է նա ինձ, դառնում է արգելք,
Ինձ ցույց է տալիս ճշմարիտ ուղին,
Բռնում է ձեռքս հայրական մի ձեռք:*

Գրքի առաջին շարքը կոչվում է «Կարմիր արև»: Խորհրդանշական այս վերնագիրն ամփոփում է հայրենի երկրի անհուն սիրո գաղափարը: Ինչպես հատուկ է Վ. Հակոբյանին, այս գրքում ևս բանաստեղծական խոսքը ճակատային չէ: Նա իր ասելիքն ընթերցողին է հասցնում բնության պատկերների միջոցով, ստեղծում ծառերի, ծաղիկների, ջրերի, աստղերի մի հմայիչ աշխարհ, ուր անձնավորված է ամեն-ամեն ինչ: Այդ հեքիաթային աշխարհում կանաչ ծառերը քնարական հերոսի հոգու լուսեղեն կանչն են («Ծառը»), հողը ժպտում է, և նրա ժպիտները հասկերն են, խաղողի վազերը, լիության աղբյուրը («Հողը»), գետը անտառի ձայնն ու երգն է («Գետը»), այգին առատության խորհուրդն ունի, այնտեղ վազի աչքերով անբիծ ցողի կաթիլներ կան («Վազի աչքերում»):

Վ. Հակոբյանը որպես մանկագիր՝ երեխաների հոգեբանության իմացություն է ցուցաբերել գրքի «Մայր այգին» շարքում, ուր մանուկների և բնության երևույթների մի ամբողջական ներ-

դաշնակություն է ստեղծված: «Ծիտը և նրա հայրական ծառը» ոտանավորում բանաստեղծը ծտի օրինակով ցույց է տալիս հայրենի օջախի ջերմությունն ու անփոխարինելի ուժը: Երբ ծիտը ուզում է ծառի փչակում բույն հյուսել, հիշում է, որ ինքն այստեղ է առաջին անգամ բացել իր աչքերն ու կտուցը, տարածել թևերը.

*Եվ հիմա, երբ մայր ծիտիկը չկա,
եվ հիմա, երբ հայր ծիտիկը չկա,
Հայրական թառը,
Ծառը պապական ձգել է բերել,
Որ նրան ասի այսպիսի բառեր,
- Կյանքում ոչ մի ծիտ ցրտում չի մնա,
Հայրական ծառին թե բույն ունենա:*

Շարքի բանաստեղծություններում հանդես եկող հավքերը, ծառերը արարման ուժ ունեն, նրանց սոսափյունով ու երգով է բացվում գարունը, ժպտում կյանքը: «Հրաշք հավքը» բանաստեղծության հյուսվածքի մեջ հավքի երգն ասես ավիշ է ներարկում մայր բնությանը.

*Գարնան նախօրեին հավքը
Երգեց մի թփի` թուփը բողբոջեց,
Երգեց մի քարի` քարը կանաչեց,
Երգեց առվի մոտ` առուն խոխոջեց:*

Հավքը գարնան գուսան է համարվում, որի ձայնից արթնանում են ծիլ ու ծաղիկ: Գարունն ասես հավքի կտուցից է վայր ընկնում ու առվի հետ դաշտերին, ձորերին, ճամփաներին, աշխարհին գարուններ տանում: Եվ գարնանալին այն է, որ այսքանի մասին հավքը լուռ է մնում: Բանաստեղծությունը նովելային ավարտ ունի Հավքի ու գարնան մասին.

*Ոչ ոք չիմացավ ամբողջ աշխարհում,
բացի Սևակից,
Իսկ նա տեսել է, գիտե՞ք, երազում,
Եվ հիմա, երբ որ հավք է պատկերում,*

Կտուցին նրա

Պիտի անպայման նկարի գարուն...

Հավքի և գարնան պատկերը փոքրիկ Սևակի երագի մեջ է մտել, որպեսզի հավերժի սերունդների երագի մեջ: Էպոսային այս գաղափարը գեղագիտական ելակետ է ծառայում շատ բանաստեղծությունների մեջ: Դրանցից են «Ձվադրում», «Նաիրիկը և Հիրիկը», «Շիվը», «Մայր այգին» և այլ երգեր: Վ. Հակոբյանը հոգեբանական լուրջ բացահայտումներ է կատարել դրանցում: Աշխարհը լույսով լողացնելու տենչով է ապրում փոքրիկը: Նրա երագ-աշխարհում լուսինը նմանվում է հավքի, որի բնից պիտի ծնվեն շատ լուսիններ («Ձվադրում»): Փոքրիկ Նաիրիկը Հիրիկ ծաղկի հետ զրուցում է և ցանկություն հայտնում նրան դաշտից տանել տուն: Ծաղիկը համաձայնվում է միայն այն դեպքում, եթե փոքրիկը միշտ լինի հոգատար, փոխարինի գարնան ամպին, հովին, շողին, ցողին: Ինչպես տեսնում ենք, փոքրիկ տղայի և ծաղկի զրույցը վերածվում է յուրօրինակ դասի, որն ընդգծվում է ճանաչողական և դաստիարակչական նշանակությամբ:

«Հեքիաթի խնձորները» շարքում տեղ են գտել «Երկրի աստղը», «Հերոսապատում» և «Խիզախ տղան» պոեմները: «Խիզախ տղան» հեքիաթ-պոեմն աչքի է ընկնում ժողովրդական ստեղծագործությանը հատուկ գեղարվեստական առանձնահատկություններով: Կյանքում դժվարություններ հաղթահարելու, խիզախ լինելու և երագին հասնելու վճռականությունը հատուկ է պոեմի հերոսին՝ խիզախ տղային, որի կերպարը շատ բան կարող է ուսուցանել պատանի ընթերցողին:

* * *

Բանաստեղծ-գրականագետ Վարդան Հակոբյանի հինգհատորյակի չորրորդ գիրքն աչքի է ընկնում ժանրային բազմազանությամբ, թեմատիկ-գաղափարական խորությամբ, ինքնատիպության նրբերանգներով, գեղարվեստական մտածողության

թարմ բացահայտումներով: Նրանում տեղ գտած մանկական հեքիաթ-գրույցները, փոքրիկ պատմվածքները, երգիծանքը, պիեսները, գրականագիտական աշխատությունները, հուշերը, Արցախյան գոյապայքարին նվիրված հոդվածները և այլ գործեր վերհիշել են տալիս մեր ժողովրդի ազնվասիրտ-զինվորյալ զավակ, ականավոր արծակագիր-պատմաբան Բագրատ Ուլուբաբյանի բնութագրող խոսքը. «Վարդան Չակոբյանի պոեզիայի ընդգրկումները համարյա անսահման են՝ այսօրերգությունից մինչև միջնադար, Ամարաս, որ մեր սրբազան հավատքի ակունքն է: Մեր Արցախին Վարդան էր պետք և նա կա՝ երիտասարդ, առույգ, տաղանդավոր»:

Վարդան Չակոբյանի գեղարվեստական մտածողության զինանոցը, աշխարհընկալման սահմանները, պատկերավոր համակարգը, ցավի և հույսի աղբյուրը Չայոց Արևելից կողմանց ճակատագիրն է, որ մարմին է առել Առան նահապետի Չայկյան պատգամի շնչով, ծիածանվել Վաչագան Բարեպաշտի մեսրոպաշունչ կանոններում, շառաչել Եսայի ապու Մուսեի բուղասպան թրի ահագնությամբ, ձուլվել հյուսված մեր հավատին՝ Ամարասից մինչև Գանձասար, Դադիվանքից մինչև Ղազանչեցոց հրաշալիք և արենակցական նվիրումով ձուլվել մայր ժողովրդի արարված ոգուն ու կանթեղված հավատին:

Վ. Չակոբյանի գրույց-հեքիաթների հերոսներն ազգային հոգեկերտվածք ունեն, նրանք մարմնավորված են առասպելական-լեգենդային լուծումների մեջ, հայրենամկեր ու ժողովրդապաշտ են, զործունեության գլխավոր չափանիշը արարման ծարավն ու տեսլականն իրականացնելու վճռականությունն է՝ հայ մարդու բարեմասնությունների դրսևորումներով:

Չակոբյան-հեքիաթասացի ստեղծած կերպարները ֆենոմեններ են՝ իրենց հասունությամբ ու արարքներով: Չակոբյանը կենսափորձի հարստությամբ ու հոգեբանի հմտությամբ կարողացում է թափանցել երեխաների հուզաշխարհը, ի տես բերել

նրանց հետաքրքրությունների շերտերը, նպաստել ժողովրդին և երկրին ծառայելու սրբազան գաղափարի ձևավորմանը: Որպես փայլուն օրինակ կարելի է նշել «Առանը» գրույց-հեքիաթը: Այստեղ Առանը հանդես է գալիս դեռևս պատանեկան տարիքից: Նա հպարտ է, որ Նոյ նահապետի թոռն է և նրա խորհրդով ձգտում է Քիրսի եւ Մռավի հովիտներում աճեցնել խաղողի որթ, սերունդների հետ լինել հաշտ ու խաղաղ, ծաղկեցնել Հայոց Արցախյան աշխարհը:

Վ. Հակոբյանը քաջածանոթ է մանկագրության պահանջներին: Նա չի քարոզում: Ելնելով երեխաների տարիքային առանձնահատկություններից և հոգեբանությունից, երևույթների ընկալման կարողությունից՝ նա ներկայացնում է Առանի աստիճանական զարգացումը կյանքի խաչներուկներում: Առանը սիրում է անձնուրաց, չի հաշտվում հարևանի չարության հետ. պաշտպանում է իր հայրենի տարածքները, զորքի գլուխ անցած՝ ջարդում թշնամու բանակին, օգնում է իր կարիքն զգացող մարդկանց, երբեք չի ներում Արցախին սպառնացող ավազակաբարո ուժերին, թև ու թիկունք է դառնում հող մշակողներին: Գերությունից ազատելով իր Արա եղբորը՝ Առանը ցնծություն է բերում Արարատ սարին և ուրախանում, որ նա Քիրս ու Մռավ եղբայրների հետ հսկում է Հայոց աշխարհի կենարար խաղաղությունը, զավակների երջանկությունը:

Ինչպես տեսնում ենք, Հակոբյան-հեքիաթասացը Առան նահապետի կերպարում խտացնում է արցախցու բնավորության գծերը՝ որպես դարերի ընթացքում ձևավորված ճակատագիր: Ոչ միայն «Առանը», այլև մյուս գործերում Վ. Հակոբյանը հարազատ է մնացել գեղագիտության այն պահանջին, որ գեղարվեստական խոսքի ելակետն ու չափանիշը բնության և մարդու միասնության ի հայտ բերելն է: Այդ են վկայում «Հոգեծաղիկ», «Անվան կախարդանքը», «Ալրենին», «Տեր արդար լույս», «Ճերմակ կռունկը» հեքիաթ-գրույցները, որոնցում անձնավորված են Ար-

ցախ աշխարհի հրաշալիքները՝ իրենց տերերի կենսափիլիսոփայության պես առեղծվածային և առինքնող:

Վ. Չակոբյանի փիլիսոփայական մտորումների դրսևորման փայլուն օրինակ է «Փոքրիկ պատմվածքներ» շարքը: Պարզապես խոհերի մի կառույց է այն, որտեղ գաղափարի և հույզի միասնությունը կենսառաք, թևավորող դասի է փոխված: Գրողը դրանում գտել է անցյալ-ներկա-գալիք, երկիր-քաղաքացի, նախնիներ-սերունդներ, պարտք-գոյություն, մաքառում-արժանահավատություն, ներում-վճռականություն և այլ փոխհարաբերությունների յուրովի պատասխանները: Պատումների առանցքում ընտրելով իր պատանի հերոսներին՝ հայկածին-ավանդական-հերոսական անուններով, Վ. Չակոբյանը հյուսել է հայ ժողովրդին դեպի հավերժություն տանող լեգենդը, որի մեջ հնչում է նաև Արցախի օրհներգն ու արցախցու կենսափիլիսոփայությունը:

Չայն իմաստնացած հաղորդակցվելով Արարչի հետ, մտերմանալով տիեզերքին,՝ հյուսել է հոգու իր գորելենը, հառնել հպարտ՝ իր լեռների պես, անբիծ խոհերով՝ տիեզերական կապույտին հանգուն: Պատանի Տիգրանը ազատում է այն ձկանը, որին մտքում Կապույտ անունն է տվել: Նա իր մտածության մեջ տեսնում է Աստծուն, հետո դառնում Տիգրան Մեծ («Կապույտը»): Սարգիսիկը, զրուցելով պապիկի հետ, մտքի թևերով հասնում է դարերի խորքը: Նրա դեմ-դիմաց տեսիլքային պատկերով խաղալիք ձիերը դառնում են իսկական, խրխնջում ու դոփում գետինը: Եվ նա մի ձի նվիրում է Չարութին, մեկը՝ Նարեկին, մեկը՝ Տիգրանին, մեկն էլ սանձում է ինքը: Ձենք ու զրահ կապած՝ միասին նետվում են Ավարայրի դաշտ, կանգնում Վարդան զորավարի կողքին, ջարդուփշուր անում աչքն ուրիշի հողին տնկած ոսոխին: Ավարայրից սրերն առած՝ գալիս-հասնում են Արցախամարտ, ոչնչացնում բոլոր թշնամիներին:

Դժվար չէ նկատել, որ Վ. Չակոբյանը գեղարվեստական երկը

դարձնում է սերունդների ինքնագիտակցման, ինքնաճանաչման ձև: Օգտագործելով պատմության հերոսական էջերը որպես հարատևելու դաս՝ նա նաև վերագնահատում է լայն ճանաչում գտած փաստեր ու եզրահանգումներ: Իրենց նախնիների քաջությանը թելավորված պատանի հերոսներին գրողը համարում է հասուն և վստահում անցյալի վերարժեքավորման իր սկզբունքը. «Եվ սուտ է, թե էն գլխից Ավարայրի ճակատամարտում մենք միայն բարոյապես հաղթեցինք, սուտ է, թե Ջորավարը զոհվել է. մենք հաղթեցինք և՛ բարոյապես, և՛ ֆիզիկապես: Ինչ վերաբերում է Վարդանին, նա հիմա էլ ապրում է: Աշխարհում պարտվում են նրանք, ովքեր չար են, միասին չեն ու ձի չունեն: Իսկ իմ ու իմ եղբայրների մասին ես ընդամենը այսքանը կասեմ. մենք միշտ միաբան ենք, դրա համար մեր սարերն էլ են ձի» (էջ 29):

Վ. Հակոբյանի փոքրիկ պատմվածքների պատանի հերոսներն ասպետներ են («Խաղաղության ասպետը»): Նրանք քայլում են Նոյի հարթած ճամփաներով, հավատում են, որ «հեքիաթներ լինում են նաև իրականում, որ նոյյան ժամանակների «Աղավնին շարունակում է կուտ ուտել Հարութի ափից» («Նոյի հետքերով»):

«Փոքրիկ պատմվածքներ» շարքը աչքի է ընկնում նախ ժամանակի և տարածության խոսուն ելևէջներով: Նրանում ներառված են Հայաստանի բոլոր մասունքները՝ հազարամյակների հոլովմամբ: «Թեկուզ երազ էր, բայց երազ չէր» պատմվածքի պատանի հերոսները գիտակցում ու հավատում են, որ ոգուն գնդակ չի դիպչում... Հայոց ոգին է Քանձասարի սրբատաշ քարերում, այն անհաղթելի է»: Պապիկը խորհուրդ է տալիս Նարեկ թռռանը. «Քանձասարում քո վառած մոմերից մեկը տար Նարեկա վանք, նրա հրով այնտեղ էլ մոմեր վառիր, և Նարեկավանքը կազատվի» (էջ 136): Ընդհանրացումը պարզ է: Արցախյան գոյամարտը հայոց ապագա հաղթանակների սկիզբն է: Նարեկ թռռնիկը Վարդան պապիկից, Վարդան պապիկն էլ իր Հայրապետ պապիկից շատ

էին լսել. «Էրգրի ազատության լույսը Արցախով է գալու (էջ 139):

Գրախոսվող հատորը հարուստ է բազմազան ժանրերով: Դա վկայում է կյանքի հետ բանաստեղծի սերտ կապը: Իսկ հայտնի է, որ սյուժեների, թեմաների, ժանրերի բազմազանության աղբյուրը հենց կյանքն է, որ ընթացքի մեջ ներառում է ոչ միայն առաջադեմ ուժերին և երևույթները, այլև ունենում է արատավոր կողմեր՝ հասարակական և անհատական առումներով: Այս երևույթն է, որ թելադրում է երգիծանքի անհրաժեշտությունը: Մեր առօրյան ևս զերծ չէ թերություններից: Եվ բանաստեղծ Վ. Չակոբյանը չի շրջանցում այսօրվա առաջընթացին ուղեկցող ստվերոտ կողմերը: Դրա ապացույցը հատորի երգիծանքի բաժինն է՝ հագեցած հումորի և սատիրայի երանգներով: Երգիծանքը հետաքրքիր ու դիպուկ դարձնելու միտումով Չակոբյանը սատիրական տարբեր պատումների մեջ խոսքը տալիս է մերթ արցախցի այսօրին ու բիզնեսմենին, մերթ ղարաբաղցի Փանոսին ու հավերժախոս Պըլը-Պուղուն, մերթ էլ հերքողական խոսքաշարով ծաղրում է պաշտոնամոլությունն ու ստախոսությունը, կեղծիքն ու մեծատությունը, խարազանում քաղաքական դերասանությունն ու ժողովրդի համբերության շահարկումը եսակենտրոն իշխանավորների կողմից:

Երգիծական խոսքի ընդլայնման և ժանրային նոր սահմանների հայտնագործման հրաշալի օրինակներ են «Այան», «Ամանորյա բիզնես», «Գեշ երազ», «Բզոն», «Վանեսի ականջը կանչի», «Մոծակը», «Պուղին և ընթերցողը», «Չայկական հին ծռություն» և այլ գործեր: Շարքին նոր երանգներ են ավելացնում «Ձվարձախոսություններ» արձակ և «Առակս զինչ ցուցանե» չափածո բաժինները:

Խորամանկության ու ձրիակերության քննադատության դասական օրինակ է «Լծկանը» ութնյակը.

- Մի ծայրը լծի

Դրեք իմ վզին,

*Քաշենք եզան հետ,-
Բողոքեց մոզին...
Լուծը և մոզի՞...
Հասկացավ տերը՝
Մոզուն հուզել էր
Լծկանի կերը...*

Վ. Հակոբյանի գեղագիտական իդեալի ակունքները Հայոց կյանքն է՝ մի ծայրը դարերի խորքում, մյուսը՝ ժամանակակից ընթացքի շերտերում, որոնց արժարժունով նա հասնում է փիլիսոփայական իր հանգույցներին: Դրանց հուշարարն այն ցավն է, որ ոչ թե թմրեցնում է սրտերը, այլ մղում է պատվաբեր մաքառման: Պատահական չէ «Երբ հուշարարը ցավն է» վավերագրական շարքի թևավորող հետևյալ բնաբանը. «Արցախյան համազգային շարժումը նորից ու դարձյալ սրբագործեց մեր ամենամովիրական իղծերը, ցույց տվեց, որ մեր ոզին իսկապես անպարտելի է»:

Անպարտելի ոգու նորօրյա դրսևորումների վկայություններ են «Երբ հուշարարը ցավն է» շարքի վավերագրական նյութերը: Վ. Հակոբյանը պատումի տարբեր ձևերով ներկայացնում է Արցախյան ազգային-ազատագրական պայքարի սկիզբն ու ընթացքը, ընդգծում նրա արդարացիությունն ու անհրաժեշտությունը, ակնկալում, որ Լեռնային Ղարաբաղի հարցը լուծվի ժողովրդավարական, խաղաղ ու արդար ուղիով:

Կան գրողներ, որոնց ստեղծագործական խառնվածքն ու նախասիրությունները հնարավորություն են ընձեռում արարման իրենց ներուժը բացահայտել գրական բոլոր սեռերում ու տեսակներում: Վ. Հակոբյանը նման ստեղծագործողներից է:

Այդ առումով հաճելի է նշել, որ նրա «Քո սերը քո տունն է», «Հայելիներ», «Արցախյան բալլադ» դրամաները բեմադրվել են Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնում: Ինչ վերաբերում է «Անդրադարձներ»

շարքին, որտեղ ընդգրկված են գրողի գրականագիտական հոդվածներն ու գրառումները, կարող ենք ընդգծել, որ Վ. Հակոբյանի տաղանդը աստվածային նվեր է, որ արարումի մեջ սահմաններ չի ճանաչում՝ իր խորաթափանցությամբ ու բազմերանգությամբ:

11. ԱՍՔ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԳՈՅԱՄՈՐՏԻ

Անվանի հայագետ Մ. Աբեղյանը հայ դպրությունը համարել է մաքառման գրականություն: Դարերի ընթացքում Հայոց աշխարհի դեմ կազմակերպված բոլոր պատերազմներում հայ ժողովրդի հերոսական գոյամարտը իր արտացոլումն է գտել գրականության մեջ: Այդ իսկ պատճառով հայ մշակույթը առաջին հերթին գնահատվել է որպես ազատության ու անկախության համար մղված պայքարի գեղարվեստական տարեգրություն: Ազերիների կողմից Արցախ աշխարհին պարտադրած պատերազմը նույնպես իր արտացոլումն է պահանջում: Եթե մենք ինչ որ չափով կարող ենք բավարարված խոսել մեր պատերազմական առօրյան պատկերող բանաստեղծության ու պոեմի, պատմվածքի ու ակնարկի մասին, ապա թատերական երկերի մասին ոչինչ ասել չենք կարող: Այդ այն դեպքում, երբ մեր հանրապետությունն ունի դրամատիկական թատրոն, որտեղ աշխատում է փորձառու եւ շնորհալի մի կոլեկտիվ, որից բազմիցս լսել են արդարացի պահանջ. «Ինչո՞ւ գրողները մեր պայքարի մասին պիես չեն գրում»...

Եվ ահա, ի պատիվ մեր գրական օջախի, բանաստեղծ Վ. Հակոբյանը գրել է «Արցախյան բալլադ» պիեսը, որը Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան հայկական դրամատիկական թատրոնը ներկայացրել է հանդիսատեսի դատին:

«Արցախյան բալլադը» գրողի երրորդ պիեսն է: Մեր թատրոնը բեմադրել է նրա «Հայելիներ» եւ «Քո սերը քո տունն է» գործերը, որոնք բավականին ջերմորեն են ընդունվել հանդիսատեսի կողմից: Ասել է թե՛ դրամատուրգիական փորձն ու կուտակումը կա: Դա

հնրավորությունն է տվել հեղինակին ստեղծելու գեղարվեստական յուրովի առանձնահատկություններով հագեցած մի պիես, որը կառուցվածքային առումով էլ հետաքրքիր է ու թարմ: Հեղինակը ձգտում է հեռու մնալ ծեծված միջոցներից, եւ դա նրան հաջողվել է: Պիեսը աչքի է ընկնում կերպարների լիարյունությամբ, ենթաբնագրային շերտերով, հոգեբանական բացահայտումներով, խոսքի դինամիզմով, ժողովրդական ասացվածքի հասնող կենսափիլիսոփայական ընդգծումներով: Օրինակ՝ «Ճշմարիտ բառերը լույս են արձակում», «Ամեն հայի մեջ մի վանք. եկեղեցի կա», «Արարատից ձյուն են բերել Արցախի հրդեհը մարելու համար», «Անին կորցրել են Արցախում, եկել են՝ գտնեն» եւ այլն:

Հակոբյանը մատը դրել է հայ ժողովրդի ամենացավոտ վերքի՝ մեր հայրենիքի կորուսյալ տարածքների վշտաբեր զգացումի վրա: Ավարայրից մինչեւ Արցախ մաքառող հայոց ոգին անպարտելի է: Դարավոր թշնամին նորից է սուր բարձրացրել: Ուրեմն սուրբ է պայքարը, սուրբ է մեր թափած արյունը: Պիեսի կերպարները գործում են մեր օրերի ոգուն հարազատ, հանդիսատեսի սրտից բխող երեւոյթների շուրջ, խոսում են մեր հոգեկան ապրումների, մեր ցավի եւ տառապանքի, մեր հավատի մասին: Հեղինակը իր պիեսը իզուր չի անվանել բալլադ: Ստեղծագործության երկխոսությունները, դեպքերի եւ դեմքերի քնարական գունավորումները, լարվածությունը, վերջապես հերոսական բնույթը հնրավորություն են տվել ստեղծագործելու մի բեմադրություն, որը դիտվում է ուշադրությամբ:

Բալլադի թեման լրիվ արդարացնում է իրեն: Ստեփանակերտցիների նկուղային ծանր կյանքը ոչ միայն պիեսի, այլեւ մեծակտավ երկերի է արժանի: Թեկուզ փոքրիկ Արցախը չունի թիկունք ու ճակատ, որովհետեւ թշնամու հեռահար արկերը պայթել են ամենուրեք, ինքնաթիռները ռմբակոծել են բոլոր քաղաքներն ու գյուղերը, միեւնույն է, մեր ազատամարտիկների թիկունքում ապրել են նրանց հարազատները, որոնց համբերությունը եւ հավատի շողերը ծիածան-

վել են թիկունքից դիրք, դիրքից՝ թիկունք: Պատահական չէ, որ ազերիների ղեկավարներից մեկը իր ժողովրդին խրախուսելու նպատակով օրինակ է բերել ստեփանակերտցիների դիմացկունությունը, նշելով, որ հայերը ռմբակոծվող իրենց քաղաքից դուրս չեն եկել, իսկ ազերի զինվորները թողնում են իրենց դիրքերը եւ ճողպարում:

Հեղինակի գեղագիտական իդեալի դիրքերից բացահայտված մեր մարդկանց հերոսականության, ոգու արիության, պայքարի վճռականության, հաղթանակի հավատի, անձնուրաց սիրո, ծնողների եւ զավակների ինքնամոռաց նվիրվածության եւ այլ ազնիվ գաղափարների բեմականացմամբ ստեղծվել է խոսուն բովանդակություն ունեցող ներկայացում:

Այստեղ կարելու է համարում ընդգծել Կ. Աբրահամյանի բեմադրական աշխատանքը: Ռեժիսորական հնարքները՝ կոլորիտ ստեղծելու նպատակով, արդարացնում են իրենց: Նա դրամատուրգիական վիճակները հմտորեն վերածել է տեսարանների եւ միզանցեմանների, նկարչության եւ երաժշտության համադրմամբ ստեղծել գործողության միջավայր՝ դրսեւորելով պիեսի գաղափարական բովանդակությունը: Ռեժիսորը ճիշտ է ընտրել դերակատարներին: Նկատի ունենալով պիեսի բալլադային առանձնահատկությունները, տեղին է օգտագործել տեսիլքային երանգը՝ նահատակված հերոսի երկխոսությունը մոր հետ, խորհրդային ժամանակների ճառային մթնոլորտը ներկայացնող ամբիոնը եւ այլն:

Մ. Բալասանյան-Անուշի սերը թռռան եւ ռազմաճակատում մարտնչող որդու ու հարսի նկատմամբ հայ տատիկի անմիջական եւ բնական զգացում է: Հոգեբանորեն հանոզիչ են նրա տազնապն ու հպարտությունը: Ներկայացման սկզբից մինչեւ վերջ տաղանդավոր արտիստուհին հանդիսատեսին տանում է դեպի իր ապրած օրերը, բացահայտում արցախյան տատիկների քնքուշ սրտերի թրթիռներն ու հույզերը: Հավատում ես Մարգո Բալասանյանի Անուշին՝ հասարակ ու տառապյալ, վշտաբեկ ու կենսասեր այդ մեծ մորը:

Բեմական արվեստի առիքնող մի էպիզոդ է Ժ. Մովսիսյանի՝ հայրական վշտից բխած ճիչը: Նա որդեկորույս հոր տառապանքը բացահայտում է անկաշկանդ ու համոզիչ: Ծանր վշտի մեջ նրա «բա իմ արյան կարգը ո՞րն է» բացականչությունը վիրավոր ազատամարտիկին արյուն տալու կապակցությամբ, ավելի լիարյուն է դարձնում կերպարը: Արդարացվում են նրա հոգեբանական անցումները՝ «պարտիական» ժորայից մինչև որդեկորույս հայր եւ ապա դիրքերը մեկնող ազատամարտիկ:

Չնայած ժանրի ընձեռած սուղ հնարավորություններին, կոմիկական խաղով հաճելի տպավորություն է թողնում Մ. Միքայելյանը Պուղուն մարմնավորելիս: Բնական խաղով իր բարձրության վրա է մեր բեմի վարպետ Բ. Օվչյանը (Արշակ): Մ. Հարությունյանը (Սերոժ) ստեղծել է հյութեղ, խիստ կոլորիտային, համոզիչ մի կերպար: Բ. Հարությունյանի (Հակոբ) դերամարմնավորումը անկաշկանդ է ու անմիջական: Բալլադային ժանրից բխող միջամտություններն ու մեկնաբանումները հաջող է կատարում Ռ. Ավինյանը (Պատմիչ): Ա. Պետրոսյանի Գեղամը արժանի է ամենայն գովասանքի: Ներկայացման ընթացքում Գեղամը լրիվ դրսևորում է իրեն: Մեր պատերազմը եւս ունեցավ իր օրենքները: Դրանցից ամենակարեւորը համատարած հայրենապաշտության եւ հերոսականության դրսևորումն է: Կենսական ու ռեալ է Գեղամի կերպարը: Տասնյակ նման պատանիներ Դիզակից մինչև Ջրաբերդի դիրքերը իրենց դրսևորել են որպես հայրենիքի նվիրյալներ: Գեղամը նրանց նախնական ձգտումների մարմնավորումն է, ապագա զինվորյալների խոստումնալից առահավատչյան:

Ներկայացման հաջողությանը նպաստում են Ս. Վիրաբյանը (Հովե), Ս. Ալոյանը (Արեգնուհի), Ս. Եվրիյանը (Մուշեղ), Ս. Թովմասյանը (Կին), Ն. Ավետիսյանը (Սաթենիկ), Մ. Հայրապետյանը (Վարդան): Միայն եղեռն տեսած ժողովրդի դուստրը կարող է սիրած տղայի նվիրած ծաղիկը դնել ճյուղատված ծառի ճեղքում ու ասել. «Այստեղ թռչունի բույն է ավերվել»:

Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի կոլեկտիվը ստեղծել է մի ներկայացում, որը մեր սրբազան գոյամարտի բեմական վավերացման առաջին փորձն է եւ արժանի է ամենայն խրախուսանքի:

12. ԱՐՑԱԽՅԱՆ ՄԵՎ ԴԱՐԸ՝ ԷՊԻԿԱԿԱՆ ԼԱՅՆ ԿՏԱԿԻ ՎՐԱ

Աշխարհի քաղաքակիրթ ժողովուրդների պատմական ընթացքի մեջ տեղի են ունեցել քաղաքական, տնտեսական, մշակութային այնպիսի իրադարձություններ, որոնք դարձել են գրականության և արվեստի կարևորագույն թեմաներ՝ ապահովելով գեղարվեստական խոսքի զարգացման վերընթաց ուղին, մարդկության հետ շփվելու ու գեղագիտական հաճույք պատճառելու ազգային ընձայական: Սակայն, ավա՛ղ, մեր ժողովրդին վիճակվեց միանգամայն այլ ճակատագիր: Հեռու տայգաներից և միջինասիական ավազուտներից ամենակուլ հողմերի պես տիզրանված Հայաստան ներխուժեցին սելջուկ-թուրքական վայրենի ցեղերն ու որոշեցին այլևս չվերադառնալ իրենց յուրտերը, թրատել ժողովրդին, զավթել, սեփականել և՛ տարածքները, և՛ նյութական-հոգևոր մշակույթի արժեքները: Այդպես ձևավորվեց Օսմանյան Թուրքիան, ու ծավալվեց օսմանիզմը, արդյունքում՝ պանթուրքիզմը, որի ամենաանճոռնի ու վայրենաբարո ծնունդը հանդիսացավ Ադրբեջանը, և որի կնքահայրերը դարձան Լենինն ու Ստալինը ու սկուտեղի վրա նրան նվիրեցին Հայոց Արևելից կողմանք, իսկ արյունախում Թուրքիային՝ ամբողջ Արևմտյան Հայաստանը: Այսպես, ի հակակշիռ աշխարհի բախտավոր ժողովուրդների, որոնց արվեստին խորթ է ազգային կորուստների ցավը, մեր գրականության գլխավոր թեման հայրենապատումի սահմաններում ստացավ ցեղասպանություն անունը:

Օսմանյան Թուրքիայում կազմակերպված Հայոց ցեղասպանությունը 19-րդ դարի վերջից սկսած, որպես թեմա մտավ մեր գրականության մեջ՝ արձագանք գտնելով Սիամանթոյի, Ա. Ահա-

րոնյանի, Դ. Վարուժանի, Յովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի, Ա. Բակունցի, Ե. Չարենցի, Ստ. Ջորյանի, Գ. Մահարու, Վ. Թոթովենցի և մյուս ականավոր գրողների երկերում: Խորհրդային տարիներին, մինչև անհատի պաշտամունքի քննադատությունը Չայոց ցեղասպանության մասին խոսելն անգամ արգելված էր: 1950-ական թվականներից սկսած՝ հայ գրողները ձեռք մեկնեցին ազգային անանցանելի ցավին՝ ստեղծելով տարբեր ժանրերի երկեր: Դրանցից են Յ. Շիրազի «Չայոց դանթեականը», Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն», «Եռաձայն պատարագ», Խ. Դաշտենցի «Խողեղան», «Ռանչպարների կանչը», Յ. Քոչարի «Նահապետ», Մ. Գալշոյանի «Ձորի Միրոն», Յ. Մելքոնյանի «Ոճիրի բուրգեր», Ս. Խանգադյանի «Խոսեք, Չայաստանի լեռներ», Պ. Ջեյբունցյանի «Վերջին արևագալը» և այլ նշանակալից գործեր:

Չայոց ցեղասպանության թեման անընդմեջ հղվվել է սփյուռքահայ գրողների ստեղծագործական կյանքում: Իրենց վեպերով ու պոեմներով հանդես են եկել Վահան Թեքեյանն ու Յակոբ Օշականը, Կոստան Ջարյանն ու Յակոբ Մնձուրին, Յամաստեղն ու Վահե Յայկը, Շահան Շահնուրն ու Վազգեն Շուշանյանը, Անդրանիկ Ծառուկյանն ու Մուշեղ Իշխանը և այլ երևելի արվեստագետներ:

Սակայն հայտնի պատճառներով մոռացվել է 20-րդ դարի առաջին երկու տասնամյակներում Բաքվում, Գանձակում, Շամախիում, Շաքիում, Շուշիում և Արցախի տասնյակ գյուղերում ազերի թուրքերի կողմից իրականացված ցեղասպանությունը:

Ահա մեր սրտերը խոցող համաժամանակյա այս ցավն է հուշել բանաստեղծ Վ. Յակոբյանին՝ գրելու «Ձատիկը ջրավազանի հատակին» վեպը (2010) մեր կորուստների համարյա մոռացված վշտի մասին և ոչ միայն այդ:

Վեպի «Յանդիպումից առաջ» համառոտ առաջաբանում Վ. Յակոբյանը նշում է, որ նպատակ ունի ներկայացնել հեռու-հեռավոր լեռների ծերպին, Յագարի գետի ձախ ափին ծվարած, իր

կյանքով ապրող հայկական հինավուրց Չարարը, որին Առաջին համաշխարհայինը, Երեսուներթ թվականը, Չայրենական պատերազմը հիմնավեր կործանեցին՝ խեղելով հազարավոր ճակատագրեր: Գրողի երևակայությամբ ինքը՝ Չագարի գետն է վկայում այդ մասին: Սակայն ի՞նչ է փոխվել: Ոչինչ: Նա զարմանք է հայտնում այն մարդկանց ու պետությունների հանդեպ, որոնք ձգտում են կասկածի տակ առնել Եղեռնի իրողությունը:

Վեպի հենց սկզբից հայոց ցավի ճիչը հնչում է որպես կենսափիլիսոփայություն: Չեղինակը բողոքում է այն անարդարության դեմ, երբ երկու միլիոն նահատակների ծայնն են ուզում խլացնել... Մի՞թե հանդուրժելի է դա: Երբ սպանվում է անգամ մեկ մարդ, դարձյալ ցեղասպանություն է, որովհետև նրա մեջ սպանվում է նաև աշխարհը, և այս պարագայում կարևորն այն չէ, թե աշխարհը քանի հոգու մեջ է սպանվում, այլ այն, որ սպանվում է...

Ճշմարիտ և ահազանգող ընդհանրացում է այս միտքը: Սակայն գրողի միտումն այլ է: Նա գլոբալ մի խնդիր է շոշափում, որ պետք է դառնար հայ մտավորականությանն ու քաղաքական բոլոր ուժերին հուզող հիմնախնդիրներից մեկը: Վկայակոչենք հեղինակին. «Իմ խնդիրն այս վեպում մի քիչ այլ է: Երկու միլիոնի մեջ մտնո՞ւմ են, արդյոք, այն բյուրավոր նահատակների անունները, որոնք յաթաղանվել են Չարարում, Շուշիում, Բագավանում (Բաքվում), Շամախիում, Շամխորում, Գանձայում... հայկական բոլոր այն շեն ու վարքար բնակավայրերում, որոնք սպանդից անմիջապես հետո բռնի կերպով խորթմայրության են տրվել ազերական խորհրդակայությունը» (էջ 3):

Վ. Չակոբյանը որպես վեպի նյութ ընտրել է կործանված Չարարը՝ նկարագրելով հարարցու ճակատագիրը: Սակայն նա այդ կոնկրետության միջոցով ի ցույց է դրել հայոց ճակատագիրը և՛ անցյալում, և՛ խորհրդային տարիներին՝ ընդգծելով. «Չայրենական ոստանից տեղահանված հարարցին նորից ու վերստին Չարար հասնելու համար անցավ սիրիյան աքսորների, հալա-

ծանքների ու տանջանքների, հազար ու մի արհավիրքների միջով, մինչև որ, ի վերջո, Արցախյան համազգային գոյամարտը նրա առաջ դուռ բացեց» (էջ 41):

Վ. Հակոբյանը համահայկական ճանաչում գտած բանաստեղծ է, իր ինքնատիպ ոճն ու ասելիքն ունեցող արվեստագետ, տասնյակ պոետական ժողովածուների ու պատմական պոեմների տաղանդավոր հեղինակ: Ուստի անակնկալ էր նրա վեպը: Մենք դիտավորյալ նշեցինք նրա՝ պատմական պոեմների հեղինակ լինելը, որովհետև նա ձեռք է մեկնել հենց պատմական վեպի տեսակին, որը գտնվել է մեր դասական գրողների ուշադրության կենտրոնում և հասել է նկատելի նվաճումների: Սերունդներին են կտակվել ժանրային հստակ ավանդույթներ: Ասել է թե՛ պատմական վեպ ստեղծելու համար Վ. Հակոբյանը պետք է իրեն դրսևորեր նաև որպես պատմաբան, ձեռքի տակ ունենար հեռավոր կամ մոտավոր անցյալի մասին բավականաչափ պատմամշակութային նյութեր, որին կարելի էր ավելացնել էական լրացումներ, այնպես, որ այն արտահայտեր պատմական ճշմարտությունը, նկարագրվող ժամանակաշրջանի ոգին, այդ դարաշրջանի մարդկանց հոգեբանությունը՝ առնչված ժամանակակից կյանքի հրատապ խնդիրներին:

Թե ինչպես է վարվել Վ. Հակոբյանը, ինչ հնարավորություններ է ունեցել իր առջև ծառայած դժվարությունները հաղթահարելու և մտահղացմանը կենդանի շունչ հաղորդելու համար, կարող ենք շեշտել, որ նա օգտվել է ՀՀ հանրագիտարաններից, համացանցային «Ազատ հանրագիտարանից», պատմաբանների և գրողների առանձին գրքերից, աշխատություններից և այլ աղբյուրներից:

Նշենք նաև, որ նա եղել է նկարագրվող դեպքերի ու դեմքերի մի մասի ականատեսը, տեսել է պատմական Հարարի ավերակները, հիշել է Վ. Հյուգոյի խոսքը՝ «Այստեղով անցել է թուրքը», ճանաչել է յաթաղանից մազապուրծ մի քանի հարարցիների,

զրուցել նրանց հետ և զգացել այն սրտակեղեք մրմուռը, որ ծովացել է Արցախ աշխարհում կատարված ցեղասպանության և ապա Խորհրդային Ադրբեջանի վարած հայահալած քաղաքականության արդյունքում:

Վ. Հակոբյանին հաջողվել է իրականացնել իր մտահղացումը՝ ստեղծագործական հարուստ փորձի, գեղարվեստական խոսքին կենսական լիցքեր հաղորդելու, կերպարների հոգեկան աշխարհը թափանցելու և բացահայտելու, իրադարձությունները տեսիլքային և իրական շեշտադրումներով ներկայացնելու շնորհիվ:

Այդ ամենը հստակորեն զգացնել են տալիս գրքի չորս մասերում, որոնք վկայում են վեպի կառուցվածքային հաջողությունը՝ կոմպոզիցիայի և սյուժեի առումով: Վեպի հենց առաջին մասի սկզբից Վ. Հակոբյանը դիմել է տեսիլքային պատկերի հնարանքին՝ բնության և մարդու միաձուլյալ ցուցադրումով: Դա ցնցող մի պատկեր է, ուր հանդես են բերված գլխավոր հերոսը՝ Ուշխունդանց Արտեմը, հեղինակը և Շըռշըռ քարի ծերպը՝ եռամիասնությանը: Հեղինակի և Արտեմի զրույցը կորուսյալ ծննդավայրի, երազ դարձած հարազատների, տառապած սրտերի անհատում կարոտի կենսափիլիսոփայություն է:

Արտեմը դեռ մի մատ երեխա էր, երբ թուրքերը Հարարում սպանում են մորը: Նրան փրկում է մի պառավ՝ Մարիամ անունով ու տիրություն անում, սակայն Արտեմի տասը տարին նոր բոլորած, կյանքից հեռանում է Մարիամ մայրիկը:

Գրողը կյանքի նոր իրադարձությունների համապատկերի վրա ցույց է տալիս Արտեմի անցած դժվարին ուղին՝ հարևան գյուղից մինչև Բաքու, ապա Տրակերտ, Երևան, ուր ստանում է բժշկի մասնագիտություն, վերադառնում հայրենի Տրակերտ: Նրա ճանապարհին հանդես է գալիս հարարցի Արսենը, ճանաչված ու հարգված շինարար: Վերջինիս աղջիկը՝ Սառան, համակրում է Արտեմին՝ պատահականորեն տեսնելով նրա կրծքի նշանը՝ զատիկի պատկերով: Նույն նշանն ուներ նաև Սառան: Աշխա-

տանքի վայրում Արսենը, նկատելով Արտեմի կրծքի նույն նշանը, սուզվում է խոհերի մեջ, քանզի Սառայի մայրը՝ Արսենի առաջին կինը, որ անժամանակ կնքել էր մահկանացուն, նույնպես ուներ այդ նշանը:

Սառան և Արտեմը ծանր ապրումների մեջ էին: Մահացել էր նաև Արսենը, որի երկրորդ կնոջից՝ Յամեստից, աշխարհ էր եկել Սրբուհի աղջիկը:

Երևանից Տրակերտ են ժամանում Արտեմի և Սառայի ընկերները՝ Ռոմանը և մի խումբ աղջիկներ: Ռոմանը մոր հետ Ամերիկա էր գաղթել Վանից և ապա՝ Երևան:

1930-ական թվականների մղձավանջային օրերն էին: ՊԱԿ-ի «ամենատես» աչքը և «ամենասուր» ականջը շուրջկալ են անում Ռոմանին և Արտեմին, մեղադրում կապիտալիստական երկրներին, կոնկրետ Ամերիկային՝ լրտեսություն անելու մեջ, նետում Բաքվի բանտը: Բաքվում «դատում» են Ռոմանին և Արտեմին, որոշում պատժի գերագույն չափ՝ աքսորելով Սիբիր՝ այնտեղ վճիռն ի կատար ածելու: Նրանց որոնում է Սառան՝ գտնելով Ռոմանին: Սառան ևս դատապարտվում է, որպես Արտեմի քույր, նա ևս պատիժը կրում է Սիբիրում: Սակայն Սառան, Ռոմանը, նաև՝ Արտեմը, հնուտ բժիշկներ էին, նրանց խնայեցին՝ հնարավորություն տալով, որ պայքարեն Սիբիրի կալանավայրերում բռնկված ժանտախտի դեմ:

Իրադարձություններն իրար հաջորդում են գլխապտույտ արագությամբ: Սառան ամուսնանում է Ռոմանի, իսկ Արտեմը՝ Սրբուհու հետ:

Վեպի սյուժեի զարգացման ֆոնի վրա՝ ժամանակի և տարածության հոլովություններ կայացված է նաև Մեծ Հայրենականը, որին մասնակցում է Արտեմը, պարզևատրվում մեղալներով ու շքանշաններով: Սակայն հետպատերազմյան շրջանում ևս շարունակվում էին ՊԱԿ-ի և Ադրբեջանական իշխանությունների, ինչպես նաև Ղարաբաղում գործող նրանց սատրապների հակա-

ժողովրդական, հակահայկական դաժանություններն ու հալածանքները:

Ինչպես ամբողջ հայության, այնպես էլ ցեղասպանությունից փրկված հարարցիների համար Արցախյան ազգային-ազատագրական պայքարը դառնում է ժողովրդի արժանապատվության վերականգնման և Արցախի փրկության մարտ: Այս սրբազան գոյամարտին մասնակցում են Արտեմի որդիները՝ Սուրենը և Սերոբը, Արցախին նվիրելով ամենաթանկը՝ կյանքը: Որդեկորույս հոր՝ Արտեմի համար ամենասփոփիչը Արցախի ազատությունն է, որի ապագայի ծփանքների հետ է կապում իր ծննդավայրի՝ Յարարի անվան հոլովումը:

Վեպն ավարտվում է անսպասելի, նովելային լուծումով...

Մի օր Արտեմը մեռնության տխուր խոհերով պառկում է քնելու: Եվ գիշերը տարօրինակ երազ է տեսնում: տեսիլքի մեջ հայտնվում է մայրը՝ գեղեցիկ մի զատիկ վարսերի վրա: Մայրը դիմում է որդուն. «Արտեմ, առավոտյան երբ գնաս Շըռշըռանի մոտ, մի լուցկու տուփ կվերցնես քեզ հետ, հատիկները կվառես ու կնետես ջրվեժի մեջ... Կտեսնես, որ ջուրը հրդեհով բռնկվում է»:

- Իսկ ո՞րն է դրա իմաստը, մայրիկ:

Մայրը պատասխանում է. «Իմաստը նրանում է, որդիս, որ քո մեջ աստվածային ոգի կա, կրակ կա... Քեզ հնարավոր չէ հաղթել: Դու անմահ ես»:

Արտեմը վաղ առավոտյան արթնանում է քնից, որոշում մոր պատվիրանն անպայման կատարել: Արտեմը խորհում է կյանքի իմաստի և մահվան մասին: Նա չի վախենում մահից: Մահը նրա համար երբեք սարսափելի չի եղել: Իրականացվել է նրա գլխավոր իղձը՝ տեսել է Արցախն ազատագրված: Ահավորն այն էր, որ երկու որդիները, որոնք պիտի ծնողներից հետո հայրական օջախը շենացնեին, զոհվեցին կռվում, աղջիկն Ամերիկայում է, մեծ տղան՝ Ռուսաստանում... Ասել է թե՛ իր մահից հետո տունը դատարկվում է: Եվ Արտեմը, որ միշտ եղել է վճռական ու հաստատ,

սկզբունքի մեջ՝ հստակ, հզոր կամքը նրան միշտ եղել է ապավեն, այժմ խոհերի մեջ էր: Արտեմը հասնում է Շըռշըռանի ջրվեժին, նստում քարաբեկորի վրա, գրպանից հանում լուցկին և նրա հատիկները վառելով՝ սկսում է նետել ջրի մեջ: Եվ հանկարծ լույսով բռնկվում է գետը, ու լսվում է մի ձայն. «Պապիկ...»: Այդ ձայնը հնչում է երկրորդ, երրորդ անգամ: Արտեմը շրջվում է և նկատում, որ իր առջև կանգնած է թխահեր, գեղեցիկ կազմվածքով մի պատանի. «Ես քո թոռնիկն եմ... եկել եմ տուն: Ուզում եմ ապրել այստեղ»:

Արտեմը տեսիլից ծանր-ծանր վեր է կենում, մոտենում տղային, երկու ձեռքով ցավեցնելու չափ ամուր բռնում նրա թիկնեղ ուսերից ու հարցնում. «Բալիկ ջա՛ն... Ես քո տարիքի տղաթոռ չունեմ: Անունդ ի՞նչ է»:

Պատանին պատասխանում է. «Ան՞ուս... Արտեմ Արշակի Գասպարյան»:

Պարզվում է, որ պատանին Շաֆիգա-Շամիրամի թոռն է: Արտեմը Շաֆիգայի հետ ինտիմ հանդիպումներ էր ունեցել Բաքվում, երբ սովորում էր արհեստագործական դպրոցում: Շաֆիգա-Շամիրամը կոտորածից փրկված հայուհի էր, նրան որդեգրել են Բաքվում: Շաֆիգան ինքն էլ չգիտեր այդ մասին, իմացել է տարիներ անց:

Պատանին պատմում է, որ տասը տարի առաջ իր տատիկը մահացել է Տիֆորեցկ քաղաքում, որտեղ նա գտել էր իր տարոնցի հարազատներից մեկին: Իսկ տատիկը շատ է պատմել Արտեմի մասին:

Արտեմը հետաքրքրվում է և պահանջում, որ պատանին բացի կուրծքը: Վերջինս կատարում է Արտեմ պապիկի ցանկությունը: Արտեմը տեսնելով զատիկի նշանը պատանու կրծքին, ասես գտնում է իր երազը: Հասնելով տուն՝ Արտեմ պապիկը գրպանից հանում է դարպասի բանալին և նվիրում նրան: Բակ մտնելուն պես նկատում են, որ ջրավազանի մոտ մի քանի թռչուններ են

հավաքվել ու լվանում են իրենց դեղնակարմիր կուրծքը: Իսկ ջրավազանի հատակից Արշակ թռռան էր նայում Արտեմի նկարած զատիկը... Դա անտես չի մնում թռռան հայացքից, անմիջապես բացականչում է. «Մեր Մարիամ բոլոճն է», ասել է թե՛ զատիկն է:

Խորհրդանշական այս պատկերի մեջ ասես հարություն են առնում ոչ միայն նրանք, ովքեր հեռացել են կյանքից, այլև նրանք, ովքեր իրենց ճանապարհն են շարունակում՝ նոր սերունդները:

Հաջորդ օրը Արտեմ պապիկը Արտեմ թռռան հետ շրջում է իր աճեցրած երազելի այգում: Հասնում են սպիտակ թզենուն, որ բերել էր Հարարի հանդերից և աճեցրել: Արտեմ պապը թզենուն հասնելուն պես հանդիսավոր կանգ է առնում, ձեռքը տանում սրտին, ու մինչև թռռնիկը ջուր կհասցնեք, փակում է աչքերը և մտնում հավերժության գիրկը: Իսկ արևը շողեր էր ցանում Տրակերտի վրա:

Վ. Հակոբյանի «Ձատիկը ջրավազանի հատակին» վեպում ներկայացվում է Արցախի մոտ հարյուր տարվա պատմությունը: Այն գեղարվեստական պատում է թուրք հրոսակների կազմակերպած 1905-1915, 1918-1920 թվականների կոտորածների, խորհրդային 70 տարիներին Ադրբեջանի և ՊԱԿ-ի կազմակերպած հայահալած քաղաքականության ծանր հետևանքների, Արցախյան արժանապատիվ գոյամարտի մասին:

Վեպը խմբագրել է ակադեմիկոս Ս. Սարինյանը: Երկի համառոտ հանձնարարականում նշված է. «Գիրքն ընթերցվում է հետաքրքրությամբ»: Մենք հաստատում ենք այս կարծիքը ու միաժամանակ ընդգծում, որ արդի հայ արձակը հարստացել է նման լայն կտավի ստեղծագործությամբ:

Վեպն աչքի է ընկնում ոչ միայն թեմատիկ-գաղափարական հարստությամբ, այլև գեղարվեստական յուրահատկությամբ: Լեզուն պատկերավոր է՝ ենթաբնագրային բազմաշերտությամբ,

արտահայտչամիջոցների թարմությամբ, արցախյան երանգավորումներով: Ամբողջական և բազմակողմանի կերպարներ են Արտեմը, Սառան, Ռոմանը, ազգային կորուստների ցավից իմաստնացած Անտիկվար Անդրոնը, ՊԱԿ-ի լրտես Ամբիոն Չախունը, սունգայիթյան ջարդերի ժամանակ կնոջն ու մանկանը կորցրած Արգամը, որ Արցախյան պատերազմում ստանում է Վրեժ-Արգամ անունը, ռուս Դմիտրի Օգարյովը, որ զոհվում է հանուն Արցախի ազատության, Չարարի կոտորածներից խենթացած Սարուխանը, որ միշտ ուզում էր հասնել հայրենի գյուղ, բայց չէր կարողանում ու վերջապես դառնում է Չարարը զավթած ազերիների զոհը:

Յուրաքանչյուր վեպի սյուժեի հիմքում լինում է սուր կոնֆլիկտ, որ ընդգծվում է դրական և բացասական կերպարների առկայությամբ ու պայքարով:

Վ. Հակոբյանի վեպի կոնֆլիկտի բացասական կողմը Հայոց ցեղասպանությունը կազմակերպած ազերի-թուրք հրոսակներն են, որոնց անունները չկան գրքում, սակայն բոլոր մասերում զգացվում է նրանց վայրենության, ապա նաև անհատի պաշտամունքի տարիներին Ադրբեջանի կառավարող շրջանների և ՊԱԿ-ի վարած հակաժողովրդական ու հայահալած քաղաքականությունը: Վիպական այս հնարանքը լրիվ արդարացնում է իրեն:

* * *

Ինչ վերաբերում է գրքի վերանգրին, որ մատնանշում է զատիկի պատկերը, կարող ենք ասել, որ այն խորհրդանշում է ցեղասպանության պատճառով կորուստներ կրած հարազատների անանցանելի ցավն ու արյան կանչը, իրար գտնելու և կյանքը շարունակելու բաղձանքը:

Վեպի գեղարվեստական հյուսվածքի մեջ ներառված պատկերները ոչ միայն ենթարկված են գաղափարական մտահղացմանը, այլև նպաստում են կերպարների հոգեկան ապրումների

լիարյուն բացահայտումներին: Հարարցիների կյանքի պատկերումն առնչված է հայ ժողովրդի դարավոր սովորությունների, կենցաղի, բարոյահոգեբանական մթնոլորտի, կամքի ուժի և այլ բարենասնությունների ներկայացման հետ: Նշենք նաև, որ այդ ամենը պատկերվում է վիպական պատումի գլխավոր գծի՝ Արցախում 20-րդ դարի սկզբին թուրքերի կողմից կազմակերպված ցեղասպանության ճշմարտացի նկարագրով:

Վեպի պատումի ամբողջ ընթացքում առկա են թե՛ պոետական և թե՛ բանահյուսական երանգները: Վեպի պատկերավորությունը, ցավի զգացումը՝ կապված ցեղասպանության հետ, հումորի սրությունը՝ Ստալինի և ՊԱԿ-ի ներկայացուցիչներին բնութագրումներով երկը ինչ-որ չափով հասցնում են ժողովրդական վիպասքի հնարանքներին:

Ինչ վերաբերում է հայ ժողովրդի արցախյան հատվածի՝ դարերի ընթացքում ձևավորված ու իմաստավորված կենցաղի ու սովորությունների պատկերմանը, այստեղ արդեն հեղինակը ներկայանում է որպես ոչ թե սովորական գրող, այլ իմաստուն-բանասաց ծերունի, որը ոչ միայն պատմողն է, այլև այդ ամենի կրողը:

Վ. Հակոբյանի համար պատմական հիշողության դասերը ժողովրդի գոյատևման ու զարգացման, գալիքի հանդեպ հավատով լցվելու կենարար աղբյուր են: Պատմության այդ ընկալումը հնարավորություն տվեց նրան իմաստավորել հայրենիքի և ժողովրդի միաձույլ ընթացքը: Նրա ստեղծած պատկերները՝ իրենց տեսակներով, ժողովրդի հոգեբանության, բնավորության գծերի խոսուն արտահայտություններ են: Վեպի բոլոր բաժիններն ու էջերը հագեցած են գրողի պարտքի զգացումով, որն էլ օգնել է նրան սուզվել ժողովրդի պատմության մեջ, յուրացնել իրեն հուզող հիմնախնդիրը, շոշափել այն ծանր մաքառումները, որ ուղեկցվում էին և՛ անմեղ զոհերով, և՛ վերածնվելու հավատով: Այստեղ անհրաժեշտ է ընդգծել Վ. Հակոբյանի՝ պատմության խոր-

քային իմացությունն ու արժեքավորելու կարողությունը: Նա հոգու և մտքի աչքերով տեսել ու կարդացել է ավարայրված Սարդարապատի և սարդարապատված Արցախի գրված ու չգրված մատյանները, զգացել է Արևմտյան Հայաստանում և Արցախում սելջուկ-թուրքերի կազմակերպած Հայոց ցեղասպանության անմոռաց ցավը, որ մխում է հայի արյան մեջ:

* * *

«Ձատիկը ջրավազանի հատակին» ստեղծագործությունը նոր խոսք է ժամանակակից հայ արձակի բնագավառում: Վեպն ընթերցողին հիշեցնում է քննություն բռնած տեսական մի սկզբունք, որ գրական ժանրերը, այդ թվում և վեպը, պատմական երևույթ են՝ ենթակա փոփոխման՝ կապված ժամանակի, գրողի նախասիրությունների, ոճի, կենսահայեցողության և այլ ստեղծագործական երևույթների հետ: Այստեղ ևս ընթերցողին օգնության է հասնում հեղինակը՝ Վ. Հակոբյանը. «Վեպի ոճն ինձ հուշել են երկրում ծավալվող դեպքերն ու կերպարները, գործողություններն ընթանում են հիմնականում հուշերի վերապրումով, սլացող մեքենայի ետահայաց հայելու մեջ ձգվող ճանապարհների պես, որոնք խորհրդանշում են հեռուն՝ հայտնի և անհայտ, հասանելի ու անհասանելի աշխարհ, որին ձգտում ենք ամենքս» (էջ 4):

Սակայն այդ չի նշանակում, թե վեպը վերածվում է հուշագրության: Նրանում առկա են կոմպոզիցիոն տարբեր միջոցներն ու ձևերը, որ վկայում են հեղինակի էպիկական մտածողությունը: Հակոբյանի վեպն ապացույց է այն ճշմարտության, որ նրա սահմանները կաղապարված չեն: Համաշխարհային գրականագիտությունը հաստատել է, որ սյուժեն կերպարի զարգացման պատմությունն է: Վ. Հակոբյանը և՛ հավատարիմ է մնացել այս անհրաժեշտ պահանջին՝ միաժամանակ իրեն ազատ զգալով կերպարները բնութագրել և՛ էպիկայի, և՛ քնարականության, և՛ դրամատիկական հնարանքների կիրառմամբ:

Ակադեմիկոս Ս. Սարինյանը ժամանակակից վեպի վերաբերյալ ընդգծել է. «Ժանրի զարգացումը կարծես հակում ունի դեպի ինտելեկտուալ-հոգեբանական վեպը, որը նման է մենախոսության և եսակենտրոն հերոսի ինքնավերլուծության» («Գրական թերթ», 2005, թիվ 1): Վ. Հակոբյանի վեպի կառուցվածքն ու հեղինակային գերակշիռ խոսքը, կերպարների արարքները հաստատում են անվանի գիտնականի դիտարկումը:

Ընդհանրության մեջ Հակոբյանի այս երկը կարող ենք բնութագրել որպես հոգեբանական վեպ: Դա հաստատում են ստեղծագործության գլխավոր կերպարի՝ Արտեմի ծանր ապրումները՝ անձնական և անանձնական կորուստների հետևանքով: Կորուսյալ եզերքի ցավի զգացումն այնքան խորն է, նրան հասնելու ճանապարհն այնպես անհնարին, որ հաճախ Արտեմին մղել է ժայռից անդունդ նետվելու մտքին: Բայց ամեն անգամ, երբ փորձել է դա անել, մի Չայն իրեն ետ է պահել. «Դա մոր Չայնը չէր, որ հիմա չկար, կնոջ Չայնը չէր, որ հիմա չկար, պատերազմում զոհված երկու տղաների ձայները չէին, ոչ էլ ծանոթներից մեկի Չայնն էր» (էջ 7): Բայց կա այդ Չայնը, որ վեպում վերածվում է գեղարվեստական կերպարի:

Հեղինակը Չայնին գումարում է տուն տանող ճանապարհը, որ դառնում է կորուսյալ երկրի ցավից ծնված փիլիսոփայություն՝ առնչվելով իր՝ հեղինակի կենսահայեցողության ապրեցնող ավիշին: Վ. Հակոբյանը մատնացույց է անում տուն տանող ճանապարհը և ստանում տեսիլքային կերպարի իմաստությունը. «Ճանապարհ չկա... Աշխարհում ոչ մի ճանապարհ չկա, այն, ինչ որ տեսնում ենք աչքով, սրանք սովորական անցուղիներ են: Ճանապարհը մարդու մեջ է լինում» (էջ 7):

Այստեղ կիրառվում է կարոտի մեղմացման մի նոր հնարանք: Հեղինակ-հերոսն Արտեմին հրավիրում է հարևան գյուղ, իրենց տուն: Բակում դեռ առաջին քայլի վրա Արտեմը ցանկանում է տեսնել հեղինակ-հերոսի մորը, հորը, քրոջը, եղբորը: Եվ երբ

տան անդամները դուրս են գալիս բակ, Արտեմի դեմքը դառնում է կարմիր-ոսկեգույն, բիբերում արթնանում են կրակներ, և դառնում է ավելի կայտառ: Սակայն նա չի ընդունում հեղինակ-հերոսի հրավերը՝ մտնելու իրենց տուն:

Վ. Հակոբյանն այստեղ ևս կատարում է հոգեբանական մի գյուտ-բացահայտում՝ ընդգծելով կորցրածի և պահանջվածի, ցավի և սփոփանքի հակադրամիասնությունը. «Չէ, որդի ջան, Ուզում էի տեսնել, թե ինչպես ես տուն հասնում: Կարոտել էի տուն հասնելուն: Դու գնա: Շնորհակալ եմ» (էջ 8):

Վեպի սկզբում Արտեմի տեսիլք-կերպարը կրկին այցելում է Շըռշըռանի բարձունք, հիշում իր վաղամեռիկ կնոջը՝ Սրբուհուն, մտորում որպես արհավիրքներ տեսած, մահվան դաժան աչքերին համարձակ նայած հայ: Արտեմը ներկայացվում է որպես անմոռանալի հուշերի խորհրդանիշ: Նա կանչում է հրեշտակաթև իր կնոջը՝ Սրբուհուն: Ու նրան արձագանքում են հայրենի լեռներն ու ձորերը:

Արտեմի հետ կապված այս պատումն իրականի և տեսիլքի երանգներով նոր էջեր է բացում վեպում: Արտեմը կորուսյալ բնակավայրից գալիս է քաղաք՝ իր ձեռքով կառուցած բնակարանում գիշերելու: Հեղինակային բնութագրմամբ այդ բնակարանը համարվում է տուն. «Չէ՞ որ երկհարկ շենքի ինը սենյականոց բնակարանի ամենաշքեղ մնջարանը, ուր մի ժամանակ քնում էին իր չորս երեխաները, երբ դեռ շատ փոքր էին, տրամադրել է նրանց, այսինքն՝ նրանց մեծադիր նկարներից՝ կողք-կողքի: Արցախյան զոյամարտում զոհված տղաներին՝ Սուրենին և Սերոբին, որոնց կողքին տեղ է գրավել կյանքից անժամանակ հեռացած մայրը՝ Սրբուհին: Կողքի սենյակում Ամերիկայում ապրող մինուճար աղջկա՝ Սիրունի և ավագ որդու՝ Ժորայի նկարներն են: Արտեմը երբ բացում է նրանց սենյակի դուռը, նկարները նայում են այլ հայացքով, բուլբուլի ուրիշ, իսկ ինքը նրանց հետ խոսում է ամենաառօրեական կենցաղի ու հոգսերի մասին:

Վեպուն էջից էջ խտացվում են իրականի քաղցրության հուշը և որբացած մանկության դառնությունը: Արտեմը դրանց կրողն է: Նա նույնիսկ իր երազ դարձած և հեռվում ապրող հարազատների հոգատարության հորդորն է լսում: Աղջկա ձայնն է հասնում Ամերիկայից: Ռուսաստանում ինքնապաշտպանության համար սպանություն կատարած որդու՝ Ժորայի դառնացնող խոսքն է լսում. «Թեկուզ բանտ են ընկել և ցմահ այստեղ կաղոթեմ զնդանի պատերից դուրս գտնվողների համար, բայց հավատում եմ նեղ պատուհանից (եթե կարելի է այն կոչել այդպիսին) առանց թույլտվության տեսակցության եկած լույսի փոքրիկ շողին, որի մեջ բուրում են դուրսը, մեր տունը, ամբողջ աշխարհը» (էջ 10):

Հեղինակը հոգեբան գրողի հմտությամբ տեսնում է Արտեմի հուզաշխարհը: Պատերազմում զոհված զավակների հետ խոսակցությունը չի ստացվում, ուզում է ամենաջերմ բաներն ասել, բայց լեզուն պատ չի գալիս: Սակայն նրանց հոգիների հետ շփվելու մի ելք է գտնում. կնոջ խոհարարական գոգնոցը վերցնում-կապում է, ասես զգալով տնեցիների մտերմիկ-ծաղրական փոքկոցը, սկսում է խոհարարական նորամուծություններ կատարել:

Վ. Հակոբյանը, որ ստեղծագործական համարյա կեսդարյա փորձ ունի, դիմում է արցախահյուս ու արցախաբույր մի հնարանքի, որի օգնությամբ ներկայացնում է ոչ միայն արցախյան խոհանոցը, այլև պարզ ու բնապաշտ բնավորությունը, այդքան էլ պարզ ապրելակերպը: «Սերոբը և Սուրենը սիրում էին արցախյան ժենգյալով հացը: ...Արտեմը սարերից քաղած կինձմն-ծուկը, ճռճռուկը, կուտեմը, սամիթն ու թրթնջուկը լվանում-մաքրում է, նրանց ավելացնում Շըռշըռանից բերած մանուշակի հատիկները (կանաչեղենի առանձին հատիկներ սիրում է պահել չորացրած վիճակում), հացենու սպիտակ տախտակի վրա, որ ինքն էր պատրաստել կնոջ համար իբրև խոհարարական պիտույք, կտրում, ապա տաշտից վերցնելով մեզարը, տաշտամաքրիչի ծայրով ետ տանում քացախած խմորը, զնդերը բացում ու

նրանց մեջ բուռ-բուռ կոշտ աշխատանքներից ճաքճքած մատների ծայրերով վերցնում կտրտված ժենգյալը, լցնում ծափօժեփված գնդերի մեջ ու դնում երկաթյա ուռուցիկ սալին... Տաս-տասներկու բոպեից արդեն պատրաստ է ժենգյալով հացը» (էջ 11):

Ազգագրական այս պատկերը ծառայում է Արտեմի կարոտակեզ հուշերի ցուցադրմանը, որ մի կողմից անցյալի, մյուս կողմից՝ անսփոփ ներկայի համաձուլվածք է: Այդ ծանր ապրումների մեջ էլ Արտեմն իր մեջ կրում է ժողովրդի անմարում ոգին ու անկոտրում կամքը, ինչպես գրողն է ընդգծում. «Ափսոս, որ մարդն իրեն չգիտե: Արտեմն էլ իրեն չի հասկանում, միայն մի բան գիտե՝ երբեք չի հանձնվել» (էջ 12):

* * *

Վեպի սկզբում այս պատումը փոխարինում է նախադրությա-
նը: Սյուժեի հանգույցը սկսվում է 1915 թվականի արհավիրքի
նկարագրությունից:

Արտեմը մի մատ երեխա էր, երբ մայրը փախչում էր Չարարից: Ենիչերիները հասնում են ու թիկունքից սրի մի հարվածով գետնին գլորում մորը: Այդպես նա մնում է մի ամբողջ գիշեր: Առավոտյան մի պառավ հայուհի՝ Մարիամ անունով, նրան գտնում է արյան մեջ կորած: Կրծքի կաթի հետ մոր արյունն էր խառնվել: Նրան մայրու-
թյուն է անում Մարիամ մայրիկը: Նա պահում-մեծացնում է Արտե-
մին և սփոփում ինքն իրեն: Մարիամ մայրիկն էլ փնտրում էր իր ըն-
տանիքը, իր զավակներին: Բայց ոչ մեկին չէր գտել: «Քեզ գտա,-
ասում է նա Արտեմին,- Տիրոջ կամքն էր: Քեզանով ապրեցի, քո մեջ
գտա կորածներին» (էջ 12): Մարիամ մայրիկը պահ է տալիս Արտե-
մին, որ իրենից հետո փնտրի իր հարազատներին՝ երկի արդեն մե-
ծացած, տուն-տեղ դրած կլինեն: Եվ նա վերհիշում է իր որդիներին՝
Աշոտին, երկվորյակներ Վարոսին ու Վարդանին, հիշում է Անուշին
ու Աշխենին, որոնք ծամեր ունեին:

Բայց տեղի է ունենում անսպասելին: Արտեմը դեռ տաս տա-

րին չբուլորած, Մարիամ մայրիկը կնքում է մահկանացուն: Արտեմը նորից մնում է մենակ: Մի քանի օր հետո հարևան գյուղի ծերունիները հավաքվում և որոշում են Արտեմին տիրություն անել: Նպատակահարմար են գտնում գյուղի նախիրը վստահել նրան, իսկ երբ քսանը կլրանա, կամուսնացնեն մի հալալ ծծկերի հետ: Իսկ Մարիամ մայրիկի հարևանուհին, որ շեն գերդաստանի մայր էր, Արտեմին հրավիրեց իրենց տուն՝ ասելով «Միասին կապրենք, հաշվիր՝ քո մայրն են»:

Բայց ինչպես ասում են, որբի բախտն իր հետ է: Մի անգամ, երբ նա սարում հովվություն էր անում, զինված թուրքերը հարձակվում են և խլում գյուղի նախիրը: Արվագետուկցիները ծիպորված հասնում են անասնագողերին, հետ բերում իրենց հոտը, իսկ արյունլվա Արտեմին տանում են հիվանդանոց: Ոտքը վնասվել էր: Նրան բուժում է ժողովրդական բժիշկ Սաթենիկը:

Ճանապարհը Արտեմին տանում է Բաքու: Մի նշանավոր համագյուղացու միջնորդությամբ Արտեմն ընդունվում է նոր բացված արհեստագործական դպրոց: Բայց նա թուրքերեն չգիտեր, ավարտել էր Արվագետուկ գյուղի ութամյա դպրոցը մայրենի լեզվով:

Արտեմն այդտեղ հանդիպում է մի մարդու, վերհիշում մեծ սարում անասնագողերին, որոնց մեջ էր նաև հայերեն իմացող այդ մարդը: Նա մի օր Արտեմին բացատրում է, որ ինքը պատահական էր հայտնվել գողերի շարքում ու ներողություն է խնդրում Արտեմին եղածի համար: Դա Դադաշ անունով մի ադրբեջանցի է, որ խորհուրդ է տալիս վերադառնալ Ղարաբաղ և ապրել հայրենակիցների մեջ: Դադաշը Քաշաթաղի Մուսուլմանլար գյուղից էր, այն հայերից, ովքեր հավատափոխ լինելով, փրկվել են ու փրկել իրենց ընտանիքները: Պարզվում է, որ մուսուլման երիտասարդները երկու անգամ եկել են Արտեմի հետ հաշիվ մաքրելու, այն պատճառով, որ նա քաղցր աչքով է նայել հարևանի աղջիկներին: Մուսուլմանները գտնում են, որ հայը թուրք աղջկան

նույնիսկ ժպտալու իրավունք չունի: Արտենը զարմանում է, քն-
ծիծաղ է տալիս ու տխրում՝ հիշելով իր մաքուր-անմեղ հայացք-
ների փոխանակումը ընկերոջ՝ Սուլեյմանի դասընկերուհիների
հետ:

Սուլեյմանի մայրը ռուս է, նրանց ընտանիքում ազգային ինտ-
րիգ չկա, և այստեղ Արտենն իրեն լավ է զգում: Դեռ ավելին, ին-
քը և Սուլեյմանը եղբայրական դաշինք ունեն:

Իսկ եթե Դադաշի ասածը ճիշտ է, խորհում է Արտենը ու միան-
գամից իրեն աշխարհում զգում մենակ:

Արտենը սիրում էր սուր պահել իր մոտ: Մի անգամ Սուլեյմա-
նի մայրը վերցրել էր այն, հասկացնելով, որ սուր պահելը վտան-
գավոր է, որ ուսումն ավարտելուց հետո կտա իրեն:

Արտենի կերպարը խտացնում է ցեղասպանություն տեսած մի
ամբողջ սերնդի ճակատագիր: Որբության ամբողջ ծանրությունը
կրած այդ արցախցին ձևավորվում է Բաքվում, խորհրդային տա-
րիներին, սակայն նա ականատես է լինում ազերիների իսկական
թրքությանը: Նա Բաքվում հանդիպում է Դադաշ անունով այն
ադրբեջանցուն, որ Հարարի հարևան գյուղից էր, գիտեր հայե-
րեն, այն ավազակախմբի մեջ էր, որ քշում-տանում էին հայկա-
կան գյուղերի անասունները, ու մի անգամ էլ ծեծել էին Արտե-
նին՝ Արփագետիկ գյուղի նախիրն արածեցնելիս:

Վ. Հակոբյանը չի սքողում պատմական իրողությունները, ռե-
ալիստորեն նկարագրում է Խորհրդային Ադրբեջանում իրակա-
նացվող ազգային-խտրական քաղաքականությունն առանձնա-
պես հայերի հանդեպ: Դադաշի խորհրդով Արտենը վերադառ-
նում է Ղարաբաղ, ապրում հայրենակիցների շրջապատում:

Ազնիվ է Արտենը, հայի մաքուր հավատով: Սովորելով Բաքվի
արհեստագործական ինտերնացիոնալ դպրոցում՝ նա չի կասկա-
ծում, որ ազերի ընկերները կարող են օտարի աչքով նայել իրեն,
իսկ երբ նրանք արգելում են Արտենին՝ հաղորդակցվել ադրբեջան-
ցի աղջիկների հետ, զարմանում է: Դեռ ավելին, երբ նա հանդի-

պում է Շաֆրան-Շամիրամին, ազերի-թուրքերը ծեծում են նրան, որ հայ լինելով հանդերձ, համարձակվում է սիրել թրքուհուն:

Յեղասպանություն տեսած Արտեմը շատ լավ է հասկանում, թե ովքեր են ազերիները: Նա սիրում էր սուր պահել: Չնայած ազերի ընկերոջ՝ Սուլեյմանի ռուս մոր հորդորին, որ սուր պահելը վտանգավոր է, նա չէր հրաժարվում սուր ունենալու մտքից, խորհում էր. «Մորս սպանել են, որովհետև անպաշտպան ու անզեն ենք եղել»: Այդ պահին նա կրկին լսում է Դադաշի խորհուրդը: «Կգնաս Ղարաբաղ, Տրակերտ քաղաքում ես ընկերներ ունեն, նրանք քեզ կօգնեն ամեն ինչում (էջ 17):

Սակայն կյանքն ընթանում էր իր հունով: Հեղինակը ներկայացնում է Բաքվում ընթացող թեժ երևույթները: Այդ համապատկերի վրա Արտեմի ծանոթությունը արհեստանոցի դեռահաս կնոջը՝ Շաֆրանին, որին տղաները կատակով քույր Շամիրամ էին անվանում, և որն էլ անտարբեր չէր Արտեմի հանդեպ: Տեղի է ունենում Արտեմի համար անսպասելին: Օգնելով Շամիրամին՝ նա հյուրընկալվում է նրան, որից լսում է, որ ամուսնացած է եղել, բայց ուղիղ յոթ օր անց ամուսինը զոհվել է հեղափոխական ընդհարումների ժամանակ:

Ջրույցից Արտեմը հասկանում է, որ Շամիրամն իր հայրական տան վերջին շառավիղն է, մի աղջիկ, որ կյանքի հատակից չկարողացավ բարձրանալ ավելի, քան արել է, մնացել է մենակ:

Շամիրամի առաջարկով Արտեմը գիշերն անց է կացնում նրա տանը: Առաջին անգամ էր Արտեմը կին տեսել և իրեն տղամարդ էր զգում ու հպարտ, իսկ Շամիրամը ձգտել էր երջանկության պահեր նվիրել Արտեմին:

Արտեմն սկսում է այցելել Շամիրամին: Մի օր էլ, գիշերվա կեսին, երբ նա դպրոց էր ուզում գնալ, ինչ-որ մարդիկ բռնում ու չեն ներում, որ ինքը հայ լինելով հանդերձ, հանդիպում է թրքուհի Շամիրամին:

Արտեմին տարել են հիվանդանոց: Մուսուլմանլարցի Դադաշն

իմանալով, գնացել է այնտեղ, հավաքվել են և ընկերները, բժիշկները, պահանջել են հիվանդի հարազատներին: Դադաշը հայտնել է, որ Արտեմը չունի հայր ու մայր, քույր ու եղբայր, որք է:

Հիվանդանոցում մահամերձ Արտեմը փրկվում է՝ զառանցանքի պահերին միշտ տալով Մարիամ անունը: Իսկ լսողները կարծել են, թե նա տալիս է սուրբ Մարիամ անունը: Իսկ երբ հարցրել են, թե զառանցանքում որևէ բան զգո՞ւմ էր, նա պատասխանել է. «Միայն մի բան եմ հիշում՝ գնացել էի մորս մոտ, և նա, որպես փոքր երեխայի, ձեռքս բռնեց ու բերեց մեր գյուղի ճամփին բաց թողեց, ասաց՝ գնա, գնա, բալաս... Այստեղ քո տեղը չէ» (էջ 23): Նրան տեսիլքի պատկերով երևում է նաև Մարիամ մայրիկը և շշնջում. «Դու պիտի ապրես»:

Ինչպես գրում է հեղինակը. «Արտեմը չհանձնվեց մահվանը: Իսկ հիվանդանոցում նրան խնամում էր Սուլեյմանի բուժքույր մայրը: Շամիրամն այլևս չերևաց: Կազդուրվելուց հետո, երբ Արտեմը գնաց նրա տունը, դուռը փակ էր: Ասում են՝ Արտեմին ծեծող մարդկանցից մեկին գիշերը նա սպանել է անկողնու մեջ ու անհետացել» (էջ 23):

Հեղինակն Արտեմին վերադարձնում է Տրակերտ, որտեղ նույնպես իրեն մեռնակ է զգում, խորհում կյանքի առեղծվածների մասին: Թեկուզ իր որբության պատճառը ազգային և կրոնական խտրականությունն էր, միևնույն է, նա երբեք նույնիսկ չէր մտածել, թե կարող է ընկերության մեջ որևէ դեր ունենալ ազգային պատկանելությանը: Տրակերտում անհանգիստ է նա, ու նրա ներսից ասես խոսում է Ստվերը և հորդորում լինել ուժեղ ու դիմացկուն:

Ջարգանում են իրադարձությունները: Հետաքրքիր է քաղաքի Տերյան փողոցի դեպքը, երբ ավտոմեքենայի հարվածից նա փրկում է մի դեռահաս աղջկա՝ վնասելով իր ոտքը: Առաջին անգամ նա զգում է մի այսպիսի սրտացավ վերաբերմունքը, կրկին հիշում մորը, հարազատներին:

Արտեմին տեղափոխում են հիվանդանոց, և այստեղ իրենից

բացի մի զատիկ կար, կպած պատուհանի ապակուն: Պուտպուտ թևերը շարժելով՝ զատիկն ուզում էր թռչել, բայց ապակին խանգարում էր: Արտեմն ազատում է զատիկին՝ մտորելով. «Գնա ապրիր քեզ համար»:

Արտեմի ճակատագրի և բնավորության բացահայտման միտումով հանդես է բերվում բուժքույր Սառայի կերպարը: Եվ նրա հարցին, որ նշվի Արտեմի հասցեն, Արտեմը զատիկին համարում է իր սուրհանդակը՝ Մարիամ անունով: Ուշագրավ է նաև Սառայի հուշը՝ կապված դպրոցում իր կատարած «Ջատիկ» պարի հետ, և փողոցում մարդիկ հանդիպելիս անվանում էին՝ Ջատիկ:

Ջատիկի ազատության հետ Արտեմը հուլովում է իր հարազատների կարոտը, գուցե հենց զատիկը լուր տանի նրանց իր մասին: Սիմվոլիկ պատկեր է ստեղծում հեղինակը՝ հանձին Սառայի: «Բուժքույրը,- կարդում ենք,- շտապեց պատուհանից դուրս նայել գրանցման մատյանն ու գրիչը կրծքին սեղմած, այնպես, կարծես փորձում էր թաքցնել կրծքի զատկանշանը, քանի որ երբ զատիկի մասին են խոսում, նրան թվում է, թե Արտեմն ամեն ինչ տեսնում է» (էջ 25):

Սառան անտարբեր չէ երևույթի նկատմամբ. նա հարցումի մեջ կարծես ներկայացնում է կրծքի նշանը. «Գեղեցի՞կ զատիկ էր, թևերին սև խալե՞ր կային... Յոթ հա՞տ... Պուտպուտուրի՞կ էր...» (էջ 25):

Ըստ երևույթին, կյանքն ամբողջությամբ առեղծված է՝ բաղկացած տարաբնույթ ու տարածև առեղծվածներից: Վ. Հակոբյանն ինչ-որ չափով շոշափում է աստվածային այդ գաղտնիքները և վեպում հմտորեն բացում է մեկի փակագծերը: Այսպես... Արտեմը հիվանդանոց ընկնելուց հետո սաստիկ բարձրանում է ջերմաստիճանը: Բուժքույր Սառան շատ է անհանգստանում, որովհետև պետք է վիրահատեին Արտեմի ոտքը: Վիրահատությանից հետո համոզվելով, որ հվանդը ոչ ոք չունի՝ գիշերը մոտը մնալու համար, Սառան ինքն է հերթապահում: Եվ որպես բուժ-

քույր՝ նա շատ էր զարմացել՝ տեսնելով հիվանդի աջ կրծքի սև խալը, որ ասես «ինչ-որ մի նաղաշ անզգուշորեն շարժել է վրձինը և մաշկի վրա թողել մի խզբզանք, որն ասես պուտ-պուտ դաջված գույների մեջ թռչող զատիկ է հիշեցնում: Ինչպե՞ս թե...» (էջ 27): Սառային զարմացնում է այդ երևույթը, որովհետև ինքն էլ ունի աջ կրծքի վրա նույն նշանը, որն ասես արտագրված լինի Արտեմի կրծքից:

Այդ պահից հետո Սառային հանգիստ չէր տալիս Արտեմի ոչ միայն հիվանդությունը, այլև ճակատագիրը: Նա երազում է՝ տեսնել հիվանդի մորը կամ հարազատներից որևէ մեկին, որովհետև գրանցումը կիսատ էր թողել՝ որևէ հասցե չիմանալու պատճառով: Եվ կարծես Սառային տանջում էր մի գաղտնիք, որ ցանկանում էր բացահայտել: Սառային անսովոր էր թվում, որ ոչ մի հարազատ չէր այցելում Արտեմին: Յեղիմակն իր հերոսուհու անունից նշում է արցախցու բնավորության լավագույն գծերից մեկը. «Արցախցիների սովորությունն է՝ մեկի մատը փուշ անգամ թե մտավ, տնով-տեղով, գերդաստանով գալիս են, բժշկին են տեսնում, սարեր ու ձորեր են խոստանում, հիվանդանոցի առաջ խմբվում են, ամենալավ ուտելիքներն են բերում (մեկ-մեկ էլ բաժին հանելով բուժանձնակազմին)...

Տրակերտն իր օրենքներն ունի՝ մեկ էլ տեսար, ինչ-որ մի տրակերտցի՝ կենդանի հնդկահավը ձեռքին, հիվանդանոց մտավ՝ բարձրաձայնելով. «Դոխտուրի ցավը տանին ես, խոխես նոր կյանք ա տվալ, ուրան հետե ընք պերալ էտ հընդուշկան» (էջ 29-30):

Վեպի սյուժետային հիմնական գիծը հարստացված է երկրորդական գծերի համադրմամբ: Եվ դրանք այնքան են բնական ու անմիջական, որ վեպն ընթերցելիս ասես տեսնում ես կերպարներին, մասնակցում նրանց զրույցին, լսում, հուզվում, ինչ-որ չափով հիշում եթե ոչ քո, ապա հարևանիդ, բարեկամիդ հետ տեղի ունեցած տխուր և սփոփիչ դեպքերը: Այդ են հուշում Արտեմին Սառայի հանդիպումները, առանձնապես հիվանդանոցում տեղի ունեցածը:

Սրտառուչ դեպք է, օրինակ, վեպի կերպարներից մեկի՝ Անդոյի, ինչպես ժողովուրդն է անվանում՝ Անտիկվար Անդոյի այցը հիվանդանոց՝ Արտեմին տեսության, թեկուզ Անդոն չգիտեր նրան: Պակաս կարևոր շտրիխ է Սառայի մոր գրույցը աղջկա հետ, Սառայի՝ հարազատի զգացումների արթնացումը:

Արտեմի մոտ ամեն ինչ առեղծվածային է: Նա ծնվել է կորուսյալ Չարար գյուղում, բայց անձնագիր է ստացել Բաքվում, արհեստագործականի դիպլոմը գրված է ադրբեջաներեն: Իսկ Արտեմի ծննդականում ու անձնագրում, որոնք տարիներ հետո են միայն լրացվել, որպես ծննդավայր նշում էին Բաքուն, անգամ անունն էին ադրբեջանական ձևով գրել, այսինքն՝ ոչ թե Արշակի կամ Արշակովիչ, այլ փոխված՝ Արշադողլը. Քյասիպով Արտեմ Արշադողլը: Իսկ գյուղի անունը ոչ ոք չէր հիշում, մանավանդ որ, այն փոխվել էր, Չարարը դարձել էր Փարաջան: Ինչպես վիպագիրն է ընդգծում. «Կյանք է, անսպասելի ոչինչ չկա»:

Պատումը հարստացնող հաջող հնարանք է Արտեմի կողմից Սառայի նկարի ստեղծումը: Ի դեպ, դեռևս արհեստագործականում սովորելիս նկարչության դասատուն՝ Կոլյա Ռիպկինն է նկատել Արտեմի գեղագիտական կարողությունները և ասել. «Դու արտակարգ ընդունակությունների տեր տղա ես... Ռեմեսլենին քո տեղը չէ... դու պետք է նկարչական ուսումնարան ընդունվեիր» (էջ 26):

Չենց այդ կարողությունների արդյունքն է, որ Արտեմը ստեղծում է Սառայի դիմանկարը. «Իսկ երբ Արտեմն իր մոր անձնագրային մասունք-նկարն է տրամադրում Սառային, վերջինս շոյվում է իր դիմանկարի և այդ նկարի նմանության հայտնաբերումից: Նա ուրախանում է այն մտքից, որ դարձյալ մի ընդհանուր բան գտնվեց իր ու Արտեմի միջև:

Չիվանդանոցից դուրս գալուց հետո, ինչպես պայմանավորվել էին մինչ այդ, տեղափոխվում է բարի պառավի տուն: Պառավը չգիտեր պատահարի մասին: Եվ երբ տեսնում է Արտեմին՝ հենակնե-

րով, ցուցաբերում է մայրական սրտացավություն ու գորովանք:

Արտեմի ճակատագրի հետ առնչված պատմությունն ընթացք է ստանում հոգեբանական նոր երանգների գունարով: Սառան այցելում է պառավի տուն՝ Արտեմի վիրակապը փոխելու համար: Նորից տեսնելով հիվանդի կրծքի խալ-նշանը՝ Սառան խորհում է. «Չետաքրքիր է... այս մարդու արմատները Չադրուֆի կողմերից են, ինը՝ Տրակերտի հեռավոր լեռներից... Մի՞թե հողը կարողանում է գույներն այսքան հարազատորեն իր միջոցով փոխանցել» (էջ 34):

Արտեմի համար անսպասելի, Սառան հրավիրում է իրենց տուն՝ շինարար հոր թոշակի անցնելու առիթով կազմակերպված միջոցառմանը:

Ցեղասպանություն տեսած, աշխարհով մեկ սփռված հայության ճակատագիրը նույն երանգներն ունի յուրաքանչյուր հայի գերդաստանում: Պա սովորական ճակատագիր չէ, դա հյուսված է կորուստների, ցավերի, կարոտների և մի քիչ էլ հույսի թելերից: Վ. Չակոբյանի վեպն այս համազգային ցավի հոլովումներից է: Վկան հենց վեպի կերպարները՝ կարոտի և հույսի ողջակիզվող սրտեր:

Պարզվում է, որ Սառայի հայրը՝ Արսեն անունով, նույնպես մեր ազգային ճակատագրի խորհրդանիշերից է: Արսենը ևս դժվար կյանքի ծնունդ էր: Լսենք գրողին. «Մեսրոպ անունով քեռի ուներ Վրաստանի Ռուսթավի քաղաքում: Աստված նրան և իր Մարուսյա անունով կնոջը երեխա չէր պարգևում: Ու մի օր, երբ նրանք եկան Ղարաբաղ, տեսան Արսեն անունով փոքրիկ բարեկամին, որոշեցին քաղաք տանել նրան, մանավանդ, վերջինս պոկ չէր գալիս Մեսրոպ քեռու գրկից: Ընտանիքի յոթերորդ զավակն էր Արսենը, ծնողները շնորհակալությամբ համաձայնեցին» (էջ 36):

Սակայն, ինչպես նշել ենք, կյանքն առեղծվածների հյուսվածք է: Արսենը դեռ շինարարական ուսումնարանը չավարտած՝ իր նոր ծնողներն ավտովթարի զոհ դարձան: Եվ նրա քաղաքային միակ

խնամակալը դարձավ հոր կողմից հեռավոր բարեկամներից մեկը՝ Սիմակը, որը թիֆլիսաբնակ էր: Ինչպես պատմում է գրողը, Սիմակի և Արսենի ծնողների արանքով ժամանակին «սառը քամի» էր անցել: Սիմակ անունով ազգակիցը շատ էր ուզում Արսենի քույրիկներից մեկին որդեգրել, բայց Արսենի մայրը չէր համաձայնում: Եվ նա խնամակալության է վերցնում Արսենի հոր բարեկամներից՝ Առուստամի վեց աղջիկներից մեկին: Այսպես, Արսենը և Սիրունը հայտնվեցին Ղարաբաղից հեռու մի քաղաքում: Վրացերենին շատ արագ տիրապետեցին: Հայրենի Հարարին կարոտում էին: Արսենն ու Սիրունը քանի մեծացան, սկսեցին ավելի շատ երազել իրենց ծննդավայրի մասին: Իսկ երբ իմացան, որ թուրքերը մտել են Հարար, սրի ու կրակի քաշել մեծ ու փոքրի, ավերել, չգիտեին՝ արդյոք, որևէ մեկին հաջողվե՞լ է այդ սպանդից փրկվել, ի՞նչ ճակատագրի արժանացան իրենց ծնողները, քույրերը, եղբայրները: Նրանք իրարամերժ լուրեր էին լսում, մինչև որ մի հարարցի՝ Կուքունց Արմենը, հայտնվեց Ռուսթավիում: Արմենի երկու եղբայրները զոհվել են դիմադրության առաջին օրերին, ծեր ծնողներին վառել են հենց տան մեջ: Սիրունի ծնողներից ոչ մի ստույգ տեղեկություն չուներ Կուքունց Արմենը:

Արսենը, եթե անգամ ցանկանար գնալ գյուղ, իմաստ չէր ունենա, որովհետև արդեն գյուղը չկար: Ծանր ապրումներ է ունենում նա, դպրոց չի հաճախում, ընկնում է հիվանդանոց, գիտակցությունը կորցնում: Նրան տեղափոխում են Թբիլիսիի հիվանդանոցներից մեկը, որտեղ բուժվում է երեք ամսից ավելի: Իսկ երբ այնտեղից էլ տարան Մոսկվա, Սիրունի համար անհայտ մնաց Արսենի վիճակը: Սիրունն ավարտեց Ռուսթավիի բժշկական ուսումնարանը և չլսելով իր խնամակալի թախանձանքները՝ իրենց մոտ մնալու մասին, որոշեց վերադառնալ Ղարաբաղ: Բոլորն արդեն գիտեին, որ Սիրունը ևս Արսենի պես կորցրել է հարազատներին, բայց և այնպես, հույս էր փայփայում նա, որ գուցե գտնի հարազատներին:

Վ. Հակոբյանն այս դաժան դեպքերը ներկայացնելուց հետո պատկերում է ծանր ժամանակաշրջանը՝ տառապալից ու սովալլուկ: Սիրունը սովյալ ու որբ երեխաների մեջ որոնում էր հարազատներից գոնե մեկին, գուցե ճանաչի, տիրություն անի. չէ՞ որ հարարցիներից ոմանք տեղափոխվել են այստեղ:

Վիպագրության ավանդույթով Վ. Հակոբյանը ևս կատարում է հեղինակային զեղում՝ մեջբերելով Շահ-Աբասի կատարած ավերածությունները, նաև Հարարի հանդեպ 1590-ական թվականներին, այնպես, ինչպես Րաֆֆին է փակագծերի մեջ ներկայացրել 4-րդ դարի Հայաստանը «Սամվել» պատմավեպում: Վ. Հակոբյանը բացատրում է, որ գյուղի պատմական անունը եղել է Գիհի, որ վերափոխվել է ու դարձել Հարար, որ պարսկերեն նշանակում է գիհու անտառ: Գիհի-Հարարն առաջին պարտությունը կրել է հենց Շահ-Աբասից: Ավելի ուշ շրջանում օսմանյան ցեղերի ու քոչվորների ասպատակություններին էր ենթարկվում Հարարը: Կործանիչ եղան, սակայն, 20-րդ դարասկզբին ազերի-թուրքերի կողմից կազմակերպված հարձակումները:

Հարձակումները կրկնվել են 1905, 1907 թվականներին: Սակայն 1915թ. եղեռնի ժամանակ վերջնականապես ավերվեց Հարարը: Միայն քիչ թվով հարարցիներ փրկվեցին այդ ահավոր կոտորածից: Ինչպես կարդում ենք վեպում. «Տրակերտում մի փողոց կա, որը կոչվում է Հարարցիների թաղ, թեև ընդամենը չորսհինգ հոգի էին հարարցիներից տեղափոխվել այնտեղ: Նրանցից մեկն էլ Մարգարն էր, երբեմն այցելում էր հայրենակիցներին, թավ բեղերի տակ թաքցնելով թախիժը, ժպտում. «Պինդ կացեք, խոխեք, լավ ա լինելու» (էջ 38): Իսկ ովքե՞ր էին այդ խոխեքը: Նրանք յոթանասունն անց հասակակիցներն էին կամ ընտանիք կորցրած հարսեր, խլեղների մեջ մաշված-չոփ դարձած այաներ՝ արցունքոտված աչքերով:

Վեպում տարբեր առիթներով Վ. Հակոբյանը ստեղծում է դիմանկարներ: Այստեղ կարող ենք բերել հարարցի Մարգարի օրի-

նակը: Մարգարը «երբ դեռ Հարարի հանդերուժ հունձ էր անում, կեսօրահացի ժամանակ մի մորեխ թռել, ուղիղ ընկել է Մարգար քեռու քամած մածոնով ու աղբյուրի սառը ջրով՝ վրան կտրտած սոխ, փրթոշի մեջ, նա ափսոսացել է այդքանը դեմ նետելուց, ուղղակի գդալով ճխել-ճմլել է «անկարգ» մորեխն ու փրթոշի հետ կերել՝ ասելով՝ մի ծակ էլ մորեխն է փակելու սոված փորիս մեջ...» (էջ 38-39):

Բայց արհավիրքը խոցել է նաև Մարգարի սիրտը, նա ևս կորցրել է իր Ավետիս և Ահարոն որդիներին, զավակների կորստին չի դիմացել Արշալույս մայրիկը, կնքել է մահկանացուն, բայց հոգու մեջ վառ է պահել մեր ժողովրդին հատուկ հույսը, և պատահական չէ, որ նա յաթաղանից փրկված հարարցիների համար դարձել է հույսի լուսարար: Նա վեպի այն հերոսներից է, որին ապավինում են համազյուղացիները: Դրա լավագույն արտահայտություններից է նաև Սիրունի և Արսենի հանդիպումը Մարգարին և վերջինիս հայրական հորդորանքը, որ անպայման նրանց ամուսնությունը կատարվի հարարցիներին վայել հարսանյաց հանդեսով:

Մարգարն ուսուցչի վերաբերմունք ունի դեպի ժողովրդի անցյալն ու ներկան՝ նրանց միջև տեսնելով այն կամուրջը, որ ձգված է դեպի գալիք: Մարգարի համար հարսանիքը միայն ուրախության արտահայտություն չէ, այլև ազգային դիմագծի պահպանում, ավանդույթի հղիվում, առանց որի ժողովուրդը կկորցնի իր կենսաձևն ու կեցվածքը: Նա, դիմելով Արսենին, բերում է ուսանելի իր խորհուրդը. «Մեր թաքավերը, մեր Տիկրանը, մեր Մեծը ընջուկես ա ընկնում՝ ասըմ՝ Մարքար, վեր հըրսանեք չի ինի մին տեղ, տրանա յերը փիս պեն չկա, նշանակըմ ա երգիրը քընդվիլական ա... Չէ, չէ, ես Մարքարը չըմ ինիլ, թա վեր ծըգետես հըրսանեք չանիմ» (էջ 42):

Տիգրան Մեծի անունը Մարգարի համար հայ ժողովրդի հավերժության խորհրդանիշ է, ապրելու և արարելու ոգի, որ համա-

կում է նաև Արսենին ու խոհեմությամբ պատասխանում է նրան.
«Խոսքը մեծինն ա, հունցը ասիս, ինդի էլ ըննական ընք»:

Եվ տեղի է ունենում նրանց հարսանիքը:

Վ. Հակոբյանը երևույթը գնահատում է կյանքի փիլիսոփայության բացահայտմամբ: Արսենը երազում է ունենալ տղա՝ իր հոր նման, աղջիկ՝ մոր նման: Իսկ երբ հնչում է հարսանիքի նվազը, Սիրունի սիրտը հրկիզվում է ասես, որ հարազատներից ոչ ոք չկա, որ մասնակցի իրենց ուրախությանը: Եվ Արսենն արցախցու իմաստությամբ պատասխանում է. «Սիրուն, այս հարսանիքին իմ կողմից դու ես մասնակցում որպես հերոսներ, քուրուեղբայր, քո կողմից՝ ես... Ես եմ հարսնեղբայրը» (էջ 44):

Տրակերտցիներն իրար գտած հարարցիների հետ Մարգար քեռու ղեկավարությամբ կազմակերպում են ավանդական հարսանիք, որի հանգամանալից նկարագրությունը գրողի հաջողության գրավականներից է:

Հարսանիքից մեկ տարի անց ծնվում է Արսենի և Սիրունի առաջնեկը: Աղջկա անունը կոչում են Սառա:

Ցավին ցավ է գումարվում: Սիրունի մոտ զգալ են տալիս հոգեկան սթրեսները: Եվ հոգեկան խանգարման օրերը երկար չտևեցին, Սիրունը կնքեց իր մահկանացուն՝ թողնելով փոքրիկ Սառային Արսենի հույսին: Սիրունի մտերիմ ընկերուհիներից մեկը՝ տրակերտցի Համեստը, որ փոքրիկի մայր էր, խոստացավ կուրծք տալ երեխային, պահել իր տանը: Համեստի մանչուկը մահացել էր ծաղիկ հիվանդությունից:

Վ. Հակոբյանը վեպը գրելիս դրսևորել է հոգեբանի հմտություն: Այդ առումով արժե բերել այս պատկերը: Մանչուկին կորցնելուց հետո Համեստն ասես տեսնում էր երեխային. «Եվ երբ Սառային առաջին անգամ գիրկն առավ ու նրա տաք շնչառությունը զգաց կրծքի վրա, աշխարհը նորից իրենը դարձավ, վերադարձավ խաղաղությունը» (էջ 48):

Արսենը համոզվեց, որ պետք է ամուսնանա երկրորդ անգամ:

Այդպես էլ վարվում է: Իսկ Սառան ոչ միայն խորթություն չտեսավ կյանքում, անգամ չիմացավ, որ ինքը ոչ թե Համեստի, այլ հարարցի Սիրունի աղջիկն է: Դա գիտեին միայն Արսենն ու Համեստը: Տարիների հետ փոխվում է կյանքը, փոխվում են մարդիկ, հույսը միշտ փոխվում է շողի, ինչպես գրողն է ընդհանրացնում. «Եթե մոլորակն անգամ կախվի նրանից, այն չի կտրվի» (էջ 49):

Միջանկյալ պատմությունից հետո Վ. Հակոբյանը վեպում անդրադառնում է Արտեմի և Սառայի մտերմության պատմությանը: Չի թուլանում Սառայի հետաքրքրությունը Արտեմի նկատմամբ, նա շարունակում է ավելի ամուր կապվել Արտեմի առօրյայի հետ: Սառան չի մոռանում այն նշանը, որ կա Արտեմի կրծքին: Երբ Արտեմը շինվարչությունում փոխարինեց Արսենին, դարձավ միանգամայն հասուն ու բազմազբաղ մի մարդ, որին այցելելը Սառայի համար դարձավ մի տեսակ ոչ պատշաճ: Ստիպված Արսենն է այցելում Արտեմին և հրավիրում իրենց տուն:

Սառան Համեստ մորը պատմել էր, թե վիրահատության ժամանակ ինչպես է հանկարծ նկատել Արտեմի կրծքի զատկանշանը, ճիշտ այնպիսին, ինչպիսին իր՝ Սառայի կրծքի վրա է: Համեստը սկսում է հետաքրքրվել այդ առեղծվածով: Եվ նա բացում է փակագծերը ու հայտնում Արսենին, որ Արտեմի և Սառայի կրծքի նշանները նույնն են: Սկսում է մտորել նաև Արսենը: Իր առաջին կնոջ՝ Սիրունի կրծքից աղջկան փոխանցված այդ նշանն ինչպես կարող էր նույնությամբ հայտնաբերվել մեկ այլ՝ բոլորովին ուրիշ մարդու կրծքին: Սառայի համակրանքը ևս հուզում է հորը, բայց Սառան դեռ պիտի սովորի Երևանի պետհամալսարանի բժշկական բաժնում: Արսենը միաժամանակ որոշում է իր աչքով տեսնել Արտեմի կրծքի վրա եղած նշանը ու մի օր գնաց որմնադիրների մոտ, որ աշխատում էին: Օրը շոգ էր: Ինչպես բոլորը, այդպես էլ Արտեմն աշխատում էր գոտկատեղից վերև բաց: Արսենը տեսնում է Արտեմի կրծքանշանը և զարմանում՝ նույն

պուտպուտուրիկ զատիկն է՝ առանց չնչին տարբերության: Արսենին համակում է մի տխրություն ու խոհ՝ կարո՞ղ է այդ տղան ողորմածիկ Սիրունի ազգակիցներից է: Այդ օրվանից սկսած՝ Արսենի և Արտեմի հարաբերությունները դարձան խիստ բարեկամական: Արսենը հարազատ որդու տեղ ընդունեց Արտեմին, մանավանդ որ, ինքն արու զավակ չուներ: Եվ նա Արտեմին հրավիրում է ապրել իրենց տանը:

Համեստը հոգատար մայր էր դարձել Սառայի համար, նա չէր տարբերում Սառային իր փոքր աղջկանից: Համեստը ևս հայոց ազգային ծանր ճակատագրի կրողներից է: Նա գաղթականի աղջիկ էր, ծնողները եկել էին Արևմտյան Հայաստանից, երբ ինքը դեռ մեկ տարեկան էր: Լեզուն նա բացել է Տրակերտում: Արսենի հետ ամուսնացավ՝ չհասցնելով նրան սիրել: Դժբախտ էր, մեռավ: Սերն ամուսնությունից հետո եկավ:

Արսենի հրավերով Արտեմը տեղափոխվեց իրենց տուն ու ձեռնամուխ եղավ նրանց բակում ջրավազանի կառուցմանը: Արտեմը նաև հմուտ լողորդ էր Բաքվում, որին, սակայն, մրցումներում երրորդ տեղից բարձր չէին տալիս՝ ասելով, որ ազգը դրսում պիտի ներկայացնի միայն ազգի ներկայացուցիչը:

Այս պատկերը ռեալիստական երանգ ունի, որովհետև Ադրբեջանում միշտ էլ առկա է եղել ազգային խտրականությունն առանձնապես հայերի հանդեպ:

20-րդ դարի վերջին և 21-ի սկզբին հայ գրականության մեջ, առանձնապես պոեզիայում, լայն տեղ է հատկացվել տեսիլքային պոեզիային: Վ. Հակոբյանի վեպում ևս հանդիպում ենք նման պատկերների: Սակայն մի տարբերությամբ: Եթե մեր արդի պոեզիայում տեսիլքայինը հյուսված է ռոմանտիկական զգացումին՝ առնչված իրականությանը, ապա Հակոբյանի վեպում տեսիլքներն առնչված են ազգային այն ցավի հետ, որ ապրում են ցեղասպանություն տեսած հերոսները: Տեսիլքների հետ առնչություն ունեն Սիրունը, Համեստը և վերջապես՝ Արտեմը, որ ստիպ-

ված էր այդ մասին պատմել Սառային: Ստվերը կար: Կենդանի: Շնչող: Արտեմի և ծնողների, նրա հոգու ներքին պատկերն էր այն:

Սառան ձգտում էր հասնել իր նպատակին: Նա մեկնում է Երևան, ընդունվում բժշկական ինստիտուտի վիրաբուժության ֆակուլտետը: Արտեմը մեկնեց Երևան, Սառայի և նրա ընկերուհիների համար վարձեց տուն ու վերադարձավ Տրակերտ:

Սակայն Սառայի և Արտեմի միջև տեղի է ունենում նամակագրություն: Նամակների վերջում Սառան միշտ ստորագրում էր՝ Քույր Սառա:

Արտեմը Տրակերտում մեկ տարի սովորում է գիշերօթիկում, ստանում միջնակարգ կրթության վկայական, արդեն՝ հայերեն գրությամբ: Նա պատրաստվեց համառորեն՝ ամռանը մասնակցեց ընդունելության քննություններին և ընդունվեց բուհ, լողի գծով հրաշքներ գործեց, և նրան գրանցեցին լողի հանրապետական խմբի կազմում:

Սառան ավարտեց ինստիտուտը: Արտեմը և Սառան պայմանավորվել էին ավարտական քննությունների ժամանակ Արսեն հայրիկին և Համեստ մայրիկին խոստովանել իրենց սիրո մասին: Հրաժեշտի երեկոյին Արտեմը ներկայանում է մի գիրկ ծաղիկներով, որ ողջունի Սառային, սակայն Սառան չի երևում: Հայտնում են, որ Սառային փախցրել ու տարել են Կոնդի թաղ:

Հետաքրքիր մի պատում է ավարտական երեկոյի ժամանակ Սառային «փախցնելը», որ փորձել էր նրա ուսանողական տարիների լավ ընկերը՝ Ռոմանը: Սակայն Ռոմանի մայրը՝ Արուսը, տղայի արարքը չի ընդունում, որովհետև Սառան ասել էր, որ ինքը սիրում է Արտեմին: Առաջին անգամ հենց այդ ժամանակ է, որ Սառան համբուրվում է Արտեմի հետ և բարձրաձայնում, որ սիրում է Արտեմին:

Դեպքերը զարգանում են սարից գլորվող ձնագնդի արագությամբ: Փոխվում են ժամանակները, փոխվում են նաև կերպարների ճակատագրերը: Արսենը, որ հովանի էր դարձել նաև Արտե-

մի համար, հիվանդանուն է գանգրենայով և Երևանի հիվանդանոցում կնքում իր մահկանացուն: Դա ծանր հարված էր և՛ Սառայի, և՛ Արտեմի համար: Սգի մեջ էր նաև Համեստը՝ փոքր աղջկա հետ:

Արտեմը և Սառան երազում են ամուսնանալ, բայց Արտեմին հայտնի էր դարձել, որ Սիրունն իր մորաքույրն է եղել, ուստի Սառային վերաբերվում էր եղբայրաբար: Արտեմը նամակ էր ստացել Դադիից, որ դարձել էր Դադաշ: Արժե այստեղ բերել այդ համառոտ նամակը, որ շատ կարևոր դեր խաղաց գլխավոր կերպարների ճակատագրի հետագա ընթացքում: «Արտեմ, քույրս ապրում է Տող գյուղում: Վերջերս եկել էր Բաքու՝ տեսակցության: Պատմեցի քո մասին, պատահաբար: Նա իսկույն ճանաչեց քո ծնողներին, շատ բան պատմեց նրանցից: Ասաց, որ քո մորաքույրը՝ Սիրուն անունով, Թիֆլիսից տեղափոխվել է Տրակերտ՝ կոտորածից հետո ամուսնացել և ապրում է այնտեղ: Ամուսինը դարձյալ հարարցի է, անունը Արսեն է: Դժվար չի լինի նրանց գտնելը: Արտեմ ջան, գիտե՞ս՝ որքան են ուրախացել, երբ այս մասին իմացել են: Վերջապես դու քեզ մե՞նակ չես զգա: Որտե՞ղ ես, ո՞նց ես դասավորել կյանքդ, ի՞նչ ես անում: Քեզ անսահման երջանկություն են ցանկանում: Դադաշ» (էջ 72):

Խոհերը հանգիստ չեն տալիս Արտեմին: Նա մտորում է՝ ուրեմն Սառան և ինքը երկու հարազատ քույրերի զավակներ են: Միաժամանակ ասես չէր ուզում հավատալ դրան: Եվ Արտեմը հիշում է քեռի Արսենի խոսքը. «Արտեմ, այն խալը, որ կա քո աջ կրծքին, իմ առաջին կնոջ՝ քո մորաքույր Սիրունի աջ կրծքին ևս կար...նույն ձևով... Քո մորից է, երևի, անցել քեզ: Դրանից բացի...» (էջ 72-73):

Արսենը, խոր հուզմունք ապրելով, միաժամանակ շարունակել է խոսքը. «Դրանից բացի, այդ լուսնանշանը՝ զատիկով, այդ խալը իր մորից փոխանցվել է նաև աղջկաս: Իմ Սառային...» (էջ 73):

Սակայն դա դեռ ամենը չէր: Արսեն քեռին ավելացրել է. «Ար-

տեն ջան, մայրս ժամանակին պատմել է ինձ, որ քո մորը Սարի-
ամ են անվանել հենց այդ խալի շնորհիվ, տատներն ասել է՝ կրծ-
քին Սարիամ բոլոճի նշան կա, անունը Սարիամ դրեք, մանա-
վանդ՝ աստվածամոր անունը ևս Սարիամ է... Եվ այդպես էլ արել
են, տղա ջան: Մորդ կնքել են այդ սուրբ անունով» (էջ 73):

Կյանքի ծանր փորձություններում կոփված Արսեն քեռին շատ
քնքշորեն զգուշացրել է նաև Սառային. «Աղջիկս... իմ վերջին
ցանկությունն այն է, որ դու քուրություն անես Արտեմին... Ես իմ
հոգու մեջ նրան որդեգրել եմ: Արտեմը եղբայր է, որ ամեն տեղ չի
գտնվում... Լսիր հորդ: Միշտ խելոք է եղել իմ Սառան... Հուսով
եմ, հիմա էլ ինձ հասկանում է» (էջ 73):

Հոր խոսքերը հիշում էր Սառան ու խորհում կյանքի առեղծ-
վածների վրա:

Վեպում նկարագրվող դեպքերը տեղի են ունենում խորհրդա-
յին տարիների շարանի մեջ: Հարարը չկար... Այդ ցավին գունար-
վել էր նաև այն հանգամանքը, որ Ադրբեջանը գյուղը մտցրել էր
Լաչինի շրջանի մեջ, որ հիմա վերականգնվել է հին Քաշաթաղ
անունով:

Վեպում նկարագրվում է ոչ թե Հարարում տեղի ունեցած ցե-
ղասպանությունը, այլ դաժան եղեռնից փրկված հատուկեմտ
հարարցիների չնահանջող ցավը, չսպիացող վերքերը, դառնու-
թյունը, հոգեկան տվայտանքները: Այդ անանցանելի ցավի կրող-
ներն են բոլոր հարարցիները, և առանձնապես Արտեմի և Սառա-
յի, որոնց սիրո ճակատագիրը կրում է հենց իրենց հարազատնե-
րի եղեռնված կյանքի կնիքը:

Հասուն գրչի արեգասիք է վեպը: Հեղինակը կոմպոզիցիոն ձև
է գտել՝ ներկայացնելու խորհրդային անիմաստ ու հոգնեցնող,
ճոռոն ու ծիծաղահարույց պրոպագանդան՝ Ամբիոն Հախումի մի-
ջոցով, որին դիպուկ բնութագրում է. «Ամբիոն Հախումը խոսելու
ընթացքում փոխվում, անճանաչելի է դառնում, լուրջ ու անմատ-
չելի, բայց հենց ավարտում է խոսքը՝ նախկին Հախումն է, սկսում

է ծանոթներին դիմել մտերմիկ ոճով: Քանի որ ճառը միշտ անգիր էր արտասանում, խոսելիս, երբ հայացքն ընկնում է մարդկանց վրա, միաժամանակ մտածում է իր առաջիկա անելիքների մասին» (էջ 75): Իսկ ասելիքն այն էր լինում, որ ծանոթներից ճակնդեղի սերմ էր խնդրում՝ իր բոստանում ցանելու համար:

Վեպի սյուժեի զարգացման ընթացքը կտրուկ ձև չի կրում: Հեղինակը կերպարների հուզաշխարհի բացահայտումը կատարում է շերտավորված, հեռատեսությամբ: Այս տեսակետից սրտառուչ մի պատկեր է սիրո մասին Արտեմի խոհերի նկարագրությունը այն պահին, երբ նա նստած է այգում, Սառայի հետ: Արտեմը գիտեր կոնկրետ, որ Սառան իր հարազատ մորաքրոջ աղջիկն է, իսկ Սառան թեկուզ հիշում էր հոր խորհուրդը, դեռևս չգիտեր ամեն ինչ: Այգուց տուն հասնելուն պես Արտեմի գիրկն է նետվում Սառայի փոքրիկ քույրը՝ Համեստի աղջիկը՝ Սրբուհին և լացակունած արտաբերում. «Ուզում եմ, որ Արտեմը մշտապես մնա մեզ մոտ, մեր տանը» (էջ 77):

Արտեմի և Սառայի փոխհարաբերություններում երկշերտ երանգ էր գոյացել: Արտեմը, որ գիտեր՝ թե Սառան իր մորաքրոջ աղջիկն է, Սառան դեռևս չգիտեր: Այս ապրումների շրջապատույտի մեջ Արտեմը մտորում է՝ ինչպես չասել, որ Սառան իր քույրն է, որ ինքը նրա եղբայրն է: Դժվարն ու անլուծելին նաև այն էր, որ Համեստը չէր ցանկանում Սառան իմանա, որ ինքը խորթ մայրն է, թե չէ աշխարհը փուլ կգա միանգամից, Սառան մեկեն ձեռքից կընկնի, մեկի ձեռքը կբռնի-կզնա, Արսենն էլ չկա, ինքն ու Սրբուհին, որ Սուրբիկ են ասում, կմնան որբ ու անտեր, և որ կարևոր է, Համեստը չէր համակերպվում այն մտքի հետ, որ ինքը Սառայի մայրը չէ:

Վեպում մի ապրումին գումարվում է մյուսը, որովհետև կերպարների ներաշխարհը մման չէ բաց դաշտի: Նրանք միահյուսված են մեկ նպատակով, սակայն՝ ճակատագրերի տարբեր երանգներով: Հենց այն պահին, երբ Սառան ու Արտեմը խորհում

էին հոգեկան տարբեր բևեռների թելադրանքով, Երևանից Սառայի անունով հեռագիր է ստացվում. «Սառա ջան, Արտեմ ջան, ցավակցում ենք խորապես հայրիկի մահվան կապակցությամբ: Վաղը կլինենք ձեզ մոտ: Համբերություն ենք ցանկանում, մի խունք համակուրսեցիներ» (էջ 79):

Ուսանողական ընկերների անկեղծ ու անմիջական վերաբերմունքը նկարագրված է ջերմ, արցախյան երանգներով: Նրանց սրտացավությունը, Ռոմանի ինչ-որ չափով կաշկանդվածությունը՝ Սառայի հանդեպ իր կատարած փախցնելու փորձի հետ, միաժամանակ Արտեմի վեհանձն վերաբերմունքը ցույց են տրված հոգեբանական ճիշտ ու համոզիչ արվեստով: Այցելությունը Արսեն քեռու գերեզմանին, սուգ ասող կնոջ խոսք-լացը, հին հարարցի Սարուխանի մասնակցությունը, Անտիկվար Անդոյի ելուքն ու խենթապարը տեսանելի ու շոշափելի են, ամբողջության մեջ արցախյան կենցաղի հմուտ ցուցադրում:

Հայոց ցեղասպանության հարարյան ցավի կրողներից է Սարուխանը, որն ունեցել է հինգ երեխա, ծեր մայր, հայր, մեծ տատ, որոնցից ոչ ոք չի փրկվել յաթաղանից: Այդ ժամանակ Սարուխանը Խնձորեսկում օրավարձով պատ էր շարում: Երբ լսել է բոթը, վազել է Հարար ու տեսել միայն մխացող գյուղը:

Հեղինակը բերում է իր լսածը Սարուխանի մասին. «Ասում են, տեսնելով այդ ամենը, տեղում նստել ու սկսել է երգել: Գժվե՞լ էր: Ոչ: Որևէ բան խանգարվե՞լ է ուղեղում: Հաստատ՝ ոչ: Համենայն դեպս, այսպես են բնութագրում ճանաչողներն ու տեղյակ մարդիկ: Այդպես թե այնպես, մի քանի օր սոված-ծարավ՝ նա մնացել է վառված գյուղում, մինչև որ նրան գտել ու տարել են հարևան շեններից... Այդ օրից սկսած՝ ոչինչ չի խոսում Սարուխանը: Ասում են՝ յոթ ամիս ընդհանրապես ոչ մի բան չի արտաբերել, դրանից հետո սկսել էր «խոսել», թեև այդ «խոսելը» չի անցնում մի քանի բառից դեմը, հիմնականում կամ «հա» է, կամ՝ «չէ» (էջ 85)

Լսելով այս պատմությունը՝ չափազանց հուզվում է Ռոմանը և

հարցնում, թե որտեղ է ապրում Սարուխանը: Նրան պատասխանում է Անտիկվար Անդրոն. «Սարուխանը մշտապես ճանապարհի վրա է, ամեն վայրկյան... Արդեն քանի՞-քանի տարի: Մախաղն ուսին՝ շենից շեն է գնում, պատահած մաղկանց միայն մի բան է հարցնում՝ «Չգիտե՞ք Հարարը որտեղ է» (էջ 85):

Արտեմը ստեղծագործելու շնորհք ուներ: Նա սկսում է գրել իրենց գյուղի պատմությունը: Այդ պատմության հոլովություն չի մոռանում մորն ու մորաքրոջը, քննարկում է աշխարհի կան ու չկան, իր գտած, բայց արդեն իրենը չհամարվող սիրո մասին: Երբ մի անգամ երեկոյան տանը մնում է ինքն իր հետ, իր «Պատմության» մեջ ավելացնում է. «Սուրը ծանր է ավելի, քան ինքը՝ սուրը, և առաջին զոհն սպանողն է, ապա՝ մյուսները» (էջ 87):

Երևանից ժամանած ուսանող-ուսանողուհիների հանդիպումը Սառայի և Արտեմի հետ վերածվում է ազնիվ հարազատների սիրո ու հարգանքի դրսևորման: Հեղինակը նրանց խոհերի ու կենսահայեցողության մեջ բացահայտում է կյանքի փիլիսոփայությունը: Նրանք, լսելով Արտեմի կարծիքը սուր կրելու մասին, եզրակացնում են, որ պետք է օրինակ վերցնել մեր նախնիներից: Սասունցի Դավթի թուրը ներկայացվում է ոչ թե որպես ուրիշներին սպանելու զենք, այլ ժողովրդին վստահորեն պաշտպանելու միջոց:

Վեպի ուշագրավ կերպարներից է Ռոմանը: Նա խորհրդանշուն է Արևմտյան Հայաստանում Օսմանյան Թուրքիայի կողմից կազմակերպված ցեղասպանության հարվածները կրած ծնողների նոր շառավիղը:

Ռոմանը Ամերիկայից է եկել, ավելի ճիշտ՝ նա շատ փոքր է եղել, երբ նրանց գաղթական ընտանիքը տեղափոխվել է Երևան: Նրան ներկայացնելիս հեղինակը կատարում է հետաքրքիր դիտարկում. «Ջարմանալի ենք, չէ՞: Մենք անպայման նշում ենք մեր քույրերի կամ եղբայրների այն բնակատեղին, որտեղից վերադառնում են՝ տվյալ երկրի հասցեն վերապահում նրանց՝ մոռանալով, որ նրանք Հայաստանից են եկել Հայաստան, և հան-

գրվանները միշտ էլ լինում են ժամանակավոր, ինչքան էլ հիմնական կոչվեն» (էջ 82):

Ռոմանը Ղարաբաղում իրեն զգում է հարազատ որդու պես, բայց նրա հոգին ջերմանում է առավելագույնս Արտեմի վերաբերմունքից: Թեկուզ մեծ դժվարությամբ, Արտեմը հայտնում է նրան, որ Սառան ու ինքը քույր ու եղբայր են:

«Ձատիկը ջրավազանի հատակին» վեպն աչքի է ընկնում սյուժետային երկրորդական գծերի նկարագրությամբ: Դրա շնորհիվ հեղինակը պատկերել է ժամանակաշրջանը՝ խորհրդային տոտալիտար համակարգի բոլոր կողմերով, լեմին-ստալինյան «եղբայրության» կործանարար քաղաքականության դաժանությամբ:

Այստեղ ճշմարտության դեմ մեղանշած չենք լինի, եթե նշենք, որ անհատի պաշտամունքի տարիների հակամարդկային և հակաժողովրդական ոտնձգություններն ու գազանություններն Արցախում այնպես չեն նկարագրվել, ինչպես Վ. Հակոբյանի «Ձատիկը ջրավազանի հատակում» վեպում:

Օգտագործելով պատմական փաստերը, լսելով սիբիրյան աքսորավայրերից վերադարձած անմեղ տուժածների զրույցները, ուսումնասիրելով խորհրդային ՊԱԿ-ի մասին հրատարակված փաստաթղթերը՝ Վ. Հակոբյանը պատմական դեպքերն ու անցքերը նկարագրել է ճշմարտացի՝ գեղարվեստական ինքնատիպ հնարանքներով, խոսքի երփներանգ ճկունությամբ: Կարդում ես գրքի առաջին մասի 100-րդ բաժինը, և քո աչքերի առջև բացվում են Արցախում այն դժոխքի դռները, որ ստեղծվել են եռաստիճան ժողովրդահալած և ինքնակործան ղեկավար ուժերի կողմից: Դժբախտությունը կայացել է նրանում, որ պատմական Մեծ Հայքի 10-րդ նահանգը՝ Արցախը, անջատեցին մորից և նետեցին նորաթուխ Ադրբեջանի հայակուլ երախը: Մոսկվայից Բաքու իջեցված յուրաքանչյուր անիմաստ ու դաժան օրենք կամ հրահանգ փորձարկվում է Արցախում, ուր գործում էին Ադրբե-

ջանի կառավարող շրջանների բթամիտ սատրապները:

Եվ այն դեպքում, երբ Արտեմի և Սառայի ընկերներն այցելել էին Տրակերտ՝ սփոփելու նրանց վիշտը, քեռի Արսենի մահվան կապակցությամբ, ներկայանում են հատուկ ծառայության ներկայացուցիչները՝ Ամբիոն Չախունի ուղեկցությամբ: Չերյուրելով սուտ մեղադրանքներ Արտեմի և Ռոմանի հասցեին, նրանց համարելով կապիտալիզմի լրտեսներ՝ կալանքի են ենթարկում ընդհուպ մինչև Արտեմի ձախ ոտքի եղունգները արքցանով հանելը:

Անհատի պաշտամունքի ժամանակաշրջանի աննախադեպ հրեշավոր վերաբերմունքն անմեղ մարդկանց հանդեպ վեպում ներկայացված է վարպետորեն, հոգեբանական խորքով, տրամաբանական հավաստիությամբ: Մնայուն կերպարներ են պետական հատուկ ծառայությունների բանսարկու ներկայացուցիչներ Ամբիոն Չախունը, Սատորը, որոնք իրենց ներկայացնում են այսպես. «Մենք Բաքվի հատուկ ծառայություններից հրահանգ ենք ստացել, որ Ռոման Աշոտի Սարիբեկյանը և Արտեմ Արշակի Գասպարյանը Ամերիկայի և կապիտալիստական այլ երկրների գաղտնի գործակալությունների հետ համագործակցում են, ի դեմ՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության և կոմունիստական կուսակցության» (էջ 102):

Եվ սարսափելին այն է, որ «օրգանի աշխատողներին» չէր կարելի հակաճառել, անգամ եթե արդարացի են:

Արտեմին մեղադրում են, որ ունի «Աստվածաշունչ», Խայամի, Ամիրդովլաթ Ամասիացու, Վարյասի ժողովածուները՝ բթամտորեն ավելացնելով, որ այդ գրքերի հեղինակներին ևս երևան կհանեն, որպեսզի պատժեն նրանց:

Տրակերտի հատուկ ծառայության այդ ներկայացուցիչներն ավելի են կատաղում՝ տեսնելով Արտեմի ստեղծած «Լացող սուրը» նկարը՝ նվիրված ազերի-թուրքերին զոհ գնացած իր մորը: Նրանք բթամտորեն հոխորտում են. «Մենք խորհրդային երկիր ենք կառուցում, դու սպանություն ես պատկերում» (էջ 105):

Նրանք մեղադրում են Արտեմին ու Ռոմանին, որ այցելել են Փանձասար, կարդում են Նարեկացու «Նարեկը»:

Վ. Հակոբյանի ստեղծած կենդանի ու կերպարներից են արմատակորույս հայ թելմանը, որ մեծացել է Ջաքաթալայում, բայց չգիտի մայրենի լեզուն, կալանավայրում հատուկ ծառայության լրտեսներ Վաչեն և Աշոտը:

Կալանքի ենթարկված անմեղ զոհերի ներկայացուցիչ է արևմտահայ Վրթանես քահանան, որ եկել էր ծառայելու Արցախում, սակայն կալանվել է 1930-ական թվականներին, մեղադրվելով «հակահեղափոխական» պայքար մղելու մեջ:

Արցախյան համ ու հոտով հրաշալի պատում է Ավագ-Թագուշ-Խեչուն եռանկյունու հետ տեղի ունեցած դեպքի նկարագրությունը:

Փորձառու գրողի վարպետության արդյունք է կալանավայրում կանանց սենյակի նկարագրությունը, որտեղ հայտնվել է նաև Տրակերտում հայտնի Եսթերը:

Խուզարկությունը ծանր նստեց Արսենի տան վրա, ամբողջ ունեցվածքը բռնագրավվեց, առաջին հերթին, Ռոմանի ամերիկյան «Ֆորդը», որը և հասկանալի է, աննախադեպ ավար էր անվտանգության մարմինների համար: Այն, ինչ գտնվել էր Արտեմի սենյակում, լրիվությամբ տարել են՝ դրանց մի մասը գրանցելով, մի մասն առանց հաշվառման: Տնեցիների համար ամենացավալին «Լացող սուրը» կտավն էր, որի բացակայությունը նշանակում էր նաև փակում այն ճանապարհի, որով պիտի Արտեմը վերադառնար այդ օջախը:

Քաղաքում ասեկոսություններ էին պտտվում Արսենի և Ռոմանի շուրջ:

Սառան հասկանում էր, որ այն, ինչ կատարվում է, պարզապես Հարարի և Շուշիի նույն ջարդի շարունակությունն է, այս անգամ ոչ թե սրով, թուր ու թվանքով, այլ խաղաղությամբ:

Ձերբակալեցին Արտեմին և Ռոմանին: Մի ձայն, ասես Աստծո

ծայնը, հուշում էր Սառային, որ գնա փնտրի այնպիսի մարդկանց, որոնք կարող են օգտակար լինել, իմանալ, թե որտեղ են գտնվում Արտեմն ու Ռոմանը, ինչ է սպասում նրանց: Առաջին հերթին Սառան պիտի գնա Անտիկվար Անդոնի մոտ, որովհետև նա ամեն ինչ իմանում է, նա երբեք չի ստում: Խանգարվածը Անդոնը չէր, այլ իրականությունը:

Անտիկվար Անդոնը Սառային դիմավորում է իր ձեռքով պատրաստած դագաղի մեջ՝ քնած: Նա, ըստ սովորության, պառկել էր արքայավայել, ձգվել հասակով մեկ, ձեռքերը ոչ թե խաչել էր կրծքի վրա, այլ դրել էր գլխատակին, մատները դաշնորեն մազերի մեջ իրար ագուցած:

Սառան գիտեր, որ Անդոնին հայտնի են Տրակերտի բոլոր գաղտնի լուրերը:

Վ. Հակոբյանը ժողովրդական կյանքի, ժամանակի քաղաքական, տնտեսական, հասարակական իրադարձությունների գիտակ է: Գեղարվեստական խոսքի հմտությամբ նա պատումի մեջ է ներառում ժողովրդի ներկայացուցիչների՝ տարբեր առիթներով արտահայտած հոգեկան ապրումները, ցավը, տրտունջը՝ որպես ժամանակաշրջանը բնութագրող պատկերներ: Բերենք օրինակ: Գերեզմանոցում Հարոմանց Աշոտի կինը սգում է բարձրաձայն. «Աշոտ, մեծ ախճկադ արդեն խնամախոսության են գալիս, Օսեփի տղա Վաչոն է ուզում, վեր կաց, բա առանց քեզ ես ո՛նց պիտի անեմ... Դուզն ասած, տրանց ցեղան լոխ փիս ըն խոսում, դե տու գյուղում ըս լի, կլոխտ հինչ ցըվըցնիմ, ասըմ ըն տրանց տղըմարթիկ շոռ կյըվող ըն ինըմ, կնանեքը խեղճ ու կորած... Մըհենգ ասե տեսնամ հա ասինք, թա չէ... Ախճիկդ էլ նըստա յա կացալ, ասըմ ա՛ յա Վաչոն, յա վեչ միմը... Վեր օգում ըմ թա մին պատառ խրատ տամ, ասիմ՝ օխտը հետ չափե, մեհետ կտրե, տրանց անա սաղ քաղաքը մին լավ պեն չի խոսըմ, քարը կծըմ ա յերգինք պիցրանըմ... Հա, քանի մըծանում ա ախճիկդ, էնքան քըզնման ա տեռնըմ, հանց ա լիհա

քթատ խընչ ըրած, վեր ընգած ինի...» (էջ 149):

Գերեզմանոցում ծածուկ տարածվում են նաև քաղաքական լուրերը... Օղտանց Յամբարձունը ասում է. «Կուքի դայի, մեծ տղայիդ երեկ գիշեր եկան ու ձերբակալեցին, ասում են՝ տրոցկիստ է» (էջ 149):

Սարսափելի է նաև գերեզմանոցում սոցիալական վիճակի ներկայացումը քաղաքական խժոժություններին միաձուլել: Շանունց Խանունը ձեռքերով խփում է ամուսնու շիրմաքմբին ու լացի միջից բարձրաձայնում. «Շամիր, կողքեդ տեղ ըրա, ես էլ կյամ, առանց քյեզ կարըն չըն խոխեքը պահիմ, Սիմոնեն քըշերս տարալ ըն գընդակահարալ, մեյդն էլ չըն տամ, թա պիրիմ լիհա կողքիդ տիմիմ, խոխեն յըրը-փարա տեռած ջանը պատառ բալքի դինջանա... ասըն ըն սովետին դեն ա Սիմոնը, ասըն ըն Թեվանեն նիետ կապ օնե... Գյուղում չըն, Շամիր, յա ինձ էլ տար, յա յեր կաց տանդ-տեղետ տրօթուն ըրա» (էջ 149):

Նման պահերին ժողովրդի վշտակիր, իմաստության և համբերության խտացումը հանդիսացող Անտիկվար Անդոնն է սփոփում մարդկանց: Նա է, որ մոտենում է Շանունց Խանունին և ասում. «Խանուն աքեր, գնացողը գնում է, մնացողն էլ պիտի մնա: Վեր կաց, տանը խոխեքդ քեզ ըն յեշում» (էջ 149):

Անտիկվար Անդոնը բնածին փիլիսոփա է: Նա ուներ խաղալիք-կապիկներ, որոնցից նույնիսկ զգուշանում էր, որ վկայում է անվստահության մթնոլորտը այդ ժամանակաշրջանում: Անդոնը Սառայի հետ ունեցած զրույցի ժամանակ զգուշանում է. «Չեն ուզում կապիկներս լսեն, թե չէ, բերաններից բառ կթոցեն, հիմա ամեն մեկից պիտի զգուշանալ, առավել ևս նրանցից, ովքեր չեն համարվում կապիկ, բայց «հրաշալի» կապկել գիտեն» (էջ 152):

Անդոնը Սառային հայտնում է, որ անցյալ գիշեր Արտեմին և Ռոմանին տարել են Եվլախ, այնտեղից էլ՝ Բաքու: Իսկ Բաքվից լավ բան չի կարելի սպասել: Եվ նա քնծիծաղի միջից արտաբերում է. «Ասում են, Արսենի տունը հակասովետական շտաբ է,

ամերիկյան լրտեսության կենտրոն» (էջ 152):

«Ձատիկը ջրավազանի հատակին» վեպում բոլոր կերպարները լրացնում են միմյանց ու բոլորն էլ նպաստում են գլխավոր կերպարի՝ Արտեմի հոգեկան ապրումների բացահայտմանը, նրա բնավորության ամբողջացմանը: Այդ առումով հետաքրքիր է Արևհատ տատիկը, որը գիտեր Արտեմի ծնողներին, նույնիսկ պարել է նրանց հարսանիքում:

Արտեմն ապրում էր Արևհատ տատիկի տանը, երբ եկել էր Բաքվից: Անվտանգության կոմիտեից նախ այցելել էին Արևհատ տատիկի տուն ու հարցաքննել: Նա էլ՝ միամիտ մի կին, պատմել է, որ Արտեմի հայրը՝ Արշակը, տումեցի Թևանի հետ Ղարաբաղը պաշտպանել է թուրքերից, նա նույնիսկ չի կարողացել մասնակցել իր հարսանիքին, գտնվել է դիրքերում: Թուրք ուղարկել է, որ իր փոխարեն դնեն Մարիամի կողքին: Այս պատկերը առասպելական հերոսականության հրաշալի օրինակ է, պարզապես անձնավորված է սուրը, որ խորհրդանշում է զենքի ուժը՝ հայրենի օջախներն ու ընտանիքների պատիվը փրկելու գործում: Արշակը, հայրենիքի վտանգի պահին չցանկանալով ընկերներին թողնել մեն-մենակ ոսոխների դեմ, կաշվե պատյանից հանում է զարդարված կոթով իր թուրը, զույգ ձեռքերի վրա մեկնում Շահենին և ասում. «Այս սուրը ես եմ, տար ու թող իմ Մարիամի կողքին լինի Չարսանիքի ժամանակ... Մի վայրկյան անգամ թող չհեռանա նրա կողքից» (էջ 155):

Ինչպես գրում է հեղինակը, Արշակի սուրը հարսնացուի հետ նստեց հարսանքասեղանի գլխին, Մարիամի մի թևից ինքն էր, մյուս թևից՝ քավորը, որն Արշակի զինակիցներից էր, Թևանի խմբում մասնակցել են բազմաթիվ մարտերի:

Գիշտ է նկատում հեղինակը, որ մարդկության պայքարի և ազատության հասակակիցն է սուրը: Գրողը միաժամանակ գրքի ծանոթագրություններում ավելորդ չի համարում բնութագրելու սուրը՝ Չայաստանի 10-րդ նահանգը հանդիսացող Արցախ աշ-

խարհի հայության համար: «Սուրը,- գրում է նա,- հայ ժողովրդի համար միշտ էլ փրկության խորհրդանիշ է եղել, և պատահական չէ, որ մեր բանահյուսության մեջ անգամ հերոսների ուժն ու բարությունը շեշտելու համար նրանց ձեռքին անպայման «սուր են դնում»: Ի վերջո, սուրը դարձել է արժանապատվության մարմնացում: Այսօր էլ Արցախի շատ ընտանիքներում (տան ճակատային մասում՝ գորգի վրա) կարելի է տեսնել ամենատարբեր տեսակի, տարիքի թրեր, որոնք պահում են օջախի մեծերի մատնահետքերը և ընծայագրերը» (էջ 645):

Այստեղ կցանկանայինք ավելացնել հայոց էպոսում ազատության և արժանապատվության խորհրդանիշը դարձած Թուրկայձակին: Ու պատահական չէ, որ Երևանի երկաթուղային կայարանի առջև կանգնեցվել է քանդակագործ Երվանդ Քոչարի հրաշագործությունը՝ Սասունցի Դավիթը՝ Քուռկիկ Ջալալու վրա՝ փրկարար ու կայծակնացայտ թուրը ձեռքին:

Աշխարհահռչակ Վարպետը՝ Ավ. Իսահակյանը, Հայրենական մեծ պատերազմի հաղթանակը կապելով սրի հետ, 1945-ի մայիսի 9-ին գրած «Մեծ հաղթանակի օրը» բանաստեղծությունը սկսում է ժողովրդական իմաստությամբ.

*Մեր սուրը փառքով դրեցինք պատյան,-
Մեծ Հաղթանակի օրն է ցնծալից,
Պարտվեց մահաշունչ ռոտիսը դաժան,
Երգեր են հորդում զվարթ սրտերից:*

Օրինակները մեր գրականության մեջ շատ-շատ են, որ խոսում են Վ. Հակոբյանի կողմից ավանդույթի տեղին հոլովման մասին: Եվ ոչ միայն այդ: Հակոբյանի էպիկական ասքում սուրը փոխարինում է ավանդական հարսանիքներում կենաց ծառի հեմահարթակներին:

Հրաշալի մի պատկեր է հարսանիքի այն պահի նկարագրությունը, երբ զինվորյալ Արշակի վստահյալ Մուքունց Շահենը Սուրը վերցնում է ու «պար է ածում» հարսնացուի հետ: «Իրիկ-

նային լույսերի տակ,- կարդում ենք գրքում,- ուղղակի տեսնել էր պետք, թե լույսի խաղը Սրի փայլի մեջ քանի-քանի գույներ է ներառում» (էջ 157):

Խորհրդային տարիների մղձավանջային օրերը, որ կապված էին Ստալինի անձի պաշտամունքի հետ, և սարսափազդու էր դարձել քաղաքական մթնոլորտը, վեպում զեղարվեստական խորացված պատկերի է վերածվել Արտեմի ճակատագրում: Պարզապես Արտեմի կերպարը ներկայացվում է իր կոնկրետության ու ամբողջության մեջ: Արտեմի համար հոր՝ ազգանվեր Արշակի հերոսությունը ՊԱԿ-ը դարձնում է նրա որդուն հալածող կոմունիստական հետապնդում ու հալածանքի առիթ: Դեպքերը զարգանում են այնպես, որ անվտանգության մարմինների քննիչը Արևհատ տատիկի տանը, ծոցատետրում արված նշագրումներում խիստ ջնկվող տառերով գրում է երեք բառ՝ «Արտեմը թևանիստի որդի է»: Իսկ խորհրդային տարիներին «թևանիստի որդի» արտահայտությունը նշանակել է կամ աքսոր, կամ մահապատիժ:

Սառայի համար Արտեմի հասցեին վերագրված այդ մեղադրանքը և՛ անհասկանալի էր, և՛ ցավալի: Սառան գիտեր, որ Արտեմն անմեղ է բոլոր առումներով և ցնցվում է և խոր ցավ ապրում ու խորհում, որ շտապ պետք է դիմել ձեռնարկումների, յուրաքանչյուր վայրկյան կարող է լինել ճակատագրական թե՛ Արտեմի, թե՛ Ռոմանի համար: Նաև անշրջելի, վերջնականապես կործանարար:

Վեպում դեպքերը հաջորդում են միմյանց՝ իրենց պահերի մեջ առած ժամանակի և տարածության համաձույլ ընթացքը: Արտեմի ընտանիքը հեղձուցիչ այդ մթնոլորտում մնում է համաքաղաքացիների ուշադրության կենտրոնում՝ որպես ամերիկյան զաղտնի գործակալության որջ, լրտեսների հավաքատեղի, իսկ տիկին Չամեստը, Սառան, Սրբուհին կասկածյալներ էին առնվազն, նրանցից արդեն խուսափում էր ցանկացած տրակերտցի,

նույնիսկ վախենում էին բարևել: Հարևանների ու ծանոթների վախվորած ու սառը վերաբերմունքը կրկնակի ցավ էր պատճառում Համեստին: Նրա հոգեկան խոր ապրումները հեղինակը նկարագրում է հմտորեն, համոզիչ, արցախաձարի: Նման դեպքերում Համեստը երեսով նայում էր երկնքին, ձեռքերը բարձրացնում ու մորմոքում. «Ա երե կյապուտ, ա ամեն ինչ տեսնող, իմացող Աստված, դու գիտես, որ Արսենի օջախը հալալ-զուլալ է, որ մենք ոչ մի մեղք չունենք... Տեր Աստված, դու մեզ ձեռք հասցրու, դու քո արդար դատն արա» (էջ 159):

Վ. Հակոբյանը դեպքերի նկարագրության խաչմերուկներում տեղին ու ժամանակին ներկայացնում է նաև կերպարների՝ բնութագրական պատկերներով: Այսպես, հենց այն պահին, երբ Համեստը իր հույսի ափն է բացում Աստծո առջև, նրան է մոտենում ՊԱԿ-ի լրտես Ամբիոն Հախումը, որ մի քիչ էլ շոր աչք ուներ և էն գլխից «մոտ էր թակում» Համեստին, թեև թե՛ Համեստի և թե՛ իր տարիքն արդեն «վաղուց էն չեն» ու կռնչում. «Էդ մենակ չես, հա՞, Համեստ,- նայում է շուրջը,- ամա ի՞նչ տուն է կառուցել Արսենը»: Համեստը զարմացած հարցնում է. «Ի՞նչ կա, Հախում», Շարունակվում է գրույցը անմիջական ու միամիտ, վշտակիր Համեստի ու չարամիտ ու չարագործ Ամբիոն Հախումի միջև: Ջրույցի ավարտին վրա է բերում Հախումը. «Համեստ, որ տարել են, ուրեմն տարել են... մնացած երեխոցդ բախտն էլ մի կապիր նրանց հետ, մի սևացրու... Ինչ եղել է՝ եղել է: Երեխոցդ կվերցնես, կզնաս մի ուրիշ երկիր, ճիշտ է, էդ երկիրն էստեղից լավ չի լինելու, բայց դե... Ո՞վ է մեղավոր: Էլի դու: Էլի քո երեխեքը: Բասովետի նման երկրին կարելի՞ է դավաճանել (էջ 160-161):

Հախումը վեպի հաջողված բացասական կերպարներից է: Նա իսկ և իսկ մսագործ ՊԱԿ-ի արժանի լրտեսներից է՝ շողոքորթ, անսիրտ, հայրենադավ, սեփական ժողովրդի դահիճ, անմեղ մարդկանց մեղադրանքի մեջ սևացնող դավաճան:

Ինչպես բնութագրում է գրողը, Հախումը «ծառայում է» հա-

րազատ կոմունիստական կուսակցությանը նաև առանց ամբիոնի, սրանից-նրանից տեղեկություններ պոկելով ու անվտանգության մարմիններին հասցնելով: Վերոնշյալ գրույցի ժամանակ Չամեստը դեռ տեղյակ չէր, որ հատուկ որոշում է ընդունվել Արսենի ընտանիքի մնացյալ անդամներին աքսորելու մասին: Ըստ Չախումի՝ Տրակերտում նրանց մնալը հասարակության համար վտանգավոր է, քանի որ բոլորը մոտիկից ճանաչում են նրանց և կարող են կասկածելի կապերի մեջ ներքաշվել հանկարծ: Եվ եղավ այնպես, որ նոր տարեմուտն Արսենի օջախը դիմավորեց տխուր, մենակ, անլուր ու օտարված ամբողջ Տրակերտից:

Չեղինակը չի մոռանում ընդհանրացումներ կատարելու անհրաժեշտությունը, այն, որ Արսենի ընտանիքին բաժին ընկած ցավը շատ-շատ օջախներ էր այցելել Տրակերտում:

Չալածանքները շարունակվում էին: Օր չկար, որ Չամեստին, Սառային կամ Սրբուհուն չկանչեին ներքին գործերի վարչությունից կամ անվտանգության մարմիններից: Այդ ընտանիքին հասած մահացու սարսափները գրողը ներկայացնում է վարպետ գրչով, Անտիկվար Անդոնի միջոցով: Նոր տարվա առաջին օրը, երբ գերեզմանաբնակներին ծաղիկներ տարավ Անտիկվար Անդոնը, սովորականից երկար մնաց Արսենի շիրմաքարի մոտ, ուր դրել էր երեք կակաչ և մորմոքացել. «Էս մեկը քեզ, Արսեն քեռի, էս մեկը քո Սիրունին, էս մեկն էլ... Արսեն քեռի, Չամեստը սրտի ինֆարկտ է ստացել՝ հենց որ թուղթ են ներկայացրել ընտանիքը Տրակերտից աքսորելու վերաբերյալ, տեղնուտեղը հանգել... Խեղճ Չամեստ, վաղը գալու է քեզ մոտ... Էս մեկն էլ նրան... Էնպես կանես, Արսեն քեռի, որ կնանիքդ իրար չխանդեն: Դու խելոք մարդ ես... դրա համար է, որ քո խոսքը երբեք չեն կոտրել... Դեհ, ասա, քեզ համար էլի պարե՞մ... Արսեն քեռի» (էջ 162):

Ողբերգականն այն է, որ Չամեստի թաղմանը մասնակցել էին Սառան, Սրբուհին, Անտիկվար Անդոնը և մեկ-երկու հոգի, որոնց նրանք չէին ճանաչում, բայց ասում էին, որ հին հարարցի են: Սա-

ռան ու Սրբուհին սիրտ էին տալիս միմյանց, քաջալերում, որ պինդ մնան: Իսկ Ամբիոն Չախունը մասնակցել է հուղարկավորությանը՝ լրտեսական իր պարտականությունը կատարելու համար:

Ինչպես հատուկ է հանրագիտարանային ստեղծագործություններին, Վ. Չակոբյանը ևս իր վեպում ներկայացնում է էպիզոդներ, որոնց մեջ անդրադարձված են ժամանակաշրջանի քաղաքական, սոցիալական, բարոյահոգեբանական իրավիճակները:

Չամեստին հողին են հանձնում հարազատները: Ջրույցի են բռնվում Անտիկվար Անդոնը և Ամբիոն Չախունը, առաջինը որպես ժողովրդական տվայտանքների կրող, երկրորդը՝ ՊԱԿ-ի լրտես:

Չանդիպելով Անտիկվար Անդոնին՝ Ամբիոն Չախունը փորձում է կատակել.

- Դու ո՞նց ես, ա մեռած... վաղուց չեմ տեսել քեզ:

- Շնորհակալ եմ, Չախուն, որ ինձանով միշտ հետաքրքրվում ես...,- գրպանից հանելով մի սատանա-խաղալիք՝ կապիկի տեսքով, տալիս է նրան,- նվիրում եմ քեզ... Այ, որ դու դառնաս գերեզմանոցի բնակիչ, քեզ համար գիտե՞ս ինչեր են անելու: Ամեն օր այն ժամանակ հանդիպելու ենք... Արսեն քեռու հետ քեֆեր ենք անելու էլի...

Չախունը սսկվում է տեղնուտեղը և դեմքով շրջվում է դեպի Տրակերտ ու հառաչում:

Անտիկվար Անդոնը, փորձելով մեղմացնել իր հասցրած հարվածը, հարցրեց.

- Չախուն, ասում են մեկ-մեկ էլ գաս ու լենինյան ուրբաթ անցկացնես գերեզմանոցի բնակչության համար:

- Ո՞նց թե, Չախունին թվաց, թե ձեռ են առնում իրեն:

Վեպի կերպարներից յուրաքանչյուրը բնութագրական մի աշխարհ է՝ թե՛ դրական և թե՛ բացասական գծերով: 1930-ական թվականների անմարդկային արարքների խտացումներից է նաև հատուկ ծառայության պատասխանատու աշխատող Սատորը: Նա

Արսենի ընտանիքի դժբախտությունը ոչ միայն բնական է համարում, այլև ստոր միջոցներով ձգտում է աքսորել նաև Սառային և Սրբուհուն, որպեսզի գնի Արսենի տունը: Նրա փիլիսոփայությունն է. «Որքան հնարավոր է՝ շատ վերցնել կյանքից, հափռել, թալանել, քանի որ ամեն ինչ վերջավոր է այս անվերջ աշխարհում» (էջ 170):

Դաժանությունը կատարում է իր սև գործը: Թիֆլիս են տեղափոխում Սառային և Սրբուհուն: Փաստորեն դա մի նոր աքսոր էր Արսենի ընտանիքի համար: Ասել է թե՛ Չարարում թուրքերի կազմակերպած ցեղասպանության շարունակությունը տեղի էր ունենում խորհրդային կարգերի օրոք:

Նշել ենք, որ յաթաղանի զոհ է դարձել Սարուխանի ընտանիքը: Նա հաճախել էր Շուշի, ապավինել Վահան Սրբազանին: Կորստյան ցավից հիվանդ Սարուխանը մոմ էր վառում և շշնջում. «Մեր տան ճամփան կորցրել են, ասում են՝ գուցե լույսի տակ ճամփան երևա» (էջ 172):

1915-ի հայության ողբերգությունը կրկնվում է 1920-ին, Շուշիում: Դարերի ընթացքում հայի ձեռքերով ու մտքի թռիչքով կերտված քաղաքն ավերվում է ազերի վայրենիների կողմից, սրի են քաշվում հազարավոր անմեղ հայեր, նրանց հետ նաև՝ Վահան Սրբազանը:

Ճանապարհը Սառային և Սրբուհուն բերում է Երևան: Սառան հույս ուներ Երևանից նամակ հղել Մոսկվա, դիմել հարազատ կուսակցությանը՝ Արտեմի և Ռոմանի գործով:

Վ. Հակոբյանը ձգտել է յուրաքանչյուր պատկերի մեջ ներկայացնել ոչ միայն ներկան, այլև մեր ազգային ճակատագրին առնչված անցյալը: Այսպես, գնացքով Թիֆլիսից Երևան այցելելիս հիշում է Արտեմին և նրա խոսքը. «Սառա ջան, ես իմ որբությանը չէ, որ որբ եմ, ես որբ եմ իր զավակներին խժռող երկրի որբությանը» (էջ 176):

Հասնելով Երևան՝ Սառան և Սրբուհին նկատում են, որ Կոնդի թաղում շատ բան է փոխվել, իսկ Ռոմանի հայրական տան դուռը

երկաթյա գոտիներով կողաված էր, վրան կավճե ծուռունուռ տառերով գրված՝ «Տունը վաճառվում է», տան պատին ինչ-որ մեկը խզբզել էր ռուսերեն «Продаётся»:

Հարևանուհին հայտնում է, որ Ռոմանին ամիսներ առաջ բանտարկել են: Մեկն ասում է՝ Սիբիր են քշել, մեկն ասում է՝ սպանել են՝ որպես հայրենիքի դավաճանի: «...Ասում են՝ գնացել է Ղարաբաղ ընկերների հետ, այնտեղ են բռնել հանցանքի մեջ, ուզում էր պետական հեղաշրջում անել, սովետը քանդել... Ղարաբաղը միացնել Հայաստանին...» (էջ 179):

Սառան հետաքրքրվում է նաև Ռոմանի մոր ճակատագրով և հարևանուհուց իմանում, որ նա Հայաստանից հեռացել է, բայց չգիտեն, թե՛ ուր: Աղջիկներն այցելում են Սառայի ուսանողական տարիների ընկերուհուն՝ Անուշին, որին ևս կտտանքների էին ենթարկել: Ունեցել էր անհաջող ամուսնություն և բաժանվել:

Անուշը ճանաչում էր, կապ ուներ ՊԱԿ-ի մի աշխատակցի հետ, որի միջոցով բերում և կարդում են Արտեմի՝ Բաքվում կայացած դատը:

Պարզվում է, որ Արտեմ Գասպարյանն ու Ռոման Սարիբեկյանը տեղափոխվել են Սիբիր:

Անհատի պաշտամունքի տարիներին քաղաքացիների իրավազրկության, վտանգվածության, ողբերգական դատապարտվածության իրական մի պատկեր է Արտեմի դատավարության նկարագրությունը, որ բերում ենք ամբողջությամբ: Գործը քննել է իրավաբան Ռ. Մարտիրոսովը.

- Քաղաքացի Գասպարյան, Դուք արտասահմանում հարազատներ ունե՞ք:

- Ո՛չ:

- Իսկ հայրենիքո՞ւմ:

- Ո՛չ:

- Ամերիկայի գաղտնի ծառայությունների հետ եր՞բ եք առաջին անգամ կապի մեջ մտել:

- Ոչ մի ժամանակ:
- Որտեղի՞ց եք ճանաչում Ռոման Սարիբեկյանին:
- Երևանի պետական համալսարանից:
- Նա Ամերիկայում կամ արտասահմանում հարազատներ ունի՞:
- Չգիտեմ:
- Ծովից ծով Հայաստան ստեղծելու ծրագիրն ո՞վ է տրամադրել քեզ:
- Ոչ ոք:
- Ի՞նչն է Ձեզ տարել Գանձասարի վանք՝ քահանայի մոտ:
- Հավատը:
- Հավատո՞ւմ եք Աստծուն:
- Այո:
- Ադրբեջանի իշխանությունների դեմ գործելու ի՞նչ հիմքեր ունեք:
- Ձեր մեղադրանքը հնարովի է:
- Նախատեսել էիք ե՞րբ իրականացնել պետական հեղաշրջումը:
- Ոչ մի ժամանակ:
- Ընդունո՞ւմ եք սովետական ժողովուրդների բարեկամությունը:
- Բարեկամությունը միշտ էլ ընդունելի է՝ երբ ազնիվ է լինում:
- Դուք ընտրել եք վիրաբույժի մասնագիտությունը՝ Ի՞նչն է Ձեզ ստիպել անդրադառնալ պատմության խնդիրներին: Պատմաբա՞ն եք ուզում դառնալ:
- Նա, ով պատմություն ունի, չի կարող ի ծնե չլինել պատմաբան:
- Ովքե՞ր էին այն աղջիկները, որոնք իբրև Արսենի մահվան կապակցությամբ, եկել էին Տրակերտ՝ ցավակցելու Ձեզ:
- Քույր Սառայի և իմ ուսանողական ընկերները՝ Անուշը և Անահիտը:
- Դուք ընդունո՞ւմ եք Ձեզ ներկայացված մեղադրանքը՝ նացիոնալիստական խնդիրներ շարժելու, սովետական հայրենիքին դա-

վաճառելու, ամերիկյան գործակալություններին ծառայելու մեջ:

- Ո՛չ:

- Դուք դժգոհ եք սովետական իշխանություններից: Նա բոլոր ժողովուրդներին երջանկություն է բերել: Տվել է անգամ հայրենիք: Այդ թվում՝ հայերիդ: Համաձայն չեք

- Մենք միշտ էլ հայրենիք ունեցել ենք, ուրիշ բան է որ...

- Որ՝ ի՞նչ...

- Որ պատառ-պատառ են արել Հայաստանը:

- Խոսիր, լսում եմ:

- Ես վերջացրի:

- Ինչպե՞ս են պատառ-պատառ արել:

- Սա քննություն է, ընկեր քննիչ, թե՞ կարծիքների փոխանակում:

- Հաշվիր՝ կարծիքների փոխանակում: Ի վերջո, ես պատմության մասնագետ եմ, կարող եք ազատ խոսել:

- Նախիջևանը պոկել են Հայաստանից, հին հայոց գողթան երգերի երկիրը տվել Ադրբեջանին: Հայոց երկրի մեծ մասը՝ Արևմտահայաստանը, սովետական երկիրը տվել է Թուրքիային:

- Քաղաքացի Գասպարյան, ոչ թե Ադրբեջանին, այլ եղբայրական Ադրբեջանին: Ճիշտ արտահայտվեցեք:

- Եթե, իհարկե, թվարկածներս «եղբայրական» հատկանիշներ են, ապա համաձայն եմ Ձեզ հետ, ընկեր քննիչ: Ես պետական իշխանավորների բռնած դիրքն է, որ չեմ ընդունում, ես ժողովրդին ընդունում եմ: Կյանքս դասավորվել է այնպես, որ իմ ընկերների մեծ մասը տարբեր ազգերից են:

- Դուք դե՞մ եք ընկեր Լենինի, ընկեր Ստալինի քաղաքականությանը:

- Ես քաղաքագետ չեմ... Ես ընդամենը կարող եմ ասել, չեմ կարող ընդունել 1921թ. Մոսկվայի պայմանագիրը, առավել ևս, նույն տարում Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի միջև կնքված պայմանագիրը, որ միանգամից խայտառակաբար հեչ արեց Սևրի պայմանագիրը: Դա դավաճանություն է

արդարությանը, ժողովուրդների բարեկամությանը, մարդուն և մարդկայինին...

Այսպես, շարունակվում է քննիչի դեմագոգիկ հարցաքննությունը՝ Արտեմին ամեն կերպ մեղադրելու չեղյալ մեղքերի մեջ: Նրան անվանում է տրոցկիստ, Սովետական Միության թշնամի, նացիոնալիստ, թեմախոս և այլն, և այլն:

Քննիչի վերջին հերյուրանքը լրիվ բացահայտում է ստալինիզմի և ՊԱԿ-ի հակաժողովրդական դաժան քաղաքականությունը: «Դուք առանձնապես,- հոխորտում է քննիչը,- խիստ վտանգավոր թշնամի եք մեր պետության համար»: Այսպես էլ ընդհատվում է հարցաքննությունը: Վերջում հարցաքննության տակ Արտեմի ստորագրությունն էր և տարեթիվը՝ 1937: Պարզ է, որ այդ ստորագրությունն Արտեմինը չէր, կեղծված էր:

Այն հանգամանքը, որ Բաքվում մահվան դատապարտվածների մի մասին տեղափոխել են Սիբիր, Սառային հույս ներարկեց, որ գնա և որոնի Արտեմին ու Ռոմանին:

Սառան մեկնում է Ռուսաստան, Սրբուհին մնում է Անուշի մոտ: Սակայն դեռ մի շաբաթ չանցած՝ Սրբուհին մնում է փողոցում: Խանութից վերադառնալով՝ նա տեսնում է Անուշի դուռը զմռսված, կնքված: Սրբուհին այդպես էլ չիմացավ, թե ուր կորավ Անուշը, ինչ եղավ: Սրբուհին գնում է ավտոկայարան, հանդիպում երկու հարարցիների, նրանց հետ վերադառնում Տրակերտ: Նույն վիճակը նրան դիմավորում է և հայրական տանը, որի դռնակից կախված հսկա կողպեքն ասես ծանրանում է նրա սրտին՝ սպանելու չափ: Սրբուհին մնում է հարևանուհու մոտ և իմանում, որ իրենց տունը պետականացված է: Մի քանի օր հետո գործի է մտնում Տրակերտի նորաբաց որբանոցում՝ որպես խնամակալ:

Սառայի ողիսականը տեղի է ունենում Ռուսաստանում:

Ե՛վ ռոմանտիկ, և՛ հավանական պատկերներով վեպի հեղինակը Սառային տանում է Մոսկվա, ուր նա հանդիպում է Անուշի

ծանոթին՝ Ալեքսեյ Նիկիտիչին, հրավիրվում նրա բնակարան, ծանոթանում կնոջը՝ Վարվառա Օսիպովնային: Այստեղ ևս մթնուլորտը հիշեցնում է մեր ժողովրդի անցյալը՝ խտացված կորուստների ու հայածին հույսի երանգներով: Նույնիսկ Ալեքսեյ Նիկիտիչի տան կահավորումը հին հայկական էր: Պարզվում է, որ Ալեքսեյ Նիկիտիչը հին իգդիրցի է: Սառայի համար զարմանալի ու հաճելի պահն այն է լինում, որ ծերունի Նիկիտիչը խոսում է մաքուր հայերենով:

Ալեքսեյ Նիկիտիչը ՊԱԿ-ի պաշտոնաթող սպա էր: Սառայի համար կրկնակի սփոփիչ էր, երբ ծերունին հետաքրքրվում է Երևանով, Արարատ սարով, Սևանով, նաև Ղարաբաղով: ՊԱԿ-ի հին աշխատողը չէր կորցրել իր ազգային արժանապատվությունը, հպարտանում էր իր արմատներով: Իսկ երբ Սառան հայտնում է, որ ղարաբաղցի է, ծերունին մտահոգվում է, որ Ադրբեջանի լծի տակ ծանր է Ղարաբաղի վիճակը: Ամեն դեպքում նա դեռևս պահպանում է զգուշավորությունը: 1930-ական թվականների երկրորդ կեսն էր, երբ մարդիկ կասկածում էին նույնիսկ իրենց տան գերանին, այն ժամանակաշրջանն էր, երբ ջարդոտում էին նույնիսկ հավատի խորհրդանիշ խաչերը:

Սառային ցնցել էր այն, երբ ականատես եղավ մի մարդու ինքնահրկիզման՝ արտահայտելով իր բողոքը տիրող իշխանություններին: Նրա վերջին խոսքն էր.

«Իմ որդիներն անմեղ են, իմ որդիներն անմեղ են, Աստված ձեզ պատժելու է»: Սառայի աչքերի առջև բացվում է ստալինյան ռեժիմի կեղծիքն ու դաժանությունը, երբ տեսավ, թե ինչպես հրշեջ մեքենան՝ ձենը գլուխը գցած, մոտեցավ՝ կողերին կարմիր դրոշ նկարած՝ մուրճ ու մանգաղով: Կրակն արդեն մարել էր: Եվ ավելի մեծ եղավ Սառայի զարմանքը, երբ երեկոյան իր տեսածի մասին լսեց ռադիոյով. «Այսօր ժամը 16-ն անց 45 րոպեին Մոսկվայի Տվերսկայա փողոցի վրա մի խումբ նախկին հավատացյալներ վառեցին եկեղեցու խաչը՝ դրանով իսկ հանդգելով հա-

սարակութեանը, որ իրենք ոչ մի հավատ չեն ճանաչում՝ լեւին-ս-տալինյան կուսակցութեանից բացի» (էջ 210):

Սառան ՊԱԿ-ի հին աշխատակցին պատմում է, որ Արտեմն ու Ռոմանը միանգամայն անմեղ են ու նոր կարգերին նվիրված մարդիկ են, այն, ինչ տեղի է ունեցել, ընդամենը դառն է մեծ թուրիմացութուն է, ինչի արդյունքում տղաները հիմա անհայտութեան մեջ են, գուցե և... չկան:

Ալեքսեյ Նիկիտիչը Սառային ցույց տվեց այն միակ ուղին, որ, իր խորին համոզմամբ, անվտանգ էր քաղաքական և այլ առումներով և կարող էր ինչ-որ չափով Սառային մոտեցնել նպատակին:

Ինչպես գրում է հեղինակը, այդ օրերին «մի ընդհանրություն ունեին ժանտախտն ու քաղաքական սպանողը, դա այն է, որ երկուսն էլ ազգային խտրականություն չէին ճանաչում, անխտիր սրբում-տանում էին՝ ով պատահի ճանապարհին» (էջ 211):

Եվ Ալեքսեյ Նիկիտիչի (ՊԱԿ-ի ընծայած անունն է, որ ինքը վանա Ներսեսովիչն է), խորհրդով Սառան ձեռք է բերում որոշակի գիտելիքներ ժանտախտի վերաբերյալ և գրանցվում մեկնելու Արևելյան Իրկուտսկ և մյուս կալանավայրեր՝ հիվանդներին օգնելու:

Կոնկրետ փաստի օգտագործմամբ Վ. Զակոբյանը նկարագրում է կալանավայրերի սահմուկեցուցիչ պայմանները: Նշվում է, թե ինչպես դեռևս 1934թ. ստեղծվել է Իրկուտսկի հակաժանտախտային պետական ինստիտուտը՝ «Չունին» անվամբ:

Բժշկուհի Սառայի հոգում հուրհրատում է կորուսյալներին որոնող հայ աղջկա կարոտն ու վճռականությունը: Զեղինակը հետաքրքիր էջեր է ստեղծում Արցախի պատմության վերաբերյալ: Խարազանող խոսք է ասվում Մելիք Շահնազար Երկրորդի մասին, որ Շուշին հանձնել է Փանահ խանին և որակվում է որպես հայրենադավ: Եվ ինչքան էլ Մելիք Շահնազարը ձգտեր ուղղել իր սխալը՝ Ամարասի վանքը նորոգելով, միևնույն է, ժողովուրդը նրան տվել է դավաճան անունը:

«Ձատիկը ջրավազանի հատակին» վեպը հարուստ է իրական փաստերով ու իրադարձություններով, սակայն հաճելին այն է, որ ամեն ինչ ներկայացվում է գեղարվեստի օրենքներով: Գեղեցիկ բնապատկերները, հոգեբանական բացահայտումները երկը դարձնում են հետաքրքիր: Դրա վառ օրինակներից մեկը Բայկալի նկարագրությունն է: Եվ ուշագրավն այն է, որ բոլոր դեպքերում Սառայի հոգում ծփում է կարոտը հայրենի Արցախի հանդեպ: Բայկալի հետ առնչված առինքնող մի գրույց է Իվանուշկայի ու Անժելիկայի սիրո պատումը:

Ժողովուրդն իմաստուն է, այդ նա է ասել, որ ցավը միավորում է մարդկանց: Վ. Հակոբյանը, հավատարիմ այս փիլիսոփայությանը, կատարել է այսպիսի ընդհանրացում. «Առաջին բանը, որ նկատեց Սառան «Չունին» ինստիտուտում, դա մարդկանց սիրալիրությունն էր մեկ-մեկու հանդեպ, որը և նա բացատրեց ժամտախտի «ներկայությամբ», հիվանդությունն ամեն վայրկյան նոսրացնում էր մարդկանց շարքերը, և նրանց մնում էր միայն ավելի սրտակից ու ջերմ լինել իրար հանդեպ» (էջ 266):

Մի երևույթ, սակայն, շատ էր զարմացրել Սառային, այն, որ հայրենակիցները, մանավանդ, Կովկասից եկած, խուսափում էին մեկը մյուսից: Ինստիտուտի դիրեկտորի տեղակալն ազգությամբ հայ էր՝ Վարդապետյան ազգանունով, չկարողացավ Սառան նրա հետ հանդիպել՝ որքան էլ հերթագրվեց: Ուշ գլխի ընկավ Սառան, որ ազգակիցների հանդիպման մեջ ևս վերահսկող մարմինները կարող են «նացիոնալիզմ» տեսնել, ուստի ինքը տրվեց այդ պահվածքառճի լրջությանը և հրաժարվեց, ավելին, դադարեց վերապատրաստման եկած բժիշկների կամ դասախոսների մեջ հայրենակիցներ փնտրել, անցավ «ընդհատակ»:

Աշխատանքի ընթացքում Սառան իմացավ, որ այնտեղ կան վեց-յոթ հայ, որոնք հայտնի գրողներ, գիտնականներ ու քաղաքական գործիչներ էին, որոնց մեծ մասը Երևանից և Բաքվից էր:

Վ. Հակոբյանը, որ մանրակրկիտ ուսումնասիրել է Արցախի

մշակույթի ներկայացուցիչների կյանքը անհատի պաշտամունքի տարիներին, սրտի միջով է անցկացրել անվանի գրող-մանկավարժ Գրիգոր Ներսիսյանի ողբերգությունը և վեպում ստեղծել նրա էպիզոդիկ կերպարը:

Սառան նկատում է, որ մի միջահասակ մարդ, որն ըստ «հիվանդության պատմության», ցնդած էր, հարմար պահ գտնելով, թաքուն մոտեցել է Սառային և Ղարաբաղի բարբառով հարցրել. «Ջը, քե մատաղ, Ղարաբաղում հինչ կա-հինչ չկա... Լոխ լավա՞...»:

Ինչպես պատմում է հեղինակը, «հիվանդը» առանց պատասխանի սպասելու հեռացել է: Սառան անակնկալի է եկել, հանկարծահաս այդ «պահից» հետո խուսափել է նրանով հետաքրքրվել, որովհետև դա կվնասեր թե՛ իրեն, թե՛ «հիվանդին», ուղղակի նրա «հիվանդության թերթիկից» է իմացել, որ նա ժամանակին կրթություն է ստացել Պետերբուրգում, այդտեղ է բերվել Բաքվի Բայիլի բանտից... Անունը Գրիգոր Ներսիսյան է: Չէ, նա ցնորված չէր, մտածում էր Սառան ու լռում: Գրգիոր ներսիսյանը երկրորդ անգամ է հանդիպում Սառային և բուլորի ներկայությամբ՝ որպես իր «ցնդաբանությունը» հաստատող փաստ, արտասանում ինչ-որ ոտանավոր Ղարաբաղի բարբառով... Ոչ ոք ոչինչ չէր կարող հասկանալ, մեկ Սառային ու մեկ իրար նայելով, բժիշկները ժպտացել են ու անցել:

Մի այցելության ժամանակ էլ մոտեցել է Սառային ու խեղճ-խեղճ խոսել. «Մատաղ ինիմ քյեզ, ա ռախա, սկի մըննաս ընգալ ա, թա հըրցընիմ, էլլա թոխաը քշեր-ցիրեկ Մռըկածա սարեն յրա յա ինը՞մ, թա Մռակածը տեղը փոխալ ա» (էջ 267):

Սառան խղճահարանքից ու ցավից սփրթնել է ու լուռ անցել, որ հանկարծ արցունքները չմատնեն իրեն: Բայց «հիվանդը» չի նահանջել, ավելին, համարձակորեն բռնել է Սառայի թևից ու արտասանել.

*Ըշկըիշեղ շողետ մատաղ,
Սրտետ կած-կած պողեն մատաղ,*

*Հինչ քամի ա քյեզ ստեղ պերալ,
Քու յիրգիրիտ, վեղեն մատաղ:*

Հոգեբան գրողը պահը ներկայացնում է որպես անսպասելի, բայց սեփական ցավի արտահայտություն. «Քիչ էր մնում անակնկալի եկած Սառան իրեն կորցնել, կանգնեց, որ խոսի, բայց ուժ գտավ չարձագանքելու, որովհետև ոչ ռուսերեն լեզվով հնչող ցանկացած գրույց կասկած է հարուցում: Տեսնելով աղջկա վախը՝ «հիվանդը» սիրտ տվեց. «Մատաղ ինիմ, վախել մեկ, մեր լեզուն ըստեղ մինակ մունք ընք գյուղում, մին էլ Աստուծ, մին պեն էլ ասիմ՝ մննատ քըցիս վեչ, էս աշխարքը ստի եկալ ա, ստի էլ քիննական ա՝ մինչև վեր արևը արևմուտքան տուս կյա...» (էջ 267):

Սառան իր բժշկական պարտականությունները կատարելիս շարունակում էր որոնումները, հանդիպում նոր մարդկանց, ոգևորվում, նաև հիասթափվում, ինչպես օրինակ, Ռախսայի հանդեպ, որ անվստահելի էր ու դավաճանել էր նրան: Ռախսան ՊԱԿ-ի լրտես էր և մատնում էր անմեղ մարդկանց:

Սրտառուչ մի պատկեր է Սառայի հանդիպումը Տինոֆեյ անունով մի բժշկի հետ, որ ինքը՝ Ռոմանն էր, ուղղակի այնքան էր փոխվել, որ անճանաչելի էր դարձել: Սառան վերցնում է իրեն մեկնած ձեռքը և ակնթարթորեն նրա դաստակի վրա կարդում՝ Սառա:

Գրողն այստեղ ևս ներկայացնում է կենսական մի պատկեր, որը վկայում է ստալինյան դաժան իրականության պատճառած ցավն ու գտնումի հոգեկան պոռթկումը: Ճանաչելով Ռոմանին՝ «Սառան ուշաթափվեց: Ռոմանը սեղանին դրված ջրամանը արագորեն վերցրեց ու ջուր ցողեց Սառայի վրա... Սառան կանաց-կանաց աչքերը բացեց.

- Ռոման... Ռոման... ու նորից կորցրեց իրեն:

- Ասա, սառա ջան, ասա... Հանգստացիր: Հավաքիր քեզ: Մենք միասին ենք... Մենք...» (էջ 280):

Արդարությունն ասես թուխ անպերի հետևից ճառագող արևի

պես ասում է իր խոսքը: Այն դեպքում, երբ Սառան վախով բացում է աչքերը և հարցնում՝ արդյո՞ք ճիշտ է այս, թե երազ է, Ռոմանը նրա համար բացում է իր բերած թուղթը և ընթերցում իրեն արդարացնելու որոշումը: Բացելով աչքերը՝ Սառան հարցնում է նաև Արտեմի մասին:

Վեպում իրադարձությունների նկարագրությունը ուղղահայաց ու միագիծ չի ընթանում: Մինչ Սիբիրում Սառան գտնում է արդեն արդարացված Ռոմանին, հեղինակն ընթերցողին տեղափոխում է Չայաստան, որտեղ անհատի պաշատմունքը դեռևս մոլեցնում էր՝ շնչահեղձ անելով անմեղ մարդկանց: Դա վերաբերում էր նաև Ռոմանի մորը՝ Արուս Սարիբեկյանին, որն աշխատում էր Երևանի կենտրոնական պոլիկլինիկայում: Լսելով նրա որդու բանտարկության մասին՝ բոլորը խորթ աչքով էին նայում նրան: Իսկ բժշկուհին, որ որդու հետ կատարվածից դեռ անտեղյակ էր, ոչինչ չէր կարողանում հասկանալ շրջապատի կտրական փոփոխությունից, իր նկատմամբ ընկերների օտարացած վերաբերմունքից: Ավելի վիրավորական էր հիվանդանոցի կուսկազմակերպության քարտուղար Մարտին Միրզոյանի վերաբերմունքը: Գործը հասնում է նրան, որ Արուսին բարոյապես վիրավորում են: Կուսքարտուղար Մարտինն ասում է. «Իմ դիմաց կանգնած է հայրենիքի դավաճան դաստիարակող ամերիկյան մի լրտեսուհի»: Դա անսպասելի հարված էր Արուսին, առանձնապես այն հոխորտանքը, որ լսում է նա Մարտինից. «Չայաստանի թիկունքից դանակ եք խրում... Թշնամություն եք անում սեփական ժողովրդին... Դուք ծառայում եք կապիտալիստական Ամերիկային... Դուք լրտեսներ եք» (էջ 283):

Արուսը դիմում է կուսակցության Երևանի քաղկոմի քարտուղարին, և վերջինս չի ընդունում նրան: Դեռ ավելին: Անվտանգության կոմիտեից նրան կանչում են պատասխանատվության, նույնիսկ ձեռնաշղթաները հագցրած ձեռքերին: Նրան նետում են խուց:

Խոր տառապանք է ապրում Արուսը: Նրան ևս բաժին է հաս-

նուն վաղուց արդեն սովետների երկրում ուժի մեջ մտած այն օրենքը, ըստ որի, հայրենիքի դրավաճանի ընտանիքին, հարազատներին ու մտերիմներին քրեական պատասխանատվության են ենթարկում ու մեկուսացնում հասարակությունից:

Անհնար է առանց ցասունի կարգալ այն էջերը, որոնցում նկարագրված են Արուսի ապրումները, ծանր հիվանդությունը և նրա ցասումնալից խոսքը. «Որդուս գլուխը կերան... Կոտրեր ոտքս՝ չգայի այս երկիր, էդ կուսակցության դռներն էլ երբեք չտեսնեի» (էջ 297):

Թուրքերի դեմ հարազատ Վանի կռիվները տեսած, կորուսյալ օջախի զավակ Արուսի դեմ կատարված հանցանքը Լենինի, Ստալինի կուսակցության ղեկավարների ամենից հիմար ու անհեռանկար քաղաքականության արդյունքն էր: Արուսին, որ համարյա մահամերձ էր, փրկում է մորաքույրը՝ Անահիտը, որ ապրում էր Հայաստանի Շահաբ գյուղում:

Անահիտը երբ հարս էր եկել Վանից, հայրական օջախից մի բուռ մոխիր էր բերել հետը, խառնել Հակոբենց (Հակոբն իր վաղամեռ ամուսինն է) օջախում վառվող կրակին, որ նշանակում է՝ միություն, լույս, ջերմություն և նվիրում: Ամուսինը մահացավ դժբախտ պատահարից, նրա միակ օգնականը՝ սկեսուրը, մնաց՝ դարաբաղցի Վարդենը: Երեխեքը մեծացան, տարիք առան, ամեն մեկը մի կողմի վրա գնաց: Անահիտը ժողովրդական բժշկուհու և գրբացի համբավ ունեցավ Շահաբում:

Վեպում ազգագրական սովորությունների և բուժման միջոցների նկարագրությունն ապացուցում է հեղինակի սերտ կապը ժողովրդական կյանքի հետ: Անահիտին հաջողվում է բույսերի օգնությամբ բուժել Արուսին: Նա նույնիսկ դարաբաղյան թթի դոշաբ գտավ, մի մեծ շիշ գնեց՝ ողորմի տալով սկեսուր Վարդենին: Նա Արուսին ամեն առավոտ, նախքան նրա սնվելը մի գդալ դոշաբ էր խմեցնում, նույնը՝ կեսօրին և երեկոյան:

Անահիտի կերպարը գաղափարական մեծ իմաստ ունի: Հեղի-

նակը Մեծն Չարենցի պատգամով մեր ժողովրդի տարբեր հատվածների միասնության անհրաժեշտությունն է ընդգծում:

Վ. Հակոբյանը հմտորեն օգտագործել է երգիծանքի տարբեր տեսակները: Քաղաքական սատիրայի լավագույն օրինակ է Արուսի նամակը «Ժողովուրդների հայր ընկեր Ստալինին», որտեղ պատմում է իր ճակատագրի, ընտանիքի ու այն սիրո մասին, որ հետը բերել է Հայաստան, առանձին տողով ընդգծում. «Եթե իմանայի, որ Հայաստանում սովետական կարգեր կհաստատվեն, մեծ տղայիս էլ ինձ հետ ժամանակին Երևան կբերեի» (էջ 303-304):

«Ձատիկը ջրավազանի հատակին» վեպը բազմաշերտ երկ է: Հեղինակը նրանում շոշափել է քաղաքական, սոցիալական, ազգային, ընտանեկան, բարոյահոգեբանական հիմնախնդիրներ: Այստեղ կարևորում ենք հեղինակի բնութագրումները 1937-ին նախորդած տարիների քաղաքական խնդրումների վերաբերյալ, որոնք պետք է դառնային փորձանք ժողովրդական լայն զանգվածների համար: Այս դիտակետից նա 1937-ը համարում է մեծ աղետի բեկումնային տարի, որի մեջ պիտի փնտրել երեսունյոթի, ապա և հաջորդ տարիների ամբողջ ողբերգության արմատները:

Հեղինակը Ստալինի դաժանությունը սովետական ժողովրդի նկատմամբ առնչում է կուսակցության 17-րդ համագումարի հետ, ուր հզոր տերության պատգամավորներից ուղիղ 300-ը հանդգնեցին դեմ քվեարկել «Ժողովուրդների հայր ընկեր Ստալինին»: Ստալինի և Բերիայի կողմից սպանվեց Ս.Մ. Կիրովը, որ նրցում էր Ստալինի հետ: 300 պատգամավորներ կարճ ժամանակաընթացքում կամ «ինքնասպանություն» գործեցին, կամ զնդակահարվեցին՝ որպես «ժողովրդի թշնամիներ», սրի քաշվեց ֆորումի պատգամավորների 90 տոկոսը: Մուլտովը, Բերիան, Կազանովիչը, որպես Ստալինին «նվիրյալ» գործիչներ, Ստալինի ինստիտուցիաները իրենց ձեռքերը թաթախեցին միլիոնավոր անմեղ զոհերի արյան մեջ:

1930-ական թվականներին եղեռնից մի կերպ փրկված ու շունչը տեղը բերող փոքրիկ Հայաստանում բռնությունների ենթարկվածների թիվն անցնում էր 26000-ից, որի կեսից ավելին զնդակահարվել ու սպանվել են խորհրդային երկրի տարբեր ճամբարներում: Նման մթնոլորտում հարվածը հասավ նաև Արտեմին ու Ռոմանին:

Սրտառուչ մի պատկեր է այն պահի նկարագրությունը, երբ գյուղի փոստատարը Ռոմանի հեռագիրը հասցնում է Արուսին: Նրան թվում էր, թե մղձավանջի մեջ է: Նա հեռագիրը սեղմած կրծքին, ուրախությունից արտասվում էր: Մայրը՝ Արուսը, նույնիսկ ոտաբոբիկ դուրս է գալիս գյուղամեջ և անընդհատ բացական չում. «Ժողովուրդ, իմ որդին ժողովրդի թշնամի չէ, ժողովուրդ, Աշոտ Սարիբեկյանի տղան դավաճան չէ, ժողովուրդ, իմ որդին ապրում է... ժողովուրդ... Քո ցավը տանեն, ժողովուրդ...» (էջ 308-309):

Վ. Հակոբյանը հմտորեն նշում է հայ մեծ երախտավորների անունները՝ Աղասի Խանջյանին, Չարենցին, Բակունցին, Ջապել Եսայանին, ովքեր դարձել են անհատի պաշտամունքի զոհ:

Սառան, Ռոմանը, չնայած իրենց կրած տառապալից կյանքին, իրենց ծառայությունը երկրի և ժողովրդի հանդեպ ավարտած չեն համարում: Նրանք, որ Սիբիրից ժամանել էին Երևան, նորից մեկնում են Իրկուտսկ՝ հիվանդներին օգնելու համար:

Վ. Հակոբյանի վեպը սերտ ազդակներ ունի ժողովրդի բարոյահոգեբանական դրսևորումներից: Այդ առումով արժե բերել վեպից հետևյալ պատկերը, որ ազգագրական խոսուն օրինակ է: Հեղինակը պատմում է այն մասին, որ տրակտերտցիներն ամանորյա տոնից անմիջապես հետո, հունվարի երկուսին են այցելում գերեզմանոց՝ ծաղիկներով, շիրմաքարերին դրվող մի քանի կտոր քաղցրավենիքներով, շիրմների վրա դատարկվող թթի օղու բաժակներով... Նոր կարգերն արգելում էին Սուրբ Ծնունդը և նրան հաջորդող Մեռելոցի օրը նշել: Եվ որպես չգրված օրենք՝

այդ օրը գերեզմաններ էին այցելում ոչ միայն նրանք, ովքեր Տրակերտում են: Գերեզմանոցում ամփոփվածների շատ ու շատ հարազատներ գալիս էին Թիֆլիսից, Երևանից, Բաքվից, հաճախ նաև՝ Ռուսաստանից և Միջին Ասիայի տարբեր քաղաքներից: Եվ դա սովորույթ էր, որ վերածվել էր ավանդույթի ու դարձել զուտ տրակերտյան կենցաղավարական մշակույթ: Մեծ անպատվություն է դիտվում Տրակերտում, երբ հարազատները սահմանված հատուկ օրերին չեն այցելում իրենց «անցավորների» շիրիմներին:

Այսպիսի ավանդական մի արարողության ժամանակ էր, երբ «Սառան նկատեց, որ հատուկեմտ շիրիմներ են, այդ թվում՝ նաև իրենցը, որոնց մոտ մարդիկ չկան: Դանդաղ մոտեցավ Արսեն հայրիկի, մորաքույր Սիրունի շիրմաքարերին, Համեստ մայրիկի շիրմաթումբը համբուրեց՝ անզուսպ լացը հոգու մեջ, ապա (կարծես վախենում էր նոր բարձրացած շիրմաքարի վրա դաջված անունը կարդալ) շրջվեց, գրկեց այդ սառը գերեզմանաքարը, կարդալուց հրաժարվող աչքերով շոշափեց «Արտեմ» անունը ու փլվեց»:

Սակայն Արտեմը կենդանի է... Պարզվում է, որ կյանքը բաղկացած է նաև տեսիլքներից, տեսիլքներ՝ վերացական, տեսիլքներ՝ իրական: Այն պահին, երբ Սառան լացում էր հոնզուր-հոնզուր և խոսում շիրմաքարին տեղադրված Արտեմի նկարի հետ, հնչում է ծանոթ ձայնը. «Սառա, Սառա...»:

Ինչպես նկարագրում է հեղինակը, այդ «Չայնը մի պահ լռեցրեց Սառային՝ մի՞թե Արտեմն է, մի՞թե Աստված լսեց Սառային ու կենդանացրեց Արտեմին... Սառան զարմանքից ու ներքին հիացնունքից չռված աչքերը դանդաղ բարձրացրեց շիրմաքարից, շշկված նայեց աջ ու տեսավ շտապ իրեն մոտեցող Արտեմին, նրա ետևից՝ մեխակների մի փունջ ձեռքին, վազում էր Սրբուհին: Սառան կորցրեց ինքնատիրապետումն այն ժամանակ, երբ արդեն Արտեմի թևերի մեջ էր, իսկ Սրբուհին միանգամից գրկեց Սառայի գլուխն, ու վայրկյանում վերադարձավ նրա կորած, խզ-

ված, անհետացած ձայնը» (էջ 364):

Արտեմը Սառայի և Սրբուհու հետ վերադառնում է Արսեն ապոր տունը, որ իրենցն էր կրկին: Վերադառնալով տուն՝ նրանք ասես նոր էին ծնվել: Այդ պահի էությունը ներկայացնելու համար հեղինակն իրականին ձուլում է տեսիլքայինը, որ կորցրածի և գտածի էությունը ցուցադրող հիանալի մի պատկեր է: Սառան «ինչպես երեխա ժամանակ, վազեց այգի, գգվեց բոլոր ծառերին, թփերին, պատերի քարերը շոշափեց: Ձեռքի մատները հպվեցին խնձորենու կեղևին, և լսեց Արսեն ապոր ձայնը. «Սառա ջան, այս խնձորենու շիվը Յարարից են բերել, ինձ նման «էն գլխից» տուժած է, ժամանակին ջուր տուր, որ չչորանա: Յայացքը հառեց ալոճենուն, և մայր Յամեստը խոսեց. «Մի թելի վրա ասեղով անցկացնում են պտուղները, շարանուկ են սարքում, ծնունդ դրանց եփուկով այնպիսի խմիչք են պատրաստում, որ հերդ խմում է ու չի կշտանում»: Մեջքով հենվեց ընկուզենուն, հարարցի Մարգարի խորհրդին ականջալուր եղավ. «Աղջիկ ջան, ընկուզենու ստվերը գլուխ է ցավեցնում, հեռու գնա, կեռասենու տակ կանգնիր»... Կեռասենու տակ է կանգնում, կրկին հայտնվում է հայր Արսենը՝ ծոծրակը թեթև քորելով, մոտենում, ձեռքը դնում է Սառայի գլխին. «Սառա ջան, Սիրունի համար էի տնկել այս ծառը, կեռաս շատ էր սիրում: Յա, մեկ էլ թթից չէր կշտանում, ահա այս թթենին իր համար էի տնկել» (էջ 365):

Ինչպես նկատում ենք, գրողը, որպես հոգեբան, վարպետորեն կարողանում է թափանցել կերպարի հուզաշխարհը, թերթել նրա ցաված սրտի գիրքը, նշմարել տրամադրությունների շերտերը և զուգակցել կորսված հայրենի գյուղի կարոտը, երազ դարձած ծնողների արած-դրածի հավերժացած հեքիաթը անարդարացիորեն տուժած զավակների երախտագիտական զգացումներին, միաժամանակ այդ զգացումները շաղախելով չնարած հույսի հետ: Եթե կոնկրետանալու լինենք, կարող ենք ընդգծել, որ գրող Վ. Յակոբյանը խորապես է հասկանում հակասությունների օրո-

րով ընթացող կյանքի փիլիսոփայությունը:

Վ. Հակոբյանը խորապես է հասկացել անհատի պաշտամունքի հասցրած դաժան հարվածների ոչ միայն բարոյահոգեբանական, այլև ֆիզիկական ծանր հետևանքները, որոնց նկարագրությունը տրված է փորձառու գրողի հմտությամբ: Նման տեսարաններից է Սառայի ուշագնացությունը, երբ ճակատագրի բերումով ազատագրված Արտեմն այցելում է Տրակերտի գերեզմանոց ու հանդիպում Սառային: Սրբուհու համրանալը՝ վախից, Ռոմանի մոր՝ Արուսի մահամերձ վիճակը և վերջապես, ստալինիզմից բուլդո թուժածների ահն ու սարսափը:

Սահմնկեցուցիչ մի տեսարան է Տրակերտում Արտեմի «թաղումի» նկարագրությունը: Երբ Արտեմը վերադառնում է Տրակերտ, Անտիկվար Անդրոնը պատմում է. «Արտեմ, երբ թուղթ բերեցին, որ աքսորյալ Արտեմ Գասպարյանը գնդակահարվել է Բաքվի քրեակատարողականից փախուստի դիմելու ժամանակ, քո շորերից մեկ-երկու կտոր գտել ենք, դրել դագաղի մեջ ու այս շիրմաքարը դրել, որ... Ասենք, անունդ անհետ չկորչի էս աշխարհի երեսից... Ներիր մեզ, Արտեմ, Արտեմ... Եվ փառք աստծո, որ կենդանի ես» (էջ 369):

Արտեմը մնայուն կերպար է՝ կոնկրետ, ամբողջական, բազմակողմանի: Նրա սիրտն ու հոգին ժամանակաշրջանը ներկայացնող ջերմաչափ կարելի է համարել: Անձնական վիշտը, հայրենի ծննդավայրի կորուստը, ազգային ճակատագրի ծանրությունը երբեք չեն ընկճում նրան: Գերեզմանոցում անգամ նա հոգեպես փարվում է կյանքի ընթացքը կենարար պահող լույսին ու հույսին: Այս առումով հետաքրքիր է հեղինակի հետևյալ նկարագրությունը: Գերեզմանոցում «Արտեմը նորից հիշեց բախտագուշակ կնոջ խոսքը. «Ուսերիդ երկնատուր սիրո և արքայության ծիրանի կա... Ծիրանավոր ես»... Նման թախիծ մարդուն պարուրում է այն ժամանակ, երբ կարոտած վռագում է մանկության ծառի մոտ և հանկարծ տեսնում, որ այն, ավաղ, այլևս չկա: Բայց Արտեմն Արտեմ

է տառապանքի մեջ: Մի՞թե հիմարությունն չէ, երբ մարդ անընդհատ ձգտում է երջանկության՝ իմանալով, որ երջանկություն փաստորեն գոյություն չունի: Սա ի՞նչ աշխարհ է: Արտեմը հուսահատվել չի սիրում, ուստի փորձեց ինքն իրեն «կարգի» հրավիրել: Նայելով շուրջը, հայտնություն արեց իր մեջ՝ մարդու հոգեբանության վրա չափազանց ազդում է այն հանգամանքը, թե որտեղ, որ վայրում է գտնվում ինքը, և ըստ այդմ էլ նրա մտքերը, խոսքերը, հայացքը, հոգեկան վերապրումները, համաձայնություններն ու անհամաձայնություններն ուղղորդվում են: «Ո՞վ կհմանար, թե ես՝ Արտեմս, գերեզմանոցում կհանդիպեմ իմ... շիրմաքարին: Այ, եթե ես հիմա լինեի հայրենի Չարարում՝ Մեծ քարի վրա կանգնած, վերաբերմունքս կյանքի ու աշխարհի հանդեպ, համոզված եմ, բոլորովին այլ կլիներ»: Որքան էլ փորձեր Արտեմը փիլիսոփայորեն մեկնել իր վիճակը, այնուամենայնիվ, պահի դատարկությունը սղոցում էր հոգին: Ուստի նա քայլերն ուղղեց դեպի պահակատան կողմը» (էջ 362-370):

Արտեմը Անտիկվար Անդոնից լսում է այն բոլոր հարվածների ու կորուստների մասին, ինչ տեղի է ունեցել իր բանտարկվելուց հետո: Այդ պահին անգամ Անդոնի ու Արտեմի զրույցն ընթանում է կյանքի, օջախի, ծառատունկի, ներկայի և ապագայի մասին:

«Ձատիկը ջրավազանի հատակին» վեպն ընդգրկում գործ է՝ լայնապլան, երկրորդական թեմաներով հագեցած, կենսական հարցերի ներառումով: Այս դիտակետից իրական երևույթների գեղարվեստական համոզիչ պատկերներ են Անուշի վերաբերմունքը կյանքին, գաղտնի գործակալության աշխատող Արմանի սիրահարվելը «Կամասուտրա»-ի ակունքի տնօրեն Ինդրային, վերջինիս կախվելը և այլն: Գրողի՝ կյանքի խորքային իմացության մասին է խոսում այս բոլոր երևույթների նկարագրությունը:

Արտեմին ու Սառային բացվում են իրենց ընտանիքի հետ կապված առեղծվածները: Սառան նոր-նոր իմանում է, որ Չամեստն իր խորթ մայրն է, որ ինքը Սիրունի աղջիկն է, որ Սիրուն մայրիկն

ամենևին էլ Համեստի քույրը չէ, այլ Արսեն հոր առաջին կինն էր, որ Արսենի և Սառայի մայրերը հարազատ քույրեր են, որ Սառան և Սրբուհին Արսենի աղջիկներն են, բայց տարբեր մայրերից:

Ցեղասպանություն տեսած հարազատների ապրած տառապանքի, հավատի, հուսախաբության, ցավի զգացումի, միաժամանակ սփոփիչ գտնումի գեղարվեստական պատում է այս ամենը, որ հատուկ է միայն մեր ժողովրդին:

Մի առանձին էպիզոդ է Սառային սիրո առաջարկ արած չերքեզ երիտասարդի կողմից կատարված մահափորձը, որից վիրավորվում է Ռոմանը և ապաքինվում հիվանդանոցում:

Վեպի երկրորդ մասն ավարտվում է այս անսպասելի պատկերով:

Երրորդ մասը նվիրված է Հայրենական մեծ պատերազմի և հետպատերազմյան շրջանի նկարագրությանը: Մինչև պատերազմը Արտեմն ամուսնացել էր Սրբուհու հետ, երեխաներ ուներ: Սրբուհին նորից աշխատանքի էր անցել որբանոցում ու մեծակ խնամում էր փոքրիկներին: Բանակից վերադառնալուց անմիջապես հետո Արտեմը հիվանդանոցում փրկում է գայլի հետ կոխ բռնած հարարցի երիտասարդի կյանքը:

Սրբուհին և Արտեմը վերհիշում են իրենց անցյալը: Նրանք արդեն երկու երեխա ունենին՝ Ժորային և Սիրունին: Նրանք երջանիկ էին զգում իրենց հետպատերազմյան օրերի համապատկերում, միաժամանակ տխրություն էին ապրում որդեկորույս հարևանների մոտ: Այդ թախիծն առանձնապես փոթորկվեց, երբ հանդիպեցին հարարցի Խանում մորաքրոջը, որը սև շորերի մեջ էր, իրեն գրեթե կորցրած, կիսախելագար... Ամուսինը զոհվել էր տարիներ առաջ, Հարարի կռվում, մի կերպ երկու տղա զավակների խնամել, պահել, մեծացրել է, ու երկուսն էլ զոհվել են Հայրենականում... Արտեմն ու Սրբուհին նրան տեսնելուն պես զգաստացել են, մոտեցել, սիրտ տվել, բայց... Բայց Արտեմն

զգացել է, որ Խանում մորաքույրն արդեն հոգեկան խախտման եզրին է: Բնական ու սրտակեղեք պատկեր է Խանում մայրիկի հարցը Արտեմին.

«Ռու արդեն եկե՞լ ես, մեր Մարտիրոսին, Թևատրոսին հո չե՞ս հանդիպել» (էջ 397): Այստեղ մի նոր, հուզիչ ընդհանրացում է կատարում հեղինակը, որ կյանքի մշտնջենական փիլիսոփայությունն է: «Արտեմին միշտ թվացել էր, թե երբ ռազմի դաշտից տուն գնա, ամեն ինչ արդեն փոխված ու այլ կերպ կլինի, բայց պարզվում է, որ պատերազմը ոչ միայն պատերազմով չի ավարտվում, այլև նորովի է շարունակվում «խաղաղ» պայմաններում: Ամենաահավորը տեսանելի թշնամու դեմ կռվելը չէր՝ «ճակատ-ճակատի»: Կա դրանից ավելի ծանր վիճակ, երբ ամենուրեք թշնամի են տեսնում, անգամ բարեկամի ու հարազատի մեջ» (էջ 392-393):

Անհատի պաշտամունքը ոչ միայն իր հետքերն էր թողել, այլև շարունակվում էր հետպատերազմյան շրջանում: Արտեմը վերադարձել էր ռազմի դաշտից, բայց խաղաղության մեջ էլ խաղաղություն չգտավ: Տրակերտը դատարկվել էր ոչ միայն հայրենիքի համար ռազմաճակատում զոհված հրաշալի մարդկանց բացակայությամբ, այլև ավելի մեծ ավերածություններ էին կատարել «կուսակցական գտումները»:

Գրքի ծանոթագրություններում հեղինակը բերում է իրական փաստեր, որոնք վկայում են լենինյան կուսակցության ղեկավարության ահաբեկչական քաղաքականությունը ոչ միայն հասարակ քաղաքացիների, այլև հենց կոմունիստների նկատմամբ: Միայն ՀամԿ(բ)Կ 17-րդ համագումարի (1934) 1966 պատգամավորներից 1106-ը կալանավորվել են, նրանց մեծ մասը՝ գնդակահարվել: Մեծ թվով կուսանդամներ, որոնք բավականին բարձր դիրքեր էին գրավում կուսակցության մեջ, «դատվել» են (հիմնականում գնդակահարվել) ԽՍՀՄ Գերագույն ռազմական դատարանի կողմից (դատերը կայացել են փակ նիստերով՝ 15-20 րոպեի ընթացքում, առանց մեղադրվողի կամ նրա պաշտպանի

ներկայության, անձամբ Ստալինի կողմից հաստատված ցուցակներով՝ ներկայացված Եթովի և Վիշնևսկու կողմից:

Եվ ճիշտ է խորհում Արտենը, որ խորհրդային պետության պատմությունը առաջին հերթին ճամբարների շինարարությամբ է ուղեկցվում: Արտենը շատ բան է տեսել ճամբարներում ու բանտերում, սակայն Հայրենական պատերազմից վերադառնալուց հետո չի կարողանում հավատալ «Լենին-ստալինյան» քաղաքականության «մարդասիրական բնույթին»:

Արտենը չի ընդունում բոլոր այն հաջողությունները, որոնք դաժանությամբ ու բռնակալության ձեռնարկումներով են նվաճվում: Ըստ նրա, ժողովուրդներն իրար նմանվելու կարիք չեն ունենում, նրանք առավել գեղեցիկ ու հզոր են ինքնատիպության մեջ:

Արտենը Մեծ Հայրենականում պարզևատրվել է «Կարմիր աստղի» շքանշանով: Բայց կուսակցության շարքերը չի մտել: Նա զարմանքով է լսում հիվանդանոցում աշխատողներից մեկի զգույշ խորհուրդը: «Ափսոս, եթե կուսակցական լինեիր, քեզ կնշանակեին վիրաբուժական բաժանմունքի վարիչ, տեղն ազատ է» (էջ 369): Արտենի զարմանքը փոխվում է կսկիծի, երբ լսում է, որ բաժանմունքի վարիչին աշխատանքից ազատել են երկու ամիս առաջ, քաղաքական հողի վրա և տարել Բաքու: Ուրեմն, ամենուրեք իշխում է մատնությունը, սուտը, կեղծիքը, անվստահությունը, որոնց պատճառով ավերվում էր երկիրը:

Արտենին սփոփում են Սրբուհու ոգևորությունն ու սերը: Եվ Սրբուհու խնդրանքով Արտենը պատմում է զատիկի հետ կապված պատմությունը՝ ըստ հունական առասպելի:

Կյանքը հոսում էր նախկին հունով: Արտենի տան մեծագույն նորությունն այն էր, որ նրա կամարների տակ երկվորյակների նոր զույգ ծնվեց՝ երկուսն էլ արու, մեկին անվանեցին Սուրեն, մյուսին՝ Սերոբ:

Արտենը հոգեպես չի հանգստանում: Նա չի հաշտվում անհատի պաշտամունքի ավերող քաղաքականության շարունակու-

թյան հետ նաև հետպատերազմյան շրջանում, նա գտնում է, որ «Եգիպտական փարավոնների դամբարաններում, Յին Յունաստանում, Վենետիկում հայտնագործվածներից մինչև մեր օրերի ինքնաշեն դիմակների ճանապարհն անասելի շատ մեծ է, բայց ոչ մի անգամ ոչ մի բռնակալ չի փորձել դիմակավոր դարձնել ամբողջ ժողովրդին ինչպես դա արվում է հիմա: Կոմունիզմը վերածվել է գաղափարական ինկուբատորի... Կուսակցական դիմակի մասսայական արտադրությունը մատուցում են միլիոններին՝ որպես կաղապար, ասես ուզում են ստեղծել նույն աչքերով, նույն քիթ ու մռութով, նույն մտածողությամբ ու դեմքով մի նոր ժողովուրդ: Ոնց կլինի այսպես: Երբ գրուցում ես մարդկանց հետ, զգում ես, որ ուրիշ բան են մտածում, ուրիշ բան խոսում, յուրաքանչյուրը թաքնված է չերևացող մի դիմակի տակ, դիմակ, որ ներսից են հագցնում մարդկանց» (էջ 409):

Արտեմին հուզում էր Արցախի ճակատագիրը: Աշխատելով հիվանդանոցում՝ նա ականատես է լինում ազերիների կողմից ծեծվող ու թալանվող հայ անասնապահների, որոնք զոհվում են, սակայն դրածո ղեկավարներն ստիպում են նրան՝ «Ի սեր ինտերնացիոնալիզմի» եզրակացության մեջ գրել. «Լեռան լանջին արածող հոտի ոտքերի տակից քար է դուրս պրծել, գլորվել, եկել ու խփել սպանել հովտում իրար կողքի նստած հովիվներին» (էջ 410):

Եվ դա կրկնվում էր անընդմեջ: Ուրեմն՝ վտանգված է Արտեմի պապերի երկիրը: Արտեմը չէր հաշտվում այդ երևույթի հետ: Դեռ ավելին: Նա նամակներ է հղում Մոսկվա, Կրեմլի ղեկավարությանը՝ պահանջելով, որ հարցը «ստուգման ենթարկվի ոչ թե Բաքվից, այլ Մոսկվայից ժամանած բարձրաստիճան ներկայացուցիչների» միջոցով:

Արտեմը ցնցվում է, երբ լսում է, որ Չարարը բռնագրաված ազերիները Սարուխանին սպանել են: Հանցանքները դարձել են սովորական երևույթ: Սպանվում են նաև հայ աղջիկներ: Իսկ հիվանդանոցի գլխավոր բժիշկ Ալոշը մասնագիտացել է գործարք-

ների մեջ, բժշկական եզրակացություններն ինքը գրում, մորգապետ Վահանին ստորագրել է տալիս գրվածքի տակ, կլոր կնիքը գրպանից հանում, նույն կլորաչափությամբ բերանը բացում, չաղ-չաղ փչում ու կնիքում:

Վեպում գեղարվեստական հնարանքներով ներկայացված են այն բոլոր հակահայկական արարքները, որ տեղի են ունեցել մինչև 1988 թվականը: Ընթերցողը ցավի ու ցասումի զգացումով է ընթերցում այն էջերը, որոնցում նկարագրված է Բերդավանի այգիներում գտնված տասնչորս տարեկան հայ տղայի դիակը: Նրան սպանել են ուսուցիչ կոչված ազերի ավազակները, անարդար դատավարության արդյունքում արժանանալով տրակերտցիների ընդվզմանն ու վրեժխնդրությանը: Առաջին ավազակապետ-մարդասպանը Միրշադին է, որն ինտերնացիոնալ դպրոցի տնօրենն է, շրջկենտրոնից իր մեքենայով նոր էր բերել «Կեցցե հայ-ադրբեջանական ժողովուրդների բարեկամությունը» կարգախոսը՝ հայերեն և ադրբեջաներեն լեզուներով՝ սպիտակ պաստառի վրա, կախել դպրոցական շենքի հենց ճակատային մասում»:

Միրշադին ձևացնում է, որ հայ Յունանի մտերիմ ընկերն է: Սակայն նա պատվիրում է Մաշադիին, որ սպանի Յունանի երեխային, գլուխը հատի մարմնից և աչքերը հանի: Ինչպես գրում է հեղինակը, «Երևում էր, որ մարդասպանն արյամբ ձեռքերը ողողելու ոճրագործական իր հակումներին հագուրդ էր տվել դանդաղ՝ տանջամահ անելով հայ երեխային... Վերջում եղեռնագործը երեխայի դիակը նետել էր փոսի մեջ, որով ջուր էր հոսում, մի քանի քարով ծածկել, որ հետքերը չերևան, իսկ երեխայի արնաշաղախ շապիկից մի կտոր տարել էր սպանության պատվիրատու Միրշադիին (էջ 437):

Միրշադին խնդիր էր դրել պայթեցնել Յունանի տունը: Սակայն Մաշադին պատասխանել է, որ ուժանակի հետ երբեք գործ չի ունեցել: Ուստի Միրշադին հանձնարարել է սպանել տան փոքրիկին՝ Նելսոնին, բացականչելով. «Սիրտս հայի արյուն է ուզում»:

Բայց տրակերտցիները վրեժխնդիր են եղել: Ղատարանի կողմնակալ որոշումը մարդասպանի հանդեպ զայրացրել է ղատարանի մոտ հավաքված տրակերտցիներին, որոնք էլ կրակի են մատնել այն մեքենան, որի մեջ էին մարդասպանները:

Ադրբեջանի կառավարող շրջաններն այդ դեպքից հետո դառնորեն տանջել են մի շարք հայ վրիժառուների, սակայն ազերիներն արդեն ստացել էին արցախցիների հարվածները:

Շարունակվում էին խորհրդային տարիներին Ադրբեջանում արմատավորված ազգային խտրական քաղաքականությունն ու հալածանքները Արցախի հանդեպ: Դեռևս գործում էին ՊԱԿ-ն ու նրա լրտեսները, ինչպիսին է Ամբիոն Հախումը, որին նախատում է Արտենը: Շարունակվում էին նաև ՊԱԿ-ի հետապնդումներն Արտենի հանդեպ:

Վ. Հակոբյանը ռեալիստորեն պատկերում է այդ տարիներին Շուշիում գաղտնի գործող «Մուսավաթ» կազմակերպության գործունեությունը: Այն ծրագրել էր կազմակերպել նոր սպանդ քաղաքի հայերի համար: Բանտարկվում էին անմեղ մարդիկ: Հայ մասնագետներին հեռացնում էին աշխատանքից և փոխարենը նշանակում ադրբեջանցու: Նման ձևով իր գործից հեռացվում է հիվանդանոցի փոխտնօրեն Գրիգոր Բաղունցը, և նրա փոխարեն նշանակում են Աժդար Կարաբասովին:

Հետաքրքիր տեղեկություններ ու փաստեր են բերվում պատմավեպում: 448-րդ էջում կարդում ենք. «Մոսկվան յուրաքանչյուր հանրապետությունից ըստ բնակչության քանակի (չգրված օրենքով ու չտառավորված որոշումներով) պետք է ապահովեր «ժողովրդի թշնամիների» որոշակի քանակ, որը և միաժամանակ ի ցույց էր դնում հանրապետությունների կուսակցական և անվտանգության մարմինների անմնացորդ նվիրվածությունը սովետների երկրին, հետևապես և՛ նրանց խիստ ու անաչառ մոտեցումը հայրենիքի հանդեպ՝ այդ կարևոր հանձնարարության մեջ: Եվ ահա ազերական իշխանությունները (դարձյալ չգրված օրեն-

քով ու չտառավորված որոշումներով) պահանջվող տոկոսա-
չափն ապահովում էին կամ Նախիջևանի, կամ Լեռնային Ղարա-
բաղի հայության հաշվին»:

Սիբիրից վերադառնալուց հետո Արտեմը հաճախ էր խորհում
Ադրբեջանում հայերի հանդեպ կազմակերպվող այս հալածանք-
ների ու բանտարկությունների մասին, միաժամանակ վերհիշում
իր կրած տանջանքները Բաքվի Բայիլի բանտում: Վ. Հակոբյանը
ասես ականատեսի վկայությամբ նկարագրում է այն բոլոր ան-
մարդկային կտտանքները, որ իրականացվում էին բանտերում
ու աքսորավայրերում՝ կոնկրետ ընդգծելով Արտեմի դեպքում:

Վեպում առօրյա հոգսերի ու վերհուշի համատեղ պատում-
ներն առինքնող են: Դրանք բարոյահոգեբանական մթնոլորտի և
անհատի ոչ սովորական ապրումների հուզող ցուցադրումներ
են: Բերենք մի օրինակ: Արտեմը Հայրենական պատերազմից
վերադառնալուց հետո աշխատում է Տրակերտի հիվանդանո-
ցում: Նրան շարունակում էին վրդովեցնել Ադրբեջանի կառավա-
րող շրջանների ներկայացուցիչների այցերը Տրակերտ և բարե-
կամության կեղծ ելույթներին զուգընթաց մեղադրել հայ մաս-
նագտներին, ընդհանրության մեջ իրականացնել հայահալած
քաղաքականություն: Ու նման մի ժողովի ժամանակ Արտեմը կր-
կին հիշում է իր հանդեպ կատարված կտտանքները և դահլիճի
պատուհանից նայում քաղաքի կողմը ու մտորում. «Անզուգա-
կան է Տրակերտը»:

Իսկ ժողովը շարունակվում էր: Բաքվից եկած ազերի պոռո-
տախոսին շարունակում է մեկ ուրիշ պաշտոնյա՝ Ադրբեջանի
կոմկուսի պրոպագանդայի բաժնի հրահանգիչ Կևորկ Շումանո-
վը, որն ազգությամբ հայ է, մայրենի լեզուն չգիտե, խոսում է ռու-
սերեն, մեկ-մեկ դիմում ադրբեջաներեն բառերի՝ քիրվա, դոստ-
լըզ, մուալլիմ և այլն, իսկ ռուսերենի որոշ բառեր արտասանում
էր ազերական առոգանությամբ, ասենք՝ «քամունիսփիչեսքայա
փարթիյա»...

Այդ Կևորկ Շունանովի հորը Արցախում Տկլոր Մկո էին ասում, որովհետև նրան պատժել էր Թևանը՝ իր դեմ մահափորձ կատարելու պատճառով: Դավաճանի որդի է Կևորկ կոչեցյալը, որ Բաքվում նշանակվել է հրահանգիչ և ծառայում է ազերի թուրքերին: Արտեմը չէր հաշտվում նման ազգուրաց ու ստոր մարդկանց հետ:

Վեպում քիչ չեն կոլորիտային ծիծաղաշարժ պատմությունները, որոնցից հատկանշական են Գրիգորի և բուժքույր Արևիկի հանդիպումը, Գրիգորի վերքի բուժումը և նրանց արկածային հանդիպումները, որ նկարագրված են համ ու հոտով, հումորի վարակիչ տեսարաններով: Արևիկը, ով անասնապահ Ռուշանի կինն էր և երեխա չուներ, Գրիգորից ունենում է: Միանում են Գրիգորն ու Արևիկը:

Երգիծանքի առիքնող օրինակ է նաև Շաշ Շուշանի համարձակությունը ժողովում՝ շրջկոմի քարտուղարի ներկայությամբ: Շուշանի դժգոհությունն իր պատճառներն ուներ: Դիմենք վեպին. «Շուշանը ժողովից և՛ հեռանում էր, և՛ քթի տակ անորոշ ուղղությամբ հայիոյում. «Երկիրը քանդեց պրծավ... Քո շաշ գլխին քար տրաքե... Քյասիբ-քյուսուբ էս շոգին մատանի աչքն են հավաքել, իրենք բեմի վրա լեն-լեն, կողկիպ շնթնել... էնպես են խոսում, ասես չգիտես, որ Ղարաբաղում բուրդ ու յուղ չեն թողել, ձի ու ձու չեն թողել, հարկահավաք են արել, տարել... Մի ձի էլ չես գտնի, որ պոչը խուզած չլինին, մազը տարած... Հողս ձեր գլխին» (էջ 480):

Հետպատերազմյան շրջանի տնտեսական ծանր կացությունը չէր հուզում ոչ Ադրբեջանի կառավարող շրջաններին և ոչ էլ Արցախում նրանց սատրապներին, որոնք հանուն պաշտոնի ուշադրություն չէին դարձնում հայ բնակչության բողոքներին:

Եվ ցավալին այն էր, որ նմաններին ծառայում էին քծնանքի և զրպարտության մեջ կոփված երկդիմի սրիկաները, ինչպիսին է, օրինակ, Շախ-Բազին, որ կեղծ փաստաթղթեր է սարքել, թե իբր պատերազմի հաշմանդամ է: Բազին արդեն իրենց մահկանացուն կնքած Գուքոյի, Թևանի, Գալուստի, Խաչատուրի մեղալներից

ծեռքն էր գցել և մեկ-մեկ կախում էր դոշից: Նա է, որ ժողովում Բաքվից եկած Աբուլֆաթ Քերիմովի մոտ ոչ միայն քծնող ելույթ է ունենում, այլև զրպարտում է ժողովրդի սիրուն ու հարգանքին արժանացած Արտեմին, որ ելույթ էր ունեցել հանուն ժողովրդի, հանուն ճշմարտության: Շախ-Բազու իսկական էութունը բնութագրող պատկեր է ստեղծել հեղինակը: Ահա Շախ-Բազու ելույթը. «Ես խորապես վիրավորված եմ բժիշկ Արտեմի ելույթից, վիրավորված եմ, առաջին հերթին ընկեր Քերիմովի և ընկեր Շումանովի փոխարեն: Նա, համոզված եմ, իր խոսքի համար պատասխան կստանա: Ես նոր չեմ ճանաչում Արտեմ Գասպարյանին, նա մոլի նացիոնալիստ է: Այդ նա՞ չէր, որ մի քանի ամիս առաջ մասնակցեց Ղարաբաղը եղբայրական Ադրբեջանից պոկելու և Հայաստանին միացնելու մասին նամակի պատրաստմանը: Նամակի տակ նրա ստորագրությունը չկա, որովհետև ինքն աշխատում է ընդհատակյա, դա ավելի վտանգավոր է: Նա ժողովրդին անընդհատ թունավորում է իր նեղ ազգային, հակալեւինյան գաղափարներով: Երբևէ ձեզանից որևէ մեկը մտե՞լ է նրա տան դռներից ներս, ամենուրեք սրերի նկարներ են, ամզամ տնամերձի պարիսպներին է սրեր տեղադրել, մինչդեռ ընկեր Լենինի կողմից մեր գերբի վրա մուրճն ու մանգաղն են փայլում:

Արտեմ Գասպարյանը ամիսը առնվազն մեկ անգամ լինում է Երևանում: Նա գաղտնի կապեր ունի դաշնակցական թափփուկների հետ, և պատահական չէ, որ պաշտպան է կանգնել կուսակցության նկատմամբ անազնիվ վարք ու բարք ցուցաբերած Գրիգոր Բաղունցին (էջ 481):

Ժողովականներն արհամարհանքով են լսում Շախ-Բազուն: Նրան նախատում է ռանչպար Ավանեսը, որ ութ զավակների հայր է ու բոլորի ճանաչմանն է արժանացել Մոսկվա ուղարկած մի նամակի շնորհիվ, որն ուղղել էր կուսակցության Կենտկոմին, պատճենը՝ Կրեմլի դամբարանում պառկած հեղափոխության մեծ առաջնորդ Լենինին: Հեղինակը բերում է մի քանի տող այդ

նամակից, որ ժամանակաշրջանի եությունը բնութագրող հիանալի պատկեր է. «1977թ. ունեցել է շարժական անասունների՝ մի կով և 2 տարեկան երինջ: Բառիս լայն իմաստով այդ անասուններն ազերի միլիցիոների գլխավորությամբ անհետացան: Որի համար խնդրում եմ Ձեզ ունենաք լեւինյան հոգի դեպի չքավոր, քյասիբ դասակարգը և միջամտեք, որ կամ անասուններս վերադարձնեն, կամ՝ դրանց արժեքը» (էջ 482):

Արցախում տիրող հակահայկական խայտառակ վիճակի գեղարվեստական խոսուն պատկեր է այդ ժողովի նկարագրությունը: Ընդհանուր կուսակցական ժողովը շարունակվում է դռնփակ կարգով, ուր վճռվում է Գրիգոր Բաղունցին հեռացնել կուսակցության շարքերից և աշխատանքից: Միաժամանակ ակտ է կազմվում ժողովում բժիշկ Արտեմի «ոչ վայել վարքագծի, պաշտոնյաներին հասցրած վիրավորանքների և, մանավանդ, ժողովուրդների լեւինյան բարեկամության վերաբերյալ անպատշաճ արտահայտությունների մասին»: Որոշվում է նաև Արտեմի հարցով զբաղվել առանձին:

Բժիշկ Արտեմը ներքաշվում է նոր քաշքշուկների մեջ: Սակայն Արտեմը չէր ընկճվում: Յեղիմակը նրա բնավորությունը բնութագրող նոր բարենմանություններ է ընդգծում: «Արտեմը հստակ ու սկզբունքային էր իր գործողությունների ու արարքների մեջ և վաղուց արդեն եկել էր այն համոզվածության, որ երկրում ինչ-որ բան փոխելու համար պիտի փոխել հենց երկիրը» (էջ 483):

Արտեմը ժողովից հետո իր հուշագրությունների տեսքում ավելացնում է. «Ադրբեջանը բացահայտ ձևով ձեռնամուխ է եղել Ղարաբաղի հայաթափմանը՝ Նախիջևանի օրինակով: Ամեն ինչ արդեն արվում է պետական մակարդակով... Նոր ու ահավոր պայքարի օրեր են սպասվում: Լինել պատրաստ» (էջ 483):

Ուշագրավ են Արտեմի խոհերը ազգերի հարևանության, մարդկայնության և այլ երևույթների մասին: Նա ժողովուրդների համերաշխության կողմնակից է, քննադատում է այն քաղաքա-

կան ղեկավարներին, ովքեր ազգերը հանում են միմյանց դեմ: Սակայն Արտեմը դեմ է կեղծ ու նենգ քաղաքականության, նրա ցավն ու տազնապն առնչված են Արցախի ճակատագրին: Նա դեմ է այն քաղաքականությանը, որ ստեղծում է անջրպետներ ու թշնամանք, մարդուն դարձնում է գազան: Արտեմը չի ընդունում նաև այն երևույթը, երբ մարդիկ անվանափոխությամբ «հեռանում են» իրենց ազգությունից, ներկայանում որպես այլ ժողովրդի զավակ: Այս պարագայում նրանց անվանատունն արդեն ոչ թե վերածվում է սոսկ ծածկի, այլ՝ թաքստոցի:

Վ. Հակոբյանը վեպում բերում է կոնկրետ փաստեր, որ մի կողմից քննադատում է նման անհատներին, մյուս կողմից, բերում է այնպիսի փաստեր, որ շատ հետաքրքրում են ընթերցողին: Ի դեպ, պատմավեպն ընդունում է գրողի կողմից նման փաստերի ընդգծումը, որ ժամանակների համար բնութագրական են և ունեն ճանաչողական արժեք: «Բերիան,- կարդում ենք վեպում,- որ շատ երկար տարիներ առանցքային դերակատարություն էր ստանձնել նորաստեղծ սովետների երկրի ամենաբարձր օդակներում, անվանափոխվել էր այնպես, ինչպես զգեստափոխվում են: Մինչև այսօր բոլորը չէ, որ գիտեն ճշմարտությունը՝ նա ազգությամբ հրեա է: Վրաստանցի ծխախոտագործ Բերշկովիչի որդին տեղափոխվում է ռուս իրականություն և իր համար թաքստոց է ձեռք բերում՝ կառուցված ռուսական «ճարտարապետությամբ», այսինքն՝ Լեյքա Պալիչ Բերշկովիչը դառնում է, ինչպես ասում են, Լավրենտի Պավլովիչ Բերիա: Միայն «Բերիան» է թողել իր համար որպես կացարան, որը ոչ միայն որպես անուն պիտի ծառայեր նրան, այլ նաև լիներ գործունեության ուղեսլաք, անուն, որ նրան մշտապես պիտի հիշեցներ նախնիների երկրի կենտրոն Բերիան (Հալեպ): Բայց ինչո՞ւ միայն Բերիան: Մի՞թե կից թաքստոցների կենվորները՝ Բուխարին, Ջինովա, Ռադեկ, Տրոցկի, Կամենն... նույն բանը չէին անում՝ համագործակցելով Թուրքիայի իշխանական թևերի հետ: Իսկ այդ համագործակցու-

թյան կենտրոնում մահմեդական նոր պետությունների ձևավորումն էր Կովկասում, որը և պատճառ հանդիսացավ, որպեսզի ռուս-թուրքական պայմանագրի մեջ (1921թ. մարտ) հայկական Կարսն ու Երևանի նահանգ Սուրմալուն, Արևմտյան Հայաստանը մնան թուրքական տարածքում, հայկական Նախիջևանն ու Ղարաբաղը նվիրեցին Ադրբեջանին: Սկզբից տարածքներ էին ապահովում, որ հետո դրանց վրա ձևավորվեն Թուրանի մեջ մտնող նոր պետություններ: Այդ «հողաբաշխմանն» առանձին ջերմեռանդությամբ մասնակցեցին Ստալինը (Ջուղաշվիլի), Տրոցկին (Բրոնշտեյն), Կամենևը (Ֆայերման), Ջինովևը (Ապֆելբաում) և ուրիշներ (էջ 485-486):

Վ. Հակոբյանը պատմական փաստերի հիման վրա ներկայացնում է «Ադրբեջան Հանրապետության» ձևավորման կեղծիքն ու մոսուլմանամետությունը Լենինի և Ստալինի կողմից, հաստատում, որ ամեն ինչ ընթանում էր ի վնաս հայ ժողովրդի և նրա ավանդական տարածքների, որտեղ բնակչության մեծամասնությունը հայեր էին: Եվ դա թուրքական իշխանությունների ծրագիրն էր: Ինչպես գրում է վեպի հեղինակը՝ «Այս գործում դժվարություններ չէին առաջանում, որովհետև Թուրքիայի Սալոնիկ գավառից լրտեսական գործունեություն ծավալելու նպատակով Բաքու էր ուղարկվել երիտասարդ մի հրեա՝ Բագիրովը: Տուրքիաս էլիաշ Բոգումի որդին, որը հեղափոխական աշխատանքում շատ արագ առաջ ընթացավ՝ ընդհուպ մինչև անվտանգության մարմինների ղեկավարում, միանգամից (Ստալինի ու Բերիայի հովանավորությամբ) դարձավ Ադրբեջանի ղեկավարը» (էջ 489-490):

Ահա այսպես ներկայացվում է Ադրբեջան կոչված հանրապետությունը, որի ազգային խտրական քաղաքականությունն առաջին հերթին ուղղված էր հայերի դեմ:

Արտեմը հասու էր բոլոր իրադարձություններին: Ամբիոն Հախումն ու նմանները ստորաբար ծառայում են Ադրբեջանի իշխանավորներին և նրանց մարզային սատրապներին: Մնում էր նա-

խապատրաստվել ընթուտ պայքարի: Արտեմի արհեստանոցում անցկացվում էին հավաքներ, որ սկզբում ընկերական էին, հետո աստիճանաբար ձևավորվեց «Կանչ արդարության» կուսակցությունը՝ Արտեմ Գասպարյանի գլխավորությամբ, որի մեջ մտնում էր 21 հոգի Ղարաբաղի տարբեր շրջաններից ու ավաններից: Ըստ հեղինակի՝ «Ծրագիրը պարզ էր ու հստակ՝ Արցախն ազատել ազերական բռնապետության ճիրնաններից: Բայց ինչպե՞ս կարող էին ելնել խոհրդային մեծ տերության դեմ, մարդիկ կհասկանայի՞ն, արդյոք, իրենց: Վաթսունական թվականներին Ղարաբաղի մտավորականները նման մի քայլ ձեռնարկել էին գրող ու պատմաբան Բագրատ Ուլուբաբյանի գլխավորությամբ: Թեև հիմնական նպատակին չհասան, ավելին, քիչ չեղան հալածանքներն ու Ղարաբաղի գլխին պայթած նոր բռնությունները, սակայն մեծ էր նաև արծագանքն ազատատենչ ժողովրդի մեջ, ասել է թե՛ չերկնչել, չվախենալ անգամ պարտություններից, առաջ ընթանալ: Ինքնավար կոչված մարզում հայությանն արգելված էր ուսումնասիրել իր պատմությունը, թերթերն ու ռադիոն միայն ադրբեջանական լեզվով էին, մարդկանց, մանավանդ՝ իշխանական ուժերում աշխատող, արգելվել էր մայր Չայաստան գնալ» (էջ 498): Չեղինակը մատնացույց է անում նաև ազերի վայ-գիտնական Բունիաթովի կեղծ ուսմունքը՝ ազերիների ծագման մասին:

Արտեմը շարունակում էր հայրենանվեր իր աշխատանքը: Բուժվելու պատրվակով նա գնում է մայր Չայաստան, որ չէր կարող վրիպել անվտանգության ծառայությունների տեսադաշտից, մանավանդ որ, նրանք իրենց «կանալներով» զանգել էին Բաքու, ապա՝ Երևան և պարզել, որ բժիշկ Արտեմը կասկածելի մի խմբի հետ մեկնել է Մոսկվա:

Վեպի՝ ուշադրության արժանի պատկերներից է Արտեմի Մոսկվա գնալը, գաղափարական իր ուսուցչի՝ Նժդեհի մասունքները որոնելը, գտնելը, տեղափոխելը և Նժդեհի սիրած լեռան՝

Խուստուփի բարձր լանջին հողին հանձնելը:

Գործում էր ՊԱԿ-ը, որ մարդկանց հաճախ մղում էր անմարդկային արարքների: Արտենն իր նամակներով ուղղված Մոսկվային ու Բաքվին, անհանգստացած էր Արցախի ճակատագրի համար: Ուստի Բաքուն ձգտում է Արտենից ազատվել՝ նրան «վաստակած թոշակի» ուղարկելով: Սակայն Արտենը շարունակում էր ծառայել ժողովրդին: Նրա դեմ փոխվում են պայքարի ձևերը: Նույնիսկ նախապատրաստվում է սպանություն Արտենի դեմ: Այն ծրագրվել էր Բաքվում, հանրապետության ղեկավարի կողմից: Հանցագործներին չի հաջողվում կյանքից զրկել Արտենին, սակայն վիրավորում են և՛ Արտենին, և՛ կնոջը՝ Սրբուհուն, որոնց տեղափոխում են հիվանդանոց: Սակայն Բաքուն որոշել էր հաշվեհարդար տեսնել Արտենի հետ: Այդ մասին նրան հայտնել էր Բաքվից ժամանած հայտնի բժիշկ Էրթան Թոփչիբաշևը, որ Արտենի պատանության տարիների ընկերն էր՝ արհեստագործական դպրոցում սովորելիս:

Արտենին և Սրբուհուն տեղափոխում են Երևան՝ հանրապետական հիվանդանոց: Կատարվում է երկրորդ վիրահատությունը: Մեկ ամիս հետո Արտենն արդեն լիովին կազուրվել էր: Մեկ ամիս անց Արտենն ու Սրբուհին վերադառնում են Տրակերտ:

Եռում էր Արցախը, հասունանում էր 1988-ը:

«Ձատիկը ջրավազանի հատակին» վեպի վերջին՝ չորրորդ մասը ռեալիստական պատում է Արցախյան ազգային-ազատագրական շարժման, Ադրբեջանի կառավարող շրջանների կողմից կազմակերպված սոււմգայիթյան ջարդերի, Արցախին պարտադրված պատերազմի, ազերիների դրսևորած գազանությունների, հայ ազատամարտիկների հերոսական մաքառումների մասին: Մտացածին ոչինչ չկա գրքում, դեպքերն ու իրադարձությունները ներկայացվում են այնպես, ինչպես տեղի են ունե-

ցել 1988-ի փետրվարից մինչև 1994-ի մայիսը: Վեպի դրական և բացասական կերպարներից շատերն ունեն իրենց նախատիպերը, որոշ կերպարներ, որ ստեղծել է հեղինակը, ամբողջությամբ համապատասխանում են ժամանակաշրջանի ոգուն:

Վեպի գլխավոր սյուժեի առանցքում դարձյալ Արտեմն է՝ իր ընտանիքով, մարտական ընկերներով ու զինակիցներով:

Անհանգիստ ու տառապալից օրերի միջով Արտեմնը հասնում է 1988-ի տարեմուտին: Իմաստնացած ժողովրդի կենսափորձով՝ նա մարզարեաբար սպասում էր անակնկալների՝ քաղաքական առումով: Նա քաջ գիտեր ազերի թուրքերին, և պատահական չէր նրա անմնացորդ սերը սրի հանդեպ: Եվ կատարվում են նրա կռահումները: Նրան է հասնում Սուևգայիթում հայերի դեմ կազմակերպված ցեղասպանության բոթը: Խանգարվում է Արտեմի և Սրբուհու մինչև այդ էլ փոթորկված հանգիստը: Նրանց առանձնապես ցավ է պատճառում սուևգայիթյան եղեռնի զոհը դարձած Արգամի ընտանիքի ողբերգությունը: Արգամի ապրած ահավոր վիշտն ու ցավը 1915-ի Հայոց մեծ եղեռնի ժամանակ Օսմանյան Թուրքիայում տառապած հայության ճակատագրի շարունակությունն է: Արգամի ջանքերով վեր հառնած Սուրգաթ (Սուևգայիթ) քաղաքում ազերի-թուրքերը դիմել են հայերին ոչնչացնելու սահմնկեցուցիչ միջոցների: Մինչև ատամները զինված ազերի հրոսակները ներխուժել են Արգամի բնակարանը, բռնաբարել կնոջը՝ Հեղուշին, իսկ որդուն՝ փոքրիկ Արմենին, օրորոցից հանել ու ողջակիզել գազասալիկի վրա: Մահամերձ վիճակում թողնելով Արգամին (կարծել էին, թե մեռած է)՝ թուրք ավազակները հեռանում են: Որոշ ժամանակ անց դիակներ հավաքող մեքենայով Արգամին ևս տանում են ծովափ՝ սպանվածների հետ հողածածկ անելու համար: Ուշքի գալուց հետո նրան փրկում է մի աղքատ թալիշ՝ Մեթի անունով: Իրեն ձևացնելով թալիշ՝ Արգամը պատահական ավտոմեքենայով հասնում է օդանավակայան: Այդ օրերին մազապուրծ հայերին տեղափոխում էին Մոսկվա: Արգամն այս-

տեղ երկու ամիս հիվանդանոցում կազդուրվում է ու այնտեղից զնուն Տրակերտ, ուր ապրում էր ծեր ու միայնակ հորաքույրը:

Գրողը նկարագրում է փետրվարյան թեժ օրերն Արցախում: Մարգխորհրդի հայտնի նիստը՝ փետրվարի 20-ին, արցախցիցների համար պատմական ակնկալիքների իրադարձություն է: Նիստին մասնակցում է նաև Արտեմը, այնտեղից դուրս վճռվելով Ադրբեջանի ղեկավարությանը՝ նա բարձրաձայնում է՝ «Կամ լռեք ու նստեք, կամ հենց հիմա հեռացե՛ք դահլիճից, ժողովուրդն իր որոշումից ետ չի կանգնելու» (էջ 525):

Վ. Հակոբյանը ներկայացնում է այն փաստը, որ Խորհրդային Միությունում «վերակառուցում» իրականացնողներն անտեսեցին ճշմարտությունն ու արդարությունը, ավելին՝ անհետևողական ու անվճռական քայլերով հասցրին նրան, որ 20-րդ դարասկզբի հայկական ջարդերը, որոնց զոհերից մեկն էլ Արտեմի հայրական ընտանիքն է, կրկնվեցին դարավերջին: Իսկ հզոր երկրի ղեկավարը փորձեց արդարանալ. «Դեհ, մենք ինչ անենք, ընդամենը երեք ժամ ենք ուշացել»: Ինչպես նշում է գրողը, դա մի պատրվակ էր, որ «շատ պատշաճում էր էնվեր կամ Թալեաթ փաշաներին... Տրակերտի կենտրոնական հրապարակում հնչող կանչերը՝ «Լենին, պարտիա, Գորբաչով», «Միացում», «Արդարություն» և այլն, զուր դուրս եկան ու ավելորդ» (էջ 525):

Սումգայիթյան ողբերգությունը հոգու մեջ անանցանելի ցավ դարձած Արզամի ճակատագիրը թարմացրել էր Արտեմի չսպիացող վերքերը: Նա հաճախ էր սիրտ տալիս Արզամին. «Իմ և քո ճակատագիրը գրեթե նույնն են... Թուրքերը կոտորել, ոչնչացրել են և իմ հայրական ընտանիքը... Ինձ ևս դիակների արանքից են գտել ու հրաշքով փրկել... Ինչ արած, Արզամ, պիտի հավատաս ինքդ քեզ ու շարունակես ապրել՝ պայքարելով» (էջ 525):

Այդ անհանգիստ օրերին Արտեմը կամ հիվանդանոցում էր գիշերում՝ ազերիների կողմից վիրավորված հայ մարդկանց բուժելու համար, կամ Երևան էր այցելում քաղաքական նպատակ-

ներով: Յենց այդ օրերին էր, որ լինելով Երևանում, Արտեմը զանգում է Սրբուհուն, որ Սառան գալիս է Տրակերտ: Նա մեքենաներով, դագաղների մեջ (իբրև մահացածների) զենք է տեղափոխում Տրակերտ: «Պատերազմը յոթ սարի ետևում չէ, մենք պիտի պատրաստ լինենք», - խորհում էր Արտեմը:

Ինչպես գրում է հեղինակը, Սրբուհին ամեն ինչի մասին իմացավ հաջորդ օրը, Արտեմից: Սառան համարձակվել էր «թատրոն խաղալ» իշխանությունների, անվտանգության գործակալների ու օդանավակայանի չինովնիկների համար, նրանց «օրինական փաստաթղթերով» ֆռռացրել է, ոնց որ ասում են, «վթարի ենթարկված հարազատների» երկու դագաղներում հարյուր անուն զենք ու զինամթերք տեղափոխել Ղարաբաղ: Յետո այդ առաքելության կատարմանը պարբերաբար մասնակցում էր Ռոմանը, որը հաճախ էր «հումանիտար օգնություն» բերելով՝ հայտնվում Տրակերտում: Նույնիսկ ժամանակ գտան Արտեմն ու Ռոմանը տարիներ առաջ տված խոստումը կատարելու՝ իրենց անուսնություններն օծելով Գանձասարի սուրբ վանքում: «Բոլոր հինգ աշխարհամասերը հայերին կապող ներքին թելերով միանում են իրար». ահա այն միտքը, որ Ռոմանին ճանփելուց հետո իր օրագրում գրառեց Արտեմը:

Վեպին մի առանձին հմայք են հաղորդում նկարագրվող անակնկալները, որոնք միտված են ընդգծելու, որ Արցախյան ազգային-ազատագրական գոյամարտը համախմբել է բոլոր հայերին, որ Արցախն այդ ճակատագրական տարիներին դարձել է միաբանության միջուկ: Դրա վկայություններից է Սառայի և Ռոմանի որդու՝ Արոնի այցելությունը Տրակերտ: Նա օգնում էր գաղտնի զենք տեղափոխելուն: Արոնի հետ Տրակերտ էր ժամանել նաև ռուս ընկերը՝ Դմիտրին, որին ընդունում են հարազատի զգացումներով:

Արոնը գլխավորում է այն տղաների փոքրիկ խումբը, ովքեր «Ուրալ»-ի բեռն իրիկնադեմին թափել ու տեղադրել էին Արտեմի տան նկուղներում: Խորհրդային բանակում երկուսն էլ բավակա-

նին լավ էին տիրապետել հետախույզի մասնագիտությանը, ընկերը՝ Դմիտրին, միաժամանակ վարպետ դիպուկահար է:

Վ. Հակոբյանը ուշադրության կենտրոնում է պահել Արցախյան գոյամարտի պատճառներն ու արցախցիների բարոյահոգեբանական մթնոլորտի նկարագրությունը: Արոնն ու Դմիտրին Արտեմի հետ զրույցում հետաքրքրությամբ լսում էին Արտեմին: «Արցախցիները,- ասում է Արտեմը,- պատմության ընթացքում ոչ մի անգամ թշնամիներից պարտություն չեն կրել, ինչո՞ւ, ո՞րն է դրա պատճառը՝ կհարցնեք... Մենք ոչ մի ժամանակ նվաճողական քաղաքականություն չենք վարել... Մենք երբ էլ պատերազմի մեջ ենք ներքաշվել, միայն ու միայն մեր երկիրը պաշտպանելու համար» (էջ 533):

Արոնն ընդհատելով Արտեմին՝ հայտնում է իր կարծիքը. «Գուցե հենց սխալն էլ դա է... քոնը պաշտպանելու համար ժամանակակից աշխարհում պիտի մի քիչ էլ ագրեսոր լինել...» (էջ 533):

Դմիտրին շարունակում է լսել Արտեմին՝ կարևորելով նրա մտորումներն ու կարծիքը: Հայաթափված Նախիջևանը՝ հայոց գողթան երգերի երկիրը,- հանգիստ պատմում է Արտեմը,- մեր աչքի առաջ է... Իհարկե, ես այն կարծիքին չեմ, թե ազերիները կմարսեն այն... Ժամանակն իր ծալքերում անվերծանելի շատ ծալքեր ու գաղտնիքներ ունի: Օսմանյան կայսրության «Մեծ Թուրան» ստեղծելու ծրագիրը տարիների ընթացքում ներծծվել է թուրքական տարրի արյան մեջ, իսկ դոմինանտը, որ շարժման մեջ է դնում այդ խնդիրը, իշխանության համար ծավալված մշտական պայքարն է, որի առանցքում կուսակցություններն են. «Մեր ժողովուրդն ուզում է լինել ազատ, ուզում է լինել անկախ, ինքն իր գլխի տերը՝ իր պատմական հողի վրա» (էջ 534):

Արտեմը խիստ քննադատում է Ադրբեջանի իշխանությունների ագրեսիվ քաղաքականությունը, որ բռնել է Արցախի օձիքից և ձգտում է հայաթափել ու տիրանալ հայոց սուրբ հողին:

Արցախն այն երկրամասն է, «որն իր գոյության ընթացքում,

բնականաբար, երբեք չի եղել ու չէր կարող լինել Ադրբեջանի հանրապետության մաս, նաև այն պարզ պատճառով, որ Ադրբեջանը՝ որպես ինքնուրույն պետություն, կազմավորվել է ընդամենը լենին-ստալինյան մի հրամանով՝ 1918 թվականին... Ինչ է ստացվում՝ խորհրդային երկրի փլուզումն արդյո՞ք չի վերաբերում Լեննային Ղարաբաղին: Այդ էլ, գիտեք, այն դեպքում, երբ «մեծ տերության» հիմքերի սասանման առաջին հարվածների հեղինակը հենց Լեննային Ղարաբաղն է» (էջ 534):

Արտեմը վկայակոչում է արցախցիների՝ 1991-ի դեկտեմբերի 10-ին հանրաքվեի անցկացումը, ինքնորոշման իր իրավունքին տեր կանգնելը և այդ օրինականության դեմ ադրբեջանցիների կոչերը պատերազմ սանձազերծելու համար: Այդպես էլ վարվեցին ազերիները: Արցախցիների խաղաղ ցույցերին ադրբեջանցիները պատասխանեցին ջարդերով, ապա՝ Բաքվի ու Քանձայի հայերի զանգվածային կոտորածներով:

Վեպում նկարագրվում են նաև ադրբեջանական օմօնականների վայրագությունները հայկական բնակավայրերում, Տրակերտի միակ օդանավակայանի շրջափակումը, Արցախը հայաթափ անելու բոլոր փորձերը:

Վ. Հակոբյանը վեպն ստեղծելիս դիմել է կոմպոզիցիոն տարբեր ձևերի: Դրանցից մեկը նամականին է: Այս առումով բնութագրական է Մոսկվայից Սառայի ուղարկած նամակը Սրբուհուն, որ կարևոր ենք համարում բերել ամբողջությամբ: Նամակը բերել է Արոնը. «Արտեմ, Սրբուհի,- գրում է Սառան,- ընդունեք իմ, Ռոմանի, բոլորիս ջերմ բարևները: Ոնց եք, ոնց չեք, շատ ծանր լուրեր ենք լսում Արցախից, քուն ու դադար չունեն, անվերջ ձեր մասին են մտածում: Ասում են՝ կռիվը հայի և թուրքի միջև անխուսափելի է (իբրև թե՛ երբ է խուսափելի եղել): Արոնը կանգնեց ու պնդեց, թե գնում են Ղարաբաղ՝ կռվելու... Դմիտրին էլ միացավ նրան, բանակում միասին են ծառայել: Դմիտրին ծնողների միմուճար որդին է, լավ նայեք, հոգի տղա է: Ճիշտն ասած, սկզբում չէինք

ուզում թողնել, որ տղաները գան, բայց... հոգիս ինչ ծռեն, մտածեցի, որ ախր դուք այդտեղ եք, ախր մեր թանկ մեռելներն էլ այդտեղ են, մեր շունչն ու հոգին էլ այդտեղ է... Որ մտածում եմ՝ սիրտս լցվում է, ուզում եմ պայթել... Արտեմը, Երևի, կարդալով այս տողերը, ինձ դիտողություն կանի, թե՝ «չեմ ասե՞լ՝ պինդ կաց», բայց ի՞նչ անեն, ծերացել են, էլ առաջվանը չեն, չեն կարողանում... Ո՞նց են Սուրենը, Սերոբը... Ամերիկացի դարձած մեր աղջկանից ի՞նչ լուրեր կան... Ժորայից վաղուց նամակ չեմ ստանում: Արտեմ ջան, ջահելներին աչքիդ առաջ պահիր, գիտեն, որ կռվում չամիչ չեն բաժանում, բայց ինչ արած, դու կյանք տեսած մարդ ես, ամեն ինչ ինձանից լավ գիտես: Մեր կյանքն էլ այսպիսին եղավ... Համբուրում եմ բոլորիդ, ամուր եղեք, մենք ձեզ հետ ենք: Սրբուհի ջան, երբ բակ իջնես, խնդրում եմ իմ անունից մեկ-մեկ համբուրիր մեր հոր տնկած ծառերը, այգու հողը... Մնամ ձեր՝ Սառա» (էջ 537):

Այս նամակն անձնական և անանձնական ապրումների իրական մի պատկեր է, որ կրկին հաստատում է աշխարհասփյուռ հայ ժողովրդի անհուն սերը հող հայրենիի հանդեպ, նրա միասնության գաղափարը և Արցախը պատմական Հայաստանի անբաժանելի մի մասը համարելու և նրա նորօրյա պայքարին մասնակցելու արդարացի վճիռը:

Պատերազմն անխուսափելի էր: Եվ դա զգում էին և՛ Արցախում, և՛ Սփյուռքում: Այդ օրերին են հենց Սուրենը, Արոնը և մյուս ընկերները Արտեմի խորհրդով անդամագրվում Արցախի ինքնապաշտպանության տարբեր ջոկատներում: Իսկ մյուս կողմում ազերական զինյալ խմբերը դառնում էին ավելի լկտի ու սանձարձակ: Մարդագողությունը, սպանությունն ու դիակապտությունը նրանց համար դարձել էին սովորական երևույթներ: Ինչպես հաստատում է գրողը, «Արցախահայությունը Մոսկվա ուղարկած իր պատվիրակություններով, նամակներով, դիմումներով ամեն ինչ անում էր՝ պատերազմից խուսափելու համար,

բայց բոլոր ջանքերն անարդյունք էին ու անպտուղ: Եվ նորից կենտրոնական հրապարակում ժողովուրդն սկսում է ունկնդրել պոետի պատգամը. «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» (էջ 538):

Եվ ահա, 1991-ին խորհրդային բռնապետության վերջին ջղաձգումներից մեկը դառնում է «Աքցան» («Կոլցո») ռազմագործողությունը, որը վարում էր գեներալ Գրոմովը: «Աքցանը» իրականացավ Ադրբեջանի միլիցիայի և ԽՍՀՄ ՆԳՆ «միասնական ջանքերով»: Բայց Արցախն աննկուն էր: Գետաշենում, որին վեպում տրվում է Գետառ անունը, հայ տղաներն աչքի էին ընկել իրենց խիզախությամբ ու անձնուրաց պայքարով: Այստեղ հեղինակի իդեալական հերոսն է՝ Մարութը, որի նախատիպը բանաստեղծ Թաթուլն է, ցատկել էր խորհրդային տանկի վրա, նռնակներով պայթեցրել այն: Նրա մասին հետո երգեր հորինվեցին, ասքեր ստեղծվեցին: Նա եղավ Արցախի սուրբ պայքարի առաջին զոհն ու հերոսը:

Ադրբեջանը ԽՍՀՄ զորքերի օգնությամբ հայաթափ արեց պատմական Գետառը: Լուծարվեց նաև Ղարաբաղի ինքնավարությունը՝ մարզը մասնատելով ու ազերական այս կամ այն շրջանին միացնելով:

Պատերազմն արդեն սկսվել էր՝ նախ «Ալազան» տեսակի հրթիռակայանքով, ապա՝ քառասուն փողանի ռեակտիվ գրադի արկերով:

Իսկ այդ թշնամական կրակների տակ, 1991-ի սեպտեմբերի 2-ին արցախահայությունը քվեարկել էր իր անկախության օգտին՝ պատրաստ պաշտպանելու իր օրինական իրավունքներն ու պապենական օջախները:

Ամեն օր հայոց հիմնավորց բերդաքաղաք Շուշիից ազերիները հետակոծության էին ենթարկում ոչ միայն Տրակերիտը, այլ նաև շրջակա հայկական գյուղերը:

Մարտը դաժան էր ու վճռական: Գրողը գեղարվեստական

խոսքի հմտությամբ ներկայացնում է արցախցիների հերոսական մարտը: Նրանք թշնամուց խլում էին զինտեխնիկան և ուղղում նրա դեմ: Շուտով հազարավոր կամավորականներ ընդգրկվեցին Արցախի ինքնապաշտպանական ջոկատներում, իսկ դա նշանակում էր, որ Արցախի կանոնավոր բանակի ստեղծման հիմքն արդեն դրվել էր:

Չերոսական արարքներով հրաշքներ էին գործում Սուրենը, Արոնը, Արգամը: Կրակ էր կտրել Դմիտրին, որ կատարում էր մարտական հանձնարարություն:

Ականատեսի իրապատում խոսքով հեղինակը նկարագրում է Տրակերտից 2-3 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Ուլունքաքար բնակավայրի գրավման գործողությունները: Ուլունքաքարը, որ դարեր առաջ եղել է հայկական բնակավայր, 1920-ից դարձել էր ազերի-թուրքերի ավազակաբույն, իսկ 1988-ից հետո Ադրբեջանի ղեկավարությունն այնտեղ էր տեղափոխել թուրքմսխեթցիներին:

Իրադարձությունները զարգանում էին սրընթաց. փետրվարի վերջին Արցախի ինքնապաշտպանական ուժերը դիրքավորվեցին Ուլունքաքարի շուրջ՝ օդանավակայանի, Նորավանի և Մայրաբերդի կողմերից, Կարկառի ամբողջ հովիտն ի վար՝ մինչև Աղսու՝ մարդասիրական միջանցք թողնելով Ուլունքաքարում բնակեցված թուրքերի համար:

Մարտադաշտում ազերիների ծուղակն են ընկնում Արոնն ու Դմիտրին: Վեպուն ռեալիստորեն նկարագրված են ազերիների վայրագությունները հայ գերիների հանդեպ: Սակայն այլ էր Դմիտրիի գերության հետ կապված քաղաքական նշանակությունն ազերիների մոտ: Ինչպես գրում է հեղինակը, «Ռուս զինյալի գերելն ազերիների համար Ռուսաստանի վրա նոր մեղքեր բարդելու, կռվում իրենց անձարակությունը «ռուսական ներկայությամբ» բացատրելու և դա հայերի դեմ ներկայացնելու ոգևորություն պարզակեց: Միշտ այդպես է լինում, ուր մեծ տոկոս

են կազմում վարձկանները (ինչպես, ասենք, ազերական ռազմական ուժերում, նկատի չունենք միայն մոջահեդներին), որպես կանոն, փորձում է իր «մեղքի մեջ հակառակորդին մեղադրել» և պարտվում է: Սա պատմության դասերից է, որ ենթակա չէ վիճարկության» (էջ 547-548):

Առեղծվածային է Դմիտրիի գործունեությունը: Դրա փակագծերը բացում է հեղինակը՝ հենվելով պատմական փաստերին: «Դմիտրիի գործն ինչ-որ չափով կարծես դյուրինացավ, երբ նա ցուցադրեց ադրբեջանական կողմի օգտին «հատուկ ծառայություններ կատարելու մասին» իր փաստաթուղթը (էջ 548): Դմիտրին, սակայն, ծառայում էր Արցախին: Նրան հաջողվում է փախչել բանտից, հասնել ազերիների գերեզմանոց: Նա խորհում էր Արոնի մասին, Դմիտրին գերեզմանատանը ականատես եղավ մի նոր վայրագության՝ թե ինչպես էին ազերի զինյալները հայ գերիներին մատաղ անում իրենց զոհյալների շիրմաքարերին: Դմիտրին թաքստոցից սարսուռ է ապրում՝ տեսնելով, թե ազերիներն ինչպես են ձգտում զոհել նաև Արոնին:

Դմիտրին գերեզմանատան իր թաքստոցից նկատում է, թե ինչպես է ազերի զինվորականը չոքում մի ազերու թարմ շիրմի մոտ, համբուրում շիրմաքարը և ռուսերեն դիմում շղթայակապ հայ գերուն. «Ես, այնուամենայնիվ, մարդ եմ, վերջին ցանկություննդ ասելու հնարավորություն եմ տալիս՝ իմ փոքր եղբոր համար քեզ մատաղ անելուց առաջ...

- Մի բան կասեմ, աշխարհում խաղաղություն լինի, ոչ մեկը չզոհվի...» (էջ 551):

Դմիտրին ճանաչեց՝ Արոնի ձայնն է: Նա նկատեց, որ մեկ օրվա ընթացքում շատ է փոխվել Արոնը, նրան ծեծել են, ջարդել, արյունլվա արել:

Դմիտրին փորձեց ցատկել տեղից, հարձակվել ազերիների վրա, փրկել Արոնին, բայց և անմիջապես հայացքով բռնեց գերեզմանատան դարպասի մոտ սպասող նրա ընկերներին: Ազե-

րիների սովորությունն է՝ ընկերոջը մենակ են թողնում հարազատի շիրմին մատաղ մատուցելու ժամանակ, որ նա «Ալլահի հետ խոսի մենակ, դեմ-դիմաց...»:

Դմիտրին, որ ցանկանում էր վեր կենալ տեղից և օգնել՝ փրկելու ընկերոջը, նկատեց, թե ինչպես Արոնը, մեջքը հենելով բարձր կանգնած գերեզմանաքարին, տեղում ցատկեց ու շղթայակապ ոտքերով այնպես խփեց ազերի զինվորի դեմքին, որ կիսահարբած ազերին բռնեց արյունլվա երեսն ու տեղը նստեց: Դմիտրին նույն պահին մոտ վազեց, ռոք քարի հարվածն իջեցրեց ազերու գլխին ու սպանեց: Հեռվում կանգնած ազերիները դեռ կատարվածից բան չէին հասկացել: Դմիտրին ազերի զինվորի գրպանից հանեց Արոնին հագցված ամրակների ու ոտնաշղթաների բանալիները, մի քանի վայրկյանում ազատ արձակեց նրան, ազերի զինյալի գնդացիին ու սուրը վերցրեց և շտապ Արոնի հետ պատսպարվեց՝ դիրք բռնելով քարե թաքստոցում:

Մինչև ազերի զինվորները կմոտենային շիրմաքարին, Դմիտրին և Արոնը արդեն մեկ կիլոմետրից ավել հեռացել էին Ոստանի Ներքին հանդերով դեպի Իջևանիկի կողմերը: Նրանց հաջողվում է տեսնել յուրայիմներին:

Արոնը տասն օր պառկեց կենտրոնական հիվանդանոցում, որտեղ Սրբուհի մորաքույրը նրան է հանձնում Սառա մայրիկի գրությունը՝ ուղղված եղբորը. «Արտեն ջան, Սրբուհի ջան, վատ երազ են տեսել Արոնից... Մի լուր ուղարկեք տեսնեմ՝ ոնց էք, ոնց չեք: Համբուրում են բոլորիդ» (էջ 553):

Հիվանդանոցում կազդուրվելուց հետո Արոնը կրկին վերադառնում է իրեն հարազատ դարձած առաջին վաշտը և շատ ուրախանում, երբ լսում է, որ նախապատրաստական աշխատանքներ են տանում Շուշիի ազատագրման համար:

Արցախցիները գնալով ավելի էին լցվում վրեժով: Նրանք գայրությամբ իմացան Մառանիկ գյուղում տեղի ունեցած վայրագության, ազերիների կողմից հայ բնակչության հանդեպ կատար-

ված ցեղասպանության մասին:

Թուրքերը, մտնելով Մառանիկ, մի քանի ժամվա ընթացքում ավերում, հրկիզում են ողջ գյուղը, սպանում հարյուրից ավելի մառանիկցիների, շատերն իրենց մահկանացուն կնքեցին փախուստի ճամփեքին, զգալի թվով մարդիկ գերի վերցվեցին:

Կենտրոնական հիվանդանոցում մահկանացուն կնքած ժողովրդի օրագրում գրված էր. «Տեսա նաև հազար անգամ մեր տանը նստած-վեր կացած ազերի թալըբին, ինձ թվաց, թե նա մեր տան կողմն է վազում՝ մերոնց օգնելու, փրկելու, բայց ինչպես նա գնդակահարեց իրեն ժպիտով ու վախով ընդառաջ վազող ծնողներիս, երեխաներիս, կնոջս» (էջ 556):

Օրագիրը, որ հիվանդանոցից բերել էր Արտեմը, ավելի ցնցում է Սրբուհուն: Նա օրագիրը կարդում է արցունքն աչքերին: Օրագրի կազմի վրա գրված պատգամ-խոսքն ավելի հուզեց Սրբուհուն, երբ կարդաց. «Ով հայ մարդ, լինի այսօր, վաղը թե ապագայում, թուրքին երբեք չհավատաս... Թուրքին հավատալ մի ասեղի չափով անգամ, դա նշանակում է դավաճանել հայրենիքին ու սեփական ժողովրդի ազատությանը» (էջ 556):

Սրբուհուն սփոփանքի խոսք է ասում Արտեմը: Կնոջ հարցին, թե՝ «Ի՞նչ կլինի մեր վերջը», նա պատասխանում է. «Մի՛ հուսահատվիր, Սրբուհի՛, ինչ կարդացիր, այն, ինչ գիտես, ինձ համար նորություն չէ... Հային արյամբ չի կարելի վախեցնել, նա վաղուց ամեն ինչ տեսել է, նա խիզախ է: Այս ամենը կրկնվեց, որովհետև մենք մոռացանք կամ ցույց տվինք, թե մոռացել ենք Հարարը: Մենք հաղթելու ենք... Այո՛, այո... Կտեսնես: Մենք հաղթելու ենք» (էջ 556):

Վ. Հակոբյանը, հարազատ իրական դեպքերին և պատերազմական ընթացքին, գրում է, որ յուրաքանչյուր հայ զինվոր երազում էր կռվել Շուշիի համար, որովհետև յուրաքանչյուր հայի համար արյան բաղադրիչներում կորսված բերդաքաղաքներ կային, որոնց վերադարձն ու վերակենդանացումը նա ուզում էր տեսնել Շուշիի մեջ: Եվ տեսավ:

Արտեմը ևս մասնակցեց Շուշիի ազատագրմանը՝ որպես բժիշկ, իսկ Սրբուհին օրհնեց բոլոր մարտիկների պայքարը: Նա, դիմելով Արտեմին, ասում է. «Ես էլ հին բուժքույր եմ, ինչ կլինի, որ ինձ էլ տանեք ձեզ հետ... Մեր տղաներն այնտեղ են, հարևան Արզամն այնտեղ է, դու գնում ես, Արտեմ ջան, ես ո՞նց մնամ այստեղ... Ինձ էլ տար, խնդրում եմ, կօգնեն» (էջ 557):

Արտեմի վերաբերմունքը սրին՝ խորհրդանշում է սեփական ուժին ապավինելու, պայքարով ազատությունը նվաճելու սրբազան գաղափարը: Այս պատգամի պատկերը հաջողությամբ է ստեղծված վեպում: Արտեմը բոլոր այն զինվորներին, ովքեր «իր ձեռքով» անցել են, նվիրում է իր իսկ պատրաստած փոքրիկ թրերից՝ որպես հաղթանակի հույս: Նա միշտ կրկնում է. «Հայ մարդն, անկախ սեռից, տարիքից, մասնագիտությունից, պիտի զենքի բոլոր տեսակներին տիրապետի ու ծննդյան օրվանից զինված լինի: Մենք դրան դատապարտված ենք ճակատագրով, գուցե դեռ՝ երկար ժամանակ» (էջ 557):

Թշնամին կատաղել էր, ամեն օր Շուշիից հրթիռակոծում էին Տրակերտը: Արցախցիները պետք է պատասխանեին՝ ինչպես հարկն է: Եվ գալիս է պահը: Վ. Հակոբյանը գեղարվեստական տարբեր հնարանքներով ցույց է տալիս Շուշիի ազատագրման նախապատրաստությունն ու կոնկրետ գործողությունները: Հայտնի զորապետ Կոմանդոսը տղաների հետ դրանից շատ առաջ արդեն մշակել էր Շուշիի կրակակետերը լռեցնելու և բերդաքաղաքն ազատագրելու՝ «Հարսանիք լեռներում» ռազմական գործողության բոլոր պլաններն ու նախագծերը, իսկ ինքնապաշտպանության բանակի տղաները սրտատրոփ սպասում էին Կոմանդոսի հրամանին, որ անմիջապես անցնեն ռազմագործողությունների: Եվ 1992-ի մայիսի 8-ի իրիկնադեմին հնչում է հրամանը:

Շուշիի համար կռվողների շարքում էին նաև Սուրենն ու Արզամը: Արոնն ու Դմիտրին ընդգրկված էին առաջին վաշտում: Շուշին ազատագրվելուց անմիջապես հետո Սրբուհին ևս Ղա-

զանչեցոց սուրբ վանքուն մի մոմ վառեց ու խոսեց Տիրոջ հետ. «Տե՛ր Աստված, փառքդ շատ, Շուշին ազատագրվեց... Տե՛ր Աստված, բոլոր զոհերի հոգուն հանգստություն... Տե՛ր Աստված, գորավիզ եղիր մեր ջահելների բազկին ու շառ ու փորձանքից հեռու պահիր, Տե՛ր Աստված, թող խաղաղություն լինի... Տե՛ր Աստված, թուրքին խելք տուր՝ ուրիշի պատառին, հող ու ջրին աչք չծգի» (էջ 559): Նա մայրաբար, սրտի ցավով հնչեցնում է Սուրենի, Արոնի, Դմիտրիի, Արգամի, Մեսրոպի, Արարատի անունները՝ խնդրելով Աստծուն, որ պահպանի հայոց մի բուռ աշխարհը:

Հավատարիմ պատերազմական գործողությունների ճշմարտացի պատկերմանը՝ հեղինակը նշում է, որ Սուրենը զոհվում է բերդաքաղաքի կենտրոնում: Ծնողները հայավարի տանում են որդու կորստյան անանցանելի ցավը: Նրանց համար մեծ սփոփանք էր Շուշի-Հայաստան ճանապարհի բացումը մեր զինվորների կողմից:

Բերդաքաղաքն ազատագրելուց հետո, երբ արցախյան առաջին վաշտը մեկնեց Բերդաձորի շրջան, նրան միացան Արոնն ու Դմիտրին: Դմիտրին զոհվեց Հասունիկ գյուղի մոտ ծավալված մարտերում, իսկ Արոնի ճակատագիրը մնաց անհայտ. ոչ գերիների ցուցակում կար անունը, ոչ՝ զոհվածների: Արտեմը դժվարանում էր բոթը հայտնել Սրբուհուն: Սրբուհին բոթը լսելուց հետո անկողին էր ընկնում:

Բժիշկ-ազատամարտիկ Արտեմ Գասպարյանը հայ մարդու բնավորության լավագույն գծերի խտացումն է: Մասնակցելով Հայրենական մեծ պատերազմին՝ նա հասել է Բեռլին, փրկել նաև գերմանացի հիվանդներին: Վեպում համոզիչ երանգներով է ներկայացված գերմանացի մոր՝ Նեմայի հետ տեղի ունեցած միջադեպը: Բեռլինի հիվանդանոցում Արտեմը նրան փրկել էր ոչ միայն որպես բժիշկ, այլև իր սեփական արյունն էր տվել նրան: Տարիներ անց Նեման նամակ է հղում Արտեմին և իր երախտագիտությունը փոխանցում նրան: Համոզիչ մի պատկեր է նաև Լեզգի Վագիֆի գերվելը և նրա հանդիպումն ու խնդրանքն Արտե-

մին՝ որոնելու և գտնելու իր երկրորդ որդուն, գուցե գերվել է և գտնվում է Ղարաբաղում: Վազիֆն Արտեմի դասընկերն էր Բաքվի արհեստագործական դպրոցում:

Պատերազմի ահավորության մասին է վկայում Արտեմի երկրորդ որդու՝ Սերոբի զոհվելը և Ցեխ ձորում Արտեմի գերվելը ազերիների կողմից: Հեղինակը պատկերում է այն կտտանքներն ու տանջանքները, որ կրել է Արտեմը Բաքվի բանտում: Նրան գերությունից ազատում են «Կարմիր խաչի» ներկայացուցիչները: Ռոմանը հասցրել էր հայտնել աշխարհին բժիշկ Արտեմ Գասպարյանի գերվելու մասին:

Արտեմին փոխանակում են տասն ադրբեջանցի գերիների հետ, որոնց մեջ էր նաև Վազիֆը: Վերջինս մի կերպ հաղորդում է Արտեմին, որ զոհվել է և իր երկրորդ որդին, որ երկուսով էլ սգակիրներ են, որովհետև իրենք կորցրել են իրենց երկուսական զավակներին:

Բանաստեղծ Վ. Հակոբյանի արձակը համեմված է պոետական պատկերների խոհափիլիսոփայական երանգներով: Եվ դա հասկանալի ու բնական է, քանզի նա միշտ ընթացել է արվեստի անձանոթ ճամփաներով և միաժամանակ եղել է պոեզիայի դիպուկահար որսորդ: Որոնել է ու գտել, գտել է ու որոնել և նորից փնջել այն իրական երազանքները, որոնց հետևից վազել է ծարավով: Այդ են վկայում վեպի վերջին էջերը, որոնցում հեղինակը դիմել է կոմպոզիցիոն շրջանակների և ստեղծել կյանքի փիլիսոփայության ինքնատիպ ասքեր: Արտեմի և Սրբուհու հիշողությունները՝ կապված իրենց մեղրամիսի, հայրենի Շըռշռան անտառի և բնական բարիքներից օգտվելու, միրհավի և սիրամարգի խորհրդանիշ-իմաստությունների հետ, առանձին վերցրած մի հոյակապ պատկեր է: Այն ներկայացնում է երազ-կյանքի ակնթարթային ընթացքի աստվածային և քաղցրությունը, և դառնությունը: Ինչպես հեղինակն է հաստատում Դանթեի անունից՝ «Ամենատխուր պահին ամենաուրախ օրերը հիշելուց դաժան բան չկա» (էջ 602): Հեղինակը միաժամանակ խորհում է. «Որքան էլ մեզ առանձնաց-

նենք իրականությունից, այն բացատրվում է մեր գործողություններով, մեր գոյությամբ, աշխարհն այնպիսին է, ինչպիսին մենք ենք: Գոնե մեր իմացության սահմաններում» (էջ 602):

Վ. Հակոբյանն ասես իր հոգու խորքում զգում և լսում է Մեծն Գրիգոր Նարեկացու խոսքն առ Աստված ու շարունակում նրան որպես ժառանգորդ: Նա իր հերոսի՝ Արտեմի միջոցով եզրակացնում է. «Մարդն Աստծո պատկերն է կրում, ուրեմն, Աստված արարչագործելիս՝ անկախ նրանից՝ երկինք-երկիր էր ստեղծում, թե մարդուն, «բնորդել է» ինքն իրեն, այլապես ո՞նց կարող էր ստեղծել այս կատարյալ ու անկատար աշխարհը՝ թերին լրելու պատիվը թողնելով մարդուն» (էջ 602): Բայց ավաղ, այդպես չէ: Մարդն իրեն արարող աստծուց հեռանում է օր-օրի, ոչ միայն կատարելության է տանում Տիրոջ կողմից շնորհվածը, այլև ավերում, աղավաղում, օտարում է այն իրենից: Եվ հազվադեպ է լինում, երբ մարդն իր մահկանացուն կնքում է բնական ձևով: Բոլոր մարդիկ սպանվում են. մեկը՝ նետով, մեկը՝ կաթվածահարության հասնելով, մեկը... Անթիվ են սպանվելու ձևերը, որոնք փութաջանորեն, ամեն վայրկյան, ամեն օր կատարելագործում է մարդը: Բայց ահա, ապրելու, կյանքը տևական դարձնելու համար ոչինչ չի արվում կամ գրեթե ոչինչ չի արվում: Տիեզերական բոլոր հայտնագործությունների առանցքում մինչև այսօր մարդկության ոչնչացումն է, թեև յուրաքանչյուր գիտական նորույթ ձգտում ենք հիմնավորել հումանիզմով: Ե՞րբ տեղի ունեցավ մարդու առաջին շեղումը Աստծո ծիրից: Ո՞վ գիտե: Երևի այն ժամանակ, երբ մարդիկ սկսեցին չվստահել իրար:

Հումանիստ գրողը ժխտում է անարդարացի պատերազմը, հաստատում ժողովուրդների անկախ և ազատ ապրելու իրավունքն ու համերաշխությունը:

Սրտառուչ, փիլիսոփայական պատում է բժիշկ Արտեմի և պարսիկ ծերունու՝ Օշկար Նիշանի հանդիպումը Բաքվի Շմիդտի անվան հիվանդանոցում, պարսիկի կողմից հայկական «Ծիրանավորը»

գիրքն Արտեմին նվիրելու պատուներ, ծերունու խնդրանքով Արտեմի արտասանությունը Ղարաբաղի բարբառով, Ավիցեննայի և նրա աշակերտ Կրատիոսի հավերժական լեզենդի վերապատմունը, որոնց շնորհիվ վեպն ստանում է խոհափիլիսոփայական երանգ:

Որբի ճակատագրով հասակ առած, կյանքի բոլոր կեռնաններով ու քառուղիներով անցած Արտեմի կերպարը Վ. Հակոբյանի և՛ քնարական, և՛ եպիկական մտածողության արդյունք է: Արտեմի կյանքի վերջին ակորդներն առեղծվածային պատկեր է, որի ծփանքներում երևում են որդին՝ Ժորան, ռուսաստանցի որբ Լյուբան և ամենից ընդգծվածը՝ տեսիլքի փոխված Սրբուհին, որ արդեն երազ է դարձել և 85-ամյա ամուսնու համար դարձել է հուշ ու հիշատակ՝ երազը կյանք, կյանքը երազ դարձնող լեզենդ: Արտեմը միաժամանակ տոհմածառի առողջ արմատի խորհրդանիշ է: Պատերազմի ընթացքում կորուստներից հետո նա մտահոգվում է փրկվածների ճակատագրով: Ամուսնացնում է Արգամին ու Լյուբային: Սակայն ինքը մնում է մենակ:

Վեպի չորրորդ մասի վերջին՝ 15-րդ գլուխը ժողովրդի հավերժության փիլիսոփայական խոսուն պատկեր է: Առասպելի և առասպելաբանական հնարանքի օգտագործմամբ Վ. Հակոբյանը պատկերի մեջ է առել հայ ժողովրդի արցախյան հատվածի առանված լեզենդը, անցյալի-ներկայի-գալիքի ծիածանված կամրջի առեղծվածը: Այդ է վկայում Արտեմի երազը, մոր տեսիլքային պատկերն ու նրա խորհուրդը որդուն: Մայրը պատվիրում է Արտեմին՝ առավոտյան գնալ Շըռշռանի մոտ, մի լուցկու տուփ վերցնել, հատիկները վառել ու նետել ջրվեժի մեջ: Այդ կատարելով՝ տեսնելու է, որ ջուրը բռնկվում է հրդեհով: Մայրը որդու մեջ աստվածային ոգի է տեսնում, որի շնորհիվ հնարավոր չէ նրան հաղթել, նա անմահ է:

Արտեմը կատարում է մոր պատվիրանը՝ իր սփոփանքը տեսնելով ազատագրված Արցախի գոյության մեջ: Ահավորն այն էր, որ Արտեմի երկու որդիները, որոնք պիտի ծնողներից հետո հայ-

րական օջախը շենացնեին, զոհվեցին Արցախյան պատերազմում, աղջիկն ապրում է Ամերիկայում, ավագ որդին՝ Ժորան, բնակվում է Ռուսաստանում: Այդ նշանակում է, որ իր մահից հետո տունը դատարկվում է: Այդ մտորումների մեջ Արտեմը հասնում է Շըռշռանի ջրվեժին, նստում քարաբեկորի վրա, գրպանից հանում լուցկին և, հատիկները վառելով, նետում է ջրի մեջ: Հանկարծ նրա աչքերի առաջ սպիտակ-սպիտակ հրդեհ է երևում, գետը բռնկվում է լույսով, և հենց այդ պահին լսում է. «Պապիկ» առինքնող կանչը: Նրան է այցելում իր իսկ թոռը՝ Արտեմ Արշակի Գասպարյան անունով: Պարզվում է, որ նա Շաֆրան-Շամիրամի թոռն է, այն Շաֆրանի, որին Արտեմը հանդիպել է Բաքվում, երբ սովորում էր արհեստագործականում: Իսկ Շաֆրան-Շամիրամը կոտորածից փրկված հայուհի էր, նրան որդեգրել էին Բաքվում: Թոռը հայտնում է, որ տատիկը մահացել է տասը տարի առաջ, Տիխորեցկ քաղաքում, ուր նա գտել էր իր տարոնցի հարազատներից մեկին:

Արտեմ պապիկը թոռնիկ Արտեմի կրծքին նկատում է զատիկի նշանը: Հիրավի, պապը գտել էր թոռանը: Հարարից բերած թզենու առկայությունը այգում ևս խորհրդանշում է տոհմածառի հավերժությունը: Հենց այդ թզենու մոտ Արտեմը փակում է աչքերը և մտնում հավերժության ճամփան: Իսկ բաբախում էր Տրակերտի սիրտը՝ պարզկա օրվա և արևի շողերի տակ:

Վ. Հակոբյանի «Ձատիկը ջրավազանի հատակին» վեպն արդի հայ արձակի մեջ պատմական ներդրումներից է, այնպիսի երկ, որի արժեքը գնալով բազմապատկվում է՝ արժանանալով սերունդների ուշադրությանը:

13. ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Հայ գրականագիտության պատմությունը զարգացել ու հարստացել է երկու զուգահեռ ուղիներով: Մեկ ուղին պատկանել է միայն գրականագիտությանը՝ զբաղվողներին, իսկ մյուսը

միշտ պտղաբեր են դարձրել գրողները, ովքեր եւ արարել են ստեղծագործական նվիրումով, եւ զբաղվել գրականագիտության երեք հիմնական բաժիններով՝ գրականության պատմությամբ, գրական քննադատությամբ եւ գրականության տեսական հարցերով: Եվ ի փառս մեր ժողովրդի իմաստասիրության, հայ գրողները եղել են այն հիմնական ուժերը, որոնց շնորհիվ այսօր ունենք որոշակի գրական քննադատության պատմություն:

Մեր այս կարծիքը կողմնակալ երանգներ չունի: Այն ակունքվում է հայոց գրականագիտության անցած ժամանակաշրջաններից: Դա հաստատում են նաեւ ակադեմիկոսներ Ս. Սարինյանը եւ Ջր. Թամրազյանը, որոնք ի մի են բերել հայ քննադատության պատմության էջերը եւ սերունդներին հանձնել իրենց ուսումնական ձեռնարկները, որ օգտագործվում են բուհերի բանասիրական ֆակուլտետներում:

Երկու տարի առաջ Երեւանում հրատարակվել են մեծանուն գեղագետ Ջր. Մաթեոսյանի երկու հատորները՝ «Սպիտակ թղթի առջեւ» եւ «Ես՝ ես եմ» խորագրերով: Նրանցում զետեղվել են անմահ գրողի հոդվածները, հարցազրույցները, գրառումները եւ այլ նյութեր, որոնցում դրսեւորվել է նրա խորաթափանց տաղանդը գրականագիտության բնագավառում: Ուսումնասիրելով այդ ժողովածուները, մենք ներքին մի մղումով ու հպարտության զգացումով վերստին անդրադարձանք հզոր Պ. Սեւակի գրականագիտական աշխատություններին, հոդվածներին, գրախոսություններին եւ այլ կարգի գրառումներին: Նկատի առնելով մեր անմիջական տպավորությունն ու հայ գրականագիտության պատմությանը քաջածանոթ լինելը, եկանք հետեւյալ եզրակացության.«Հայոց քննադատության երկնահաս լեռնագագաթները կազմում են Մ. Խորենացին, Գ. Նարեկացին, Խ. Աբովյանը, Մ. Նալբանդյանը, Յ. Թումանյանը, Ե. Չարենցը, Պ. Սեւակը, Ջր. Մաթեոսյանը: Եվ դա բնական է, քանզի համաշխարհային գրականության ընթացքը ապահովվել է հայտնի գրողների ստեղծա-

գործական կուտակումների, ինչպես նաև նրանց կողմից դասական եւ ժամանակակից գրողների երկերը արժեքավորելու եւ գեղարվեստական խոսքերի զարգացման ու հարստացման ճիշտ ճանապարհը ցույց տալու շնորհիվ»:

Հաճելի է ընդգծել, որ վերջին տարիներս Հայաստանի տարբեր հրատարակչություններում լուրջ ուշադրություն է դարձվում դասական գրողների ոչ միայն գեղարվեստական երկերի, այլ նաև նրանց գրականագիտական աշխատանքների ամբողջական լույս ընծայմանը, եւ ոչ միայն Հայաստանում ապրող եւ ստեղծագործող հեղինակների, այլեւ Սփյուռքի մեր ճանաչված գրողների գրական հարուստ ժառանգության տպագիր մասայականացմանը: Այդ են վկայում Լ. Շանթի, Վ. Թեքեյանի, Պ. Սեւակի, Վ. Դավթյանի, Ս. Կապուտիկյանի եւ մյուս ականավոր գրողների ընտիր երկերի հավաքածուները, որոնցում լայն տեղ է հատկացված նաև նրանց ուսումնասիրություններին եւ քննադատական այլ ժանրի գործերին:

Մեզ համար առավել ուրախացնող երեւույթ է արդի հայ գրականության արցախյան օջախի մասնակցությունը ոչ միայն գեղարվեստական խոսքի հարստացման, այլեւ գրականագիտության զարգացման կարեւոր գործին: Այս առումով կարող ենք նշել բանաստեղծ - գրականագետ Վ. Հակոբյանի հինգհատորյակը, որ հրատարակվել է նրա ծննդյան 60-ամյակի առթիվ:

Վ. Հակոբյանի ամբողջական երկերի հրատարակությունը շնորհակալ գործ է մեր մշակույթի պատմության մեջ: Տաղանդավոր բանաստեղծի երկերի գեղարվեստական մակարդակը պատիվ կարող է բերել յուրաքանչյուր ճանաչում գտած գրողի: Առավել եւս, երբ ի մի են բերվել Վ. Հակոբյանի ոչ միայն չափածո ստեղծագործությունները, այլեւ նրա գրականագիտական տարբեր ժանրեր ներկայացնող երկերը: Այս առումով հատկանշական է նրա Ե հատորը, որ լույս է ընծայվել «Դիզակ պլուս» հրատարակչության կողմից:

Բանաստեղծն այստեղ ներկայացել է տարբեր տարիներին գրած ուսումնասիրություններով, հոդվածներով, էսսեներով, երկխոսություններով եւ այլ ժանրի գործերով:

Երեք գրքից բաղկացած սովորածավալ այս ժողովածուն բանաստեղծ - գրականագետի երկար տարիների որոնումների, մայրենի գրականության ընթացիկ ուղիներին եւ լուծումներին ակտիվ մասնակցության, ինքնաճանաչման եւ ինքնադրսեւորման արդյունք է: Պատահական եւ միանգամից նման գործ չի ստեղծվում: Հոգու լուսացնցուղ եւ դավանանքի պայծառություն է պետք, որ բանաստեղծը ոչ միայն գտնի իր երազած ճանապարհը, այլեւ զուգահեռի վրա շոշափի, գտնի գեղարվեստական խոսքի արարման երանգները, հանդես գա գնահատողի, ինչպես նաեւ խորհրդատուի իրավունքով: Վ Հակոբյանը նվաճել է այդ իրավունքը եւ՝ իր աստվածային շնորհքի, եւ՝ անընդմեջ մշակութային անցած եւ ժամանակակից գանձարանից հոգեւոր սնունդ առնելու շնորհիվ: Ձարմանալի հետաքրքրություն է ցուցաբերել նա դեռեւս իր գրական - լրագրողական գործունեության հենց սկզբից: Հրատարակված նոր գրքերի գրախոսումը, թատերական ներկայացումների գնահատումը, իր գրչակից ընկերների ձեռագիր գործերի դիտարկումն ու խորհուրդները նրան տարել են յուրացումների ճանապարհով եւ արդյունքում նա լսել է իր ներքին ձայնը. «Իսկ ինչու՞ չգնալ դեպի լուրջ ուսումնասիրություններ կատարելու բարդույթի աշխարհը»: Եվ խիզախել է նա՝ պաշտպանության ներկայացնելով իր թեկնածուական ատենախոսությունը՝ նվիրված հայ նորագույն շրջանի վառ աստղերից մեկի՝ Վ. Դավթյանի պոեզիային: Սովորական թեզի շարադրանք չէ դա, այլ ճշմարիտ բանաստեղծի կողմից տեսանելի դիտարկումների, շոշափելի վերլուծությունների ու մշտափոփ ընդհանրացումների մի ուսումնասիրություն, որ ուրախացրել է նաեւ Վ. Դավթյանին:

Վ. Հակոբյանը վերջին համոզմամբ իր այդ աշխատությունը

անվանել է «Բանաստեղծը եւ պատմությունը»: Ճիշտ եւ տեղին գտած գնահատական՝ կոնկրետ Վ. Դավթյանի դեպքում, որովհետեւ մեր պատմության արժեքավորման գեղարվեստական խոսքի համապատկերի վրա Վ. Դավթյանը ետչարենցյան շրջանի եռասյուններից է՝ Յ. Շիրազ - Պ. Սեւակ - Վ. Դավթյան:

Նորագույն շրջանի հայ գրականությունը, առանձնապես անհատի պաշտամունքի քննադատությունից հետո, անդրադարձ կատարեց դեպի ժողովրդի անցյալը: Հայ գրողները վերանայեցին ստալինյան բռնատիրության շրջանում իրեն զգացնել տված սարսափի եւ վախի այն մտայնությունը, որ համարյա մոռացնել էր տվել մեր պատմության դասը՝ հեռավոր ու մոտիկ անցյալի կարելոր իրադարձությունների հազեցվածությամբ: Դա էլ հնարավորություն ընձեռեց ուշադրության կիզակետ բերել պատմական թեմայի գաղափարական ընդգրկումը, գրականության տեսադաշտի ընդարձակումը, հարստացումը ու գեղարվեստական ժանրերի վերահղվումը:

1950-ականի կեսերից սկսած նախկին ԽՍՀՄ ժողովուրդների գրական աղերսների նորօրյա դրսեւորումները նկատելի դարձան եւ՝ հայ արձակի, եւ՝ չափածոյի բնագավառներում: Նրանցում ընդգծվեց առինքնող ու ապրեցնող այն հրամայականը, որ պատմությունը ժողովրդի անմարում հիշողությունն է, նրա կենսագրությունը, որ ցավոք, մինչեւ այդ փակված մատյան էր, եթե մի կողմ թողնենք 1944-ին՝ այն ժանր օրերին ստեղծված հայոց մշակույթի երեք կոթողները՝ Դ. Դեմիրճյանի «Վարդանանք», Ստ. Ջորյանի «Պապ թագավոր» պատմավեպերը եւ Ն. Ջարյանի «Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգությունը:

Ընդգծենք, որ 20-րդ դարի 50-ական թվականների կեսերից սկսած մեր գրող-արվեստագետները լծվեցին ժողովրդի հիշողության արթնացման անհրաժեշտ գործին, ինչպես ասվում է՝ դարձան ժողովրդի պատմության «փակված» էջերի վերձանողն ու հասարակության կենսագիրը: Բավական է նշել միայն Ս.

Խանգադյանի «Մխիթար Սպարապետ», Ն. Ջարյանի «Սասնա Դավիթ», Ստ. Ալաջաջյանի «Եղեգները չխոնարհվեցին», Ս. Այվազյանի «Ճակատագիրն հայոց», Զ. Ղուկասյանի «Ոսկան Երեւանցին», Խ. Գյուլնազարյանի «Օրերի ճանապարհը», Խ. Դաշտենցի «Խողեղան» եւ «Ռանչպարների կանչը» եւ այլ պատմական երկեր արձակի ասպարեզում, Զ. Շիրազի «Տիգրան Մեծի վիշտը եւ հավերժությունը», «Հայոց դանթեականը», Պ. Սեւակի «Անլռելի զանգակատուն», «Եվ այդ մի՛ Մաշտոց անուն», Վ. Դավթյանի «Հայերգություն», «Օ՛ տայր ինձ զծուխ ծխանի», «Ճերմակ ձիավորը», «Զվարթնոց», «Ծիրանի ծառ» եւ այլ չափածո երկերը, լրիվ պարզ կդառնա պատմության գեղարվեստական արձագանքի մասշտաբայնությունն ու կարեւորությունը: Ահա, այն գործոնի հրամայականը, որին Վ. Հակոբյանը արձագանքել է մի կողմից իր պատմական պոեմներով, մյուս կողմից իր հոգու պարտքն է համարել ուսումնասիրել ավագ գրչեղբոր՝ Վ. Դավթյանի ձեռքբերումներն այդ բնագավառում: Եվ դա ամբողջությամբ հաջողվել է նրան: Նա հետազոտել եւ գնահատել է Դավթյանի պատմական թեմատիկայով ստեղծված գործերի առանձնահատուկ կողմերը, անդրադարձել տաղանդավոր պոետի մտածողության, խոսքի ու պատկերի կառուցման, պատմության ընկալման եւ գեղագիտական բացահայտման ու մատուցման եւ այլ կարեւորագույն կռվաններին:

Վ. Դավթյանի պատմական երկերը արժեքավորելիս Վ. Հակոբյանը ընթացել է հենց նրա գեղագիտական իդեալի ցուցումով եւ իզուր չէ, որ բերել է անվանի բանաստեղծի խոստովանությունը՝ որպես բնաբան. «Պատմության խորհուրդը... Եվ ի՞նչ է հուշում... Ի՞նչ է հրամայում մեզ պատմության խորհուրդը: Ամենից առաջ դասեր քաղել այդ պատմությունից եւ ապա՝ նայել առաջ»: Եվ հենց ուսումնասիրության սկզբի էջերում էլ Վ. Հակոբյանը նախագծում է իր անելիքն ու ասելիքը, նշելով. «Դավթյանի ամբողջ ստեղծագործությունը պատմության խորհուրդի

խտացումն է: Բանաստեղծը չի նկարագրում, այլ դրանցով ճշմարիտ ու ուղեցույց հետեւությունների է հանգում, կատարում գեղարվեստական ընդհանրացումներ: Եվ բնական է, որ նրա պոեմներում («Թոնդրակեցիներ», «Ասք սիրո եւ սրի», «Ռեքվիեմ» եւ այլն) ու Տաղարան շարքում մենք տեսնում ենք գաղափարների, իդեերի ու ձգտումների մարմնացումը, որոնք բնորոշում են ժողովրդի ոչ միայն դեմքը, այլեւ ուղենշում են նրա լուսավոր ճանապարհը» (էջ 5-6):

Իր այս աշխատության մեջ Վ. Հակոբյանը գրական երկերի սկզբունքային եւ հմուտ վերլուծությունների հիման վրա ի ցույց դրեց Վ. Դավթյանի պոեզիայի կենսունակությունը, պատմա-փիլիսոփայական բովանդակությունը եւ գեղարվեստական ու լեզվաոճական առանձնահատկությունները, պատմության հերոսականացման մեթոդաբան, ժողովրդի ոգու անպարտելիության առեղծվածը, բացահայտեց հայոց քարերի անմահության հոլովույթը, շեշտեց հիշողության արդիականացումը, գոյատեւման խորհուրդը եւ այլն եւ այլն: Այդ ամենը նա հաստատեց ականավոր պոետի «Թոնդրակեցիներ», «Ծուխ ծխանի», «Ճերմակ ձիավորը», «Չվարթնոց», «Ասք սիրո եւ սրի», «Բայց ծնվեցի», «Ասք Մաշտոցի մասին», «Ծիրանի ծառ», «Գիշերային զրույց Նարեկացու հետ», «Մոմիկը» չափածո երկերի վերլուծության եւ արժեքավորման հիման վրա:

Վ. Հակոբյանը նկատեց, որ Վ. Դավթյանը մի արվեստագետ է, որ զգում է պատասխանատվությունը ժողովրդի առաջ ու ժողովրդի համար, եւ դա ոչ միայն իր գրական, այլեւ ամենից առաջ քաղաքացիական դավանանքն էր: Այստեղից էլ այն դիտարկումը, որ «Դավթյանի ամբողջ փիլիսոփայությունն ու գեղագիտությունն ուղղված է կյանքում մարդկայինի, վեհի ու գեղեցիկի հաստատմանը: Սրանցով էլ բնորոշված է նրա պատմական երկերի բարձր արժեքը, որին գրականագիտությունն անդրադարձել է ու դեռ էլի ու էլի կանդրադառնա»(էջ 106):

Առաջին իր այս ծավալուն աշխատանքից հետո Վ. Հակոբյանը, որ նոր հաջողությունների էր հասնում պոետական հունձքում, շարունակեց գրականագիտական նոր որոնումները: Նրա համար օրերի հրամայական դարձավ գրական երկերի վերագնահատման հարցը՝ գրականագիտության գիտականացման անհրաժեշտությամբ: Հայ ժողովրդի պատմության, գրականության եւ բանասիրության նրա իմացությունը հնարավորություն տվին, որ ձեռնամուխ լինի «Հայ նորագույն բանաստեղծության զարգացման ուղիները (1950-1980-ական թթ.)» թեմայի բացահայտմանը, որն էլ դարձավ նրա դոկտորականի հիմքը: Դա հսկայական մի գործ էր, որ գլուխ բերվեց քրտնաթոր ու ջանադիր վաստակի շնորհիվ: Ուսումնասիրության առանցք դարձնելով Հ. Շիրազի, Ս. Կապուտիկյանի, Գ. Էմինի, Պ. Սեւակի, Հ. Սահյանի, Վ. Դավթյանի, Հր. Հովհաննիսյանի, Մ. Մարգարյանի քերթողական արվեստը, նա կարողացավ ցույց տալ 20-րդ դարի 50-80-ական թվականների հայ քնարերգության զարգացման հիմնական ուղիները՝ համաշխարհային քնարերգության հետ ունեցած առնչությունների համապատկերի վրա, միաժամանակ ժխտելով խորհրդային գաղափարաբանության սխեմատիզմից ու խեղաթյուրումներից բխած կողմնակալ մոտեցումներն ու գեղարվեստական երկերի արժեքավորումները: Դրանցով իսկ նա ապահովեց ուսումնասիրության արդիական նշանակությունը՝ պոեզիայի նոր ուղիները շոշափելով հանդերձ:

Հետաքրքիր կառուցվածք ունի ուսումնասիրությունը: Նրանում Վ. Հակոբյանը առանձնացնում է նախ 20-րդ դարասկզբի հայ քնարերգության բոլոր այն բնորոշ գծերը, գեղարվեստական սկզբունքներն ու առանձնահատկությունները, որոնք հող նախապատրաստեցին ետջարենցյան շրջանի հայոց բանաստեղծական խոսքի վերընթացի համար: Ապա զուգորդման եւ համադրման, համեմատական վերլուծության ճանապարհով համաշխարհային եւ հայ պոեզիայի զուգահեռների վրա քննում է

այն փոխազդեցությունները, որոնք հատուկ էին ժամանակաշրջանի գրական ընթացքին: Տվյալ դարաշրջանի գրականության գիտական համադրումը, պոետական ձեռքբերումների տիպաբանական եզրերի տարբերակումը, հատկանիշների գնահատումը, օրինաչափությունների դիտարկումը հնարավորություն են ընձեռել նշելու այն ինքնատիպության գործոնները, որոնք ապահովել են վերոհիշյալ պոետների տեղն ու դերը մեր գրականության պատմության մեջ: Հեղինակի ճիշտ բնորոշմամբ դա տեղի ունեցավ այն բանի շնորհիվ, որ նրանք կարողացան խորհրդային տարիներին հատուկ ճառային ու ճակատային չափաբերությունից անցում կատարել դեպի իսկական պոեզիա, որ աչքի է ընկնում եւ՝ թեմատիկ-գաղափարական խորքով, եւ՝ գեղարվեստական թարմ ու խոսուն պատկերներով:

Ուսումնասիրության տարբեր գլուխներում Վ. Հակոբյանը նախ ցույց է տալիս գեղարվեստական այն միտումները, որոնք ի հայտ են գալիս հայրենասիրական թեմաներով զրված ստեղծագործություններում, ապա լուսաբանում է հայ սիրերգությունն ու պոեզիայի ազգային եւ համամարդկային նշանակության հիմնախնդիրները: Նա ընդգծում է անհատականությունների տեղն ապահովող ամենաանհրաժեշտ չափանիշը՝ սեփական ոճ ունենալը: Հենց այդ ձգտումն էլ տվյալ ժամանակաշրջանի պոետական աստղաբույլին հնարավորություն տվեց, որ իրենց գեղարվեստական խոսքը ձեռք բերի ազգային նոր յուրահատկություններ, հեռանալ երեւոյթների առարկայական պատկերներից, հոգեբանական կերպարափոխության ենթարկել հոգու ամրության, արժանապատվության, մարդասիրության գաղափարները, դրանք ներկայացնելով որպես ազգային բնավորության բարենասնություններ: Ետջարենցյան աստղաբույլի մեջ մտնող պոետների ստեղծագործություններում բառը հնչեց որպես ժողովրդական հիշողություն, աշխարհագրություն, հոգեբանություն, որպես ազգային արժեք: Նրանց քնարերգության մեջ արտահայտվեցին ազգային բնավորության եւ հոգեբանու-

թյան երանգները, ամենադժվարին պահերին անգամ մաքառման ոգին բարձր պահելու կարողությունը:

Վ. Հակոբյանը հավաստի էլ խոսում փաստերով ցույց տվեց, որ հայ նորագույն բանաստեղծությունը Հ. Շիրազով միտվեց դեպի տրամադրական տրամաբանություն ու հույզի շիկացում: Պ. Սեւակի պոեզիան այլ դիրքից ներկայացավ: Նրանով տրամաբանական տրամադրությունը ի հայտ եկավ: Ս. Կապուտիկյանը իր քնարով ընդլայնեց հասարակական հնչեղության սահմանները, Գ. Էմինը խտացրեց զգացմունքն ու միտքը, Վ. Դավթյանը սրեց պատմության հիշողությունն ու խորհուրդը, Հր. Հովհաննիսյանը կարեւորեց բարոյական սկզբունքների խնդիրը, Հ. Սահյանը գնաց դեպի զգացմունքի բնական նախնականությունը, Մ. Մարգարյանը ծավալեց ապրումի անմիջականությունը՝ բարության պատգամներով: Նրանց ավանդները շարունակվեցին անմիջապես: Ժամանակակից հայ քնարերգությունը որակափոխվեց դեպի համանվագայնություն, զարգացման հիմքում ունենալով գոյի պոլեմիկական մտածողության ու ոճի բազմազանության տիեզերական ժամանակի հայտնություններն ու գիտատեխնիկական հեղափոխությունը: Իսկ եւ իսկ իմաստասիրական ընդհանրացում կարելի է համարել ուսումնասիրության վերջին ակկորդը. «Բանաստեղծությունն աստվածային ճշմարտախոսություն է: Առանց աշխարհի գիտական ընթրնումների՝ չկան բանաստեղծական ընկալումներ: Եվ ընդհակառակը: Որքան ավելի շատ է խորանում քնարերգությունն ազգային ճակատագրի ու պատմական առանձնահատկությունների մեջ, այնքան ավելի է բարձրանում նրա ներգործության ու գործնականության գործակիցը կյանքում»:

Տվյալ ծավալում ժողովածուի երրորդ գլուխը կոչվում է «Ժամանակի համապատկերում»: Այստեղ հեղինակը ձեռք է մեկնել գրականության պատմությանը, գրական քննադատությանը եւ տեսությանը:

Գրականության պատմության իմացությամբ Վ. Հակոբյանը յուրովի մոտեցում է ցուցաբերել հայոց դասականների գրական ժառանգությանը: Այսպես, «Նարեկյան հակադրամիասնությունների փիլիսոփայական խորհուրդը: Մետապատկեր» հոդվածում նա եզրակացնում է. «Եվ եթե նա չլիներ այնքան հոգեւոր, չէր լինի այդքան աշխարհիկ: Եվ ընդհակառակը: Ուրեմն, հենց նույն այդ հակադրության զուգահեռի վրա պիտի փնտրել նարեկյան փիլիսոփայության տիեզերական խորհուրդը, այսինքն՝ հակադրամիասնության ներդաշնակության մեջ է ներկայանում Գրիգոր Նարեկացին» (էջ 398):

Հայ եւ ռուս գրական առնչությունների զուգորդումով Վ. Հակոբյանը ընդգծում է միեւնույն դարաշրջանի տիպաբանական կապերը եւ այդ համապատկերի վրա ներկայացնում Մուրացանի եւ Դոստոեւսկու ստեղծագործությունների հիմնախնդիրը՝ ներքին մարդու հայտնագործումը:

Անդրադառնալով Մուրացանի ստեղծագործության բովանդակությանը, Վ. Հակոբյանը մեծ գրողի գեղագիտության մեջ ընդգծում է պարտքի էթիկան: Հիրավի, ըստ էության ճիշտ մոտեցում հայ անմահ դասականի երկերին:

Գրականագիտական բազմակողմանի բացահայտումների արդյունք է «Գաղափար, թե՞ կանխագաղափար», «Կատարելապես գեղեցիկ մարդ» կերպարի շուրջ, աշխատանքը: Այն աչքի է ընկնում գրականագիտական ճշմարիտ եզրահանգումներով, որ արդյունք է համաշխարհային դասականների գլուխգործոցների եւ աշխարհայացքային դիրքորոշումների իմացության: Ուշագրավ գնահատական է «Աշխարհն ամփոփում եմ իմ մեջ եւ ներանձնանում» էսսեն, որտեղ փորձ է արվում ավիամեջ դնել խորքային այն ժառանգությունը, որ ստեղծել է ակադեմիկոս Ս. Սարինյանը՝ մի անհատականություն, որ առաջին մեծության աստղերից է:

Չես կարող չհամաձայնվել Վ. Հակոբյանի ընդհանրացման

հետ, եթե լիապես ծանոթ ես Սարինյանի մոնոմենտալ աշխատություններին: «Սերգեյ Սարինյանը հայ դասական գրականության լավագույն ավանդների ջատագովն է մեր իրականության մեջ եւ ամենայն նորի ու օրիգինալի (որը հաճախ «ավանդապահների» կողմից դիմավորվում է սրերով) կրքոտ, գուցե ավելի ճիշտ կլինի ասել՝ մոլեգին, դատապաշտպանը: Սարինյանը միշտ էլ եղել է այդպիսին, այդ եւ վկայում նրա, գրեթե առանց բացառության, գրական - քննադատական հողվածներն ու ելույթները, ուսումնասիրությունները, որոնք առանձնանում են նյութի գերազանց տիրապետությամբ ու սարինյանական ընդգծված պոլեմիկայով, գիտական անաչառությամբ, փաստերի ու երեւույթների մեկնաբանման կուռ տրամաբանությամբ: Ավելին, Սարինյանը բացառիկ սեր է տածում դեպի նորույթը: Եվ, երեւի, հենց նման սերն է նրան պարգեւում այն հեռատես, «սուր աչքը», որի մասին իրավացիորեն մշել է Պարույր Սեւակը: Մի հատկանիշ եւս Սարինյանին առանձնացնում է իր ժամանակակիցների մեջ, դա երիտասարդ սերնդի խոսքի ու գործի նկատմամբ նրա ունեցած հավատն է, հետաքրքրությունը եւ ուշադրությունը: Որպես կանոն, անսխալ տեսանող Սարինյանը գրականագիտական իր դիտարկումներով շատ հաճախ ոչ միայն առաջ է անցնում Քրոնոսից, այլեւ նրան հուշում - պարտադրում է իր ժամն ու ժամանակը, որի ստեղծողն ինքն է, տերը՝ ժողովուրդը:

Եվ այսպես ներանձնանալով՝ աշխարհվում է նա» (էջ 464):

Գրականագիտական ընկալումների եւ հոգեւոր զգացումների մի ծիածան է առաջացել Ս. Սարինյանի եւ Վ. Հակոբյանի գործունեության տեսադաշտում: Եվ դա ողջունելի է, քանզի Սարինյանի խորհուրդների աշխարհը ծայր առնելով Սեյտիշենի (Խաչենի) ծերունիների կենսափորձից, հարստացել է համաշխարհային փիլիսոփայության գանձերով եւ կրկին անդրադարձ կատարել դեպի Արցախ՝ մարդկային գործոնի ամենախոր իմաստով: Հնարավոր չէ չջերմանալ Սարինյան-գիտնականի իմաս-

տալի, բորբոքուն, լուսառաք կրակից: Դրանով էլ հենց պետք է բացատրել համաարցախյան այն սերն ու հարգանքը, որ կան Սարինյանի հանդեպ: Ինչ վերաբերում է Վ. Հակոբյանին, ապա իր իսկ խոստովանությամբ, Սարինյանը իր հոգեւոր հայրն է, առանց որի երեւի ինչ որ տեղ, ինչ որ բանում իր ճանապարհի կեռնանները ավելին կլինեին: Դրանք երախտագիտական զգացումների սովորական արտահայտություններ չեն, այլ հռչակավոր գրականագետի անդադրում, արդյունավետ վաստակի արժեվորում, որ առնչված է մի դեպքում «Հայոց գրականության երկու դարը» մոնումենտալ աշխատության չորրորդ հատորի (2004) եւ մյուս դեպքում՝ Վ. Հակոբյանի «Թեւերի հեռուն» գրքի առթիվ Ս. Սարինյանի դիտարկումներին: Լուրջ աշխատանքներ են այդ եկուսն էլ, որ Վ. Հակոբյանի գրականագիտական ձեռքբերումների արդյունք են, անհատականությունների խորհուրդների լույսը կանթեղելու կարողություն:

Հ. Թումանյանը ժամանակին նշել է ժողովրդական ստեղծագործության յուրացման անհրաժեշտությունը գրողների համար: Այդ նշանակում է, որ ստեղծագործող անհատը խորապես ծանոթանում է ժողովրդական բանասացների արարող տաղանդին եւ նախասիրություններին: Վ. Հակոբյանի «Պըլը-Պուղու բանահյուսությունը» աշխատությունը՝ Բ. Գրիգորյանի համահեղինակությամբ, թումանյանական խորհուրդի յուրացման լավագույն օրինակներից է: Այս աշխատությունը միաժամանակ մեզանում առաջիններից է՝ նվիրված Արցախի հանրաճանաչ առակախոս Պըլը-Պուղու գործին: Եվ նշենք, որ հեղինակներին հաջողվել է բացահայտելու տաղանդավոր Վարդապետի ստեղծագործության ժողովրդայնությունն ու լուսավոր գաղափարների հրաշքը:

Վ. Հակոբյանի գրական - քննադատական բազմաժանր գործերում երեւան է գալիս գեղարվեստական խոսքի արարման առեղծվածներին քաջածանոթ, գնահատման չափանիշները բարձր գնահատող մի տեսաբան, որի միտումը ազգային գրա-

կանության պատշաճ մակարդակը պահպանելու պահանջն է: Տվյալ աշխատանքը հասուն մարդու, փորձառու մտքի, ազգային մշակույթի հանդեպ սրտացավ վերաբերմունքի արտահայտությունն է: Այստեղ քննարկվում են գնահատման չափանիշները չկորցնելու, արդարացի քննադատություն ունենալու, առաջադիմական սկզբունքները պահպանելու, անցյալի գրական ժառանգության յուրացման հիման վրա նոր խոսք ասելու եւ այլ կարեւոր հարցեր: Ուսանելի մտքերը շատ են: Բերենք մի քանիսը. «Պիտի նորանանք ոչ միայն սաղարթով, այլ լինի արմատների նոր դալարումներով, սա է գլխավորը: Առանց նորի ավանդականը մահանում է: Եթե ասպարեզ մտնող գրողի մեջ թունանյանը չի նորացվում՝ շենանալով հանդերձ, դա ոչ թե թունանյանի, այլ նոր եկողի մահվան նշանն է» (էջ 452):

Խոսելով թարգմանչական արվեստի եւ թարգմանական գրականության անհրաժեշտության մասին, Չակոբյանը նշում է. «Ես կարելորում եմ մի էական հանգամանք, մեր կացութաձեւը եվրոպական դարձնելով՝ մենք չենք կարող եվրոպացի դառնալ, իսկ եթե մեր ասիացի լինելուց հրաժարվենք, այլեւս ոչ մի տեղացի չենք կարող լինել ընդհանրապես» (էջ 453):

Խորհրդածելով ազատության եւության, նրա ընձեռած հնարավորությունների մասին, Վ.Չակոբյանը մտորում է այսպես. «Ազատությունը գրողի համար ներքին հատկանիշ է, կարող է անգամ ազատ երկրում արվեստագետը չլինել ազատ, եթե... այդ շնորհը իր ներքին շարժման պայմանը չէ: Ազատությունը տաղանդ է հենց: Իսկական տաղանդների՞ն տեր կանգնենք» (էջ 454):

Վ. Չակոբյանը քաջատեղյակ է Բելինսկու ճշմարտախոսությանը, առանձնապես քննադատության վերաբերյալ: Բելինսկին է ասել, որ քննադատը արվեստ չի ստեղծում, սակայն պարտավոր է լինել զարգացածության գոնե այնպիսի մակարդակի, որ ունի ականավոր գրողը: Նման դեպքում է միայն քննադատությունը նպաստում գրական ընթացքի զարգացմանը: Այս դիտա-

կետից կարելու է բերել Հակոբյանի վերաբերմունքը. «Քննադատություն, թող ներվի, չունենք, կամ համարյա չունենք: Երբեմն եղածը չենք տեսնում, չեղածը տեսնում ենք: Երբեմն, եղածը չտեսնելուն տալով, կարծում ենք, թե չկա... Նորով ուղեկցվենք, բայց մեզ առաջնորդողը Տերյանի «Հոգեւոր Հայաստանի» ավանդական դասը լինի» (էջ 455):

Վ. Հակոբյանի մտորումները բանաստեղծության վերաբերյալ եւս հետաքրքրություն են ներկայացնում: Բերենք դրանցից մեկը. «Բանաստեղծությունը ազատություն է: Տաղաչափությունը եւ մտածողությունը, ձեւը եւ բովանդակությունը պիտի ներկայանան լեզվի ոգու ընձեռած անսահմանության մեջ, նրանց ողջ սերմի վրա: Ես գտնում եմ, որ մեր բանաստեղծությունը պիտի երկրի պտույտներին հակառակ գնա, որ... համընթաց լինի նրան: Սա որքան էլ պարադոքսալ հնչի, այնուամենայնիվ, ճշմարտություն է» (էջ 455):

Գրականության պատմության եւ գրական քննադատության հիմնախնդիրների հանդեպ խոսում ընդհանրացումներ են դարձել տարբեր ժանրի գրականագիտական գործերում: Նրա հայացքների կենտրոնում հառնում են Վ. Հյուզոն («Հայացք փարիզի աստվածամոր տաճարից կամ ճշմարտության ասպետը»), Մ. Գորկին («Գոյություն ունի միայն մարդը»), հանրահայտ պոետ-թարգմանչուհի Վ. Ջվյագինցեւան («Նրա երգերի ներքնատար շարժումները»), Բ. Ուլուբաբյանը («Արցախը՝ սեր ու ճակատագիր»), Մ. Սարգսյանը (Գեղարվեստական խոսքի ներքին պատկերավորությամբ) եւ այլն:

Վ. Հակոբյանն իր հոգու պարտքն է համարում նաեւ իր ժամանակակից ավագ եւ երիտասարդ սերնդի ներկայացուցիչների գրական ձեռքբերումների արժեքավորումը: Այս առումով ուսանելի են «Մովսես Յախշունց. Պայծառ մարդն ու բանաստեղծը», Մ. Հավհաննիսյանի մասին գրած «Շիտակ ու դժվարին ուղի», Ռ. Եսայանին նվիրած «Կրկին՝ հրեշտակի թևերի վրա» եւ այլ գրախոսականներ:

Ուսումնասիրելով Վ. Հակոբյանի գրականագիտական երկերը, կրկին համոզվեցինք մի ճշմարտության մեջ, որ գրողը իր ժողովրդի պատմության, նրա հիշողության կրողն է, ներկայի խորհրդատուն ու գալիքի դեսպանը:

Որպես գրականագետ, Վ. Հակոբյանը ճիշտ է, յուրացրել է ակադեմիական ոճը, սակայն ավելի շատ ընդունել է հայացքների պատկերավոր արտահայտչաձեւը, որը բխում է Սեւակ-Մաթեոսյան դասերից:

Բանաստեղծ գրականագետը ասելիքի մեջ ազատ է այնպես, ինչպես իր պոեզիայում: Ասել է թե՛ նրա գրականագիտությունը ժանրային սահմաններ չի ճանաչում: Վ. Հակոբյանի գրական հայացքների փունջը յուրահատուկ ներդրում է արդի հայ գրականագիտության բնագավառում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Վարդան Հակոբյանը արդի հայ պոեզիայի տաղանդավոր ներկայացուցիչներից է, ով մեծապես նպաստում է մեր մշակույթի զարգացմանը ոչ միայն չափածո, այլև արձակ ու դրամատիկական երկերով ու քննադատական-հրապարակախոսական հոդվածներով:

Թվում է՝ երեկ էր, երբ նա սովորում էր Բաքվի մանկավարժական ինստիտուտում, և ես, որպես դասախոս, գրականության ժամերին լսում էի նրա նոր, թարմ բանաստեղծությունները, հիանում և խրախուսում: Դեռ առաջին կուրսում Վ. Հակոբյանը խոստումնալից հայտ ներկայացրեց որպես բանաստեղծ և աճեց օրերով, ժամերով: Ամեն անգամ նրան լսելուց մտքով տեղափոխվում էի պատմական Դիզակի Արփագետիկ գյուղ, որը բարձունքներից է հսկում Քիրսի գագաթները, և որի փեշերին բուրող ծաղիկներն ուրիշ գույներ և ուրիշ բույրեր ունեն:

Նախախնամությունը 1948թ. մայիսի 21-ին մատնացույց է արել ուսուցիչ Սարգիս Չակոբյանի օջախը, որտեղ աշխարհ եկավ ապագա բանաստեղծը: Նրան ժամանակի սովորությամբ կոչեցին ոչ թե հայկական, այլ սլավոնական անունով՝ Սլավիկ: Եվ նա դեռ Չին Թաղերի միջնակարգ դպրոցի աշակերտ, իր բանաստեղծությունների շարքը պիտի ուղարկեր Յ. Շիրազին, և նրա կողմից կնքվեր Վարդան: Մեծն Շիրազը նկատել էր, որ դիզակցի այդ պատանին աշխարհ է եկել պոեզիայի համար և գեղարվեստական խոսքում ունի վարդանվելու բոլոր կարողությունները: Իսկ 1967թ. առաջին կուրսի ուսանող Վարդանի երգերի ձեռագիր տետրը Բաքվում պիտի կարդար Պ. Սևակը և մեր ներկայությամբ մի քանի բանաստեղծությունների մոտ գրեր՝ հիանալի՝ է:

Վ. Չակոբյանի մտավոր աճը պոեզիայի, արձակի, լրագրության, գրականագիտության բնագավառներում տեղի ունեցավ նկատելի արագ: 1974-1983թթ. «Խորհրդային Ղարաբաղ» թերթի աշխատակից, խմբագրի տեղակալ, 1983-ից՝ Լեռնային Ղարաբաղի գրողների միության նախագահ, իսկ այսօր միաժամանակ Գ. Նարեկացու անվան համալսարանի ռեկտոր:

Չաճելի է ընդգծել, որ Վ. Չակոբյանը պոեզիայի անդաստանում արդեն արարել է իր ինքնատիպ աշխարհը և ճանաչվել որպես տաղանդավոր բանաստեղծ: Ստեղծագործական նրա խառնվածքն ու երազանքն ի հայտ եկան հենց առաջին «Մեղեդիներ» գրքույկում (1969թ.): Պետք է նշել, որ 60-ական թթ. պոեզիայում հռետորական տարրը հիմնականում հաղթահարվել էր, անհատի հոգեբանական բացահայտումների պրոբլեմը գրողներից շատերին էր հուզում, Պ. Սևակը հանդես էր եկել «Մարդը ափի մեջ» շարքով, Յ. Սահյանը «Տափաստանների ծիածաններից» իջել և գնում էր դեպի զանգեզուրյան հրաշքների բանաստեղծականացումը, հարվածներ ստացած

Շիրազը շարունակում էր «Գարնանամուտի» իր ավանդույթները: Հենց այդ անհրաժեշտ պահի հետ է կապված Հակոբյանի մուտքը: Իհարկե, ամեն ինչ չէ, որ պետք է կապել պահի հետ: Այստեղ կարևորվում են նաև երիտասարդ բանաստեղծի ստեղծագործական խառնվածքն ու բնատուր շնորհքը, ինտուիցիան, աշխարհընկալման սահմանները, իր հեռագնա ճանապարհի հանդեպ եղած հավատը:

Բանաստեղծական սեփական ճանապարհ ունենալու այս երազանքը ծիածանվեց նրա հետագա գրքերում՝ «Սեր և ժպիտ», «Շանթահար կաղնին», «Մայրանում է լույսը», «Ծառի անունից», «Անմարելի-անմեռելի», «Մի կռուճկ անցավ», «Վաղվա աչքերով», «Արցախս ծուխ», «Ամարասի զանգերը», «Տաճարն աստծո», «Սեմարան», «Սոսե», «Երկերի» վեցհատորյակը, այնուհետև «Քրիստոսի ծաղիկները», «Քարի շնչառությունը», «Բանաստեղծությունը սահմանից դուրս», «Երգը որպես հանդիպման վայր», «Պոեմ իմ մասին կան 24-ն անց 81 րոպե», «Փակիր աչքերդ՝ չերեւաս» բարձրարվեստ ժողովածուները, որոնք նոր փառք բերեցին հեղինակին: Արվեստագետ-քաղաքացի և բնապաշտ բանաստեղծը որոնեց և գտավ մարդկանց սրտերը հասկանալու առեղծվածը: Բնության երևույթների մեջ գտնելով հասարակության համար անհրաժեշտ կենսական գեղեցկություններ, Վ. Հակոբյանը խոհական-փիլիսոփայական իր խորհուրդներով բացահայտել է մարդկային բարոյականության և անհատի ապրումների ծալ-ծալ աշխարհը: Հուզականության ոլորտներում ներկայացնելով բնությունն ու մարդկանց, նա կյանքը հաստատում է լուսավոր հավատով ու լույսի սերմանումով: Բնության երևույթները, իրերը, առարկաները մարդեղանուն են նրա պոեզիայում, դառնում մարդուն մարդկայնության կոչող անմիջական խորհուրդ, պատմական կենսափորձից ծնված խոհ:

Վ. Հակոբյանի ստեղծագործական խառնարանում շիկացած հորիզոններ կան: Հեթանոսական հեռուներից մեր օրերին հասած արևային սիրով նա օծում է իր սիրտը, և երգը նմանվում է այգաբացին սարի թիկունքից ժպտացող թարմ արևի, որ սրտեր շոյելով, բարձրանում է կիզակետ և ջերմացնում աշխարհն ու մարդկանց:

Բանաստեղծի խոսքը գնալով դարձավ կենսական ապրումների խտացում: Նա խորհում է կյանքոտ, խոսում ջերմ, գրում շողոտ: Ու նրա ձայնը հնչում է յուրովի, առինքնող, խրատական, բայց ոչ քարոզչական:

Արցախ աշխարհի բոլոր գույները խտացված շափաղ են տալիս բանաստեղծի երգերում: Հայրենի օջախի տառապանքից ու լուսից ծնված նրա խոսքը մի դեպքում հնչում է որպես օրհներգ՝ ձոնված տիեզերքին, մյուս դեպքում՝ հողին ուղղված երախտագիտական խոստովանություն: Հայրենի հողի սիրով բաբախող նրա սիրտը փոխվել է երգի:

Վ. Հակոբյանի համար աշխարհն օծված է արևով և սիրով: Նա ամեն ինչի մեջ սեր է տեսնում, նրան բարությանբ են ողջունում ծառերը, սարերը, մարդիկ: Նա երազում է, որ յուրաքանչյուր բացվող օր ծավալվի ու տեր ու տնօրեն դառնա մարդկանց երազներին ու բախտին: Այս առումով նրա շատ երգեր բանաստեղծական խորիմաստ գյուտեր են, որոնցում նա ասես ձուլվում է երկրին, ժողովրդի կյանքին, ապրում նրանց անունով, նրանց համար: Այդ են վկայում նրա հայրենասիրական բոլոր հյուսվածքները, այդ համապատկերի վրա՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրհներգը: Մոր սերն է փառաբանում, թե տազնապում է անձնական սիրո արցախական դրսևորումների ելևէջներում, բանաստեղծը կտակում է անձնուրացության, հավատարմության իր անկեղծ խոսքն ու խորհուրդը:

Արցախն իր գույներով Վ. Հակոբյանի գեղագիտական փիլի-

սովայության ակունքն է: Պատահական չէ 1993թ. տպագրված ընտրանու վերնագիրը՝ «Արցախա ծուխ»: Հայրենի երկնքից մանկության հուշեր ժողովելով, հայրական օջախից առնելով անմարում կրակներ, բնության երանգներով լցնելով հոգու շերտերը, ժողովրդի դարավոր ցավն ու չխամրող հավատն առած սրտի ծալքերում, աշխարհի աչքերին համարձակ նայելով, արդարության խիղճը շոշափելով, Վ. Հակոբյանն ասաց արարելու-սիրվելու, մաքառելու-հարատնելու իր նոր խոսքը: Հայրենիքի հանդեպ ունեցած որդիական սերը նա տարավ դեպի «Տաճարն աստօն» պոեմը, որը միաժամանակ դարձավ նաև նոր ժողովածուներից մեկի խորագիրը: Վ. Հակոբյանը Արցախյան գոյամարտի հենց սկզբից երգի մեջ դարձավ զինվոր, անկախ և ազատ Արցախի պետականության կայացման օրհներգիչը: Այդ նկատի ունենալով, ակադեմիկոս Ս. Սարինյանը գրեց. «Մինչև հիմա բանաստեղծների երգը եղել է Ղարաբաղի մասին, բայց այժմ Ղարաբաղն ինքն է դառնում երգ, և Հակոբյանի ինքներգությունն արդեն Ղարաբաղի երգն է»: Այդ ոչ միայն բանաստեղծություններում էր, այլև պոեմներում՝ պատմական անցյալի և առօրյա հերոսական էջերի համաձուլվածքով: Նրա «Մեսրոպ Մաշտոցն Ամարասուն», «Տաճարն աստօն» և «Գողգոթա» պոեմներով կարող է հպարտանալ ամեն մի տաղանդավոր բանաստեղծ և յուրաքանչյուր քաղաքակիրթ ժողովուրդ:

Վ. Հակոբյանի բանաստեղծական հունձքին պետք է գունարենք նաև նրա «Հայելիներ», «Քո սերը քո տունն է», «Արցախյան բալլադ» պիեսները, որոնք բեմադրվել են Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան թատրոնում և արժանացել հանդիսատեսի ջերմ ընդունելությանը: Անհրաժեշտ է ընդգծել նաև գրականագիտական վաստակը, առանձնապես «Քսաներորդ դարի հայ քնարերգության զարգացման հիմնական միտումները» աշխատությունը, որը ներկայացված է որպես դոկտորական թեզ:

Քառորդ դար է, ինչ Վ. Հակոբյանը ղեկավարում է Արցախի գրողների միությունը: Միաժամանակ նա հիմնադիրն է «Արցախ», «Պըլը Պուղի», «Նարեկ» հանդեսների, «Եղիցի լույս» և «Հարություն» ամսաթերթերի:

Համոզված ենք, որ այսուհետ եւս Հայաստանի գրողների միության Ավ. Իսահակյանի անվան, ԼՂ Կառավարության Եղիշեի անվան, ՀՀ Նախագահի մրցանակի դափնեկիր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Վ. Հակոբյանն ավելի եռանդով ու արգասաբեր է աշխատելու՝ ի փառս հայրենի գրականության, գրականագիտության զարգացման ու հարստացման:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՐՏԱԿԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ

1.

ՌՈՐԵՐՏ ԵՍԱՅԱՆԸ ամեն անգամ հանդիպելով ընթերցողների հետ ապացուցում է ոչ միայն իր գեղարվեստական խոսքի, այլև հայ նորօրյա պոեզիայի զարգացման ու հարստացման անսպառ հնարավորությունները: Այդ է ապացուցում նրա «Չարության ժամանակը» (2011) նոր ժողովածուն, որը ներկայացնում է նրա գտնումների նոր, թարմ փունջը, որով ազգայինը կարող է տանել համամարդկային ասպարեզ և ասել. «Այս էլ մեր հայկականն է, 21-րդ դարի մեր բանաստեղծությունը»: Ի դեպ՝ այս ժողովածուն բանաստեղծի 25-րդ փունջն է, որ նվիրում է մեր պոեզիային՝ երանգների թարմությամբ, աշխարհընկալման դարաբնույթ շերտերով, ազգային կենսափորձից ծնված փիլիսոփայությամբ, արտահայտչամիջոցների զարմանալի բազմազանությամբ, ինքնատիպության ծածանումներով:

Գրքի «Չարության ժամանակը» խորագիրը բազմաշանակ է: Այն առաջին հերթին խորհուրդ է՝ առնչված ազգային ճակատագրին՝ Արցախ-Չայաստան-Սփյուռք ընդգրկմամբ, կյանքի փիլիսոփայական ըմբռնմամբ, հոգևոր ու երկրային կենսական խաչմերուկների հոլովմամբ:

Ռ. Եսայանի պոեզիան ճառագում ու լույսի է փոխվում ազգային ցավից ու հույսից, տառապանքից ու պայքարից: Դա պայմանավորված է հենց իր կենսագրությամբ: Արցախյան պատերազմի զինվոր Ռորերտը, որպես հրետանավոր, ազերի-թուրքերի դեմ մարտնչել է գոյամարտի սկզբից մինչև վերջ, խրամատներում գրած բանաստեղծությունների տողերը ցողել զոհված ընկերոջ համար թափած արցունքներով, շիկացրել հաղթանակի ջերմացնող զգացումներով: Վերքը սպիանում է՝ չի մոռացվում, ցավը մեղմանում է՝ չի անցնում, թշնամին ծնկի է գալիս, բայց չի հաշտվում իր պարտության հետ: Այս իրողությունն է ազատամարտիկ-բանաստեղծին մղել դեպի մարտական պոեզիա, որտեղ մաքառ-

ման ոգին վերածվել է զգոնության, արդարամտության, ինքնա-
ճանաչման ու հզորացման պոետական պատկերների:

Ռ. Եսայանը ստեղծագործում է ազատ բանաստեղծության
հնարանքներով: Մտածողությունը պատկերավոր է, ասելիքը՝
կենսաթրթիռ, ներշնչանքը՝ հուզական, խոսքը՝ անպաճույճ, ընդ-
հանրացունը՝ փիլիսոփայական: Դա վերաբերում է նրա արծար-
ծած բոլոր մոտիվներին՝ պատերազմ թե խաղաղություն, Եսի
աներևույթ տեղանք, թե բառի հորիզոն, արյան հասցե, թե ճանա-
պարհ: Նշենք նաև, որ Ռոբերտի համար չկա նախընտրելի թեմա,
որովհետև ունի ժամանակի զգացողություն և արվեստագետի
պատասխանատվություն երկրի, ժողովրդի և անհատի ճակա-
տագրի հանդեպ: Պատահական չէ, որ գրքի առաջին բաժինը
վերնագրված է «Այս «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» սահ-
մանագծում»:

Ռ. Եսայանը մերօրյա ընթացքը բնութագրում է տեսիլքի և
պատրանքի, միֆի և իրականի գիրկընդխառն նկարագրու-
թյամբ: Նա հոգու ներքնատեսությամբ է բացահայտում մեր ժա-
մանակը՝ կոնկրետ ու խոսուն.

*Բացահայտի՛ր
քո ժամանակը,
ինչպես խորանը խղճի և հավատի,
որտեղ վառվող մոմը Անսահմանի երևացող
մասնիկը չէ,-
քո արյո՛ւնն է կարմիր:*

(«Բացահայտում», էջ 5)

Բանաստեղծ Ռ. Եսայանը գտնում է, որ «Լռությունը սկզբնա-
վորվում է տիեզերախույզ ընթացքով», ուստի պետք է գիտակ-
ցել, որ «Տիեզերքը հիշողության ղողանջների միջով բերում է
հա՛յտը նոր ոգու»: Ոչ միայն այդ: Նա նրբանկատ հայտարարում
է. «Ժամանակը ըմպում է հոգեդարձության առավոտներ» և
«արթնանում է ազատությունը պոեզիայի»: Իսկ պոեզիան, ըստ

նրա, ներքին համակարգ ունի, ունի հոգու դաշտ, ազգային ոգի, հոգևոր վերելք: «Անցուդարձը կյանքի և սոսափը հողի» թելադրում են Ռոբերտին՝ գրելու.

*Կբացվեն պատմության աչքերը
և կընթերցեն կյանքի ճշմարիտ էջերը՝
առանց տարածության ակնոցների:
Դասագրքերի կեղևից ներս կթափանցեն
առավոտները՝
առնչվելով ոգուն ներդաշնակության:
Կպայթեն իրերի պրպտող հայացքները
բողբոջների պես՝
արթնացնելով հույզերը լռության
Այսօր և վաղը:
Կհաղթահարվեն սահմանները ցավի՝
աղոթքներով խղճի:
Կմիանան հեռավորության թևերը
թռիչքներում
հոգու
Այսօր և վաղը...*

(«Այսօր և վաղը», էջ 9)

Ռ. Եսայանը բանաստեղծության միջոցով կրկին ու կրկին հիշեցնում է, ընդգծում, որ թշնամին խարդախ է, ուստի մենք զինադադար չունենք: Այս գաղափարի պատկերավոր հյուսվածքներ են «Պարետային ժամի մագիլները», «Շուշի», «Սունգայիթ», «Պատերազմի հետքերը», «Տարածքը դեռևս հայրենիք չէ», «Ժամանակի պատերը» և այլ գործեր:

Կարևորում ենք շեշտել, որ այդ հյուսվածքները հեռու են մերկապարանոց, ճակատային արտահայտություններից: Այսպես, պարետային ժամի դաժանությունը պատկերելով հանդերձ, նա հայի լավատեսությամբ «Չյունից ելնող ծաղիկը համարում է «Ապագայի կանչ»: Շուշիի փողոցներում լսում է «Պատմության շնչառությունը» և հաստատում.

*Հավատը իմ քայլն է,
Եվ ես կարոտի մոմն եմ վառում
Բրածո
ապրումներիս կիրճում:
Երկինքը կախվում է ծառերից:
Առասպելն է եռում ծիծեռնակի թևերի տակ:*

(Շուշի», էջ 12)

Անդրադառնալով սուևգայիթյան եղեռնագործությանը, Ռ. Եսայանը ազերի-թուրքին բնութագրում է ըստ էության: Սելջուկի թոռը նենգ է, խարդախ, երախտամոռ, ավարող ու ավերող: Հայերի ձեռքերով կերտված քաղաքում ազերին գազանացած «խարույկի բոցերում» վառեց այն ձեռքերը,

*որ կառուցել էին խաչքարեր, տներ, ճանապարհներ
(որպեսզի քոչվորն ապաստա՞ն գտնի քարտեզի վրա...)...*

Ռ. Եսայանը պատերազմը պատկերում է տառապանքից ակունքվող հիշողության միջոցով: Նրա քնարական հերոսի հիշողությունը պատերազմի հետքերը հավաքում է հրեշտակի թևերից ու համոզվում, որ իր անցած հաղթանակի ճանապարհին

*Երազն իր տանիքն է վերանորոգում
իրական կյանքի գազաթնակետին,
երկինքը խոշոր է և աստվածաբույր,
վիրավորների տնքոցից երկաթե
ասուլաներ են թևում...*

*Լույսը դեմք ունի,
հավատ ու ճակատագիր...*

(«Պատերազմի հետքեր, էջ 17)

Պատերազմի աչքերին համարձակորեն նայած բանաստեղծ Ռոբերտ Եսայանի համար շոշափելի, իրական կյանքը նման է առասպելի, որի հերոսն ինքն է՝ իր խոստովանությամբ.

Ես արքուն եմ հպումներից երկնային

Ոգու:

ճակատագրից վեր
մի ժամանակահատված է
իմ կյանքը,
ես ապրում եմ ավելի
իմաստավորված
աշխարհում,
ես ինձնից դուրս եմ
և առնչվում եմ արմատներին
Միֆի...

(«ժամանակի պատերը», էջ 20)

Նրբանկատ գեղագետ է Ռոբերտը: Ոչինչ չի վրիպում նրա աչքից, և ինչ նկատում է, տողերի մեջ փոխվում է փիլիսոփայության: Նա պարզ տեսնում է, թե ինչպես են «Ինքնահաղթահարման լույսից քայքայվում պատերը ժամանակի», շոշափում է «Կարոտների ջրվեժներում շնչասպառ լինող վայրկյանները», արձանագրում, որ

«Ավազների հետ հոսում են բանալիները կյանքի», որ՝ «Ոգու ակունքների վրա նվազում է մի ձեռք», որ՝ «Անհուն առեղծված է»:

Բանաստեղծի և Աստծո միջև տեղի է ունենում գրույց: Նա գեկուցում է Արարչին կյանքի առեղծվածների մասին բանաստեղծական նրբերանգներով.

ճեղքված սիրտ է
երազը,
որից կաթկթում է ճանապարհը:
Ցերեկը
գիշերվա զոհասեղանն է:
Աներևույթ թիրախ է
ապագան:
Ավերակները
պատմության զսպաշապիկներն են:
ճանապարհները

*արյունոտ
փողերն են ճակատագրի,
որոնցից հարություն են առնում թռչունները...*

(«Թռչուններ», էջ 22)

Ռ. Եսայանի պոետական տեսիլքները ակունքվում են կյանքից, կյանքը՝ տեսիլքներից: Նա կյանքը ներկայացնում է որպես ոգու արձագանք, ուր «Լույսը դեմքն է հողի... Առանց հայացքի՝ չի՛ կայանում անգամ պատմությունը»: Ապա զարմանքով հարցնում է. «Մարդը Աստծո ստորագրությո՞ւնն է» ու թվարկում երազները որպես կյանք.

Խաչ, որ ցույց է տալիս Սիրո ճանապարհը...

Զանգ, որ ղողանջում է ցավի ընդերքից:

Երկինք, որ զսպաշապիկ է:

Բանալի, որ հավերժության դուռն է բացում:

(«Անարձագանք ոգի», էջ 30)

Ռ. Եսայանը արդարացի պատերազմը (ինչպես Արցախյանը) համարում է անհրաժեշտություն: Դրանով հանդերձ, ցավով արձանագրում է, որ պատերազմների պատճառով «Իրականության և երազի միջև գոյանում է մի անդունդ...», մարդը՝ դառնում է «իրականության հավելված» և «Մենակության բոլոր ծայրերից քաղում են վարդերը՝ որպես արյան ճիչ»:

«Այս «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» սահմանագծում» բաժնում Ռ. Եսայանը խոսում է ազատամարտին մասնակցած սերնդի անունից, սակայն անթիվ պատերազմների կրակների, 1915-ի Մեծ եղեռնի սարսափների միջով անցած մայր ժողովրդի կենսափորձով հարստացած:

Բանաստեղծությունը, որ կրում է «1915» վերնագիրը, Հայոց համազգային անանցանելի ցավի ճիչ է, որ հնչում է ցասման ուժով. «Պարոնայք, հիշեցեք, ցավի արյունը և պատմությունը երբեք չեն դառնա սակարկության նյութ», ինչքան էլ «խոշոր պետությունների միջև կապերը արյունոտվեն նաև թղթերից», «քա-

ղաքական եղանակները փոխվեն մի հատիկ ստորագրությամբ»:
Աշխարհասփյուռ, քաղաքակիրթ մեր ժողովրդի անունից բա-
նաստեղծը ճշում է.

*1915-ը տարեթիվ չէ լուկ,
ոչ էլ ժամանակ ցույց տվող տապան,
գուցե պարտեզ է, որից քաղեցինք արյա՜ն ծաղիկներ,
և ժամանակը մեզ համար դարձավ Ցավի պատարագ:
1915-ը... Պատմության մաս չէ,
Անդունդ է խղճի,
որի մեջ իրենց դեմքն են կորցրել պատմաբանները:
... 1915-ը լույսի բողոք է
և հիշատակի չխամրող կրակ,
հույսի հանգրվան,
դիմագիծ խղճի,
Չողի խոլ կանչ է, ըմբռնում Ոգու...
1915-ը բռն՜ւնցքն է Ցավի:*

(էջ 25)

Ըմբոստ ոգու, ինչպես նաև ազգային հպարտության արտա-
հայտություններ են «Ստեփանակերտ», «Չիշողության առնչու-
թյուններ», «Արցախ», «Բարի լույս անուն և... հիշողություն»,
«Տառապանքի ածուխով գրում են տողերը կյանքիս» և այլ
պատկերավոր հյուսվածքներ:

Քայլելով պատերազմական հիշողությունների ճամփաներով,
Ռ. Եսայանը շոշափում ու տնտղում է «Տառապանքի ոտնահետ-
քերը», որոնցից «ծլո՜ւմ են հատուկենտ օրեր» և «դառնում մա-
զաղաթի թերթեր»:

Փետուրներով սրբելով ներշնչանքից թափվող տազնապը, վեր-
հիշելով արյունոտ ճանապարհը, նրա քնարական հերոսը էպոսա-
յին դյուցազմի պես փնտրում է «Ոգու հասցեն» և բացականչում.

*Ես ծաղկո՜ւմ եմ ծյուղերով Անհայտի.
- Բարի լույս, ճանապարհ և հավերժություն,*

*ինձ վերադարձրո՞ւ իմ շնչառությունը,
և քո խորքում մի պահիր այլևս իմ հավատը՝
իբրև պատահող:
Բարի՛ լույս, անուն և հիշողություն...*

(«Բարի լույս, անուն և հիշողություն», էջ 50)

Կյանքից փնջելով իր երագ-տեսիլքները և դրանք օծելով բանաստեղծական ոսկեփոշով, Ռ. Եսայանը միաժամանակ բնութագրում է աստվածային այն պարզևը, որ կոչվում է պոեզիա և ընդգծում. «Պոեզիան հոգևոր քարտեզն է դարի... ոգու կշիռն է անտես նժարներում»: Պոեզիան բառ-ջրհոր է, որից հարություն է առնում անապատը.

*Պոեզիան վերք չէ՛, ե՛լք է փակուղուց,
պոեզիան հերկ չէ՛, տարե՛րք է քարի.
Իսկ այս երկինքն էլ լուսանցքն է դա իր,
որտեղ նշո՞ւմ է կատարում Աստված...
Պոեզիան հոգևոր քարտե՛զն է դարի:*

(«Պոեզիա», էջ 54)

Աշխարհի բոլոր մեծությունները հաստատել են, որ կյանքից, ժողովրդի ճակատագրից դուրս պոեզիա գոյություն չունի, միայն թե բանաստեղծական խոսքը լինի պատկերավոր, անմիջական, ոգու և սրտի միաձույլ արտահայտություն, դառնա ժամանակի շունչը և օգնի ընթերցողին՝ սիրել կյանքը, բացառել չարը, ատել թշնամուն ու մաքրել ներկան ու հավատի լույսով քայլել դեպի նոր հորիզոններ: Իսկ դրա համար խաղաղ պայմաններ են պետք, որը դեռևս երագ է առանձնապես մեր ժողովրդի համար: Ահա թե ինչու մեր գրականությունը պետք է շարունակի մնալ մաքառման իր դիրքերում՝ վառողը չոր պահելու կոչով: Հենց այս ճշմարիտ գաղափարի արտահայտություն է Ռ. Եսայանի բանաստեղծական վերոնշյալ շարքը, որի խոսուն պատկերներից մեկը «Այս «Ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» սահմանագծում» երկն է, որ բերում ենք ամբողջությամբ.

*Հորիզոնի դեմքը օրորվում է հիմա
տազնապի փոշոտ ցողունի վրա:
Ջինվորն իր ստվերին խրամատաձև
փորագրում է մի վարդ:
Արծիվներն իրենց բույնը շինում են
Ապագայի թիրախներում:
Սպանել գեղեցիկի ոգին՝
անհնար է,- ասում են մրջյունները
համաեռո՞ւն աշխատանքով:
Կաթիլը երկնքից կախվում է,
Ինչպես կրծքի պտո՞ւկ:
Նկարիչը բացահայտո՞ւմ է
ոգու և սիրո ևս մի երանգ
այս «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ»
սահմանագծում:
Հորիզոնի դեմքը օրորվում է հիմա
տանգապի փոշոտ ցողունի վրա:
(էջ 40)*

Մեր ժամանակակցի բազմերանգ ապրումների թարմ ու կենսաթրթիռ մի կոլլաժ է ժողովածուի «Իմ արյունն իմ հասցեն է և իմ ճանապարհը» պոեմը:

Մենք պոեմը կոլլաժ համարեցինք այն առումով, որ նրանում ի մի են բերված քնարական հյուսվածքների մի մեծ շարք, որոնք մի ամբողջություն են կազմում: Այն կառուցվածքով հիշեցնում է Ավ. Իսահակյանի «Ալազյազի մանիներ» պոեմը, միաժամահակ նաև բովանդակությամբ ունեն առնչություններ: Դա բացատրվում է նրանով, որ և՛ Վարպետի, և՛ Ռ. Եսայանի պոեմները ստեղծվել են մեր ժողովրդի պատմության համարյա միևնույն ճակատագրական հրամայականով : Վարպետի «Ալազյազի մանիները» 1895-1897 թթ. ողբերգական դեպքերից հետո հայ ժողովրդի գոյատևման հրամայականով է գրված՝ երազի և տեսիլ-

քի պատկերով, Ռոբերտի պոեմը Արցախյան ազգային-ազատագրական գոյամարտի արդյունք է՝ «Հարության ժամանակի» թելադրանքով: Վերացական և արիեստական չէ այս համեմատությունը: Պարզապես դա բխում է մեր ժողովրդի ճակատագրից: 19-20-րդ դարերի վերջին տասնամյակները մեր ժողովրդի պատմական ընթացքի մեջ նույն իրադարձությունների կրկնությունն են՝ Արևմտյան Հայաստանում Սուլթան Համիդի և երիտթուրքերի, իսկ Արցախում՝ Սուլթան Համիդի ազերի ժառանգորդների կազմակերպած հայկական ջարդերով ու բռնագաղթերով:

«Իմ արյունն իմ հասցեն է և իմ ճանապարհը» պոեմը յուրահատուկ երանգների փունջ է: Սյուժե չունի, գրված է քնարական շնչով՝ փիլիսոփայական ընդհանրացումներով: Այն հասուն գրչի արդյունք է, որի մասին կարելի է խոսել գնահատման ամենախիստ չափանիշներով:

Պոեմն սկսվում երազի պատկերով: Քնարական հերոսը բացում է ժամանակի «Ցավահարույց դռները», «Հղկում հայացքը ճանապարհի որպես դիմաքանդակ», «Վառում լապտերը խղճի» և հաստատում, որ «Տիեզերական ելք է» իր ճանապարհը, իսկ ճանապարհի ճիչը հիշողության հաց է:

Ազատամարտիկ բանաստեղծը, բնութագրելով ժամանակը, ընդգծում է.

*Ունայնության հետքերի վրա
պառկել է ստվերը պատերազմի,
և նրանից... ելնում են շիվերը
խաղաղության: (էջ 168)*

Այս տեսանելի հորիզոնի վրա նա շոշափում է «ստվերներում հասունացող լույսը... Միֆի խոռոչներում հունդի փոխվող հույսը» և շեշտում.

*Անունս հողաբեկոր չէ, որ քայքայվի...
Անունս տիեզերքի շնչառությո՜ւնն է:
(էջ 169)*

Ապա ձեռքը մեկնելով ապագային, վստահ իր ուժին ու գործին, հայտարարում է.

Իմ արյունն իմ հասցեն է

և իմ ճանապարհը,

...Չարդանախշ չէ

ոտնահետքս,

այլ ակո՛ւնքը աղբյուրի:

(էջ 177)

Պոեզիայի և բառի քննարկումները ժողովածուի առանձին հյուսվածքներում նվիրված են արվեստի փիլիսոփայությանը: Նրանցում արծարծվում են բանաստեղծի աշխարհընկալման և մետաֆորի ընդգրկման բարդությոն ու գույները: Ժամանակակից տրոհված աշխարհի խաչմերուկներում նա նկատում և ներկայացնում է մի կողմից կենսական հակասությունները, մյուս կողմից՝ աստվածային այն ներդաշնակությունը, առանց որի դժվար է պատկերացնել և կյանքը, և՛ այն գեղեցկացնող երանգները:

Ռոբերտն իրեն դրսևորում է որպես բառի որսորդ, բառ, որ դուրս գալով բառարանների պատյանից, դառնում է սիրտ, հոգի, երազ, սուր, սեր, հաց, մահվան բոթ, մանկան ճիչ, ներկան ապագային կամարող ծիածան: Այդ միտումն է բանաստեղծականացված գրքի «Եվ հորիզոնից քամվում է բառը՝ նուռը երկնքի» բաժինը: Սակայն բառի բնութագրումներն ինքնանպատակ չեն և ներկայացված չեն մեկուսի: Ռ. Եսայանը բառերի աշխարհն ու գեղագիտական արժեքը արծարծում է «տիեզերական սկավառակի վրա», «Սուրող Աստղերի խորհուրդներում», «Երկվության միջանցքներում», «ազատության դաշտերի փեշերին», «Ժամադրության կարոտի մեջ» և այլն: «Բառը պատյան չէ, ժամանակ չէ, այլ ճանապարհ», - գրում է նա: Ահա և բառի առանձին բնութագրականը.

Դուրս գալով բառարանից՝

բառը հայտնվում է որոգայթում ազատության:

Թեև ազատության համար բառն էլ նույն բանտն է,

որ չունի պատուհան:

Ունի լուկ կեղև, որ դեռ չի՝ ճեղքվել արևածագով:

Մինչև չդառնա իր և աշխարհի համար նա կորուստ,

չի՛ ունենալու Տեսք ու Դիմագիծ,

չի ունենալու Ելք ու Ներաշխարհ: (էջ 116)

Ռ. Եսայանը հաղորդում է, որ «բառը տիեզերքից Ոգի» է առնում, «Սրբագործում տարերքը նահատակների», «Ժամանակի հարության ընթացքում երկնում է բառը»:

Ռ. Եսայանի համար նույն ընթացքի մեջ են իրականն ու պոետականը, սակայն պոետականն իրականի պատճենը չէ, այլ փիլիսոփայությունը: Այստեղից էլ ժողովրդական թևավոր մտքեր պարունակող նրա խտացումները: Այսպես. «Ծաղկել է ձյունը շուրթերին այգաբացի», «Հոգեդարձության առավոտներ է ըմպում ժամանակը», «Լույսն արյան սարսուռ է ու անհայտի շեն», «Լույսը դեմք ունի, հավատ ու ճակատագիր», «Կարոտը բույն է հյուսում երազի թևերի վրա», «Ցավի զսպաշապիկ է ճանապարհը հույսի», «Գրիչը հայացք ունի», «Իմ և Աստծո միջև ծաղկում են ծառերը», «Ճանապարհը Անհունի ծաղկող ճյուղ է», «Ծառը հուշ է թևավոր», «Անհայտը շենն է չճանաչված աշխարհի», «Հույսը հունդ է դառնում խռոչներում միֆի», «Հոգիս տիեզերքի բանալին է», «Ծաղկամանում չեն տեղավորվում արմատները երկնքի», «Որտեղ կյանք կա, այնտեղ մահն է ասպատակում», «Խոսքի հետ նաև վերածնվում է դեմքը ժամանակի», «Ինձ առաջ է տանում հավատը» և այլն:

Ռ. Եսայանի մտածողությունը թարմ պատկերների համակարգ է: Բավական է գրախոսվող գրքից բերել առանձին համեմատություններ և համոզվել դրանում: Այսպես. «Պահածոյացող հայացքների մեջ մեռնում են շողերը, ինչպես ձկները՝ ավի նետված», «Կարոտը, իբրև լույսի սյուն, ընդգծում է հանգրվանները հոգուս», «Մեղքի հետքերը, ինչպես թղթադրամներ, դուրս են մնացել գործածությունից», «Արցախ, երկիր, ուր քարն է հոսում,

ինչպես արյան ճակատագիր», «Վախը ընկնում է իմ դեմքից, ինչպես ծառի ճյուղից՝ կաթուկը հասած», «Իմ մեջ հասունանում է հորիզոնը, ինչպես միրգ», «Աշխարհի ամեն կետի վրա ազդող հայացքս ծակծկվել է զինվորի վերնաշապիկի պես» և այլն:

Ռ. Եսայանը կարողանում է ընդարձակել իր բառապաշարի սահմանները: Օգտվում է հնաբանություններից, բարբառային բառերից, ինչպես նաև ստեղծում է նոր բառեր: Այսպես, նորաբանություններ են նրա ստեղծած հետևյալ բառերը. տիեզերահաղորդ, պողպատաոխ, լեռնաբազուկ, սմբակակնիք, ավանդաշուք, հայացքաչափ, հյուրահոտ, պատրանքազերծ, մերժումածև և այլն:

Ռ. Եսայանի պոեզիան զրույց է մարդու և Աստծո միջև, կենսահաստատ է, ազգի և մարդու արժանապատվության ու մաքառման կոչ, ժողովրդասիրության, անհատի անձնական երջանկության խորհուրդ, զինվորյալ-քաղաքացու երդում ոչ միայն հայրենիքի, այլև հոր, մոր, ընտանիքի, որդու առջև, հավատի ձեռք՝ դեպի լուսավոր գալիք: Այն միաժամանակ 21-րդ դարի պոեզիա է՝ «ճախրող թևերով», ինչպես ինքն է բնորոշում՝ դիմելով երգչին.

*Բանաստեղծ, հետքերդ վերածնության անդրադարձներ են,-
Որտեղ էլ հառնես՝ դու Անսահմանի շնչառությո՞ւնն ես,
Քո բառը՝ ոգի, գրիչդ երազի կրակարա՞ն է,
Ցավի պես ինքդ քեզնից բարձրացող նորելուկ ա՞ստղ ես,-
Բանաստեղծ, հետքերդ վերածնության անդրադարձներ են:*

2.

ՆՈՐԵԿ ԳԱՍՊԱՊԱՐՅԱՆ - բանաստեղծի **հայրենական երգը** ծնվեց կրակների միջից: Նա Արցախյան ազգային-ազատագրական պատերազմի անմիջական մասնակից է՝ որպես հեռուստալրագրող: Նա իր հայրենապատումի մեջ ցավով է խոսում լքված գյուղերի, պապենական օջախների մասին: Ն. Գասպարյանի հայրենապատումի փիլիսոփայությունը «երկիր» հասկացու-

թյան բնութագրումն է, նա լավ է հասկանում, որ տարածքը հայրենիք է կոչվում նրանում ապրող եւ այն շենացնող ժողովրդով: Լինելով պատերազմական հրդեհներից ավերված հայրենի գյուղերում՝ բանաստեղծի սիրտը ճնշվում է, սակայն չի հուսալքվում.

*Գյուղ է լքված ու լուռ է,
Խոտը բուսել է կալում,
Մի հավ թուխս է, տխուր է,
Որ որբուկ ճտեր է պահում:
Տուն է, տանիքը փակ է,
Մկները հատակ են պեղում,
Սարդերի հյուսած ցանցի մեջ
Ծաղիկ է աղերսում մեղում:*

(Ն. Գասպարյան, Հավատ Արցախի, էջ 21)

Ճիշտ է, բանաստեղծի այս հյուսվածքի մեջ թախծի ու տագնապի զգացումն է նկատվում, սակայն նրանում երանգվում է նաեւ լավատեսությունը՝ հայրենի գյուղը վերակերտելու եւ շեն դարձնելու իղձը:

Արցախը ոտքի է ելել վերամիավորվելու մայր Հայաստանին: Սակայն նենգ «հարեւանը» կազմակերպեց Սոււմգայիթի, Բաքվի, Գանձակի, Մինգեչաուրի եւ այլ բնակավայրերի հայության ջարդը: Այդ չարագործությունը թելադրեց մեր պոետներին՝ չհավատալ թուրքին, մարտնչել եւ՝ երգով, եւ՝ զենքով, միշտ լինել զգոն:

«Հավատ Արցախի» ժողովածուն խոսում է Ն. Գասպարյանի հայրենապատումի ինքնատիպության մասին: Այդ առանձնահատկությունը բխում է քնարական հերոսի վճռականությունից: Նա չի հաշտվում Արցախի անորոշ վիճակի, վտանգված ճանապարհի հետ, ուստի ելնում է պայքարի:

«Հավատ Արցախի» գիրքը բացվում է «Կեսօր» շարքով: Այն քնարական պոեմի տպավորություն է թողնում: Հետաքրքիր է Ե. Չարենցից բերված բնաբանը՝ «Խորհուրդ չի ընդունում ապագայի երգը»: Անդրադառնալով մեր պատմական անցյալին՝ բանաստեղծը նրանից փնջում է լուսավոր երազներ, հաստատում ներկան, հա-

վատով նայում գալիքին: Բանաստեղծը գիտակցում է իր անելիքը, «Ցնծության օրորոցներից» ելնում է՝ կորցրածը գտնելու համար.

*Ես չեմ կասկածում,
որ կըփոխվի կյանքում ինչ-որ ձեւ,
Մեկ է, կհիշեմ,
որ տանս սյուն է պակասում մի նոր,
որ ժամանակն է հին դուռը փոխել:*

Նույն տեղում, էջ 14:

Զգալով «արյան ցավը»՝ բանաստեղծը կոչ է անում չլքել երկիրը, խտացնել նրա արեւի լույսը, լսել արդարության ձայնը: Դա ժամանակի շունչն է, որ զգացվում է «Ծնունդը ցավի», «Ծնունդն անքնության», «Ծնունդը տագնապի», «Ծնունդն անտարբերության», «Ծնունդը տխրության» հյուսվածքներում: Նրանցում ընդգծվում են աշխատանքի, ուժի, հավատի, կարոտի, լույսի, ներշնչանքի ծփանքները:

Ն. Գասպարյանի հայրենապատումը հողաբույր է, հուշերն առնչված են հայրենի օջախների, նրանցում եղած մասունքների հետ: Դրանք մի կողմից կարոտ են ընծայում քնարական հերոսին, մյուս կողմից կոչ անում մարտնչել հանուն հող հայրենիի փրկության:

Ուշադրության արժանի է նաեւ «Ճեղքված կեղեւ» պոեմը, որտեղ տարբեր պատկերների միջոցով բանաստեղծը բացում է սիրտը ժողովրդի առջեւ, երգվում մինչեւ կյանքի վերջը լինել նրա ազնիվ զավակն ու քաջարի զինվորը:

* * *

1988 թվականից սկսված Արցախյան գրական ընտանիքի առաջ ծառայած գրականության մի հիմնախնդիր, որ մինչեւ այդ դրա մասին հնարավոր չէր խոսք անգամ ասել, որովհետեւ Արցախում ապրող եւ ստեղծագործող հայ գրողները քառակի մամլիչի տակ էին՝ ԽՄԿԿ Կենտկոմ՝ տոտալիտար ու քարացած իր գաղափարաբանությամբ, Ադրբեջանի հայատյաց իշխանություն, ՊԱԿ եւ ԼՂ մարզկոմի սատրապներ: Արցախում հայոց ազգային-ազա-

տագրական շարժման շնորհիվ հայ գրողի 70 տարվա փակ լեզուն բացվեց, ազատասիրության, հայրենասիրության մոտիվները շոշափվեցին համարձակորեն՝ գիտակցելով, որ Ադրբեջանը պետք է պարտադրի պատերազմ՝ Արցախի ավանդական տերը հանդիսացող հայության դեմ: Ահա նման իրադարձությունների արդյունք հանդիսացավ Ն. Գասպարյանի ոչ միայն սոնետների շարքը, այլև «Պատերազմ» ստեղծագործությունը, որ հեղինակը բնութագրեց որպես հավերժ անավարտ պոեմ:

Հայ ժողովուրդը դարերի ընթացքում երբեք ուրիշին պատերազմ չի պարտադրել, բայց միշտ պատերազմներ է մղել հզոր ու նենգամիտ հարեւանների դեմ, եւ մեր ամբողջ գրականությունը հյուսվել է անվերջանալի մաքառման գաղափարով: Նորեկը ճիշտ ու տեղին է գտել բնութագրող իր ենթավերնագիրը:

Որպես բնաբան, Նորեկը բերել է Ավետարանական-մարգարեական այն խորհուրդը, որ ասես պատգամվել է հենց մեր ժողովրդին: «Որովհետեւ օրեր կգան քեզ վերայ, եւ քո թշնամիներդ չորս կողմովդ պատնեշ կկապեն եւ կպաշարեն քեզ եւ ամեն կողմից քեզ կնեղացնեն: Եվ հիմնահատակ կանեն քեզ, ու քո որդիքն էլ քո միջումը: Եվ չեն թողնի քար-քարի վրա, որովհետեւ չճանաչեցիր քեզ այցելության ժամանակը»: Եվ եկավ ժամանակը՝ ճանաչելու իրեն եւ բարձրացնելու սուրը՝ թշնամյաց դեմ:

Օգտագործելով հնչերանգի հռետորական հարցի տեսակը՝ խոսքի հուզական շեշտվածությունը բարձրացնելու նպատակով, Ն. Գասպարյանն ընթերցողին տեղափոխում է պատմական անցյալ, որտեղ դաժան թշնամիներն ավերել են անտիկ ու պարսպապատ մեր երկիրը, թալանել լինելության գաղտնիքները խոր:

*Այս ինչպե՞ս եղավ, որ մեր դաշտերի ցորյանը լիկեց,
ջրի համ ստացավ կարասների մեջ գինին մոլեգնող,
հին տների մեջ ծաղկող բարբառը հազավ օտար շոր,
մութ փողոցներում թափառում են դեռ մանուկներ որբուկ:*

(էջ 34)

Բանաստեղծը ցավով նորից վերհիշում է հողի տակ թաղված մեր հոյակապ տաճարները, գմբեթներից գլորված զանգերի, սարսափի նկուղներ նետված իմաստուն մտքերի ճակատագիրը եւ ընդգծում, որ իրեն «բաժին հասավ երկիրն այս փոքրիկ ու պատառոտված», երկիր, որտեղ խաչքարերը ջարդված են, «մեր բառերը էլ չեն դողանջում», եւ իր երկիրը չի ճանաչում:

Սակայն խոսքը չի վերջակետվում. բանաստեղծ-քնարական հերոսը նշում է, որ «պատերազմը սկսվել էր վաղուց», որի հետեւանքում «գոմեշների պինդ կճղակների տակ տրոփում էր հիշողության չոր աղաղակը, տրորվում էին սերմեր, տրոփում էր նաեւ միտքը: Դեռ ավելին, պատերազմը սկսվել էր վաղուց.

*երբ ցեղս ազնիվ չարչարանքի մեջ ու տիեզերքում
դեռ որոնում էր լինելության ուղին դժվարին...*

երբ օրորոցի կողերը կլոր

չարունակում էին փափկել մանչուկի ձեռքի հպումից,

*երբ դաշտեր տանող տաք ճանապարհին չէր միջահատվում երթը
ծանրաբեռ սահող սայլերի,*

եւ շինականի ավերը ճաքած շողերն արելի,

ապագա բերքի հետ էին խառնում... (էջ 30)

Ն. Գասպարյանը ճշմարիտ պատկերներով մատնացույց է անում մեր լեռնաշխարհին հասած հարվածները, որի հետեւանքով երկրի տիրոջը վռնդել են «իր ակունքների դմներից կանչող եւ ավերել են ճանապարհները մեծ վերադարձի»: 1989 թվականին, երբ երկրորդ տարին էր, ինչ մեր ժողովուրդը դեռեւս հավատում էր Խորհրդային Միության վերադասին, եւ ոտքի ելած ժողովուրդը վանկարկում էր. «Լենին-Պարտիա-Գորբաչով», բանաստեղծը, որպես ըմբոստության արտահայտություն, գոչում է.

Ո՞վ եմ ես հիմա, մի գոհ խղճալի ու ոգեկորույս,

դարի վերքերում հազիվ նշմարվող մի թշվառ ներկա,

նեղ նրբանցքներում ծույլ-ծույլ սողացող մի թանձր ստվեր,

Ո՞վ եմ ես հիմա... ես աքսորյալ եմ, ես վաղուց չկամ:

(էջ 37)

Բանաստեղծի այս ինքնաժխտումը հուսալքության արտահայտությունն է, այլ ցավի բարձրագույն ճիչ, որ մղում է դեպի ռազմի Աստծուն, դեպի ռազմի դաշտ:

Ն. Գասպարյանն իր «Ձվարճալի պատմություններ հորինողը» ժողովածուի առաջաբանում ընդգծում է հայրենի հողի քաղցրությունն ու նշանակությունը անհատի եւ ժողովրդի կյանքում: Նա բերում է մի զրույց երկու բանաստեղծների միջեւ. «Ես վերջերս սովորական ջրից հողի հոտ եմ առնում»: Խոսակիցն ավելացնում է. «Մարդ ինչքան ծերանում է, այնքան մոտենում է հողին, էդ հոտը դրանից է»: Զրուցակիցներից առաջինը ծեր է, երկրորդը՝ ավելի ծեր:

Այս երկխոսությունը Ն. Գասպարյանը բերում է որպես բաց դաս, որն իր բանաստեղծական շարքերում առնում է ճախրանքի թելեր, դառնում հայրենապատումի պատկերավոր իմաստություն եւ ընթերցողին թեւանցուկ՝ տանում հայրենի օջախներ, հանդ ու անդաստաններ, դաշտեր ու սարեր, եւ ոչ միայն այդ, միաժամանակ նշում, որ այդ ամենը պետք է պաշտպանել, պահպանել եւ կտակել սերունդներին:

Ն. Գասպարյանի հայրենապատումը միագիծ ու ճառային է, ինչ ասում է՝ պատկերավոր է, ինչ հրամցնում է՝ պոետական տարբեր հնարանքներով, ձեւերով, բանաստեղծական զանազան տեսակներով: Նորեկն իր ասելիքն ավամեջ է դնում հոգեբանական երանգավորումներով: Եվ դա հաջողվում է նրան: Ուղղակի ասենք, որ Նորեկը հասել է մի սահմանագծի, որ ուղիղ տանում է ընթերցողի սիրտը:

Նորեկն ունի հյուսվածքների մի շարք՝ «Վերջին մարտը» խորագրով: Այն բաղկացած է 14 սոնետից:

Ավելորդ չեմ համարում ներկայացնել սոնետի ժանրային առանձնահատկությունները: Սոնետը իտալերեն նշանակում է հնչել-հնչյակ: Այն բանաստեղծության կայուն ձեւ է՝ բաղկացած

14 բանատողից, սկզբում երկու քառատող տուն, ապա՝ երկու եռատող տուն, տարբեր հանգավորմամբ:

Սոնետի վարպետներից են վերածնության դարաշրջանից՝ Ռանտեն, Պետրարկան, ապա Շեքսպիրը: Գոյություն ունի «սոնետների պսակ»՝ կազմված 15 սոնետներից, յուրաքանչյուր սոնետի վերջին տողը դառնում է հաջորդ սոնետի առաջին տող, իսկ վերջին՝ 15-րդ սոնետն ստեղծվում է նախորդ 14 սոնետների առաջին տողերից:

Հայ գրականության մեջ սոնետն արմատավորեցին Վ. Տերյանը, Ս. Մեծարենցը, Վ. Թեքեյանը, Ե. Չարենցը եւ ուրիշներ:

Ն. Գասպարյանը, յուրացնելով սոնետի կառուցվածքն ու պատմական յուրահատկությունները, հասել է նպատակին: Շարքի մտահղացումն ինքնին հրաշալի է, այն առումով, որ քնարական հերոսը, իրեն ներկայացնելով որպես այլ մոլորակի բնակիչ, երակների խորքում զգում է օտար հառաչանք՝ նշելով. «Ես մե՜նակ եմ, չունեմ այս աշխարհում ոչինչ»: Մե՜նակության զգացումին գումարվում է շրջապատի վերաբերմունքը, նրան «հալածում են... խնջույքներից հուշի», «խոհի ակոսներից բերրի», սակայն երեւան է գալիս սփոփիչը, ինչպես եզրափակում է հեղինակը.

*Բայց վերքերիս վիհից, որպես կապույտ հուզում,
դուրս է գալիս մի եզ՝ դանդաղաշարժ ու սեզ,
դուրս է գալիս մի եզ ու վերքերս լիզում...*

(էջ 18)

Եզան պատկերը սիմվոլիկ է: Այն անցյալի խորհրդանիշն է, ուստի սոնետաշարքի հեղինակ-հերոսը նրա հայացքում տեսնում է «խեղված, կիսակործան օրեր եւ հողի մեջ խրված զանգակների ուղերձ»: Պատմական անցյալի ձայնն ասես սթափեցնում է քնարական հերոսին, վերհիշել տալիս օջախների տաք շունչը եւ առաջացնում ավստոսանքի ապրում.

*Ո՞ւր են հիմա նրանք՝ կորուստներից կքած
այրը ոսկեմատիկ, վարպետները հսկա,
մի՞թե էլ չի դառնա զորքս հաղթանակած... (էջ 19)*

Բանաստեղծը հաղթանակած զորքի տեսիլքային աչքերի մեջ ուզում է տեսնել «ցեղի ցնծությունը... տվայտանքը հպարտ, հոգեվարքը զոհի եւ կտակը կարմիր ամեն անհատի»: Եվ նրա հոգու աշխարհը բացահայտվում է ապրեցնող շեշտերով, նա երագում է, որ «պտղի միտքը զինվորյալի, ծաղկի հույսը... երերա դաշտը նժույզների վարգից եւ... զնգա փառքը մանուկների խոսքում»:

Վերհիշելով երկրի ապրած դարամորմոք զառանցանքը, հին երախտավորներին՝ քնարական հերոսը նորից մտորում է.

Մնացել եմ անզեն ես մեմության ափին...

կիսակործան ու թույլ եւ չզիտեմ, բնավ,

կենդանի՞ է, արոյոք, իմ ծվարված ոգին...

(էջ 20)

Սոնետից-սոնետ շարունակվում է հարցադրումը, որոնում պատասխանը, ապրում ոգու բռնկման պահեր:

Ուրքերի տակ զգալով երկրի լքված փողոցների շունչը, ցավի ճիչը, քնարական հերոսը, ասես, գտնում է իրեն եւ նշում.

Բայց չեմ զգում ես ցավ, ոչ էլ մահվան սարսուռ,

ես չեմ ճչում վախից, ծիծաղում եմ մոլի,

Ինձ թվում է՝ օտար մի մարմին եմ տանջում...

(էջ 21)

Չարենցյան «Դանթեական առասպելի» ցավը նորովի է զգում Նորեկը եւ ներկայացնում ինքնատիպ պատկերներով: Այնտեղ, սպիների խորքում որոնում են խաչեր, այրում են անտիպ մատյաններ, հոգեվարքը խելառ է, զառանցանքը՝ դեղին, հիշողության զենը դահիճների ձեռքին է: Ի՞նչ է մնում անել: Լսենք հեղինակ-հերոսին.

Ես բացում եմ դուռը սքեմաձեւ խցի,

արձակում եմ ազատ ճգնողներին բոլոր

ու զնում եմ դեպի իմ զինվորը վերջին: (էջ 22)

Ն. Գասպարյանի բանաստեղծական պաթոսը զգոնության կոչ է, մաքառման խորհուրդ, պայքարի ոգի: Ջինվորը չպետք է լինի «հալածական ու մերկ, այս աշխարհից խռով, մեղսագործի քայլ-

քով, մեղանչողի նման»: Քնարական հերոսը հոգու թելադրանքով վճռում է.

*Ես թողնում եմ ճամփիս հանցանքներս դաժան,
հալածում եմ ինձնից վհատության փոշին
եւ սպասում եմ անգութ պատերազմին վաղվա: (էջ 23)*

Կարդում ես Նորեկի սոնետները, ջերմանում գաղափարահուզական շեշտադրությամբ, վերհիշում Խրիմյան Հայրիկի կոչը՝ ունենալ երկաթե շերեփ, Գարեգին Նժդեհի Վարդանված աննախադեպ հավատը՝ ժողովրդի սեփական ուժի հանդեպ, որի վկայություններից է 7-րդ սոնետի քառատողը.

*Ես սպասում եմ հանգիստ, հավատի մեջ իմ տան,
հավատի մեջ գրչի, տաք ակոսի ներսում,
քանդակելով խաչեր ժեռ նտքերի դենքին
եւ սանձելով մի կերպ հղացումները բազում:
(էջ 24)*

Քնարական հերոսի ճանապարհը որոշ է դառնում: Նա, կրելով ժողովրդի ճակատագիրը, շարժվում է՝ կարմիր ժամանակին հլու, հաղթահարելով ամեն տեսակ դժվարություն, վճիռը դառնում է շոշափելի.

*Ավերում եմ ցավի պարիսպները բոլոր,
Ինձ ընծայված փառքի փորակները դատարկ,
որոնում եմ ոգիս դեռ մխացող դաշտում
եւ աքսորված արթուն շիրիմները ճերմակ:
(էջ 25)*

Բանաստեղծի ընթուստությունը շիկանում է, քանզի չի հաշտվում ոչ տիրակալի հայացքի, ոչ էլ կյանքի կողմնակի կանչերի հետ ու «չի թողնում ճամփին պարտվածներին անտուն»: Քնարական հերոսի հայացքի աջել՝

*Վերծանվում եմ գծեր, տառ ու ծեսեր վայրի,
հաղթանակներ մռայլ, արշավանքներ հզոր,
եւ ելնում եմ ինձնից օրենքները գոյի... (էջ 26)*

Փողոց ելնելու կոչն է թեւածում, «հազարերակ ու տաք» սերմեր
ցանելու իղձն է բողբոջում, եւ անարդյունք չեն անցնում դրանք.

*Եվ կանգնում է կողքիս հազար անտուն ու խեղճ,
համբուրում են աջս, քղանցքներս փոշոտ՝
ինձ պատմելով դեպքեր խրախճանքից անձեւ,
Եվ փռում են իմ դեմ հիացական կանչեր
եւ հայտնում են իրար, փսփսում են վախով.
- Ժամանել է տերը, դարպասները բացեք...*

(էջ 27)

Ն. Գասպարյանի սոնետների շարքը ժամանակի եւ տարածու-
թյան գրականագիտական լուծման հաջող օրինակ է: Դարերի եւ
տասնամյակների իրադարձությունների գեղարվեստական
պատկերումն ընթանում է իրականին եւ ռոմանտիկականին գիր-
կընդիսառն: Նրանում հանդես է գալիս հեղինակը, ուստի գրողի
անձնավորության եւ կյանքի հասկացությունների պատկերն ըն-
թերցողին տանում է դեպի անցյալ եւ այնտեղից դեպի մեր օրե-
րը: Սոնետների շարքում հանդես եկող բանաստեղծը խոսում է
որպես ժողովրդի ճակատագրի կրող՝ բարոյական, մտավոր, հու-
զական զարգացման ելակետերով: Հենց այստեղ է, որ գրողի
ներկայությունը հնարավորություն է տալիս տեսնելու եւ զգալու
քնարական հերոսի եւ՝ հոգեբանությունը, եւ՝ տրամադրությունը,
եւ՝ միտումը: Այսպես, բանաստեղծ-քնարական հերոսի ճանա-
պարհին փոփոխված ժամանակը նպաստում է ի տես բերելու
նրա միտումը: Այդ նոր ժամանակ-տերն է, որ

*Չի կամենում տեսնել իշխաններին անբան,
Ծույլ այրերին՝ բռնած անկունների շղթան:
ակոսներում չոքած մշակներին պարապ,
երանելուն՝ անհոտ, թագավորին՝ անթագ:*

(էջ 28)

Դարի կնճիռներից սրբելով փոշին՝ ժամանակը «աղոթում է ան-
խաչ ու խոնարհված վանքում...»: Ուշագրավ են բանաստեղծի

բնութագրումները անխաչ աղոթելու մասին: Հեղինակը դրանով նշում է, որ երբեք չի կարելի մոռանալ դարավոր այն ավանդույթները, որոնցով ներկայանում է ազգը իր քրիստոնեական աղոթքներով ու սրբագործված խաչով: Իսկ ո՞վ էր նա, ի՞նչ էր ուզում.

*Նա մի այր էր ազատ, նա մի այր էր ազնիվ
եւ չէր ծնկում անզոր սին հավատի առաջ,
ուղեկցում էր նրան միշտ աստվածը ռազմի:
Հիմա փլվել անուժ սնուտիքին այդ թաց,
հիմա նստել մեռակ շիրմաքարին փառքի,
որոնում է կրկին իր անցյալը ճաքած:*

(էջ 29)

Որոնելով անցյալը՝ քնարական հերոսը «դատապարտում է մահվան ցնորքներն անմիտ», քանզի եկել է ժամանակը՝ սնքած գաղափարը թաղելու, թաղելու ծերունի խոհերն ու վտիտ արքաներին:

Ներում խնդրելով իր մեղքերի համար՝ տան շեմին փռում է արնոտ ավետիսը եւ բացականչում.

Ես եմ դարձել միայն սեւ գեհենից մարտի:

Շարքի 14-րդ սոնետը բանաստեղծի միտումի գագաթնակետային ընդհանրացումն է: Քնարական հերոսը սեւ գեհենից ելել է մարտի, բացել դուռը թշվառների առաջ, նստել անթիվ շղթաները, հրաժարվել ուղու սառած փականներից: Հաստատուն ու վճռական է նրա գոյի բանաձեւը.

*Իմ ձեռքով է պահը իր մեղքերը սանձում,
իր երակից հանում պտուղները աղի,
Ես եմ դարձել հուշի կացարանը միակ,
ճգնարանը մտքի եւ պատկերը դարի:(էջ 31)*

Հրաժեշտ տալով օտար վայրերին՝ քնարական հերոսը բարձրաձայնում է. «Փնտրում եմ անվերջ իմ երկիրը անգո»:

1989թ. գրված սոնետների այս շարքը ազդարարում էր Արցախյան ազգային-ազատագրական պայքարի թեժացումն ու այդ գոյամարտին արժանի երգի ծնունդը:

3.

ՀՐԱՆՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ հայրենապատումն ազատասիրության խոհերով է պարուրված: Նրա զգացումներն ազատ բանաստեղծության սահմաններում դառնում են առինքնող ու ջերմացնող հույզեր.

*Եթե հողի մեջ չես տեսնում
Վճիտ արտացոլանքդ, վրան՝
Երազիդ հետքերը կապույտ,
Ուրեմն՝ սառն են այդ հողի հանդեպ
հոգիդ, մարմինդ, կարոտներիդ չուն,
Ուրեմն՝ մի օր արհամարհել ես
Քո պարզ ինքնության խոյանքը շիտակ
եւ դարձել պոռնիկ պատրանքին ընկեր,
Հողը՝ հայելի, որ չի փշրվում,
Եթե հարվածես մատնության քարով,
այլ փշրվում ես ինքդ,
եւ բեկոր չի մնում քեզմից:*

Հ. Ալեքսանյան, Կենսադաշտ, էջ 7

Հ. Ալեքսանյանի հայրենասիրական երգերում բազմազան երանգներով հնչում է ազատության եւ անկախության կոչը: Մերթ դիմում է Անահիտ դիցուհուն, որպեսզի ելնի եւ «կապույտ աչքերով» տեսնի, «թե ցավի ինչ նոր փոթորիկ պայթեց ցեղի հոգնած գլխին», մերթ կոչ է անում «Մոռացության անձավներում լինել, իմանալ ժողովրդի ցավը եւ տալ նրան զորացումի նոր հնարներ»:

Հետաքրքիրն այն է, որ Հ. Ալեքսանյանը անձնավորում է անցյալը, Անահիտ դիցուհու երթի մեջ տեսնում հայ ժողովրդի վերածնության եւ հաստատման ուժը, ուստի հորդորում է, որ բեղունության վառ կրակով ճամփա ընկնի «երկրով հայոց» եւ իր «հրաշք խոսքն» ասի.

*Հայ հարսներին տուր շոյանքն այն,
որ երկունքեն նրանք անվերջ
ու կորստյան ողբերի մեջ*

*չսպառվեն ու լինեն արի:
Հայ այրերին տուր կորովն հաղթ,
որ չճկվեն ոչ մի կռվում
բազուկները նրանց արդար,
եւ հայրենի տունը սիրեն
իրենց անձից խիստ առավել:
Հայոց հողին տուր զարթոնքն այն,
որ բաժանված կտորները
Նորից իրար հետ է ձուլոււմ... (Նույն տեղում, էջ 8)*

Հայ ժողովրդի ճակատագիրն իր մեջ ներառել է հավերժական մաքառման մի ոգի, որ միայն իրեն է հատուկ: Այստեղից էլ՝ այն վճռականությունը, որ նկատվում է նաեւ մեր երգերի մեջ: Տեղին է նշված Հ. Ալեքսանյանի երգում. «Տագնապի ոգին ասես մեր բախտի լուսապսակն է», որից հետո էլ ընդգծված է.

*Եվ ամեն մեկն էլ մեզնից տագնապ է,
Երբեւէ չեղած ու անկրկնելի,
օրերի փեշից բռնած գնում ենք
մեր կենսադաշտը գտնելու հույսով:
(Նույն տեղում, էջ 21)*

Հ. Ալեքսանյանը, գտնում է, որ կենսադաշտը գտնելու համար պետք է հավատալ, որ «Արդարությունը ստվեր չի գցում ոչ հողի վրա, ոչ ձգտումների, ոգի-թռչունի պես նա թեւածում է իրականության ծփանքից վերեւ»: Բայց երազանքը դեռեւս իրականություն չէ: «Չէ՞ որ գողունի սահման է քաշվել «արդարության ու այս կյանքի միջեւ»: Ի՞նչ է մնում անել: Հ. Ալեքսանյանի քնարական հերոսը մատնացույց է անում ճանապարհը.

*Անհոգ մի նայեք բռնապետներին,
Նրանց ձեռքերը եւ ձեզ կհասնեն,
Թող լինի թեկուզ բռնությամբ հայտնի,
Կալանք բոլոր բռնապետներին:
(Նույն տեղում, էջ 23)*

Հայրենասիրության եւ ազատասիրության պոետական հաջողված օրինակ է «Արցախի ամառը, 1989» շարքը: Նրա քնարական հերոսը տեսնում է «նոր աստիճանի վրա» թրթռացող «նաքառման սլաքը»: Այստեղ ուրախությունը նվաճվում է դժվարությամբ: Գորբաչովյան շրջանն է, Արցախը եռում է: Գնալով մթնոլորտը ծանրանում է եւ դառնում դաժան: Ինչպես գրում է բանաստեղծը՝

Հրե հոսանքներով

չոզը ալեբախվում է տեղանքի վրա,

խեղելով շարժման նրբագեղությունը:

Բնակավայրերում զայրույթն արքա է,

Մարդկանց միությունը ամրապնդող:

Հ. Ալեքսանյան, Անկման սիմետրիա, էջ 4

Եվ ըմբոստացած ժողովուրդը քայլեց նաքառման ճանապարհով: Ահա այս ճանապարհի փառաբանումով էլ Հ. Ալեքսանյանը հյուսում է իր հայրենապատումը՝ հաստատելով, որ օջախը պետք է պաշտպանել, այլապես կխլեն քեզնից:

* * *

Հ. Ալեքսանյանի հայրենապատումը գնալով նոր երանգներ էր ստանում թե՛ գաղափարական եւ թե՛ գեղարվեստական առումներով: Հրանտը լինելով հայ ժամանակակից պոեզիայի ավանգարդ թելի ներկայացուցիչներից՝ միշտ ձգտել եւ գտել է բանաստեղծական խոսքի ու կառույցի նոր ձեւեր, որոնք ընդգծված երեւում են նրա «Բանի երկրի բարիտոնը» գրքում (2007): Բնաբանի փոխարեն բերված «Դեմքս սեւահարվեց...» տողով սկսվող բանաստեղծության մեջ Հրանտն իրեն ներկայացնում է «Բանի սարահարթում՝ որպես դարաբաղյան ձի» ինքնեղացած «Երկրի անթարգման բլուրներին» (էջ 7): Այստեղ ես ընդգծում եմ «ինքնեղացել» բառը, որը բանաստեղծի ինքնաճանաչման ու ինքնահաստատման խոստովանությունն է: Այդպես էլ կա: Հրանտը երգչի ինքնեղացումը տեսնում է «Երկրի աղը» ճաշակելու եւ «օրն ըմպելու» մեջ, այս դեպքում միայն

արվեստագետը կարող է ընծա դառնալ «հազարան հավքին», արժանանալ Աստծո օրհնանքին ու տեսնել «երկնի կապույտ մազադաթի վրա» պատճենահանված հոգին՝ մարմնացած:

Յ. Ալեքսանյանն իրավունք ունի իրեն ներկայացնել որպես նպատակին հասած քերթող, որովհետև էն գլխից, ինչպես ինքն է ասում՝ «աքսորյալ եղա Բանի ճամբարներում»: Նման դեպքում է միայն բանաստեղծն ապացուցում, որ ինքն Աստծո քարտուղարն ու ժողովրդի պատգամախոսն է:

Անկախության շրջանի հայ պոեզիայում ստեղծված լավագույն ու ինքնատիպ երգեր քիչ չեն ստեղծվել, որին իրենց ներդրումն են ունեցել Ա. Հարությունյանը, Վ. Հակոբյանը, Յ. Էդոյանը, Յ. Գրիգորյանը, Յ. Սարուխանը, Է. Միլիտոնյանը, Յ. Թամրազյանը, Վ. Գրիգորյանը եւ այլ ճանաչված բանաստեղծներ:

Յ. Ալեքսանյանի «Օրորոցային Հայոց աշխարհի համար» քնարական պոեմը գալիս է լրացնելու հայապատումի բարձրարվեստ գործերի շարքը՝ միանգամայն նոր արտահայտչամիջոցներով, հոգեբանական խորքային բանաստեղծություններով:

Տասնմեկ մասից բաղկացած պոեմի յուրաքանչյուր հատված միջնորդված է արձակ բանաստեղծությամբ: Դիմելով Հայոց աշխարհին՝ բանաստեղծը որդիական իր սերն արտահայտում է՝ հարազատ մնալով հայրենի երկրի եւ հարազատ ժողովրդի դժվարին ճակատագրին՝ հերոսական ու ողբերգական, թախծոտ ու լուսավոր, տրտում ու կենսահաստատ: Հայոց հայրենապատումի մեջ մեր նոր բանաստեղծները մեծամասամբ երկրին դիմում են ոգելորության բռնկումով, ավելի շատ ներքողական հնչողությամբ: Հրանտն այստեղ միանգամայն խոսքի նոր ելակետեր ու գաղափարահուզական նոր շերտեր է գտել՝ արտահայտելու օրորոցային երգերին հատուկ իր մաղթանքները՝ մերթ ժողովրդական տագնապած սիրով, մերթ էլ որդիական սրտացավությամբ ու խրախուսանքով:

Պոեմ-օրորոցայինում բանաստեղծը դիմել է գեղարվեստական խոսքի տարբեր միջոցների: Նրանում տեղին ու դիպուկ են

օգտագործված համենատուրքունը, մակդիրը, չափազանցու-
թյունը, նվազաբերությունը, այլաբերություններն ու խորհրդա-
նիշերը: Ստեղծագործությանը մի նոր երանգ են հաղորդում շա-
րահյուսական միջոցները՝ բառային հակադրությունը, աստիճա-
նավորումը: Այս ամենը բխում է թեմայից, ասել է թե՛ մեր ազգա-
յին ոչ սովորական ճակատագրից: Երկի հենց առաջին մասում
հեղինակը պատումի ներկա ժամանակով անդրադառնում է մեր
անցյալին, որը նաեւ այսօրն է, որ ասես համարյա ոչինչ չի փոխ-
վել: Հայոց աշխարհը նույն «մերժված ջրանուշի տրտմությամբ»
է «կանգնում... Փակսիրտ գիշերվա շեմին», որտեղ «վերակացու
դեւն» է, որ «տնտղում է անձնագիրը» եւ «ներս թողնում բարաք
գիշերն ի ձիգ»: Օրորոցայինը վերածվում է իրական պատկերի՝
ի ցույց դնելով երկիր-ժողովրդի ապերջանիկ ընթացքը.

*Մահիճդ ասես հրաբխային ապարից է,
փափուկ անկողնաշորդ միշտ թռցնում են գող ու հսկիչ,
Եվ փխրուն մարմինդ խեղվում-կարծրանում է
քարե ներքնակի ու քարե հույսի վրա... (էջ 5)*

Սակայն ցավալին դեռեւս այդ չէ, այլ այն, որ «օրոր ասող չկա»:
Մի հեզնոտ լռություն շուրջկալել է հայրենի երկիրը, որի պատճա-
ռը եւ՛ ներսից է, եւ՛ դրսից,- իշխանավորաց եւ թշնամաց կողմից:
Ճշմարտացիության այս բանաստեղծական ընդգծումից հետո հե-
ղինակի օրորոցայինը բացում է հրեշտակային իր թեւերը, որ հնա-
րավոր չէ շշմուշակ առանց այրող հուզմունքի. «Քնիր, մերժվածս:
Քնիր, իմ անուշիկ, Քաղցր գիշեր քեզ, ծիրան երագներ: Մղձա-
վանջներդ վանել են ետ, անդորրի տոն են Աստուծուց աղաչել քեզ
համար, աշխարհիկս, քեզ համար: Տես, մի քանի շագանակ են բե-
րել խրախճանողների մեծ կրակից, դնեն բարձիդ տակ, կճաշա-
կես վաղը, բայց ոչ միայնակ, բարեկամաց հետ, անուշիկ: Փակիր
աչքերդ, քնիր, իսկ ես օրորեմ քեզ, իմ սիրելի» (էջ 5-6):

Հրանտը կրկին բարձրաձայնում է «անուղղելի ճշմարտու-
թյունը», ընդգծում, որ աշխարհն ամենավերջին ժլատի պես է

«աղերսվում իր խոնարհ ու անուժ տնվորներին»: Ի՞նչ է մնում անել: Պատասխանն առկա է.

*Գտիր պահը եւ խուժիր այնտեղ,
ուր պահպանվում են ներկայի մարգարիտները,
ոգին, ուրանը,*

*թե հապաղես, եղբ՛ւկ, առանց աչք թարթելու քո
բաժինը այլոք կպարտակեն:-*

*Շուքն ու անառիկ ապարանքները կողոպտիչների
հանգրվաններն են: (էջ 6):*

Եվ այսպես, երեկվա եւ այսօրվա իրական աշխարհի վարագույրները բացելով, պոեմի քնարական հերոս-բանաստեղծը ծածանում է օրորոցային ճշմարտապատումը. «Քնիր, կողոպտվածս, քնիր... Քնիր, տառապյալս»: Ապա հաջորդում է եւ՝ խրախուսանքի, եւ՝ զգոնության խոսքը, այն, որ «երկիրն Չայոց պետք է սթափվի եւ սիրի ու գնահատի իրեն, հեռու մնա «սին պարծանքից»: հրաժարվի «կապույտ ինքնասիրո պարապից: Բանաստեղծի այս սրտացավ խոսքը նորահունչ մի երեւոյթ է արդի մեր պոեզիայում.

«Քնիր, ինքնամերժս, քնիր անտրտունջ: Քո անայլայլ ձայնը լսիր ներսից»: Եվ ապա՝ «Քնիր, խեղճս... Քնիր, հիմարիկս: Քնիր, իմ արյամբ պտտվող ասեղ, քնիր, մոլորյալս, Քեզ կգտնի դեռ մեծ սիրահարը, եւ կսիրի քեզ նույնիսկ վերակացու դելը գիշերվա: Քնիր, հրեշտակս» (էջ 7):

Քնարական հերոս-բանաստեղծը սրտացավությամբ հանդիմանում է Չայաստան-մորը, զգուշացնում, որ չի կարելի «ծածկվել քաղաքակրթության թաց ջրերով», որովհետեւ.

*Ծիծաղում են երեսիդ, բամփում գլխիդ եւ
քեզ սերտել տալիս «սպանդ» բառի
բոլոր հոմանիշները*

մայրենի թե օտար բառերով... (էջ 8)

Շարունակվում է օրորոցային հոգեբուխ հիմնը՝ զգոնության կոչով. «Քնիր, ընդունակս: Քնիր, խենթուկս: Մի տանջիր քեզ մշ-

տադալար ստով-ոչ սիրելին ես եւ ոչ որբը ազգաց, շարքային
զինվոր ես ինտերգնդում: Քնիր, աշխարհիկս: Կյանքի հողմն
անցնում է իր ծածկագրած ուղեգծերով, դու հողմի բյուրիով
լեզուն սերտիր, որ չքվես նրա երախի մեջ: Ամեն օրվա ետեւ
ժաժք ու ցունամի կա դարանակալ: Քնիր, զգոնս» (էջ 8)

Հայոց աշխարհի հեթանոսական անցյալի ու քրիստոնեական
ընթացքի միաձուլլ էութունը Հրանտի գրչի շնորհիվ դարձել է
թարմաշունչ ու հրեշտակաթել մի ամբողջական պատկեր, որ հա-
սուն մտքի արդյունք է: Բանաստեղծը անդրադարձի հրամայակա-
նով ընդգծում է Հայոց հեթանոսական կիրքը եւ քրիստոնեական
ճերմակ շղարշները՝ շարունակելով մեծատաղանդ Դ. Վարուժանի
«Հեթանոս երգերի» ավանդույթը: Հեթանոսական կիրքն է, որ
միշտ փայլատակել է անկեղծ ու ազատաթույր: Ժողովրդի այս
աներկբա բնույթը նշմարելով՝ նրա պոետ որդին դիմում է այսպես.

*Ամեն հովի հետեւից հուզավառ վազորդ,
ամեն պորտ ու դաշինք ձոներգող փամբիռ,
ամեն քրքում կրծքիդ փակցնող առաքյալ,
ամեն աստղի վրա անունդ գրել կամեցող մանչ...*

Բայց այսքանով հանդերձ, նա մնում է չբավարարված, քանզի
նրա «անֆասը դեռ չի պատճենում գերարդիական եւ ոչ մի
սարք»: Եվ դրան հետեւում է որդիական օրորոցայինի նոր հայտ-
նագործումը. «Քնիր, անհավատս... Քնիր պարականոն մի աղոթ-
քով թեկուզ... Քնիր Վանա ծովից եկած հայի ժիր հոգնությամբ...
Քնիր... Իմ խելոք առլեկին, իմ գիժ հովվապետ» (էջ 9):

Հավատա՞լ, թե՞ չհավատալ աշխարհին, Եվրոպային ու եվրո-
յին, որոնք կարող են փաղաքշանքներով կողպել ատոմակայա-
նը, կարող են գործի դնել շանտաժն ու ահաբեկիչներին: Չպետք
է մոռանալ, որ

*Արցախի սիրուն մինչեւ վերջին լուման
վճարել ես դու,-*

ոչ ոք իր ավիշից անհատույց կաթիլ իսկ

*չի տա քո կտրտված ճյուղերի
վերընձյուղման համար:*

*Բաց է փակված սահմանդ Օսմանի հետ -
պղտոր, ամեն վայրկյան ճեղքումին
հլու մի անբարտակ է
շառաչում անվերջ քո քթի տակ,- ինչ անկցելի է,
ոչ մի ջանք
նրանց չի դարձնի մեկնույն ուղեծրի զույգ:*

Դեռ ավելին, Երկրի բանաստեղծ որդին ավամեջ է բերում
նաեւ մի ուրիշ փորձված ճշմարտություն՝ ինքդ պիտի պաշտպա-
նես քեզ:

Խոսքը շարունակվում է օրորոցայինի հաջորդ ծածանումնե-
րում, որ ճշմարիտ հորդոր է, երեւոյթներն ըստ էության հասկա-
նալու կոչ, հույսն իր վրա դնելու խորհուրդ՝ «Քնիր, միայնակս»:
Քնիր քո աստվածատուր մենության վեմին: Հաճախ ես մրսում
մինչեւ թոքաբորբ: Բարեբեր օդը քո երազների հովիտներում է:
Քնիր, իմ երազկոտ: Ինչ անհաս է քեզ, կարծում ես՝ մի օր ոտքդ
դրել ես այդ բարձունքներին եւ պատմում ես քո հիպերբոլները
պարապ ամբոխին: Քնիր, մեծամիտս» (էջ 10):

Հրանտը չի սքողում ոչ պատմության անողոք էջերը եւ ոչ էլ «Չե-
չոտ դեմքը ժամանակի»: Ուստի ելնելով անցյալ-ներկա ընդհանուր
բնույթից՝ հորդորում է մայր հայրենիքին՝ միշտ վառ պահել ոգին
ինքնության, որպես «մացառներում կարմրող մասրենի»: Բանաս-
տեղծը ներկայացնում է հակասական աշխարհը, երկդիմի արա-
րածներին իր պատկերավոր խոսքով, որը եւ՝ խրախուսանք է, եւ՝ շր-
ջապատը ճանաչելու ազդակ. «Քնիր, ապուշիկս: Քեզ դեռ երկար են
պաճուճելու ճիշտ-անմիտ ու նոր մականուններով: Սարսռո՞ւմ են
քո «ար» արմատից: Քնիր, արիաջանս: Դեռ կանգնած են հերթի ար-
նաքամի պիղծ դարաշրջանները: Քնիր, արեգնազանս» (էջ 10):

Կրկին ու կրկին, տարբեր ժամանակների ներկայացմամբ, Հա-
յոց փառքի ծովածավալ դարաշրջանների հրամայականով բա-

նաստեղծը դիմում է իր «փոքրիկ... խատուտիկ... շուշան... խռով-կան... միամիտ... բալասան... ամենատես... լիիշխան...» օրրան-մորը եւ հնչեցնում նարեկացիական աղոթքը, թումանյանական հույսը, չարենցյան հավատը իր ինքնատիպ ձայնով, իր հոգու երանգների խտացմամբ, զինվորյալի իր ընծայականով. «Քնիր, անհամբերս: Քո զարմից ոչ ոք չի մնա անհետ տարագիր հեռվում, զավակների կգան ծափ ու ծնծղաներով, Քնիր, երկնտողս, քնիր, անհառաչ: Քոնն է բովանդակ գիշերն այս իր զարմանազան վա-յելք-անդորրներով, դեռ քոնն է վաղը վաղվադակի, քոնն է գալիքն անհնազանդ՝ զանգակածաղիկներով, ուրցի բույրով» (էջ 14-15):

Հայրենասիրական անկեղծ զգացումների թարմ պատկերներ են «Երկինք Նաիրի» բանաստեղծական շարքը: Բանաստեղծի զրույցը ճայի հետ է, զրույց՝ շերտավորված պատմության դասե-րով եւ իմաստավորված: Ճայը սուրում է պատմության դասերով եւ իմաստավորված: Ճայը սուրում է «թախիծն ի վեր», սակայն քնարական հերոսը ուրիշ խնդրանք ունի.

*Ճայ իմ, բացիր մի նոր երկինք -
խոստումի պես աստվածառաք -
թախծի վրա այս ինքզինք
եւ քայլերիս՝ տեր ու ծառա: (էջ 53)*

Երկրին տեր ու ծառա երագող բանաստեղծը փոխում է կոմպոզի-ցիոն ձեւը եւ դիմում որդուն կենսափորձով հարուստ հոր հավատով.

*ոչինչ չի անեանում
ժամանակի փակվող խորշերի մեջ,
առավելս՝ սերն ու ցավը վերահաս... (էջ 55)*

Սիրո եւ ցավի զուգահեռ ընթացքում շափաղում է լույսը, որի հավատով քնարական հերոսը դիմում է որդուն.

*Քո ապագան իջնում է բոլոր աստղերի
արտացոլքով...*

Հայաստան-մոր ճակատագիրը Հրանտը կապում է աշխարհի հետ՝ ներկայացնելով նրա գեղարվեստական պատկերն այնպես,

ինչպես կա: Այս առումով հատկանշական է «Ալպիական բարիտո-նով» պոեմը: Ինչպես հատուկ է բանաստեղծի ոճին, նա գործը բա-ժանել է 11 արիայի: Մի կողմից Արեւելքն է տեսիլքի հետապնդումով, մյուս կողմից «Համերաշխության թղթե վարդերով ողողված վեհա-ժողովներն ու առանձնատները, ամառային ծովափերն ու ակունք-ները, գիշերային ուղտերն ու կապուզիմները միջհամայնքային»:

Բանաստեղծը մատնացույց է անում այն տերություններին, որոնք ժպտալով մահվան հասցեներ են բաժանում զինյալ ու քաղքենի ամբոխներին եւ հարցնում. «Կա՞ մեկն այնտեղ, որ տեսնի անվրեպ, թե Աղետյալը ինչպես է զգում իրեն, չէ՞ որ.

*Ծուխ է ելնում մարդու պրկված հոգուց
եւ երկրի ջղերից կարմրատակած,
թմրաքաղցից գալարվում են առավոտները...*

(էջ 70)

Բանաստեղծը չի հաշտվում Աստծո ծիրից դուրս եկած աշ-խարհի վայրիվերումների, բռնակալների ու մազոխիստների արնամած արարքների հետ, այդ թվում նաեւ՝ մատը դնելով մեր ազգային ցավող սրտին.

*Փակ են խոցված երկրիս սահմանային
ուղեկալները,
Մի «բարեւի» չափ պարզ պայմանագրերը
ավելի դժվար են
շարադրվում-կնքվում, քան Սուրբ գրքերը
ցանկացած կրոնի,-
ինչպես չեն բանակցում միմյանց հետ
թիթեռն ու ջահը,*

*գիշերն ու լուսարձակները կալանավայրերի,
այդպես անճկելի ախոյաններն են փորում
անդունդները բաժանարար գծի.... (էջ 71)*

Բանաստեղծը նկատում է, որ «Որքան ճառագում է Միտքը, այնքան մոտենում են Աղետները», սակայն խրախուսանքի խոսքն է հղում երկրին, որ պատրաստ լինի մարտահրավերնե-

րին, չմոռանա, որ «ժանիքներ ունի եւ Ազատությունը», «Խորտակիչ է հարվածը Ազատության», ուստի պետք է ոգեշնչվել, չսայթաքել, մարտնչել, համոզված լինելով, որ՝

*Մեն մի վառ աստղի գերիշխանությունը տաղտկալի է
գորշ հորդանների բազմակիության չափ:- (էջ 79)*

Հայրենասիրության մի յուրահատուկ հյուսվածք է «Վազիր, Լառ, վազիր» ստեղծագործությունը: Հ. Ալեքսանյանը փառաբանում է անտրոհելի ինքնիշխանությունը եւ կոչ է անում հայկազուն քաջին, որ վազի «վարդավառների ու նախճիրների միջով, ազատության ու Արարատի հունով»: Դա է ազատության ճանապարհը, վազիր երգդ գրելով, հիշելով Վահագնին՝ մեր պատերազմի ու հաղթանակի հայոց դիցին:

Բանաստեղծը հոգու ծիածանը Սասունից կրկին ձգում է Արցախ եւ «Տաք ուրվատեսքը Ղարաբաղի» երգի մեջ հնչեցնում մեր վճռականությունն ու երազի ծաղկունը: Ղարաբաղը դեռ կխոսի, կճանաչեն նրան, կսեղմեն հաղթական ձեռքը,

քանզի սիրում է նա բարձր ու մաքուր երկինք

եւ թռիչքներն իր միշտ մեկնարկում է

երկնուղեշ լեռներից արցախական,-

եւ ինչ դիրքից էլ լուսանկարես ժամանակները,

երեւակվում է տաք ուրվատեսքը Ղարաբաղի: (էջ 163)

* * *

Հ. Ալեքսանյանի «Բանի երկրի բարիտոնը» ժողովածուում ինձ շատ հետաքրքրեց «Բանկուլներ» բաժինը՝ նույն վերտառությամբ՝ բացատրականով: Ծանոթանալով այս յուրատեսակ առաջաբանին՝ կրկին համոզվեցի, որ Հրանտի բանաստեղծական միտքը չի ննջում երբեք, միշտ անհանգիստ է, թեւածող, որոնող, գտնումի ծարավ, իսկ եւ իսկ արարող ավյուն:

Անդրադառնալով գրական նոր ժանրերին ու դրանց տարատեսակներին՝ Հրանտը ճիշտ է բնութագրում դրանց պատմակա-

նությունը, հարափոփոխ անցագիրը, նշում, որ «բանաստեղծությունը գեղարվեստական ձեւերի մեջ շատ ավելի պահպանողական է իր տեսակներով», ապա ընդգծում. «Այդ շարքի համալրումը բացառիկ իրադարձություն է»:

Հրանտն իր նոր շարքն անվանել է բանկոլներ՝ դրանցից յուրաքանչյուրը դիտելով որպես պոետական միեւնոյն կարգատիպին ենթակա առանձին ստեղծագործություն: Նման բացատրությունը կարող էր եւ չլինել, որովհետեւ բոլոր հեղինակների բոլոր պոետական շարքերում ամեն մի հյուսվածք ներկայացվում է որպես առանձին ստեղծագործություն՝ բայց իրար հետ շաղկապված բովանդակային ու կոմպոզիցիոն պահանջով: Վերհիշենք Վ. Տերյանի «Նաիրյան երկիր» գորելենը, Չարենցի «Տաղարանը», Պ. Սեւակի «Մարդը ավի մեջ», Յ. Սահյանի «Որոտանի եգերքին», Վ. Դավթյանի «Անկեզ մորենի» եւ այլ պոետների խոսուն շարքեր: Իհարկե, կարելուրն այս չէ, այլ այն, որ Հրանտը բացատրում է իր մտահղացման շոշափելիությունը. «Բանկոլ»՝ նշանակում է բանաստեղծական կոլլաժ... Բանկոլը առանձին պատկեր-միավորների համակցություն է, հակված չէ ծավալման, ձգտում է ամփոփվել խոսքի սեղմ տարածքում» (էջ 187): Այնուհետեւ ընթերցողի առջեւ բացում է փակագծերը եւ բացատրում. «Բանկոլի պատկեր-մանրակները, ինչպես կերպարվեստային կոլլաժի նյութեր, համատեղվում են որպես անձնական եւ ներկա ժամանակի առավել սուր իրադարձությունների ու տագնապների մասին մտավոր ու գեղարվեստորեն հագեցած տողեր՝ իրական ելեւէջումների անմիջական ու խորհրդանշական անդրադարձներով» (էջ 187-188):

Հրանտն այնուհետեւ ճիշտ է նկատում բանկոլի՝ որպես բանաստեղծական տեսակի, հետագա կարգաբերման պահանջները: Ճիշտ է նկատում, որ գրական բոլոր տեսակները (ժանրերը) պատմականորեն փոփոխվում են, հարստանում եւ՝ ձեւի, եւ՝ բովանդակության առումներով, որովհետեւ առնչված են հարափոփոխ կյանքի հետ:

Ես ողջունում եմ Հ. Ալեքսանյանի այս խիզախումը՝ ելակետ ընդունելով ոչ թե վերոհիշյալ բացատրությունը, այլ նրա պրակտիկ լուծումը, ասել է թե՛ բանկուլների ալեքսանյանական շարքը: Այստեղ ավելորդ չեմ համարում վերհիշել համաշխարհային բժշկագիտության այն օրինակը, որ բուլոր հունանիստ, աստվածաշնորհ բժիշկներն իրենց հայտնագործած նոր դեղերը փորձում են հենց իրենց վրա: Դա, հիրավի, աստվածահաճո ու մարդանվեր անձնվիրություն է: Համեմատության եզրերը չեն կաղում այստեղ, իրոք, Հրանտը մտածել-հղացել է, Հրանտը գրել է, հրամցրել է հոգեւոր այն արժեքները, որոնք պատկերային զարմանալի թարմությամբ ներկայացնում են մեր ժամանակի՝ բարձր ինտելեկտի տեր մարդու աշխարհընկալումն ու ներաշխարհը: Հիրավի, անհատի բանաստեղծական նկարագիրն է: Չեմ կարող հենց էս գլխից չբարձրաձայնել, որ Հրանտի հյուսած բանկուլներն ակունքված են մեր ժամանակի ոգուց, միաժամանակ ավանդական շափաղումն են հայկական հայրենների եւ ճապոնական թանկաների արվեստի:

Շարքը, որ բաղկացած է 56 բանկուլից, տարաբնույթ կենսական աշխարհապարփակ հյուվածքներ են, որոնցում բանաստեղծական վառ երեւակայությամբ ներկայացված են ժամանակակից հակասական աշխարհի աղտեղված ընթացքը, հզորների գայլային ազահությունը, փոքրերի տազնապներն ու վախվորած հույսերը, ընդհանրության մեջ 21-րդ դարի փիլիսոփայությունը: Եվ պետք է ընդգծել, որ յուրաքանչյուր բանկուլ ժամանակային արվեստի փայլուն մի կողմ է, մտքի եւ հոգու բազմերանգ դարապատկեր նատյուրմորտ: Այդ գույները բանաստեղծը ոչ միայն տեսնում է, այլեւ զգում է, գումարում իր արյան կանչին, դառնում զզոն շեփորահար՝ աշխարհի ճշմարտության հանդեպ սրտացավ ու բարեգութ: Հրանտի աչքից չի վրիպում «Տաք կանչերի պարը սառույցի վրա:՝ Ցավում է, երբ «Ծերուկ բարությունը գայթում է փողոցում՝ սլացող մեքենաների առաջ», երբ նշմարում է, որ՝

*Աստղի մեծությունն է կաթուն քաղաքի
տանիքներին:*

*Հսկա գինյալը դոփում է Արեւելքում,
եւ նավթափոշին ծածկում է անդորրի պարտեզները:-*

(էջ 189)

Բանաստեղծը ցավում է՝ տեսնելով, որ գիշերը պսակվում է հավատի խտացված «Օղրիդի լռությամբ»... Այս անանձնական, օբյեկտիվ իրականության ճշմարիտ պատկերը վերածվում է քնարական հերոսի անձնական ցավի եւ բանկուլի վերջում ներկայացվում որպես իր «գրկի մեջ արտասովոր փերի առավոտ»:

Հրանտի բանկուլների ամեն մի տող չտեսնված գեղանկար է, պայթող ճշմարտություն, ցավատանց տազնապ, Տիրոջ ափսոսանք: Այդ ամենը իրենց պատճառներն ունեն. «Քամու կարոտի մեջ է քաղաքների չլսված երջանկությունը», «Անձրեւի խանդի տակ ծպտված է անարատությունը գալիքի», «Խոտերը տանում են մեռյալների ու անապատների ցավն անպատում, եւ որ ամենացավալին է.

*Աշխարհը մարդու մեջ թաղել է երաժշտությունն իր
եւ աչքը հառել տիեզերքին:-*

*Նույն կյանքը - պատերազմում թողած
կյանքից հետո -*

սառնաշաքարի պես՝ մոխրամանի մեջ ու

վագրի երախում: (էջ 180)

Ազգային ու համամարդկային չլուծված խնդիրների միաձույլ նկարագրությունը արժեքավորման բարձր մակարդակի վրա է դնում ամեն մի հյուսվածք: Հրանտն ասես աշխարհն առել է ափի մեջ, կենտրոնում տեղավորել Նաիրին ու Արցախը, հայ մարդուն՝ տառապանքի, մաքառումի, հավատի խտացված իր պատկերով: Նրա հորբին ծփում է «Բերդ» պարի մեջ ներսույզ», թաշկինակը «ծածանվում է քնկոտ հաշտարարների ու կարմրած աչքերով դիպուկահարների դիմաց», «Վերելում ժխտման ուրուրներն են մասնատում երկինքը անտեսանելի ռմբակոծիչների չվագծով», վերջապես.

Սերն ու ատելությունն ամեն օր իջնում են

Արցախի կրօնքին

Աստվածամոր համբույրի անմեղությամբ:- (էջ 190)

Յ. Ալեքսանյանի պատկերավոր մտածողությունը հորիզոններ է ներառում երգերի մեջ ու դարձնում շոշափելի: Նա բանաստեղծ է՝ քաղաքացիական պաթոսի ինքնաստեղծ էությամբ, երանգների սարյանական փնջումով, պատկերների բակունցյան լեզվով, ոգու սեւակյան բռնկումով:

Կարդում, վերընթերցում ես բանկոլները, ու թվում է, թե տեսնում ես աշխարհի, մարդկության ընթացքը՝ գիտակցության բուլոր ձեւերի համակցությամբ, ու գոհունակությամբ շեշտում ես, որ բանաստեղծը հետաքրքրությունների ծարավով, երեւոյթների ընդգրկմամբ, ազգային ճակատագրի զգացումով հենց պետք է այսպիսին լինի: Հրանտը տեսնում է, թե ինչպես «Իրար լեզու են խածնում քամին ու «Քառսի սիրուհին», թե ինչպես է մեծանում «թիվը «միջուկայինների», «եւ բարբարոսն ամենուր զինվում է ճոխ ծաղկաքաղով մարգարեներից»: Եվ մի՞թե հզորների խենթ վազքի ու անտարբերության թելադրանքը չէ 1915թ. Հայոց ցեղասպանությունը, նախճիրը Օսմանյան Թուրքիայի արնախում բարբարոսների կողմից: Ամենաթողության եւ անտարբերության հանդեպ ցավի ճիչ է Հրանտի հետեւյալ բանկոլը.

1915-ի ծանրումեծ ստվերը անմռունչ խլում է

Հայք բարձրավանդակի լույսն ու ջերմությունը -

Պատմական կողոպտիչի հաշվեհարդարով:-

Թուրքի ուրվանկարը շարունակ կարմիր է

Ժամանակի խճողված ցուցապաստառին:-

«Սպանդ» բառը հարություն է առնում հին ու

նորելուկ իմպերիաների

դրոշներին ու գաղտնի զեկույցներում:-

Եվ խցանվում է լսողությունդ աղաղակների

*տաք արձիճով,
երբ խորալները սիրո ու բարու -
հին եղանակով գրված «սիրիներ» -
ներփակ ընկած են Աստծո
մոռացված ծայնադարանում: (էջ 192)*

Յ. Ալեքսանյանը հավաստի իրադարձությունների եւ երեւոյթների գեղարվեստական վավերագրողն է: Նա չի սքողում, չի կեղծում, չի մոզոնում դարաշրջանի պատկերը, քանզի մտահոգված է գալիք սերունդների ճակատագրով: Գիտակցելով, որ արվեստի ուժը ճշմարտության մեջ է, ավելորդ չի համարում ընդգծելու ականատեսի իր վկայությունը.

*Ես խոսում եմ ժամանակի առիթմիկ
սրտի անդունդներից`
վկայի ու հոր իմացությամբ:-
Ամեն պատկեր չէ, որ արտացոլվում է
հիշողության ու լիալուսնի մեջ:
Պիկ ժամ է` վստահության թափփված
ոստաններում: (էջ 192)*

Եթե գեղանկարիչն արտածելու լինի Յրանտի բանկուլներից թեկուզ եւ մեկը, ապա կստացվի արդի աշխարհի քաղաքական-հասարակական բնույթը երանգավորող մի ռեալ պատկեր:

Յրանտի համոզմամբ` փոքրացել է աշխարհը, տարանջատ երկրներ ու ժողովուրդներ չկան, մեկի ճակատագիրն առնչված է մյուսին, հզորները շնածկների պես պատրաստ են խժռել փոքրերին: Այս գաղափարը ծնվում է աշխարհում ահագնացող վտանգներից, որոնցից կարող են տուժել շատ-շատերը, որովհետեւ` «Արեւելքի պարտեզներում փունջ-փունջ պայթում են Դեմոկրատիայի ոգեշունչ արկերը-ազատագարների նշանառությամբ»:

Այո, աշխարհը փոքրացել է, եւ պատահական չէ, որ Յ. Ալեքսանյանի տագնապը չի մեղմանում Արցախի հանդեպ, հոգին թեւածելով նրա երկնականարում` ուղիղ իջնում է հայրենական

եզերքի կենտրոն, թվարկում նրա բարեմասնությունները ու
լսում շուրջը եռացող շնագայլային ոռնոցները:

Աշխարհի շրջապտույտի մեջ բանաստեղծ-քնարական հերոսը
միշտ մնում է իր բնույթին հավատարիմ՝ մեկ խարագանում է
աշխարհի չարն ու չարիքը, մեկ էլ մենախոսությամբ ինքնաբա-
ցահայտվում՝ Նաիրի երկրի եւ Արցախ-հայրական տան ճակա-
տագրերի համակցմամբ.

Շրջված են հայելիներդ:-

*Դու թրեւում ես քո պատճենահանված
նմուշօրինակով՝*

Ինչ-որ Խթը -ի հանձնակատար ինչպես:-

Բնատիպդ փակված է Անհուշ ամրոցում,

որի տեղավայրը փոխվում է ամեն օր:-

Երեւանում կորած երազներդ գալիս բոլորվում են

Ամարասում պահ մտած մանկությանդ շուրջ:-

Երկար կպահպանես (զաղտագողի, դողով)

անցյալից թռցրած անբիծ հայացքդ...

Կապիտոլիոններից իջնում են հապճեպ

համաշխարհայնացման նախահայրերն ու

քարտուղարները՝

հանուրի անձնագրերը տնտղելով:-

Դու դեռ պատկանում ես քո հոգուն,

բայց ինչպես փակցված ազդագիրը՝ պատին:

(էջ 195)

Յ. Ալեքսանյանը իր բանկուլները ներկայացնում է որպես բա-
նաստեղծական նոր տեսակ: Կրկնում են՝ ողջունելի է եւ՝ այդ
մտահղացումը, եւ՝ պրակտիկ լուծումը: Դա մի ժամր է, որ կաղա-
պարված արգելքներ չունի, ինչպես կայուն ժանրերն են՝ տրիո-
լետը, սոնետը, գագելը, բեյթը, դուբեյթը, քառյակը: Սակայն
Յրանտի առաջարկությամբ բանկուլն առանձին պատկեր-միա-
վորների համակցություն է:

Իմ կարծիքը դրական է: Բայց կցանկանայի նշել, որ այն, թե-կուզ սուղ ծավալներում, ներառում է պատկերների մի շարք տե-սակներ, առանձնապես պատկեր-ապրում, բնապատկեր եւ այլն:

Հաճելի է բերել անվանի բանաստեղծ, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր Յենրիկ Էդոյանի կարծիքն այս կապակցությամբ. «Յե-տաքրքիր են Հրանտի կոլլաժները (բանկոլները, ինչպես ինքն է հո-րինել), որոնք կառուցված են փաստի գեղարվեստական վերա-կերտման վրա (փաստն այստեղ կարող է լինել միտքը, իրականու-թյան այս կամ այն կոնկրետ պատկերը, առարկան, նյութական նա-խահիմքը): Ինձ համար գնահատելի է պատասխանատվության նրա զգացումն իր խոսքի, պատկերի, իր ստեղծած իրականության նկատմամբ, քանզի բանաստեղծը կերտում է մի աշխարհ, որի հա-մար ուրիշ ոչ ոք պատասխան չի տալու»: (Նույն տեղում, էջ 258):

Այդպես էլ կա: Հ. Ալեքսանյանը արարել է պոետական մի հրաշալի աշխարհ, որի եւ՛ տերն է ինքը, եւ՛ պատասխանատուն:

Հրանտ Ալեքսանյանի ստեղծագործական ոգին գործում է խի-զախելու վճռականությամբ: Նա միշտ ձգտում է դուրս գալ նույ-նիսկ երեկվա իր գտած տեսադաշտից: Պոետական ազատու-թյունն այդպես է ընկալում նա: Այդ է վկայում նրա «Որպես մի դարձող բանագավր» բավականին թարմ ու ինքնատիպ ժողո-վածուն (2011): Նախորդ գրքից մինչև սույն գիրքն ընդգրկում է հինգ տարի, որը բավականին մեծ տարածք է Հրանտի նման տաղանդավոր ու փորձառու գեղագետի համար: Դա նշանակում է, որ Հ. Ալեքսանյանը միանգամայն լրջորեն է մոտենում պոետա-կան նոր հունձքի մատուցմանը: Ի դեպ, նման վերաբերմունքը սևակյան ավանդույթ է՝ օրինակելի ու արդյունավետ:

Խնդրո առարկա գրքի հանձնարարականում Հրանտը նշում է գեղագիտական իր սկզբունքը. «Գեղարվեստական յուրաքանչ-յուր արարվածք պետք է առավելագույնս յուրատիպ լինի իր ներքին ու արտաքին միտումներում»: Ահա հենց այս յուրատի-

պությունն է, որ ընթերցողին կրկին ու կրկին մղում է վերընթերցելու գիրքը և արտահայտելու իր վերաբերմունքը:

Հրանտի բոլոր ժողովածուները՝ «Կենսադաշտ» (1989), «Անառն Անարասուն» (1990), «Խրախճանք» (1991), «Վարդի խռովություն» (1999), «Անկման սիմետրիան» (1996), «Խորանարդներ նորին գերազանցությամբ» (1997), «Եզրային ասացումներ» (1998), «Լիալուսնի սարկոֆագ» (2000), «Պայմանաքեր համիներ գրքից» (2003), «Բանի բարիտոնը: Երկրի բարիտոնը» (2007) մեկը մյուսի սոսկ շարունակություններ չեն, այլ նոր աստիճաններ, որոնք պետք է հասցնեին «Որպես մի դարձող բանազավր» բարձրարվեստ գրքին:

Հրանտի պոետական մտածողության ազատությունը երբեք չի ընդունել կաղապարված միտքն ու արտահայտվելու կայուն ձևերը: Ստեղծված խոսուն ձևերն ընդունելով հանդերձ, խիզախում է, որոնում, գտնում գաղափարի ու ձևի մատուցման տարբեր եղանակներ՝ բխած ժամանակի հրամայականով, ժամանակակցի հոգևոր աշխարհի բացահայտմամբ:

Գաղտնիք չէ, որ ճաշակով ընթերցողը միշտ սպասում է ճանաչված բանաստեղծի նոր խոսքին: Հրանտը լավ է գիտակցել համաժամանակյա այդ օրինաչափությունը և հիմնականում հասել է իր նպատակին: Նրա պոետական մտածողությունը թևավոր է: Դա հնարավորություն է տալիս ոչ թե վազելու ժամանակի ետևից, այլ գիրկընդխառն, ասել է թե՛ միշտ երիտասարդ է, հասկանում և ընկալում է նոր սերունդների սիրտն ու հոգին, երազանքն ու ճաշակի սահմանները: Այստեղ է, որ նա ջարդում է ժամանակից հետ մնալու կապանքները, քայլում նորերին համընթաց, ձգտում, որ իր խոսքը դառնա առինքնող կանչ: Դա վերաբերում է իր կողմից արժարժվող բոլոր թեմաներին: Ընդգծեն նաև, որ Հրանտի խոսքը պոեզիայի փիլիսոփայության խտացված արտահայտություն է: Նա կարող է դիմել միֆի, տեսիլքի, պատրանքի, սակայն այդ մետաֆորները բերի ազուցի իրակա-

նության ամենակարևոր երակներին, խոսքը դարձնի արժեքավոր ու սրտամոտ:

Հայապատումը, ասել է թե՛ հայրենասիրության խոսքափունջը, իր սկիզբն առել է անհիշելի ժամանակներից, կոնկրետ՝ «Վահագնի ծնունդը» հրաշապատումից: Պարերի ընթացքում մեր պոեզիայի այդ երակը վերածվել է ամենազգայուն և բազմերանգ արյունատարի ու սնել հայ ընթերցողի երևակայությունն ու հոգին: Պարզ է, որ այն երբեք չի մոռացվի մի այնպիսի ազգային ճակատագրի ընթացքում, ինչպիսին մերն է: Հրամուռ ևս անմասն չի մնացել և շարունակում է հիացնել հայրենապատումի իր նորօրյա առասպելով: Ահա և նման մի քերթվածք, որով բացվում է ժողովածուն:

*Նոյը եկավ, հետո՝ աստվածներ բազում,
խայտաթև հրեշտակներ թռան եկան,
բոլորը ափի ի բերան զարմացան ու հիացան լիաթոք
և հագեցած սրտով մեռան Հայաստանում:
(Պարզամիտ էին, անչափ լավատես):
Եվ սատանան եկավ շքախմբով -
զայրացավ ու մոլեգնեց մի քիչ, դդրդաց անհասցե,
Բայց քանի որ երկիրը աչքին դրախտ թվաց,
կամեցավ ընդմիջտ ապրել Հայաստանում
և չմեռնել բնավ...
Սատանայի հետ հակամարտելը
վերին շնորհ եղավ հայոց համար: (էջ 7)*

Հ. Ալեքսանյանի հայրենապատումը պատմության խաչմերուկների փիլիսոփայական հոլովում է՝ երանգված կորուստների ցավով և ապրելու վճռականությամբ, կեցության լուսաթև բանաձևով, անդունդի եզրերից խուսափելու զգոնությամբ: Այս միտումի ծանրակշիռ խորհուրդ է «Այցագիր առ Անհուշ բերդ» հյուսվածքը: Դա «Երկրի ակնարկները» և «Երկրի կասկածները» ըմբռնելու դաս է, որի յուրացումը միայն հնարավորություն կտա

«Սերտել մայր քաղաքի փիլիսոփայությունը և սաղմոսները մրսկան սահմանների»:

Յ. Ալեքսանյանի տողերը խոսքահերթեր չեն՝ տեղի-անտեղի շարտուններով, նրա խոհերը խորքային ու շերտավոր են կյանքի պես, քանզի նա դեպի խոսքարվեստ ընթանում է կյանքից: Այստեղից էլ՝ ժամանակի վարագույրի համարձակ բացումը, որի համապատկերին լույսի հարևանությամբ ալիքվում է ստվերը, բարության մոտ հասնում է չարիքը, լրջության կողքին՝ ավազակությունն ու հեզմանքը: Հրանտն այստեղ է, որ լայն տապանաքարի պարբերություններն է կարդում ու բարձրաձայնում. «Բռնակալները շեշտակի բազմանում են ժողովրդավարության բաց հարթակներին» և «Ամեն առավոտ շքամուտքերից դուրս են գալիս նոր բռնակալիկներ կոկիկ հագնված»:

Սակայն կյանքն ունի նաև մարդուն մարդ դարձնող ու մարդ պահող խորհուրդը, անհատին ձևավորող ու նրա տեղն ու դերն ապահովող դասը: Ժողովրդի ճակատագիրն է, որ թելադրում է բանաստեղծի քնարական հերոսին մտորելու իր արժեքի, իր անելիքի, գնահատվելու և ինքնահաստատվելու մասին: Ահա այս ճշմարտությունն է, որ բանաստեղծը չի մոռանում, մխրձվում է ժողովրդի բարդ ու ավեկոծվող հոսքի մեջ, նրա հետ կապելով նաև իր սեփական ճակատագիրը: Եվ նա հենց ինքն իրեն, իր ընթերցողին, իր որդուն, իմ որդուն, քո որդուն իմաստնաբար խորհուրդ է տալիս սիրել «Երկրի ծաղիկները» և նրանց կոչել «Երազների մականուններով»: Նկատի ունենալով սեփական ժողովրդի բաժին խաչի ծանրությունը, աշխարհի անտարբերությունն ու չարամիտ հարևանների նկրտումները, բանաստեղծը շարունակում է.

*Խոստացիր՝ փամփուշտների խնամքով
կպահես ամենասև օրվան,
դուռդ միշտ կբացես նժդեհների ու քշվածների
առաջ,*

*...անպայման կվերադառնաս բոլոր արշավներից՝
ինչ նահ էլ հետապնդի քեզ, ինչ հրեշտակներ էլ
սիրտդ գերեն:
Խոստացիր՝ Տունը կլիանա զարմի երջանկությամբ,
և աշխարհի հրաշալիքները կզվարթանան
նաև քո ձեռքերից:*

(էջ 10)

Ներքնատես ու ամենատես են բանաստեղծ Յ. Ալեքսանյանի սիրտն ու միտքը: Եվ հենց դրա շնորհիվ է, որ նրա ստեղծած պատկերները գաղափարի և զգացմունքի հյուսվածքներ են դառնում՝ լեռան անուրջով, անուրջով անդունդի, և նույն տեսադաշտի վրա կյանքը ծածանվում է իր հակադրամիասնություններով, իրարամերժ կողմերով:

*Դինոզավրի սիրտը, մրջյունի սիրտը,
տիեզերքի երգը, վանդակախցի երգը,
մեռյալի մրմունջը, ավազի ցասումը,
Քո ցնծությունը, Տիրոջ հիացումը...*

(էջ 12)

Այդպես են աշխարհն ու մարդը՝ երկատված, քաղցր-դաժան, համբերող-ցասկոտ, բարի-չար, աստվածահաճո-մարդատյաց, կենսաթրթիռ-նիհիլիստ... Սակայն կա աստվածային առեղծված՝ առնչված բնության գլուխգործոց մարդու ծովածավալ ու ծովածուփ հուզաշխարհի հետ, որի ակունքն այն օրրանն է, որտեղ ծնվում է անհատը ու նրա հետ կապում իր լինելությունն ու ինքնահաստատումը: Իսկ արցախցու համար դա այն հողակտորն է, որի ամեն մի թիզ հողին շաղախված են մեր նախնիների երազն ու արյունը, մեր պապերի քրտինքն ու հույսը, մեր հայրերի արժանապատվությունն ու երազը, մեր բոլոր նահատակների պատգամը, որոնք Ալեքսանյան-բանաստեղծի մտապատկերում միաձուլվում են ու հոլովվում որպես ասացում՝ կոնկրետ ուղղված Արցախ աշխարհին, որի լեռներն անգամ ազատության ու

հավերժության պատգամախոսներ են, իսկ զավակները հառնեցին «ժամանակի շանթ ու մեթաստազների դեմ»: Այդ ժամանակն իր սահմաններն ունի, դա 20-րդ դարի վերջն ու 21-րդ դարի սկիզբն է, դա շղթաներից ձերբազատված Արցախի հզոր ձայնի ալիքների ծավալումներն են, որոնք վանում են բոլոր անընդունելի մարտահրավերները և դողանջում:

*Երկրիս խաղաղ օրը բուրյան ցորեն հաց է
Ազատության ու հավերժության համար...*

Յ. Ալեքսանյանի քնարական հերոսը Արցախի լեռներից նայում է հորիզոններին ցավով ու վրդովմունքով ճշում, որ «Յայի հակառակ երեսին կպած կարմրասև մի խալ Նաիրի երկրի սիրտն է կրծում անտիկ մեթաստազի համառությամբ»: Դա կորստի զգացումի սովորական ճիչ է, այլ զինվորյալ արցախցու պահանջն ու հավատը:

*...Առույզ անսասան է երկինքը նահրյան,
քանզի հենված է նա սուրբ լեռների վրա:
Ես ու դու, հիշիր, հայոց կենսադաշտի
կարգված բուժակներն ենք,*

և թող չկպչի մեզ ոչ մի կասկած-վարակ: (էջ 13)

Բանաստեղծ Յ. Ալեքսանյանի պոեզիան առճակատումն ու մաքառման, ժամանակի ծածկագրերի ընթերցման, դեկորների ու պատրանքների ժխտման, պատերազմների բացառման, ճերմակ անդորրի հաստատման, շարականված երկրի երազանքի, տիեզերքի շողարծակման, սիրո և մտերմության ծիածանումն փիլիսոփայությունն է: Եվ այդ ամենի առանցքում մարդն է, առանց որի Աստծո արարումը կլինի անիմաստ և ունայն: Կարդանք Յրանտի իմաստությունը:

*Արևն անցնում է`
շող ձեռքերով իր կառչած ստվերից մարդու`
ինչպես խորասուզվող նավաբեկյալ,
և երկարում է մարդաստվերը*

անհետացողի քարշող ուժից:

*Երկինքներում դեռ հավատում են,
թե հարկ է ապավինել ադամորդուն,
երբ լռում է Աստված... (էջ 28)*

Յ. Ալեքսանյանը սույն ժողովածուի առաջին, ամենածավալուն բաժինը կոչել է «Հայկական պարականոն բիբլիա»: Բանաստեղծի համար պատահական ու միանշանակ չէ այդ բնութագիրը: Բազմաշերտ ու բազմաբնույթ երանգներ ունի այս շոշափելի մտահղացումը: Հայկական բոլոր բառարաններում «պարականոն» բառը եկեղեցական իմաստով բացատրվում է այսպես. «Ոչ վավերական, եկեղեցական ժողովների կողմից չվավերացված՝ կանոնական չհամարված»: Հրանտի մոտ «Հայկական բիբլիան» առնչվում է հայ ժողովրդի ճակատագրին՝ անցյալներկա ընթացքով և ապագայի միտվածությամբ: Հայկական բիբլիան (այսինքն՝ Աստվածաշունչը) հիրավի պարականոն է, որովհետև Հայկ նահապետից մինչև Ավո ու Բեկոր, մինչև մեր այսօրեական 7 հազարի հասնող նահատակներ հայոց համազգային ընթացքն ապահովել են գիշատիչ հարևանների կողմից պարտադրված պատերազմների մեջ: Նման պայմաններում է հենց բացառվում և՛ կանոնավոր կյանքը, և՛ կանոնավոր բիբլիան: Ինչպես միշտ, այստեղ ևս Հրանտը հայտնագործել է ասելիքի իր ձևը՝ իրականության անքննելի համաձուլվածքով: Այստեղից էլ տաղանդավոր բանաստեղծի ցավի և հույսի իրարամերժ, բայց ճշմարիտ հոլովումը, որի զարմանալի բարձրարվեստ ու նշանամետ եզրակացություններից է պոետական այս ադամանդակուռ գտածոն.

*...Նոյը գնաց մատյան շքախմբով,
բայց մինչ կմեկներ Մասսյաց երկրից,
որպես ետդարձի սուրբ նախապայման,
նա գրավ դրեց Չմրուխտ Հայաստանը*

«Տեր և Ապագա» գրավատանը...
Չեկավ, չդարձավ ջրհեղեղագնաց ասը փրկարար
(տապա՞նն էր ճեղքվել, գտել էր նոր սե՞ր,
թե՞ ցարդ շրջում է աղետյալ գոտուց
մեկ ուրիշը նա),
և վճարում են Նոյի տոկոսները օրեն հայկազունք՝
հավատք առ հավատք, տրանշ առ տրանշ,
միս ու ոսկորից և հողից սևաչ,
թե դեռ ինչքան են նրանք մուծելու
պարտամուրհակաբար՝
ետ ստանալու Չմրուխտ Չայաստանը,
չե՞ն գաղտնագերծում գրավատանը... (էջ 83)

Ահա, այսպես է շոշափելի դարձնում Չրանտը պարականոն
մեր բիբլիան: Այս փոքրիկ հզոր պատկերը մի ամբողջ վեպի
ասելիք է ընդգրկում իր մեջ: Այս մեր բիբլիական երկրի բիբլիա-
կան ցավով է բանաստեղծն իր մտորումները կիսում ընթերցողի
հետ, շոյելով նրա սիրտը. «Ես սոխակներին ու փերիներին խո-
րունկ աղաչել եմ, որ սիրահոժար մաքրեն հայրենիքիս ունկն ու
լեզուն...»: Այսքանից հետո արդարության անունից հայ պոետը՝
Չրանտ անունով, բարձրաձայնում է.

Տեր, հիասքանչ է կենդանի աշխարհի,
մահն ու թշվառությունը դավի պարզունակ
խաղալիքներ են
լույսի ու սիրո գերարդիական համակարգերի
գործության դեմ:
Մի ցավագին ճիչ և յոթ հիացական
բացականչություն,
ահա ներձայնային նկարագիրդ: (էջ 93)

Դժվար չէ նկատել, որ հայ բանաստեղծը ազգային պարակա-
նոն խմորումներից գնում է դեպի համամարդկային տարածք՝
ճշմարտապատում տազնապով ներկայացնում Աստծո ծիրից

դուրս եկած, խենթացած աշխարհը:

Յ. Ալեքսանյանի խոհերը մարդկային հազարամյա պատմության թելադրանքով են ծփում, նա լսում է «խորունկ ռիթմերը նախածննդոց» և հանուրի անունից, ընդհանրացնում.

Արցունքներ՝ մեռած աստվածներիս համար:

Արցունքներ՝ կորուսյալ սիրեցյալներիս:

Սրտիս մեջ նրանց տաճարներ ձոնեմ:

Նրանց տեղափոխեմ հիշողության

ծաղկուն դար ու տիեզերք:

Ողջերի երկիրը ապրում է արցունքով:

Երկնքին հող ասեմ, հողին՝ երկինք,

մինչև ետ կշռվեն Սիրեցյալ ու Աստված: (էջ 94)

Այսպես մեկը մյուսից շիկացած, մեկը մյուսից ահագնացող պոետական պատկերների մի խոսուն ամբողջություն է Յ. Ալեքսանյանի «Որպես մի դարձող բանազավր» ժողովածուն, որն արժանի է լուրջ ընթերցանության ու լրջագույն գնահատականի՝ որպես համահայկական պոեզիայի նոր երևույթ:

4.

ԱՐԻՍ ԱՐՍԵՆԻՆ այն նոր սերունդների ներկայացուցիչներից է, որ էն գլխից հասկացել է կյանքի եւ արվեստի փոխկապակցության սահյանական պահանջը՝ գրելով մեծ բանաստեղծին նվիրված «Գազել մտերմության» երգը.

Քեզ Որոտանն է տվել աշխարհին,

Իսկ ես ծնվել եմ ափին Թարթառի:

Մեր ծնունդին նույն նվազն է հնչել,-

Միեւնույն լարից միեւնույն թառի:

Ես ապրում եմ իմ Արցախի սիրով,

Դու՝ քո սիգապանծ Սյունյաց աշխարհի:

Ու նույն ոգով դեռ երգեր ենք գրում,-

Ես՝ լույս հավատով իմ լուսաշաղի,

Դու՝ իմաստնացած քո ոսկե աշնան

Տաք կարոտներով լի մթնշաղի:

Եվ Արիսն ընթացավ՝ հավատալով իր լուսաշաղին, թիկունքին միշտ զգալով Մեծն Սահյանի տաք շունչը:

Արիս Արսենիի լուրջ հանդիպումը խստապահանջ ընթերցողի հետ տեղի ունեցավ 1988 թվականին՝ Երեւանում տպագրված «Գրական Ղարաբաղ» ամսանախում գետեղված բանաստեղծական շարքով: Արձագանքը դրական էր թե՛ ամսանախի եւ թե՛ Արիսի երգերի մասին: Առաջին գրախոսներից մեկը ես էի, որ երիտասարդ բանաստեղծի երգերի շարքում տեսա սահյանական ավանդույթին հետեւող, բայց պատկերավորության իր երանգներն ունեցող խոստումնալից պոետին:

Հայրենի տան հանդեպ ունեցած կարոտի եւ հեռացումի պատճառած ցավի բանաստեղծականացումը այնքան անմիջական եւ հոգեբանական այնպիսի խորությամբ եւ բացահայտված «Տունը» հյուսվածքում, որ մնում էր միայն ողջունել մրա մուտքը եւ հավատ ընծայել պոետական նոր հունձքի հանդեպ: Այդ ստեղծագործությունը սովորական համարել չի կարելի: Դա ոչ միայն կարոտի ճիչ է, այլեւ արմատների ետկանչ, որի արանքում տառապում է որդու սիրտը, կրակվում տուն անունով ծնողների հոգին: Հենց այդ երկկողմանի հրդեհված հոգիների չխամրող ճիչն է, որ ելնում է քնարական հերոսի սրտից.

Իմ առաջին ճիչը, որ լսել է տունը,

Իմ առաջին ճիչը վաղուց չկա,

Բայց հիշում է տունը: Ու ապրում է տունը

Մեր այն հեռու գյուղում աղամանդյա: (էջ 32):

Տան հիշողությունը գտնված մետաֆոր է, որդուն այցի կանչող տեսիլք, որ իրական է, շոշափելի, բայց եւ անհասանելի, որ դարձել էր Արցախյան գյուղերի ճակատագիր, տան՝ անուրջները լացող պատեր, «միշտ մի անհույս հառաչ»:

Քնարական հերոսի ցավը խորն է, որ իր փոխարեն իր «նկարն

է տանն այս լոկ տիրութիւնն անուն»։ Գտնված պատկեր է, որ ճշմարտացիորեն ներկայացնում է Լենինի եւ Ստալինի կողմից նորաթուխ Ադրբեջանի հայակուլ երախը նետված արցախյան գյուղի ճակատագիրը, որ խոցում է տանտիրոջ սիրտը.

Ու մնում եմ շվար: Յիմա ի՞նչ եմ, տանտե՞ր,

Յիմա դադձն է ձգվում տանս պատին,

Տանս անքուն պատին ձգվում եղինջն անտեր,-

Սպառնում է անգամ... ժամանակին: (էջ 33):

Եվ ժամանակները դաժան էին: Այդ ծանր ժամանակներից վրեժ առնելու ելք է որոնում բանաստեղծը եւ ինչ-որ չափով գտնում՝ «Գազել պապիս» երգի մեջ: Դա պապի կերպարն է, նրա թողած ավանդն է: Յայկ Նահապետի ժամանակներից սկսած հայը իր կյանքի ճանապարհն ապահովել է հայկյան նետի ուժով, հարատեւել հայրենի հողի սիրտը շոյելով ու բարիքներ ստեղծելով: Այդպիսին էր նաեւ բանաստեղծի պապը՝ Խաչունց Անդրին: Բայց նա միայն Արիսի պապը չէ, իմ պապն է, քո պապն է, նրա պապն է, Արցախի հավերժախոս ավանդույթն ու ներկան է: Նա գրողի անձնական եւ անանձնական մտորումների խտացումն է: Բանաստեղծությունը գաղափարի եւ կատարման առումով հոգիներ շարժելու, անցյալի հրաշալիքները ի տես բերելու ուժ ունի: Պոետը նախ ծանոթացնում է իր պապ-հերոսին.

Նա մեծ պապ-ապա Խաչունց Անդրին էր,

Ականջը ձայնի, աչքը հանդին էր:

Նա հանդի կանջը զգում էր անձայն,

Գնում էր՝ ճամփան հողի կանջին էր: (էջ 33):

Այստեղ խոսում մետաֆորներ են հանդը, հողը, ճամփան, որ փռվում էր պապի ոտքերի տակ: Իսկ այդ ճամփան արարման եւ հացի ուղեցույց էր, որի հետդարձը ուղիղ տուն էր բերում: Պապը.

Բանում էր հանդում մինչեւ ուշ գիշեր,-

Մենակ չէր, ընկեր կար՝ Ծիր-կաթինն էր,-

*Պատահում էր եւ՝ քնում էր հանդում,
Իսկ թռռան աչքը միշտ էլ ճամփին էր:*

(էջ 33):

Պապի տունդարձին սպասող թռռը սակայն խզում է կապը հազարամյակների ավանդույթ դարձած պապի հույսից. «Թռռան երազը հանդից անդին էր...»: Պապի գալուստով թռռն իրեն երջանիկ էր զգում, «բայց հանդ չէր գնում, հանդը... պապինն էր»:

Բանաստեղծության ավարտը եւս գյուտ է՝ հողապաշտ անցյալի եւ հողից խռոված ներկայի ընդգծումով.

Պապը աշխարհում այլեւ չկա,

Թռռը մեծացել, աչքը... հանդին է: (էջ 34):

Ասել է թե՛ թռռը կարոտ է պապի ավանդած հանդին, որ միայն հանդ չէ, պապաբույր կենցաղ է, արմատապահ գիրկ, կարոտի ցավ, ետդարձի կանչ:

Հայտնի համոզմունք է, որ երգը ծնվում է կարոտից: Սակայն ավելացնենք, որ կարոտից հյուսվում են տեսիլքն ու պատրանքը՝ ոչ վերացական, այլ շոշափելի ու կոնկրետ՝ ակունքված բանաստեղծի եւ ստեղծագործական նախասիրություններից, եւ անմարում կարոտից: Կարոտածին պատրանքի եւ տեսիլքի պոետական հնարանքը հատուկ է նաեւ Արիսի պոեզիային: Վկան նրա «Գազել պատրանքի» պատկերը: Բանաստեղծը մենախոսում է՝ կոպերի տակ հայրենի բնաշխարհը, որտեղ «էլ չի կարկաչում Դնգդնգան ձորը» եւ իր «մանկության սիրած աղբյուրը»: Չկա «մեղրահամ ջուրը»: Աղբյուրը լուռ է: Բայց խոսքը միայն աղբյուրի մասին չէ, այլ նրա կարկաչի հետ երազ դառած մանկության: Քնարական հերոսին մի պահ պարուրում է անհուսությունը, սակայն պատրանքը սփոփում է նրան: Դա վերացական հույզերի ծփանք չէ, այլ մանկության բնօրրանը, հայրենի եզերքը շենացնելու երազանք.

Անհույս նայում եմ լռած աղբյուրին

(Ինչ ծանր է նրա այդ լռությունը):

*Աչքերս են հանկարծ ծանրանում տխուր,
Ու ջուր է դառնում աչքերիս հուրը:*

*Եվ արթնանում են քարերը կարծես,
Կոտրում աղբյուրի քար լռությունը:
(էջ 36):*

Պատրանքի թելերից են հյուսված նաեւ «Գիշերային նվագ» բանաստեղծությունը, որտեղ պատկեր-կերպարներ են պոետի *հուշերն ու գիշերը*: Հուշերը անձնավորված են, հանգիստ չեն տալիս քնարական հերոսին, որին չեն օգնում փողոցն ու քամին: Սակայն նա մենության խավարը ցրելու համար վառում է լույսերը, որ «լույսի հետ վառվեն խավարած հույսերը»: Բանաստեղծության ընդհանրացումը, որ հրաշալի մի պատկեր է, ասես հյուսված է Մեծ Լոռեցու խորհուրդով, որ տվել է նա 1917թ. սկսնակ բանաստեղծներին, որ երբեք չհուսալքվեն, լույս երգեն ու արեն:

Թունանյանի այդ խորհուրդը հայ բոլոր պոետները չեն մոռացել երբեք, եւ այդ թունանյանական լավատեսությունը զգում ենք նաեւ Արիսի «Գիշերային նվագի» մեջ, որ ավարտվում է այսպես.

*Իմ հույսը իմ տունն է՝ սերաշխարհս անծայր,
Ինչքան էլ նենգ լինի գիշերս ու խավար:
Եվ թեկուզ մենակ եմ, բայց նորից իմ տանն եմ,
Իսկ հուշս իմ հոգու արեւոտ հնձանն է,
Նրանից եմ առնում երազս, կարոտս,
Եւ արեւ նկարում նրանով մինչեւ լույս,
որ խաղա՛ղ, անաղմո՛ւկ լուսանա գիշերը,
լույսի հետ տունս գա ու մնա իմ սերը:
...Իսկ հիմա դեռ մութ է, հիմա դեռ գիշեր է,
Բայց... տանս մենակ չեմ, ինձ հետ եմ... հուշերս: (էջ 38):*

Այսպես, Արիս Արսենին գրական աշխարհի մտավ հայ դասական պոետիայի լավագույն ավանդույթների լույսով ջերմացած՝ աչքը հայրենի հողին, ականջը նրա կանչին, երազը հյուսած եր-

գին, ու Արցախյան ազգային ազատագրական պայքարին զինվորագրվեց առանց երդումի, որովհետև հայրենիքի պատկերը նրա արյանն էր անցել մոր կաթի հետ: Նա զենք վերցրեց, սպայի աստղեր կրեց ուսերին, գրիչը ցած չդրեց, որպեսզի ամբողջությամբ զինվորյալ դարձած ժողովրդի հետ մեկտեղ վերականգնեն հավատը՝ Արցախը փրկելու եւ անկախ ու ազատ ապրելու վճռականությամբ: Արիսը եւս, ինչպես Ն. Գասպարյանը, Յ. Ալեքսանյանը, Ժ. Բեգլարյանը եւ այլ երիտասարդներ, Գ. Գաբրիելյանի, Վ. Հակոբյանի, Յր. Բեգլարյանի, Ա. Հովհաննիսյանի, Ս. Խանյանի, Ն. Ավագյանի եւ մյուս ճանաչված պոետների հետ ծառայեցին Արցախը մայր Հայաստանին վերամիավորելու սրբազան գաղափարին ու գործին:

Ջինվոր-լրագրող-բանաստեղծ Ա. Արսենին կանգնեցրեց պոետական իր շենքը ամուր հիմքերի վրա: Նկատի են առնում նրա բանաստեղծությունների վերոնշյալ մնայուն արժեք ներկայացնող շարքը: 1993թ. նա ընթերցողի սեղանին դրեց «Ճաքած լռություն», 1997-ին՝ «Անդրանիկ, այսինքն՝ առաջամարտիկ», «Ուշացած երկխոսություն Արարատ Ղազարյանի հետ», 1998-ին՝ «...Եվ այսպիսի ճակատագիր», 2000-ին՝ «Ղողանջ հիշատակի», «Լռության ընթացք», 2001-ին՝ «Ծովածաղկի աչքեր», 2003-ին՝ «Անտառի ձայնից ինչու են հուզվում», 2005-ին՝ «Համանվագ», 2007-ին՝ «Ափ», 2008-ին՝ «Արի սիրենք մենք մեկմեկու...» ու «Չափածո եւ արձակ երգիծանք» գրքերը:

Արիսն աճում էր նկատելիորեն՝ նույն ստեղծագործական խառնվածքով, նախասիրություններով, բազմազան թեմաների մեջ քնարական շնչով, միշտ որոնումների ու գտնումների ծարավով:

Բազմազան թեմաների դաշտում Արիսը, առաջին հերթին, հայրենասեր է: Եվ դա բնական է: Արցախում ստեղծվող գրականությունը 1988-ից սկսած, առաջին հերթին ազատաբաղձ ոգու արտահայտություն է, երկիրը ազերի-թուրքերից փրկելու կոչ, ի հարկե, գեղարվեստական արցախապատկեր հնարանքներով: «Ճա-

քած լռություն» - վերնագիրն անգամ խոսում է իր մասին: Նրանում հեղինակը զետեղել էր ե՛լ «Գրական Ղարաբաղ» ավանախում տպագրված երգերը, ե՛լ նոր ստեղծագործությունները՝ նվիրված մեր ժողովրդի անցյալին ու ներկային: Այս առումով հատկանշական է «Հայ ժողովրդի ճակատագիրը» բանաստեղծությունը: Բնութագրական ընդգծումներով բանաստեղծը ուրվագծում է մեր ժողովրդի ե՛լ ծանր ճակատագիրը, ե՛լ կամքի անսպառ ուժը: Դրա շնորհիվ է, որ նրա «տխրությունը երազներ» է ծնել, կարոտները եղել են «մաքուր ու բարի», սիրտը՝ մեծ, միտքը՝ ծովածուփ: Միաժամանակ նշում է, որ մեր «նախնիները ձեռքեր ունեին ծնկներին հասնող», բայց, ավաղ, դարերի հետ փոխվել է ամեն ինչ, սակայն չեն փոխվել հարատեւելու նրա վճռականությունն ու արարելու ծարավը. եւ օրինական հպարտությամբ ասում է.

Իմ ճանապարհին

Վերելքներ եղան ու նեռ անկումներ,-

Ինչքան բարձրացա՝

Այնքան կորցրի,

Ինչքան կորցրի՝

Այնքան երկնեցի,

Այնքան կերտեցի... (էջ 6)

Կերտելուն հաջորդել են նոր կորուստները, նոր անկումներն ու հառնելու տենչը: Եվ բանաստեղծը կրկին անդրադառնում է Հայոց պատմությանը, դիմում Մխիթար սպարապետին, կոչ անում, որ Նոր Հալիձորները այպանեն դավաճաններից, որ Սյունիքն ու Արցախը չառնի օսմանլուն: Պատմությունը շարունակվում է, բայց այս անգամ բախտը ուրիշ անակնկալներ է մատուցում՝ ելել են Արցախն ու Սյունիքը, ամբողջ հայությունն է ոտքի ելել՝ փրկելու ազգային արժանապատվությունը. «Իզաբելլային» բանաստեղծության մեջ՝ գրված 1991թ., Արիսն ընդհանրացնում է.

Դու ասում ես... Ու ելնում են տղաները ծուռ,

Ելնում են, որ հայ քարերը հայ մնան կրկին,

Ելնում են, որ վերակերտեն ավեր տունը մեր,

Որ մոռացվի դանթեական առասպելն այն հին: (էջ 9)

Արիսի պոետական երեւակայությունը մասունքներ է փնջում աշխարհասփյուռ հայության երազներից, ցավից ու արցախածուփ հույսից: Այդ են վկայում բեյութի դաշնակահար Իզաբելլային նվիրված երգերը, որոնցում ծփանք են առել Հայոց նոր ազատամարտի կոչերն ու հորդորանքները: «Կանչե, կռունկ» բանաստեղծությունը յուրօրինակ կոչ է՝ ուղղված մարտի ելնող քաջազուններին.

Կանչե, կռունկ, կանչե՝ գնանք ի մարտ,

Կանչե, կռունկ՝ քանի ջահել ենք մենք...

...Մեջքը մեր չի ճկվի երբեք մարտում,

Մենք դեռ պետք է կռվենք, պետք է կռվենք... (էջ 11):

«Ճաքած լռություն» գրքի հետաքրքիր էջերից է «Շիրազականչ» շարքը, որտեղ առաջին հերթին ընդգծվում է մեծ բանաստեղծի շիրազված հայրենապատումը, որի փառավոր նմուշներից է «Ղարաբաղի ողբը» ստեղծագործությունը: Մեջբերելով Շիրազի հայրենաշունչ, թեւավոր արտահայտությունները, Արիսը անմահ պոետի հավատով նշում է.

Իմ ազգը հեզ չէ,

Ոսոխին՝ տեգ է,

Ոսոխի սրտին սուր ու դանակ,

Իմ ազգը հուր է,

Թշնամուն՝ սուր է,

Թշնամու մուխը մարող բանակ:

Ապա մեջ բերելով Արցախում ընթացող գոյամարտը, Արիսը հավատով բացականչում է.

Ոչ, նա չի պարտվի,

Կկանգնի ոտքի,

Կկապի որդու՝ Դավթի գոտին,

Որ գետնի նրան

Մի ակնթարթում-

«Յոթ միլիոնանոց» իր ոտխիւն:

(էջ 15):

Անկախության շրջանի հայ պոեզիայում, որ սկսվում է 1991թ. սեպտեմբերից, մեծ տեղ են գրավում մեր սուրբ նահատակներին ձոնված բանաստեղծությունները, պոեմները, լեզենդներն ու ասքերը: Արիս Արսենին եւս անմասն չի մնացել նման երկերի ստեղծման գործընթացից: Մարտական ստորաբաժանման կազմում, որպես վաշտի հրամանատարի տեղակալ, մասնակցելով մարտերին՝ լինելով ռազմաճակատի թեժ կետերում, իսկ այնուհետեւ, հրադադարի հաստատումից հետո, զինծառայությունը շարունակելով որպես զինվորական թղթակից, նա մոտիկից իմացել է ոչ քիչ քաջազույնների, ունեցել է մտերիմ ընկերներ, որոնց մի մասը հայրենիքի ազատությանն է նվիրել ամենաթանկը՝ կյանքը: Արիսի ստեղծագործության մեջ մի առանձին բաժին են կազմում զոհյալների հիշատակին նվիրված երգերը: Դրանցից են «Ես կուզեի լինել», «Ժամադրություն», «Երջանկություն», «Դու ապրում ես» հյուսվածքները՝ ընծայված Գագիկ Պատվականյանի, Արթուր Դանիելյանի, Գուրգեն Վարդանյանի, Արթուր Խաչատրյանի սուրբ հիշատակին: Արիսի սրտի մեջ կայծակել է նաեւ անհուն մի ցավ, երբ զոհվել է նրա կրտսեր եղբայրը՝ Անդրանիկը: 1993թ. նոր տարվա առաջին օրը գրված «Տխուր նոր տարի» բանաստեղծությունը սրտառու է մի ռեքվիեմ է, որ յուրաքանչյուր զոհյալի հարազատ կարող է այն համարել իր ցաված սրտի խոսքը: Այն հոգեհարազատ է նաեւ ինձ, որովհետեւ իմ ավագ եղբայրը՝ բանաստեղծ Սուրեն Խանյանը, նահատակվել է Մեծ հայրենականում՝ գերմանական ֆաշիզմի դեմ մղված կռիվներում: Արիսն ասես հենց իմ անունից է գրել այդ երգի տողերը, որ արտահայտում են անձնական եւ անանձնական ցավ ու կարոտ:

Պատերազմի թեման պոետական պատկերների թարմությամբ լայն տեղ գտավ նաեւ «*Համանվազ*» ժողովածուում: Մի ամբողջ շարք են կազմում հայրենասիրական ստեղծագործու-

թյունները, խմբված՝ «Մատս՝ ձգանին» վերնագրի տակ:

Արիս Արսենին այստեղ արդեն խոսում է ե՛լ ավագ, ե՛լ նոր սերնդի անունից: Որպես բնաբան՝ բերված են հոր ու հերթափոխի սպասող որդու անունից.

*Մատս ձգանին՝
Կսպասեն, տղաս,
Առնականանաս:
Չերթս կփոխեն այնժամ,
Երբ որ դու
Չերթափոխի գաս:*

(էջ 23):

Շարքը ոչ միայն բանաստեղծական զգացումների հաջող փունջ է, այլ նաեւ յուրովի մի տարեգրություն: Այսպես, որպես «Կարճատեւ մարտ» երգի բնաբան կարդում ենք. «1994-ի հունվարի 8: Ներքին Սեիդահմեդլի: Ծանր վիրավորվեց 4-րդ վաշտի քաջարի հրամանատար Ժիրայր Մկրտումյանը, զոհվեցին դասակի հրամանատար Կարո Միքայելյանը եւ շարքային Արմեն Բաբայանը»: «Փոքրիկը» երգի բնաբանը ազդարարում է. «1995-ի փետրվարի 2, Սեյսուլան: Դավադիր ակամի զոհ դարձավ լեգենդար Փոքրիկը՝ Արթուր Օհանյանը»: «Եղբայրս, արի...» երգի բնաբանը հայտնում է. «1994-ի ապրիլի 18, Յասանդայա: Կատաղի մարտում հերոսաբար զոհվեց գնդացրորդ եղբայրս՝ Անդրանիկ Արսենի Գրիգորյանը»: Կցանկանայի բանաստեղծությունը բերել ամբողջությամբ.

*Գիշեր է, Ամանոր, իսկ դու դեռ... չկա՛ս,
Բայց թույլ մի զգացում հուշում է՝ կգա՛ս:
Կգա՛ս ու աղմուկով դուռս կբացվի,
Կունկնդրես կարոտած պատերիս լացին:
Կգա՛ս, որ կարոտած սիրտս ջերմանա,
Երազս թողնես ինձ, թախիծս զնա՛:
Կգա՛ս, որ էլ իրար չմնանք ծարա՛վ...
(Երա՛զս, կարո՛տս, թախիծս տարա՛ր):*

Ի՛նչ «անխիղճ» տղա ես, եղբա՛յրս, արի՛,
Որ ուրախ սկսվի զոնե այս տարին:
Այստեղ էլ ձյուն տեղաց կարոտիս սրտին...
Բայց ինչ էլ լինի՝ քեզ սպասե՛նք պիտի:
Բայց ինչ էլ լինի՝ դու անպայման կգա՛ս,
Որ օ՛րս, արեւ՛ս, գալի՛քս դառնաս... (էջ 28):

Արիսը ցասունի չափածո իր խոսքն է ասել Սունգայիթյան ցեղասպանության դեմ: Հինգ մասից բաղկացած քնարական պոեմում արտահատելով իր զայրույթն ու ցավը, բանաստեղծը բնութագրում է հայոց դարերը եւ ճչում.

*Դու՛ հայոց վերջին ցեղասպանություն,
Մարդկության վերջին ոճի՛րը լինես...*

(էջ 36):

Արիս Արսենին բանաստեղծական ձեւերի մեջ միշտ անհանգիստ է, որոնում է խոսքն ասելու թարմ միջոցներ, եւ նշեմ, որ հաջողվում է գտնել: Որպես օրինակ կարելի է բերել «Լռության թուփ» պոեմը, որը նվիրել է իր հայրենի Կոճողոտ գյուղի զոհված ազատամարտիկների հիշատակին: Պոեմի վերնագիրը «Լռության թուփ» է կոչվում, սակայն զոհյալների շրթերին հնչում է հավերժության ձայնը՝ իրենց անունից, անունից ժողովրդի եւ նոր սերունդների: Այդ գաղափարը բանաստեղծն ընդգծել է պոեմի վերջում՝ «Հետգրության կարգով» վերտառությամբ.

*Ու տղաները գնում են նորից,
Որ ամուր պահեն իրենց... դիրքերը,
Իսկ անդառնալի կորստյան ցավից
Դեռ մղկտում են հարազատները:
«Կանգնած են» տղերքն անհողորդ, անքեն,
Որ կայուն լինի խաղաղությունը...
...Եվ ավարտված է լռության թուփն,
Բայց լռությունը շարունակվում է: (էջ 50):*

Արիս Արսենիի քնարերգությունը արժանացել է ե՛լ ընթերցողների, ե՛լ մի շարք գրականագետների ու գրողների դրական գնահատականին: Հաճելի է նշել. որ դեռևս 1989թ. Սիրիայում հայտնի գրականագետ Յակոբ Չոլաքյանը ընդհանրության մեջ գնահատել է «Գրական Ղարաբաղ» ավանախում տեղ գտած երգերը, դրանք համարելով «Արցախի ինքնաճանաչման» արտահայտություն: Նա նկատում է, որ առանց այդ համընդհանուր ինքնաճանաչման հասնելու, հնարավոր չէր լինի Արցախյան շարժումը: Եվ որպես քնարական հերոսի ներաշխարհի բացահայտման հաջող օրինակներ, բերում է Արիսի բանաստեղծությունները: Բնութագրելով կոնկրետ Արիսի՝ Համո Սահյանին նվիրած երգը, Յ. Չոլաքյանն ընդհանրացնում է. «Արցախցին իր խիղճը, շրջապատը, իր տոհմային զրույցներն ու պատմությունը պրպտելով կհավերժվի ապրող ու մեռած իր բոլոր ազգականների եւ հայրենի եզերքների հետ հայերենով, խաչքարով, նույն հավատով ու երազով, Հայկ Նահապետով, Սուրբ Գրիգոր Լուսավորիչով, Սուրբ Մեսրոպով, Ավարայրով: Հասկանալի է, որ սրանք մեր ժողովրդի էությունն են, Հայաստան աշխարհի ու հայ ժողովրդի «հիշողությունը» կազմող հիմնական տարրերը: Արցախցին այսպես է, որ հայության կրողն է դառնում, իսկ Արցախը՝ Հայաստանի մի մասը: Միայն այս ըմբռնումներով է, որ արցախյան բանաստեղծությունը հասնում է հայրենիք եւ ազգ ըմբռնումների ձեւի եւ բովանդակության դաշնության եւ ամբողջականության: Հայ բանաստեղծությունը արցախյան ներշնչում լինի թե Սյունյաց աշխարհի, Թարթառի ափին վարարող հավատի երգ լինի, թե Որոտանի ափին հեծեծող կարոտի երգ՝ նույն նվազն է՝ «միեւնույն լարից միեւնույն թառի» («Արցախեան ինքնաճանաչման բանաստեղծութիւնը», Հալեպ, 1990, էջ 68):

Արիսի քնարերգության առանձնահատկությունների դրական գնահատականն ենք կարդում գրականագետներ Լ. Գրիգորյանի «Ազնիվ մղումների բանաստեղծը», Ս. Խաչատրյանի «Արիս Գրի-

գորյանի բանաստեղծական աշխարհը», բանաստեղծ Ռ. Եսայանի «Չամանվագ», «Ապրում է տարածությունը, որպես միջոց լույսի» գրախոսություններում: Իսկ Արցախի գրողների միության վարչության նախագահ, տաղանդավոր բանաստեղծ Վ. Չակոբյանը գրել է. «Արիս Գրիգորյանի գրիչը խոպաններ է հերկում, այսպես ասած, հերկված դաշտերում, հաստատելով, որ նորույթը ասելիքի մեջ է, որ ասելիքն է կարելորում թեմայի հրատապությունը: Եվ դրա գեղեցիկ վկայությունը Արցախի մարտական կյանքը պատկերող նրա զուլալ երգերն են» («Եղիցի լույս», 2001թ. № 2):

Արիս Արսենիի պոեզիայում, որ բազմալար է թեմատիկ առումով, առյուծի բաժինը հայրենապատումն է՝ անմիջական, թեւավորող:

5.

Մեծանուն Ավետիք Իսահակյանը 1910թ. ողջունելով Յովհաննես Թումանյանին, գրել է հակիրճ մի հոդված՝ «Գիքորը» պատմվածքի կապակցությամբ: Բարձր գնահատելով գրական այդ կոթողն ընդհանրության մեջ՝ Վարպետը մասնակիորեն ընդգծել է. «Ամենից շատ մեզ հիացնում է պատմվածքի լեզուն՝ այն բյուրեղային վճիտ ոճը, որ պակասում է մեր շատ գրողներին: Փակագծի մեջ ասենք, որ մեր գրողներից շատերն այն անգեղարվեստական ըմբռնումն ունեն, թե որքան ճապաղ, ձգձգված և ճռռոն բառերով գրեն, և որքան խրթին լինի գրվածքը, այնքան նա բարձր արժանիքներ կունենա, այնինչ, ոճի հստակությունն ու պարզությունը մտքի հստակությունն ու բյուրեղացումն է, պերճասանության դարն անցել է, նրանով կարելի է շշմեցնել անճաշակ ընթերցողներին միայն:

Յովհ. Թումանյանի լեզուն այնքան վճիտ է և, միևնույն ժամանակ, այնքան պատկերավոր՝ նման լեռնային վտակին, որի հատակում շողշողում են նախշուն ավազահատիկները» (Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, 6 հատորով, հ. 5, Երևան, 1977, էջ 131):

Գրականությունը հասկացող ու գնահատող յուրաքանչյուր ոք կարող է հաստատել, որ անմահ Վարպետի այս խորհուրդը կարևոր է նաև այսօրվա համար և՛ վաղվա, քանզի մեր ժամանակներում ևս կան խրթին ու ճոռոմ ոճի սիրահարներ, որոնց պատճառով ընթերցողը երես է թեքում գրքից, խորթանում գեղագիտական հաճույքի այդ անփոխարինելի աղբյուրից:

Մեր այս մտորումներն առնչված են լայն ճանաչում գտած բանաստեղծուհի **ԺԱՆՆԱ ԲԵՂԱՐՅԱՆԻ** «Յեռացումի անեզրություն» նոր ժողովածուին, որ հրատարակվել է 2010թ.: Դա հերթական փոքրածավալ գրքույկ չէ, այլ ստվարածավալ մի հավաքածու, որ հնարավորություն է տալիս կոնկրետ բնութագրումներով նշել բանաստեղծուհու ձեռքբերումները, ծանոթանալ մտահորիզոնին, ի ցույց դնել պոետական աշխարհընկալումը, արժեքավորել գեղարվեստական խոսքը:

Ժաննա Բեգլարյանի նոր ժողովածուն ներկայացված է շարքերով, որ կրում են «Յեռացումի անեզրություն», «Վերջի սահմանում», «Անկշռելիություն», «Ընդմիջման լուսանցք» խորագրերը: Նրանում զետեղված են նաև «Տեսիլ», «Ծաղրածուներ», «Բվի կռիւնչ», «Դարձ հոգու և վիճակի» պոեմները:

Որպես տրամաբանական շարունակությունը Ավ. Իսահակյանի դիտարկումի՝ ընդգծենք, որ Ժ. Բեգլարյանը, որ մի քանի գրքերի հեղինակ է, հավատարիմ է մնացել բանաստեղծական իր նախասիրություններին, արտահայտվելու հստակ ու պատկերավոր ոճին, խոհերն ու զգացմունքները կյանքից առնելու, կենսաթրթիռ դարձնելու, ցավը կարոտի վերածելու, կարոտից լույս փնջելու, երկիրն ու օջախը մեծարելու, հայոց ավանդական սերն ազգային անբիծ կենսածն և ապրելու բանածն դարձնելու հավատամքին:

Ժ. Բեգլարյանը ստեղծագործական առաջին քայլերից ունեցել է հոգևոր իր ուսուցիչներին՝ տարբեր շեշտադրումներով: Կոնկրետ Պ. Սևակի խիզախությունը՝ հանուն դժվարի ու բարդի, Վ. Դավթյանի «Անկեղծ մորենու» թախիծն ու կարոտի զգացումը, Զ.

Սահյանի բնապաշտությունը եղել են դպրոցներ, սակայն՝ ինքնատիպության ձգտումով: Եվ շատ արագ ժաննան ասել է իր խոսքը՝ հանձինս «Երկիր, Քարե տուն», «Փակագիծ», «Դարձ հոգու և վիճակի», «Ընդմիջման լուսանցքում» ժողովածուների, որոնք արժանացան ոչ միայն խստապահանջ ընթերցողների, այլև գրաքննադատների դրվատանքին: Եվ գոհունակությամբ են նշում, որ ժաննայի առաջին ժողովածուի մասին իմ գրախոսությունը տպագրվեց և՛ մեր տեղական, և՛ լիբանանահայ մամուլում:

Տեղին է ընդգծել այն ճշմարտությունը, որ ստեղծագործող անհատի հուզաշխարհի ձևավորման և իմաստության հաստատման վրա նկատելի ազդեցություն են ունենում ծննդավայրն ու գործունեության ընթացքը:

Ժաննայի ծննդավայրը՝ Հադրութի շրջանի Խծաբերդ գյուղը, հազարամյակների իր դժվարին ուղին անցել է բազմանուն, բազմաբույր ծաղիկների միջով՝ զրուցելով Ծիր կաթինի աստղաբույլի հետ, մարտնչելով տարբեր գույնի ավազակաբարո ոսոխների, առանձնապես ազերի-թուրքերի դեմ: Ծննդավայրի առիքնող գեղեցկությունը և մաքառող ոգին փոխանցվել են նաև ժաննա դստեր ներաշխարհին: Դրան գումարվել է նաև նրա նվիրումն իր հայրենական գյուղի դպրոցներին, որտեղ բուհն ավարտելուց հետո աշխատել է որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, ու պատահական չէ, որ բանաստեղծուհի ժ. Բեգլարյանի ստեղծագործություններում զգացվում են անհանգիստ ոգու ծփանքն ու երկրի ու հայրենակիցների մտահոգությունները: Սակայն խոսքի ոչ ճակատային, այլ քնարական հերոսի ներաշխարհի ցուցադրումով:

ժ. Բեգլարյանի բանաստեղծական շարքերում հուրհրատում է մորմոքուն մի կարոտ, ավստսանքի մի ելևէջ, բնության ու մարդու մտերմության խորթացումի մի ահագանգ: Ասել է թե՛ նրա ուշքն ու միտքը ժողովրդի ճակատագիրն է, որ ասես գնալով բարդանում է, առաջադրում նոր հիմնախնդիրներ:

Ժ. Բեգլարյանի պոետական հասունացումն ընթացել է սահուն, աշխարհայացքային նկատելի երանգներով: Նրա հաջողության գրավականը կյանքի հետ ունեցած սերտ կապի մեջ է: Իսկ կյանքը, ըստ բանաստեղծուհու, անեզրական է, բազմաշերտ:

Յենց այդ է հուշում նրա գտած «Յեռացումի անեզրություն» հասկացությունը: Ժաննայի քնարական հերոսի հեռացումը հեռու է հուսալքումից, այն խորթացում չէ կյանքից, ընդհակառակը, նրան միշտ վառում է մի կենսահարց՝ որ երկրի պատմությունից է ակունքվում ու թելադրում յուրօրինակ հոգսը.

*Ո՞ւր տանեն երկրիս կիսված պատմությունը՝
շարունակ անկատար,
ու սահմանը, որով ծանր շղթա է դրվում
ոտքերիս...*

Այս հարցի պատասխանը հնչում է որպես կենսափիլիսոփայություն, այն համոզմունքով, որ «պատմության ճշմարիտ դասագիրք այնպես էլ չի գրվում», դեռ ավելին.

*ինչ հիմնի տակ էլ իրեն
պարզաջրի
մարդկությունը,
Միևնույն է, ինչ-որ տեղ, ինչ-որ բան
սխալ է մնում...*

Ժ. Բեգլարյանի գրական դավանանքը ժամանակակից կյանքի ճշմարիտ բացահայտումն է, նա դեմ է իրականության գունազարդմանը, ձգտում է առօրյան պատկերել այնպես, ինչպես կա, ամեն դեպքում նոր պատկերներով, իր կողմից հայտնաբերված գյուտերով ու շեշտերով: Այս պահանջն էլ հենց նրան հուշում է «ազգային պատկանելության» հիմնախնդիրը: Ազգային ճակատագիրը ձուլվում է քնարական հերոսի արյանը և դառնում կանչ, որի ղողանջների տակ իրեն տեսնում է «օտար ճանապարհներին», բայց դարձած «անպարտ ոգի»: Ժ. Բեգլարյանը պոեզիա-

յով ուսուցանում է, որ չպետք է մոռանալ ժողովրդի անցյալը: Եվ իր սերնդի անունից հայտարարում է.

Խելահեղորեն տենչում եմ

Նարեկացուն,

Երազում գլուխս դնել նրա

Խնկահոտ ծնկանը

Եվ հանգրվանել նրա

աստվածության ներքո...

Մայր ժողովրդի հազարամյակների պատմության զանգակատան ղողանջները բանաստեղծուհուն մղում են՝ օժվելու «Կոմիտասի երգերով», չմոռանալ Վարուժանի «արնածոր վերքերը», փարվել Չարենցիմ՝ «տառապանքի մեջ», միշտ զգալ «նրա վերջին պահի ողբերգությունը», այցելել Պարույր Սևակին, անընդմեջ ունկնդրել նրան:

Ժ. Բեգլարյանի քնարական հերոսի ցավը խորն ու անեզր է, նրան հուզում է ցեղասպանություն տեսած աշխարհասփյուռ հայության ճակատագիրը, որ շարունակում է մնալ բարդ ողջ աշխարհում: Եվ բնական է, որ նա բացում է իր ցաված սրտի դռները և բացականչում.

...Ամեն օր սգակրի հայացքով

միլիոն անգամ նայում եմ

Հրանտ Դինքի մտահոգ,

այլևս անթարթ աչքերին...

Ազգային ցավն այնպիսի անանձնական մրմուռով է խոցում քնարական հերոսի սիրտը, որ ի լուր աշխարհի, հայտարարում է. «Այդ ինձ են մորթել Պոլսի թաղերում ու թողել՝ անթաղ»:

Ժ. Բեգլարյանը քնարական շնչով է ընդգծում քաղաքացիական իր ակտիվ կենսադիրքը, մարտնչում հանուն «Մարդու դիմանկարի» ամբողջացման, երազում «բարոյականության բոլոր չափանիշների» պահպանումը:

21-րդ դարի հակասական իրավիճակներն արձագանք են գտնում բանաստեղծուհու հոգում և դառնում խոսուն պատկեր («Իմ հաշտության մեջ»):

Ժ. Բեգլարյանի պոետական խոսքն ազատ է կապանքներից, և ինչի մասին ու ինչպես էլ գրում է, նպատակը մեկն է՝ ներկայացնել մարդուն: Այս առումով նրա պոեզիան կարող ենք համարել մարդերգություն: Սակայն բանաստեղծուհին խիստ մտահոգված է, որ դեռևս մարդու դիմանկարը հեռու է աստվածային լինելուց: Նա իր խոսքն ընդհանրացնում է սեփական երկրի առօրյա օրինակներով, նա նախ հպարտ է, որ ոչ ոք չի լքել հարազատ քաղաքը, «Ջինադադարից անմիջապես հետո բոլորը նկուղներից տուն են դարձել Նոյի աղավնու թևերի վրա»: Սակայն հնչում է դժգոհությունը այն երևույթի պատճառով, որ՝

Աշխարհի ամենակարճ փողոցը

մի ակնթարթում

Բնակեցվել է իրար խիստ կիպ կպած

կրպակներով,

Որ ամեն ինչ կարելի է գտնել,

բացի մարդկային խղճից... (էջ 22)

Բանաստեղծուհին մտահոգված է, որ «Մարդիկ ջերմ կամ սառը հարաբերությունների ժամանակ չունեն», տարված են սեփական շահերով:

Ընդարձակ է բանաստեղծուհի Ժ. Բեգլարյանի մտահորիզոնը, որտեղից էլ՝ նրա թեմաների ընդգրկումն լինելը: Ժաննան առանց անցյալի չի պատկերացնում ներկան, ուստի հաճախ անցյալով զնահատում է ներկան ու ժամանակակիցներին և ընդհակառակը: Դրանով նա ընդգծում է պատմության և արդիականության սերտ կապի անհրաժեշտությունը՝ լավագույն ավանդույթների յուրացման և շարունակելու առումով: Այստեղից էլ նրա կենսափիլիսոփայությունը՝ բոլոր պահերին թռչքի պատրաստ լինելը:

*Ես սովորական չեմ,
արյանս մեջ եղերական
հիշողություն կա:
Թևերս պատրաստ եմ
հզոր թռիչքի,
զօր ու գիշեր
թափահարում եմ,
իսկ ոտքերս մինչև ծնկներս
խրված եմ հողի մեջ:*

(էջ 54)

Ոտքերի՝ հողի մեջ խրված լինելը անցյալի ու ներկայի ապ-
րեցնող կապի մետաֆոր-գաղափարն է, ինչպես ժողովուրդն է
ասում՝ պորտալարով մեր նախնիների կենսահաստատ բարքե-
րին ու արարքներին միշտ կապված մնալը: Իսկ մեր նախնիները
բոլոր պահերին եղել են լավատես: Այդ լուսավոր հավատի
ավիշն է, որ լույս է դառնում ժամնայի երգերում.

*Դու անընդհատ կրկնիր ինձ,
որ ես Արևի զավակն եմ,
և բոլոր հնարավոր
արշալույսները
ինձ համար եմ բացվելու...*

(էջ 79)

Ժ. Բեգլարյանի մտորումներն ու խոհերն առիմքնող երանգնե-
րով են փնջված գրքի «Վերջի սահմանում» շարքում: Բանաս-
տեղծուհու կարոտը, երազը, հոգու դիալեկտիկան, ազգային
ճակատագրի սեփական ընկալումը, պատասխանատվությունը
ժամանակի առջև դրսևորված են պոետական յուրովի շեշտերով:
Այս շարքում կենսական-հոգեբանական հիմքը ժողովրդի մաքա-
ռումն է, նոր օրերի փիլիսոփայությունը՝ բխած դժվարին ու կեն-
սահաստատ ճանապարհի թելադրանքով: Բանաստեղծուհու
զերագույն նպատակը դարձյալ մարդ-անհատի հուզաշխարհի

պատկերումն է՝ մեր իսկ ազգային ճակատագրի մղումով: Անհատը երբեք չպետք է մոռանա, որ ազգային ճակատագրի հյուսվածքում նաև իր վարքի, իր ապրելու բանաձևն է: Այս գաղափարն արտահայտված է բանաստեղծական ժխտող-հաստատող, ձաղկող-մերկացնող հնարանքով: Այսպես.

*Ես քայլեցի իմ ճակատագրի
ծաղիկների միջով,
չտեսնելով նրանց, չտեսա ինձ,
տրորելով նրանց՝
տրորեցի ինձ,
մեռցնելով նրանց՝ մահացա ես,
անթաղ թողնելով նրանց՝
անթաղ մնացի ես: (էջ 83)*

Այս իմաստության շեշտումից հետո բանաստեղծուհին ինչպես դրոշ պարզում է իր քնարական հերոսի հպարտությունը.

*Ահա և այն՝ իմ դրոշը,
ամենագեղեցիկը... (էջ 84)*

Ժ. Բեգլարյանի պոեզիային հատուկ է մայրական զգացումի անմարում ջերմությունը, ցավի և կարոտի ալեկոծումը, աստվածային ուժը, քանզի մայրն ինքնին աստվածուհի է՝ զավակապաշտ ու ժողովրդանվեր: Այդ զգացումները միշտ արթուն են ժաննայի հիշողություններում՝ փարված մանկության օրերին.

*Ես գոցում եմ ականջներս,
քնքուշ օրորոցայինով,
որ մի քիչ էլ մնամ՝
մանկությանս մեջ...*

Մանկությունից չի՞ սկիզբ առնում երազանքն ու ձգտումը՝ խիզախությունն ու թևածումը: Բանաստեղծուհին ավանդապաշտ է, միշտ ձգտում է վերադառնալ իր «ակունքներին՝ Աստծու լույսին», ակնհայտ է «իզուր ապրած ժամանակների» համար: Նման կենսակերպն է, որ կարող է անհատին հասցնել իրակա-

նացված բարձունքներին, որտեղից կարող է բարձրաձայնել.

*Իմ քայլքը լեռնագագաթներով է,
ոտնաթաթերս՝ կրակ, շիկակարմիր են,
ամեն մի քայլս
դաջվածք է
լեռնագագաթների սառույցների
հավերժությանը: (էջ 135)*

Ժողովածուի «Անկշռելիություն» շարքը բանաստեղծուհու բառի ու խոսքի անընդմեջ շիկացումների վկայություն է: Նրա քնարական հերոսը «հարաշարժ է, հարափոփոխ», «խոսքը լույսի պատարագ է», «հնչյունի տրոփյուն է», «լեզվի վրա է բառի համը», «բարի լույսը հավքերի ինքնամոռաց երգն է այգաբացին», «փունջ-փունջ ծաղիկներ է շարում հողին»: Բանաստեղծուհին երբեք չի մոռանում ազգի սուրբ նահատակներին, որոնք «Մեծ նպատակի մեծ խաչվածներ» են:

«Չեռացումի անեզրություն» ժողովածուում զետեղված պոեմները հետաքրքիր են. «անհատ-ընտանիք-հասարակություն» թեմայի լուսաբանմամբ: Բեզլարյանն իր այդ հոգեբանական երկերով հաստատում է մի ճշմարտություն՝ անհատի և հասարակության երջանկությունը պայմանավորված են միմյանցով, ամեն մի անհատ պետք է վայելի աստվածանվեր կյանքը ազատփոխադարձ սիրո ու հավատարմության ծիածանի ներքո»:

Կցանկանայինք անել երկու դիտողություն, որ նկատել ենք խնդրո առարկա գրքում: Առաջին, խորհուրդ կտայինք խույս տալ ձգձգվածությունից, որ նկատել ենք որոշ բանաստեղծություններում:

Այսօր ունենք բանաստեղծներ, որոնք հակված են ձգձգվածության մոռանալով, որ բանաստեղծությունը պետք է հագեցած լինի գաղափարահուզական շեշտադրությամբ, ունենա մուտք, կիզակետ և գյուտ-ընդհանրացում: Երկրորդ, որոշ գործերում ավելի ընդգծվում է անհատի դժգոհություն-ցավը թե՛ իրականու-

թյունից և թե՛ անձնական ճակատագրից: Բանաստեղծը աստժո քարտուղարն է, որ պետք է կյանքն օժի աստժվածային սիրով, ցավը վերածելով կարոտի, այլ ոչ թե կարոտը՝ ցավի:

Հանճարեղ Մեծարենցը մերժելով հայ քննադատների անհարկի դիտողությունները, իր «Օիածան» ժողովածուի վերաբերյալ գրել է. «Բանաստեղծը բնության ցուլացումը պետք է ըլլա, թե ոչ, բանաստեղծ չէ իրապես, քերթվածները իբրև բառ պետք է ունենան տերևին թրթռումը, թռչունին դայլայլը, մարդերուն գորովը, դաշտին ու լեռան մշտանույն գորությունը: Բանաստեղծին ձայնը տիեզերական հարաբերականության մը լարը պետք է ըլլա, բոլոր գոյություններուն համադրական թրթռումովը տրոփուն»:

Իսկ Մեծ Լոռեցին 1917թ. ողջունելով երիտասարդ բանաստեղծներին՝ նշել է. «Ձեզ ասուն են՝ բարով գնաք դեպի մեր ժողովուրդն ու աշխարհը, վշտերի, ցավերի, չարիքների ու կարիքների աշխարհը ձեր թարմ ու անկեղծ երգերով, կյանքի լավագույն ձայներով, մարդկանց հրապուրելու դեպի ճշմարիտն ու բարին, ազնիվն ու գեղեցիկը»:

Ընդհանրության մեջ ժ. Բեգլարյանի նոր ժողովածուն հաջող ներդրում է արդի հայ պոեզիայում, որտեղ պոետական նրա հավատամքը վերածվում է աշխարհը զարդարող պատգամի՝ հետևյալ խորհուրդներով.

Թե հանգիստ՝ միայն խղճի տարածքում:

Թե դադար՝ միայն լուսնահանգույցում:

Թե հավատ՝ օջախի ծուխն ի վեր:

Թե Սեր՝ փակած կոպերի ներքո:

Թե ձայն՝ լռության աստիճաններին:

Թե երգ՝ երգի բազմաձայնությունում...

6.

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը 20 տարեկան է, մի հասակ, որ հյուսված է մաքառման ու երազանքի շողերից՝ հիմքում ունենալով ազատագրական պայքարի համաժողովր-

դական ոգի, նահատակների պատգամ, ազգային արժանապատվություն, գալիքին միտված վճռականություն: Դա փառավոր պատմություն է՝ հայոց հինգհազարամյա ընթացքի ազգապահպան էջերից մեկը, օժված Ավարայրի ու Սարդարապատի հաղթանակների ոսկեփոշով, անունը՝ Արցախյան գոյամարտ, որն արդեն հողովվում է որպես մարտական երգ ու լեգենդ, պոեմ ու ասք, պատմվածք ու վիպակ ու վերջապես վեպ, իր տեսակներով՝ գեղարվեստական-վավերագրական, պատմական: Ասել է թե՛ արարվում է Արցախի գեղարվեստական կերպարը՝ հայկական ֆենոմենի առեղծվածային երանգներով ու ոգեղենացած փիլիսոփայությամբ: Եվ հաճելի է ընդգծել այն իրողությունը, որ հայրենի երկրի կերպարն ստեղծողների շարքում իր նկատելի տեղն ունի հրապարակախոս-գրող **ՆՎԱՐԴ ՍՈՂՈՆՆՅԱՆԸ**, տաղանդավոր, համեստ, որոնող ու գտնող:

Որպես լրագրող՝ Նվարդի հաջողության գրավականը գրող լինելու մեջ է և որպես գրող՝ հակառակը: Դա՝ ստեղծագործական կարողությունների առումով: Բայց կա նաև հաջողության մի այլ գործոն: Դա այն է, որ Նվարդը ականատեսն ու մասնակիցն է Արցախյան գոյամարտի:

Ինքնատիպ է Ն. Սողոմոնյանի գրական հունձքը: Նրա «1991. «Կոլցո», «Հիշողության դատը», «Ղարաբաղ. մահվան գծից անդին» գրքերը եկան հաստատելու, որ հանձին Ն. Սողոմոնյանի, մեր պատերազմն ունի իր ժամանակագիրը՝ ճշմարտախոս ու խոսքաշեն: Եվ հաճելի է նշել, որ նա արժանացել է ԼՂՀ կառավարության «Մենք ենք, մեր սարերը» հուշամեդալին, ապա՝ եղիշեի անվան պետական ամենամյա մրցանակին:

Ինչպես բոլոր աստվածաշնորհ գրողները, այդպես էլ Ն. Սողոմոնյանը կոփվեց մեր ազգային ճակատագրի բորբոքուն հնոցում, իսկ մեր ազգային ճակատագիրը մեր գրականության առանցքն է: Դրա վկայությունը նաև Նվարդի «Կարկառներ» (2010թ.) պատմավեպն է, ուր ներկայացված են Բերդաձորում

1988-1991 թվականներին տեղի ունեցած ճակատագրական իրադարձությունները: Հեղինակի բնորոշմամբ, երկը վավերագրություն է՝ ճշմարիտ պատումներով, իրական անձնավորությունների մասնակցությամբ: Սակայն կատարվել է գրական հրաշքը: Նվարդի ստեղծագործական փորձի և պատկերավոր մտածողության շնորհիվ ծնվել է պատմավեպ՝ ժանրային բնութագրական առանձնահատկությունների և թեմատիկ-գաղափարական յուրահատուկ հիմքով, պատմական դեմքերը կենդանի կերպարների մակարդակին հասցնելու իմաստով: Նվարդին հաջողվել է դեպքերի և իրադարձությունների լրագրողական նկարագրություններից բարձրանալ և պատումին հաղորդել բարոյահոգեբանական շեշտեր, հմտորեն բացահատել Արցախի Բերդաձոր հատվածի և՛ պատմական մաքառումները, և՛ խորհրդային տարիների կրած կորուստները ազերի-թուրքերի հայահալած քաղաքականության պատճառով:

Հավասար հիմքերի և մակարդակի վրա են վեպի ճանաչողական, դաստիարակչական և գեղագիտական արժեքները: Արխիվային նյութերի և տեղանքին անձնապես ծանոթ լինելու շնորհիվ Նվարդը ներկայացնում է Բերդաձորի պատմական քարտեզը, ցուցադրում հին ու նոր խարդավանքների հետևանքով ադրբեջանցիներով բնակեցված հայկական շեները, հայ ազգաբնակչության թվի կտրուկ նվազումը, հայկական ավանդական հողամասերի յուրացումները ազերի-թուրքերի և քրդերի կողմից:

Ինչքան էլ ազերի հին ու նոր ավազակախմբերի կողմից սեղմվել ու մաղվել է Բերդաձորը, միևնույն է, պահպանվել են նրա ավանդական տերերի՝ հայ ազգաբնակչության էթնիկական մաքրությունը, բարբառը, հոգեբանական գծերը, սովորություններն ու ավանդույթները: «Բերդաձորի պատմական տարածքը,- տեղեկացնում է գրողը,- ընդգրկում է ներկայիս Շուշիի, Լաչինի, Հադրութի, Ղուբաթլուի որոշակի հատվածներ: Որպես Արցախի հարավ-արևմտյան գավառ, Բերդաձորը հսկայական ռազմավարա-

կան նշանակություն ունի, և դա հասկանալի է եղել և հասկանալի է օտար զավթիչներին: Բերդաձորը իրար կապելով Հայաստանի երկու աշխարհները՝ Արցախն ու Սյունիքը, միջնաբերդի դեր է կատարում երկուսի համար էլ: Այստեղով էր անցնում Վայոց ձոր-Սյունիք-Պարսակաստան ճանապարհը: 18-րդ դարի գավառից մնացել է այսօրվա խիստ կտրտված ու անմատչելի լեռնային մասը, որտեղ գոյատևում են հայության փշրանքները» (էջ 45):

Հայության այդ փշրանքները, 1920-ական թվականներից սկսած, գնալով քայքայվել են Խորհրդային Ադրբեջանի հայահալած քաղաքականության հետևանքով: Իրենց գոյությունը կորցրել են տարածքի Խերխան, Փոքր Խերխան, Դաշտահող, Չոբանգյունե, Թևանատուն բնակավայրերը: Շուշիի շրջանի ղեկավարությունը ամեն ինչ արել է, որ հայը լքի իր օջախը: Նվարդը գրում է. «Բավական է ասել, որ 1960թ. համեմատությամբ 6 գյուղերի բնակչությունը կրճատվել է երեք անգամ: 1960թ. Մեծ Շենուն 500 մարդ է ապրել, այժմ՝ 180: Գյուղերը դատարկվում են... 1960թ. Հին Շեն գյուղում 850 մարդ էր ապրում, միջնակարգում սովորում էր 450 աշակերտ: Մեզ հայտնի խորշակի ու հայաքանդ քաղաքականության հետևանքով այժմ գյուղն ունի 450 բնակիչ, 40 աշակերտ» (էջ 46):

Նույն ճակատագիրն է վիճակվել ձորակի հինգ գյուղերի՝ Հին Շենի, Եղսահողի, Տասվերստի, Կանաչ Թալայի բնակչությանը, որին միավորվել էին մեկ սովխոզի մեջ և ընդամենը 650 հոգի էին: Եվ ցավալին այն էր, որ այդ փոքրիկ գյուղախումբն արդեն շրջափակված էր ադրբեջանական 21 գյուղերով: Իսկ դրանք հայկական գյուղեր են եղել՝ Հունանավը դարձած Օնանավ, Աղվանոն՝ Աղանուս կամ Յըղոնես, Մեղրաձորը՝ Մղդարա, Հին Շենի մի մասը՝ Մուսուլմանլար, Սեիդտարը՝ Խրմանլար և այլն:

Հեղինակը, սակայն, տեղանունների հետ ընդգծում է նաև ազգագրական այն գործոնները, որոնք մեր ժողովրդի դարավոր կենցաղավարության խորհրդանիշներն են հանդիսացել:

Բերելով այս և նման գործոնները՝ Ն. Սողոմոնյանը հաստատում է, որ ժամանակների համապատկերի վրա թուրքը ոչնչով չի փոխվել: Նա 1905-ի, 1915-ի, 1918-ի, 1920-ի արնախում, վայրենաբարո սելջուկն է:

Ն. Սողոմոնյանը մտացածին ոչ մի կերպար չի ստեղծել՝ հավատարիմ մնալով վավերագրական վեպի պահանջներին: Պատումի մեջ ներկայացված մարդիկ, 1988-ից սկսած, ազգային ճակատագրի վճռական պահի խորապես ընկալունով գործում են երազանքի, վճռականության, վրեժի, անձնուրացության, գիտակցված մահի ընկալմամբ:

Վեպի առանցքում Բերդաձորի 1988-1991 թվականների իրադարձություններն ու մարդիկ են, սակայն ընդգրկումներով համահայկական են, Արցախում ծավալված ազգային-ազատագրական պայքարի միջուկով: Գիրքը բացվում է «ժամանակը փոխել է իր ընթացքը» խորագրով ու խոսում ենթավերնագրով «Արդար պահանջ, ոչ մի նահանջ»: Պատումն սկսելով Ստեփանակերտի կենտրոնական հրապարակում բռնկված արցախցիների պահանջատիրական կոչերից՝ հեղինակը պատկերում է ժամանակի բարոյահոգեբանական մթնոլորտը՝ ընդգծելով հայերի և ադրբեջանցիների հակադիր ապրումներն ու ակնկալիքները: Եվ ոչ միայն այդ: Ըմբոստության ալեկոծումը Ստեփանակերտից հասնում է Երևան ու Սփյուռք՝ շարժմանը հաղորդելով համազգային բնույթ: Աշխարհասփյուռ հայությունը, հանձին արցախյան ըմբոստության, արտահայտում է դարավոր իր ցավի ճիչը, պահանջատիրոջ իր իրավունքն ու նպատակը: Հայաբնույթ այս ըմբոստության պատմական ակունքների և ժամանակակից բորբոքման պատճառների բնութագրումով Նվարդն ընթերցողին տանում է դեպի Բերդաձոր, որտեղ բռնկված ազատագրական մաքառումները հատուկ են Արցախի բոլոր շրջաններին, ինչպես նաև Հյուսիսային Արցախի բնակավայրերին:

«Կարկառներ» գրքի պատումն ունի խորքային հիշողություն՝

պատմության ճշմարիտ էջերով, և հնարավոր չէ մոռանալ դրանք: Ամենից գլխավորը երկշերտ հիշողությունն է, մի կողմից՝ ազերաթուրքական գազանաբարո վարքագծի՝ տարածքներ զրավելու, իսկական տերերին ոչնչացնելու, նյութական և հոգևոր նշակույթը սեփականելու ձգտումով, մյուս կողմից, հայոց ճակատագրի ծանր թելադրանքով, նահանջելու, տեղի տալու, կորցնելու և փրկածը մի կերպ պահպանելու մղումով:

Ն. Սողոմոնյանը պատմության այս ընթացքը նկարագրում է «Արմատի հիշողությունն անբեկանելի է» մասում՝ «Սալամ, մուսալիմ» ենթավերնագրով: Աջրբեջանցիները, օգտվելով ժողովուրդների լեռնյան «բարեկամության» ընձեռած հնարավորությունից, արդեն իրականացնում էին Արցախի հայաթափության ծրագիրը, որին չէին կարողանում ընդդիմանալ կոմունիստ հայ դեկավարներն ու կամա-ակամա դարձել էին Ադրբեջանի իշխանությունների ստրկամիտ կամակատարները:

Սակայն ծնվել է հայ նոր սերունդը, որը խորապես հասկանալով պահի հրամայականը, հանդես է գալիս Արցախը մայր Հայաստանին վերամիավորելու պահանջով: Ապա համոզվելով, որ կաշառքի, կեղծիքի ու լկտիության միջոցներով կնքվել է Բաքվի և Մոսկվայի՝ Մութալիբով-Գորբաչով խայտառակ դաշինքը, նետվում է զինված պայքարի՝ Հայոց հողն ու ազգային արժանապատվությունը փրկելու համար:

Ն. Սողոմոնյանի վեպում ներկայացվում են հարյուրավոր մարդիկ՝ գյուղացիներ, մտավորականներ, զինվորականներ, կանայք, պատանիներ ու համախմբվում մայր Հայաստանին վերամիավորվելու գաղափարի շուրջ՝ դառնալով ազատամարտիկներ: Կենտրոնում պատմության ուսուցիչ, դպրոցի տնօրեն Միքայել Մկրտչյանի ընտանիքն է՝ նախնական հակադիր հասկացությունների դրսևորմամբ: Միքայելը կոմունիստ, որդին՝ ֆիզիկայի ուսուցիչ Առնոն՝ դաշնակցական: Հայրը՝ կոմունիստական հաշտվողականությամբ, որդին՝ հայոց արժանապատվությունը վերա-

դարձնելու, Արցախը փրկելու վճռականությամբ, «Ղարաբաղը հայկական հող է, Ադրբեջանը գավթել է... իմ ճանապարհը ազատ, անկախ, միացյալ Հայաստանն է» համոզմունքով: Սակայն հոր և որդու գաղափարական այդ անհամաձայնությունն անզիջուն պայքարի չի վերածվում: Միքայել և Արփենիկ Մկրտչյանների ընտանիքում ծնված ութ երեխաները հասակ են նետում ապագա ազատ և անկախ Արցախի երազանքով: Արփենիկի անժամանակ մահից հետո Միքայելն ամուսնանում է 20 տարով ջահել էլլադայի հետ: Բայց ավանդապահ ընտանիքի կորիզը չի ջարդվում, առանձնապես Արցախյան գոյամարտի տարիներին օջախը վերածվում է շտաբի: Առնոյին միանում են եղբայրները՝ Արմոն, Արտաշեսը, Արթուրը, որոնք նետվում են սրբազան գոյամարտի հրդեհների մեջ՝ փրկելու ազատության կապույտ թռչունը: Ստեղծվում է Բերդաձորի ինքնապաշտպանության խորհուրդ՝ 7 հոգուց կազմված, նախագահ՝ Անդրանիկ Հարությունյան, շտաբի պետ՝ Առնո Մկրտչյան: Խորհուրդն ընտրում է կանոնադրություն և ծրագիր: Խորհրդի յուրաքանչյուր անդամի համար ուղեցույց է դառնում Գարեգին Նժդեհի ոգին: Նրանք երդվում են հավատարիմ մնալ Բերդաձորի ինքնապաշտպանության խորհրդի (ԲԻՄ) ծրագրին և կանոնադրությանը՝ ձեռքները դնելով Սրին ու Խաչին:

Պատմական վեպին հատուկ գրելաձևով հեղինակը ներկայացնում է ԲԻՄ-ի ընդլայնված միստը, որին մասնակցում են Բերդաձորի գյուղերի ներկայացուցիչները և քննարկում ինքնապաշտպանության հարցը՝ արձանագրելով իրողությունը. «Հույսներս մեզ վրա պիտի դնենք: Խորհրդային իշխանությունը երկակի խաղ է խաղում. երկու կողմերին բարեկամ է ձևանում, բայց վերջնական հաշվով մենք մենակ ենք... Ազերին ասում է՝ հողն առանց արյունի չեն զիջում, իսկ եղ հողը մերն է, և պետք է պատրաստ լինենք արյան գնով պաշտպանելու: Ակն ընդ ական, ուրիշ ճանապարհ չկա» (էջ 80):

Առնոն կռահում էր, որ դժվարին ժամանակներ են գալու, պայ-

քարը երեք ճակատով է տարվելու, արտաքին թշնամի, ներքին տարածայնություններ, խորհրդային զորանոցային իշխանություն:

Եվ սկսվում է լուրջ նախապատրաստությունը: Գրքում հանգամանալից, խոսում փաստերի հիման վրա պատկերվում է Գորիսի և Բերդաձորի ազատամարտիկների համագործակցությունը, Հայաստանից զենք ու զինամթերք տեղափոխելու դժվարին գործը:

Բերդաձոր են հաճախում Սերժ Սարգսյանը, Վազգեն Սարգսյանը և այլ նշանավոր հայորդիներ: Բերդաձորի գոյամարտի մշտական ղեկավարներից ժաննա Գալստյանը դառնում է հայոց Այծեննիկը՝ իր շրջահայաց վերաբերմունքով ու խիզախությամբ:

Ազգամիջյան հակամարտությունն օրեցօր ավելի է սրվում: Լայն թափ են ստանում ազերիների կողմից կազմակերպված անասնագողությունը, սպանությունները, ավարառությունը: Բերդաձորի ազատամարտիկները կարողանում են պատասխանել նրանց՝ ինչպես հարկն է:

Սակայն տեղի է ունենում անսպասելին: Արցախում սկսում են իշխել Ադրբեջանի երկու էմիսարները՝ Ադրկոմկուսի երկրորդ քարտուղար, Աֆղանստանում դաժանությամբ մկրտված Պոլյանիչկոն և գեներալ-մայոր Սաֆոնովը, որոնք ձգտում են հոգեբանական ճնշում գործադրելով մեջտեղից հանել Արցախի հիմնախնդիրը, վերջնական հաշվով հայաթափ անել երկիրը:

Ժամանակագրական կարգով հեղինակը ներկայացնում է անձնագրային ռեժիմի ստուգումները, որի պատրվակով Շուշիի, Լաչինի, Բաքվի բանտերն են նետվում հարյուրավոր հայեր ու ենթարկվում կտտանքների:

1990-ի գարնանը Ադրբեջանում ստեղծվում են հատուկ նշանակության ոստիկանության ջոկատներ՝ օմօն, որոնք բացառապես տեղակայվել էին Լեռնային Ղարաբաղում և նրան հարող շրջաններում: Նրանք խորհրդային բանակի զորամիավորումների, ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության զորքերի հետ շրջայց

էին կատարում հայ ազգաբնակչության դեմ ու իրենց հետ տանում աչքի ընկնող հայ երիտասարդներին:

Գրքի «Հայրենիքն այն է, որ ամեն ինչ պիտի տաս, նույնիսկ կյանքդ», «Յուրաքանչյուր ժողովուրդ վայելում է իր ցանած պտուղը», «Մեծ քաղաքականության փոքր զոհերը», «Կյանքս կտամ քեզ, Ղարաբաղ» բաժիններում պատկերվում է Բերդաձորի գոյամարտը՝ արցախյան քաջազույնների անդրանիկյան ոգով: Գնալով պարզվում է, որ ԽՍՀՄ ղեկավարությունը՝ Գորբաչովի գլխավորությամբ, ստորագրել է Արցախը հայաթափելու քստմնելի հրամանագիրը: Հայաթափվում են Հադրութի շրջանի 14, Բերդաձորի՝ 4, Հյուսիսային Արցախի բոլոր գյուղերն ու Շահունյանի շրջանը:

Ն. Սողոմոնյանը, հանդիպելով Շուշիի և Բաքվի բանտերում կտտանքների ու գազանային տանջանքների ենթարկված, վերջապես ճակատագրի բերումով փրկված քաջ հայորդիների հետ, նկարագրում ու բացահայտում է օսմանիզմի և պանթուրքիզմի անմարդկային օրենքներով թրծված ազերիների դաժան վերաբերմունքը հայ բանտարկյալների նկատմամբ: Անխտիր, բոլորին ամենօրյա ծեծի ու ջարդի, ծաղրի ու ստորացման ենթարկելով, ազերի թուրքերին թվում էր, թե դրանով կարող են կոտրել արցախցիների աննկուն ոգին: Բաքվի Բայիլի բանտում սպանվում են բերդաձորցի Հրաչիկը, Առնոն և շատ-շատերը, որոնց խոցված սրտերի միջով ձգվեց Արցախ աշխարհի ազատագրման ուղին:

Գրքում առանձնակի, պատմական արժեք են ներկայացնում այն էջերը, որոնցում նկարագրված են Արցախի մի շարք ղեկավարների՝ Հ. Պողոսյանի, Շ. Պետրոսյանի, Ս. Միրզոյանի, Կ. Բաբուրյանի, Լ. Մելիք-Շահնազարյանի, Շ. Մեղրյանի այցելությունները Մոսկվա, հանդիպումները Գորբաչովի խամաճիկների՝ Լուկյանովի, Յանակի, Կրյուչկովի, Յագովի, Կովալովի, Կլիզմանի, Օռլովի հետ: Նրանց հետ ունեցած զրույցները վկայում են, որ Ադրբեջանի կողմից կաշառված այդ թափափուկների բանդան

ավազակապատ Գորբաչովի ղեկավարությամբ արագացրել են ԽՍՀՄ փլուզումը: Ի դեպ, խորհրդային տոտալիտար պետությունը անպայմանորեն պետք է վերանար, որովհետև նրա հիմքերը շաղախված էին ոչ թե կրաշաղախով, այլ սեփական ժողովրդի միլիոնավոր անմեղ ներկայացուցիչների արյամբ, լենին-ստալինյան անբարո օրենքների թողտվությամբ: Եվ երիցս օրինյալ լինի ԽՍՀՄ փլուզման պահը, քանզի մեր Արցախը, մեր պապերի զոհաբերումներով պահպանված Արցախը որպես տարածք, կնետվեր չար ու նենգ հարևանի հայակուլ երախը: ԽՍՀՄ փլուզումը հնարավորություն ընձեռեց աշխարհասփյուռ հայ ժողովրդին՝ ազերի հրոսակներից ազատագրելու մեր հող հայրենին:

Ն. Սողոմոնյանի «Կարկառներ» գիրքն ընթերցելուց հետո հանգում ես նաև այդ ճշմարիտ համոզմանը:

Ռուս հանճարեղ գեղագետ Լ.Ն. Տոլստոյը 1812թ. ռուսական առաջին Չայրենական պատերազմի 50-ամյակի առթիվ 1862-ից սկսած, ստեղծեց «Պատերազմ և խաղաղություն» քառահատոր վեպը՝ ռուսական անպարտելի ոգու մասին: Նա այդ հավերժական կոթողն արարել է իրենից առաջ ստեղծված վավերագրական-գեղարվեստական հազարավոր երկերի հիման վրա:

Այսօր մենք կարող ենք թվարկել տասնյակ երկեր, որոնք նվիրված են Արցախյան գոյամարտի հերոսական էջերին: Դրանց շարքում փաստերի առատությամբ, մեր ազատագրական պայքարում տասնյակ Առնո Մկրտչյանների անձնուրաց մաքառումների նկարագրությամբ աչքի է ընկնում Նվարդի վեպը, այն անկյունաքարերից մեկը, որ Արցախի անկախության 50-ամյակի կապակցությամբ նպաստելու է ապագա հայ գրողին՝ ստեղծելու քառահատոր պատմավեպ մեր ազգային ազատաբաղձ, անկոտրում ոգու մասին:

Լ.Ն. Տոլստոյն իր վեպում հպարտությամբ ներկայացրել է մի դեպք: Երբ լուրը հասցնում են Կուտուզովին, որ նապոլեոնյան բարոյալքված, կիսակործան զորքը դուրս է վռնդվել Մոսկվայից,

աշխարհահռչակ զորավարն ուրախության արցունքի միջից ճչացել է. «Փրկված է Ռուսաստանը»:

Ծանոթանալով Ն. Սողոմոնյանի և մեր մյուս գրողների ստեղծած երկերին, որոնցում նկարագրված է հայ ազատամարտիկների անձնուրաց պայքարը մեր դարավոր, արնախում ոսոխների դեմ՝ հանուն մեր անկախության, յուրաքանչյուր հայ մարդ այսօր կարող է ուրախության արցունքների միջից ճչալ. «Փրկված է մեր Արցախը, Հայոց անառիկ բերդ Արցախը, մեր գալիք սերունդների հերոսության ու հպարտության աղբյուր Արցախը»:

7.

Ինչքան խորանում ես հայ գրականության պատմության մեջ, ընթերցում և վերընթերցում նշանաձող հանդիսացող երկերը, կրկին ու կրկին համոզվում ես, որ մեր գեղարվեստական խոսքը ծիածանվել է երկրի ու ժողովրդի ճակատագրի երանգներով՝ սկսած 5-րդ դարից մինչև մեր օրերը: Պատահական չէ, որ մեծանուն հայագետ Մանուկ Աբեղյանը հայ հին մատենագրությունը համարել է եկեղեցական-քաղաքական մաքառման գրականություն: Հիրավի, այդպես է, որովհետև հայոց պատմությունը հիմնադրվել է Հայկ Նահապետի բելասպան նետի սլացքով և հարստացվել հաղթանակների նոր էջերով, վկան՝ նաև Արցախյան ազգային-ազատագրական գոյամարտը, որին մասնակցեցին աշխարհասփյուռ հայության խիզախ զավակները՝ աշխարհին ապացուցելով, որ հայ հոգում չի քնել երբեք մեր առասպելական և էպոսային դյուցազունների ազատաբաղձ ոգին:

Մեր մեծ երախտավորները հազարամյակների ընթացքում իրենց թե՛ գեղարվեստական և թե՛ վավերագրական երկերում սերունդներին են կտակել երկու համաժամանակյա խորհուրդ՝ Մ. Խորենացու սերնդապահ հայրենապաշտությունը և Եղիշեի գիտակցված մահվան փիլիսոփայությունը: Ընդգծենք, որ այդ պատգամները հոլովվել են մեր ազգային ճակատագրի հրամա-

յականով: Այլ կերպ լինել չէր կարող, քանզի չար ու նենգամիտ մեր հարևանները, հեռավոր ավազուտներնից ներխուժած սել-ջուկ-թուրքերը հանգիստ չեն տվել քաղաքակիրթ մեր ժողովրդին, հրահրել են անընդմեջ պատերազմներ, արդյունքում կազմակերպելով 1915-ը, 1918-20-ը, արյամբ ողողելով հայոց հինավուրց երկիրը՝ Սասունից մինչ Շուշի, Եփրատից մինչև Արաքս:

Եվ եկավ մեր ժողովրդի աստեղային ժամը՝ 1988-ը, երբ ուռքի ելավ հայկյան սերունդը նորօրյա Բելի, գորշ գայլերի սերունդ ազերի-թուրքերի դեմ՝ ոչ միայն շահեց հաղթանակը, այլև վերածնեց հայոց ազգային արժանապատվությունը: Ինչպես հաստատուն են մեր տարեցները, «Արցախյան գոյամարտը պատվի ու անվան պատերազմ է», ասել է թե՛ պետք է վերընծյուղվեր մեր նախնիների անկախ, ազատ և պատվարժան ապրելու կենաց ծառը:

Այնպես, ինչպես նկարագրվել են Ավարայրի ճակատամարտն ու Սարդարապատը հայ գրականության մեջ, այդպես էլ ներկայացվում է Ավարայրված Արցախի հերոսամարտը: Եվ համարձակորեն կարող ենք նշել, որ արդեն շոշափելի կերպով նշմարվում է Ղարաբաղյան շարժման և մեր ժողովրդին Ադրբեջանի կողմից պարտադրված պատերազմի գեղարվեստական նկարագիրը: Հրապարակի վրա են ոչ միայն չափածո երկերը՝ առնչված խնդրո առարկա թեմային, այլև լայն ընդունելություն են գտել Մ. Հովհաննիսյանի, Կ. Դանիելյանի, Ա. Ղահրիյանի, Մ. Որբի, Ն. Սողոմոնյանի, Մ. Հայկի պատմվածքները, վիպակներն ու վեպերը, որոնց շարքը հարստացավ **ՎԱՐԴԳԵՍ ԲԱՂՐՅԱՆԻ** «Տեսադաշտ. 1988-1994» վավերագրական գրքով, որը տպագրել է «Սոնա» գրահրատարակչությունը՝ 2011 թվականին: Նպատակահարմար ենք գտնում այս նոր ժողովածուն համարել վերջին երկու տարում հրատարակված երկու վեպերի՝ Վ. Հակոբյանի «Ձատիկը ջրավազանի հատակին» և Ն. Սողոմոնյանի «Կարկառներ» ստեղծագործությունների հետ մի եռամիասնություն, որոնք ընդ-

հանրության մեջ պատկերում են Ղարաբաղյան ազատամարտն ինքնատիպ երանգներով ու բացահայտումների անհրաժեշտ շերտերով ու շեշտադրումներով: Կարևորվում է նաև այն հանգամանքը, որ այդ երկերը մեկը մյուսին չեն կրկնում, այլ լրացնում են միմյանց՝ ի տես բերելով Արցախյան պատերազմի համաժողովրդական բնույթն ու հայկական միասնության ուժն ու վճռականությունը: Դեռ ավելին, մեր դիտարկումն իրավունք է տալիս ընդգծել որ Վ. Հակոբյանը, Ն. Սողոմոնյանը և Վ. Բաղդյանը, ունենալով ստեղծագործական իրենց ձեռագիրը, ընթերցողին են հանձնել պրպտումների յուրատիպ ընդհանրացումներ՝ կառուցվածքային առիքնող ձևերով ու միջոցներով, թեմատիկ-գաղափարական խորքային լուծումներով:

Կոնկրետության մեջ Վ. Բաղդյանի «Տեսադաշտը» ժանրային առումով լրացնում է այնպիսի երկերի շարքը, որոնք ներկայացնում են ժամանակագրության դարավոր ընթացքը: Այստեղ կարող ենք օրինակ բերել մեր բոլոր մատենագիրներին, որոնց շնորհիվ բացում ենք մեր պատմության էջերը, կերտում ներկան՝ հանուն ապագայի:

Գրքի հանձնարարականում հեղինակը հաստատում է, որ «գիրքն իրական փաստերի հիման վրա պատմում է Ղարաբաղյան ազատամարտի մասին՝ խաղաղ ցույցերից մինչև զինադար», իսկ խմբագիրը՝ լրագրող-հրապարակախոս Գ. Բաղդասարյանը, գիրքը համարում է մատենագրություն, նկատի առնելով Վ. Բաղդյանի և մասնակցությունը ազատամարտին, և նրա ստեղծած ու ցուցադրած հեռուստաշարը: Եվ այստեղ կարևորվում է այն հանգամանքը, որ ժողովածուն ներկայացվում է որպես հեռուստաժամանակագրություն: Գ. Բաղդասարյանը ճիշտ է նկատում ընդգծելով. «Սույն աշխատության ամենամեծ առավելությունը ոչ միայն նկարագրվող դեպքերի անմիջական ակնատես ու մասնակից ճանաչված լրագրողի դիտարկումներն ու մտորումներն են, այլև այն, որ ներկայացվող պատմությունը

գրեթե ամբողջովին «ամրապնդված է» հեռուստադրվագներով, տեսախցիկով արձանագրված ու հավերժացված է: Պատմական գրքերի համար նման վավերագրությունն ու վավերականությունն ինչքան ցանկալի, նույնքան էլ հազվադեպ է, ինչը երիցս կարևորում է Վ. Բաղդյանի աշխատանքը» (Վ. Բաղդյան, «Տեսադաշտ», 2011, էջ 3):

Աշխատանքի կարևորությունը կրկնակի է արժեքավորվում այն առումով, որ հեղինակը եղել է նկարագրված գործընթացների ականատեսն ու մասնակիցը, այնպես, ինչպես պատմիչ Եղիշեն՝ Ավարայրի դեպքերին, Թ. Արծրունին՝ Դիզակում Եսայի ապու Մուսեի հակաարաբական ազատամարտերին, Ա. Լաստիվերցին՝ սելջուկ-թուրքերի ներխուժումներին ու նրանց դեմ հայ քաջագունների մղած կռիվներին և այսպես շարունակ:

Անտարակույս, Վ. Բաղդյանի սույն գիրքն ականատեսի ժամանակագրություն է, որի հավաստիացումը հենց հեղինակի խոստովանությունն է. «Գրքում օգտագործված փաստերի գերակշռող մասի սկզբնաղբյուրը տեսանյութն է կամ այն դեպքերը, որոնց ականատեսն եմ եղել ես: Ահա թե ինչու դրանց ստույգ լինելը, հավաստիությունը երախշավորված է: Գործող անձանց խոսքերը մեջբերված են գրեթե նույնությամբ՝ անհրաժեշտ խմբագրումներով՝ առանց խաթարելու, աղճատելու ասելիքի իմաստը» (էջ 5-6):

1988-1994 թվականներին տեղի ունեցած հասարակական-քաղաքական-ռազմական իրադարձությունների հանրագիտարանային այս պատկեր-գիրքն աչքի է ընկնում ոչ միայն նկարագրական ընդգծվածությամբ, այլև հեղինակի ակտիվ վերաբերմունքով ու խորհրդածություններով: Այսպես, խոսելով 1988-ի փետրվարի 13-ի բորբոքումն ելույթների մասին, Վ. Բաղդյանը պատմաբանի համոզվածությամբ նշում է, որ Արցախյան ազգային-ազատագրական պայքարն սկսվել է այն օրվանից, երբ Արցախը նետվել է նորաթուխ Ադրբեջանի հայակույլ երախշ: Ապա,

արժանին մատուցելով 1960-ական թվականներին բարձրացված ընթացության ալիքին, 13-ի հայտնի նամակին, երախտագիտական զգացումով բերում է նրանց անունները՝ գրող-պատմաբան Բ. Ուլուբաբյանի գլխավորությամբ, որոնք իրենց համարձակությամբ ցնցեցին Սովետական Միության տոտալիտար համակարգը, որի մամլիչի տակ էին ոչ միայն այդ հայրենակներ մտավորականները, այլև Արցախի ամբողջ հայությունը: «Ղարաբաղում,- գրում է Վ. Բաղդյանը,- արգելվում էր Անդրանիկ անունը, զորավարի մասին երգեր երգել: Չնայած տաբուին, մարդիկ ոչ միայն երգում էին, այլև իրենց երեխաներին կնքում Անդրանիկ՝ լավ իմանալով, որ մեծ ռիսկի են դիմում» (էջ 8):

Ադրբեջանի ղեկավարության հայահալած քաղաքականությունն Արցախում իրականացվում էր ՊԱԿ-ի անմիջական մասնակցությամբ, լայն ճակատով: Արգելված էր Հայաստանի անվանի գրողների հայաշունչ երգերի մասսայականացումը թե՛ մանուկում և թե՛ ռադիոյով: Նման վրդովեցուցիչ դեպքերի մասին կոնկրետ օրինակներ կան գրքում: Անմեղ ու չնչին դեպքերի առիթով ազգայնամոլի պիտակ էին կպցնում ղեկավար հայ մտավորականներին և նրանց ազատում պաշտոններից: Ինչ վերաբերում է Հայաստանի հետ մշակութային կապերին, դրանք լրիվ բացառված էին: «Հայաստանի հեռուստատեսության ծրագրերը մեզ մոտ դիտելու մասին խոսք անգամ լինել չէր կարող,- գրում է Վ. Բաղդյանը:- Մենք կարոտ էինք հայերեն խոսքին ու երաժշտությանը, զրկված էինք «Արարատ» ֆուտբոլային թիմի խաղերը դիտելու հաճույքից: Ստեփանակերտի «Ղարաբաղ» թիմը որքան էլ լավ խաղար, իրավունք չունեին հաղթող դուրս գալ: ԽՍՀՄ առաջնության «Բ» խմբի մրցաշարում և իրավունք նվաճել հանդես գալու առաջին խմբում: Ղա պիտի լինեին կամ Կիրովաբադի թիմը, կամ մեկ ուրիշը, բայց ոչ Ստեփանակերտը» (էջ 9): Արցախահայության հանդեպ ազգային խտրականության քաղաքականությանը գումարվում էր նաև հայոց պատմության

խեղաթյուրումը ազերի վայ-գիտնականների կողմից, որոնք արցախցիներին համարում են եկվորներ:

Լցվել էր ժողովրդի համբերության բաժակը: Արցախը չէր կարող արժանանալ Նախիջևանի դժբախտ ճակատագրին: Ինչպես նշում է հեղինակը, «Արդեն դանակը ոսկորին դեմ էր առել, երբ այլևս հնարավոր չէր տանել նվաստացումները, վերջապես արդեն լինել-չլինելու հարց էր դրված, վճռվեց՝ լինել: Իսկ լինելու ձևը պահանջն էր՝ վերականգնել պատմական արդարությունը և Արցախը վերամիավորել մայր Հայաստանին» (էջ 10):

Վ. Բաղդյանի պատումը ջերմ ու անմիջական է: Նա ոչ թե ներկայացնում է իրադարձությունները որպես կողմնակի պատմող, այլ գրուցում է ընթերցողի հետ որպես զինվորյալ, որի սրտի միջով է անցել այն ուղին, որ ձգվել է դեպի գոյամարտ ու հաղթանակ: Այդպես նա նկարագրում է 1988-ի շիկացած փետրվարը, նշում այն առաջամարտիկների անունները, ովքեր իրենց սրտի հրով բորբոքել են ազատության խարույկը, ովքեր առանց երկմտանքի, հաճախ նաև սրամտությամբ ու սպանիչ սարկազմով պատասխանում էին Բաքվից ու Մոսկվայից ժամանած պետական այրերին՝ նրանց հասկացնելով, որ արցախցիներին «կոտորել» հնարավոր չէ:

Հետաքրքիր մի պատկեր է «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագրությունում Արցախի գրողների ու լրագրողների հետ Կևորկովի հանդիպման նկարագրությունը: Ի դեպ, ես ևս ներկա եմ եղել այդ հանդիպմանը: Մեր ստեղծագործող ընկերները սառն ընդունեցին Կևորկովին, որը ձգտում էր համոզել, որ անիմաստ է պայքարը, որ այն լինելու է անարդյունք: Բանաստեղծ Գ. Գաբրիելյանը, որ աշխատում էր խմբագրությունում որպես մշակույթի բաժնի վարիչ, փորձեց համոզել Կևորկովին, որ միանա համաժողովրդական պայքարին: Կևորկովը ոչինչ չասաց, պարզապես գլուխը բացասաբար օրորեց և բացեց սենյակի դուռը, որ հեռանա: Գ. Գաբրիելյանը այդ պահին շարտեց ժողովրդա-

կան մի անեծք. «Բոյո թաղիմ, խելքո կորցրել ես, փոշմանելու ես, բայց ուշ է լինելու»:

Կևորկովի հեռանալուց հետո մենք վերջնականապես համոզվեցինք, որ նա Չեյդար Ալիևի դրածոն է՝ պաշտոնամուլ ու մոլորյալ:

Ինչպես էկրանի վրա, գրքում իրար հաջորդում են 88-ի փետրվարյան օրերին տեղի ունեցած իրադարձությունները: Ուշագորավ է փետրվարի 20-ի շիկացած մթնոլորտի նկարագրությունը, առանձնապես հանրահավաքի մի շարք ներկայացուցիչների խոսքը, որ վկայում է ժողովրդի ազատաբաղձ ոգին և նրա վճռականությունը՝ ինքնաճանաչման ու ինքնորոշման առումով:

Վ. Բաղդյանը բերում է տեսագրության մեջ պահպանված հարց ու պատասխանը, որ տեղի է ունեցել լրագրողի ու հանրահավաքի մասնակիցների միջև:

«Ժողովրդի արդարացի պահանջն է՝ ուղղել պատմական սխալը, որը թույլ է տրվել 1921 թվականին:

- Ես ուզում եմ, որ մենք միանանք Մայր Չայաստանին, որպեսզի իմ երեխաները, փոքրիկ թոռնիկներն ապրեն լավ կյանքով:

- Մեր գործն արդար է, մենք կհաղթենք:

- Մեր պահանջը՝ Ղարաբաղի վերամիավորումը Չայաստանին, միանգամայն օրինական է, և անհրաժեշտ է դա իրականություն դարձնել» (էջ 14):

Այս պատկերներին հաջորդում են փետրվարի 20-ին կայացած նստաշրջանի, դահլիճում տեղի ունեցած գործընթացի, հայտնի որոշման նկարագրությունները:

Վ. Բաղդյանը չի գունազարդում իրադարձությունները, նա և՛ ընդգծում է ժողովրդի ոգևորությունը, և՛ այն հիասթափությունը, որ ապրեց նա Մոսկվայի մերժողական քաղաքականության պատճառով: Արցախը դարձել էր այցելությունների փորձադաշտ: Հաճախում էին ԽՍՀՄ մայրաքաղաքից, Բաքվից, հաճախում էին և՛ բարեկամներ, և՛ թշնամիներ: Կարևորն այն էր, որ արցախահայության անզիջում պայքարը վերածվեց ազատագրա-

կան գոյամարտի: Գրքի հեղինակը համառոտ բնութագրումներով ներկայացնում է Շարժման ղեկավարների և համակիրների խոսքն ու գործը: Այս օրերին, երբ աշխարհասփյուռ հայությունը օրինական հպարտությամբ նշում է ԼՂՀ անկախության փառապանծ 20-ամյակը, հպարտության զգացումով ու գոհունակությամբ ես ընթերցում Ռոբերտ Քոչարյանի, Սերժ Սարգսյանի, Արկաղի Ղուկասյանի, Բակո Սահակյանի, Յենրիխ Պողոսյանի, Արկաղի Մանուչարովի, Ժաննա Գալստյանի, Վաչագան Գրիգորյանի, Ջորի Բալայանի, Պարզև Սրբազանի, Շնավոն Պետրոսյանի, Լեոնարդ Պետրոսյանի, Վարդան Յակոբյանի, Վիգեն Յայրապետյանի, Արթուր Մկրտչյանի, Օլեգ Եսայանի և մյուս քաղաքական գործիչների անունները:

Անցնում են տարիները: Այսօրվա 20-ամյա սերունդը չի կարող առանց իր հարազատների հերոսական անցյալը յուրացնելու, ինչպես հարկն է, իմաստավորել իր կյանքն ու գործը:

Իսկ փառավոր անցյալի լուսավոր էջերին ծանոթանալու և նրանցով ոգևորվելու համար անհրաժեշտ են այնպիսի գրքեր, ինչպիսին է Վ. Բաղդյանի «Տեսադաշտը», որտեղ ջերմությամբ խոսք է ասված ժողովրդի ծոցից ծնված արծվասիրտ ու անձնուրաց հրամանատարներ Վազգեն Սարգսյանի, Սամվել Բաբայանի, Ավոյի, Կոնանդոսի, Վլադիմիր Բալայանի, Լեոնիդ Ազգալոյանի, Յուրի Պողոսյանի, Բեկորի, Գեորգի Գասպարյանի, Նորայր Դանիելյանի, Սամվել Կարապետյանի, Քրիստափոր Իվանյանի և մյուս զորապետների մասին: *Նրանցից շատերը նույնիսկ ռազմական կրթություն չեն ունեցել, նրանց զինվորական ամենախոսուն դասագիրքը եղել է բազմադարյան հայրենի Արցախը, ոգին՝ մայր ժողովրդի ճակատագիրը, թուրը՝ Առան Նահապետի և Եսայի ապու Մուսեի բազկի ուժը, իմաստությունը՝ Վաչագան Բարեպաշտի սահմանադրությունն ու Մ. Գոշի «Դատաստանագիրքը», դրոշը՝ Ղայոց եռագույնը:*

Վ. Բաղդյանի գրքում անհրաժեշտ տեղ է հատկացված մեր

ժողովրդի ազնիվ բարեկամների անշահախնդիր արցախասիրության պատկերմանը: Հաճուքով ես ընթերցում Արկադի Վոլսկուն, գեներալ Ալեքսանդր Լեբեդին, Անդրեյ Սախարովին, Ռուսաստանի մտավորականության «Ղարաբաղ» կոմիտեի (ԿՐԻԿ) անդամներ Վալենտին Օսկոցկուն, Անդրեյ Նույկինին, Իննեսա Բուրկովային, Գալինա Նույկինային նվիրված էջերը: Ինչ վերաբերում է Լեդի Քոքսին, ապա նրան բնութագրող էջերը հուշում են, որ նա ոչ թե Արցախի բարեկամուհին է, այլ նրա ազնվասիրտ ու նվիրյալ դուստրը:

Մի շարք իրադարձություններ գրքում ներկայացված են որպես մեր ժողովրդի խիզախ զավակների հավերժախոս գործունեության օրինակներ, որ ելակետային դրվագներ են հանդիսանում ազատագրական մեր պայքարում, բավական է բերել մի շարք վերնագրեր և համոզվել դրանում: Այսպես՝ «ԼՂԻՄ Ազգային խորհուրդ», «Հացադուլ Մոսկվայում», «Աննախաղեպ միջադեպ Հաթերքում», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը», «Քարինտակի հերոսամարտը», «Մեր «Հատե տի»-ն», «Շուշիի ազատագրումը», «Կյանքի ճանապարհի բացումը», «ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը», «Գանձասարի վանքը շարունակում է գործել», «Մուսաներն ու թնդանոթները միասին», «Քելբաջարի ռազմագործողությունը», «Համալսարան Ստեփանակերտում», «Մարտակերտի ազատագրումը», «Աղդամի ռազմական հենակետի վնասագերծումը», «Օմարը հայ զինվորի ոտքերի տակ», «Բիշքեկյան արձանագրություն», «Զինադադար» և այլն: Դրանցում պարզորոշ ցուցադրված են այն աննախաղեպ անձնուրաց մաքառումները, որոնք ապահովել են ժողովրդի ազատ և անկախ ապրելու նվիրական երազանքի իրականացումը:

Վ. Բաղդյանի «Տեսադաշտ. 1988-1994» գիրքն ավարտվում է «Վերջաբանի փոխարեն» եզրափակիչ խոսքով: Հեղինակը լավ է գիտակցում, որ ինքը սերունդներին է ներկայացրել մեր նորա-

գույն պատմության որոշակի էջեր՝ լի մաքառումներով, հերոսությամբ: Նա միաժամանակ խորհուրդ է տալիս ընթերցողներին՝ եթե տեղեկություններ ունեն Ղարաբաղյան շարժման մասին, անպայման հանձնեն թղթին, պահ տան պատմությանը:

«Այստեղ,- գրում է նա,- գրչի զորությունն այնքան էլ կարևոր չէ, կարևորը նյութի հավաստիությունն է, ճշմարտացիությունը: Մենք՝ ականատեսներս, պետք է հանդես գանք պատմիչի դերում՝ վերլուծությունները, մեկանբանությունները թողնելով պատմաբաններին, գրողներին, կինոյի և թատրոնի գործիչներին, արվեստագետներին: Այսինքն՝ լինել սկզբնաղբյուր, ինչպես մեր մեծ պատմիչները, որոնց պատմությունների հիման վրա ստեղծվեցին գեղարվեստական գործեր: Ասենք, եթե չլիներ Եղիշեի «Վարդանանց պատերազմը», չէր լինի Դեմիրճյանի «Վարդանանքը» և այլն» (էջ 354):

Արցախյան պատերազմին մասնակցած բոլոր զինվորայիների անունից Վ. Բաղդյանը երջանիկ է համարում նրանց, ում բախտ է վիճակվել ազատագրել հայրենիքը:

Վերհիշելով Գարեգին Նժդեհի «Չայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ, ընկնում՝ նրանց պակասի պատճառով» թևավոր խորհուրդը, Վ. Բաղդյանը խոսքն ավարտում է ժողովրդական իմաստությամբ. «Ականջներիս օղ անենք Մեծն Նժդեհի այս պատգամ-հորդորը և ամեն օր մի բան անենք հայրենիքի էլ ավելի հզորացման համար: Ոչ թե ասենք՝ իսկ ի՞նչ է անում հայրենիքն ինձ համար, այլ ինքներս ասենք նրա համար, ուրեմն և՛ մեզ համար: Չխռովենք հայրենիքից, հայրենիքից նեղանալն անմտություն է» (էջ 354):

«Ավո», «Ֆենոմեն», «Չընդհատվող թռիչք», «Սեզո» գրքերից, ԼՂՀ կառավարության Եղիշեի անվան ամենամյա մրցանակի արժանացած «Թերթելով պատմության էջերը» ֆիլմաշարից հետո Վ. Բաղդյանի «Տեսադաշտ» ժողովածուն ապագա սերունդներին ուղղված մի նոր, հարուստ ժամանակագրություն է, որը

դառնալու է ոչ միայն հավաստի սկզբնաղբյուր պատմաբանների համար, այլև խոսուն թեմաներ է հաղորդելու այն տաղանդավոր գրողներին, ովքեր ստեղծելու են Արցախյան պատերազմն արտացոլող արժանի պատմավեպեր:

8.

Լույս են ընծայվում բանաստեղծական ժողովածուներ, որոնց էջերը հենց առաջին ընթերցումից ներկայացնում են հեղինակային մտահղացումների ամբողջական երանգը և ավիանջ դնում այն գեղագիտական իդեալները, որոնց հետապնդել է բանաստեղծը: Սակայն գրքեր էլ կան, որոնց էջերը ծայրեծայր հագեցած են դարակազմիկ գաղափարներով՝ արտահայտամիջոցների այնպիսի փայլատակումներով, որ մնում է ընթերցելուց հետո փակես աչքերդ և հոգուդ խորխորատներում մտքիդ աչքերով տեսնես այն բարդ ու իրական աշխարհը, որ գեղագետի հմտությամբ բացել ու հրամցրել է բանաստեղծը: Նման ժողովածուներից է անվանի բանաստեղծ **ԱՐՏԵՄ ԴԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ** «Նամակ Նոյին» մատյանը, որ պատիվ կարող է բերել ոչ միայն հայրենի գրականությանը, այլև համաշխարհային մշակույթին:

«Նամակ Նոյին» ժողովածուն հեղինակը նվիրել է իր ծնողների՝ բանաստեղծ Միքայել Դարությունյանի և մանկավարժ Շամիրամ Զաքարյանի սուրբ հիշատակին: Ավելորդ չենք համարում նշելու այս վերաբերմունքը, ընդհակառակը, անհրաժեշտ ենք գտնում այն առումով, որ գրքի հենց առաջին էջում Արտեմը զետեղել է իր անմոռանալի հոր հանրահայտ բանաստեղծությունը՝ «Զվարթ երգ» խորագրով, որ մի շարք պոետների՝ Ղարաբաղին նվիրված բոլոր բանաստեղծությունների շարքում սրտերի հետ խոսող լավագույն երգերից է՝ Աստծո թելադրանքով հորինված օրհներգերից մեկը, որ նպատակահարմար ենք գտնում բերել ամբողջությամբ.

*Ինչ որ լավ է այս աշխարհում,
Բոլորն էլ կա՝ Ղարաբաղում,
Բոլորն էլ կա և՛ ավելին,*

*Սար չի՛ հասնի մեր սարերին...
Ինչպես մայրն իմ ողջ աշխարհի
Մայրերից էլ լավն է, բարի:
Այնպես հողն իմ Ղարաբաղի
Քաղցր է, և թող Աստված պահի,
Եվ կպահի՛, մի՛ կասկածի,
Աստված էլ է Ղարաբաղի...*

Այս բանաստեղծության մեջքերունը մեր կողմից հետապնդում է մի կարևոր նպատակ, որը կապված է այս գիրք-հայտնության բոլոր շարքերի մեջ ընդգծված այն սեր-տազնապին, սեր-հպարտությանը, սեր-ցավին, սեր-հույսին, որոնք վերաբերում են բանաստեղծի ծննդավայր Արցախին, որի սրբացած գերեզմանոցներում ննջում են նրա նախնիները, նրա պապն ու տատը, և որոնց հոգիները Վերին Երուսաղեմից օրհնում են Արցախի գոյությունը, շնջում սերունդների ունկերին, որ Արցախը և՛ օրրան է, և՛ պատիվ, և՛ ապագա, և՛ աշխարհի սիրտը շոյող երգ:

Նշենք, որ գրքի տպագրությունը հովանավորել է Հայաստանի միջազգային գիտական հիմնադրամը: 1994 թվականին «Նամակ Նոյին» ժողովածուն լույս տեսավ անգլերեն՝ Նյու Յորքում և ամերիկյան մի շարք համալսարանների կողմից ներկայացվեց Նոբելյան մրցանակի: Այս փաստն ինքնըստինքյան խոսում է գրքի գաղափարական հագեցվածության և գեղարվեստական բարձր առանձնահատկությունների մասին:

«Նամակ Նոյին» ժողովածուն լայն արձագանք գտավ հայ և օտարազգի գրաքննադատների շրջանում: Գիրքն արժանացավ Հայաստանի պետական մրցանակի: Նման բարձր գնահատականը արժանի էր ամենախիստ մոտեցումների պարագայում: Ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը գրել է. «Արտեմ Հարությունյանը 20-րդ դարի «հոգևոր պատմության» առասպելն է արարում՝ վաղորդայնի նորոգության արձագանքների հուշը տանելով դեպի Ղարաբաղյան գույների, ձայների ըմբոստ ժայթքումը, ուր

հատվում են պատրանքի և իրականության սովերագծերը: Եվ միանգամայն հասկանալի է նրա բանաստեղծական աշխարհի փոխաձևումը քաղաքական լիրիկայի դժվարին ասպարեզ և հայտնության ու տեսիլքի հրաշեկ միասնություն» (Ա. Չարունյան, Նամակ Նոյին, «Ապոլոն», 1997, էջ 5):

Ուշագրավ է նաև գրականագետ Էդվարդ Թովչյանի գնահատականը. «Արտեմ Չարունյանի պոեզիայում,- գրել է նա,- ինձ միշտ զարմացրել են մաքուր բանաստեղծության և կոշտ, նյութականացած աուրայի համատեղումն ու ներթափանցումը: Մնալով երկնային ոլորտներում՝ նա կարողանում է համարձակ դիպչել և իր զուտ բանաստեղծի շիտակ ու անսքող հայացքով նայել առօրյայի և ժամանակի յուրաքանչյուր հրաշեկ գալարումին, 20-րդ դարի բռնության ծեսերին: Նա կարողանում է համատեղել Բարին ու Գեղեցիկը, և ազատ երևակայության սյուրռեալ թռիչքը չի խանգարում նրան տեսնել երկրի վրա ամեն մի հրեշավոր անարդարություն՝ լինի այն Ղարաբաղում թե Վիետնամում: Սա տեսիլքի պոեզիա է (Նույն տեղում, էջ 5): Իսկ ամերիկացի բանաստեղծ Չեյդն Գերուքն արտահայտվել է այսպես. «Մոտ 70 տարի գիտեինք հայերին ու նրանց պայքարի մասին՝ ընդդեմ բնաջնջման: Այդ հատվածը մեր ժամանակների պատմության սև էջերից է, ու չնայած լսել էինք ամերիկահայ գաղութից հրաշալի ձայներ, բայց մինչև այսօր չգիտեինք ժամանակակից հայ պոեզիան: Այժմ ապրող մեծագույն բանաստեղծներից մեկը թարգմանաբար մեզ է ներկայացված, ու մենք ներքին երախտագիտությամբ ենք վերաբերվում նրա գրքին: Այն հզոր է, կենսական, վառ և խորապես նշանակալից: Այն սյուրռեալիստական է պատմական արտերդի ընդհանրացմամբ՝ տեռոր և ցեղասպանություն: Գիրքը հոյակապ է, այն հավերժորեն ահագնացող է, ահագնագող» (Նույն տեղում, էջ 5):

Նման բարձր կարծիք են հայտնել նաև ամերիկահայ բանաստեղծ Արա Բալիոզյանը՝ Փիթր Պալաքյանը: Իսկ սփյուռքահայ

հռչակավոր գրականագետ Երվանդ Ազատյանը իր գրախոսականում Արտեմ Չարությունյանին համարում է արևելյան և արևմտյան պոեզիաների քաղաքացի՝ առանց աշխարհագրական սահմանների: Նման գնահատականը պատահական չէ, որովհետև Արտեմը խորապես յուրացրել է համաշխարհային գրականության լավագույն ավանդույթները, դրանք օժել հայ դասական և ժամանակակից պոեզիայի ոսկեփոշով, իր հոգու շերտերում դարձրել ծիածան և ընթերցողին ներկայացրել որպես յուրատիպ մի գոբելեն: Տիրապետելով անգլերենին, գերմաներենին, ֆրանսերենին, ռուսերենին՝ նա ըմբռնել է աշխարհի մեծերի գրական արժեքները և աստվածանվեր իր տաղանդի ու արցախաժին տքնանքի շնորհիվ ներկայացել միանգամայն ինքնատիպ խոսքով: Այստեղից էլ ԱՄՆ «Ռաֆթ» ամսագրի խմբագիր, Քլիվլենդի համալսարանի լեզվաբանության և գրականության ամբիոնի վարիչ, պորֆեսոր Ջոն Գրեփինի անմիջական խոսքը. «Արտեմ Չարությունյանն այն բանաստեղծն է, որին միայն ինքը կարող է իշխել և ղեկավարել, միայն ինքը: Եվ նրա բանաստեղծական տեսիլքն իրական է ու մարդասիրական»: (Նույն տեղում, էջ 13):

* * *

Չամաշխարհային գրականության մեջ հայտնի են մի շարք մեծություններ, որոնք իրենց դարաշրջանների իրական պատկերը ներկայացնելու համար դիմել են Աստծուն՝ նրանից հայցելով օգնություն՝ մարդկանց մեղքերը քավելու, չար ու ազահ անհատներին դարձի բերելու, ազգամիջյան ընդհարումների առաջն առնելու, սոցիալական պատշաճ արդարություն հաստատելու միտումով: Այս առումով հատկանշական է նաև Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» անմահ պոեմը, որն արդեն հնչում է աշխարհի շատ լեզուներով:

Արտեմ Չարությունյանն իր գեղագիտական իդեալի հրամայականով դիմել է ոչ թե Տիրոջը, այլ Նոյին: Ինչո՞ւ Նոյին: Ա. Չա-

րությունյանը, ելնելով իր ապրած ժամանակաշրջանի քաղաքական, տնտեսական, հասարակական, մշակութային, բարոյահոգեբանական խնդրումներից, եկել է եզրակացության, որ Աստծո ստեղծած աշխարհն աղտոտված է, վտանգված, մարդկությունը ծուռ ճանապարհի վրա է, այն փրկել է պետք: Իսկ Աստծո արարածների առաջին փրկիչը եղել է Աստվածաշնչյան առասպելի հերոս Նոյը, որը կարողացել է Աստծո հրաշքը փրկել ջրհեղեղից: Բացի դրանից, Նոյ Նահապետի աշխարհափրկիչ խիզախությունը կապված է Արարատ սարի հետ, որը բանաստեղծի ավանդական հայրենիքի խորհրդանիշն է: Այստեղից էլ այն անմիջական սրտացավությունը, որ Հարությունյանը գեղարվեստական փայլուն հնարանքներով ընդգծել է պոեմում: Դա, հիրավի, սովորական պոեմ չէ, այլ տագնապից, ցավից, հույսից ծնված մի ստեղծագործություն, որ խոսում է մարդկության անունից՝ Աստծո սիրով, հանուն նրա հրաշագործության հավերժական տրոփի:

Պարույր Սևակը Գ. Նարեկացու «Մատյանը» համարել է մարդերգություն: Ա. Հարությունյանի պոեմը ևս կարող ենք համարել Նարեկացու Աղոթքի շարունակություն՝ դարձյալ հանուն մարդու:

Նոյ Նահապետը համաշխարհային աստվածաբանության և գեղարվեստական գրականության հոլովված կերպարներից է: Սակայն Ա. Հարությունյանի ստեղծագործական աշխարհում Նոյը հառնել է նաև ավելի հարազատ գունավորումով: Պատահական չէ, որ Հայոց պատմահայրը՝ Քերթոզահայր Մովսես Խորենացին, հաստատում է, որ Նոյի սերնդից է ծագել հայ ժողովուրդը: Իսկ այդ միտում-փաստը երկրորդական չի կարելի համարել: Մ. Խորենացին հայերին համարում է Նոյի ժառանգներից Հաբեթի շառավիղը: Նա գրում է. «Հաբեթը սերում է Գամերին: Գամերը սերում է Թիրասին: Թիրասը սերում է Թորգոմին: Թորգոմը սերում է Հայկին: Հայկը սերում է Արամանյակին: Արամանյակը սերում է Արամայիսին: Արամայիսը սերում է Ամասիային: Ամասիան սերում է Գեղամին: Գեղամը սերում է Հարմային: Հարման սե-

րուն է Արամին: Արամը սերուն է Արա Գեղեցիկին» (Մ. Խորենացի, Պատմություն հայոց, Ե., 1968, էջ 76):

Այս թվարկումից հետո Պատմահայրն ավելացնում է. «Եվ որ սա ճշմարիտ է, ոչ ոք թող չկասկածի, որովհետև այս բաները մեզ պատմում է շատ բաներում վստահելի Աբյուդենոսը»: Ապա շարունակում է, որ Հայկը դուրս եկավ Բելին հակառակորդ և միաժամանակ նրա կյանքին վերջ դնող» (Նույն տեղում, էջ 77):

Միանշանակ կարող ենք եզրակացնել, որ Ա. Հարությունյանը դիմել է Նոյին՝ որպես Փրկիչի, մի կողմից նկատի ունենալով աշխարհի ծուռն ու թերին, մյուս կողմից՝ իր ժողովրդի, նրա պատմական մի մասը կազմող իր ծննդավայր Արցախի ճակատագիրը: Արդյունքում պոեմը վերածվել է համամարդկային ցավի և պոետի՝ սեփական ժողովրդի ազգային տագնապի գեղարվեստական խնդրագրի, որի արժեքն ընդհանրական ու բարձր է՝ ռեալիստական սերուցքի և գեղարվեստական երանգավորման շնորհիվ:

«Նամակ Նոյին կամ հույսի ահագնացում» պոեմը բաղկացած է նախաբանից և 9 մասից: Պոեմը տեսիլքային սկիզբ ունի: Դա տարօրինակ պատմություն է: Նոյն այցելում է բանաստեղծին, այն Նոյը, որ առաջինն է արարել լաստանավը՝ մարդկային ցեղը փրկելու համար: Ուշագրավն այն է, որ հեղինակի նկարագրած տեսիլքը երևացել է Արցախյան շարժմանը նվիրված ցույցից հետո: Հենց առաջին հայացքից սկսվում է մտերմիկ զրույցը բանաստեղծի և Նահապետի միջև:

Գիշտ է, զրույցը կարծես վերաբերում է Նոյի նախաջրհեղեղյան ժամանակաշրջանին, սակայն բանաստեղծի ակնարկներն ընթերցողի առջև բացում են 1988 թվականից սկիզբ առած ըմբոստության պատկերը: Արցախյան շարժումն այստեղ համեմատվում է ջրհեղեղի նախօրյակի հետ: Չնայած ջրհեղեղը նոր էր սկսվում, ջրի վրա արդեն տմբտմբում էին գաղափարներ, քաղաքներ, հավաքություններ, անտուն մարդկանց հառաչանքի փղծկուն տոպրակներ: Մյուս կողմից էլ՝ հառնել էին Հիմալայների

պես ցցուն, բյուրոկրատական սեղաններ, ցեղասպանությամբ կնքված թուրքական յաթաղաններ: Եվ ցավալին այն է, որ այդ ամենի մոտ դատավորների կեղծամներն էին, ուր իշխում է փողը և վխտում են գերեզմանի որդերը:

Բանաստեղծը դիպուկ ընդհանրացումներով վրձնում է ստալինյան նողկալի դարաշրջանը, ուր գնդակահարություններից լայն բացված աչքեր էին, որոնք բացի մարդասպանի ճտքավոր կոշիկներից, ոչինչ չէին տեսնում: Հեղինակն ընդգծում է հարազատի այն զգացումը, որ տածում է Նոյն իր հանդեպ:

*Ողջ աշխարհը թամբել էր ջրհեղեղը՝ ինչպես ձի
(միակ փրկվելու միջոցը անհուն մեղքերից հետո)
և շարժվում էր անհայտ Արարատի ուղղությամբ,
բայց ես դեռ նստած եմ Նոյի տապանից
սարքած սեղանի մոտ,
որ Նոյը իսկույն ճանաչեց որպես իրենը
և կոչ արեց շտապ ճանապարհվել:*

(Նույն տեղում, էջ 39):

Պոեմի առաջին գլխից էլ հենց սկսվում է Նոյի ժամանակաշրջանի ջրհեղեղը հիշեցնող Արցախյան ազգային-ազատագրական պայքարի պատկերումը: Ա. Հարությունյանի յուրաքանչյուր տող ահարկու մի պատկեր է: Իր հույսը կապելով բարի Աստծո հետ, հավատալով Նոյի փրկիչ ուժին ու արարքին՝ բանաստեղծը սյուրռեալիզմի ընձեռած հնարանքներով պատկերում է 20-րդ դարավերջի երկու տասնամյակների փոթորկաշունչ իրողությունները՝ հանդես բերելով երկու հակադիր աշխարհներ: Մի կողմից, թերթերը պատկերում են բարբարոսի ձեռքով մոխրացած մարմիններ, իսկ մյուս կողմից անտարբեր իշխանությունն է, որ ունի իր ուղին ու ուժը: Կարծես աշխարհում ոչ մի չարիք տեղի չի ունեցել և չի էլ ունենում: Ինչո՞ւ,

*Որովհետև ցեղասպանությունը դեռ տևում է
և ձգվում-հասնում մեր օրերը,*

*և վիրավոր կատվի համար լաց լինող թրքուհին
չի ուզում լսել
իր թուրք նախնիների կողմից խոշտանգված
միլիոնավոր հայերի մասին,
և ամեն ինչ բարեհաջող է այս աշխարհում,
և միայն Ձոհն է,
որ անվերջ աղմկում է մեր ներսում՝
չունենալով ելք ու մուտք: (Էջ 43)*

Ա. Հարությունյանը սովետահայ գրողներից առաջիններից էր, որ խիզախեց ներկայացնելու քաղաքական այն ճնշումներն ու անօրեն արարքները, որոնց արդյունքում զոհ գնացին միլիոնավոր ազնիվ մարդիկ: Նա, խախտելով ավանդական դարձած յոթանասունամյա գրամարզանքները, խիստ խարազանեց ստալինյան դաժանությունները, որ դեռևս շարունակվում էին անհատի պաշտամունքի քննադատությունից հետո: Նա առաջատար դեր խաղաց գրողների այնպիսի աստղաբույլում, որի մեջ մտնում էին Յենրիկ Էդոյանը, Հովհաննես Գրիգորյանը, Արմեն Մարտիրոսյանը, Դավիթ Հովհաննեսը, Հովիկ Հովեյանը և այլք, որոնք ժխտեցին կատարվածը: Ինչպես գրում է ամերիկահայ գրականագետ Վեհանուշ Թեքեյանը, նրանք մեծ գործ կատարեցին. «Այս մրոտ ու քարոտ տասնամյակներեն ետք՝ վաթսունական թուականներուն կատարուեցավ էական շրջափոխում մը՝ յայտնուեցավ սերունդ մը՝ որ ժխտումն էր կատարուածին, դիմադրեց իր ճակատագրին, թօթափեց կաղապարներու բեռը և պատմեց իր ճանչցած օրը, իր ապրած ժամանակը, իր մոխիրն ու մեղքը, իր լույսի կաթիլն ու խավարումի ծալքերը» (էջ 339):

Հիրավի, ճիշտ դիտարկում: Ա Հարությունյանի պոեմը անհրաժեշտ է արժեքավորել ոչ միայն իր ստեղծագործության տեսադաշտում, այլև ամբողջ հայ գրականության համապատկերի վրա: «Նամակ Նոյին»-ը այս առումով իրենից ներկայացնում է

որպես սրտի հրկիզում՝ հանուն լույսի և արդարության, հանուն մարդու և հասարակության ազատ կյանքի: Արտեմը ափ հանեց ոչ միայն քաղաքական, այլև բարոյական քայքայումը, տեսավ ժողովրդի դեռևս արնահոսող վերքը, զգաց, որ «չարը և բարին» գոտեմարտում են, բակում հոգնած մի Աստված ինչ-որ բան է բաժանում երեխաներին և ժպտում»:

Բանաստեղծի տեսած իրականությունը փոթորկում է նրա հոգին, վերածվում ցասման և իմաստուն խորհրդի.

*...Թող Նոյը իմանա, թե ում էր փրկում
և Ստամբուլ մտնի շքեղ առևտրի համար,
բայց նախքան այցը թող տեսնի
հայերի ոսկորների ֆոսֆորը Դեր Ջորում
և մյուս ցեղասպան անապատներում,
թող թերթ առնի և կարդա Արցախի մասին,
թող մտնի դեղատուն, և սարսափը մեղմող դեղ առնի...*

(էջ 42)

Սակայն ցավը չի մեղմանում: Բանաստեղծը աստիճանավորում է ցասումի պատկերը, և Նոյը, որպես կերպար, դառնում է պոետի վշտակիրը և արդարության խորհրդանիշը: Այստեղ արդեն բանաստեղծը հայտարարում է իր ազգային պատկանելությունը, խոսում հայի անունից, որի վիշտը ստանում է համամարդկային բնույթ:

Բանաստեղծը ուղղակի ճչում է, որ Նոյը իրեն չթողնի «այս աշխարհի խելագարանոցում», որ ինքը նոր տապանի տոմս ունի՝ Արարատից մինչև Գրանդ Քենյոն մեկնելու...

Հիասթափված արդի աշխարհի քաղաքական կեղծ գործիչներից՝ բանաստեղծը, հանձին Նահապետի, տեսնում է սպասելիք բարի գործչին.

*Նոյ, իմ բարի քաղաքական գործիչ,
ես հույսը չունեի քո այցի,
թույլ տուր հրաժեշտ տալ հարազատներիս,*

*Արարատը մոտենում է, իսկ ջուրը՝ բարձրանում,
ջրերից այն կողմ ոչինչ չեն տեսնում,
բայց ես տրամադիր եմ ապրելու,
ես պետք է հասնեմ Լեռան այն կողմը,
որից այն կողմ՝ էլ ոչ մի լեռ:
Նոյ, ես հրում եմ քո Տապանը դարաբաղյան ամուր
իմ ուսերով դեպի բաց ջրեր,
դեպի ջրհեղեղը Նոր Սիրո... (էջ 42)*

Պոեմի կառուցվածքը շիկանում է քնարական հերոսի հույսի ահագնացմամբ, որն առնչվում է աշխարհում տեղի ունեցող երևույթների վայրիվերո ընթացքին: Իսկ քնարական հերոսը՝ բանաստեղծը, որ հասակ է առել ու հասունացել 20-րդ դարի երկրորդ կեսին, ականատես եղել անհատի պաշտամունքի քննադատությունից հետո դեռևս շարունակվող կոմունիստական տոտալիտար ծավալումներին ու կեղծիքին, ինչ-որ տեղ հույսեր փայփայել, սակայն հուսախաբվել, ակնկալիքներ պարզել ու համոզվել, որ իր իդեալական կացութաձևը դեռևս հեռու է, շատ է հեռու: Ուստի այդ եղած-չեղած, կիսատ-պռատ իրական վերափոխումների ալեկոծումների մեջ ձեռքը կարկառել է Նոյին՝ որպես փրկության խորհրդանիշ, որին դեռևս հավատում է: Ա. Հարությունյանը լավատեսի դեր չի խաղում, նա ձգտում է լավ ու լույսը տեսնել կյանքի ակնկալվող վերափոխումների մեջ, որտեղ Նոյը դեռ երկար ճանապարհ ունի անցնելու, քանզի և՛ Մարիամ Աստվածածինը, և՛ փրկության կարոտ երեխաները, և՛ բանաստեղծն ու նույնիսկ ինքը՝ Նոյը, դեռևս փորձությունների մեջ են:

*Նոյ, սնունդ և փափուկ բարձեր մեզ պետք չեն,
չնայած երկուսիս ուղին լի է վտանգներով,
կսնվենք միայն երեխա-գազանների հայացքով,
որ շուտ են զգում մարդու բարի-չար լինելը,
և թռչուն կդառնան՝ եթե նեղացնենք:
Նոյ, իմ ձեռնարկումը նույնքան իրական է,*

*որքան քո արարումը ազգերի,
մեր լաստը կդառնա նոր մայրցամաք,
ուր ամեն ոք կունենա
երջանկության դրամատոնային հաշիվ
և անմահության կանխավճար... (էջ 43)*

Մարդկային-հուսավառ այս խնդրանքը գնալով դառնում է ազգային ցավի ճիչ, որովհետև բանաստեղծն իրավացիորեն իրեն համարում է մարդկության մի մասնիկը՝ իր ժողովրդի դիմագծով ու ճակատագրի խարանով: Նա տառապում է, որովհետև «աշխարհը փորձում է երես թեքել հինավուրց ազգից», որովհետև մեր հինավուրց ու դասական ժողովուրդը չունի «նավթի ոչ մի բիծ», որը, ցավոք, հիմնաքար է հանդիսանում չինական ռեստորանում ճաշող նավթի ընկերակցության մեծափոր ջոջերի համար:

Ճշմարտացիորեն ներկայացնելով նենգափոխված ջոջերի աշխարհը՝ բանաստեղծը չի հուսալքվում, նա քաղաքացիական ակտիվ դիրքորոշմամբ պատրաստ է հաղթահարելու կյանքի մամռոտ գայթակղության ժայռերն ու օվկիանոսները, դառնալ բարու և լույսի մարտիկ:

*Կմտնեն ամուր քայլերով ամեն ինչ սրբագործող
ջրհեղեղից հետո հսկա քաղաքների
գաղջ հյուրասենյակը
և մեռնող քավարանատիպ արվարձանները
(ուր խոհանոցը ռազմատենչ լուրերը
ընտանի դարձնելու միակ վայրն է): (էջ 44)*

Հավատում է բանաստեղծը, որ Նոյի և իր բիբլիական թռիչքը կարող է ճեղքել և անցնել ռադարները, ճպռոտ աչքը և Նիագարա ջրվեժից մարդու բարձր անկումը:

Ա. Հարությունյանի ստեղծած առասպելական ու տեսլիքային պատկերները միս ու արյուն են ստանում՝ առնչվելով տիպական պայմաններում ծփացող իրողություններին: Բանաստեղծը չի խուսափում կոնկրետ վայրերի, երկրների, փողոցների, ընկերու-

թյունների անունների նշումից: Դրանով իսկ նա շոշափելի է դարձնում գաղափարների և ձգտումների այն տեսիլքային փունջը, որից և՛ ցավ է արձակվում, և՛ լույս: Նրա զրույցի մեջ ալիքվում են ջրահարսերի բաժանման կարոտի երգերի թրթիռները, երևում են Միսաք Մեծարենցի հրեշտակները, զգացվում է մեր բիբլիական լեռան տանջող քաղցրությունը: Սակայն ցավի ահագնացումն ավարտ չունի: Բանաստեղծը համամարդկային ասպարեզից հետքայլով հասնում է իր պապերի մասունք-հողը՝ Արցախ, և ի լուր աշխարհի՝ դիմում Նոյին:

*և իրենց ծաղկունքը ետ պահած
Արցախի լեռնային ծաղիկները կսպասեն,
որ վտանգը զնա-անցնի,
ավա՛ղ, ուշ կլինի հետո:
Չափից շատ հիմա փաթթոցավոր ոստիկանական
շներ կան փողոցում,
երազիս նրանք պատառոտում էին
քրիստոնյա մի անօգ կնոջ, իսկ օրվա ընթացքում
հեռուստացույցի վերջին լուրերը ցույց տվին պահը
որպես իրողություն: (էջ 44)*

Ա. Հարությունյանի պոետական մտածողությունը դառնում է պատկերների հզոր հորձանուտ, որպես Հայոց կորուսյալ հայրենիքը և Հայոց անանցանելի վիշտը ցուցադրող մի կինոնկար: Նրա ներկապնակի երանգները պատրանքի ձևով ցուցադրում են լաստի տակ արտացոլվող արյունոտ կարմիր մի տարածք, որոնք ներկայացնում են հայկական վեց վիլայեթները՝ ներկված ցեղասպանության արյունով: Մի կողմից ազգային ցավը, մյուս կողմից՝ վրեժի զգացումը փոթորկում են քնարական հերոսի հոգին, զգացումն ու ասելիքը իրար են խառնվում, խենթանում է նա և արտաբերում.

*Նո՛յ, եթե կարող ես՝
լաստովդ կանգնեցրու ժամանակը,
ես հրեշի ատամները պետք է հաշվեմ,*

*բայց սպասիր, Նոյ՛,
թունավոր մշուշը գնալով խտանում է,
իսկ փրկության Արարատը չեն տեսնում:
(էջ 45)*

Ձգացումներն իրար հալածող ալիքների պես հանգիստ չեն առնում, լաստը հակառակ ուղղությամբ է գնում, հեռվում նկատվում է «գինված ազգերի դոփապարը, փոքր ազգերի ոսկորներից սարքած պարահանդեսուն»: Բանաստեղծը գտնում է, որ Նոյն ու ինքը սխալ գործեցին, լավ չէ՞ր լինի մետրոյով անցնեին ճանապարհը նոր սար գտնելու գործում, այլապես կրկին կմնան նույն գերին:

Պոեմի Ձ գլխում բանաստեղծը ներկայացնում է խառնաշփոթ մի իրականություն, որտեղ «շուն, կատու և գօեթ» են անվերջ, որոնք «ծյուն են ուտում կերակրի փոխարեն»: Սիմվոլիկ պատկերն ընթերցողին տանում է դեպի ռուսական անտառներ, որտեղ սկյուռներն են շարժվում, որպես ջրհեղեղից փրկվածներ: Սակայն այստեղ ևս բանաստեղծին հանգիստ չի տալիս իր ժողովրդի դարավոր ցավը, իր նախնիների ավանդական օրրանը, որը ոտքի է ելել վերամիավորվելու մայր Հայաստանին, սակայն նորաթուխ Ադրբեջանը պարտադրել է պատերազմ: Քնարական հերոսի խնդրանքը դառնում է հարազատ որդու տազնապ, օգնության կանչ.

*Նոյ՛, եթե կարող ես Արցախը նույնպես
վերցրու լաստիդ վրա:
Նոյ՛, ես դարաբաղցի եմ և հուսով եմ՝
խնդրանքս չես մերժի,
ապուպապերիս պապերից մեկը,
ես նկարդ եմ տեսել պապիս հին տան պատին,
կանաչ դրախտում՝ Շուշիում,
որ հիմա ազատության Տապանն է տիեզերքում,
չնայած ջրհեղեղը վաղուց է չքվել: (էջ 46)*

Հետաքրքիրն այն է, որ բանաստեղծը կատարում է մի անցում խնդրողից՝ պահանջատիրոջ և խոսում հենց Արցախի անունից: Նրա այդ խոսքը հնչում է որպես ցասունալից բողոք ծովածավալ դաժանության դեմ, միաժամանակ հավաստիացնելով, որ ինքն ի վիճակի է «քարքարոտ-մարդատյաց հասարակությանը կանաչապատել զվարթ թթենու շուքով»: Իսկ թթենին Արցախի խորհրդանիշն է, մի աշխարհի, որի բանաստեղծ որդին դառնում է մարդկության սրտացավ որդին և ազդարարում.

*Նոյ, հիմա աշխարհում հազար անգամ ավելի
մարդ կա, քան թե անձնաթուղթ
(նոր ջրհեղեղ է սպասվում),
ավելի շատ բանտ, քան բնակելի շենք,
ավելի շատ փուշ, քան թե՝ վարդ,
ավելի շատ սելջուկատիպ արյունոտ յաթաղան,
քան եկեղեցի և խաչ,
ավելի շատ կարկատած ծակ գրպան, քան թե փող:*

Եվ այս համապատկերի վրա բանաստեղծ-քնարական հերոսը խոստովանում է իր ներաշխարհը պահել անձեռնմխելի և պայքարել իր վերջնական նպատակի համար:

«Նամակ Նոյին» պոեմը լայն ընդգրկումներ ունի ժամանակի և տարածության առումով: Բանաստեղծի տեսադաշտը հորիզոններ է ծալծալում, միտքը թևածում է երկրագնդի բոլոր ծայրերում, խոսքը շիկացնում է ոչ միայն իր ժողովրդի, այլև ամբողջ մարդկությանը հուզող հիմնախնդիրներից: Երկի է գլխում բանաստեղծն իրեն ներկայացնում է Զլիվլենդի իր գրասենյակում՝ շրջապատված բարձրաճակատ ամերիկացի պրոֆեսորներով», որոնց համար անգլիական հին գրականությունից գատ ուրիշ բան աշխարհում գոյություն չունի»:

Այս պատկերում նկատի է առնվում մարդկության մի մասի անտարբերությունը մյուսի հանդեպ, որը ևս չարիքի աղբյուր է, և որի դեմ ևս մարտնչում է քնարական հերոսը՝ չհաշտվելով կրա-

վորական գործի հետ: Բանաստեղծը չի շրջանցում ամերիկյան այն շրջապատը, ուր «ձյան թոնի վրա ավելի սևացած սևամորթներ կանանց տանջված-խորշոնած, բայց հպարտ դեմքեր» են: Ամեն դեպքում բանաստեղծի ուշքն ու միտքը, անանցանելի ցավն իր ազգի ճակատագիրն է, և դա բնական է.

*Նո՛յ, մենք պետք է դիմանանք ազգի փորձությանը,
Մեր սրտերում քանի՜-քանի տապաններ կան լողացող,
չնայած՝ հոգնած ծովերը նույն երազն են տեսնում,
փրկված նարդկությունը Արարատի գագաթին: (էջ 47)*

Բանաստեղծը ազգայինից կրկին գնում է դեպի համամարդկային ցավի եզերք: Նա դիմելով Նոյին, ընդգծում է, որ տապանլաստը բոլորինն է, որ լաստի այս ձևը սիրո նշան է՝ զուսպ և ամուր, բայց և այնպես, չի շրջանցում այն հանգամանքը, որ սիրո լաստը բոլորին տանում է դժվար մի աշխարհ, «ուր քամին և ժամանակը միասին են թափառում, ձեռք-ձեռքի տված, ցնցելով հողմացույցը դժբախտության»: Ցավն ու տագնապը չեն մեղմանում, հառնում են 9-րդ ալիքի նման: Ահավորն այն է, որ աշխարհում ամեն օր մեկը մյուսին բանտ է նետում, աղավնու պես գիշերը դունդունում են ոստիկանական մեքենաները, բայց առավոտյան դաժան մառախուղն ավելի է խտանում:

Պոեմում ընդգծվում է նաև աշխարհի փրկությանը հայ ժողովրդի մասնակցության գաղափարը: Դիմելով Նոյին՝ բանաստեղծ-քնարական հերոսը գոհունակությամբ շեշտում է, որ լաստը կապողների մեջ ինքը տեսնում է հայ ընկերներին, որոնք հիմա կոչվում են Արցախում: Կամրջելով անցյալը ներկային՝ բանաստեղծը խիստ խարազանում է մեծ պետությունների երես առած գավակների, որոնք ռազմանավեր են վարում և «ընդունակ են ամեն ինչի», ուստի դեռևս փրկություն է պետք, աշխարհը դեռ ծուռ է.

*...ոչ ոք չուզեց մեզ ճանաչել,
Արարատը, որ միշտ մեր կողքին էր,*

*շարժվում էր մեզ հետ կամ էլ հայտնվում
հեռու-հեռուներում՝ որպես միրաժ,
հանկարծ չքվեց-անհետացավ... (էջ 48)*

Արարատն այնուհետև համեմատվում է Փոքր Միերի հետ, իսկ նրա ժառանգորդ-բանաստեղծն այսօր պառկում է ծովերի մեջտեղում «և երագում ծովից ծով Հայաստան»:

Դիմելով Նոյին՝ Ա. Հարությունյանը գտել է հայ ժողովրդին հուզող առօրեական խնդիրներն ու հարցերն արտահայտելու հաջող հնարանք, որի անունից հարազատ որդու անմիջականությամբ ներկայացնում է իր ցանկությունը.

*Նոյ, գրիր ինձ մի քանի տող
և վերցրու ինձ Քսանմեկերորդ դարի
անձնակազմի համար,
հիշեցրո՛ւ, որ ես դեռ կամ Մասիսի սառած
փեշերի մոտ,
հիշեցրո՛ւ, որ դեռ կարող եմ քեզ հետ ճամփա ընկնել
ատոմային ջրհեղեղից հետո,
Հասցես,-
Ջրհեղեղի փրկիչ-կենտրոն՝ Արարատ,
Քլիվլենդում մի պահ հայտնված,
անանձնագիր-անգրիքարտ
(որի համար երեք ամիս աշտարակ-բանտ)՝
Արտեմ Հարությունյան,
Ցպահանջ...*

Ա. Հարությունյանի «Նամակ Նոյին» պոեմը իր ազգային-համարդկային անցած-ներկա ցավերի և տագնապների, կորուստների և ակնկալիքների ինքնատիպ ու հզոր մի պատկեր է, որի արժեքը միշտ դեպի իրեն է ձգելու գալիք սերունդներին...

9.

Հայ ժողովրդի անմահ դուստրերից մեկը՝ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, 2005թ. հիացնունքով և ազգային հպարտության զգացումով գրել է. «Ես Ջեմմա Անանյանին ճանաչում եմ վաղուց, քանի որ պատկանում եմ գրողների այն սերնդին, որն իր կյանքի կեսն անց է կացրել հանրապետության գյուղերն ու քաղաքներն այցելելով, էլ չեմ խոսում Սփյուռքի և Խորհրդային Միության տարբեր վայրերի մասին: Եվ ահա ճամփորդությունների այս ընդարձակ համայնապատկերի վրա Իջևանն իմ սրտում ու հիշողության մեջ գրավում է առանձնահատուկ տեղ՝ թե՛ իր շնաշխարհիկ բնությամբ, թե՛ իր գրասեր և գեղեցկասեր մարդկանցով: Այս զույգ բարեմասնություններն ունի իր մեջ Ջեմմա Անանյանը, ով իրերի բարեբեր դասավորությամբ երկար տարիներ ղեկավարում էր այս համբավավոր շրջանը»:

Ականավոր գրողը, ինչպես տեսնում ենք, անհատի հոգու գեղեցկությունն ու վեհությունը տեսնում է հայրենիքի և ժողովրդի հանդեպ ունեցած նրա ծառայության և պատասխանատվության հետ: Նման անհատականություններից է **ՋԵՄՄԱ ԱՆԱՆՅԱՆԸ**, որի ծննդյան 80-ամյակը լրացավ 2011թ., և Հայաստանի ազգային գրադարանը հոկտեմբերի 12-ին արժանվույնս մշտեց նրա փառապսակ հոբելյանը: Սակայն այդ միջոցառումը զարդարվեց նաև նրանով, որ կազմակերպվեց ուշագրավ մի գրքի շնորհանդես, որի հեղինակը հենց վաստակաշատ հոբելյարն է:

Ջեմմա Անանյանը պատմական Իջևանի ավանդապահ և լուսատու մի գերդաստանի ծնունդ է, շողարձակ մի տոհմածառի ներկայացուցիչ, որի աշխարհ գալը խորհրդանշուն է մայր ժողովրդի ինտելեկտուալ կարողությունների նոր դրսևորումն ու նրան նվիրումով ծառայելը: Չեմ կարող չնշել, որ Ջեմման հարազատ քույրն է հռչակավոր գրականագետ, հրապարակախոս, գրական ու լրագրողական գործի եռանդուն կազմակերպիչ, բա-

նասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գառնիկ Անանյանի, որի հարուստ կենսագրության մեջ զգալի տեղ է գրավում նրա մատուցած օգնությունը Արցախի պետական համալսարանի դասախոսական գործընթացին և լրագրողական կադրերի պատրաստմանը: Այսօր ԱրՊՀ լրագրության բաժնում հիմնականում դասավանդում են այն մագիստրոսները, ովքեր կրթություն են ստացել ԵՊՀ լրագրության ֆակուլտետի մագիստրատուրայում ու թեզեր պաշտպանել նրա գիտական ղեկավարությամբ: Ափսոսանքով են նշում, որ Գառնիկ Գուրգենին կյանքից հեռացել է անժամանակ, սակայն նրա անունը մտել է հայ մշակույթի պատմության մեջ, որ հոլովվում է նաև Արցախում՝ նրա մտավորական եղբայրների և քույրերի, նրա երախտագետ սաների շուրթերին: Այս մտորումները Գառնիկի մասին բերեցի մի նպատակով, որպեսզի մեր Ձեռնման կրկին համոզվի, որ իր տաղանդավոր եղբայրը նաև մերն էր ու նրա փոխարեն կարող ենք բարձրաձայնել. Հպարտ ենք Ձեզնով, քույր մեր Ձեռնմա, հպարտ ենք, որ Դուք Ձեր գործունեությունն սկսելով որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, անցել եք փառավոր ուղի: Դուք Ձեր ազնիվ ու ժողովրդանվեր աշխատանքի շնորհիվ ընտրվել եք ՀԿԿ Իջևանի շրջկոմի քարտուղար (1959թ.), երկրորդ քարտուղար (1965), շրջխորհրդի գործադիր կոմիտեի նախագահ (1977), շրջկոմի առաջին քարտուղար (1983): Դուք, Ձեռնմա Գուրգենի, ակտիվորեն մասնակցել եք պետիկմնարկների աշխատողների արհմիութենական 25-րդ համամիութենական համագումարին և ընտրվել նրա Կենտկոմի կազմում (1982): Դուք եղել եք ԽՄԿԿ 27-րդ և 28-րդ համագումարների պատգամավոր, վերջինիս կողմից ընտրվել ԽՄԿԿ Կենտրոնական կոմիտեի վերահսկիչ հանձնաժողովի նախագահության անդամ:

Քույր մեր, այդքանով հանդերձ, Դուք երբեք չեք մոռացել, որ պաշտոնյայի հիմնական հոգսը պետք է լինի ժողովրդի ճակա-

տագիրը, և արդարացրել էք Ձեզ՝ որպես ազգի հոգսակիր դուստր: Դյուցազնուհու Ձեր ձայնը նոր իմաստով հնչեց Արցախում սկիզբ առած ազգային-ազատագրական պայքարի և Ադրբեջանի կողմից մեր ժողովրդին պարտադրված դաժան պատերազմի տարիներին:

1991թ. մայիսին Ձեր խիզախ ելույթով խիստ քննադատեցիք ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ.Ս. Գորբաչովին՝ նրա կողմից վարվող բացահայտ հակահայկական քաղաքականության համար և դուրս եկաք նախագահության կազմից: Այդ օրերին էր, որ Չայաստանի անկախ հանրապետության Իջևանի շրջանային խորհրդի անդրանիկ նստաշրջանում ընտրվեցիք շրջխորհրդի գործկոմի նախագահ (1991-1996):

Կյանքդ, քույր Ջենմա, ժողովրդանվեր դատեր սրտացավ վերաբերմունքի և պրակտիկ գործունեության համոզիչ ուլունքաշար է: Դուք երեք անգամ անընդմեջ ընտրվել էք ՀՀ Գերագույն խորհրդի և Ազգային ժողովի պատգամավոր (1985, 1990, 1995): Աշխատել էք որպես Տաուշի մարզպետի տեղակալ (1996): Եղել էք ՀՀ տարածքային կառավարման և օպերատիվ հարցերի նախարարի գլխավոր խորհրդական (1999-2000), ՀՀ սոցիալական ապահովության նախարարի խորհրդական (2000-2003): Նշենք նաև, որ 2003-2008թթ. եղել էք ՀՀ ԱԺ «Ժողովրդական պատգամավոր» պատգամավորական խմբի գլխավոր մասնագետը, իսկ 2008 թվականից ՀՀ սփյուռքի նախարարի խորհրդականն էք:

Հաճելի է նշել, որ Ձեր ժողովրդանվեր գործունեության շնորհիվ պարգևատրվել էք «Պատվո նշան» շքանշանով, ՀՀ Գերագույն խորհրդի պատվոգրերով, արժանացել բազմաթիվ խրախուսանքների: Ամենաբարձր գնահատական կհամարեի Իջևանի կենտրոնում կանգնեցված մարմարյա Ձեր կիսանդրին, որ իշխանությունների և ժողովրդի սիրո և հարգանքի տուրք ու խորհրդանիշ է Ձեր հանդեպ:

Ձեռնա Գուրգենի, տոհմիդ աստվածամկեր ստեղծագործական շնորհքից Ձեզ նույնպես առատ բաժին է հասել, վկան՝ «Հայոց օջախը՝ պատանդ» Ձեր ստվարածավալ ժողովածուն, որ առաջինի լրամշակված հրատարակությունն է, և խմբագրել է նշանավոր գրականագետ և մշակույթի գործիչ Ֆելիքս Մելոյանը:

Գրքում ամփոփված խոհերը, ելույթները, քաղաքական հողվածները, որոնք անմիջական արձագանքն են 20-րդ դարի 30-ական թվականներից մինչև մեր օրերը, Ձեր կենսագրությանն առնչվող պատմական անցքերի, կարևոր իրադարձությունների վավերագրություններ են:

Ինչի մասին գրում եք Դուք, այդ ամենի ոչ միայն ականատեսն եք, այլև մասնակիցն ու ժամանակագիրը: Ձեր հոգու ջերմությունը միաձուլված է Հայաստանի տնտեսական ու հոգևոր կյանքի վերելքի տարիներին, Ձեր սրտի ցավն ամբողջ խորքով հյուսված է 1988-ի երկրաշարժին, Ձեր կամքը դիմակայված է ԽՍՀՄ քաղաքական-տնտեսական համակարգի փլուզման մղձավանջին, Ձեր ոգին ծածանվում է Հայաստանի անկախության հռչակման պատմական հիշողության շերտերում, Ձեր ըմբոստությունը հայ ազատամարտիկներին առաջնորդում էր ազերի-թուրքերի դեմ՝ Ադրբեջանի կողմից հայ ժողովրդին պարտադրված պատերազմում՝ Արաքսից մինչև Օմար, Օմարից մինչև Իջևան: Հայոց սահմանների պաշտպանության, Արցախում ծավալված ազգային-ազատագրական պայքարի համաժողովրդական գոտեմարտում ոչ միայն հնչել է որդիական Ձեր համախմբող ձայնը, այլև հմտորեն ու համբերատարությամբ օգնել եք այն արցախցիներին, ովքեր պատերազմական գոտուց ստիպված տեղափոխվել են Իջևան: Այդ մասին գրքի էջերին հանձնած Ձեր հուշերը երախտագիտության զգացում են առաջացնում ընթերցողի սրտում: Այդ ամենը չեն մոռացել Արցախում ու Ձեզ համարում են մեր պատմության առասպելված հերոսուհիներից մեկը: Ձեր

անմնացորդ աշխատասիրությունը ծփում է գրքիդ բազմաթիվ էջերում: 1994թ. Լոնդոնում Դուք դիմելով Մեծ Բրիտանիայի խորհրդարանի փոխխոսնակ, բարոնուհի Քերոլայն Քոքսին, ակնածանքով ընդգծել եք. «Քսան անգամ Դուք այցելել եք Արցախ և քսան անգամ Արցախ աշխարհը լցրել Չայաստանի դստեր հպարտ կեցվածքով: Նաև այդ կեցվածքից է սնվում լեգենդար Արցախի լեգենդային ուժը:

Համոզված եմ, որ այդ լեգենդային ուժից էլ սնվում եք Դուք, ուստի կասկած չունեմ, որ իր ազատության ու անկախության համար ծառս եղած մի բուռ ժողովրդի արդար դատը անարդար աշխարհում հասցնելու եք արժանապատիվ լուծման՝ անաղարտ պահելով հինգհազարամյա մի ժողովրդի հարատևության առողջ զարկերակը» (էջ 339):

Ձեր այդ ելույթում, Ջեմմա Գուրգենի, ընդգծել եք նաև պատմական մի փաստ, որ մի կողմից ուրախության խուտուտ է տալիս յուրաքանչյուր արցախցու սրտին, մյուս կողմից, կրկին ընդգծում հայ ժողովրդի մեկ արմատ ունենալու, միասնության գաղափարը: Բերում եմ Ձեր խոսքի հետևյալ մասը. «*Ես Լոնդոն եմ հասել Իջևան անունը կրող փոքրիկ մի բնաշխարհից, որտեղ նույնպես արկերի պայթյունից մարդիկ են զոհվում, հանապազօրյա հացի դեղնած արտեր են հրկիզվում:*

Եկել եմ երախտապարտ քրոջ իրավունքով համբուրելու Ձեր սուրբ ճակատը:

Նույն իրավունքով էլ՝ խնդրելով պահանջելու և պահանջելով խնդրելու, որ Չայաստան կատարելիք Ձեր ազնիվ առաքելություններից մեկի ընթացքում թեկուզև կարճատև մի այց նվիրեք մեր շրջանին: Մեր շրջանն էլ է Ձեզ դուր գալու, քանզի բնակիչները Ձեզ այնքան սրտամոտ Արցախից նախկինում գաղթածների հետնորդներ են» (էջ 348):

Բարոնուհի Քոքսին մաղթելով արցախյան համբերություն ու

հաստատակամություն՝ Դուք նրան ընծայել եք հենց իր համար գործված՝ Վարդան Մամիկոնյանի դիմանկարով գորգը: Արցախցիների անունից այսօր ընդունեցեք շնորհակալության շողերի փունջը նաև Ձեր այդ գործի համար:

Ջեմմա Գուրգենի, Ձեր նոր գրքում գետեղված է նաև լրագրող Ռ. Զովհաննիսյանի հարցազրույցը Ձեզ հետ, որ տպագրվել է «Ազգ» թերթի 1995թ. օգոստոսի 2-ի համարում: Ազգային ժողովի պատգամավոր ընտրվելու առթիվ կազմակերպած այդ հարցազրույցի մեջ Դուք, որպես շրջագործկոմի նախագահ, բերել եք Ձեր ծրագիրը, որտեղ Արցախի հարցը համարում եք մեր ժողովրդին և անձամբ Ձեզ հուզող կարևորագույն խնդիրը: Այդտեղ ընդգծել եք ժողովրդական մի իմաստություն. «Մարդու թշնամին անգամ պետք է մարդ լինի, ազգի թշնամին էլ պետք է մարդկություն ունեցող ազգ լինի: Եթե մենք Եվրոպայի քարտեզում տեղավորված լինեինք, մեր թիկունքին Մերձբալթյան երկրները լինեին կամ Ֆրանսիան, մի խոսքով՝ քաղաքակիրթ պետություններ լինեին, մենք կիմանայինք, որ նրանց հետ բանակցությունների սեղանի շուրջն ենք նստել, նրանք այս բանը խոստացել են, ուրեմն՝ կատարվելու է: Բայց մենք այնպիսի թշնամիներ ունենք, որ չգիտենք, թե ինչ անակնկալներ կարող են մատուցվել: Դրա համար մեր սահմանները հարյուր կիլոմետր Իջևանում, երկու հարյուր կիլոմետր էլ Տավուշում ու Կրասնոսելսկում, պետք է միշտ ամուր փակի տակ պահել: Ե՛հիշտ է, Զայոց բանակը կա, մեր հոգսերն այդ առումով պակասել են, բայց բանակն էլ ահագին հոգսեր ունի: Պետք է բանակին սատար լինել: Պետք է սահմանամերձ գյուղերի հոգսերը հոգալ» (էջ 346):

Ձեր մարգարեական այս մտորումները մշտաբուն խորհուրդներ են հայոց սերունդներին, որոնք Ձեր ժողովածուն համարելու են սեղանի գիրք ու ազնիվ զգացումներով արտաբերելու են մեծ բանաստեղծ Ն. Ջարյանի՝ Ձեզ նվիրած տողերը.

*Կինը մանկան տալիս է կյանք,
Բանաստեղծին՝ թև ու բոց:
Քանի որ կան Ձեզ պես կանայք,
Կապրի աշխարհը հայոց:*

Յուրաքանչյուր արցախցի նույնը կասեր և ասելու է... Ասելու է, որովհետև Ձեզ նման դուստրերը ոչ միայն բարձր են պահում ազգի պատիվը, այլև դառնում են ծածանվող դրոշ բոլոր ժամանակներում: Եվ ոչ միայն այդ: Դուք ուսուցանում եք, թե ինչպես կարելի է ծառայել երկրին ու մտահոգ լինել նրա ամեն մի թիզ հողի համար: Ձեր գրքում Դուք պատմում եք, թե ինչպես Հայոց Իջևանի շրջանի սահմանագլխին կառուցել եք «Հայոց օջախ», որը հացատուն էր և որպես հացատուն, հավատարմորեն էր ծառայում սահմանային ընդհարումների, վեճ ու կռիվների ժամանակ: Այն դարձավ երկրապահների հարազատ օրրանը, որտեղ հանգստանում, սնվում ու ֆիզիկական երգեր էին երգում հայոց քաջերը՝ ահուդդողով լցնելով թշնամու սիրտը և բերկրանքով ու հպարտությամբ՝ հայերի հոգին:

Սակայն, ավաղ, այսօր այդ օջախում վխտում են ազերի-թուրքերը, որոնք օգտվելով պատերազմական աննպաստ պայմաններից, «Հայոց օջախը» գրավել և կցել են Ղազախի շրջանին: Ձեր ջանքերով կառուցված այդ հայապատկան ու հայաշունչ օջախը պատանդ է հիմա, որի կորստյան ցավը հուշել է Ձեզ գիրքդ կոչել «Հայոց օջախը՝ պատանդ»: Միաժամանակ Դուք հավատում եք, որ մի օր մեր պատանդ օջախը վերադարձվելու է իր իջևանցի տիրոջը: Այդպես էլ լինելու է: Ժողովուրդը հավատում է իր դստեր հույսին եւ Հայաստանում, եւ Սփյուռքում, եւ անկախ եւ ազատ ապրող Արցախում, որտեղ Ձեմնա Անանյանին համարում են իրենց նվիրյալ ու հայրենասեր դուստրը:

10.

Արցախյան շարժման առաջին օրերին ժողովուրդը գիտակցեց, որ Ադրբեջանը անպայման արցախցիներին պարտադրելու է պատերազմ: Ուստի կարճ ժամանակաընթացքում մարդիկ համախմբվեցին հանուն ազատ եւ անկախ կյանքի: Իսկ ո՞ր ժողովուրդն է, որ առանց միասնության կարող է բարձրացնել փրկության դրոշը: Այդ վճռորոշ ուժի գիտակցումով աստիճանաբար, հատկապես 1991թ. սեպտեմբերի 2-ին մեր ավանդական լեռնաշխարհում իրականացվեց պետականություն ունենալու ձգտումը: Իսկ ո՞ր պետությունն է, որ կարող է գոյություն ունենալ առանց իր քաղաքացիների վստահության եւ ջանքերի: Այդ մղումով էլ յուրաքանչյուր արցախցի իր ընտրած պետությունը համարեց իր հաստատման հիմնական ուժը, իսկ պետությունն էլ իր գոյության հիմքում տեսավ յուրաքանչյուր քաղաքացու նվիրումը: Այդպես, արցախցին ու իր պետությունը դարձան մեր հերոսական անցյալը վերածնող, ներկան գալիքին կամրջող միական ու միավճիռ գործոն: Յուրաքանչյուր արցախցի եւ նրա պետական այրերը գիտակցեցին, որ եթե սկզբնական շրջանում կարելու էր ինքնապաշտպանության ֆիդայական պայքարը, ապա եկել է ժամանակը՝ ունենալու ինքնապաշտպանության կանոնավոր բանակ, որ պետք է գործի միասնական հրամանատարության ղեկավարությամբ:

Եվ եկավ պահը... 1992թ. հուլիսին ստեղծվեցին պաշտպանական գոտիներ, ըստ որի՝ Արցախում միավորվեցին առանձին-առանձին գործող կամավորական ջոկատները եւ ապա, սեպտեմբերի 1-ից ձեւավորվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակը:

Ադրբեջանի զինված ուժերը ռազմաճակատում պարտություն պարտության հետեւից էին կրում: Ազերի ղեկավարները դիմեցին դարերով որդեգրած իրենց նենգ քաղաքականությանը՝ իրենց չարագործության մեջ ներառել նաեւ վարձկան ուժերին:

Եվ նրանց հաջողվեց իրենց զինակիցը դարձնել Գյանջա (Գանձակ) քաղաքում տեղավորված խորհրդային 4-րդ բանակի ուժերին: Ադրբեջանի իշխանություններին հաջողվեց իրականացնել իրենց հակահայկական քաղաքականությունը: Բռնագաղթվեցին Շահունյանի շրջանի բոլոր բնակավայրերը եւ Սարտակերտի շրջանի գյուղերի մեծ մասը: Հյուսիսային Արցախը դատարկվեց հայերից: Ազերիները հասան Կիչան-Վաղուհաս բնագծին: Նրանք արդեն երազում էին կրակի մատնել Խաչենի հովտի բնակավայրերը, գրավել Ստեփանակերտը: Ազերիների այդ նենգածին նկրտումների առաջն առնելու հրամայականը պահի խնդիր էր դարձել: Արցախի զինված ուժերը պետք է ազատագրեին ոչ միայն թշնամու գրաված բնակավայրերը, այլև ոչնչացնեին մոտակա ադրբեջանական շրջանների կրակակետերը, որտեղից զնդակոծում եւ հրթիռակոծում էին հայկական գյուղերը: Արցախցիների զենքին գումարվեց նաեւ երգը: Գրում էին բոլորը, բանաստեղծությունը ծնվում էր խրամատներում, նկուղներում, արտասանվում ու երգվում էր զինվորյալների հետ հանդիպումներում, ռազմաճակատ ճանապարհվելիս: Սկսած 1988-ի փետրվարից, յուրաքանչյուր պատմական իրադարձություն կապված արցախցիների վճռական պայքարի հետ, պոետական թելեր էր առնում: 1988-ի փետրվարին ԼՂՀ մարզխորհրդի նիստում հայ պատգամավորների որոշմամբ վճռվեց լեռնաշխարհը դուրս բերել Ադրբեջանի կազմից, վերամիավորել Հայաստանին: Այդ վճիռը թրերով դիմավորեցին Ադրբեջանի եւ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդներում:

Այդ պատմական որոշման առթիվ իրենց ոգեշունչ խոսքն ասացին պոետները:

Շարժման առաջին էտապում բանաստեղծները հանդես էին գալիս անզիջում պայքարի շեշտերով հագեցված գործերով, որոնք ժողովրդին կոչում էին համախմբվելու Վերամիավորման գաղափարի շուրջ: Այս փուլում նրանց պոեզիայում տիրապե-

տող դարձան Արցախը չլքելու, նրա մշակն ու զինվորյալը դառնալու մոտիվները:

Բանաստեղծուհի **ՆՎԱՐԴ ԱՎԱԳՅԱՆԸ** խանդաղատանքով ընդգծեց, որ Արցախի «մի մասուրն անգամ ընդունակ է մեզ տող նվիրելու», որ «Արցախի գարնան խոտը մասունք է, կարո՛տ»: Նրա քնարական հերոսը կոչ է անում որդուն (ասել է թե՛ բոլոր երիտասարդներին) մնալ Արցախում:

Ն. Ավագյանի քնարական հերոսը բնութագրում է թշնամուն՝ ինչպես կա, գնահատում մեզ՝ մեր էությանը.

*Նա խորամանկ՝ մտքով ստերջ,
Նա՝ Թալեաթ, մենք՝ Կոմիտաս,
Նա՝ «սունգայիթ», մենք՝ օրենսհարգ...
«Սունգայիթից» հետո ի՞նչ է մնում անել.*

*Այս մի եռման ելքը մեկն է՝
Մեր մեռնելը կամ՝ Միացում,
Այս միացման կնքահայրը եռագույնն է՝
Հայոց սրտի տաք կարմիրով,
Հայոց հասկի ծիրանիով,
Եվ կապույտով՝ Մասսագ գլխին աղոթք անող:*

Բանաստեղծուհու երգերում Արցախի պաշտպանության թեման հնչում է որպես պոետական ներքին մղում: Նրա համար հայրենի լեռնաշխարհը անպարտելի ուժ է, արյան կանչ:

1997 թվականին Երեւանի «Ամարաս» տպարանում լույս տեսավ Նվարդ Ավագյանի «Մատյան հառներգության» ժողովածուն: Նրանում տեղ են գտել բանաստեղծուհու «Տիրոջ հետ», «Ռեքվիեմ» եւ «Կեսարապատում» պոեմները, որ փաստորեն մի եռագրություն են կազմում: Գիրքն առաջին անգամ կարդալուց ու... վերընթերցելուց հետո, խոհերս ինձ տարան մեր պատմության խորքերը, ու ես թղթին հանձնեցի հետեւյալ մտորումները. «Հայոց դարավոր գեղարվեստական խոսքը ծիածանի գույներ ունի՝

տեսանելի եւ ոչ տեսանելի: Շերտ-շերտ է այն. բացում ես մեկը՝ զարմանում ես հիանում, բացում ես նորը՝ էլի զարմանում ու հիանում, եւ երբ նկատում ու համոզվում ես, որ բոլոր շերտերն են հիանալի, այլեւս չես զարմանում, շնջում ես՝ բնական է: Ինչո՞վ բացատրել այս շոյող երեւոյթը: Այսօր չէ, որ պիտի պատասխանվի: Ժողովրդական հանճարները վաղուց են պատասխանել, որ իմաստնությունը ծնվում է տառապանքից: Սակայն թող այն պատրանքը չստեղծվի, որ եթե մեր ժողովուրդը չտառապեր, իմաստնացած չէր լինի: Մեր ճանապարհները շատ էին հին, եւ գիտենք, որ կարասի հին գինին ավելի քերմացնող է, հին բարեկամութունը՝ փորձված, հին սերը՝ զուլալված... Ուրեմն՝ հին ենք մենք՝ հայերս: Ուզած-չուզած՝ իմաստնությունը պիտի ուլունք դառնար մեր ժողովրդի խոսքաշարում: Միաժամանակ տեղն է շեշտել, որ մենք չէ, որ սիրահարվել ենք տառապանքին, տառապանքն է, որ կարծես գտել է մեզ եւ չի ուզում հեռանալ, կարծես չի կարող ապրել առանց մեզ: Ուստի, ելնելով ճակատագրի մեր այս ծանր բաժնից, շարունակում ենք հոլովել մեր հանճարների խորհուրդը. «Իմաստնությունը ծնվում է տառապանքից»:

Ընթերցողը սպասում էր Ն. Ավագյանի նոր խոսքին: Նրա «Հասուն հասկ»-ը ցորենվեց, դարձավ ապրեցնող հոգեւոր նոր հաց՝ համով, հոտով, ոգեւորող խորհելու եւ դաս առնելու ուժով: Այդպես է լինում, երբ ժողովրդի ճակատագրի մեջ արվեստագետը տեսնում է նրա անցած փորձ ու փորձանքի դասը, ներկայի հրամայականն ու ապագայի կանչը, խոսքը դառնում է առինքնող ու ծածանվող:

Հայ գրականության ավանդույթների հոլովություն քիչ չեն ողբերգական էջերից քանվող լույսն արարումի, հույսը հարատեւման: Օրինակը՝ Մ. Խորենացու հայտնի «Ողբը», Դավթակ Քերթոզի «Մեծ իշխան Ջիվանշիրի մահվան ողբերգը», Գ. Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը, Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին», Զ. Թումանյանի «Հոգեհանգիստը», Զ. Շիրազի «Հայոց դանթեականը», Պ. Սեւակի «Անլռելի զանգակատունը»: Արցա-

խյան պատերազմի տարիներին գրված Ռ. Դավոյանի «Ռեքվիեմը», Գ. Գաբրիելյանի «Ռեքվիեմներ» երգաշարը, Վ. Հակոբյանի «Գողգոթան», Ս. Խանյանի «Նահատակ լուսո», Ա. Քոչարյանի «Խնձորն արնափոսում» պոեմները եւ այլն:

Համարձակորեն կարող ենք ասել, որ Նվարդ Ավագյանի պոեմները մեր հին ու նորօրյա փորձից ու փորձանքից, ցավից ու արցունքից, տվայտանքից ու ակնկալությունից ծնված համանվագ են, ինչպես ինքն է խոստովանում՝ «Մատյան հառներգության»:

Մի կողմ թողնելով գեղարվեստական պոեմի կառուցվածքային փոփոխությունների առկայությունը գրքում՝ ի շահ բանաստեղծուհու, անհրաժեշտ են համարում շեշտել իրականի եւ երեւակայականի այն հաճելի զուգորդումը, որ ապացուցում է Նվարդի ձեռքբերումը, որն էլ իրավունք է տվել գրքի խմբագրին՝ մեր վաստակաշատ հայրենակից, տաղանդավոր պատմավիպասան Հայկ Խաչատրյանին՝ ընդգծելու. «Նվարդ Ավագյանի «Մատյան հառներգության» ժողովածուն վերջին տարիների հայ քնարերգության բացառիկ նվաճումներից է:

Այս գրքում չափածո խոսքով փայլատակում է հայ ժողովրդի, Հայաստանի, Արցախի մերօրյա ճակատագիրը»:

Հենց այս «ճակատագիր» բառն է, որ ընթերցողին տանում է դեպի ժողովածուի բոլոր պատկերների խորքը, բացահայտում բանաստեղծուհու երգարվեստի ճշմարտացիությունը, հուշում մեր ազգային հին ու նոր երթը, որը սովորական ընթացք չէ, այլ ողբերգությունից ծնվող հառնում, բանաստեղծական ոգեկոչվող խորհուրդ.

Քայլիր, ես քեզ պիտի տանեմ

Լացից դեպի հանրերություն,

Ցավից դեպի հանգստություն,

Մահից դեպի հավերժություն:

Գրքում գետեղված է երեք պոեմ՝ թեմատիկ տարբեր շրջանակ-

ներով, բայց՝ պրոբլեմի միեւնույն առանցքով, ժողովրդի կենսափիլիսոփայության բազմազան խտացումներով, բանաստեղծական խոսքի թարմ երանգներով: Քնարական պոեմի ընձեռած միջոցներով բանաստեղծուհին մերթ դիմելով Աստծուն («Տիրոջ հետ»), մերթ զրույցի մեջ բերելով հերոսին ու հերոսուհուն, մերթ զրուցելով Հռոմի ու Հայաստանի կայսրերի եւ թագավորների հետ, ձեռքը դնում է ժողովրդի ցաված սրտին, սփոփում նրա առօրյա վերքը, սրբում արցունքները, շոյում զարկերակը՝ հառնելու եւ հավատով քայլելու հրամայականով:

Հեղինակը չի շրջանցում դառնություն հուշող ճշմարտությունը: Նա Արարչին հայտնում է, որ «Ապականում են եւ խիղճ, եւ օրենք»: Տեսնելով այդ անարդարությունը, քնարական հերոսը ձգտում է, որ Տիրոջ աստիճանի մեջ բացվի իր «անկեղծ հոգին», որ վերացական չէ, ունի հասցե.

Գալիս է երկրից ամենաքարոտ,

ուր կենաց գիրը

Գրվում է արյամբ՝ ո՛չ թե թանաքով:

Նախերգանքից, երկու մասից ու վերջերգից բաղկացած «Տիրոջ հետ» պոեմում հեղինակը ներկայացնում է 1988-1997 թվականների տարեգրությունը՝ բանաստեղծական նուրբ արտահայտչամիջոցներով: Դարաշրջանի խաղի, դավաճանության, դաժանության, փարիսեցիության, կիսված մարմնի, տառապանքի եւ այլ մետաֆորների ընդգծումներով բանաստեղծուհին բնութագրում է մեր ժողովրդի վերջին տասնամյակի ընդվզումն ու ոգորումները, կորուստներն ու ձեռքբերումները: Պոեմում քնարական հերոսի ընդհանրացումները ակունքված են հայոց կենսափորձից.

15-ին ով սուրը չհանեց՝

Սեփական շեմին զարկվեց ու մեռավ:

Այդ փորձի թելադրանքով «Հրապարակը դարձել էր մատյան...», եւ ինչպես խոստովանում է քնարական հերոսը, «Ապա-

վինեցի ես իմ ժանիքի՛ն»: Սեփական ուժին ապավինելը դարձավ կամքի այն դրսեւորումը, որ ունեցան ոչ միայն այրերը, այլեւ մայրերը, «Որ որդիներին... դրել գերեզման, եվ ապրողներին կամքի են կոչում»: Կորուստներից դառնացած մայրը հայցում է, որ Աստված ներող լինի, դեռ կիսով չափ հեթանոս լինելու համար, քանզի.

*Լեզվիս տերն այսօր սլաքն է սգո՛ւ,
Եվ ծավալվում է լացն իմ անսփռոյ
Քիրս ու Մռավից մինչեւ Սիս-Մասիս:*

Նվարդը արցախյան ազգային-ազատագրական պայքարի ընթացքը համարում է ամբողջ հայ ժողովրդի փորձության քննությունը, որին մասնակցեցին ամենքը, եւ «Զինվոր էր անգամ նա, ով կրում էր Կրծքի վրա խաչ ու գլխին՝ վեղար», նաեւ նա.

*Ով պիտի ապրեր՝ խոստմամբն արյան
Փառաց պսակի տարավ իրեն ու
Երկիրս օրհնյալ:
Ով պիտի մեռներ՝ հաղթությամբ հարյա՛վ...*

Հաղթությամբ հարություն առածների ոգին այսօրվա ճանապարհն է, որ շատ է հուզում բանաստեղծուհուն: Այդ հուզումը երկրի եւ ժողովրդի ճակատագրով ապրող տագնապ է: Նա երազում է, որ «Մեկտեղ կող այրած թեժ կրակներում» մարդկանցից մեկը չիջնի հատակ, «Մեկն էլ իր փորը տաքացնի վերում...», որ «Ախտն ազահության» չդառնա չարիք, որ մարդկային «Արժանիքները... լավ թե հին» չկորսվեն, որ

*Կրակին դրված կյանքի պղնձից
Չոգեւոր ճաշի յուղը չթափվի:
Արդարությունը էլ չհանվի ցից,
...Որ տունը իրեն պարտական զգա
Իրեն պահողի ջանքին ու պատվին:*

«Տիրոջ հետ» պոեմի վերջերգը հեղինակի գեղագիտական իդեալի ընդգծումն է: Բանաստեղծուհին թվարկելով անձնական երջանկության աղբյուրները՝ հարսի մայրանալը, թռան մուշ-

մուշ քունը, պատերազմական արհավիրքից որդու վերադարձը, միաժամանակ դատափետուում է չարն ու չարիքը: Սակայն ասելիքը՝ որպես սրտաբաց ապաշխարանք եւ օրհնանք, բանաստեղծուհին ընդհանրացնում է վերջում.

*Ես ինձ ծառա՜ եմ կոչում քո դռան,
Պահի՛ր երկիրս ի մեջ քո բռան...
Քո տված քշով ես գոհացո՛ղն եմ,
Խրատ ու բանքդ չմոռացողն եմ,
Քանի դար էլ որ դարիս գումարվի՝
Ցորեն իմ հերկով, աղբյուր իմ երգով
Հայրենյաց սրտում ես մնացողն եմ:*

«Մատյան հառներգության» եռաձայնի մի երանգը «Ռեքվիեմ» պոեմն է: Իմաստնացած բանաստեղծուհին թեւավոր խոսքի շոյանքով խորհուրդ է տալիս ընթերցողին «Ծիծաղի ժամը եւ ժամը լացի» իմանալ սրտով: Նրա խոսքն ուղղված է մահեր տեսած եւ ապրելու ճամփան հարթած հերոսին.

*Մահվան բերան ես դու մտել երեկ,
Մարտերում ցավի պտուղը քաղել,
Որ գոյությունդ մնա ի երեւ,
Դու չէ՛, որ պիտի լացից վախենաս,
Այսօր լաց եղիր,
Որ կարողանաս վաղը ծիծաղել:*

Յուրօրինակ կառուցվածք ունի «Ռեքվիեմ» պոեմը: Այն բաղկացած է նախերգից, վերջերգից եւ ութ գլուխներից: Բանաստեղծուհին նախերգանքում հաղթանակը շահածներից մեկին զգուշացնում է. «Եվ դու կլսես քեզ ծանոթ ձայներ՝ Սրտիդ ու հոգուդ անասելի թանկ»: Եվ այդ անասելի թանկ ձայները հնչում են ութ անգամ՝ պատվիրանի ձեւով՝ որպես ուսանելի եւ սրտառուչ դաս: «Ձայն առաջին» բաժնում լսվում է փրկության կանչող իմաստնությունը՝ ուղղված զոհյալին: Բանաստեղծուհին չի սքողում իր քնարական հերոսուհու ծանր ապրումները, ավստասանքը, երազի

Եւ տենչի փշուր-փշուր լինելը: «Օրս անցնում է անմիտ վազքի մեջ», -խոստովանում է հերոսուհին: Առանց սիրեցյալի ապրելն անիմաստ է համարում եւ համոզված է, որ նա այլեւս «ետգալ չունի», իսկ ինքը այրվում է, բայց մոխրանալ չունի, անկեզ է: Ասես շրջապատն էլ չի հասկանում իրեն, որովհետեւ ի զորու չէ իմանալու, որ նահատակված սիրո հետ ոչ ոքի եւ ոչինչ հնարավոր չէ համեմատել.

*Չեն հասկանում, որ երբ թելեր չունես,
Չես կարող թռչել երջանիկ եզերք,
Որ ի զորու չե՛մ սիրո խոսք լսել,
Չամենատում եմ ում էլ որ քեզ հետ,
Վսեմը անգամ դառնում է նսեմ:*

Քնարական հերոսուհին մարդկային առիւթնող երազանք ունի, որի մեջ ե՛լ ցավ կա, ե՛լ ափսոսանք, ե՛լ կարոտ: Նա վերհիշում է իրենց սուրբ եկեղեցի մտնելը, իրեն նվիրած մատանին, Տեր հորից պսակ առնելը եւ «խենթ սիրո ամառ» վայելելը:

Երկխոսության ձեւով «Ձայն երկրորդ»-ում աղջկան դիմում է նահատակ տղան: Նա հիշում եւ հիշեցնում է վերջին հանդիպումը, երբ «օրը բույրն ուներ ծաղկած բալենու»: Բայց, ավա՛ղ, ամեն ինչ հուշ է դարձել: Բանաստեղծուհին հնչեցնում է կյանքի հավերժության առեղծվածը: Նահատակը, դիմելով սիրած էակին, ասում է.

*Բավ է տառապես,
Չես վերադարձնի կորուստը լացով:
Բավ է մարմինդ
Մենության խոնավ պարանով կապես,
Չմոռանալու ճամփան անցնում է
Ոչ կուսանոցով...*

Նահատակյալը սիրած աղջկա երջանկությունը «կարելոր եւ հույժ» է համարում, խորհուրդ է տալիս սիրել մեկին.

*...Այն մեկին սիրիր,
Որ կարող է քեզ պաշտել ինձ նման՝
Քո կողքին անգամ... կարոտելով քեզ,
Քեզ՝ կախարդուհիս, քեզ՝ հոգեհմաս:*

Մարդասիրության, հոգու ջերմության, սրտացավության բանաստեղծական արտահայտություն է զոհյալի դիմում-փիլիսոփայությունը: Նա կյանքի առողջ ընթացքը կապում է «մանկան ծննդի» հետ, որով էլ կհավերժվի զոհյալի կյանքը: «Չայն երրորդ»-ում հանդես է բերված այրիացած կինը: Նրա համար սփոփանք է զոհն զոհված ամուսնու՝ երագուն երեւալը: Բանաստեղծուհին հոգեբանական բացահայտումներով ներկայացնում է այն կարոտն ու թախծը, որ ապրում է քնարական հերոսուհին: «Երագուն դու ինձ հաճախ այցելիր»,-դիմում է նա եւ խոստովանում. «Եվ ցավը ունի կարոտի գրգիռ, Որ լացից բացի բան չի խոստանում»: Շոշափելի է կարոտը, կյանքի նկարագրությունը՝ համոզիչ, խոսքը՝ հուզիչ, պատկերն՝ անմիջական.

*Օ՛, իմ որդու հայր,
Չեմ կարող առնել ես զլիսիս նոր քող,
Լավ է ապրեմ թող հուշի ցնորքով.
Լոկ սիրածին եմ դնում գերեզման,
Սերը մնում է՝ պահում եմ անթաղ...
...Սիրելի՛ս, տղադ քայլում է արդեն,
Դարձել է սիրուն, կենսախիճնդ մանչուկ,
Մատիկը տանում, դնում նկարիդ՝
Արդեն «հայլիկ» չէ, «հայրիկ» է կանչում:*

Կոմպոզիցիոն շրջանակի հնարանքով բանաստեղծուհին վերջում կրկնում է քնարական հերոսուհու խնդրանքը. «Երագուն դու ինձ... հաճախ... այցելիր...»: Պոեմի չորրորդ ձայնը անվանված է «Լեցվիր ինձ»: Նահատակը դիմում է կնոջը՝ իր մանկան մորը: Բոլոր ճամփաները փակ են... Սիրեցյալը հայտնում է. «Ես միշտ եմ, միշտ եմ ուզում գալ քեզ մոտ... Բայց չեմ հասցնում տեղ հասնել,

հոգիս»: Նա ավստսում է, որ «կյանքը որպես բեռ» թողել է կնոջ ուսերին ու նրանից ներում է հայցում.

*Ես ազնիվ էի, ես՝ անդավաճան,
Ուզում էի, որ խոսքով ու բանիվ
Քեզ ու բալիկիս, երկրին վերջապես
Օգտակար լինեմ վերին աստիճան:*

Պոեմում հմտորեն թվարկվում են զոհյալի «մեղքերը», եւ ընդգծվում հայրենյաց զինվորագրյալի անձնուրացության խոստովանությունը. «Ձիմվորը չէի վարձու բանակի, Եվ ոչ էլ անգամ ներկայացածը Յանուրի բաժին զորահավաքի»: Նա բացատրում է, որ շարք է մտել կամավոր, որ պետք է ընտրեր նույն ճանապարհը.

*Պիտի անցնեի նույն ճանապարհը
(Իրավ՝ որքա՛ն է խեղճ հնչում բառը),
Քանզի ապրելն ինձ տրված էր մահով...
Քո համբերության ես պարտականն եմ,
Քեզ նման... ընկեր
Ոչ մի տղամարդ չունի, թերեւս:*

Նահատակյալ հերոսը հպարտանում է սիրելի կնոջ հայրենասիրության եւ վճռականության զգացումներով: Յեղիմակը հերոսի շուրթերով ստեղծում է այն արցախուհու դիմանկարը, որը բացառում է վախկոտությունը, անտարբերությունը եւ որի համար իր շնորհակալությունն է հայտնում եւ հույս արտահայտում, որ եթե մարդիկ չլինեն սատար կնոջն ու որդուն, ապա նրանց «կպահի Աստված»:

Պոեմի «Ձայն հինգերորդ» գլխում մենախոսում է զոհյալի մայրը: Դիմելով որդուն, նա բացականչում է. «Յայտնվի՛ր ինձ»: Որդեկորույս մոր ծանր ապրումները բանաստեղծուհին բերում է նրա հոգու դռների բացումով: Մոր բնական ու անմիջական խոստովանությունը հուզական-գաղափարական լիցք է հաղորդում ընթերցողին: Մայրը ասես խոսում է իր դեմը կանգնած զավակի հետ.

*Չլինելուդ հետ չեմ հաշտվում, տղաս,
Տուն մտնում, թե չէ՝
Ոտնաձայնիդ եմ սպասում լարված,
Թվում է՝ ուր-որ կերելաս, կգաս.
Իսկ գուցե, իրոք, կեդանի՞ ես, կաս...*

Մայրը թվարկում է որդու թողած հիշատակները. կիթառը, հարսնացուհին, որը մատից չի հանում սիրածի նվիրած մատանին: Ազացող մոր անձնական վիշտը պոետնում վերածվում է համբերության համաժողովրդական զգացումի, որից էլ ծնվում է Աստուծոն եւ երկրին ապավինելու լավատեսությունը:

Պոետի «Ձայն վեցերորդ» գլխում մորը դիմում է զոհված որդին: Քնարական հերոսի ներքին ձայնը պոետնում «Պատվիր ինձ» պատվիրանի կոչն է:

Այստեղ էլ գտնվել է երկխոսության խորիմաստ ու անմիջական հյուսվածքի գաղտնիքը: Ընդգծված է հոգեբանական բացահայտումը: Ջոհված որդին կենդանի շունչ առած, զրուցում է մոր հետ եւ ազդարարում, որ այսուհետ հարազատ մորը կայցելի ոչ թե ինքը, այլ իր հոգին: Որդին խնդրում է մորը, որ իրեն պահի «սուրբ Մարիամի պես», որովհետեւ իր եւ իր ընկերների մահը երկրի փրկության նվիրում է.

*Դու միակը չես եւ դու լավ գիտես.
Ինձ պես հազարներ կան այս երկնքում,
Ու տեր Աստվածը օրհնում է նրան,
Ով մահկանացուն
Քաջ տղամարդու նման է կնքում:
Սահմանն հայրենյաց գեներվ են գծում...*

Բանաստեղծուհին ժողովրդի՝ սեփական ուժին ապավինելու գաղափարը պոետական հյուսվածքի մեջ է առնում ռեալիստական շոշափելի գույներով: Ով իր երկիրը պաշտպանել չգիտե, նա զրկվում է իր օջախից ու ապագայից: Պոետնում հայոց պատմությունը պատկերային հյուսվածքի մեջ ընդգծվում է որպես դաս.

*Ո՞ւմ է պետք մարդը՝ իր հողից զրկված,
մենք չէինք կարող
Դեմքներս շրջել մոտեցող հողմից,
Արցախն էլ դարձնել Սասուն ու Տարոն...
...Երբ վտանգվում է ցեղիդ պատիվը,
Պիտի կայացնես վճիռդ շիտա՛կ:*

Պոեմի յոթերորդ գլուխը անվանված է «Ընդունիր ինձ»: Մարդկային զգացումների նրբությունը, կորստի գինը, հերոսության ոգին, ընկերասիրության չերիզվող սահմանները, գիտակցված մահվան ընդգծումը այստեղ արտահայտված են քնարական ամենանուրբ երանգներով: Հեղինակը պատումը ներկայացնում է նահատակի անունից, որի զրույցը իր զոհյալ ընկերների հետ է: Այս հնարանքը ավելի հուզիչ եւ անմիջական է դարձնում բանաստեղծի խոսքը: Արթուն ցավի մորմոքը հերոսին հիշեցնել է տալիս իր քաջ զինակիցներին: «Երեք անգամ եռակի մահից հրաշքով փրկված» նահատակը առաջին հերթին մատը դնում է իր ա՛յն վերքի վրա, որն իրենն է, բայց ակունքը զոհյալ ընկերներն են: Հերոսի հոգին «թափառում է ոլորտում Վերին» եւ ավելի շատ իր ընկերների հոգիների աշխարհում է, քան ապրողների: Իսկ այդ աշխարհը այնքան կոնկրետ եւ շոշափելի է ներկայացված, որ թվում է, թե տեսնում ու զրուցում ես նրանց հետ.

*...Պարահարթակի բազրիքին հենված՝
Դավիթն ասում է. «Ընկա՛, բռնեցեք».
Օ՛, տղայական անփորձ սրտի սեր,-
Սիրած աղջկա թիկունքն է տեսել:
...Վաշտից քայլ առաջ սլացող Վահեն
Փլվում է, տնքում ու էլ չի ելնում:
...Երկաթ Սասունը,- ինձնից էլ ջահել,-
Արյունոտ դեմքը հպել ցուրտ քարին՝
Լա՛վ է, ասում է՝
Ջուր լիներ, տղերք, ո՛նց կխմեի:*

Այստեղ միջանկյալ պատմության ձեւով խոսք է բացվում նաեւ թուրք գերու մասին: Հայ զոհյալը թուրք գերու ասածն է հիշում. «Ալլահը անգամ չի փրկի էլին, եթե էլն ինքը դա չցանկանա»: Ժողովրդի (էլի) մասին է խոսքը: Ջոհյալ հերոսը խորհում է «այդ խոսքի իմաստի մասին» եւ եզրակացնում.

Լինում են պահեր՝ քո տանն ու երկրում,

Բայց քեզ զգում ես մաշկի մեջ հյուրի...

Այսքանից հետո բանաստեղծուհին բացում է կյանքի եւ մահվան փոխհարաբերության փակագծերը, նշում իմացյալ մահվան ապրեցնող ուժը: Այդ մղումով էլ բերված է հերոսի վերջին ընդհանրացումը.

Չեմ տեսել ես ինձ դեռ այսչափ սթափ,

Միաժամանակ եւ ինքնակորույս...

Երկնքի կապույտ արահետներում

Ձեր լույսն եմ տեսնում,-ծա՛նր-ծա՛նր լույս,-

Դեպի որին էլ ձգտում է հոգիս...

Նվարդ Ավագյանի «Ռեքվիեմը» գրված է համազգային ցավի թելադրանքով, ցավ, որ անանցանելի է, բայց եւ միաժամանակ ապրեցնող: Ժողովրդի զինվորյալ ու զոհյալ զավակի կարճ ու հերոսական կյանքի իմաստը երկիրն ու ժողովրդին պահպանելու, նրանց հարատեւելու մեջ է: Լավատեսական այս մտահղացումն ու գաղափարական լուծումը կրկին ընդգծում են բանաստեղծուհու գեղագիտական իդեալի պայծառությունը՝ բխած ժողովրդի կենսափորձից, հարատեւելու վճռականությունից: Այս գաղափարի պոետական օրինակելի հյուսվածք է «Ձայն ութերորդ» գլուխը՝ «Երդվիր ինձ» կտակով: Պոեմի այս մասը մեր օրերի այրող պրոբլեմների ընդգծումն է: Ջոհյալը արդեն դիմում է զենքի իր ընկերոջը, որ պետք է ապրի ոչ միայն իր համար, այլեւ ծառայի ժողովրդի ինքնահաստատմանը, երկրի լինելությանը, ապագայի հավատին: Ջոհյալի՝ ընկերոջն ուղղած դիմումի մեջ հնչում է.

*Դու ի՞նչ գործ ունես Աշխարհում հեռու,
Քո տեղն այստեղ չի՝ ու չի էլ եղել,
Քո խոսքերն ու քեզ
Չեմ կարողանում ես համատեղել,
Շարքում ախր դու վերջինը չեիր՝
Քեզ էինք հաշվում մեր միջի սերուցք...*

Ահա մեկը մյուսին հաջորդում են զոհյալի իմաստուն խորհուրդները, որ կարելի է համարել թեւավոր մտքեր. «Այն ե՞րբ է դյուրին եղել մեզ համար, Չարկ չկա խուզել թեւերը հույսի», «Մեծ խնդիրների մասին մոռացած... Չսկսեք միմյանց ոտքի տակ փորել» եւ այլն: Պոեմի վերջերգի օրինակը «Չայկա տան հարատեւության» բաղձանքն է, որին նախորդել է երգվելու պահանջը... Դա «Ազատագրված մայր հողի վրա» իրեն տեր ու տնօրեն զգալու հրամայականն է.

*Ապրես պիտի դու՝ կարգվես, տեր դառնաս
Արյան սերմ կոչված յոթը զավակի,
Որ շարունակես ծառայել Յեղիմ՝
Մշակը դարձած Արցախա հողի:*

Պատմության քառուղիներում մեր ժողովուրդը բազմիցս ճաշակելով հաղթանակների հաճույքը եւ ապրելով կորուստների ցավը՝ եկել-հասել է 21-րդ դարին: Չայ գրողները միշտ էլ փորձել են իմաստավորել այդ բարդ ընթացքը: Նվարդ Ավագյանը եւս ձգտել է լուսաբանել այդ՝ դեռեւս նոր արժարժույթներ պահանջող պրոբլեմը «Կեսարապատում» պոեմում: Եվ դա հաջողվել է նրան: Ընտրելով երկխոսության հնարանքը, բանաստեղծուհին դիմում է նախ Չռոմի կայսրերին, ապա հայոց արքաներին, մի կողմից խարազանում դավաճանությունը, անմիաբանությունը, դաժանությունը, անհեռատեսությունը, մյուս կողմից դրվատում իմաստությունը, հայրենասիրությունը, գթասրտությունը, ժողովրդասիրությունը եւ այլն:

«Կեսարապատում» պոեմը բաղկացած է երկու մասից: Առաջինն ընդգրկում է «Անկումից առաջ», «Հրդեհը», «Կալիգուլա», «Սուլլա», «Եվ դո՛ւ, Բրուտոս», իսկ երկրորդ մասը՝ «Արտաշես», «Արտավազդ», «Արշակ Բ», «Պապ», «Աշոտ Երկաթ» եւ «Նավը ճանապարհին» բաժիններից:

Պատմության իմացությունը, կենսափորձը, ներքին ինտուիցիան, վառ երեւակայությունը բանաստեղծուհուն հնարավորություն են տվել պատմական կոնկրետ անձնավորությունների, իրադարձությունների եւ գործողությունների հիման վրա կատարել գեղագիտական ընդհանրացումներ՝ ցուցաբերելով իր գնահատումներն ու վերաբերմունքը: Պոեմի հենց առաջին էջերից համեմատվում են «Տաղանդը եւ անլությունը», խարազանվում՝ փորձության ժամին սեփական կաշին փրկելու մարդկային թուլությունը: Հեղինակը պատմության չարիք է համարում տարփանքը, կաշառքը, դավաճանությունը եւ ընդգծում. «Հռոմի անկումը դատ չէր՝ Պատաստան էր վերին» (էջ 72): «Հրդեհը» բաժնում գնահատվում է Ներոնը, որ «վառեր պիտի Հռոմը ներսից, Հռոմը՝ դարձած մի հսկա կերոն» (էջ 74): Սակայն բանաստեղծուհին ոչ միայն բերում է փաստը, այլեւ տազնապում է պատմության ընթացքի համար.

Երբ ու որտեղ էլ թե Հռոմ վառվի՝

Իմացեք, որ նույն

Ներոնի ձեռքն է:

«Կալիգուլա» բաժնում ներկայացվում են կեսարների շարունակական ցոփությունն ու դաժանությունը, փառասիրությունը, որի հետեւանքը բնութագրվում է համոզիչ՝ որ «չափից ավել կերածը մի օր պիտի չմարսվեր» (էջ 75): Սուլլան գնահատվում է որպես արյունախում Կեսար: «Եվ դո՛ւ, Բրուտոս» բաժնի հիմնական երակը դավաճանության խարազանումն է: Բանաստեղծուհին դավաճանությունը որակում է որպես «շեղված հոգու որս... նահանջ սուրբ հացից... հույսերի դահիճ» եւ ընդհանրացնում.

*Այս վարքի հասցեն
Մարդն է անձնապաշտ ու եսակենտրոն,
Մի՛ վստահեցեք նրան ոչ մահիճ,
Ոչ այլ սրբություն,
Առավել եւս,-Աստված չարասցե՛,-
Երկիր եւ կրոն:*

Պոեմի երկրորդ մասում վերագնահատվում է Հայոց պատմությունը: Բանաստեղծուհին, ելնելով իր պատմահայեցողությունից, անցյալը գնահատում է արդիական պորբլեմների շրջանակներում: Անդրադառնալով Արտաշես Արքային, նա սրտի ցավով ընդգծում է մեր կորուսյալ Մուշն ու Տարոնը եւ երագում ունենալ Արտաշեսի նման թագավոր: Երկխոսության մեջ մտնելով Մեծ Արքայի հետ, հեղինակը մեկ առ մեկ նշում է մեր ժողովրդի առօրյա ցավոտ խնդիրները՝ պանդխտվելը, հողը լքելը, ուծացումը եւ ընդգծում. «Հարատեւումը տրված է նրան, Իր ի վերուստը ով պահել գիտի» (էջ 83): Մեր պատմությունը որակելով որպես «արյունով ներկված... ժամանակների դառը հոլովույթ», բանաստեղծուհին նշում է.

*Գերվարար ջուրը կդառնա սելավ՝
Քշելով տանի հողը արմատից,-
Կորսվելիք շատից պահվող քիչն է լավ...
Արքա՛, դասերդ օ՛ղ են ականջի:*

Անդրադառնալով Արտավազդ թագավորին, բանաստեղծուհին բնաբան է բերում Արտավազդի իսկ խոսքը՝ ուղղված հորը. «Ավերակների վրա ես ինչպե՞ս թագավորեմ»: Բանաստեղծուհին մատնանշում է. «Բայց ավերակ չէր, որ քեզ կտակեց, Մեծ եւ կամ փոքր լինի երկիրը՝ Պահելու համար... մեծ պիտի լինես» (էջ 84), չէ՞ որ «Ուժեղին աստու՛մ թույլին չեն սիրում...»: Դարերի փորձից ելնելով՝ պոեմում խորհուրդներ է տրվում արքային. «Ազգը պահիր հացիվ ու կեցիվ»: Արտավազդի ճակատագիրը դաս պիտի հանդիսանա «իշխանության հավակնողներին»:

Պոեմի «Արշակ Բ» մասում հեղինակը ցավով գրում է, որ «հե-

թանոսի մեր կարծր ոգին բաժանվեց մեզնից՝ մնաց կործանված մեհյանների տակ»։ Անչափ նրբանալով, տանուլ տվինք հող ու գյուղ, հայ ռամիկը դարձավ «օտարին հոտաղ»։ Նշվում է մեր շտապողականությունը եւ ցանկացած հարցում առաջինը լինելու ձգտումը, «Երբ... մեզնից կարծիք չէին էլ հարցնում»։ Բանաստեղծուհու խոսքը հնչում է որպես խորհուրդ՝ ուղղված սերունդներիին. «Գետին մոտեցած՝ նժույգ չեն փոխում, դժվար գետանցով վարժ ծին է անցնում»։ Ոչ միայն այդ.

*Նետը ցած դրինք՝ երդվեցինք քարին,
Եվ աքիլեսյան մեր գարշապարը
Գտավ թշնամին:*

Սակայն կորստի ցավն ընդգծելու հետ մեկտեղ բանաստեղծուհին հարատեւելու առեղծվածն է բացում.

*Ավարայրներ են պետք՝ որ ուշքի գանք՝
Հայկյան աղեղով չափենք կյանք ու կամք...
Եվ ընդունենք, որ «ակն՝ ընդ ական»-ը...
Նաեւ մե՛ր կարգն է՝
Եթե չենք ուզում ջնջվել աշխարհից:*

Հայոց պատմության հերոսական եւ ողբերգական էջերի բանաստեղծականացումը դարերի փորձ ունի: Հայ դասականներից մինչեւ ժամանակակից գրողները անդրադարձել են եւ այսօր էլ շարունակում են անդրադառնալ մեր անցյալին՝ նրանում գտնելով սերունդներին հուզող հարցեր: «Կեսարապատում» պոեմի երկրորդ մասի «Պապ» գլուխը խնդրի հիանալի լուծում է: Փ. Բուզանդի «Հայոց պատմության» վիպական դրվագները մեկ անգամ չեն հոլովվել գեղարվեստական խոսքի շարանում: Վերհիշենք թեկուզեւ Ստ. Ջորյանի «Պապ թագավոր» պատմավեպը: Ն. Ավագյանի անդրադարձը Պապի գործունեությանը կրկնություն չէ, այլ այսօրվա սերնդին հուզող պրոբլեմների թելադրանք: Այստեղ, հիրավի, բանաստեղծուհին ցուցաբերել է պատմությունն իմաստավորելու օրինակելի կարողություն: Խոսք բացելով հայոց

երիտասարդ թագավորի՝ Պապի եկեղեցական ռեֆորմների մասին, նա ընդգծում է իր համակրանքը դրանց հանդեպ: Անհրաժեշտ է նշել, որ Նվարդը ընդունել է Ստ. Ջորյանի կարծիքը՝ բխած հռոմեացի պատմիչ Ամիանուսի գնահատականից: Վերջինս Պապին համարել է խոհեմ ու հայրենասեր թագավոր: Հայոց աշխարհին կտրիճներ էին պետք, որն էլ ազգի գոյության պայմանն է.

Եվ ջահել արքան հեռատես՝ ասաց.

Ազգի գոյության պայմանը եթե

Պիտի որոնել... կանանց արգանդում՝

Կուսանոցները երկիր են քանդում:

Ծիշտ է նկատում բանաստեղծուհին՝ «Աստծո աչքից չվախենալով», Պապը ձեռնոց նետեց Աստծուն: Ժողովրդի, երկրի անկախությունը երազող թագավորը «Պտղաբերության տուն վերադարձրեց Շուրջ երկու հարյուր հազար կույսերի...»: Իրար հաջորդող յուրաքանչյուր տողի մեջ հեղինակն ասես նկարում է Պապի բնավորությունն ու երազը: Առասպելական դյուցազնի պես պատանի արքան «մեկեն հասուն... այր է դառնում». չհանդուրժելով օտարի կամքը, ձգտում է ազգայնացնել հայոց եկեղեցին: Այստեղ հեղինակն ընդգծում է մարգարեների դժվար ճանապարհը, մարդկանց կուրությունը, ապա կրկին դիմում պոեմի հերոսին եւ մատը դնում արդիականության ցավոտ կետին.

Ավա՛ղ, Պապ արքա, շատ բան չի փոխվել

Քո հեռու, անցած ժամանակներից,

Ազատ եւ անկախ ապրելու համար

Արյամբ վճարելն օրենք է նորից,

Դարը հիմա էլ՝ պղտոր գետ վարար,

Մենք՝ նրա անթիվ ալիքների դեմ

Կռվող գլաքար...

Պատմության հնօրյա եւ նորօրյա հակասությունները շարունակվում են՝ եզրակացնում ենք պոեմից: Այդպես է եղել եւ այսօր էլ նույն գալարումներով շարունակվում է «Տան ներսում...» եղած

կործանարար «Ոմանց վարքը»: «Չէ, Պապ թագավոր, չի փոխվել շատ բան... Մեր սխալները կոչում ենք չար բախտ»: Կենսափորձի եւ գեղարվեստական խոսքի կուտակումների արդյունք է նաեւ պոեմի «Աշոտ Երկաթ» մասը: Աֆորիզմների մակարդակով տողերը հաջորդում են միմյանց՝ ընդգրկելով Աշոտ Երկաթի սխալները եւ հեղինակի՝ դաս հանդիսացող խորհուրդները.

*Երբ երկրի տերն ես եւ օրենսդիրը,
Որքան հանդուգն ես վճռում խնդիրը,
Նույնքան էլ թանկ ես վճարում գինը:*

կամ՝

*Մեծության չափը իշխանությամբ չէ՝
Իմաստնությամբ է որոշվում հաճախ,
Առանց խոր մտքի
Չի կարող լինել աշխարհում հանճար:*

կամ՝

*Գերադասում է պետական շահն ով
Սեփական շահից՝
Վաստակում է եւ անունը մեծի...*

Պոեմի վերջին խորհրդանշական մասը բանաստեղծուհին անվանել է «Նավը ճանապարհին»: Ժողովրդի անվերջանալի ճանապարհի համար անպարտելիության թիկունք թագավորները նախ եւ առաջ պետք է համարեն Մեսրոպ-Մուշեղին, ասել է թե՛ գիրն ու թուրը: Ապա հնչում է կենսափորձի իմաստուն խորհուրդը.

*Երկիր պահելը հեշտ լինել թե որ,
Գուցե չէր ասվի խոսքը թեւավոր՝
Ծանր է... գրակը Մոնոմախի:
Կեսա՛ր, ականջիդ ոսկե օղ կախիր՝
Ով շատ վերելից նայի ամբոխին,
Կդառնա զոհը նրա սուրբ ոխի:*

Ով չի հասկանում, որ «Դարձդարձիկ ճամփին պետական նավի Անպակաս են միշտ հարցերը կնճռոտ», եւ ով չկողմնորոշվի, թե ով է երկրի բարեկամը եւ ով՝ թշնամին, նա կխորտակի նավը: Սակայն բանաստեղծուհու խորհուրդը դրանով չի վերջանում, շարունակվում է՝ մեջտեղ է բերվում թշնամու եւ բարեկամի հարափոփոխության խնդիրը, քանզի «Չարափոփոխ է... դեմքը աշխարհի»:

*Եթե պետք լինի (քեզ չէ՝ քո երկրին),
Պիտի քայլես եւ սայրով նշտարի,
Եվ՝ սեղմես ձեռքը ոչ-բարեկամի՝
Թե օգնելու է ընթացքին նավի:*

Քաղաքական-դիվանագիտական գաղափարների պոետական խորհուրդները բխում են մեր իսկ ժողովրդի ճակատագրից, հայոց ազգային ողբերգությունից: Հիշեցվում են 20-րդ դարասկզբի կորուստները: Մեր թշնամին, որ պարտվել էր մեծ խաղում, ասել է թե՛ առաջին համաշխարհային պատերազմում, «Չաղթեց շնորհիվ իր... ճկունության՝ Շահեց գրազը քսաներորդ դարի»:
Բանաստեղծուհուն հուզում է սերունդների ապագան, որի համար էլ կտակում է.

*...Գալիք դարը գեթ որ լինի բարի,
Եվ ժողովածը էլ չտանք քամուն՝
Դա՛ս քաղենք կյանքից ի շահ մեր շահի՝
Ի՛ր իսկ զենքերով խփենք թշնամուն:*

«Մատյան հառներգության» ժողովածուն եկավ ապացուցելու, որ Նվարդ Ավագյանի ստեղծագործական կյանքը, իրոք, հասուն հասկերով ցորենվելու, սիրո տառապանքով գեղեցկանալու, ժողովրդի անընդմեջ «ոգորումներով ոգեշնչվելու», կորուստների ցավից եւ հավերժանալու հավատից իմաստանալու հրաշալի ճանապարհ է, որով կարող է հպարտանալ գալիք սերունդների հետ զրուցող յուրաքանչյուր տաղանդավոր արվեստագետ:

11.

Բանաստեղծ **ԱՐԿԱՂԻ ԹՈՎԱՍՍՅԱՆԸ** իր երգերի գիրքը վերնագրեց «Արցախցի եմ ես»: Դա ազգային արժանապատվության խոստովանություն է: Թովմասյանի համար արցախյան հողը «չբեկվող անկեռ ադամանդ է», «ուրան է՝ աշխարհով լցված», որ ատոմի ուժ ունի:

Ա. Թովմասյանի երգն ակունքվում է Արցախից, փարվում Արարատին, ինչպես ինքն է խոստովանում՝ «Ես որպես որդի իր մորից պոկված, գնում եմ դեպի հայրենիքն իմ հար՝ Անուշ Յայաստան»: Բանաստեղծի այս ընդհանրացումը հնչում է որպես հավատ, որպես «լեռներից կախված զանգ», որը ոչ ոք չի «կարող պոկել»: Բանաստեղծն իր ուժն առնում է հայրենի հողից, նրա ոտնահետքերը «Յասնում են մինչեւ Ուրարտու» եւ դարավոր այդ երթի մեջ միշտ ազդարարել է՝ «Ես չեմ ապրի երբեք ծնկի իջած»: Այդ պատվաբեր գիտակցությամբ Թովմասյանի քնարական հերոսը բանաստեղծական զգացումների մեջ է առնում Գանձասարն ու Ամարասը, Մռովն ու Քիրսը, Շուշին ու Վարարակնը եւ շնչավորում նրանց որպես հավերժության կենդանի ճամփորդներ: Յավերժական այդ ճանապարհը եղել է դժվարին, արհավիրքներով լի, սակայն արցախցին միշտ էլ գիտակցել է, որ իրեն բախտ է վիճակվել արյան գնով պաշտպանելու ոչ միայն իր օջախը, այլեւ դառնալու Յայոց աշխարհի պահապանն ու զինվորյալը: Ահա ինչու Ա. Թովմասյանի հայրենասիրական երգերում Արցախը հուլովում է Յայաստան սուրբ անվան հետ միասին: Ա. Թովմասյանի երգերում ընդգծված է հայ մարդու բնավորությունը՝ աշխատասեր, ազնիվ, հաճախ այնքան ազնիվ, որ կարող է խաբվել թշնամուց: Այդ է վկայում նրա «Բարեկամի մասին» բանաստեղծությունը: Յավատացիք հարեւանին, բայց նա Սունգայիթ կազմակերպեց, նրա մասին լեգենդներ հյուսեցինք, բայց նա արյան գետեր բացեց: Սակայն Թովմասյանը հավատում է մեր հաղթանակին: Դիմելով գերված, հայաշունչ Շուշին, դեռեւս

շարժման սկզբին նա գրեց. «Բայց գերության միջից դեռ կարծակվես, Շուշի, դեռ կկանչի զանգը, Ջանգակատուն Շուշի»:

12.

Արցախը իր հազարամյակների պատմությամբ, ճարտարապետական բազում կոթողներով հայաշունչ է, մեսրոպագիր, աստղագնա, բայց, ավա՜ղ՝ գերված: Բանաստեղծ **ԱՐՄԵՆ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ** տազնապահար բացականչում է. «Ներխուժում է տունս չարի ոգին անտես...»: Չարի ոգին ճեղք է առաջացնում հարազատ Արցախի օջախներում, սրբատներում: Խոնարհվելով Քանձասարին, բանաստեղծը տազնապի աղոթքը ուղղում է Արարչին.

*Օ՛, երկնային, ասա, ինչպե՞ս վարվել,
Ավաղ, ճեղք է տալիս սրբատունս:*

Դիմելով Ամարաս վանքին, որ կերտվել է 4-րդ դարի սկզբին, Գ. Լուսավորչի ցուցումով, Ա. Յովհաննիսյանը երազում է տեսնել նրա աբեղային, սրբազանին ու վեհափառին, խնդրում, որ Աստված լսի իր աղոթքը: Դեռ ավելին, նա ընդգծում է.

*Ո՞ւր ես, արարիչ, լսիր իմ մեղան,
Յանուն հոգուս, որ քոնն է լիովին,
Վար իջեցրու զոհասեղանդ,-
Գլուխս ընծա բերեն կամովին:*

Բանաստեղծը, բացահայտելով պատմական ժամանակաշրջանի անդրադարձումները, վերագտավ արցախցուն, որը նախ մաքառում էր հոգու խորքում եւ ասպա քաղաքացիական ասպարեզ դուրս եկավ հանուն իր անկախ եւ ազատ կյանքի, հանուն իր մայրենի՝ հայոց լեզվի գոյատեւման եւ սերունդների հայեցի դաստիարակման:

Արմեն Յովհաննիսյանի հայրենապատումը տազնապի եւ հույսի համաձուլվածք է: 1994-ից անցել են տարիներ, թշնամին չի հաշտվում պարտության հետ, հոխորտում է անվերջ հայ ժողովրդի դեմ, հերյուրելով, որ Արցախի հայերը եկվորներ են: Բա-

նաստեղծ Ա. Հովհաննիսյանը բանաստեղծական իր նոր շարքերում մի կողմից արտահայտում է իր ցասումը թշնամու դեմ, մյուս կողմից ընդգծում է արցախցու տոկունությունը ու վճրականությունը.

Քրիստոսն աջը հպեց ճակատիս,

- Տենդի մեջ ես, ա՛խ, վառվո՛ւմ ես, որդի՛ս...

Քրիստոսն աջը վայր բերեց կրծքիս,

- Տազնապահա՛ր ես, անհանգի՛ստ, որդի՛ս...

Քրիստոսն աջը իջեցրեց ուսիս.

- Պի՛նդ ես տակավին, դիմացի՛ր, որդի՛ս...

Ա.Հովհաննիսյանի հայրենասիրական պոեզիայում զուգահեռների վրա հղումներն են ճակատագիր եւ մաքառում հասկացությունները: Որպես հերոսական ժողովրդի զավակ նա ընդգծում է մաքառման գաղափարը, հաստատելով, որ միայն պայքարի միջոցով է ժողովուրդը հասնում իր նպատակին:

Բանաստեղծը դիմելով ներկային, խոհերի աշխարհում քննարկում է նաեւ անցյալը եւ ընդգծում անցյալի ու ներկայի սերտ կապը: Նա նշում է՝ ինչքան էլ անցյալի հանդեպ լցվես կարոտախտով, միշտ պետք է խորհես ներկայի մասին եւ ողջունես գալիքը: Ա.Հովհաննիսյանը ժողովրդի անմահությունը տեսնում է ե՛ւ մաքառման, ե՛ւ ավանդույթի շարունակման մեջ: Այս առումով հետաքրքիր է նրա հետեւյալ բանաստեղծությունը.

Ես մինչև գետին պիտի խոնարհվեմ

Եվ իմ աղոթքը՝ հղեն առ երկինք,-

Այս ինչի՞ց է, որ իմ սիրտը այսօր

Բաց երակի պես զգայուն է խիստ...

Լեռները հեռվում բռնել են շուրջպար,

Զլում է արևն, ասես «Քոչարի»,

Աշունը՝ քրոջ նման քնքշաբար,

Իր ծիրանին է փռում ուսերիս...

*Ինչպե՞ս անմասն մնամ այս ծեսից,
Զվարթ աշուն է հայրենի հողում
Եվ իրենց Սասնա պարահանդեսին
Ինձ հրավեր են լեռները հողում...*

*Առեղծվածային երկի՜նք հայրենի,
Չայրենի երկիր, իմ սու՜րբ ջուր ու հող,
Թող հավերժական պարս չհատնի
Քո սեզ լեռների գրկում հավերժող...*

Բազմալար է Ա.Յովհաննիսյանի քնարը: Սակայն նրա ուշքն ու միտքը, պոետական զգացումի աշխարհը հայրենիքի հետ է, կոնկրետ իր ժննդավայր Արցախի՝ նրա վանքերի ու եկեղեցիների, բերդերի ու խաչքարերի ընդգրկմամբ, որի խոսուն արտահայտություններից է «Գանձասար» բանաստեղծությունը.

*Կապույտ միգում, որպես տեսիլ, որպես հույս,
Թող շողշողա քո գմբեթը երկնասույգ:*

*Թող ղողանջի քո զանգը զիլ, շառաչի,
Եվ ճառագի հարության լույսը խաչիդ...*

*Երկրի վրա իմ՝ թշնամուց փրկված հար,
Եվ սփոփիր նրա սիրտը վշտահար:*

*Կապույտ միգում հոգուս ճիչը դու անաս
Եվ ամոքիր իմ վերքե՜րն էլ, Գանձասար:*

13.

Չայրենապատումի իր նրբերանգներով **ԴԱՎԻԹ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ** քնարը եւս հնչեց դեպի լույս ուղղված ղողանջներով:

Ահա Միքայելյանի բանաստեղծական ինքնախոստովանանքը.

Լույսը

Չավատիս ուղեկիցն է

*Ու արձագանքը խոհերիս,
Որ անվերջ տառապում է
ինքնաայրման բոցով.
Լուսնի պես շիկանում,
Չույսի պես երկնում... («Լույսը պահապան»)*

Ինչպես տեսնում ենք, բանաստեղծի հավատի ուղեկիցը եւ խոհերի արձագանքը լույսն է եղել: Այստեղ չենք կարող չմատնանշել Սուրբ գրքի խորհուրդը՝ «Եղիցի լույս»:

Դ. Միքայելյանը իր «Լույսը պահապան» ծրագրային բանաստեղծությամբ բացել է պոետական հոգու դռները եւ ընթերցողին հրավիրել իր փայփայած երգերի պարտեզը:

Բազմազան են այդ պարտեզի երգ-ծաղիկները: Դրանք բույրը ընթերցողն զգացել է դեռեւս 1989 թ., երբ Երեւանում «խորհրդային գրող» հրատարակչությունը լույս ընծայեց նրա «Չավատի ժամ» անդրանիկ ժողովածուն: Նրանում զետեղված բանաստեղծություններն անմնացորդ բացահայտեցին հեղինակի նախասիրությունները: Դրանք հյուսված են հարազատ լեռնաշխարհի մարդկանց կենսափիլիսոփայությունից ու հոգեբանությունից: Այդ մարդիկ արմատներով ու ճյուղերով սերտորեն կապված են հայրենի եզերքին, ձգտումներով, բարոյական դիմագծով իրենց նախնիների լավագույն ավանդույթների խտացումն ու շարունակողներն են՝ նրբասիրտ ու խիզախ, հպարտ ու գեղեցիկ, արմատներով առողջ, երազներով՝ ծիածանագույն:

Դ. Միքայելյանի համար Արցախը կենսաբեր պատկերների կոնկրետ համաձուլվածք է՝ հայաշունչ, հայակերպ, հայապահպան.

Այգաբացդ

Շիկացած նուռ է, հույսի դուռ,

Որդիների ճամփան պահող

Վարդ է հուր...

... Գիշերները

Աստղերիդ հետ կվառվեն,

Ցերեկները

Չունդերիդ հետ կբացվեմ,

Քեզնով տանտեր,

Քեզնով կանգուն, շեն, օջախ,

Գանձասարիս արթուն դողանջ, իմ Արցախ:

Բանաստեղծի երգերում Արցախ-այգու ծառերը պապի ձեռքով են պատվաստված, այդ ծառերը միշտ արթուն են, «բներին՝ ծալ-ծալ կնճիռ ծալքերը»: Նրանցից «ամեն մեկը դալար շյուղերին կրում է պապի Չայկյան մատնահետքերը» («Պապիս ծառերը»):

Դ. Միքայելյանի ստեղծագործական խառնվածքն արարումի իր երանգներն ունի, ինչ ասում է՝ իրենն է, ինչ արցախյան է՝ երգի մեջ է առնում: Դրանով պետք է բացատրել նրա խոսքի անմիջականությունը: Դավթի համար արցախյան թեմին այգու եւ տան նախշ ու հավատ է, որ պետք է փայփայել եւ հանձնել սերունդներին: Արցախ-այգու առվակը հավերժության հիմն է («Չոգու առվակը»), գարունը սերմնացան է՝ հասուն հունդեր է պահ տալիս հողին («Կանչ գարնանամուտին»), թրաշուշանի ծաղկաթերթերը բոցկլտացող մոմեր են («Թրաշուշանի ծաղկաթերթերը»), ծիրանիները ծաղկաշոր հագած նորահարսեր են («Բաղձանք»): Այս օրինակները կրկին հաստատում են մի ճշմարտություն, որ լավ երգը ծնվում է հայրենի օջախների լույսերից եւ նրանց տերերի խոհերից ու ապրումներից:

Դավիթ Միքայելյանի լույսը նաեւ՝

Ծառ է ծիրանի.

... Կարոտի ճիչ է լույսը կենարար

Ու տաք շշուկն է սեւաչ բալիկիս:

Լույսը պահապան

Օջախիս,

Խղճիս...

Բազում դարերի տարիք ունեցող հայ երգի լույսի թրթիռը հատել է Դ. Միքայելյանին, եւ նա հայրենիքի աչքերում ու հոգում

լույսի շողեր է կարդում, լույս, որով գծված է մեր պատմության դժվարին ու փառավոր ճանապարհը: Այդ լույսի շափաղումներում էլ Դ. Միքայելյանն իր խոսքն է ուղղում առ Հայաստան ու Արցախ, առ Վայոց ձոր ու հայրենի գյուղ: Եվ նա իր գրչեղբայրների պես բացում է խոհի ու խորհրդի շերտերը, որտեղ էլ ծնվում է իսկական բանաստեղծությունը: Հայաստանին նա խոստովանում է.

Եվ առավոտս ծաղկում է քեզնով:

... Քայլերս

Անվերջ ճամփադ են փնտրում,

Ու տառապանքս նեղվում է ցավից,

Մինչեւ ե՞րբ պիտի

Հարազատ մորն իր

Որդին երագի աչքերով նայի,

Հեռվից կարոտի...

(«Հայաստան»)

Սակայն այդ հարցը չի մշուշում բանաստեղծի սրտից ծնված երգը: Ի հեճուկս հին ու նոր թշնամիների, նա ավելի խորն է պաշտում այն ամենը, ինչ արցախյան-հայկական է. ե՛լ երգը, ե՛լ թթեցին, ե՛լ անտառը, ե՛լ առանձնապես հողը.

Հողից են առնում

Ես

Իմաստության գանձերը բոլոր,

(Հողը հրաշք է):

Եվ արյունը այն,

Որ խայտում է իմ տաք երակներում,

Արցախ աշխարհիս

Ջորեղ սրտից է

Փոխանցվել մարմնիս, իմ էությանը:

Հողիս բարությանը,

Հողիս քաղցրությանը,

Հողիս սիրով է հավատն իմ զորեղ...

14.

Արցախի գրական ընտանիքում այսօր ապրում են մեկ տասնյակից ավելի արձակագիրներ: Գրական ընթացքի հիմնական լուծը ավագ և միջին սերնդի ուսերին է: Ավագ սերնդի առաջին ներկայացուցիչը տաղանդավոր գրող **ՄԱՔՍԻՍ ՀՈՎՀԱՆՆԻՍ-ՅԱՆՆ** է, որի երկերը, առանձնապես վերջին շրջանում տպագրված «Արցախ իմ, ցավ իմ» ժողովածուն, իրավունք են տալիս Մ. Հովհաննիսյան-երևոյթը համարել հայտնություն: Հովհաննիսյանը գեղարվեստական իր խոսքը հյուսում է սեփական թույրով ու բույրով, անհատականության իր կնիքով: Նա արձակի հոգեբանական ուղղության ինքնատիպ ներկայացուցիչներից է, ճանփան՝ հաստատուն և հեռագնա:

Անվանի գրողի գեղարվեստական ընթռնումներին, պատասխանատվության զգացումին, գրականության դերի ընկալման սկզբունքներին ծանոթանալու համար հաջող բանալի են ինչպես նրա նախորդ ժողովածուները, այնպես էլ «Արցախ իմ, ցավ իմ» գիրքը:

Մ. Հովհաննիսյանի ստեղծագործական մաներաները կենսաբուխ են, անմիջական, խոսքը համեմված է ժողովրդի հանդեպ ունեցած հպարտության զգացումով և այդ ապրումն արտահայտելու սիրտ շոյող հունորով: Այդ շաղախով են հյուսված նրա գործերը: «Մենք» պատմվածքը կարդալով՝ ընթերցողը հավատում է գրողին, շոյվում, որ Նիկոլայ թագավորը ամիսը մի քանի ռուբլի թոշակ է նշանակել... ոչ մարդուն, ծառին, որ աշխարհում միայն արցախցին է իր «ես»-ը մեծարում «մունք»-ով. դա էլ ունի իր պատճառը: Այդ մասին կարդում ենք. «Մենք սիրում ենք հպարտանալ, մենք ասում ենք Գանձասար, դեմը Կաչաղակաբերդն է, իսկ Ամարասը ավելի հին է, Մեսրոպ Մաշտոցն Ամարասում դպրոց է բացել և մեր անկիրթ ու մտոք երեխաներին այբ, բեն, գիմ, դա... այսպես ծոր տալով գիր-իմաստություն սովորեց-

րել ու վերջուն էլ, որպես պատգամ, նրանց վարժվող ուղեղներուն կաթեցրել զբանս հանճարոյ...» (էջ 8): Բայց գրողը տեսնում է նաև մեր «մենք»-ին հատուկ մի մեղսականություն: Խոսելով Սխտորաշենի երկուհազարամյա սոսենու մասին՝ գրողն ընդգծում է. «Այս հրաշալիքը, որի փչակուն մի հարսանիք կարելի է անել, մի հասարակ ցուցանակի չի արժանացել, որպեսզի չգնանք Կարմիր շուկա ու ետ դառնանք» (էջ 9): Գրողը չի մոռանում նաև ժամանակի գյուղակործան բացթողումները, որոնց պատճառով ունենք «սարի դոշին կուչուկծիկ դառած, աչքի խոռոչները դատարկված տներ, որոնք չարագույժ կոնչում են ավերված, ավերվող, մեռնող գյուղի մասին» (էջ 9):

Մ. Հովհաննիսյանի պատմվածքներուն ցավի ճիչը հավասարվում է սիրո զգացումին: Ասել է թե՛ նրա խոսքը ցավի խառնուրդ է: Նրա ստեղծագործական խառնարանում երկու կից սահման է ներկայացված լրագրողի և գրողի տիրույթով: Գովելին այն է, որ դրանք չեն խոչընդոտում միմյանց, ընդհակառակը, միաձույլ են. մի կողմից, կյանքի ճանաչողության կոնկրետ դրսևորումն է, մյուս կողմից՝ երևույթները գրողի վառ երևակայության շրջանակների մեջ առնելը: Այս միաձուլությունն օգնում է Մ. Հովհաննիսյանին՝ տեսածն ու զգացածն արտահայտել պատկերավոր մտածողության պարտադիր պահանջով: Այդպիսին է եղել նա և իր առաջին գրքերով, այդպիսին է և «Արցախ իմ, ցավ իմ» ժողովածուի պատմվածքներուն: Ինչին ձեռք է մեկնում, ինչի մասին էլ գրում է նա, արցախցուն մղում է դեպի հարատևելու պատվաբեր գործոնը. «Գործ անենք,- ավարտում է նա «Մենք» պատմվածքը,- որ տներ շինվեն, բարիքներ ծնվեն: Երեխաների շատությունից սրտներս մի անգամ նեղվի: Ու հետո իրավունք ունենանք ասել՝ Մենք» (էջ 11):

Նշեցինք, որ Մ. Հովհաննիսյան լրագրողի և գրողի ջրբաժան սահմանները միաձույլ են, ավելի շուտ ընդգծեցինք, որ այս ավից այն ավի հյուսվում է մի կամուրջ-ծիածան՝ արցախցու հո-

գուց բխած, Արցախի ուսերին կամարված: Ընթերցում ես «Բախ-
շի պապս» պատմվածք անվանենք թե ակնարկը, մեկ է, ոչինչ չի
փոխվում ու չի տուժում, դեմդ հառնում է իմ պապը, քո պապը,
նրա պապը, մեր պապը: Դա սովորական կերպար չէ, ոտից
գլուխ արցախցի է՝ իր դարավոր ճանապարհի կեռմաններով,
ճակատագրով, մեծ սրտով, բարի հոգով, հայի վճռականու-
թյամբ՝ ի հեճուկս բոլոր դժբախտությունների՝ լավ արարքով,
լավ գործով աշխարհը զարդարելու երազանքով: Կարդում ենք,
որ Բախշի պապը Սահիռնազ կնոջ հետ հինգ տղա է ծնել ու
երկու աղջիկ, ստացվել է այնպես, որ բոլորին իր ձեռքով ջահել
է թաղել, որպեսզի նախախնամության անագորույն պահանջով
կորստի ցավը մեծ լինի, որ մորմոքը հնար չլինի սփոփել:

Այդ կորուստները բնության հարվածների հետքեր չեն: Սա-
քունց Բախշու Չարուն որդուն Մալիբեկլու գյուղում թուրքերը
ցաքի մեջ են դրել ու վառել, էդ մոխիրը լցրել փոսերը, մատղաշ
ծառ տնկել, հետո ուրիշ ծառեր տնկել, և մինչև վերջերս էդ այգուց
մնացած ծառերին ասում էին՝ Չարունի տանձուտը» (էջ 62): Սա-
քունց Բախշին վաղաժամ մահացած հաչատուր որդու հիշատա-
կին ջրաղաց է կառուցում: Ջրաղացի ձորում թշնամու գնդակից
զոհված Արշակ որդու հիշատակը զարդարում է թթի այգով:

Սաքունց Բախշու Սամվել որդին գնացել էր քաղաք, դարձել
Նոյի ագռավ: Միայն շատ տարիներ հետո, երբ հինգ
եղբայրներից ինքն էր կենդանի մնացել, Սվերդլովսկ քաղաքից
հեռագիր տվեց իր գոյությունը իմաց տալու: Սամվելը Բախշի
պապի հոգում վաղուց մահացել էր:

Մ. Չովհաննիսյանը շարունակում է Բախշի պապի պատմու-
թյունը հասցնելով մինչև Մեծ Չայրենական. «Երբ որդու՝
Գարեգինի «սև թուղթը» Բախշի պապը ստացավ, աշխարհը
մթնեց գլխին. իր մեծ գերդաստանից եսթեր աղջիկն էր մնացել:
Նա քարի մի մեծ բեկոր բերել տվեց ու սկսեց իր գերեզմանաքա-

րը շինել: Գերեզմանաքարի վրա ոչ ծննդյան թիվը գրեց, ոչ էլ նահվան թվի համար տեղ թողեց, միայն գրեց. «Աստ հանգչի Բախշի Ավանեսյան» (էջ 63):

Թվում է, թե այս բնութագրմամբ կարելի է ավարտված համարել պատմվածքը: Սակայն հեղինակն անցյալի այդ ծանր ճակատագրի տուտը բերում միացնում է Արցախյան ազգային-ազատագրական պայքարի փեշին ու ճշմարտացիորեն ընդգծում հայի անձնական կյանքի և ժողովրդի ճակատագրի նույնակերպությունը: Պատմվածքն ավարտվում է այսպես. «Այս աղետի օրերին ինչու հիշեցի Սաքունց Բախշու կյանքի պատմությունը: Հիշեցի, որ շատ ցավ քաշած այս մարդու կյանքը շատ է նման իր ժողովրդի կյանքին» (էջ 63):

«Արցախ իմ, ցավ իմ» գրքի պատմվածքները մի ամբողջություն են կազմում այն առումով, որ նրանցում կերպարները լրացնում են մեկը մյուսին՝ միայն իրենց հատուկ բնավորություններով: Կերպարների մի ամբողջական պատկերասրահ է գիրքը: Այստեղ ծանոթանում ես դեպուտատ արցախուհուն, որ գյուղից մեծ դժվարություններ հաղթահարելով, ոտքով հասնում է Ստեփանակերտ՝ մասնակցելու 1988-ի փետրվարի 20-ին տեղի ունեցած մարզային խորհրդի պատմական նիստին («Հատուկ դրություն»), լսում ես մաճկալաշենցի հրամանատար Արմեն Մելքունյանին և 14-ամյա Լորենցին ու հայրենասիրության դասեր առնում («Իսկ Լորենցը 14 տարեկան էր»), մանճկալաշենցի մոր հետ սգում ես երկու նահատակ որդիների՝ Կոմիտասի և Արսենի համար, միաժամանակ զարմանքով հպարտանում արցախուհու՝ անձնական ցավն իմաստնությամբ տանելու, ժողովրդի փրկությամբ ապրելու կարողությամբ («Մատաղ») քաջալերվում ես տարիքն առած Պուտունց Արամի անձնուրացությամբ, որ չի թողնում գյուղը, չի հեռանում հեռացողների հետ, այլ գնում է դիրքերը՝ ջահելների հետ միասին պաշտպանելու գյուղը և հոր ու

մոր գերեզմանները («Պուտունց Արամ»), Մ. Հովհաննիսյանի ստեղծած գրական կերպարների մեջ ուրույն մի աշխարհ է մաճկալաշենցի Գրիգորը, որի մինուճար որդին՝ Խաչիկը, գլուխը դնում է ժողովրդի ազատության զոհասեղանին, իսկ Հավատարիմ անունով կինն էլ զոհվում է արկի պայթյունից: Հեղինակը Գրիգորին սգի միջից բերում է հայ մարդուն հատուկ աշխարհասիրության և հարատևման վճռականության սահմանին, որտեղից պիտի շարունակվի կյանքը: Ահա Գրիգորի որոշման պատկերը. «Տան մենակության մեջ Գրիգորը դուրս է կանչում... Մի օր էսպես մտածում էր ու հիշեց, որ հայր Խաչատուրը վաթսունն անց էր ու հիշեց, որ մորը հարս բերեց Ղևոնդանց օջախը ու երեք երեխա ունեցավ, ինքն էլ դրանց մեջ» (էջ 174):

Մ. Հովհաննիսյանի ստեղծագործության մեջ ռեալիստական երանգներով է ներկայացվում իրականությունը: Իր թախծոտ, տխուր, նույնիսկ արցունքոտ պահերի միջից ժպտում է կյանքը: Ապրեցնող են գրողի պատումները, և դա խորախուսելի է, դա թունամանյանական և բակունցյան սկզբունքի առհավատչյան է, որ արժանի է դրվատանքի:

Արցախյան ազգային-ազատագրական պայքարի գեղարվեստական հրաշալի վավերագրություն է Մ. Հովհաննիսյանի «Արցախ իմ, ցավ իմ» գիրքը: Նրանում զետեղված պատմվածքները կարելի է գնահատել որպես արցախցիների հուզաշխարհը ներկայացնող երփներանգ գորելենի նրբահյուս հատվածներ:

Ծանոթանալով տաղանդավոր արձակագրի ստեղծած կերպարներին՝ ընթերցողը ճանաչում է իրեն, ապրում գեղարվեստի հրճվանքը: Գրողի ստեղծագործությունների հերոսները հոգեբանությամբ, վարքագծով, սոցիալական կոնկրետ միջավայրով, մտածողության պատմականությամբ կոնկրետ և բազմակողմանի կերպարներ են: Արցախի հայաթույր ճակատագրի վավերագրողներից է Մ. Հովհաննիսյանը: Իր ժողովրդի ամենօրյա հոգսե-

րից անբաժան, նա իր գրչընկերների հետ միասին դարձավ մայր ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ոգեշնչողն ու զինվորյալը:

«Մենք»-ին «մունք» ասող ղարաբաղցիների հայկական ավիչն ու արմատներն ի տես բերելով՝ Մ. Հովհաննիսյանը հետազոտության հարթակի վրա դրեց արցախցու նկարագիրը, որ տիպիկ հայրորդի է, և որի անունից գրողն ընդգծում է մեր հպարտանալու պատմական շնորհները և ամենօրյա իրավունքը: Ինչպիսին Արցախի անկրկնելի բնությունն է և այդ բնության գտածոն՝ արցախցին, այդպիսին էլ Մ. Հովհաննիսյանի արձակն է, որ իրենն է, մերն է, նաև գալիքինն է՝ թևավորող, ապրեցնող:

Արցախյան գրական ընտանիքի բոլոր անդամների հուզաշխարհում հայրենի եզերքի ճակատագիրն է: Ինչի մասին խորհում ու գրում են՝ արդյունքում ստացվում է Արցախ: Եվ դա շատ լավ է: Արցախցի գրողն իր հայրենի Արցախի և հարազատ արցախցու նկարագրով է ներկայանում աշխարհին, այսինքն՝ ազգային ոգու նպատակն ու գեղեցկությունը հենց կայանում է դրանում: Նրանք, ովքեր սխալ մտածելակերպի և կեղծ նպատակամղումի հետևանքով ձգտում են համամարդկայինի երանգներով գալ դեպի ազգային ոգու շրջանակները, տանուլ են տալիս: Ընդգծում ենք, որ Արցախի արձակագիրների ուշքն ու միտքը, հոգսն ու տագնապը հայրենի եզերքի և այն շեն պահող ժողովրդի հետ է: Այս նկատառումով հատկանշական է նաև **ԿՈՄԻՏԱՍ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ** արձակը: Աստվածային շնորհով օժտված մի գրող, որի պատմվածքներում, վիպակներում և ավանդապատումներում շունչ ու մարմին են առնում Արցախն ու արցախցին: Որպես վկայություն՝ բերենք անվանի պատմավիպասան Հայկ Խաչատրյանի կարծիքը Կ. Դանիելյանի մասին. «Չնայած հեղինակի նկարագրած միջավայրը Արցախն է, բայց գիրքն ընթերցողի հոգում տարածքային սահմանափակման հետք չի թողնում:

Դանիելյանի կերտած կերպարներն իրենց հուզաշխարհով, արարքներով, պարզամտությամբ, բարությանբ ու հավատամքով ստանում են համահայկական փայլ: Գրողի պատկերած արցախական աշխարհն ստանում է ընդհանրապես վերջին տասնամյակներին բնորոշ հայ գյուղաշխարհի գրական կենսագրական հնչողություն»:

Արժե այստեղ ընդգծել մի ճշմարտություն՝ որ արվեստագետի հաջողության առաջին գրավականը իրեն ծանոթ միջավայրի, ծանոթ մարդկանց նկարագրության մեջ է: Գրականության գլխավոր պրոբլեմի՝ մարդու կերպարի ստեղծման հաջողությունը նրան ճանաչելու մեջ է և, իհարկե, նաև արվեստագետի տաղանդի արդյունք: Կ. Դանիելյանի «Անկնիք նանակներ», «Երաշտ տարի», «Դեմ-հանդիման» ժողովածուները, «Արցախը չսանձած մեծույզ» փաստագրական վեպը լայն ճանաչում բերեցին նրան: Ուստի անակնկալ չէր նրա «Ծիչ» ժողովածուն, որ հրատարակվեց 2004-ին, ԼՂՀ պետական աջակցությամբ: Գրքում հեղինակը գետեղել է նաև տարիներ առաջ գրած «Ծիր կաթին» վիպակը, որ կրկին ու կրկին հուշում է գրողի նախասիրությունների և հայրենամուտեր հոգսերի մասին: Սակայն գրքի առյուծի բաժինը նոր պատմվածքներն ու ավանդապատումներն են, որոնք գալիս են կրկնապատկելու և հաստատելու գրողի և՛ տաղանդը, և՛ տեղը այսօրվա մեր ընդհանուր հայկական գրական կյանքում: Մարդու ճանաչման, անհատի հոգու խորքերը թափանցելու, անձնականը անանձնական ապրումների շաղախով ընթերցողին ներկայացնելու մի-մի ինքնատիպ հյուսվածքներ են «Գյուղական նովել», «Այն հեռավոր ամռանը», «Ծիչ» և այլ պատմվածքներ: Ինչ վերաբերում է «Եկել եմ, որ ասեմ գալու եմ» պատմվածքին, կարող ենք հանգիստ խղճով և արվեստի առջև պատասխանատվության ազնիվ զգացումով հավաստել, որ Արցախյան ազգային-ազատագրական

շարժման և պատերազմի հետևանքով հայ մարդու և նրա զինվոր որդու սխրանքների ու կրած տառապանքի մասին նման գործ չի ստեղծվել հայոց արձակի անդաստանում: Այն մի հուշակոթող է ոչ միայն գրողի, ոչ միայն արցախյան արձակի, այլև ամբողջ հայ արդի գրականության ասպարեզում: Գրողն իր ապրած տառապանքի, ցավի, հույսի երանգներն ի մի է բերել երազի կոնպոզիցիոն ձևի օգնությամբ: Երկխոսությունների սեղմությունն ու հղկվածությունը, ապրումի փիլիսոփայական խորքերը, ծնողական սիրո համակողմանի թրթիռները, սպասումի դարակազմիկ վայրկյանների զարկերը հմուտ վրձնի ծնունդ են, իսկ և իսկ հոգեկան ապրումի մի գորբելեն:

Եթե ինչ-որ տեղ կարող են Արցախի գրական ընտանիքի անդամների կատարած հունձքի արդյունքում կշտամբել թեմաների սահմանափակության համար, ապա մեր կյանքին հասու և մեր ժողովրդի աստվածատուր ճակատագրին քաջածանոթ արվեստագետները կարող են ընդգծել հենց դրա առավելությունը՝ նկատի առնելով 1988-ից սկսած այն գոյամարտը, որ հայ ժողովրդի դարավոր մաքառումի շարունակությունն է՝ պսակված հաղթանակով:

Այստեղ հիշենք հայ գրականության ռահվիրա Մանուկ Աբեղյանին, որ մեր դարավոր գրականությունը բնութագրել է որպես եկեղեցական-քաղաքական մաքառման գրականություն: Ինչպես դարերի ընթացքում, այնպես էլ այսօր հայ գրականության զլխավոր թեման հանդիսանում է ազգային մաքառման, կանքի ուժի, հարատևելու վճռականության փառաբանումը: Այսօրվա մեր արձակի մեջ էլ հնչեցվում են պատմության դասերը՝ մեր նորօրյա Ավարայրի և Սարդարապատի՝ Արցախյան պատերազմի գնահատմամբ: Այս առիթով կարող ենք ընդգծել նաև ճանաչված արձակագիրներից **ԿԻՍ ՉԱՐԻԻԵԼՅԱՆԻ** ստեղծածը, առանձնապես նրա «Ինքնաթիռներ աղավնու թևերով»

ժողովածուն: Նրանում զետեղված պատմվածքները բավակա-
նաչափ երանգներ են հաղորդում՝ հեղինակին ներկայացնելու
դրվատանքի ընդգծումով: Կիմ Գաբրիելյանի արձակին հատուկ
է բանաստեղծական պատկերավորությունը: Դա պատահական
չէ. նա արձակ է մտել պոեզիայից: Միաժամանակ ընդգծենք, որ
նա պահպանում է արձակի չափանիշները: Գրողի այս ժողովա-
ծուի, ինչպես ասում են, լեյտմոտիվն Արցախյան գոյամարտն է,
որի կիզակետում հայ-ադրբեջանական փոխհարաբերություն-
ների հարցն է, սակայն՝ ոչ տրաֆարետ, ինչպես եղել է խորհրդա-
յին տարիների ընթացքում՝ ժողովուրդների լեռնայան «բարեկա-
նության» ծխածածկույթով շղարշված:

Կ. Գաբրիելյանը գրողի նրբանկատությամբ, հոգեբանական
ներաշխարհի իմացությամբ նկարագրում է Ադրբեջանի լծի տակ
հայաթափման եզրին կանգնած Հայոց Արցախի վիճակը: Դրա
խոսուն վկայությունը «Քիրվայության ժամանակներ» պատմ-
վածքն է, որը կարելի է բնութագրել որպես ազգային բնավորու-
թյունների հոգեբանական հաջող նկարագրություն: Գրողը հմտո-
րեն, գործող անձերի հուզաշխարհի ազգային գույների իմացու-
թյամբ ներկայացնում է հայ որմնադիր թորոսին և Նազին քիրվա-
յին: Պատմվածքի հենց առաջին էջերից ընդգծվում են նրանց
բնավորության տարբերիչ գծերը՝ ինչպես որ ձևավորվել են դա-
րերի ընթացքում և ինչպես որ կան այսօր: Թորոսը հայտնի որմ-
նադիր է: Նազին քիրվան խնդրում է, որ հայ քիրվան գնա և իր
համար տուն կառուցի: Գրողն այսպես է ներկայացնում Նազինի
խոսքն ու պահվածքը. «Թորոս քիրվա,- և աչքամիջին ժպտում է,-
Թորոս քիրվա,- ու շողքորթ ժպտում է,- Թորոս քիրվա,- ու ճա-
րահատ անզորությամբ ժպտում է, երեխեքիդ արևը, երեխեքս չո-
լում են մնացել: Տասը քորփեքս գլխներին տանիք չունեն, տուն
են ուզում շինել»: Իսկ Թորոսը, ինչպես բնութագրված է պատմ-
վածքում, «Մարդկայնություն ասածը որմնադիրի վարպետու-

թյան համբավի մեջ չի պահում, եփած-թխած խոսքերի մեջ չի պահում, այլ իր գեների ամենաթաքուն խորքերում հեշտորեն մերժելու բնատուր շնորհք չունի, որ մերժի: Եվ չմերժեց»: Սակայն պատումի մեջ դա չէ կարևորը: Նազիմ քիրվան աղքատության պատրվակով խորանարդիկ քարի փոխարեն գետնաքարեր է հավաքում, միաժամանակ քանդում Ջրվեր հայկական գյուղի հնադարյան եկեղեցու պատերը, քարը տեղափոխում որպես իր նոր տան շինանյութ: Իսկ Նազիմը այս հանցագործությանը դիմում է և՛ Ադրբեջանի իշխողների թելադրանքով, և՛ հայ սատրապների անտարբերությամբ: Հարթավայրից տեղափոխել են քոչվոր ցեղերի ընտանիքներին, միավորել հայկական գյուղերին, ամունը կնքել Հասանլու, որովհետև առաջին եկողը, մյուսներին իր հետևից քարշ տվող-բերողը Հասանն էր: Ինչպես հատուկ է թուրքերին, իրենք թվով աճելուն պես սկսեցին ծայր առնել անհամաձայնություններն ու վեճերը: Եվ ինչպես ընդգծվում է պատմվածքում, «Վիճելն ավելի շատ հասանլվեցիներին էր ձեռնտու, որովհետև երբ վեճի ճոնդը նեղանում էր, օղակը մայրաքաղաք էր շարտվում: Իսկ դա սկիզբն էր հանրապետությունից նոր ցիլինդրավորի առաքելության: Նեղացնողի մերալացն սկսվում էր գրավոր նկատողությամբ, ավարտվում աշխատանքից ազատումով: Այդպես եղավ Հասանլվում ազգալեզու նոր դպրոց բացելիս, նոր խանութ բացելիս, նոր ակունք ու գրադարան բացելիս: Ամեն մի ցիլինդրավորի հերթական առաքելությունից հետո սովխոզի տնօրենը փոխվում էր: Իսկ փոխողը կուսշրջկոմի ճաղատ քարտուղարն էր (էջ 9):

Կ. Գաբրիելյանը քաջածանոթ լինելով Արցախում խորհրդային տարիներին տեղի ունեցած ազերական հայահալած քաղաքականությանը, ռեալիստորեն պատկերում է նաև այն հայ քաղաքական ու տնտեսական գործիչներին, ովքեր խաղալիք էին դառնում թուրք ղեկավարների ձեռքին: Նման հայ գործիչների

մարմնավորումը սովխոզի վերջին տնօրեն Եղյանի կերպարն է:

Պատմվածքը նովելային ավարտ ունի: Վարպետ Թորոսը Նազիմի տան հիմքերը դնելուց հետո նկատում է, որ շարվելիք պատի քարերը եկեղեցու պատից են: Թորոսի հարցին, թե այդ քարերը որտեղից է բերել Նազիմ քիրվան, վերջինս կարկամում է: Նա արդարանալ չի կարող, որովհետև Թորոսը նկատել էր, որ քարերից մեկը եկեղեցու խաչքարի կեսն է: Եվ հնչում է Թորոսի բորբոքված ձայնը. «Ստոր գող շան որդի: Մեր հավատը պղծող սրիկա շան որդի, թաքցնել էիր ուզո՞ւմ: «Տնօրենն է հրամայել»: Տնօրենն, իհարկե, կհրամայի, տեսնես ինչ ես ռեխը գցել: Բա ո՞նց, համարյա մի տան քար է, ձրի քար: Ես ձեր պիղծ մերը... Գյուղը գողացել եք, հերիք չէ, հիմա էլ եկեղեցին եք գողանո՞ւմ: Կոտրում-գողանո՞ւմ եք» (էջ 22-23): Ինչպես եզրակացնում է հեղինակը, դա չար մարդու մաղձ չէր, հայիոյանքի սովոր բերանի խոսք չէր: Ընդվզումի պոռթկում էր, կուտակված պայթյուն, որ անզսպելի էր: Այդ պահին Նազիմի հասուն տղաները, որ օգնում էին վարպետ Թորոսին, բահը գցում են և փախչում: Ցավի միջից լսվում է Թորոսի ճիչը. «Կորե՛ք, մեր գյուղից գնացեք, կորե՛ք,- ու հերսից սկսեց լաց լինել... Քիչ հետո, երբ մի քիչ հանգստացել էր, վեր կացավ, պատշարի իր գործիքները գոգնոցի մեջ փաթաթեց, գոգնոցի քողերով պինդ կապեց ու ծանրաքայլ շարժվեց դեպի տուն» (էջ 29):

Կարդալով պատմվածքը՝ կրկին ու կրկին համոզվում ես Արցախյան ազգային-ազատագրական պայքարի արդարացիության մեջ: Նշենք, որ խորհրդային տարիների «քիրվայության» մասին գրել են նաև մեր մյուս գրողները: Կցանկանայինք առանձնապես նշել արձակագիր Դիանա Չամբարձումյանի «Այրված կամուրջների վրայով» վիպակը, ուր արտացոլված են Սյունիքում տեղի ունեցած իրադարձությունները՝ տիպաբանական նույն զուգահեռի վրա:

Կ. Գաբրիելյանի «Ինքնաթիռներ աղավնու թևերով» ժողովածուի մեջ զետեղված «Լուծ», «Ինքնաթիռներ աղավնու թևերով», «Վերադարձ ամենասկիզբը», «Վերջին թռիչք» և այլ պատմվածքների ապացուցում են հոգեբան գրողի սեփական ձեռագիրը:

2002թ. «Ազատ Արցախ» հրատարակչությունը լույս ընծայեց արձակագիր **ԱՐՏԱՇԵՍ ՂԱՀՐԻՅԱՆԻ** «Լեռան հուշ» պատմվածքների ժողովածուն: Գիրքը բացվում է ակադեմիկոս Ս. Սարինյանի գնահատականով, փակվում Վ. Հակոբյանի վերաբերմունքի ընդհանրացմամբ: Դա պատահական չէ, դա արձակագրի տաղանդի նկատմամբ ունեցած հարգանքի արտահայտություն է: Ս. Սարինյանը գրում է. «Արտաշես Ղահրիյանը գրական ասպարեզի վրա երևաց աննկատ, միանգամից, առանց նախապատրաստության: Եվ սակայն նրա առաջին պատմվածքներն արդեն տիրապետող գրչի դրոշմն ունեին իրենց վրա: Ե՛վ աշխարհն էր որոշված, և՛ ոճի ինքնատիպությունը»:

Ա. Ղահրիյանի ստեղծագործական աշխարհի և ինքնատիպ ոճի ընդհանրացված դրսևորում է «Լեռան հուշ» գիրքը, որի լույսն ըմբռնելուց առաջ արժե բերել հենց իր խոստովանությունը. «Վերադառնալով ծննդավայր՝ ես ինձ վերստին գտա»: Այս գտնելու նշանակությունը ճիշտ է ընդգծել Վ. Հակոբյանը՝ գրելով. «Սիրելի գրողը Արցախ վերադառնալով, ավելի շատ զոհվածների կողքին ու տեղը կանգնեց ու փրկեց նրանց շարունակության առասպելը՝ զգալով, որ իր համար Աստծով նախատեսված օդը Ձիարաթի շուրջն է ալիքվում... Հիմա Արտաշեսը կանգնած է ճիշտ իր տեղում, իր այգում, բոստանում, բառի մեջ, գյուղամեջում, աշխարհամեջում...»: Մեր գրականագետների նման դիտարկումները բխում են ճանաչված արձակագրի ստեղծագործությունների արցախյան բնապատկերից և Ղահրիյանական պատկերասրահի երանգներից:

Պատմելու մեջ անմիջական, ապրումի մեջ՝ ավանդական, պատկերի մեջ՝ արցախաշունչ գրող է Ղահրիյանը: Քիչ է ասել սուր աչք ունի, պետք է ընդգծել նրա ներքնատեսությունը՝ հոգեբանական լուսարձակի օգնությամբ: Պատկերի տարբեր տեսակների հյուսման հմտությունը երևի սովորել է Մեծ Թաղերի գորգագործ տատիկներից, որոնց հյուսվածքները կարող են մրցել աշխարհի ամենահմուտ վարպետի գործած գորգերի հետ: Արտաշեսին կարդալիս իր հայրենի բնության հրաշքներն են տեսնում, իսկ Գտչավանքն ուսերին տանող հայրենի գյուղի բնությանը նայելիս զգում են նրա արձակի շունչը: Սա է Ղահրիյան գրողի հաջողության գրավականը: Նրա գրական կանգուն շենքի ռոք-քարերից են «Գյուղամեջ», «Սիրուշի երջանկությունը», «Անորոշություն», «Աշխենի փեսան» և այլ պատմվածքներ: Դիմանկար ստեղծելու յուրահատուկ հնարանք է գտել արձակագիրը: Դրանք հունորախառն ժողովրդական իմաստությունների խտացված հյուսվածքներ են, որոնք վերցված են կյանքի շերտերից, առանձնապես գյուղական բնակչության՝ դարերի կնիքը կրող մտածելակերպից՝ և՛ միամիտ, և՛ սուր, և՛ ձեռ առնող, ամենից կարևորը՝ կենսահաստատ: Միայն «Գյուղամեջ» պատմվածքը բավական է թվարկածս երանգները վկայակոչելու համար: Վեց էջի վրա Ղահրիյանը մի ամբողջական պատկերասրահ է ստեղծել, որտեղ հանդես են գալիս ազգային ցավով տառապող Միսակը, որ դեռ անասուններին կեր չտված, շտապում է գյուղամեջ ու տազնապած հայտարարում. «ՕՕՆ-ը, արա, իրիկունը «Վրենյայով» որոշեց, որ Ղարաբաղը Ադրբեջանինն ա...» (էջ 3): Պավլունց Ուհանը սփրթնում և կռնչում է. «Վա՛, Ադրբեջանի ի՞նչը»: Եվ երբ Միսակը նորից է հաստատում իր լսածն ու տեսածը, Ուհանը մղկտում է. «Պահոո՛»: Զրույցին միջամտող Երկար Վարազդատը վրա է բերում. «ՕՕՆ-ը... ՕՕՆ-ն էլ մեր գյուղխորհրդի օրում բան է, էլի:

- Կորա՞վ, ուրեմն, ամեն ինչ, էսքան չարչարանքը... Խեղճ էդ-
քան զոհեր:

- Տեսնեմ ՕՕՆ-ի որոշման վրա ով ա տռում:

- Բա ինչի՞ չես գնում ղեկավարես,- չդիմացավ Ուհանը:

- Տեսնում ե՞մ, որ գնամ,- երկար երեսով մեկ հռռռաց Վարազդատը:

- Աշխարհը դառել ա պրեզիդենտներինն ու ժուռնալիստների-
նը, ինչ ուզեն՝ կանեն (էջ 3):

Այդ երկխոսության մեջ ընդգծվում են Միսակի, Ուհանի ու եր-
կար Վարազդատի կերպարները, որոնք Ղահիրյանի՝ դիման-
կարներ ստեղծելու հնարանքի արդյունք են: Կա և դիմանկար
ստեղծելու ուրիշ ձև: Պատմվածքում Խաչունց Սոկրատի դիման-
կարը վրձնվում է ահա այսպես. «Արա, դե մեծ մարդ եք, ամոթ
ա... ը՛մ,- միշտ դեպի ժողովուրդը թեք ու հեռու կանգնած, ձեռ-
քերի ափերը կիսով չափ գրպաններում, հոնքերից վեր ճակատը
կնճռտած, ինքնիրեն ու ցածր ասում էր Խաչունց Սոկրատը,-
արա, ասա ինչ եք...,- արհամարհալից նրանց ասում ու երբեք
մոտ չէր գալիս, նախատի՛նք էր տալիս, բայց չէր խառնվում, իբր
թե իրենից շատ քիչ իմացող-հասկացող էր բոլորի վեճ-կռվին»
(էջ 4):

Ջրույց-վեճին մասնակցում են Մուխայելը, Վաղին, Ռուբենը,
Սուրենը:

ՕՕՆ-ի, Ամերիկայի, աշխարհի մասին նրանց զրույցի հենքը
Ղարաբաղի ճակատագիրն է: Գյուղամեջ հավաքված մարդիկ
հայրենի գյուղից սկիզբ առած պորտով կապվել են աշխարհի
հետ, Շուկչին են կարդում, ճանաչում են Գլեբին և գալիս մի եզ-
րակացության. «Ամեն տեղ նույնն ա, էլի, ծալը պակաս ժողո-
վուրդ, մեջը՝ մի գլեբ, մի ես, մի դու, էդ ա» (էջ 8):

Ա. Ղահիրյանը Զ. Մաթևոսյանի հետ է գրողի ճամփա մտել:
Քանի որ Արտաշեսի և Զրանտի մոտեցումները կյանքին և այն
պատկերելու խնդիրը հարազատ են, ուստի ինչ-որ նմանություն-

ներ կան նրանց երկերուն արծարծված թեմաների և գաղափարական-գեղարվեստական լուծումների միջև: Հ. Մաթևոսյանի մահվան կապակցությամբ Ա. Ղահրիյանը ափսոսանքի իր խոսքում նշել է. «Հրանտ Մաթևոսյանը մեր գրականություն բերեց նոր ոճ... Լեռներուն բռնկվող ու շողարծակող կայծակի նման թարմաշունչ է նրա գրելաձևը, վարակիչ, այդ իսկ իմաստով ես նրանից շատ բան սովորեցի» («Եղիցի լույս», թիվ 2, 2002): Ինչպես նկատում ենք, այստեղ ընդգծվում է սովորելու գործոնը, որ երբեք չի կարելի տանել դեպի ընդգծված ազդեցության ոլորտ: Երկու այս գրողները նույն ժամանակի, նույն աշխարհի, քաղաքական-հասարակական նույն խնդրումների ներկայացուցիչներն ու արվեստագետներն են՝ իրենց սեփական աշխարհընկալմամբ ու սեփական ոճով: Ուրեմն՝ այս պարագայում ընդգծվում է տիպաբանական կապը: Մենք այս համոզմանն ենք եկել՝ կարդալով Ա. Ղահրիյանի «Գյուղամեջ», «Նո՛ռնիկ, Նո՛ռնիկ ջան», «Հնդկահավը» և այլ գործեր, ապա՝ «Երկրորդ ներշնչանք» պատմվածաշարը:

Արտաշես Ղահրիյանի ակնառու «պատկերասրահը» թելադրում է, որ արդի հայ գրականությունը գործ ունի չափազանց լուրջ արձակագրի հետ, որից դեռևս նոր, հոգեպարար էջեր է սպասում:

Հայտնի է, որ վերջին շրջանում արդի գրականության ընթացքին անհաղորդ մարդիկ աղմկում են հայ գրականության լճացման մասին: Մենք չենք բաժանում այս կարծիքը, որովհետև մեր շնորհալի գրողները հյուսում են երկեր, որոնցում արտացոլվում են մեր կյանքը՝ թեմատիկ-գաղափարական խորքով ու գեղարվեստական ինքնատիպ երանգներով, երկեր, որ կարող են հաստատել ժանրային բազմազանության առկայությունն ու զարգացման միտումները: Առավել ևս, երբ խոսքը վերաբերում է Արցախյան ազգային-ազատագրական պայքարի գեղարվեստական պատկերմանը, դարձյալ հնչում են իրողությանն անտեղյակների կարծիքները՝

իբր թե չեն ստեղծվում արժանի գործեր: Վերջին երեք-չորս տարիների ընթացքում Արցախում լույս աշխարհ են եկել առանձին ժողովածուներ և երկեր, որ կարող են հիմք հանդիսանալ տեսական ընդհանրացումների ոչ միայն պոեզիայի, այլև արձակի առումով: Որպես ասվածի ապացույց՝ հանգիստ սրտով կարող ենք մատնացույց անել *ՄԱՐՏԻՐՈՍ ՈՐԵՆԻ* «Դժոխքից եկածին հարցեր չեն տալիս» վեպը (խմբագիր՝ Վ. Հակոբյան):

Հայ գրականությանը խորթ չեն դժոխային իրականության արտացոլման կոմպոզիցիոն և սյուժետային բազմազան ձևերը: Վերհիշենք Ե. Չարենցի «Դանթեական առասպելն» ու «Մահվան տեսիլը», Հ. Շիրազի «Հայոց դանթեականը», Վ. Դավթյանի «Ռեքվիեմը»՝ Հայոց մեծ եղեռնի թեմատիկայով, Վ. Հակոբյանի «Գողգոթան», Ռ. Դավոյանի, Ն. Ավագյանի «Ռեքվիեմ»-ները, Ռ. Եսայանի «Խռովքը» Արցախյան գոյամարտի մասին: Մարտիրոս Որենի վեպը գալիս է լրացնելու թվարկած շարքը:

Հետաքրքիր հնարանքների, պատկերավորման զանազան միջոցների առկայությամբ վեպը հաստատում է Մարտիրոս Որենի պատմելու վարպետությունը, խոհականությունը, լեզվի և ոճի թարմությունը, բառապաշարի հարստությունը, որոնցով էլ պայմանավորվում է սեփական ձեռագիրը:

Ակադեմիկոս Ս. Սարինյանը ժամանակակից վեպի վերաբերյալ իր տեսական հողվածում ընդհանրացրել է. «Ժանրի զարգացումը կարծես հակում ունի դեպի ինտելեկտուալ-հոգեբանական վեպը, որը նման է մենախոսության և եսակենտրոն հերոսի ինքնավերլուծության» («Գրական թերթ», 2005, թիվ 1): Մարտիրոս Որենի վեպը գալիս է հաստատելու անվանի գրականագետի դիտարկումը:

Սյուժեի առումով վեպն առանձին բարդություն չունի: Գլխավոր հերոսը հեղինակն է: Նա պատմում է իր տեսածի, ապրածի, ցավի ու հույսի մասին: Սակայն հեղինակի «ես»-ը խտացնում ու

ներկայացնում է արցախցիների կրած տառապանքը նորօրյա գոյամարտում՝ միաժամանակ բացահայտելով նրանց ներաշխարհի գեղեցկությունն ու վեհությունը, զոհաբերությունից ճառագող լույսը՝ միտված ազատ և անկախ ապրելու ամենասրբազան բաղձանքին:

Մ. Ոբնի խոսքը կոնկրետ է, ունի իր նշանակետը: Գրողը չի հաշտվում պատերազմի հետ, որի ճիրաններում մարդիկ ավելի մոլեգին ու դաժանաբար են սպանում, բռնանում, քանդում ու ավերում այն ամենը, ինչ գեղեցիկ է ու կատարյալ: Բայց պատերազմը եղավ ազերի-թուրքերի պարտադրմամբ: Արցախն ու հայությունը պատասխանեցին նրանց, և պատերազմը վերածվեց ազգային-ազատագրական գոյամարտի: Հեղինակն իրեն համարում է ժամանակագիր՝ ճշմարիտ ու անկեղծ:

«Դժոխքից եկածին հարցեր չեն տալիս» վեպում ներկայացված է Արցախը՝ մայրաքաղաքի մաքառող տազնապներով, թեժ ռազմաճակատով, փրկարար նկուղներով, մարդկային փոխհարաբերություններով, ընտանեկան ճակատագրերով, հայոց նահապետական կյանքի բարենասնություններով և աղավաղումներով, սոցիալական միջավայրի բարդացմամբ: Կարևորն այն է, որ այս ամենի պատկերման խաչներուկում ներկայացված է արցախցու հոգևոր կեցությունը:

Վեպում նկարագրված դժոխքի ինը պարունակների միջով անցնող հեղինակ-հերոսը բացում է իր ցաված սիրտը, ներկայացնում պատերազմող Արցախը, արցախցիներին, ստեղծում դիմանկարներ՝ հոգեբանության նուրբ իմացությամբ: Այդ առումով բնութագրական են Պոլյանիչկոյի, Խոջալուի օդանավակայանի պետ Հաջիևի, վարդենիսցի թուրքի դիմանկարները՝ անմարդկային կերտվածքով ու գազանային էությամբ: Հոգեբան գրողի նրբանկատությամբ են ստեղծված Բելայի և Դոնարայի, չլդրանցի ծերունու և Սիմոնի, Էմմայի և Սոնայի, Միրայի և Սիրա-

նի, Եպրաքսյայի և Միխայելի, Բարխուդարյանի և Դանիելի, Յաշայի և Մադաթի, Արուսյակ մայրիկի և նրա դուստր Սեդայի դիմանկարները:

Մարտիրոս Որբնի հուշամատյանը հարուստ է բանաստեղծական երանգներով, թարմ պատկերներով: Նրանում հանդիպում ենք պատկերի տարբեր տեսակների: Վեպի լեզուն համեմված է ժողովրդական խոսքի իմաստությամբ, ճշան չէ, ցույց է տրված, թե ինչպես է ժողովուրդը զավակների կյանքի գնով նվաճում ազատ և անկախ ապրելու իրավունքը՝ հետևում թողնելով դժոխային մղձավանջը, իր հերոսական պատմության մեջ գրելով հաղթանակների կենսառաք ու պատվաբեր էջերը: Մ. Որբնի վեպն արդի հայ արձակի մնայուն արժեքներից է:

Այսօր տեղին է հիշել Հովհ. Թումանյանի դիտողություններից մեկը մանկական գրականության վերաբերյալ. «Կարծում են՝ հեշտ ու հանաք բան է մանկական գրվածք գրելը,- նշել է Մեծն Լոռեցին,- դա ամենադժվար գործն է, երեխայի հոգու հետ գործ ունես, պարզ ու հասկանալի պիտի տալ, զգույշ ու նուրբ պիտի մոտենալ, անպայման ճաշակով պիտի հրատարակել»: Իսկ Ե. Չարենցն ընդգծել է. «Ինքս ոչինչ չեմ գրել ու ոչինչ չեմ գրում մանուկների համար, որովհետև դա համարում եմ լուրջ գործ, որ պահանջում է հատուկ աշխատանք և ժամանակ: Եթե երբևիցե ազատ լինեմ ընթացիկ աշխատանքներից՝ կփորձեմ գրել»:

Ծիշտ է, նորագույն շրջանում մի շարք արձակագիրներ ու բանաստեղծներ իրենց կարողություններն անվերապահ նվիրել են մանկագրության հարստացմանն ու զարգացմանը, միևնույն է, ժամանակի հետ անընդմեջ զգացվել է մանկական հետաքրքիր երկերի պահանջը: Նույնիսկ այն դեպքում, երբ առկա է Վ. Անանյանի, Խ. Գյուլնազարյանի, Ռ. Դարբինյանի, Վ. Տալանի, Գ. Գաբրիելյանի, Ս. Մուրադյանի, Յու. Սահակյանի և այլոց մանկական ստեղծագործությունների գունագեղ փունջը, դարձյալ մանկա-

պատանեկան երկերի պակաս զգացվում է: Ուստի ուրախանալու առիթ են պատճառում այն գրողները, ովքեր իրենց ուժերը լրիվ ընծայում են այդ պատվաբեր գործին: Եվ կրկնակի հաճելի է, երբ հայ մանկագիրների գործընթացին մասնակցում են նաև Արցախ աշխարհի գրողները: Գ. Գաբրիելյանի մանկական գրքերին զուգահեռ փոքրերի համար առանձին ժողովածուներ են հրատարակել Վ. Յակոբյանը, Յ. Բեգլարյանը, Վ. Ստեփանյանը և ուրիշներ:

Արցախի մանկագիրների շարքում արժե նշել **ՍԱՐՍԵԼ ՀԱՅԿԻ** (Մարսել Պետրոսյան) անունը, որ ամբողջությամբ զբաղվում է մանկագրությամբ՝ գրելով դպրոցական կրտսեր և բարձր տարիքի երեխաների համար: Հայտնի են նրա «Կախարդական ակնոցները» (1992), «Միջօրե» (2002), «Հնարամիտ աստղագուշակը» (2003) գրքերը, ինչպես նաև «Առածանի» հավաքածուն:

Մարսել Հայկը որպես մանկագիր, մի կողմից հավատարիմ է թունանյանական պատմելաոճին, մյուս կողմից՝ սնունդ է առնում ժողովրդական ստեղծագործությունից՝ խոսքը համեմելով ժողովրդի կենսափորձից ծնված խորհուրդներով: Նրան հաջողվում է ստեղծել ուշագրավ պատկերներ, պատմական սահուն շեշտերով ընթերցողին հրամցնել իր գաղափարներն ու գեղագիտական իդեալը: Մտահղացումը ներկայացնում է ռեալիստական գույներով և այլաբանական միջոցներով: Կոմպոզիցիոն տարբեր ձևերի օգտագործումը հնարավորություն է ընձեռում նրան պատումը հրամցնել առանց ձանձրացնող քարոզի:

«Կախարդական ակնոցները» գրքի մի շարք պատմվածքներ դրա վկայություններից են: Նրանցում շոշափված թեմաները գեղարվեստական մարմնավորում են ստանում տարբեր հնարանքների շրջանակներում: Հերոսները հիմնականում երեխաներ են՝ շրջապատված հարազատներով: Նպատակին հասնելու համար գրողը մանուկների հետ խոսում է մտերմորեն, նրանց

մասնակից դարձնում գրույցներին, իրադարձություններին՝ ուշադրության կենտրոնում պահելով մանուկների խոսքի կենդանի շունչը, տարիքային առանձնահատկություններից բխող դատողություններն ու հետաքրքրությունները: Որպես հաջողված օրինակ տեղին է բերել «Վարուժանը, տատիկը և պատերազմը» պատմվածքը:

Մ. Հայկի պատմվածքները գրավիչ են, անմիջական: Նա լավ է հասկանում մանկան հոգեբանությունը: Դրա լավագույն օրինակը «Հայկի հրաշքը» պատմվածքն է, որի առանցքում փոքրիկ Միհրանիկի կերպարն է, որի ներաշխարհը հարստանում է մարդասիրական զգացումներով: Մի շարք պատմվածքներում հանդես են գալիս կենդանական աշխարհի ներկայացուցիչները՝ անձնավորված: Նման այլաբանական պատումները հեշտ են յուրացվում և ընկալվում երեխաների կողմից: Այս եղանակներով գրողն արժարժում է տարբեր հարցեր, որոնք ուղղված են ապագա հասուն քաղաքացիների ձևավորմանը: Փառաբանվում են բարությունը («Ճնճղուկն ու սարդը»), հոգատարությունը բնության արարածների հանդեպ («Դեղնակտուց թռչնակները», «Վիրավոր ճնճղուկը»), հավատարմությունը («Հավատարիմ շունը»), ազնվությունը («Դերեմիկը և կրկեսի փիղը»): Մի շարք գործերում խարազանվում են խորամանկությունը, խաբեությունը, դաժանությունը, ծուլությունը («Աղվեսի դասը», «Երբ աղվեսն է հարևանդ», «Ախ դու կկու»):

Մանկագիրը հմտորեն օգտվում է ժողովրդական գրույցներից, հեքիաթներից՝ օրինակ բերելով ժողովրդի կամքի ուժը, սրամտությունը, աշխատասիրությունը, վճռականությունը («Վանականը, սուտասանը և Պըլը Պուղին», «Պըլը Պուղին ու հարուստները», «Արքայի գավազանը»):

Մ. Հայկի լավագույն գործերից մեկը «Աստղագուշակը» պատմվածքն է: Դիմելով պատմական խոր անցյալին՝ գրողն արժարժում է հայրենասիրության և հերոսության գաղափարներ:

Չզոր Ասորեստանի բանակը ջախջախվում է հայոց զորագնդի կողմից, քանզի միասնական էին հայ քաջերը, որոնց թվում և՛ արցախցիները:

Գրողի ստեղծագործական նվաճումներից է «Միջօրե» ժողովածուն, որ նախատեսված է դպրոցական բարձր տարիքի երեխաների համար: Չեղինակը նկատի է առել իր ընթերցողների տարիքային առանձնահատկությունները: Այդ առումով խոսում օրինակ է «Որոգայթ» վիպակը, ապա՝ պատմվածքներն ու «Ապագան ապականված չէ» դրաման: Գրողը նրանցում դրսևորել է նուրբ հոգեբանի հմտություն, ստեղծել ռեալիստական լիարյուն կերպարներ: Չաճույքով է կարդացվում «Շրջադարձ» պատմվածքը, որ ժանրային առումով կարելի է համարել նովել: Այստեղ առկա են դիպուկ պատկերներ, համոզիչ բնութագրումներ, խոսքի անմիջականություն, պատումի քնարականություն: Թեման պատերազմից ծնված ցավն է և այդ վշտից դեպի լույս ելք գտնելու ուժը: Չանդես են բերված զոհվածի այրին՝ Մերին և նրա յոթամյա որդին՝ Դավիթը: Նրանց մոտ կանգնում է երիտասարդ Գևորգը, ստեղծվում է մի եռանկյունի, որի շրջանակներում գրողը շոշափում է կենսական հարցեր՝ ուղղված հարվածները կրած ընտանիքի վերքի բուժմանը:

Աշխատելով «Մարտիկ» զինվորական թերթում որպես խմբագիր՝ Մ. Չայկը ուսումնասիրել է պատերազմական մի շարք իրադարձություններ, ժանոթացել մարդկային ճակատագրերին, լսել պատերազմի մասնակիցների զրույցները: Արդյունքում հյուսվել են ոչ քիչ ուշագրավ ստեղծագործություններ, որոնցից է «Կյանքի և մահվան խաչներուկներում» պատմվածքը: Այստեղ նկարագրված են ազերիների կողմից պատանդ վերցված հայ երիտասարդ զինվորի դժոխային օրերը և նրա ազատ արձակվելը:

Պատերազմական թեմայի հաջողված արձարծում է նաև «Մի՛ կրակեք, ի սեր աստծո» պատմվածքը, որտեղ ցնցող պատկեր-

ներով դրսևորվում է հայ զինվորի գթասրտությունը 17-ամյա ազերի զինվորի հանդեպ:

Պատերազմի պատճառով լքված գյուղի և նրա բնակիչների այրող կարոտի հուզիչ մի պատկեր է «Կարոտի բույրը» պատմվածքը:

20-րդ դարի վերջին համաշխարհային գրականության մեջ լայն տարածում ստացավ դեդեկտիվ գրականությունը, որի հիման վրա ստեղծվեցին կինոֆիլմեր: Այդ ժամանակ արձագանք գտավ նաև հայ արձակուրդ: Արցախի գրական ընտանիքում այդ ուղղությամբ հանդես եկան Կ. Գաբրիելյանն ու Վ. Ստեփանյանը, որոնց «Սեր և արյուն» վիպակն արժանացավ լայն ընդունելության: Մ. Հայկը ընթերցողին նվիրեց «Որոգայթ» վիպակը: Թեման ընտրելով հանցագործ աշխարհի իրադարձություններից՝ գրողն ի հայտ է բերել դեդեկտիվ պատում ստեղծելու անհրաժեշտ կարողություն:

«Միջօրե» ժողովածուն հետաքրքրություն է առաջացնում նաև «Ապագան ապականված չէ» դրամայի շնորհիվ: Հեղինակն այդ երկը նվիրել է Շուշիի ազատամարտի մասնակիցներին:

Մ. Հայկի ստեղծագործություններն ապացուցում են, որ մեր մանկապատանեկան արձակը, ի դեմս նրա, ունի կենսափորձով հարուստ, շնորհաշատ մի գրող, որից ընթերցողները դեռ ակնկալելու են նոր, ուշագրավ արժեքներ:

Արցախի գրական ընտանիքի ճանաչված արձակագիրներից է **ՍԵՅՐԱՆ ՔԱՍԱԼՅԱՆԸ**, որն առաջին գրողն էր, որ գեղարվեստական ինքնատիպ պատկերների հյուսվածքում ներկայացրեց Ավոյին՝ ինչպես որ կար: Ապա ընթերցողին ընծայեց պատմվածքների նոր ժողովածուները: Սեյրան Քամալյանի ստեղծագործությունն իր երանգներով կարող է պատասխանել ժամանակակից հայ արձակին ներկայացվող ամենաբարձր պահանջներին:

Արցախյան ազգային-ազատագրական պայքարի ընթացքում հայ ժողովրդի մարտական ոգու, նրա կրած տառապանքի ու այդ անլուր տառապանքից ծնված արևային ոգու մասին գրած իր երկհատորյակով արժանի տեղ գրավեց **ՆՎԱՐԴ ՍՈՂՈՒՄՆՅԱՆԸ**: Վերջին տարիներին նա ստեղծեց 3-րդ հատորը, որին սպասում է ընթերցողը:

Դրանց հաջորդեց «Կարկառներ» վավերագրական վեպը (2011), որը մի նոր ներդրում է Արցախյան ազգային-ազատագրական պայքարն արտացոլող երկերի շարքում:

Մեր գրական ընտանիքի ծանրակշիռ անդամներից էր **ՄԱՆՎԵԼ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԸ**: Նրա պատմվածքները հյուսված են պատմական Ջրաբերդի բազմաթույր ծաղիկների թույրից ու բույրից: Մենք համոզված ենք, որ նրա ստեղծագործությունը կգտնի իր գնահատողին: Նույն կարծիքն ունենք նաև վաստակաշատ ուսուցիչ **ՆՈՐԱՅՐ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ** մանրապատումների ու էսսեների մասին:

Հաճելի անակնկալ էր **ՎԱԼԵՐԻ ՔՈՉԱՐՅԱՆԻ** «Արծվաթռիչք» ժողովածուն՝ կազմված պատմվածքներից և վիպակներից: Անժխտելի տաղանդով օժտված Վալերին, որ մասնակցել է Արցախյան պատերազմին, պատկերային ինքնատիպ հյուսվածքներով հաստատել է հմուտ արձակագրի իր կարողությունը:

Արցախի գրական ընտանիքում երևան են եկել արձակագիրների նոր անուններ: Բանաստեղծուհի **ԺԱՆՆԱ ՀԱԿՈՐՅԱՆԸ** ընթերցողին է հանձնել «Սիրո շղթաներ», «Արևոտ արցունքներ», «Սիրո հովիտներ», «Մեր և պատիժ» վիպակները, որոնցում հեղինակը ձգտում է ռեալիստական գույներով ստեղծել ժամանակակից հայ կնոջ կերպարը: Վերջին երեք տարվա ընթացքում նա հրատարակեց Շուշի քաղաքի պատմությանը նվիրված պատմավեպը, ապա Արցախյան ազգային-ազատագրական պայքարը նախապատրաստող հայ մտավորականների կերպարները

լուսաբանող երկը: Արձակագրի նկատելի վաստակով հանդես եկավ **ԻԼՅԱ ԱՐՑԱԽԵՑԻՆ** «Երկվորյակները» վեպով, «Արցախի ճիչը» և «Կյանքի բավիղներում» պատմվածքների ժողովածուներով ու արժանացավ գրաքննադատության դրական գնահատականին: Հաճելի տպավորություն են թողնում վաստակաշատ մանկավարժ Նորայր Ավետիսյանի պատմվածքները, որոնք հրատարակվել են երկու գրքով, **ՍՈՖՅԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ** «Անբասիր մրմունջներ», «Ծիծաղափունջ» ժողովածուները:

Խոստումնալից է **ԱՐՓԻ ՎԱՆՅԱՆԸ**, որ հենց վերջերս երևանում հրատարակեց «Իմ բաժին լույսը» պատմվածքների ու մանրապատումների գրքույկը:

Գեղարվեստական արձակում նոր հայտ է ներկայացրել Ն. Գասպարյանը: Պոեզիային զուգահեռ նա բավականին զարդարել է ակնարկի հեռուստատեսային ժանրը, իսկ վերջերս լույս է ընծայել ինքնակենսագրական վեպ, որ մի ամբողջ սերդնի անցած ճանապարհի հաջող վավերագրություն է:

Արձակագիր **ԷՂՈՒՐԴ ՍԱՖԱՐՅԱՆԸ** իր հերոսական ծննդավայր Բերդաձոր գյուղի իրական մարդկանց հուզաշխարհը ներկայացրեց գեղարվեստական երազային պատկերներով՝ ապացուցելով, որ նրանք դարերի խորքից իրենց ուսերին նոր դարերին բերելով Շուշիի շրջանի իրենց աստեղամերձ գյուղը, չեն զիջի ոչ մի թշնամու: Գրողի «Բերդաձոր» գրքի բոլոր պատմվածքները պարզապես հյուսված են իր հայրենակիցների հոգու երանգներից, քչով բավարարվելու, քիչը երջանկության ակունք դարձնելու հոգեբանությամբ, ազատ և անկախ ապրելու վճռականությամբ:

Իր ինքնատիպ ձեռագրով հանդես եկավ ազատամարտիկ գրող **ԱՇՈՏ ԲԵՂԱՐՅԱՆԸ**, որ ստեղծագործում է ռուսաց լեզվով: Նրա «Чужой счѣт» և «Посчѣчина» ժողովածուներն աչքի են ընկնում թեմատիկ բազմազանությամբ և գեղարվեստական թարմ հնարանքներով, որոնց առանցքում ևս արցախահայու-

թյանը հուզող հիմնախնդիրներն են՝ ժամանակի բարդ իրադարձությունների համապատկերին:

20-րդ դարի վերջին Արցախյան ազգային-ազատագրական գոյամարտի շնորհիվ անկախ և ազատ ապրելու իրավունքը նվաճեց Արցախ աշխարհը: Միաժամանակ ապահովվեց Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունը, որը խորհրդանշում է մեր համահայկական գրականության ապագա զարգացումը, որի մի անբաժան մասը Արցախում ստեղծվող հայ պոեզիան ու արձակն է՝ բովանդակալից ու բարձրարվեստ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ.....	3
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	58
ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈՔՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ (Գրական դիմանկար).....	58
1. Բանաստեղծի հայտնությունը.....	58
2. Տազնապի եւ հույսի հայրենապատում.....	60
3. Սերը՝ բիբլիական ծաղիկ.....	78
4. Երգը՝ բնության ծփանքով.....	85
5. Երգի եւ զենքի միասնական ուժը.....	101
6. Քրիստոսի ծաղիկների փիլիսոփայությունը.....	113
7. Պատմության հրամայականը.....	126
8. Տաճարի աստվածային լույսը.....	149
9. Նահատակների պատգամը.....	159
10. Մանուկների աշխարհում.....	172
11. Ասք հերոսական գոյամարտի.....	186
12. Արցախյան մեկ դարը՝ էպիկական լայն կտավի վրա.....	190
13. Գրականագիտական հայացքները.....	285
Ամփոփում.....	300
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.....	306
ԳՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՐՏԱԿԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ.....	306

ՍՈՎՐԱՏ ԱՂԱԼԱՐԻ ԽԱՆՅԱՆ
*Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԼՂԴ գիտության վաստակավոր գործիչ*

**ՄԱՐՏԵՉՈՂ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

СОКРАТ АГАЛАРОВИЧ ХАНЯН
*Доктор филологических наук, профессор,
заслуженный деятель науки*

БОРЮЩАЯСЯ ЛИТЕРАТУРА

Խմբագիր՝

Յ. Մուսայելյան

*Բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր*

Սրբագրիչ՝

Ս. Խաչունց

Համակարգչային

շարվածքը եւ էջադրումը՝ Լ. Բաղդասարյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84/16, ծավալը՝
30 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 250:

Տպագրվել է «ԴԻՉԱԿ ՊԼՅՈՒՄ» հրատարակչության տպարանում
Հ. Հակոբյան 25
Ստեփանակերտ-2012